

Հայոց քաղաքակրթության անվտանգ գոյությունն ու զարգացումը երկարաժամկետ կտրվածքով դեռևս ապահովված չեն: Հայ ժողովուրդն իր հայրենիքում ազատ, անկախ և անվտանգ ապրելու բավարար պայմաններ և երաշխիքներ տակավին չի ստեղծել: Խորհրդային կայսրության փլուզումից ի վեր արդի Հայաստանը (ՀՀ և ԼՂՀ միասին) գտնվում է «լինե՞ր, թե՞ չլինելու» սահմանային իրավիճակում՝ դեմ հանդիման արտաքին ու ներքին մի շարք մահացու սպառնալիքների, որոնցից ամենամեծն Ադրբեջանի հնարավոր ռազմական նոր ագրեսիան է: Ըստ այդմ էլ՝ Հայաստանի ընթացիկ պետականաշինության համար ավելի քան արժևորվում է ռազմավարական միտքն ու նրան վերապահված դերակատարությունը:

«Հայրենատիրություն» մատենաշարի այս երկրորդ հատորում քննության են առնված հայ ռազմավարագիտության տարողունակ օրակարգի կարևոր հարցաշարերը, այդ թվում՝ Հայաստանի և նրա հավանական հակառակորդների զինված ուժերն ու ռազմական հայեցակարգերը, Հայաստանի տեղեկատվական անվտանգության հրատապ խնդիրները, ռազմական պատմության արդիական նշանակություն ունեցող որոշ դրվագները, հայ-թուրքական հարաբերություններում էթնիկ հոգեբանության դերակատարումը, ռազմավարության դասական ու ժամանակակից տեսությունները, թուրքական հատուկ ծառայությունների գործունեությունը և այլ խնդիրներ:

«Արարատ» կենտրոնը հայ ռազմավարագիտության զարգացման ելակետային սկզբունք է հռչակում հետևյալ պարզ դիրքորոշումը. ազգային անվտանգության սպառնալիքների ու պահանջների նշտումը, դրանց շեղոփացման կամ նվազեցման միջոցների որոշումը չի կարելի վստահել ՈՐԵՎԷ երբորդ կողմի՝ լինի դա պետություն, ռազմաֆաղափական դաշինք, թե օտարազգի մասնագետների խումբ: Այդ աշխատանքը պետք է կատարվի միմիայն ՍԵՓԱԿԱՆ ՄՏԱՎՈՐ ՈՒԺԵՐՈՎ:

«Արարատ» ռազմավարագիտական կենտրոն  
[www.ararat-center.org](http://www.ararat-center.org)

«ԱՐԱՐԱՏԿԵՆՏՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»  
**ՍԵՓԱԿԱՆ ՄՏԱՎՈՐ ՈՒԺԵՐ**

# ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐ

Կ Ա Չ Մ Ե Ց Ե Վ Խ Մ Բ Ա Գ Ր Ե Ց  
 ԱՐՄԵՆ ԱՅՎԱԶՅԱՆԸ



**«Հայրենատիրություն»  
մատենաշար**

**II**



**«ԱՐԱՐԱՏ» ՈԱԶՄԱԿԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ**  
**«ARARAT» CENTER FOR STRATEGIC RESEARCH**

**«PRO PATRIA»**

**II**

**STUDIES ON STRATEGY  
AND SECURITY**

Compiled and Edited With an Introduction and Commentary  
by Armen Ayvazyan

**ВОПРОСЫ СТРАТЕГИИ  
И БЕЗОПАСНОСТИ**

Составитель, редактор, автор предисловия и  
примечаний  
Армен Айвазян

**YEREVAN 2006 ЕРЕВАН**

«Հայրենատիրություն»  
մատենաշար

## II

# ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Կազմող, խմբագիր, ներածության և ծանոթագրությունների  
հեղինակ՝ Արմեն Այվազյան

ԵՐԵՎԱՆ 2007

ՀՏԴ 323 (479.25) : 355/359 : 351/354  
ԳՄԴ 66.3 (2Հ) + 68.4 + 67.99 (2Հ) 1  
Ռ - 153

Գլխավոր խմբագիր՝ Ա. Այվազյան

Խմբագրական խորհուրդ՝  
Հ. Արզումանյան, Ռ. Կորխմազյան,  
Լ. Սահակյան, Ա. Հարությունյան

Ռ - 153 Ռազմավարության և անվտանգության Հարցեր /  
Ժողովածու.- Եր.: Լուսակն, 2007թ.- 684էջ:

«Հայրենատիրություն» մատենաշարի այս երկրորդ հատորում քննության են առնված հայ ռազմավարագիտության տարողունակ օրակարգի կարևոր հարցաշարերը, այդ թվում. Հայաստանի և նրա հավանական հակառակորդների՝ Ադրբեջանի և Թուրքիայի գինված ուժերն ու ռազմական հայեցակարգերը, Հայաստանի անվտանգության համար ազատագրված տարածքի կենսական նշանակությունը, Հայաստանի տեղեկատվական անվտանգության հրատապ խնդիրները, հայ հասարակության և Հայաստանի պետության, մասնավորապես, նրա բանակի միջև հարաբերությունների զարգացման ու բարելավման հնարավորությունները, ռազմական պատմության արդիական նշանակություն ունեցող որոշ դրվագները, հայ-թուրքական հարաբերություններում էթնիկ հոգեբանության կարևոր դերակատարումը, ռազմավարության դասական և ժամանակակից տեսությունները, թուրքական հատուկ ծառայությունների գործունեությունը և այլ խնդիրներ:

«Հայրենատիրություն» մատենաշարի Ա հատորը տպագրվել է 2006 թ.: Հայաստանի ազատագրված տարածքը և Արցախի հիմնախնդիրը: Վերլուծական և փաստագրական նյութերի ընտրանի: Խմբագրությամբ՝ Ա. Այվազյանի, Երևան, «Լուսակն» հրատ., 372 էջ:

Ռ  $\frac{0803010413}{0150 (01) 2007}$  2007թ. ԳՄԴ 66.3 (2Հ) + 68.4 + 67.99 (2Հ) 1

ISBN 978-99941-48-48-6

© «Արարատ» ռազմավարագիտական կենտրոն

**«Հայրենատիրություն»  
մատենաշար**

**II**



**«ԱՐԱՐԱՏ» ՌԱԶՄԱՎԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
«ARARAT» CENTER FOR STRATEGIC RESEARCH**

**«PRO PATRIA»**

**II**

**STUDIES ON STRATEGY  
AND SECURITY**

Compiled and Edited With an Introduction and Commentary  
by Armen Ayvazyan

**ВОПРОСЫ СТРАТЕГИИ  
И БЕЗОПАСНОСТИ**

Составитель, редактор, автор предисловия и примечаний  
Армен Айвазян

**YEREVAN 2006 ЕРЕВАН**

**«Հայրենատիրություն»  
մատենաշար**

## **II**

# **ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ**

Կազմող, խմբագիր, ներածության և ծանոթագրությունների  
հեղինակ՝ Արմեն Այվազյան

**ԵՐԵՎԱՆ 2007**

Գլխավոր խմբագիր՝  
Ա. Այվազյան

Խմբագրական խորհուրդ՝  
Յ. Արզումանյան, Ռ. Կորխմազյան, Լ. Սահակյան, Ա. Հարությունյան

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածութիւն 17

## Ա. ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆ

- Արմէն Ալազյան**  
2. ՀԱՅ ՈԱՄՄԱԿԱՐԱԿԱՆ ՄՏՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀՐԱՏԱՊՈՒԹՅՈՒՆԸ 27

- Րաչյա Արշումանյան**  
3. ВОЕННАЯ БЕЗОПАСНОСТЬ АРМЕНИИ (ОСНОВНЫЕ ПОНЯТИЯ И ОПРЕДЕЛЕНИЯ) 37

- Сергей Минасян**  
4. АЗЕРБАЙДЖАН ПРОТИВ РА И НКР: ВОЕННО-ПОЛИТИЧЕСКИЙ БАЛАНС, ОЦЕНКИ БОЕСПОСОБНОСТИ И ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ ВООРУЖЕННЫХ СИЛ 73

- Андрей Арешев**  
5. ВООРУЖЕННЫЕ СИЛЫ И ВНЕШНЕПОЛИТИЧЕСКИЙ КУРС ТУРЦИИ НА СОВРЕМЕННОМ ЭТАПЕ 99

- Էրիս Կուչերա**  
6. ԹՈՒՐԵԱԿԱՆ ԲԱՆԱԿ՝ ԲԱՅԱՌԻԿ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ 139

- Արմէն Ալազյան**  
7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ 147

## Բ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՎԱԾ ՏԱՐԱԾԸ՝ ԱՆԿՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔ

- Դավիթ Սիմոնյան**  
8. ԱԶԱՏԱԳՐՎԱԾ ՏԱՐԱԾԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ (ՀՀ ԵՎ ԼՂՀ) ՈԱՄՄԱԿԱՆ ԱՆԿՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ 183

**Зорий Балаян**

9. БЕРЕГИТЕ СТАТУС-КВО КАК ИСТИНУ

193

**Գ. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ****Կարեն Վրթանեսյան, Սամվել Մարտիրոսյան**

10. ՀԱՄԱՑԱՆՑԸ ԵՎ ՄԵՆՔ. ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԱՎՆԱՐԿ

205

**Ռուբեն Հակոբյան (Թարումյան)**

11. ՀԱՅԱՏԱՌ ՀԱՅԵՐԵՆԸ՝ ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ

263

**Դ. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ****Դավիթ Զամալյան**

12. ՈԱԶՄԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

279

**Շուշան Խաթումաջյան**

13. ԲԱՆԱԿ ԵՎ ԶԱՂԱՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ԻԴԵԱԼԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԻՐԱԿԱՆ ԿԱՊԻ ՈՐՈՇ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ

315

**Ե. ՈԱԶՄԱԿԱՐՈՒԹՅՈՒՆ. ԴԱՍԱԿԱՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ****Սուն ճըզի**

14. ԵՐԿ ՈԱԶՄԱՐԿԵՍԻ ՄԱՍԻՆ

343

**Հրաչյա Արզումանյան**

15. ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՈԱԶՄԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

415

**Զ. ՈԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ****Պևրոզ Յազըճյան**

16. ԿԱՐՍԻ ԱՆՎՄԱՆ ԲՈՒՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ (1920 Թ.)

481

ՀԱՅ ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄՏՔԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՀՐԱՏԱՊՈՒԹՅՈՒՆԸ 7

**Аркадий Тер-Тадевосян**

17. АНАЛИЗ БОЕВЫХ ДЕЙСТВИЙ В АРЦАХЕ (В ПЕРИОД С ИЮЛЯ 1991 ПО ИЮЛЬ 1992 ГГ.) 551

**Սուրեն Մարտիրոսյան**

18. ԼԵՆԻՆԱՅԻՆ (ԼԵՆԻՆԱՆՏԱՆՈՎԱՅԻՆ) ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 20-ՐԴ ԴԱՐՈՒՄ ԵՆ ԵՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԿՐԱ 579

**Ռուկ Մերի Շելդոն**

19. ՀԱՄԱԳՈՒՅՆ ՀՐԱՄԱՅՎԱՆ. ԳԱՂՏԻ ՕՊԵՐԱՑԻԱՆԵՐ ԵՎ ԾԱԾՈՒԿ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ 605

## Է. ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Карен Вртанесян**

20. ТОМАС ДЕ ВААЛ, “ЧЕРНЫЙ САД”: В ПОИСКАХ НЕСУЩЕСТВУЮЩЕГО БАЛАНСА 637

**Արսեն Արությունյան**

21. ΜΑΝΟΣ ΗΛΙΑΔΗΣ. ΟΙ ΤΟΥΡΚΙΚΕΣ ΜΥΣΤΙΚΕΣ ΥΠΗΡΕΣΙΕΣ ΚΑΙ Η ΜΙΤ [Մ. ИЛИАДИС, ТУРЕЦКИЕ СЕКРЕТНЫЕ СЛУЖБЫ И МІТ (НА ГРЕЧ. ЯЗ.). АФИНЫ. ЛАБИРИНТ] 1998 Г. 659

**Արմեն Հարությունյան**

22. «ԱՐԾՐՈՒՆ ՀՈԿԴԱՆՆԻՍՅԱՆ. «ԱՎԻԱՑԻԱՆ ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՄԱՐՏՈՒՄ», «ԱՎԻԱՄԱՆԻԱ» ԳԻՏԱՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ, 2006 Թ. 677

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱԿ 9

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 681



## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

- ԱՊՀ – Անկախ պետությունների համագործակցություն  
ԱՄՆ – Ամերիկայի Միացյալ Նահանգներ  
ԵՍՍՊ – Եվրոպայում սովորական սպառազինությունների մասին պայմանագիր  
ԵԱՀԿ – Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն  
ԵՄ – Եվրոպական Միություն  
ԵՀՊ – Երկրորդ համաշխարհային պատերազմ  
ԵՄԾ – Երիտասարդ մարտիկի ծրագիր  
ԶՈՒ – Զինված ուժեր  
ԶԼՄ – Զանգվածային լրատվամիջոցներ  
ԶՈԶ – Զանգվածային ոչնչացման զենք  
ԻՊՈՒ – Իսրայելի պաշտպանության ուժեր  
ԼՂՀ – Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն  
ԼՂԻՄ – Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ  
ԽՍՀՄ – Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն  
ՀՀ – Հայաստանի Հանրապետություն  
ՀՄՄ – Հետևակի մարտական մեքենա  
ՀՏ – Հակատանկային  
ՀՕՊ – Հակաօդային պաշտպանություն  
ՀԽՍՀ – Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն  
ՄԱԿ – Միավորված Ազգերի Կազմակերպություն  
ՆԱՏՕ – Հյուսիսատլանտյան պայմանագրի կազմակերպություն  
ՌԳԹ – Ռազմական գործողությունների թատերաբեմ  
ՌԴ – Ռուսաստանի Դաշնություն

ՌԳ ԱԳՆ – Ռուսաստանի Դաշնության Արտաքին գործերի նախարարություն

ՌԾՈՒ – ռազմածովային ուժեր

ՔՔԿ – Քրդական բանվորական կուսակցություն /նաև՝ ԿՈՆ ԳՐԱ- ԳԵԼ/

АОД - Армянское общенациональное движение

АО НКР – Армия Обороны Нагорно-Карабахский Республики

АЭС – Атомная электростанция

ББМ – Боевая бронированная машина

БЛА – Беспилотный летательный аппарат

БМП – Боевая машина пехоты

БРДМ– Бронированная разведывательно-дозорная машина

БТР – Бронетранспортер

ВВ - Внутренние войска

ВВС – Военно-воздушные силы

ВВТ – Вооружение и военная техника

ВД ОБСЕ – Венский документ Организации по безопасности и сотрудничеству в Европе о мерах по укреплению доверия и безопасности

ВМС – военно-морские силы

ВНСТ – Великое Национальное Собрание (парламент) Турции

ВПК – Военно-промышленный комплекс

ВС – Вооруженные силы

ВТС – Военно-техническое сотрудничество

ГРВЗ СКВО – Группа российских войск в Закавказье Северокавказского военного округа

ДОВСЕ – Договор об обычных вооруженных силах в Европе

ДПНИ – Движение против нелегальной иммиграции

ЕС – Европейский Союз

ЗРК – зенитно-ракетный комплекс

ЗУ – Зенитная установка

ЗУР – Зенитная управляемая ракета

- МВД – *Министерство внутренних дел*  
МО – *Министерство обороны*  
НАТО – *Организация Североатлантического договора*  
НБ – *Национальная безопасность*  
ОБСЕ – *Организация по безопасности и сотрудничеству в Европе*  
ОВС НАТО – *Объединенные вооруженные силы НАТО*  
ОДКБ – *Организация договора о коллективной безопасности*  
ООН – *Организация Объединенных Наций*  
ПВО – *Противовоздушная оборона*  
ПЗРК – *Переносный зенитно-ракетный комплекс*  
ПИП – *Программа индивидуального партнерства*  
ПТРК – *противотанковый ракетный комплекс*  
ПТУР – *Противотанковая управляемая ракета*  
ПУ – *Пусковая установка*  
РА – *Республика Армения*  
РЛС – *Радиолокационная станция*  
РПГ – *Ручной противотанковый гранатомет*  
РСЗО – *Реактивная система залпового огня*  
СБ РА – *Совет Безопасности Республики Армения*  
СБ НКР – *Совет Безопасности Нагорно-Карабахской Республики*  
СВ – *Сухопутные войска*  
СВО – *Совет по высшему образованию*  
СМИ – *Средства массовой информации*  
СНБ – *Совет национальной безопасности*  
СССР – *Союз Советских Социалистических Республик*  
СпН – *Специального назначения*  
США – *Соединенные Штаты Америки*  
УРО – *Управляемое ракетное оружие*  
ФСБ РФ – *Федеральная служба безопасности Российской Федерации*  
ЦК КПСС – *Центральный Комитет Коммунистической Партии Советского Союза*

- AAULN (The Armenian Automated Union Library Network) – Հայաստանի միջգրադարանային ցանց
- ARENA (Armenian Research Educational Networking) – Association  
Հայաստանի գիտահետազոտական և համակարգչային ցանցերի ասոցիացիա
- ASA (Armenian Student Association) – Հայ ուսանողների ընկերակցություն
- DFC (Defence Intelligence College) – Ռազմական հետխուզություն քոլեջ
- IMET (International Military Education and Training Program) – Ռազմական միջազգային կրթական պատրաստության ծրագիր
- ISRA (International Strategic Research Organization) – Միջազգային ռազմավարական ուսումնասիրությունների կազմակերպություն
- ITU (International Telecommunication Union) – ՄԱԿ-ի Միջազգային հեռուստահաղորդագրային միություն
- IWPR (Institute for War and Peace Reporting) – Պատերազմի և խաղաղության լուսաբանման ինստիտուտ
- P2P (Peer-to-Peer) – բառացիորեն՝ «հավասարից հավասարին», այսինքն՝ ապակենտրոնացված ցանցեր
- SEO (Search Engine Optimization) – Որոնման համակարգերի [համար] օպտիմիզացիա
- UNICEF (United Nations Children’s Fund) – Միացյալ ազգերի կազմակերպության մանկական ֆոնդ
- BND (Bundesnachrichtendienst) – (արևմտյան) Գերմանիայի Դաշնային հետախուզական ծառայություն
- ASAM (Avrasya Stratejik Araştırmalar Merkezi) – Եվրասիական ռազմավարական հետազոտությունների կենտրոն
- Emniyet Genel Müdürlüğü – [Թուրքիայի ներքին գործերի նախարարություն] անվտանգության գլխավոր վարչություն
- ERAREN (Ermeni Araştırmaları Enstitüsü) – Հայկական հետազոտությունների ինստիտուտ

- Genelkurmay Istihbarat Dairesi – *Գլխավոր շտաբի հետախուզական վարչություն*
- Jandarma – *Թուրքական ժանդարմերիան*
- JITEM – *Թուրքական ժանդարմերիայի հատուկ ծառայություն*
- Kontr-Terror Merkezi – *Հակաահաբեկչական կենտրոն*
- MAH (Milli Amele Hizmeti) – *Ազգային բանվորական ծառայություն*
- MEI (Milli Emniyet Hizmetleri) – *Ազգային անվտանգության ծառայություններ*
- MIT (Milli Istihbarat Teşkilati Müsteşarlığı) – *Ազգային հետախուզական խորհուրդ*
- MITEM (Milli Istihbarat Teşkilati Eğitim Merkezi) – *Ազգային հետախուզական կազմակերպության ուսումնական կենտրոն*
- Psikologik Savunma Başkanlığı – *Հոգեբանական պաշտպանության վարչություն*
- Tehditler – *սպառնալիքներ*
- Teşkilat-i Mahsusa – *Հատուկ կազմակերպություն*
- TÜRKSAM (Türkiye Uluslararası İlişkiler ve Stratejik Analizler Merkezi) – *Միջազգային հարաբերությունների և ռազմավարական վերլուծությունների թուրքական կենտրոն*
- Özel Tim – *[ներքին գործերի նախարարություն] հատուկ ջոկատ*







«Հնարավոր իրադրությունները հստակորեն տեսնելը ռազմարվեստ է:

Խաղաղ ժամանակներում կարգի խանգարումների մասին շնոռանալը ռազմարվեստ է:

Պետությունների իրավիճակը հասկանալը, խաթարման ժամանակն իմանալը և խանգարումը կանխելը մինչ այն կպատահի՝ նույնպես ռազմարվեստ է»<sup>1</sup>:

Յազյու Մինենորի

*Սամուրայ և ռազմական տեսաբան (17-րդ դար)*

## 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայոց քաղաքակրթության անվտանգ գոյությունն ու զարգացումը երկարաժամկետ կտրվածքով դեռևս ապահովված չեն: Հայ ժողովուրդն իր հայրենիքում ազատ, անկախ և անվտանգ ապրելու բավարար պայմաններ և երաշխիքներ տակավին չի ստեղծել: Խորհրդային կայսրության փլուզումից ի վեր արդի Հայաստանը<sup>2</sup> շարունակում է «լինել՝ թե՛ չլինելու» սահմանային իրավիճակում գտնվել՝ դեմ հանդիման արտաքին ու ներքին մի շարք մահացու սպառնալիքների, որոնցից ամենա-

---

<sup>1</sup> Մեջբերումը քաղված է Յազյու Մինենորի «Գիրք՝ ռազմարվեստում ընտանեկան ավանդույթների մասին» աշխատությունից, տես Thomas Cleary, *The Japanese Art of War: Understanding the Culture of Strategy* (Boston & London: Shambhala Classics, 1992), p. 71.

<sup>2</sup> Արդի Հայաստան ասելով՝ նկատի ունենք ռազմավարական առումով մեկ միավոր կազմող Հայաստանի Հանրապետությունն ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

մեծն Ադրբեջանի հնարավոր ռազմական նոր ագրեսիան է: Ըստ այդմ էլ՝ Հայաստանի ընթացիկ պետականաշինությունն համար ավելի քան կարևորվում է ռազմավարական միտքն ու նրան վերապահված դերակատարությունը:

Ցավոք, ազգային անվտանգությունն ու ռազմավարությունը հայության քաղաքական գիտակցության մեջ թույլ զարգացած շերտեր են<sup>3</sup>: Այդպիսի վիճակի հիմնական պատճառներից են.

ա) սեփական պետության երկարատև չգոյությունը.

բ) հայոց վերնախավի խնդիրը՝ Կրիկյան Հայաստանի անկումից (1375թ.) ի վեր ազգային ղեկավարության կազմում ռազմական գործի և անվտանգության հարցերի մեջ չմասնագիտացող դասերի՝ հոգևորականության և վաճառականության գերակշռումն ու տնօրինումը և, միաժամանակ, զինվորականության գրեթե իսպառ բացակայությունը: Այս առումով բացառություն են կազմում հայոց զինյալ ազատագրական պայքարի երկու անշատ ժամանակաշրջան՝ 1722-35 և 1890-1921 թվականները, որոնք, սակայն, չհասնելով իրենց նպատակներին և ընդհատվելով, ի վիճակի չեղան արմատական փոփոխություններ առաջ բերելու համազգային ղեկավար օղակների մտայնության մեջ: Իսկ 1920-1990 թթ.՝ Հայաստանի անկախության վերականգնմանն անմիջականորեն նախորդած խորհրդային շրջանում, օտարածին գաղափարախոսություն քարոզող դրածո իշխանությունն ազգային քաղաքական մտքի ուղղակի թշնամին ու խեղդողն էր.

գ) օտար տիրապետության ամբողջ շրջանում հայոց վերնախավի՝ կայսերական ուժերի հետ շարունակական ակամա կամ հոժարակամ համագործակցությունը, որը մտավոր ու հոգեբանական արգելք-

<sup>3</sup> Այս մասին տե՛ս նաև մեր «Ռազմավարական խոռոչները հայոց քաղաքական գիտակցության մեջ կամ Հայաստանի աշխարհաքաղաքական գոյության աքսիոմները», «Հայրենատիրություն» մատենաշար, հատոր Ա. – Հայաստանի ազատագրված տարածքը և Արցախի հիմնախնդիրը: Վերլուծական և փաստագրական նյութերի ընտրանի: Կազմեց և խմբագրեց Ա. Այվազյանը, Երևան, «Լուսակն» հրատ., 2006, էջ 27-44:

ներ առաջացնելով՝ թույլ չէր տալիս ճշտորոշել բուն հայկական շահերը, ո՛չ էլ, բնականաբար, անվտանգության բնագավառում մշակել ու կիրառել գործուն ազգային ռազմավարություն: Այդպիսի պայմաններում առավել արդյունավետ էր դառնում օտար ուժերի նպատակասլաց, հետևողական և ապակողմնորոշիչ ներազդեցությունը հայ քաղաքական գիտակցության վրա.

դ) Հայաստանի ազատագրության հարցին նվիրված մտքի ու նրա հեղինակների անողորմ նկնումը, որ միջոցների մեջ խտրականություն չէր դնում՝ նյութական ռեսուրսներից զրկում, ազատագրական գաղափարների նենգափոխում և ծաղր, սպառնանք ու ահաբեկում, բռնի լուեցում, վերջապես՝ ֆիզիկական հաշվեհարդար:

Արդյունքում, այսօր էլ՝ անկախացումից 16 տարի անց, հասարակական մտայնության ինտելեկտն ուժով, հայ քաղաքական գիտակցությունը և ազգային անվտանգությունը դեռևս խորթ ու դժվար համատեղելի հասկացություններ են: Մեր օրերում էլ հայ զանգվածների, ինչպես նաև նրանց վերնախավի մի զգալի (եթե չասենք՝ գերակշիռ) մասը Հայաստանի և հայ ժողովրդի անվտանգության ապահովումը տակավին համարում է անձնական պատասխանատվության դաշտից դուրս, երևութական խնդիր: Այս վտանգավոր դիրքորոշումը վերջին հարյուրամյակների ընթացքում քանիցս արդյունքավորվել է համազգային աղետներով:

Հայ քաղաքական գիտակցության և ազգային անվտանգության համատեղելիությունը, ավելին՝ նրանց միաձուլումը հրատապ խնդիր է, որի լուծումները գտնվում են կառուցվածքային, տեղեկատվական, գաղափարա-հոգեբանական ու գիտական բնագավառներում:

Իբրև ելակետային սկզբունք՝ պետք է վերջապես ընդունել մի պարզ ռազմավարական ճշմարտություն. ազգային անվտանգության սպառնալիքների ու պահանջների ճշտումը, դրանց չեզոքացման կամ նվազեցման միջոցների որոշումը չի կարելի վստահել որևէ երրորդ կողմի՝ լինի դա պետություն, ռազմաքաղաքական դաշինք, թե օտարազգի մասնագետների խումբ: Այդ աշխատանքը պետք է կատարվի միմիայն սեփական մտավոր ուժերով, որքան էլ դրանք առայժմ սահմանափակ լինեն:

Այլապես մեզ շարունակելու են հրամանել Հայաստանի շուրջը տիրող աշխարհաքաղաքական իրադրության աղճատված պատկերներ, երկրի ներսում առկա սոցիալ-տնտեսական իրադրության բարելավման փակուղի տանող լուծումներ և ՆԱԻԴՆԵՐԻ ռազմավարական նպատակներին համապատասխանեցված գործողությունների ծրագրեր, որոնց արդյունքում դարձյալ ազգովին կարող ենք հայտնվել ջարդած տաշտակի առջև, այս անգամ՝ արդեն ընդմիջտ:

Անհրաժեշտ է ռազմավարական մտքի հայցական դպրոցի ստեղծում՝ ազգային և պետական հովանավորություն վայելող գիտահետազոտական կենտրոնների հիմնադրում, հայրենասեր ու բարձրակարգ մասնագետների պատրաստում: Այս ուղղությամբ գործունեությունն ուշացումով, բայց, կարծես, սկսված է, թեև արդյունքներն առայժմ անտեսանելի են ու գոհացուցիչ համարվել չեն կարող:

Ամեն դեպքում, պետական ու ոչ-պետական հայ ռազմավարական միտքը կարող է իսկապես ինքնուրույնություն ձեռք բերել, եթե (1) Ֆինանսավորվի ազգային աղբյուրներից և (2) իր գործունեության մեջ առաջնորդվի հետևյալ սկզբունքներով.

- Հայաստանի անվտանգության ապահովումը վեր է ամեն տեսակի կուսակցական, խմբակային, հատվածական, կորպորատիվ-առևտրային և անձնական շահերից, նախասիրություններից ու պատկանելություններից:
- Հայ ժողովրդի ազգային արժանապատվությունը պետականատեղծ արժեք է, որը պաշտպանության ու զարգացման կարիք ունի:
- Հայ ռազմավարաբանը և անվտանգության մասնագետը, ինքնաբերաբար հայտնվելով թուրք-ադրբեջանական դաշինքի և նրանց սատարող ուժերի՝ Հայաստանի ու հայության դեմ ծավալած տեղեկատվական-քարոզչական կատաղի պատերազմի հորձանուտում, արժանապատվորեն մարտի բռնվելուց բացի, այլ ելք՝ արդյունավետ և ազգօգուտ աշխատանքի այլ ուղի, պարզապես չունի: Օբյեկտիվորեն ընթացող, հաճախ անհավասար, այդ

պայքարից որոշ հայ մասնագետների խուսափումն ու խուսանավումն իրականում ինքնախաբեություն է և անձնատվություն, ոչ այլ ինչ է, քան հայոց անվտանգության շահերի շառավղից դուրս գործունեություն: Ավելին՝ այդպիսի գործունեությունը, վերջին հաշվով, օտար ուժերի շահերի պաշտպանություն է:

- Ի տարբերություն դիվանագիտության, ռազմավարական մտքի նպատակային լսարանը գլխավորաբար ներսում է՝ ներագային, այլ ոչ դրսում՝ միջազգային: Արտասահմանյան լսարանն իբրև գլխավոր ունկնդիր դիտելն ի չիք է դարձնում ռազմավարական հետազոտության բուն արժեքը, որովհետև այդ դեպքում պարտադիր են դառնում թերասացությունները, վերապահումները, իրականության որոշակի աղճատումները, առաձգական («դիվանագիտական») ձևակերպումները, որոնք անխուսափելիորեն շփոթեցնում և ապակողմնորոշում են ներքին լսարանը, առավել ևս, եթե այդ լսարանը հայկական է՝ ազգային անվտանգության խնդիրներին անհաղորդ և անպատրաստ, այդ բնագավառում տակավին խարխափող մի հանրույթ: Մինչդեռ միայն ռազմավարական իրողություններն ազատ, անկաշկանդ ու պարզ վերլուծող միտքը կարող է լինել այն հիմքը, որի վրա հնարավոր կլինի կառուցել ողջամիտ դիվանագիտություն, ասել է թե՛ արտաքին աշխարհում մեր իրական պահանջներին համապատասխանեցված խոսք ու գործունեություն:

«Հայրենատիրություն» մատենաշարի այս երկրորդ հատորում ընդգրկված ուսումնասիրությունները հիմնականում համապատասխանում են հայ ռազմավարական մտքի կայացման ու զարգացման վերոնշյալ սկզբունքներին: Սակայն հայ ռազմավարագիտության օրակարգն այնքան տարողունակ է (այն, փաստորեն, ներառում է համաշխարհային քաղաքականության կարևորագույն ոլորտները)<sup>4</sup> և այնչափ թերամշակ,

<sup>4</sup> Տե՛ս աստ, ուսումնասիրություն №2:

որ այս ստվար հատորն ընդգրկում, ավելի ճիշտ՝ ուրվագծում է քննության և քննարկման կարոտ բազմաթիվ հարցաշարերից ընդամենը մի քանիսը, այդ թվում.

1. Հայաստանի և նրա հավանական հակառակորդների՝ Ադրբեյջանի և Թուրքիայի զինված ուժերին ու ռազմական հայեցակարգերին վերաբերող խնդիրները (Բաժին Ա.).
2. Հայաստանի անվտանգության համար ազատագրված տարածքի կենսական նշանակության փաստարկումները (Բաժին Բ.).
3. Հայաստանի տեղեկատվական անվտանգության որոշ անհետաձգելի խնդիրների վերլուծում-բացահայտումները (Բաժին Գ.).
4. Հայ հասարակության և Հայաստանի պետության, մասնավորապես, նրա բանակի միջև հարաբերությունների զարգացման ու բարելավման քննարկումը (Բաժին Դ.).
5. Հայ-թուրքական հարաբերություններում էթնիկ հոգեբանության կարևոր դերակատարման հետազոտումը (Բաժին Ե.).
6. Ռազմավարության արևմտյան ժամանակակից տեսությունների ակնարկը և համաշխարհային պատմության մեջ ռազմարվեստի առաջին տեսաբան Սուն Յըզիի «Ռազմական արվեստի մասին» անմահ երկի հայերեն թարգմանությունը (Բաժին Ե.).
7. Հայաստանի ռազմական պատմության արդիական նշանակություն ունեցող որոշ դրվագների վերլուծությունները, ինչպես նաև կայսերական ուժերի՝ հնուց ի վեր մինչև այսօր կիրառած գաղտնի գործողությունների մի ամերիկացի հեղինակի հետազոտությունը (Բաժին Զ.).
8. Արցախյան պատերազմին և թուրքական հատուկ ծառայություններին նվիրված գրքերի, ինչպես նաև անգլերենով ու ռուսերենով վերջերս հրատարակված և լայնորեն գովազդված մի մենագրության գրախոսությունները (Բաժին Է.):

Ընդ որում, ներկայացված թեմաների մի մասն ընտրել ենք նրանց խիստ այժմեականության, մյուսը՝ տեսական արժեք ներկայացնելու առումով:

Առհասարակ, ապագայի նկատմամբ մեկ ռազմավարությունամբ ու գործողությունների մեկ սցենարով առաջնորդվելը տանում է փակուղի, մանավանդ այժմ, երբ աշխարհը զարգանում է աներևակայելի արագությամբ ու բազմաթիվ անհայտներով: Այս առումով, կարծում ենք, շահեկան է, որ հատորի հեղինակների մի մասը, առողջ թերահավատություն ցուցաբերելով Հայաստանի ազգային անվտանգության բնագավառում առկա իրավիճակի հանդեպ, ներկայանում է մասնագիտական ու, որ ամենակարևորն է, կառուցողական քննադատությամբ և առաջարկություններով:

Հատորում զետեղված հետազոտությունների ճնշող մեծամասնությունը հատուկ գրվել է սույն ժողովածուի համար ու հրապարակվում է առաջին անգամ<sup>5</sup>:

05.02.2007

ԱՐՄԵՆ ԱՅՎԱԶՅԱՆ

Քաղաքական գիտությունների դոկտոր,  
«ԱՐԱՐԱՏ» ռազմավարագիտական կենտրոնի տնօրեն

---

<sup>5</sup> Որոշակի խմբագրումներով վերահրատարակվում են միայն թիվ 2, 7, 14, 15 հետազոտությունները:



**Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ  
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ**



## 2.

### ՀԱՅ ՈԱՉՄԱՎԱՐԱԿԱՆ ՄՏՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀՐԱՏԱԴՈՒԹՅՈՒՆԸ\*

#### ԱՐՄԵՆ ԱՅՎԱԳՅԱՆ

Փաստ է, որ մեկ տասնամյակ առաջ Հայաստանը թևակոխեց անկախության իր նոր շրջանը՝ իբրև զարգացած տնտեսություն և սոցիալական ենթակառուցվածք ունեցող երկիր: Հայաստանի մտավոր ներուժը բավական բարձր էր գիտության և ժողովրդական տնտեսության բազմաթիվ ոլորտներում. ունեինք ընտիր ճարտարապետներ, ճարտարագետներ, ֆիզիկոսներ, քիմիկոսներ, բժիշկներ, տնտեսագետներ, այլ մասնագետներ, բարձրորակ բանվորական ուժ: Բոլորովին այլ հարց է, որ այժմ, իբրև հետևանք 1988 թ. երկրաշարժի, 1991-94 թթ. Ղարաբաղյան պատերազմի, թուրք-ադրբեջանական բազմամյա շրջափակման, նաև երկրի ապաշնորհ ղեկավարման և այս ամենին հետևած զանգվածային արտագաղթի, Հայաստանի զարգացածության մակարդակը կտրուկ իջել է:

Այսուհանդերձ, պետք է ընդունել, որ անկախանալու պահին՝ 1991 թվականին, Հայաստանում բացակայում էին արդի միջազգային հարաբերությունների և ռազմավարական հարցերի գծով առաջնակարգ և փորձառու կադրեր: Մեզանում առկա էր, ու դեռևս առկա է, մտավոր ու-

---

\* Արմեն Այվազյան, Հիմնատարրեր Հայաստանի ազգային անվտանգության հայեցակարգի: Մասն Ա: Երևան, 2-րդ լրացված և մշակված հրատ. Երևան, «Լուսակն», 2004, էջ 151-160:

սուրսների ծայրահեղ պակաս միջազգայնագիտության ոլորտում: Սա բնական բաց է ԽՍՀՄ նախկին որևէ հանրապետության համար: Նույնիսկ Ռուսաստանը, որ ուներ դիվանագետների և միջազգայնագետների մի ամբողջ փաղանգ ու նրանց միավորող ակադեմիական բազմաթիվ կառույցներ, ի վիճակի չեղավ արագորեն համապատասխանեցնելու իր ազգային անվտանգության հայեցակարգը ու վերջինից բխող արտաքին քաղաքականության ուղին նոր աշխարհակարգի առաջադրած պահանջներին:

Մեզանում միջազգային հարաբերությունների մտավոր «խոպան» մնալու վառ վկայությունն է լուրջ արժեք ներկայացնող ինքնուրույն վերլուծությունների խիստ սակավությունը: Սա անընդունելի փաստ է, քանզի Հայաստանն ակամա ներքաշված է իր բուն գոյությանն սպառնացող երկարատև հակամարտության մեջ:

Հայաստանի պետական շինարարության գործում մինչև այժմ թույլ տրված խոշոր սխալներն ուղղակիորեն բխում են միջազգային և տարածաշրջանային զարգացումների մեր խիստ թերի ըմբռնումներից: Մեր ռազմավարական մտածողության մեջ գոյացած մեծ բացերը հաջողությամբ և անխուսափելիորեն լցվել ու լցվում են օտար՝ սխալ ու երբեմն էլ միտումնավոր վերլուծականներով և ապակողմնորոշիչ եզրակացություններով:

Հայաստանը կենսունակ պետություն չի դառնա, եթե չկարողանա բարձր գիտական մակարդակով վերլուծել իր ազգային անվտանգության բարդագույն խնդիրները: Անվտանգության բնագավառում ինքնուրույն մտածելու մեր տակավին շատ թույլ կարողությունները և նույնիսկ անկարողությունը հայոց պետականությունը վտանգող ամենալուրջ սպառնալիքներից են:

Հայաստանում ռազմավարական մտքի գոյացումը և առաջընթացը, վաղուց հասունացած անհրաժեշտություն լինելով հանդերձ, հնարավոր են միայն պետական հովանավորության դեպքում: Անկախությանը հաջորդած տասնամյակի ընթացքում Հայաստանում ազգային անվտանգության բնագավառն ուսումնասիրող պատշաճ գիտական որակավոր-

րում ունեցող վերլուծական կենտրոններ ու կադրեր չստեղծվեցին, թեև ի սկզբանե պարզ էր, որ Ղարաբաղյան հակամարտությունը սերտորեն առնչվում է համաշխարհային բազմաբնույթ զարգացումների, որոնց ստույգ և ժամանակին վերլուծումը պարտադիր է: Հայաստանի կառավարությունը նոր է սկսում գիտակցել այս պահանջի լրջությունն ու հրատապությունը<sup>6</sup>: Նկատենք նաև, որ ռազմավարագիտության բնագավառում դեգերող մի քանի ոչ պետական վերլուծական կենտրոնների արտադրանքը հիմնականում սիրողական է և ցածրարժեք:

Այս գործում հապաղել այլևս չի կարելի: Պետք է հիշել, որ մեզանից լավ ոչ ոք չի կարող վերլուծել միջազգային քաղաքականության՝ մեր շահերի վրա ազդող երևույթները և ըստ այդմ էլ որոշել մեր ազգային անվտանգության կարիքներն ու պահանջները: Խնդիրն այն է, որ «միջազգային հարաբերությունները» բազմաճյուղ առարկա է, որին տիրապետելը պահանջում է նույնպիսի երկարամյա ուսումնառություն և ջանադիր աշխատանք, ինչպիսին պահանջվում է, օրինակ, ֆիզիկոս, մաթեմատիկոս կամ քիմիկոս դառնալու համար: Որքան շուտ գիտակցենք այս իրողությունը, այնքան շուտ կձերբազատվենք արտաքին քաղաքականության մեջ սիրողականությունից՝ ինչպես հայեցակարգային առումով, այնպես էլ կադրային բնագավառում:

Այսօր էլ վաղ է խոսել ՀՀ քաղաքական վերնախավի խնդրո առարկա հարցերում պրոֆեսիոնալիզմի չափանիշներին մոտ լինելու մասին: Վերջերս տված իր հարցազրույցներում այս անմխիթար իրողությունը հաստատում է նաև ՀՀ պաշտպանության նախարարը: Թղթակցի հարցին, թե արդյո՞ք ակնկալում է լուրջ աշխարհաքաղաքական վերաբաժանումներ եվրասիական տարածքում, պրն. Ս. Սարգսյանը պատասխանում է. «Այդպիսի ընդհանրացումներ անելու համար անհրաժեշտ է ունենալ լուրջ վերլուծական կառույցներ, որոնք մենք, ցավոք, չունենք: Եվ առհասարակ, այդ մասին լուրջ խոսելու համար պետք է համապատաս-

<sup>6</sup> Gevorg Stamboltsian, “Armenian Military To Set Up First Think-Tank,” *Armenialiberty Report*, 31 May 2004.

խանորեն լուրջ տեղեկատվություն, որով մենք առանձնապես հպարտանալ չենք կարող»<sup>7</sup>: Մի քանի ամիս անց մեկ այլ թղթակցի տված նմանատիպ հարցին, թե՛ «Հակահաբեկչական պաշտպանի հետագա ծավալումը վտանգների առաջ չի՞ կանգնեցնի կոնկրետ մեր երկիրը», տրվում է նմանատիպ մեկնաբանություն՝ «Լիարժեք պատասխան տալու համար անհրաժեշտ է լիարժեք ինֆորմացիա: Մենք այդպիսի լիարժեք ինֆորմացիայի հնարավորություն չունենք»<sup>8</sup>:

Հայաստանի պետության և հայ քաղաքական ուժերի հովանավորությամբ ու ֆինանսավորմամբ գործող վերլուծական կենտրոնները խիստ օգտակար կլինեն և՛ որոշում ընդունողների, և՛ հասարակության համար նրանով, որ կբացահայտեն ու կքննեն Հայաստանի անվտանգության յուրահատուկ իրադրությունը՝ իր մանրամասնություններով և առաջնահերթ լուծում պահանջող խնդիրներով հանդերձ: Այդ կենտրոնների գլխավոր գործը լինելու է հայ ռազմավարական մտքի քայլ առ քայլ ձևավորումը: Ընդ որում, միջազգային հարաբերությունների և ռազմավարագիտության գծով մասնագիտացող հայկական ակադեմիական դպրոցի կենտրոնը պետք է լինի երևանում, քանի որ Հայաստանից դուրս այդպիսի խնդիր լուծել հնարավոր չէ:

### Հայ ռազմավարագիտության հիմնական ուղղությունները

**Տեղեկատվական-վերլուծական.** անհրաժեշտ տեղեկատվությամբ և վերլուծություններով սպասարկել Հայաստանի ազգային անվտանգության ընդհանուր կառույցը, առաջին հերթին՝ պաշտպանության նախարարությունը և ՀՀ զինված ուժերի (ԶՈՒ) գլխավոր շտաբը:

**Տեղեկատվական-ֆարոզչական.** միջազգային ասպարեզում ազդր-բեջանական կողմի ծավալած լայնամասշտաբ քարոզչության չեզոքա-

<sup>7</sup> "Чем дальше, тем ощутиеее для народа будет то, что делается сейчас", *Голос Армении*, 9 октября, 2001:

<sup>8</sup> Սեթ Սարգսյան, «Անում եմ այն, ինչ պարտավոր եմ...» (ՀՀ պաշտպանության նախարարի բացառիկ հարցազրույցը «Ազգ»-ին). – Ազգ, 21 փետրվարի 2002:

ցում, Հայաստանի (ներառյալ Արցախի) տեսակետների հետևողական և անընդհատ քարոզում, ընդ որում՝ արևմտյան ունկնդրին առավել ընդունելի մատուցման եղանակներով:

Ռազմատեսական. Հայաստանի ԶՈՒ սպայական կազմի և կուրսանտների տեսական պատրաստության մակարդակի բարձրացմանը նպատակաուղղված տեղեկատվական-հրատարակչական-թարգմանական գործունեություն, այդ թվում՝ ծանոթացում դասական և նորագույն ռազմական տեսություններին ու զարգացումներին:

Գաղափարական-ռազմահայրենասիրական. ռազմահայրենասիրական գաղափարների և ավանդույթների քարոզում Հայաստանում և սփյուռքում՝ հատկապես աճող սերնդի շրջանում:

### **Հայ ռազմավարագիտության օրակարգը**

Ստորև ուրվագծում ենք այն կարևոր հարցերը, որոնք պետք է դառնան հայ ռազմավարագիտության՝ ակադեմիական մակարդակով կատարելիք ուսումնասիրությունների առարկա: Սրանք այն հարցերն են, որոնք առավել շատ են առնչվում (ուղղակիորեն կամ անուղղակիորեն) Հայաստանի ռազմավարական իրադրությունն ու խնդիրներին:

- 1. Հայաստանի զինված ուժերը և հայ հասարակությունը**
  - 1.1. Հայաստանի ռազմավարական հայեցակարգի բազմակողմանի մշակումներ.
  - 1.2. Հայաստանի՝ պոտենցիալ ագրեսորին զսպելու և հետ պահելու (deterrence-ի) ինֆնուսույն կարողությունների ճշտումներ.
  - 1.3. Հայկական բանակի կառուցվածքային բարելավումների մշակումներ՝ գործող բանակի, ռեզերվի և սպայակույտի բանակի և կազմության վերաբերյալ.
  - 1.4. Այլ պետությունների, հատկապես՝ Իսրայելի և Շվեյցարիայի բանակների կառուցվածքի, կանոնադրության և զինձառայության պայմանների համեմատական ուսումնասիրություններ. այդ բանակների փորձի և մոդելի զանազան տարրերը Հայաստանում կիրառելու նպատակահարմար

րության մանրամասն պատճառաբանված հիմնավորումներ կամ ժխտումներ.

- 1.5. Հայ զինվորի հոգեբանության ուսումնասիրություններ և այդ հոգեբանությանը համապատասխանող ոչ ավանդական միջոցների մշակումներ՝ կարգապահությունն ամրապնդելու, դասալիությունը բացառելու և բանակում զինակցական-եղբայրական ընդհանուր մթնոլորտ ապահովելու նպատակով.
  - 1.6. Դպրոցներում և բուններում ռազմակրթական կենտրոնների գործունեության ծրագրավորում.
  - 1.7. Հայկական բանակի համագգեստի և տարբերանշանների նոր՝ ազգային խորհրդանիշեր ու տարազի տարբեր պարունակող մշակումներ.
  - 1.8. Մշակումներ ՀՀ պաշտպանության նախարարության ռազմական ինստիտուտի ծրագրի, առարկաների և հետանկարային զարգացման վերաբերյալ.
  - 1.9. Հայկական բանակի հետագա բարելավմանն ուղղված պատճառաբանված առաջարկություններ:
- 2. Տարածաշրջանի պետությունների և Այսրկովկասում շահեր ունեցող այլ տերությունների զինված ուժերը և նրանց ռազմական հայեցակարգերը**
- 3. Ժամանակակից ռազմավարական միտքը և Հայաստանը**
- 3.1. «Հեղափոխությունը ռազմական ոլորտում» և դրա կարճաժամկետ և երկարաժամկետ հետևանքները Հայաստանի համար.
  - 3.2. Հայաստանը և ռազմավարության ու աշխարհաբանականության արդի տեսությունները:
- 4. Դարաբաղյան հակամարտության կարգավորում**
- 4.1. Դարաբաղյան հակամարտության հնարավոր լուծումների վերլուծություն.
    - ա) խաղաղ լուծումներ (ԵԱՀԿ Մինսկի խմբի գործընթաց, խաղաղ կարգավորման այլընտրանքային ծրագրեր).
    - բ) պատերազմական լուծումներ.

- 4.2. Արցախի հայկականությունը փաստող պատմաիրավական համապարփակ թղթապանակի կազմում.
- 4.3. Միջազգային իրավունքը ինֆնորշման ու ինֆնապաշտպանության մասին և Արցախի ազատագրումը.
- 4.4. Արցախի և Նախիջևանի պատմական ժողովրդագրությունը:
5. **Հայոց զինված ուժերի և ռազմարվեստի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը**
  - 5.1. Հայոց պատմության դպրոցական և բունական դասագրքերում ռազմական պատմությանը վերաբերող բաժինների և լրացումների ստեղծում.
6. **Հայաստան-Սփյուտք հարաբերությունները և Հայաստանի անվտանգությունը**
7. **Հայոց ցեղասպանությունը և Հայաստանի անվտանգությունը**
8. **Հայաստանը և միջազգային կառույցները (ՄԱԿ, ՆԱՏՕ, ԵԱՀԿ, ԱՊՀ և այլն)**
9. **Կասպիական նավթի ազդեցությունը տարածաշրջանի զարգացման և աշխարհաֆաղաֆականության վրա**
10. **Ադրբեջան. զինված ուժերը, արտաֆին ֆաղաֆականությունը, հասարակությունը, տնտեսությունը, ֆոնրամասնությունների խնդիրը**
11. **Վրաստան. զինված ուժերը, արտաֆին ֆաղաֆականությունը, հասարակությունը, տնտեսությունը, հայ և մյուս ֆոնրամասնությունների խնդիրը**
12. **Թուրքիա**
  - 12.1. Զինված ուժերը և ռազմական հայեցակարգը.
  - 12.2. Քաղաֆական կուսակցությունները և նրանց տեսակետները Թուրքիայի աշխարհառազմավարությունների մասին.
  - 12.3. Հայկական ցեղասպանության այլևայլ ժխտումներ և արդարացումներ.
  - 12.4. Թուրք-ադրբեջանական հարաբերությունները.
  - 12.5. Թուրք-վրացական հարաբերությունները.
  - 12.6. Թուրք-սիրիական հարաբերությունները.
  - 12.7. Թուրք-ռուսական հարաբերությունները.

12.8. Թուրք-ամերիկյան հարաբերությունները.

12.9. Թուրք-հունական հարաբերությունները.

12.10. Թուրք-խորալեյական հարաբերությունները:

### 13. Քրդական խնդիրը և Հայաստանի անվտանգությունը

13.1. Քրդական բանվորական կուսակցության պարտիզանական պատերազմը և թուրքական բանակի հակապարտիզանական մարտավարությունը.

13.2. Քրդական խնդրի՝ Հայաստանի համար վտանգավոր հնարավոր զարգացումների կանխորոշումներ և դրանց համապատասխանող միջոցառումների կանխավ ծրագրավորում:

### 14. Ռուսաստան

14.1. Զինված ուժերը և ռազմական հայեցակարգը.

14.2. ՆԱՏՕ-Ռուսաստան հարաբերությունները և դրանց հնարավոր հետևանքները Հայաստանի համար.

14.3. Քաղաքական կուսակցությունները և նրանց տեսակետները Ռուսաստանի աշխարհառազմավարությունների մասին.

14.4. Ռուս-ադրբեջանական հարաբերությունները.

14.5. Ռուս-վրացական հարաբերությունները.

14.6. Ռուս-չեչենական հակամարտությունը և դրա ազդեցություններն Այսրկովկասի վրա:

### 15. Իրան

15.1. Զինված ուժերը և ռազմական հայեցակարգը.

15.2. Իրանա-ադրբեջանական հարաբերությունները.

15.3. Իրանա-թուրքական հարաբերությունները.

15.4. Իրանա-ամերիկյան հարաբերությունները.

15.5. Իրանա-ռուսական հարաբերությունները.

15.6. Իրանի թրջախոս, քուրդ փոփրամասնությունները:

### 16. Արևմտյան մամուլի և միջազգայնագիտական հրատարակությունների անդրադարձը Հայաստանի, Ադրբեջանի և Ղարաբաղյան խնդրին

16.1. Միջազգային ասպարեզում թուրք-ադրբեջանական և արևմտյան ֆառոզչության դեմ վարվելիք երկարաժամկետ և կարճաժամկետ ծրագրերի և առաջարկությունների մշակում:

- 17. Կիպրոսի հակամարտությունը և բանակցությունների ընթացքը
- 18. Արաբ-իսրայելական հակամարտությունը և բանակցությունների ընթացքը
- 19. Բոսնիա. Դեյթոնի պայմանագրերը և դրանց կիրառման գործընթացը
- 20. Կոսովոյի պատերազմը և հետևանքները
- 21. Իրաքի պատերազմը և հետևանքները
- 22. Ռազմավարությանն ու անվտանգությանը վերաբերող դասական և ժամանակակից գրականության հայերեն թարգմանություններ և դրանց հրատարակություն
- 23. Ռազմավարագիտության և անվտանգության տերմինների հայերեն բացատրական և եռլեզու (հայերեն-անգլերեն-ռուսերեն) բառարանների ստեղծում

*Պատմագիտական, ժողովրդագրական կամ իրավական բնույթ ունեցող թեմաների (օրինակ՝ Հայաստանի ռազմական պատմության և ժողովրդագրության) ուսումնասիրությունը պահանջելու է գիտական պատրաստվածություն, որ Հայաստանում կա և բավարար չափով զարգացած է: Նախնական որոշակի ուղղություն ստանալուց հետո՝ հայրենի պատմաբաններից, ժողովրդագրագետներից և իրավաբաններից շատերը կարող են հաջողությամբ հեղինակել վերը նշված թեմաների մի մասը: Սակայն թեմաների մեծ մասը մտնում է արդի միջազգային հարաբերությունների, ռազմավարագիտության, ռազմաքաղաքական սոցիոլոգիայի ու հոգեբանության բնագավառների մեջ:*

*Կրկենք, սակայն, որ Հայաստանում ո՛չ կառավարությունում, ո՛չ էլ նրանից դուրս, վերը նշված թեմաների մեծ մասը գիտական համակարգված վերլուծության չի ենթարկվում:*



# **3.**

## **ВОЕННАЯ БЕЗОПАСНОСТЬ АРМЕНИИ**

*(основные понятия и определения)*

### **Рачья Арзуманян**

#### **Введение**

##### **I. Военная опасность и военная угроза.**

I.1. Понятия военной опасности и военной угрозы. Источники возникновения.

I.2. Классификация источников военной опасности и военной угрозы для Армении.

I.3. Прогнозирование источников военной опасности и военной угрозы.

##### **II. Военная безопасность.**

II.1. Понятие военной безопасности.

II.2. Принципы государственной политики Армении в области обеспечения военной безопасности.

II.3. Правовые основы обеспечения военной безопасности Армении.

II.4. Основные направления государственной политики Армении по обеспечению военной безопасности.

##### **III. Роль силовых структур в обеспечении военной безопасности Армении**

III.1. Вооруженные Силы РА и Армия Обороны НКР - главный инструмент обеспечения военной безопасности Армении.

III.2. Основные направления деятельности вооруженных сил по обеспечению военной безопасности Армении.

#### **Выводы**

## Введение

Происходящие в мире кардинальные изменения в геополитической, военно-стратегической, духовной сферах недвусмысленно указывают на то, что проблема обеспечения национальной безопасности (НБ) Армении<sup>1</sup> и армянского народа остается одной из наиболее актуальных задач, стоящих перед армянством в 21 веке. Более того, новейшая история Армении и наблюдаемые тенденции позволяют сделать вывод, что наиболее приоритетной задачей, стоящей перед молодыми армянскими государствами, является обеспечение военной безопасности.

Учитывая молодость дисциплины «национальная безопасность» в Армении, на сегодняшний день налицо явный разрыв и смешение понятий, терминологии, методологии в данной области. Это в чем-то естественное и объективное состояние становления армянской государственности и соответствующих дисциплин, на которую накладываются существование двух оформившихся векторов в политике Армении. Первый, который условно можно назвать «северным», ориентирован на Россию и постсоветское пространство в целом, второй – «западный», ориентируется на ЕС и США. Политика комплементаризма, позволяющая Армении, теоретически, поддерживать равновесие и маневрировать в политическом пространстве, создает, с другой стороны, дополнительные трудности при оформлении стратегии в области национальной безопасности и военной сфере. Опираясь, в основном, на силовые структуры военная сфера не терпит двусмысленности, и в данной области возможности компромисса и многовекторной ориентации изначально жестко ограничены.

Прежде чем задумываться о необходимости трансформации военной сферы Армении, интеллектуальная и военная элита армянского народа должна разработать развернутый теоретический базис для уже существующей военной организации Армении, исторически сложившейся в рамках советской, а затем российской парадигмы военного строительства. Очевидно, что такого рода ба-

---

<sup>1</sup> Здесь и далее под Арменией понимаются два армянских государства – республика Армения и Нагорно-Карабахская Республика, составляющие единое целое в военно-стратегическом и культурном пространствах.

зис может быть описан языком советской и российской военной науки, на основе адекватного сложившимся реалиям понятийного и методологического аппаратов.

Данная работа преследует цель познакомить читателя с основными понятиями и определениями, методологией исследований, сформировавшихся в рамках советской/российской военной науки. Это никоим образом не означает, что не должны проводиться исследования, рассматривающие военную организацию Армении в рамках западной военной культуры. Более того, такие работы должны только приветствоваться.

Обеспечение военной безопасности любого государства является многоплановой и многогранной деятельностью. С одной стороны, она предполагает выявление круга стран, являющихся, потенциально, союзниками и установление с ними партнерских отношений. С другой – она связана со способностью противостоять возможным военным опасностям и угрозам, которые могут быть как внешними, так и внутренними. Тем самым, первыми шагами на пути разработки теоретического базиса сферы военной безопасности должны стать:

- анализ существующих международных, в том числе межгосударственных отношений Армении, то есть внешнеполитического контекста армянских государств;
- анализ внутригосударственных отношений и отношений между армянскими государствами – внутриполитического контекста Армении;
- выявление внутренних и внешних источников военных опасностей и угроз.

Очевидно, что без решения данных задач нельзя говорить о практической постановке и решении задач вооруженной защиты Армении.

## **I. Военная опасность и военная угроза.**

### **I.1. Понятия военной опасности и военной угрозы.**

#### **Источники возникновения.**

Армения и армянский народ имеет национальные интересы (жизненные и государственные), реализация которых позволяет обеспечить поступательное развитие армянского мира. С другой

стороны, исторический опыт показывает, что национальные интересы различных стран и народов часто вступают в противоречие, и для их защиты государство и народ бывают вынуждены прибегать к силовым действиям, вступать в войну.

Неизбежность межгосударственных противоречий в системе международных отношений всегда несет с собой потенциальную опасность применения силы для их разрешения. Очевидно, что можно и нужно вводить некоторые градации в степени той или иной опасности, заниматься их ранжированием по силе, масштабу, временным параметрам, проявленности и пр. Градация и ранжирование военной опасности и военной угрозы позволяет дать оценку военно-политическим отношениям государств в системе международных отношений. Они также являются параметрами для оценки внутривнутриполитических отношений и отношений между различными политическими и социальными силами.

Военная опасность является параметром (индикатором), который позволяет оценить стабильность того или иного общества, социума, страны, а также возможность (вероятность) применения против нее средств военного насилия для достижения политических или других целей. В отличие от военной опасности, военная угроза позволяет оценить и артикулировать не потенциальную возможность, а реально сформировавшееся намерение одной из сторон применить силу. То есть военная опасность и военная угроза отражают различную степень напряженности отношений между сторонами. Военная угроза соответствует более высокому уровню напряженности, характеризуется оформившимся открытым противостоянием сторон и намерением разрешить противоречия военно-силовыми методами.

Оценка и анализ военной опасности и военной угрозы требуют понимания источников, а также признаков – общих и особых, краткий анализ которых будет проведен ниже. Источники военной опасности страны могут находиться в самых разных сферах жизнедеятельности общества. Так как военная опасность есть оценка потенциальной возможности, то источники ее возникновения, обычно, являются латентными. Более того, они необязательно связываются с военными приготовлениями и прямой военной эскалацией. Чаще всего, они характеризуют зарождающиеся тенденции, про-

цесс формирования самой возможности военного конфликта, для открытого проявления которых необходимо время.

Источниками военной опасности могут стать самые различные явления и тенденции в развитии общества и страны, основными из которых являются:

- формирующийся геополитический контекст;
- пересечение политических интересов социальных групп, сил, государств и коалиций;
- противоречия на экономической, этнической или религиозной почве;
- гонка вооружений;
- создание или ускоренное развертывание армий, интенсивное военное строительство и т.д.

Отличие военной опасности от прочих заключается в возможности применения военной силы для решения возникшей проблемы. Это означает, что для квалификации той или иной опасности в качестве военной, должна просматриваться связь или тенденция применения военно-силовых методов разрешения противоречий. Другими словами, от эксперта требуется рассмотреть все возможные сценарии развития ситуации, и если какой-то из них требует применения вооруженной силы для разрешения противоречий, то факторы, процессы или тенденции, приводящие к его развитию, должны рассматриваться в качестве источника военной опасности.

В отличие от источников военной опасности, источники военной угрозы, в основном, сосредотачиваются в области военно-политических отношений и проявляются во вполне конкретных военно-дипломатических и военно-экономических шагах сторон, демонстрациях силы, активизации информационной и психологической войны и т. д. Военной угрозе свойственна эскалация напряженности, которая может приобретать свою собственную логику и динамику. В определенных случаях она может выйти из-под контроля иницилирующих ее сторон, когда угроза перерастает в открытый вооруженный конфликт и войну. После определения источников военной угрозы необходимо незамедлительно предпринять меры по предотвращению дальнейшей эскалации с использованием всех доступных инструментов, имеющихся в распоряжении.

Прямая военная угроза связывается с чисто военными признаками:

- подготовкой вооруженных сил к нападению;
- наращиванием оборонных потенциалов и военной мощи;
- заключением новых военных союзов;
- уточнением конкретных планов ведения войны;
- ростом военных расходов;
- активной разработкой и принятием на вооружение новых систем оружия и боевой техники;
- военно-политическими демаршами, усилением информационно-психологического давления и т. д.

Таким образом, резкое наращивание гонки вооружений, проведение мобилизационных мероприятий, усиление боевой подготовки войск (сил), проведение маневров или учений крупных группировок, сосредоточение войск вблизи границ государства и т. п. означает, что военная опасность становится реальной и превращается в непосредственную угрозу для страны.

## 1.2. Классификация источников военной опасности и военной угрозы.

### Общие положения.

Признаки, являясь своего рода внешними проявлениями военной опасности, не раскрывают истинных ее источников и отражают намерения государств, правительств, политических сил, отдельных деятелей и пр. То есть признаки позволяют получить представление о всем потенциальном спектре военной опасности, с которыми сталкивается государство. Однако это не означает, что все тенденции, которые они отражают, развернутся в реальную военную опасность. В совокупности, признаки также играют роль своего рода индикатора уровня напряженности в военно-политических отношениях.

Кратко охарактеризуем основные области, являющиеся источником военной опасности. Основные источники военной опасности находятся в сфере международной политики и межгосударственных политических отношений, что закономерно, так как «война является продолжением политики, только другими средствами». Политические отношения представляют собой взаимо-

действия между государствами, прочими субъектами политического пространства, выстраиваемые на основе интересов, отражающих их проявленные или потенциальные потребности. Государство стремится не только сохранить свою целостность, суверенитет, но и создать условия для своего развития, и именно в сфере политических отношений оформляются национально-государственные интересы стран, политических партий, социальных групп, общественных сил.

Источники военной опасности находятся также в сфере экономических отношений, так как именно в экономической сфере находятся корни многих политических, социальных и других противоречий государств. Источником военной опасности может стать, например, конкуренция за доступ к ограниченным сырьевым ресурсам, рынкам, противоречия в экономической, торговой или финансовой сферах. Не меньшую опасность для существования страны несут с собой внутренние экономические противоречия между общественными и политическими силами и социальными группами.

Источники военной опасности могут находиться и в духовном, культурном, идеологическом пространствах, а также в сфере этнических, национальных и религиозных отношений. В истории известно множество примеров войн, являвшихся результатом столкновения различных культур, идеологий – от крестовых войн и до Второй мировой войны. По мнению ряда исследователей в 21 веке количество таких войн будет только нарастать. Более того, военные конфликты на этнонациональной и религиозной основе становятся скорее правилом, нежели исключением.

Источники военной опасности, часто проявляют себя в военной сфере и включают отношения между субъектами военной политики – государствами, военными блоками, коалициями государств за достижение военного превосходства. Именно в военной сфере, в конечном счете, проявляются основные военно-политические интересы государства, политических сил общества; и источники военной опасности здесь приобретают реальные очертания в виде войсковых формирований, вооружения и военной техники, действий вооруженных сил и пр. Военная политика проводится военно-политическим и, более узко, военным руководст-

вом блоков, коалиций, стран, вооруженных сил и вооруженных формирований.

Источниками военной опасности также могут стать социальные отношения, экология, сфера информационной безопасности и пр. Противоречия в социальной сфере, доведенные до крайности, могут привести к гражданской войне, угрожающей целостности государства. Социальные противоречия, как правило, являются внутренним источником военной опасности, так как они отражают отношения в социуме и регулируются государством. Это не означает, что они не могут подогреваться и направляться внешними силами, преследующими собственные цели и задачи.

Источники военной опасности можно классифицировать:

- по масштабам вызываемых ими военных конфликтов – локальные, региональные и глобальные;
- по длительности – короткие, средние, длительные, периодические;
- по силе воздействия на общественные процессы – слабые, умеренные, сильные, мощные;
- по направленности воздействия – внешние, внутренние;
Հայաստանը պետք է մշտապես ի գորու լինի միայնակ ռազմական ջախջախիչ պարտությունների մատնել Ադրբեջանին: Հայ-ադրբեջանական հավանական պատերազմում կամ պատերազմներում երկու հանգամանք քիչ հավանական է դարձնում Ռուսաստանի ուղղակի միջամտությունը հոգուտ Հայաստանի: Նախ՝ Ադրբեջանը ևս Անկախ Պետությունների Համագործակցության անդամ է ու, հետևաբար, այդպիսի միջամտությունը վերջնականապես կվարկաբեկի Ռուսաստանի համար մեծ նշանակություն ունեցող միջպետական այս կառույցը և կքայքայի նրա կենսունակությունը: Սակայն ավելի կարևոր է այն հանգամանքը, որ Ադրբեջանին դիմակայելու անընդունակ Հայաստանը պարզապես անարժեք կլինի Ռուսաստանի համար՝ որպես ռազմավարական դաշնակից: Հայաստանի տկարանալու գուգահեռ, թուլանալու է նաև Ռուսաստանի (ինչպես նաև Իրանի, Չինաստանի և մի շարք այլ պետությունների) շահագրգռվածությունը՝ սատարելու Հայաստանի գորությունն ու անվտանգությունը: Եվ ճիշտ հակառակը. որքան ավելի ռազմականապես գորեղ լինի Հայաստանը, այնքան ավելի Ռուսաստանն ու բարեկամական մյուս պետությունները պատրաստ կլինեն սատարել մեզ: **Տեսանելի ապագայում Հայաստանի ռազմավարական արժեքի որոշիչը լինելու է նրա՝ Ադրբեջանին ինքնուրույնաբար դիմագրավելու կարողությունը:** Ուստի՝ ադրբեջանական ճակատում Հայաստանն առհասարակ չպետք է հույս կապի Ռուսաստանի տրամադրելիք օգնության հետ: Ասվածը, բնականաբար, չի նշանակում, որ Հայաստանը չպետք է աշխատի Ռուսաստանից այդպիսի օգնություն ստանալ:

### Թուրքական ճակատ

Ավելի մանրամասն անդրադառնանք Հայաստանի համար խիստ վտանգավոր մյուս ճակատին: Հայաստանում ազգային անվտանգության ոլորտի թերամշակ լինելու ամենալուրջ հետևանքն այն է, որ նույնիսկ կառավարական մակարդակում բացակայում է պատրաստվածությունը «ամենավատ օրվան»՝ Թուրքիայի հնարավոր ներխուժմանը:

Ճիշտ է, միջազգային արդի դրույթյան մի շարք հանգամանքներ առայժմ խիստ նվազեցնում են թուրքական ներխուժման հավանականությունը: Այդ հանգամանքներից են՝

ա) հայ-ռուսական ռազմական դաշինքի առկայությունը.

բ) Թուրքիայի ներքին և արտաքին ծանր խնդիրները (տնտեսական ճգնաժամը, քրդերի քաղաքական-մշակութային պահանջները, Կիպրոսի հյուսիսային մասի շարունակվող բռնագավթումից առաջացող միջազգային բարդությունները, Հունաստանի և Սիրիայի հետ չլուծված հարաբերությունները, Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը և այլն).

գ) Հայաստան ներխուժելու դեպքում Թուրքիան կանգնելու է միջազգային կազմակերպությունների և մի շարք պետությունների դատապարտման՝ ներառյալ դիվանագիտական, քաղաքական ու տնտեսական ճնշումների ենթարկվելու վտանգի առջև: Հատկապես խիստ կլինեն Ռուսաստանի, Իրանի, Սիրիայի, Հունաստանի, Կիպրոսի, Եվրոպական Միության, գուցե նաև ԱՄՆ-ի քննադատությունն ու հակազդեցությունը: Իր դերը կխաղա նաև հայկական սփյուռքը:

Այսպիսով՝ առայժմ, աշխարհաքաղաքական ներկա պայմաններում, Թուրքիան հազիվ թե ընդունի Հայաստան ներխուժելու և այդ քայլով մի լրացուցիչ միջազգային գլխացավանք ձեռքբերելու որոշում: Վերոհիշյալ հանգամանքները հաշվի առնելով՝ Հայաստանը քայքայելու և կործանելու իր ծրագրերը Թուրքիան մինչև այսօր փորձել է իրականացնել ո՛չ թե բացահայտ հարձակման դիմելով, այլ Ադրբեյջանի ձեռքերով ու շրջափակման միջոցով:

Սակայն վերն ասվածից ամենևին չի հետևում, թե Հայաստանի թուրքական ճակատի անվտանգությունն այլևս չպետք է մեզ անհանգստացնի: Թուրքական ներխուժման առջև վերը նշված արգելքները բացարձակ ու հավերժական համարվել չեն կարող: Միջազգային և տարածաշրջանային հնարավոր նշանակալից տեղաշարժերի դեպքում Թուրքիայի իշխանությունները կարող են նոր հաշվարկներ կատարել և եզրակացնել, որ, մի կողմից, Հայաստանի վերջնական ջախջախումն ավելի կարևոր է միջազգային անցողիկ դատապարտումից, մյուս կողմից՝ Հայաստանի դեմ լայնամասշտաբ կամ «սահմանափակ» ագրեսիան

ուսումնական տեսակետից արագ ու հեշտ իրականանալի ձեռնարկ է լինելու, ինչպիսին էր, օրինակ, 1990 թ. Քոալեյթի զավթումը Իրաքի կողմից: Թուրքական այդպիսի հաշվարկները նկատի են ունենալու մասնավորապես այն, որ Հայաստանի կործանման դեպքում Թուրքիայի ազդեցությունը Կովկասում, Միջին և Առաջավոր Ասիայում կբազմապատկվի:

### Հիմունքներ Հայաստանի պաշտպանական հայեցակարգի

Արդ՝ վերոշարադրյալից հետևում է, որ Հայաստանի պաշտպանական հայեցակարգի հիմքում ընկած պետք է լինի երկու պայմանի ապահովում.

ա) Հայաստանի՝ Ադրբեջանին ուսումնականապես դիմագրավելու ինքնուրույն կարողություն.

բ) Թուրքական վտանգը չեզոքացնող ուսումնաբաղադրական դաշինք որևէ գերհզոր տերություն կամ պետությունների խմբակցության հետ: Կանխատեսելի ապագայում այդպիսի դեր կարող է կատարել միայն Ռուսաստանը: Նմանատիպ հովանավորությունը նշանակում է նաև Հայաստանի կախվածություն Ռուսաստանից և անկախ արտաքին քաղաքականություն վարելու հնարավորությունների որոշակի սղում, սակայն այս խնդիրը չպետք է մեզ չափից դուրս հուզի: Ցավոք, Հայաստանն առայժմ ի վիճակի չէ միայնակ ապահովելու իր Թուրքական ճակատի անվտանգությունը, ուստի այն դեռևս չի կարող հետևել աշխարհաուսումնական առումով նմանատիպ ծանր կացություն մեջ գտնվող Իսրայելի օրինակին, որի պաշտպանական հայեցակարգը մերժում է հույսը որևէ տերության խոստացած երաշխիքների վրա դնելը և հիմնված է բացառապես սեփական կարողությունների վրա<sup>2</sup> (Թեև Հայաստանի ուսումնական քաղաքականության զարգացման նպատակը պետք է հենց այդպիսին լինի):

Հայաստանի պաշտպանական հայեցակարգի առաջին պահանջ-կետը՝ Ադրբեջանին ինքնուրույնաբար դիմագրավելու կարողության պահ-

<sup>2</sup> Իսրայելական այս հայեցակարգի մասին մանրամասն տե՛ս **Bernard Reich**, "Israel," in **Edward A. Kolodziej and Robert E. Harkavy**, eds., *Security Policies of Developing Countries* (Lexington, Mass.: Lexington Books, 1982), pp. 204, 212-215; **Shimon Peres**, "A Strategy for Peace in the Middle East," *Foreign Affairs* 58 (Spring 1980), p. 891:

պանումը, օբյեկտիվորեն նախատեսում է Արցախում հայկական իշխանության և բանակի մշտական առկայություն ու որևէ այլ ռազմական ուժի բացակայություն:

1990-ական թթ. երկրորդ կեսից Թուրքիայի որդեգրած ռազմական նոր հայեցակարգը ևս գալիս է ընդգծելու Հայաստանի համար Թուրքական վտանգի իրական լինելը:

### Թուրքիայի ռազմական նոր հայեցակարգը

Մինչև ԽՍՀՄ փլուզումը Թուրքիայի ռազմական հայեցակարգն ուներ հիմնականում պաշտպանական բնույթ և կառուցված էր սովորական սպառազինություններով վարվելիք պատերազմում ուժերի հաշվարկների վրա: Միջուկային զենքի կիրառման հետ կապված հարցերը վերապահված էին ՆԱՏՕ-ին կամ ԱՄՆ-ին: Սառը պատերազմի տարիներին ՆԱՏՕ-ում բանավիճում էին այն մասին, թե խորհրդային և Վարշավայի պայմանագրի բանակների հարձակման դեպքում Թուրքական զորքերը որքա՞ն տարածք կկարողանան պահպանել՝ մինչև դաշնակից ուժերն անցնեն հակազորո՞հի: Թուրք զինվորականները հույս ունեին դիմազրավել հակառակորդին սահմանին և այնուհետև կազմակերպված նահանջել: Ամերիկյան ծրագրավորողները պակաս լավատես էին. 1950-ական թթ. վերջի հաշվարկներով՝ Թուրքերն արագ շարտվելու էին մինչև Միջերկրական ծով՝ Իսկենդերունի շրջանը: Թեև այս հաշվարկները ժամանակի հետ փոփոխվում էին, 1990 թ. Թուրքական գլխավոր շտաբը տակավին անվտանգության հիմնական խնդիր էր համարում երկրի տարածքի բազմաճակատ պաշտպանությունը<sup>3</sup>:

1990-ական թթ. առաջին կեսին այս մտայնությունը դեռ չէր վերանայվել: 1997 թ. Թուրք ռազմական մեկնաբանները, հիմնվելով Ռուսաս-

<sup>3</sup> Michael Robert Hickok, "Hegemon Rising: The Gap Between Turkish Strategy and Military Modernization," *Parameters (US Army War College Quarterly)*, Summer 2000, Vol. XXX, դ 2, pp. 105-119 (ստորև, սակայն, այս հոդվածի էջերը նշում ենք այնպես, ինչպես այն հայտնվում է ինտերնետում):

տանի, Հունաստանի, Իրաքի, Իրանի և Սիրիայի՝ կռվի դաշտ սովորական ուժեր հանելու կարողությունների վրա և նրանց վերագրելով տարածքային նկրտումներ՝ այդ պետությունները համարում էին անվտանգություն գլխավոր սպառնալիքներ<sup>4</sup>: ԱՄՆ-ում Թուրքիայի նախկին դեսպան Շյուքրու էլեքդաղն իր «Երկուսուկես պատերազմի ռազմավարություն» հայտնի հոդվածում, արտահայտելով ռազմական գերատեսչություն տեսակետները, ընդգծում էր, որ Թուրքիան պետք է ծրագրի և պատրաստ լինի խոշորամասշտաբ պատերազմ մղել միաժամանակ երկու տարբեր ճակատներով (օրինակ՝ Սիրիայի և Հունաստանի դեմ) ու մեկ ներքին պատերազմ՝ քրդական ապստամբություն դեմ<sup>5</sup>:

Այս հայեցակարգով Թուրքական զինված ուժերը պետք է կազմակերպվեին, մարզվեին և սպառազինվեին՝ ունենալով երկու հիմնական խնդիր. ա) Թուրքիայի ցամաքային և օդային ուժերը պետք է կարողանային կասեցնել զրահատանկային հուժկու ներխուժումներն արևելքից (ԽՍՀՄ/Ռուսաստան) ու հարավից (Սիրիա, Իրաք), ապա անցնեին խոր էջելոնային պաշտպանության. բ) Բանակը և ներքին զորքերը (ժանդարմերիան) պետք է պատրաստ լինեին վարելու հակապարտիզանական պատերազմ՝ հենվելով ամրացված շրջանների և արագ արձագանքման շարժուն ուժերի վրա: Նավատորմին վերապահված էր Բոսֆորի նեղուցի հսկողությունը: Այսպիսով, զինված ուժերից պահանջվում էր մարտավարական շարժունություն, մինչդեռ ռազմավարական շարժունությունը և թշնամու խորը թիկունքին հարված հասցնելու կարողությունը պակաս կարևոր էին համարվում, քանզի ակնկալվում էր, որ պատերազմն ընթանալու է Թուրքիայի տարածքում<sup>6</sup>:

Մինչև վերջերս Թուրքիայի զինվորականությունը, հավատարիմ մնալով Քեմալ Աթաթուրքի առաջադրած այն տեսակետին, ըստ որի՝

<sup>4</sup> Malik Mufti, "Daring and Caution in Turkish Foreign Policy," *Middle East Journal*, 52 (Winter 1998), pp. 34-40.

<sup>5</sup> Sükrü Elekdağ, "2 and 1/2 War Strategy," *Perceptions: Journal of International Affairs*, դ 1 (March-May 1996), pp. 33-57.

<sup>6</sup> Hickok, "Hegemon Rising: The Gap Between Turkish Strategy and Military Modernization," p. 3.

Թուրքիայի ճակատագիրը կապված է միմիայն Արևմուտքի հետ, մահմեդական արևելքում ազդեցությունը մեծացնելու փորձերը գնահատում էր իբրև իսլամականների հետադիմական ձգտումներ, որոնք կարող են վտանգել երկրի արևմտամետ ուղին: Սակայն 1999 թ. սկզբին պաշտպանությունն նախարարությունը հրապարակեց «Սպիտակ տետրակ. պաշտպանություն 1998» պաշտոնական տեղեկագիրքը, որում, շեղվելով արտաքին քաղաքականության յոթանասնամյա ավանդույթից, Թուրքիան դիտվում է արդեն իբրև «եվրասիական երկիր», որը «պարտավոր է պահպանել ու ընդլայնել կապերը և՛ Արևմուտքի, և՛ Արևելքի հետ»<sup>7</sup>: Տեղեկագիրքը շարադրում է նաև Թուրքիայի ռազմական քաղաքականության պաշտոնական գլխավոր սկզբունքները.

(1) Զսպում (deterrence). ռազմական այնպիսի ուժի պահպանում, որն ի գորու է սաստել արտաքին և ներքին սպառնալիքներ հարուցողներին.

(2) Կոլեկտիվ անվտանգություն. գործուն մասնակցություն միջազգային և տարածաշրջանային դաշինքների և կազմակերպությունների աշխատանքներին՝ հատկապես ՆԱՏՕ-ի և Արևմտաեվրոպական միության շրջանակներում.

(3) Առաջ մղված պաշտպանություն (forward defense). հնարավոր զավթողականության (ագրեսիայի) բովանդակությունն առավել վաղ հայտնաբերելու և այն դրսից կանխելու կարողություն.

(4) «Խաղաղարարություն». Հակամարտություններին միջամտելու և խաղաղարար գործողություններին մասնակցելու կարողություն<sup>8</sup>:

Այս դրույթներին պետք է ավելացնել նաև Թուրքիայի գլխավոր շտաբի պետ Հուսեյն Կիվրիկոզլուի՝ «նախահարձակ ճակատամարտի» (forward engagement) դրույթը, ըստ որի՝ զինված ուժերը պետք է պատրաստ լինեն կանխելու Թուրքիայի շահերի դեմ եղած սպառնալիքները՝

<sup>7</sup> Ministry of National Defense (Turkey), *White Paper-Defense 1998* (Ankara: Ministry of National Defense, 1998), p. 5.

<sup>8</sup> Ministry of National Defense (Turkey), *White Paper-Defense 1998*, p. 16.

մինչև դրանց թուրքիայի սահմաններից ներս թափանցելը<sup>9</sup>: Կիվրիկօղլուի միտքը պարզաբանված է «Սպիտակ գրքում»:

«2000-ական թթ. ընդհանուր օպերատիվ հայեցակարգով պահանջվում է վերահսկելի դարձնել այն շրջանը, որտեղ գտնվում է ագրեսորը և նրան պարտության մատնել իր խոր թիկունքում ու ռազմադաշտի մատույցներում: Այդ նպատակին հասնելու համար կարևոր են գերակշիռ կրակային ուժով և զորաշարժային (մանյովրային) կարողություններով զորքեր ունենալը, ագրեսորի ամենաթույլ տեղի նշտումը, նշանակետերի հանաշումն ու հայտնաբերումը, նախագուշացման համակարգերի, զորքերի ղեկավարման, էլեկտրոնային պատերազմի և կապի ու տեղեկատվական համակարգերի համադրված և արդյունավետ կիրառումը»<sup>10</sup>:

Այսպիսով՝ անգամ պաշտոնական փաստաթղթերում թուրքական հրամանատարությունը ծրագրում է ապագա պատերազմները մղել թուրքիայի սահմաններից դուրս: ԱՄՆ-ի բանակի հեղինակավոր «Փարամիթրոզ» հանդեսում վերլուծելով այս նյութերը՝ նույն եզրակացությունն է հանգում թուրքական զինվորականության հարցերով մասնագիտացած մի հեղինակ. «Անկարան ընդունել է գործողությունների այնպիսի մի հայեցակարգ, որով զինվորականությունը ձգտելու է վերացնել թուրքիայի դեմ սպառնալիքները նրա ինքնիշխան տարածքից դուրս:

<sup>9</sup> Hickok, "Hegemon Rising: The Gap Between Turkish Strategy and Military Modernization," p. 4, մեջբերումը կատարված է թուրքական հետևյալ պարբերականից՝ Ulusal Strateji [Միջազգային ռազմավարություն] (March-April 1999), pp. 68-73.

<sup>10</sup> "The general operation concept of the 2000s stipulates the creation of a sensor region where the aggressor is in and defeating him beyond and in the depths of the theater. Therefore, possession of troops with overwhelming fire power and maneuver capability and ensuring by determining its weakest position, the coordinated and efficient use of target identification, detection, and warning systems as well as the command [and] control, electronic warfare, and communication information systems are important assets to this end." Ministry of National Defense (Turkey), White Paper-Defense 1998, p. 19.

Թուրքական զինված ուժերը ոչ միայն ընդունակ են, այլև ցանկանում են գործել իրենց սահմաններից դուրս»<sup>11</sup>:

Այս նպատակին են ուղղված նաև թուրքական զինված ուժերի վերազինման չափազանց հավակնոտ ծրագրերը<sup>12</sup>: Դեռևս 1998 թ. օգոստոսին, մինչև գլխավոր շտաբի պետ նշանակվելը, Թուրքիայի ցամաքային զորքերի հրամանատար, գեներալ Կիվրիկօղլուն, շեշտելով, որ «զորքերի արագ ծավալումը հեռավոր շրջաններում կենսական նշանակություն ունի այն ռիսկերի և պատասխանատվությունների համար, որ մենք հնարավոր է ստանձնենք», այնուհետև շարադրեց արդիականացման մի ծրագիր, որը Թուրքիային պետք է ընձեռեր համատեղ գործողությունների ռազմավարական շարժունություն և երկրի սահմաններից դուրս հարված հասցնելու կարողություն<sup>13</sup>: Այդ ծրագրի իրականացումը, գեներալ Կիվրիկօղլուի հավաստմամբ, կբերի նրան, որ թուրքական բանակը կունենա «այնպիսի զենքերի համակարգեր, որոնք առավելություն կհաստատեն թշնամու վրա՝ նրա տարածքի խորը թիկունքում, կկիրառեն «խելացի» զինամթերք՝ ներառյալ «երկիր-երկիր» հեռահար հրթիռներ՝ ապահովելով կրակակետերի շարունակական ու լուրջ քողարկումը: Բանակը նաև կունենա նորագույն զրահով պատված արդիական տանկեր և արդյունավետ հակատանկային զենքերի համակարգեր, դրանց կից հակաօդային պաշտպանության միջոցներ, ինչպես նաև դեսանտային զորքեր տեղափոխող ուղղաթիռներ... Տեղեկատվության հա-

<sup>11</sup> Hickok, "Hegemon Rising: The Gap Between Turkish Strategy and Military Modernization," p. 4.

<sup>12</sup> Այս ծրագրերի մասին տե՛ս Ministry of National Defense (Turkey), *White Paper-Defense* 1998, pp. 117-139; Vahit Erdem, "Defense Industry and Investment Projects," *Turkish Review Quarterly Digest* (Spring 1988), p. 18; Michael Robert Hickok, "Peace Onyx: A Story of Turkish F-16 Coproduction," in *International Military Aerospace Collaboration*, ed. Pia Christina Wood and David S. Sorenson (Aldershot, U. K.: Ashgate Press, 1999), pp. 153-181; Idem, "Hegemon Rising," pp. 5-9; Վահրամ Պետրոսյան, «Թուրքիան և ռազմականացումը»։ – Հայ զինվոր, 10-17 ապրիլի 1999 թ., դ 14 (269):

<sup>13</sup> Huseyin Kivrikoglu, "Land Forces Organization," *Ankara Savunma ve Havacilik [Անկարայի պաշտպանություն և հակաօդային պաշտպանություն]* (September-October 1998), pp. 10-11.

վաքման համակարգերը հնարավորություն կտան ստորաբաժանումներին բոլոր մակարդակներում հայտնաբերել, ճշտորոշել և ճանաչել թշնամուն իրենց կարողություն շառավղի մեջ»<sup>14</sup>:

Դատելով ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ, գեներալ-մայոր Արթուր Աղաբեկյանի մի ելույթում բերած փաստերից և գնահատականներից, հայկական բանակի հրամանատարությունը՝ թուրքական ռազմական հայեցակարգի դրույթների մասին ունի լրացուցիչ սեփական տեղեկատվություն.

«[Ադրբեջանից բացի] լուրջ սպառնալիք է շարունակում ներկայացնել և Թուրքիան: Վերջին՝ 1998թ. խմբագրությամբ ընդունված «Ազգային ռազմական հայեցակարգում» Հայաստանը դիտվում է որպես Հունաստանից հետո թվով երկրորդ հավանական հակառակորդը: Թուրք ռազմագետների կողմից Հայաստանի ներկա իշխանությունները դիտվում են իբրև «ծայրահեղ ազգայնական ուժեր»: Ավելին, Թուրքիան արդեն իսկ ուղղակիորեն ներհաշված է հայ-ադրբեջանական հակամարտության մեջ: Նա իր վրա է վերցրել Ադրբեջանի զինված ուժերի վերակառուցման, մարտական կարողությունների բարձրացման, կադրերի պատրաստման ու վերապատրաստման խնդիրները»<sup>15</sup>:

*Ի մի բերենք: Թուրքիայի ռազմավարական մտածողությունն այնպիսի վերափոխություն է ապրել, որ անգամ թուրք և ամերիկացի վեր-*

---

<sup>14</sup> [The army would have] weapons systems that would establish preponderance over the enemy deep inside his territory, fire smart ammunition including long-range ground-to-ground missiles, and provide a continuous and sound fire cover. [The army also would have] modern tanks with advanced armor and effective anti-tank weapons systems with organic air defense and helicopters for air assault troops. Machinery would rapidly erect hurdles to the enemy's mobility and open passages to enhance the mobility of the friendly units. Intelligence gathering systems would enable units at every level to detect, pinpoint, and recognize the enemy within the range of their capability. – **Huseyin Kivrikoglu**, “Land Forces Organization,” p. 18.

<sup>15</sup> Արթուր Աղաբեկյան, «ժամանակակից մարտահրավերներն ու ՀՀ ազգային անվտանգության ծրագրավորման գործընթացը», էջ 22:

լուծաբանները խոսում են «նոր (նեո) օսմանյան օրակարգի» հաստատման մասին<sup>16</sup>: Նրանց հետ համամիտ են ուսաստանցի մեկնաբանները, նշելով, որ «Մենք ականատեսն ենք Բարձր Դուան սրընթաց վերածննդին՝ սրանից բխող աշխարհաքաղաքական բոլոր հետևանքներով հանդերձ»<sup>17</sup>: 1999 թ. դեկտեմբերի 3-ին Վաշինգտոնի ինստիտուտներից մեկում Թուրքիայի պաշտպանության նախարար Հիքմեթ Սամի Թյուրքի կարդացած զեկուցման մեջ եղած դրույթների մի վերլուծություն էլ չի բացառում Թուրքիայի ուղղակի ռազմական ներխուժումն Այսրկովկաս, հատկապես, զարաբաղյան հակամարտության կապակցությամբ<sup>18</sup>:

Այսպիսով՝ Կենտրոնական Ասիայից մինչև Բալկաններ գերիշխան դեր ստանձնելու իր նոր օսմանյան դիրքորոշումներով Թուրքիան առավել վտանգավոր է դարձել իր հարևանների և առավել անկանխատեսելի՝ իր դաշնակիցների համար: Իրապաշտովյունը պահանջում է ընդունել, որ, ինչպես նախկինում, այսօր ևս Թուրքիան սպառնում է Հայաստանի բուն գոյությունը:

### Հայ-թուրք/ադրբեջանական առևտրատնտեսական հարաբերությունները և Հայաստանի անվտանգությունը

Ըստ երևույթին, Հայաստանի որոշ նախկին ղեկավար ղեմքեր, հատկապես ՀՀ առաջին նախագահը, այն կարծիքին էին, թե Թուրքիայի և Ադրբեջանի հետ առևտրատնտեսական աշխույժ հարաբերությունների հաստատումով Հայաստանը մեկընդմիջտ կլուծի իր ազգային անվտանգության ցավոտ խնդիրները: Սա միամիտ ու սխալ տեսակետ է:

<sup>16</sup> Ola Tunander, "A New Ottoman Empire? The Choice for Turkey: Euro-Asian Centre vs. National Fortress," *Security Dialogue*, 26 (December 1995), 413-26; Hickok, "Hegemon Rising," p. 9-10.

<sup>17</sup> Наталья Айрапетова, "Турецкий марш на просторах СНГ. Блистательная Порта вновь стремится на геополитическую арену", *Византийское наследство информационно-аналитический журнал* № 5, 2003, стр. 43-44.

<sup>18</sup> Колобов О. А., Корнилов А. А., Симонян А. Г., *Российско-армянские отношения: исторический опыт, стратегические вызовы и перспективы развития* (Нижний Новгород-Ереван: Типография Нижегородского госуниверситета, 2001), стр. 18-19.

1890-1914 թթ. հայ-թուրքական և հայ-թաթարական (ադրբեջանական) առևտրատնտեսական հարաբերությունները չափազանց սերտ էին ու աշխույժ, սակայն դա չկանխեց հայոց ցեղասպանությունը: Մինչև 1990 թ. Քուվեյթի և Իրաքի առևտրատնտեսական, ֆինանսական, ինչպես նաև քաղաքական հարաբերությունները փայլուն էին, սակայն դա չկանխեց Իրաքի ներխուժումը Քուվեյթ: Մինչև 1988 թ. Հայաստանն ու Ադրբեջանը համագործակցում էին տնտեսության գրեթե բոլոր բնագավառներում, սակայն դա արգելք չեղավ Ղարաբաղյան հակամարտության բռնկման համար: Առևտրատնտեսական սերտ հարաբերությունները ինքնըստինքյան ռազմավարական շահերի ներդաշնակության չեն հանգեցնում, այլ երբեմն իրենք են հակամարտությունների պատճառ դառնում: Արևմտյան հակամարտաբանները (կոնֆլիկտոլոգները) վաղուց են նկատել, որ փոխադարձորեն կախյալ տնտեսական համակարգերը շատ ավելի են հակված հակամարտության, քան միմյանցից անկախ տնտեսական համակարգերը: Հատուկ ընդգծվել է այն փաստը, որ սառը պատերազմի տարիներին հնարավոր եղավ խուսափել իսկական պատերազմից նաև շնորհիվ այն հանգամանքի, որ սոցիալիստական և կապիտալիստական ճամբարների տնտեսական համակարգերը գոյատևում էին ինքնաբավ և միմյանցից անկախ ռեժիմներում: Բացի այդ, հայ-թուրքական առևտրատնտեսական հարաբերություններում հնարավոր դրական զարգացումները երբեք չեն կարող լցնել ցեղասպանության օրինաձին արդյունքը՝ երկկողմանի անվստահության անդունդը<sup>19</sup>:

<sup>19</sup> Թուրքիայի քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ ևս ծագում է նույն այդ «հայելային» անվստահությունից: Նկատելով այն փաստը, թե որքան չնչին է Թուրքիայի ազգային անվտանգությանը Հայաստանի ներկայացրած իրական վտանգը, կարելի է միաժամանակ պատկերացնել, թե ինչպիսի մեծ չափերի են հասնում այդ քաղաքականությունը սնուցող թուրքերի մտավախությունները՝ հայերի մտադրությունների և Հայաստանի հետագա հզորացման վերաբերյալ: Այս մասին ավելի մանրամասն տես՝ Ա. Այվազյանի «Հիմնատարրեր՝ Հայաստանի ազգային անվտանգության» նշվ. աշխատության «Հայոց պատմական վրեժի զգացում» ենթաբաժինը, էջ 192-196:

Սա ամենևին չի նշանակում, որ հայ-թուրքական ու հայ-ադրբեջանական առևտրատնտեսական հարաբերությունները ցանկալի չեն<sup>20</sup>: Դրանք ցանկալի են Հայաստանի տնտեսության բնականոն զարգացման համար (եթե, իհարկե, երաշխավորվի նաև համագործակցության իրավահավասարությունն ու փոխշահավետությունը): Պարզապես՝ այդ առևտրատնտեսական հարաբերությունների զարգացումը և Հայաստանի անվտանգության ապահովումը տարբեր բաներ են: Հայաստանի անվտանգությունը պետք է ապահովվի այլ միջոցներով:

### Հայաստանի ռազմավարությունը թուրքական հնարավոր ներխուժման դեպքում

Թուրքական ներխուժումը Հայաստան հավանական զարգացում է, որը պետք է հաշվի առնել ամենայն լրջությամբ ու սառնասրտությամբ:

Ինչպիսի՞ ռազմավարություն պետք է ընտրի Հայաստանը Թուրքիայի հետ հնարավոր պատերազմում:

Ընդունված տեսակետն այն է, որ թուրքական բանակը, օգտագործելով իր թվային առավելությունը, աշխարհագրական-տարածքային մեծ գերակշռությունը և Հայաստանի ռազմավարական խորությունը չունենալը, սկզբունքորեն ի վիճակի է հաղթահարելու հայկական պաշտպանական զծերը և, մասամբ կամ ամբողջությամբ, գրավելու Հայաս-

---

<sup>20</sup> Ըստ Հայաստանի պաշտոնական աղբյուրներից քաղված տվյալների՝ 1999 թ. հայ-թուրքական առևտրի ծավալը հասել է 42 միլիոն դոլարի, իսկ որոշ ոչ պաշտոնական տեղեկություններով՝ 150 միլիոն դոլարի (Emil Danielyan, “Turkey-Armenia Travel in Question as Ankara Tightens Visa Regime,” RFE/RL News Briefs, 5 October 2000): Ինչպես գրում է այս հարցն առավել մանրամասնորեն հետազոտած հեղինակը՝ «Թուրքիան Հայաստանի հետ իրականացնում է արտաքին առևտրային կապեր, որոնք, փաստորեն, չեն գտնվում պետության վերահսկողության ոլորտում: Այդպիսի տարերային ու պատահական ձևերով իրականացվող առևտուրը հանգեցնում է բացասական հետևանքների հատկապես Հայաստանի տնտեսության համար» (Թորոս Թորոսյան, Հայաստան-Թուրքիա. առևտրատնտեսական կապեր: Երևան. ՌԱՀՀԿ, 2001, էջ 5):

տանը: Այս տեսակետի հիման վրա արվում է այն ծանոթ հետևությունը, որ սեփական ուժերով թուրքերին դիմակայելու մասին շարժե նույնիսկ մտածել, այլ հույսը պետք է դնել միմիայն օտար դաշնակից ուժերի, նախ և առաջ Ռուսաստանի ռազմական միջամտության վրա:

Հայաստանի պետական շինարարության մեջ թույլ տրված խոշոր վրիպումները մասամբ առաջացել են ռազմավարական իրադրության ճիշտ այսպիսի թերի ընկալումներից և սեփական ուժերի թերագնահատումից: Հայկական բանակը կառուցվել է Ռուսաստանի հավերժական հովանավորության և հայ-ռուսական դաշինքին Ռուսաստանի անխախտ հավատարմության նախադրյալի վրա, որը, ցավոք, իրապաշտ չէ: Նախ պետությունների «սիրո» վրա հիմնված հավերժական դաշինքներ ընդհանրապես չեն լինում: Հետո, ինչպես ցույց է տվել պատմությունը, Ռուսաստանը քանիցս չի տրամադրել կամ չի կարողացել տրամադրել Հայաստանին նախապես խոստացած օգնությունը (1722-35 թթ., 1878 թ., 1914-18 թթ., որոշ չափով նաև 1988-1997 թթ.): Երբեմն Ռուսաստանին ստիպել են զոհել Հայաստանն ու հայկական շահերը, երբեմն էլ հյուսիսային այդ կայսրությունը բավարար հնարավորություններ կամ պարզապես ցանկություն ու կամք չի ունեցել այդ շահերը պաշտպանելու համար: Մեզանից անկախ պատճառներով՝ նույնը չի բացառվում նաև ապագայում, որին մենք պետք է այսօրվանից ու մշտապես պատրաստ լինենք: Ինչ խոսք, Ռուսաստանի հետ մեր ռազմաքաղաքական դաշինքն անգնահատելի նշանակություն ունի Հայաստանի ռազմական անվտանգության համար, և անհրաժեշտ է այն ամեն կերպ փաշփայել և ամրապնդել: Սակայն, ինչպես վերը նշել ենք<sup>21</sup>, ռուսական ռազմական «հովանոցը», մի կողմից, այսօր իսկ բավարար չէ Հայաստանի թուրքական ճակատի պաշտպանունակությունը 100 տոկոսով ապահովելու համար, մյուս կողմից՝ անկախ մեր ցանկությունից, Ռուսաստանի հովանավորությունը, ներքին կամ արտաքին հանգամանքների բերումով, մի գեղեցիկ օր կարող է հանկարծ հօդս ցնդել ընդհանրապես կամ

<sup>21</sup> Ա. Այվազյան, Հիմնատարրեր, նշվ. աշխ., էջ 118-122:

Թեկուզ ինչ-որ մի ժամանակահատվածով: Այդ կարճաժամկետ կամ երկարաժամկետ հատվածում Հայաստանը կարող է հայտնվել միայնակ թուրքական բանակների առջև:

Այս կապակցությունները մի պահ շեղվենք և նկատենք, որ յուրաքանչյուր կայացած պետություն իր ռազմական քաղաքականությունը կառուցում է հավանական վատթարագույն սցենարների հաշվառման վրա: Ազգային անվտանգության հարցերում այս մոտեցումը վաղուց արմատացել է զարգացած երկրներում՝ ներառյալ ԱՄՆ-ում, շնորհիվ նաև քաղաքագետների ու ռազմավարաբանների: Հարվարդի համալսարանի պրոֆեսոր, ճանաչված ռազմավարագետ Սամուել Հանտինգտոնն, օրինակ, սկսած 1950-ականներից՝ «պատճառաբանում է, որ ամերիկյան հասարակությունը պետք է ունենա այնպիսի զինվորական և հետախուզական ծառայություններ, որոնք մտածում են ամենաողբերգական, հոռետեսական կատեգորիաներով»<sup>22</sup>: Իսկ Հայաստանի պարագայում վտանգի գերազանահատումը թեև կարող է ունենալ որոշակի բացասական հետևանքներ (այդ թվում՝ տնտեսության վրա լրացուցիչ ռազմական ծախսեր դնելով), սակայն այն անհամեմատելիորեն պակաս վնասաբեր է վտանգի թերագնահատումից, որը սպառնում է ազգի բուն գոյությունը: Իհարկե, լավագույն լուծումը վտանգի ճշգրիտ որոշումն է:

Ինչևէ, մի պահ պատկերացնենք Ռուսաստանից և միջազգային համայնքից լքված և թուրքիայի ու Ադրբեջանի ռազմական գործության առջև մեն-մենակ մնացած Հայաստանը և դարձյալ առաջադրենք նույն հարցը. ինչպիսի՞ պաշտպանական ռազմավարություն ու մարտավարություն պետք է ունենա Հայաստանը՝ միայնակ դիմագրավելու համար թուրքական կամ թուրք-ադրբեջանական հնարավոր ներխուժմանը: Ահա այս հարցը պետք է դրված լինի Հայաստանի ռազմական քաղաքականության հիմքում:

<sup>22</sup> “Since the 1950s he has argued that American society requires military and intelligence services that think in the most tragic, pessimistic terms” (տե՛ս **Robert D. Kaplan**, “Looking the World in the Eye,” *The Atlantic Monthly*, December 2001, Vol. 288, դ 5, pp. 68-82.

Պատասխանը միակն է՝ Հայաստանը պետք է ձգտի թշնամու համար հնարավորին չափ ցավալի, դժվարին ու նույնիսկ անհնարին դարձնել իր զավթումը: «Միևնույն է՝ կպարտվենք, հետևաբար, դիմադրությունն անիմաստ է» փաստարկը քննադատություն չի դիմանում: Սառը պատերազմի տարիներին ինչպես ԱՄՆ-ը, այնպես էլ Խորհրդային Միությունը հասկանում էին, որ հակառակորդի հարձակման դեպքում ոչ միայն պարտվելու, այլև բնաջնջվելու են: Սակայն նրանցից որևէ մեկի մտքով չէր անցնի առաջնորդվել «միևնույն է՝ բնաջնջվելու ենք, ուստի դիմադրությունը նախապատրաստվելն անիմաստ է» մտայնությամբ: Երկուսն էլ հասկանում էին, որ հակառակորդը չի հանդգնի հարձակվել, եթե համոզված լինի, որ ծանր կորուստներ է տալու: Արդ՝ պարզ է, որ թուրքական (կամ թուրք-ադրբեջանական) ներխուժումը սպառնալու է Հայաստանի և հայ ազգի ֆիզիկական գոյությունը: Պարզ է նաև, որ առայժմ Հայաստանն ի վիճակի չէ համարժեք սպառնալիք ներկայացնելու Թուրքիայի անվտանգությունը: Այլ կերպ ասած՝ մեր հակահարվածը առայժմ չի կարող սպառնալ Թուրքիային նույն հետևանքներով, ինչ Թուրքիայի հնարավոր հարձակումը Հայաստանի վրա: Սակայն աներկբայելի ճշմարտությունը հետևյալն է. որքան ավելի դժվար ու ցավալի (ոչ անպայման՝ անհնարին) լինի Հայաստանի զավթումը, այնքան ավելի պակաս կլինի Հայաստանի դեմ ագրեսիայի հավանականությունը<sup>23</sup>: Զուգահեռաբար՝ որքան ավելի պատրաստ լինի Հայաստանը միայնակ ու հնարավորին չափ երկար դիմադրավել ագրեսիային, այնքան ավելի մեծ կլինի Ռուսաստանի և այլ պետությունների ցանկությունը ռազմականապես օժանդակելու և դաշնակցելու նրան:

Այն մտայնությունը, թե Հայաստանն անպայման պարտություն կկրի Թուրքիայի կամ Թուրքիայի և Ադրբեջանի դեմ պատերազմում,

<sup>23</sup> Ընդամենը մեկ պատմական օրինակ. Առաջին ու, հատկապես, երկրորդ համաշխարհային պատերազմների ընթացքում փոքրիկ Շվեյցարիան խուսափեց ներխուժումից ոչ թե նրա համար, որ իր զավթումն անհնարին էր, այլ որովհետև Շվեյցարիայի գրավման դիմաց որևէ ուժ (նույնիսկ ֆաշիստական Գերմանիայի գերհզոր ռազմական մեքենան) չափազանց թանկ էր վճարելու:

ընդհանուր առմամբ, սխալ է: Համաշխարհային պատմություն մեջ բազմիցս է պատահել, երբ փոքրաթիվ և պակաս սպառազինված ուժերը կարողացել են հաղթանակ պոկել տասնապատիկ գերակշիռ ուժեր ունեցող հակառակորդից:

Վերջին ժամանակաշրջանի օրինակներից կարելի է հիշել ինչպես երկարատև հակամարտությունը Իսրայելի և արաբական երկրների միջև, այնպես էլ 1994-96 թթ. Չեչնիա-Ռուսաստան պատերազմը: Եթե համեմատենք, մի կողմից, Հայաստանի (ներառյալ Արցախի) ռազմական հնարավորությունները, մյուս կողմից՝ Թուրքիայի և Ադրբեջանի հնարավորությունները միասին վերցված, ապա մեր դրությունը զգալիորեն նախընտրելի է Չեչնիայի դրությունից: Հատկապես կարևոր է այն հանգամանքը, որ Հայաստանն անկախ պետություն է և մեծ հնարավորություններ ունի մանրակրկիտ ծրագրելու և նախապատրաստելու իր պաշտպանությունը: Հայաստանի միջազգայնորեն ճանաչված անկախությունը նաև այլ առավելություն ունի, այն է՝ ի տարբերություն, օրինակ, Ռուսաստանի՝ Չեչնիայում ծավալված գործողությունների, Թուրքիան զրկված է լինելու իր ազրեսիան շատ երկարաձգելու հնարավորությունից՝ և՛ միջազգային համայնքի բարձրացվելիք բողոքի ալիքի, և՛ հատկապես Թուրքիայի տարածաշրջանային հակառակորդների (նախ՝ Ռուսաստանի և Իրանի, ապա և՛ Սիրիայի և Հունաստանի) ձեռնարկելիք միջոցների պատճառով: Ուստի Հայաստանի թեկուզ մի քանի ամսյա դիմադրությունը բավարար է լինելու Թուրքական բանակի հետքաշումն ապահովելու, տարածաշրջանային դաշնակիցներից ռազմական ու դիվանագիտական աջակցություն ստանալու համար:

Պատերազմի ելքը հաճախ որոշում է ոչ թե թվային գերակշռությունը, այլ միջազգային և ներքին իրադրություն բազմապիսի հանգամանքների երբեմն անկանխատեսելի խաչաձևումը: Նախապես պարտված կարելի է համարել միայն այն կողմին, որը հանգամանորեն չի ծրագրում իր դիմադրությունը հավանական բոլոր պատերազմներում, հրաժարվում է միայնակ դիմադրելու հնարավորության մտքից:

Կա տեսակետ, թե Ռուսաստանի հովանավորությունից զրկվելու և թուրքական կամ թուրք-ադրբեջանական միաժամանակյա հարձակմանը ենթարկվելու հավանականությունն այսօրվա ռազմական իրողությունների դեպքում Հայաստանին դնելու է անմխիթար կացություն մեջ: Հանկարծակի հարձակման դեպքում թշնամու առնվազն հնգապատիկ գերակշիռ ուժերը բավական արագ կճեղքեն շուրջ վաթսուն հազարանոց Հայկական բանակի (ներառյալ արցախյան բանակի) պաշտպանական գծերը (հատկապես արևմտյան ճակատում) և կգրավեն ռազմավարական խորությունից զուրկ Հայաստանի գլխավոր դիրքերն ու ճանապարհները: Պետությունը չի հասցնի անցկացնել բնակչության զորահավաք: Շատ շուտով, առավելագույնը երկու-երեք շաբաթում, Հայաստանի դիմադրությունը կդադարի կազմակերպված լինելուց և կընդունի, ընդհանուր առմամբ, քիչ արդյունավետ պարտիզանական պատերազմի բնույթ: Մինչդեռ այդ ընթացքում թշնամին կհասցնի ոչնչացնել երկրի ամբողջ տնտեսությունը և գուցե նաև ազգաբնակչության մի մեծ հատվածը:

Բայց արդյո՞ք հնարավոր է նմանատիպ հավանական սցենարում փրկել Հայաստանը: Պատասխանը միանշանակ դրական է: Այսօրվա մեր ունեցած սուղ ռեսուրսներով և առանց լրացուցիչ ծախսերի հնարավոր է հարյուրապատիկ ամրապնդել Հայաստանի պաշտպանությունը: Սակայն դրա համար անհրաժեշտ է հիմնավորապես վերանայել ՀՀ պաշտպանական քաղաքականությունը, կատարել կտրուկ և լուրջ փոփոխություններ:

### Հիմնադրույթներ՝

#### ՀՀ պաշտպանական քաղաքականության

ՀՀ պաշտպանական քաղաքականության կառուցումն ունի մի քանի նախադրյալ խնդիրներ: Թեև ԽՍՀՄ փլուզումից հետո Այսրկովկասում առաջացած ազգային զինված ուժերից ամենաուժեղը, այսօրվա դրությամբ, հայկական բանակն է, սակայն նոր ստեղծված աշխարհառազմավարական միջավայրում այն դեռևս հեռու է Հայաստանի ռազմական անվտանգության պահանջները բավարարելուց, որովհետև դեռևս ընդունակ չէ միայնակ չեզոքացնելու թուրքական վտանգը:

Հայաստանի աշխարհառազմավարական դրուժյան ծանրությունը և հայկական բանակի բարոյահոգեբանական ընդհանուր անբավարար վիճակը սուր հակասություն մեջ են: Վրաստանի և Ադրբեջանի բանակների թույլ և անկազմակերպ լինելու հետ «արդարացուցիչ» համեմատությունները տեղին չեն, որովհետև Հայաստանը, ի դեմս Թուրքիայի, ունի իր ֆիզիկական գոյությունն սպառնացող ահեղ թշնամի, մինչդեռ Վրաստանը և Ադրբեջանը լինել-չլինելու նմանատիպ խնդիր չունեն:

Անցանկալի երևույթների առկայությունն այսօրվա հայոց զինուժում փաստ է, իսկ դրանց արմատահանումը՝ հրատապ անհրաժեշտություն<sup>24</sup>: Մեր բանակի բարոյահոգեբանականը պետք է բարելավվի հիմնավորապես, այլապես այն շարունակելու է անցանկալի հետևանքներ ունենալ ոչ միայն զինվորական, այլև Հայաստանի անվտանգության այլ ոլորտներում՝ խրախուսելով կործանարար չափերի հասած արտագաղթը, քայքայելով ռազմահայրենասիրական տրամադրությունները, խախտելով հասարակական համերաշխությունը<sup>25</sup>:

<sup>24</sup> Հայկական բանակում լուրջ խնդիրների մասին է վկայում նաև դատալիքների թիվը. 2000 թ. նոյեմբերի 1-ի դրությամբ այն կազմում էր 5289 հոգի («Officials Discuss Alternative Military Service,” *Armenpress*, 15 November 2000). Բարեբախտաբար, գնալով նվազում է (սակայն դեռևս անընդունելիորեն մեծ թիվ է կազմում) խաղաղ ժամանակ ժամկետային ծառայության զինվորների մահվան դեպքերի թիվը. ՀՀ ՊՆ-ի տվյալների համաձայն՝ 1997-ին՝ 199, 1998-ին՝ 171, 1999-ին՝ 86, 2000-ին՝ 78, 2001 թ. ուլժ ամսում՝ 39 հոգի («ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի հարցազրույցը ԱՊՀ հայկական համայնքների «Նոյյան տապան» թերթին».— Հայ զինվոր, 8-15 սեպտեմբերի, 2001): ՀՀ զինվորական դատախազի տեղակալի հրապարակած տվյալներով, սակայն, 2000 թ. զոհվել է 111, իսկ 2001-ին՝ 92 հայ զինծառայող («Armenian military prosecutor points to significant drop in army deaths,” *Arminfo*, February 1, 2002): ՀՀ ՊՆ-ի տվյալներով՝ 2003 թ., ոչ ռազմական պատճառներից զոհվել է 40 զինվոր, իսկ ռազմական դատախազության համաձայն՝ 48 զինվոր (Gevorg Stamboltsian, “Armenian Military Accused Of Hushing Up Non-Combat Deaths,” *Armenialiberty Report*, 20 May 2004):

<sup>25</sup> Տե՛ս, օրինակ, նախկին հրամանատար-ազատամարտիկներից մեկի խտացված գույներով բնութագրումները՝ Ժիրայր Սեֆիլյան. «Ազգային բանակի հարցի

Հայաստանի առջև կանգնած խնդիրների լուծումը պահանջում է հիմնովին փոխել հայկական բանակի կառուցման ընտրած մոդելը: Հայաստանի պաշտպանական քաղաքականությունը պետք է կառուցվի հետևյալ հիմնադրույթների վրա.

1. Պատերազմից խուսափելու գլխավոր միջոցը հայոց զինուժն է:
2. Թուրքիան և Ադրբեջանը ունեն թվային գերակշռություն և տարածքային մեծ առավելություն:
3. Հայաստանի ժողովրդագրությունն ու տնտեսությունն առայժմ ի վիճակի չեն մեծացնել մշտական բանակի թիվը, սակայն չպետք է նաև մարդուժի զգալի նվազում թույլ տան:
4. Հայոց զինված ուժերի հարաբերական փոքրաթիվությունը պետք է փոխհատուցվի առաջնակարգ ներքին կարգապահությունը և կազմակերպվածությունը:
5. Հայաստանի հասարակության և բանակի փոխհարաբերությունները պետք է կազմակերպվեն շվեյցարական՝ «ազգ-բանակ» (*nation in arms*) մոդելի հայկական տարբերակով, որն, իհարկե, պետք է մանրամասնորեն մշակվի և համապատասխանեցվի հայկական իրականությանը (ինչպես այդ մոդելը՝ բազմաթիվ փոփոխություններով և լրամշակումներով, հաջողությամբ կիրառվել է Իսրայելում): Այդ մոդելը նախատեսում է բանակի պահեստուժում (ռեզերվում) 18-ից մինչև 55 տարեկան բոլոր տղամարդկանց գործուն ներգրավվածություն: Սա նշանակում է, որ և՛ մեծահարուստը, և՛ շունեորը պարտավոր կլինեն յուրաքանչյուր տարվա մեջ առնվազն երկու-երեք շաբաթ անցկացնել բանակում՝ ծառայելով հավասար հիմքերի վրա ու լիակատար հավասարապաշտության պայմաններում<sup>26</sup>:

շուրջ».— Առավոտ, 8 հունիս 2002 թ., հմմտ. Նույնի՝ «Հայկական բանակը տասնմեկ տարի անց».— Իրավունք, հունվար 31-փետրվար 6, 2003, դ 6:

<sup>26</sup> Իսրայելում պահեստուժի մարտիկները օրենքով պարտավոր են տարեկան ծառայել առնվազն 45 օր (այս օրերի թիվը կարող է ավելանալ՝ պայմանավորված տարածաշրջանի քաղաքական իրադրություններով), ԱՄՆ-ում՝ 39 օր, Շվեյցարիայում՝ 21 օր (ուժ տարի շարունակ):

Հայկական բանակը պետք է լինի ոչ թե սովորական կանոնավոր բանակ, այլ, առավելաբար, պահեստուծի բանակ: Կարևոր են պահեստուծի՝ ա) մեծությունը, բ) արագ զորահավաքը (մոտավորապես 24 ժամում), գ) արդյունավետ ներգրավումը մարտական գործողությունների մեջ՝ առանց հետզորահավաքային մարզումների վրա լրացուցիչ ժամանակ ծախսելու:

Հինգ խոշոր պատերազմներում հաղթանակած Իսրայելի պաշտպանական ուժերը (ԻՊՈ) շուրջ 80 տոկոսով բաղկացած են պահեստուծից: ԻՊՈ-ի մոդելը մանրագնին ուսումնասիրած ԱՄՆ-ի բանակի գնդապետ, պատմագիտության դոկտոր Չառլզ Հելլերը նշում է.

«Իսրայելի Պաշտպանական Ուժերի ֆաղափար-գիները «պահեստուծ» չեն բառի բուն իմաստով, այլ միացյալ ընդհանուր ուժի կառուցվածքի մաս: Այս միակցվածության շնորհիվ էլ՝ Մշտական ծառայության (Քևայի) սպաներն ու կրտսեր սպաները հրաշալի նանաչում են իրենց պահեստային ուժերը (Միլուիմը), ֆանի որ նրանք հասկանում են, որ ԻՊՈ-ն պահեստուծի բանակ է: ԻՊՈ-ի պահեստուծի զինվորին կարող է հատկացնեն կամ չհատկացնեն առկա նորագույն սպառազինություն: Սակայն անկախ դրանից, Միլուիմի շատ սառաբաժանումներ մարտի մեջ են մտնում Քևայի սառաբաժանումների հետ կողմ կողմի»<sup>27</sup>:

Պետք է մշակել նաև կանանց կամավոր ծառայության առավել ընդունելի, արդյունավետ ձևեր:

6. Հայկական բանակի ազգաշինության կարողությունները մինչև այժմ շատ քիչ են օգտագործվել: Փաստորեն, հայոց զինված ուժերի առջև այդպիսի խնդիր չի դրվել: Այնինչ՝ հայկական բանակն ունի ժողովրդի համախմբման և պատանի սերնդի հայրենասիրական ու քաղաքացիական դաստիարակության վիթխարի հնարավորություններ<sup>28</sup>:

<sup>27</sup> Charles E. Heller, *Economy of Force: A Total Army, The Israel Defense Force Model* (Carlisle Barracks, PA: Strategic Studies Institute, U.S. Army War College, March 15, 1992), p. 1.

<sup>28</sup> Օրինակներից մեկը պատանիների հետ աշխատանքն է, որը, կարծես, սկսվում է նաև Հայաստանում՝ 2002 թ. կազետական դպրոցի հիմնումով: Մ. Մելքոնյանի

7. Թուրքական հնարավոր ագրեսիայի ինքնուրույն դիմագրավման կարողության շեշտակի բարձրացումը պետք է ուղեկցվի առավել վստահելի դաշնակիցների հետ ռազմավարական հարաբերությունների եռանդուն մշակմամբ: Առայժմ այդպիսի դաշնակից է միայն Ռուսաստանը: Ապագայում, հատկապես ԱՄՆ-Իրան հարաբերությունների մեղմացման դեպքում, Հայաստանի անվտանգության երաշխավոր և ռազմավարական դաշնակից կարող է դառնալ նաև Իրանը<sup>29</sup>: Անհրաժեշտ է զար-

հաշվարկով՝ Հայաստանում հինգ ռազմական լիցեյի ստեղծումը կբավարարի «բարձրագույն ուսումնական հաստատությունները 100 տոկոս լիարժեք ռազմական պատրաստություն անցած, հիմնավոր գիտելիքներ ունեցող կուրսանտներով համալրելու, ինչպես նաև բանակը կրտսեր հրամանատարական կազմով ապահովելու համար (Մ. Մելքոնյան, «Հայաստանի ռազմական անվտանգության ապահովման հիմնախնդիրները. 2»): Այս առումով օրինակելի է նաև իսրայելական փորձը. 14 տարեկանից սկսած՝ իսրայելացի տղաների և աղջիկների մեծամասնությունն ընդգրկվում է ԳԱԳնԱ կիսառազմական կազմակերպության մեջ: Բացի ֆիզիկական մարզումից և դաշտային պայմաններում ապրելուն վարժեցնելուց, ԳԱԳնԱ-ն պատանիների մեջ ներարկում է գիտելիքներ՝ Իսրայելի անվտանգության առանձնահատուկ ծանր դրույթյան մասին: Սա և՛ քաղաքացիական կրթություն է, և՛ որոշ չափով, քաղաքական ուսուցում, որը լավագույնս նախապատրաստում է պատանիներին Իսրայելի ռազմավարական և քաղաքական իրողություններին հետ հաշվի նստելուն և իմաստ է հաղորդում նրանց հետագա պարտադիր ծառայությանը: Նույն Իսրայելի բանակն ունի հատուկ մի ծրագիր, որը հավաքագրում է պատանեկան քրեամետ խմբերի ղեկավարներին, այնուհետև նրանց կրթում ու մարզում նպատակային այն համոզմունքով, որ նրանք տուն վերադառնան որպես զրական և օրինակելի կերպարներ (Samuel Rolbant, The Israeli Soldier: Profile of an Army. N. Y.-London: Thomas Yoseloff LTD, 1970, pp. 222-223):

<sup>29</sup> 2002 թ. մարտին Իրանի պաշտպանության նախարարի՝ ծովակալ Ալի Շամխանիի, պատմության մեջ առաջին այցը Հայաստան՝ ինքնին ռազմական ասպարեզում երկկողմանի հարաբերություններին զարկ տալու ցանկության պարզ արտահայտություն է (Armen Zakarian, “Iranian Defense Chief Plans Visit To Armenia,” RFE/RL Armenia Report, 4 February 2002; Iran's Defense Chief Hopes For Closer Ties With Armenia,” RFE/RL Armenia Report, 4 March 2002): Այս առումով զարմանալի էր ՀՀ արտ-

գացնել հարաբերությունները նաև այն պետությունների հետ, որոնց ձեռնտու է Թուրքիայի սահմանին տեսնել ռազմականապես ամուր Հայաստան. դրանք են՝ Սիրիան, Չինաստանը, Հունաստանը (հետագայում ինքնիշխանության ամբողջական վերականգնումից հետո՝ նաև Իրաքը): Սակայն այս վերջինները, իրենց հեռավորության, կարողությունների և ուրիշ ավելի առաջնահերթ շահեր ունենալու պատճառով, Հայաստանի վրա Թուրքական հարձակման դեպքում Թուրքիային պատերազմ չեն հայտարարի: Այս պետությունների ռազմավարական հարաբերությունները կարևոր են հայկական բանակի պատրաստվածության մակարդակը բարձրացնելու, հետախուզական տեղեկատվության փոխանակման և դիվանագիտական աջակցության բնագավառներում:

8. Վերջապես՝ Ռուսաստանի և մյուս դաշնակիցների հետ ռազմաքաղաքական հարաբերություններն ամրապնդելու լավագույն միջոցը սեփական պաշտպանական կարողությունների վրա վերադիրքորոշվելն է:

### Հավասարապաշտական հասարակական մթնոլորտի անհրաժեշտություն

«Ազգ-բանակ» ռազմական մոդելի հաջող գործունեությունը հնարավոր է միայն այն ժամանակ, երբ Հայաստանում ստեղծվի հասարակական համերաշխության մթնոլորտ: Դա էլ իր հերթին պահանջում է, որ Հայաստանի զարգացման հիմքում ընկնի սոցիալական արդարության գաղափարը:

Ցավոք, Հայաստանը դարձել է զանգվածային աղքատության ու փոքրաթիվ մեծահարուստների երկիր: 2001-2002 թթ. Հայաստանի բնակչության 50-56 տոկոսն ապրում էր աղքատության սահմանագծից ներքև<sup>30</sup>: (Պաշտոնական տվյալների համաձայն, 2005 թ. դրությամբ այդ

---

գործնախարար Վ. Օսկանյանի այն հայտարարությունը, թե անվտանգության մակարդակում Հայաստանի Իրանի հետ հարաբերություններ չի զարգացնելու (Թաթուլ Հակոբյան, «Հայոց ցեղասպանությունը ժխտելով՝ Իսրայելը Հայաստանում ձևավորում է հակահրեական տրամադրություններ» – Ազգ, 12 փետրվար 2002:

<sup>30</sup> Տե՛ս «16% населения – очень бедные», *Голос Армении*, 21 ноября 2002: *World Bank, Armenia. Country Assistance Strategy (2001)*. 2001 թ. հունվարի 22-ին, Հայաս-

ցուցանիշը նվազել և կազմել է 39 տոկոս, սակայն այսպիսի նվազեցման արժանահավատությունը լուրջ վերապահումների տեղիք է տալիս<sup>31</sup>։ 2002 թ. սկզբին Համաշխարհային բանկի հրապարակած տվյալներով՝ Հայաստանում եկամտուների անհավասարության մակարդակն անցումային տնտեսությունն ունեցող երկրների (իմա՝ Արևելյան Եվրոպայի և նախկին ԽՍՀՄ հանրապետությունների) մեջ ամենաբարձրերից էր՝ ավելի բարձր, քան Տաշխիստանում, Վրաստանում, Ռուսաստանում, Ղրղզստանում և Մոլդովայում<sup>32</sup>։ Եկամտուների անհավասարության Ջինի գործակիցը շարունակում է մնալ սոցիալական լարվածության տեսակետից տագնապալից 0.5-ից բարձր մակարդակում (բացասական առու-

տանի վիճակագրական պետական ծառայության տվյալների համաձայն, Հայաստանի բնակչության 56 տոկոսն ապրում էր աղքատության սահմանագծից ներքև («56 Percent Below Poverty Line,” *Glasnost Foundation report Jan 22, 2001*):

<sup>31</sup> Այսպես, մասնագիտական մի խմբի գնահատականով՝ «Եկամտուների բարձրացումը դեռևս չի նշանակում, որ այդ մարդն այլևս աղքատ չէ: Տնտեսական աճի քաղաքականության պարագայում թվերի միջոցով հեշտությամբ հնարավոր է «աղքատության կրճատում արձանագրել»: Սա կատարվում է մոտավորապես այսպես. եթե մեր երկրում պարենային զամբյուղի սահմանը համարվում է ամսական 10000 դրամը (2007թ. սկզբի դրությամբ՝ շուրջ 28 դոլար), ապա ցանկացած ոք, ով ունի ամսական, օրինակ, 12000 դրամ (2007թ. սկզբի դրությամբ՝ շուրջ 34 դոլար) եկամուտ, այլևս աղքատ չի համարվում: Միաժամանակ, հստակ է, որ սոցիալ-տնտեսական հնարավորությունների իմաստով եկամտուների այսպիսի տարբերությունը որևէ էական առավելություն չի տալիս. երկրում աղքատների թիվը փաստացիորեն չի փոխվում, քանի որ սահմանված աղքատության գծից այս կամ այն կողմ գտնվողները նույնքան զուրկ են արժանապատիվ մարդ և քաղաքացի կայանալու ու զարգանալու հնարավորությունից, որակյալ կրթություն ստանալու, առողջապահական ծառայություններից օգտվելու, մշակութային կյանքին մասնակցելու, հանգստի իրավունքից օգտվելու և բազմաթիվ այլ իրավունքներից» (տե՛ս «Միժի-ի դիրքորոշումը ԱՀՌԾ իրականացման և վերանայման գործընթացի ու հիմնական սկզբունքների վերաբերյալ», Երևան, 12 հունիս 2006):

<sup>32</sup> “Income Gap Greater In Armenia Than CIS States,” *Asbarez Online*, 31 January 2002. cf. Արա Մարտիրոսյան, «Արդյունաբերության աճը պետք է արագացնել», *նշեց Համաշխարհային բանկի Հայաստանի գրասենյակի ղեկավարը*. - Ազգ, 31 հունվարի 2002.

մով ամենաբարձրն է ԱՊՀ երկրներում)<sup>33</sup>: 1999 թ. դրուիցամբ՝ Հայաստանում բնակչության 5 տոկոսը կազմող ամենահարուստները տիրում էին ազգային հարստության 70 տոկոսին<sup>34</sup>: Ճիշտ է, կան զարգացած երկրներ, որտեղ սոցիալական անհավասարությունը մոտավորապես նույն մակարդակի վրա է: Օրինակ՝ ԱՄՆ-ում բնակչության 5 տոկոսը կազմող ամենահարուստները տիրում են ազգային հարստության 60 տոկոսին<sup>35</sup>: Բայց Հայաստանի՝ համար հասարակության այսպիսի ահռելի բեկեռացումը մահացու վտանգ է ներկայացնում, քանի որ.

ա) ի տարբերություն ԱՄՆ-ի՝ այժմ Հայաստանի Հանրապետությունն աղքատ երկիր է, և նման չափերի հասնող բեկեռացումը ծնում է զանգվածային շքավորություն.

բ) ԱՄՆ-ում սոցիալական անհավասարությունն առաջացել է կապիտալիստական զարգացման բնական ճանապարհով, ըստ այդմ էլ՝ ամերիկացիները շատ ավելի հանգիստ վերաբերմունք ունեն դրա նկատմամբ: Մինչդեռ Հայաստանում մարդիկ իրավացիորեն մեծ ցավով են վերաբերվում սոցիալական անհավասարությանը, որովհետև այն առաջացել է հանկարծակի, ընդամենը մի քանի տարվա ընթացքում՝ օրենքի և արդարության ամենակոպիտ խախտումների արդյունքում: Խորհրդա-

<sup>33</sup> «Աղքատության հաղթահարման ամփոփ ուղիվարական ծրագիր (նախագիծ)». - Հայացք տնտեսությանը, 12 հոկտեմբեր 2002 թ., էջ 9:

<sup>34</sup> Neil MacFarlane, Western Engagement in the Caucasus and Central Asia (London: Royal Institute of International Affairs, 1999), p. 47. Ընդ որում՝ Հայաստանի արտաքին պարտքը 2002 թ. անցնելու է 1 միլիարդ դոլարից («Armenia's Foreign Debt Exceeds \$1 Billion», *Asbarez Online*, 10 Jan. 2002):

<sup>35</sup> Levon Chorbajian, ed., Making a State: From Secession to Republic In Nagorno-Karabagh (New York: St. Martin's Press, 2001), p. 28. Չորբաջյանը հղում է հետևյալ աղբյուրը՝ Edward N. Wolff, The Rich Get Increasingly Richer: Latest Data on Household Wealth during the 1980s (Washington: Economic Policy Institute, 1993): 1980-ական թթ. սկզբին Մեծ Բրիտանիայի բնակչության 80 տոկոսը պակաս սեփականություն ուներ, քան 10 տոկոս հարուստները (Д. А. Волкогонов. Психологическая война: подрывные действия империализма в области общественного сознания. Москва: Военное издательство, 1984, стр. 148):

յին շրջանում եկամուտների հարաբերական հավասարության թարմ հիշողությունը ևս հոգեբանորեն ճնշում է մարդկանց:

Այսօր Հայաստանի բնակչության մարդկային ռեսուրսներն այն աստիճան սակավ են նրա վերջնական ջախջախումը երազող ադրբեջանաթուրքական դաշնության համեմատ, որ դասակարգային սուր առճակատումը մեզանում անթույլատրելի է: Սակայն այդպիսի առճակատումն արդեն իսկ իրականություն է. զանգվածների բողոքն առայժմ արտահայտվում է հիմնականում արտագաղթի և պետության շահերի նկատմամբ ծայրահեղ անտարբերության միջոցով: Ուստի, պետք է ամենալուրջ ծրագրերը մշակել հասարակության եկամուտների բեռնացումը կտրուկ նվազեցնելու համար, այլապես հասարակական համերաշխության մասին խոսելն ավելորդ կլինի:

Հայաստանի աշխարհաքաղաքական բարդագույն դիրքն ուղղակի պարտադրում է մեր հասարակությանը յուրացնել ոչ թե «ջունգլիների» կամ, այսպես կոչված, «վայրի կապիտալիզմի» բարոյական նորմերը (որոնք, ի դեպ, վաղուց մերժվել են նույն Արևմուտքում), այլ որդեգրել ընդգծված հավասարապաշտական (էգալիտարիստական) էթիկա: Սա ամենևին չի նշանակում, թե պետք է ոչնչացնել մասնավոր սեփականությունը և դարձյալ փորձել ենթարկել բոլորի եկամուտներն ու աշխատավարձերն անհեթեթ հավասարեցման: Խոսքը վերաբերում է օրենքի գերակայության հաստատմանն ու հասարակության բարոյականությանը:

Որո՞նք են հասարակական գործունեության այն ոլորտները, որտեղ Հայաստանի յուրաքանչյուր քաղաքացի պետք է իրեն զգա մյուսների հետ հավասար: Իհարկե, նախ և առաջ, Հայաստանում չպետք է լինեն մարդիկ ու, առավել ևս, նորահայտ «կաստաներ», որոնք օրենքը որևէ ձևով շրջանցելու հնարավորություն ունենան: Երկրորդ՝ կրթությունը, այդ թվում՝ բարձրագույնը, պետք է մատչելի լինի Հայաստանի յուրաքանչյուր ունակ երիտասարդի համար: Վերջապես, կա մի առանձնահատուկ բնագավառ, որտեղ բոլորը պետք է ամեն ինչում հավասար լինեն: Խոսքը հայրենիքի պաշտպանության, Հայոց բանակում ծառայության մասին է: Հայոց բանակը հայրենասիրական-քաղաքացիական դաստիա-

րակության ու մեր ազգակերտման հիմնական դարբնոցներից է: Հայոց բանակում սոցիալական արդարության սկզբունքը պետք է իրականացվի խստագույնս, որպեսզի և՛ հարուստի, և՛ չունևորի, և՛ պաշտոնյայի, և՛ ոչ պաշտոնյայի զավակները դառնան Հայաստանի պատասխանատու քաղաքացիներ և, անկախ սոցիալական կամ այլ տարբերություններից, զգան իրենց նույն երկրի, նույն պատմության և ճակատագրի մասնիկ:

Բանակը և հասարակությունը անմիջականորեն ու խորապես փոխազդում են միմյանց վրա: Այդ փոխազդեցություններն անդրադառնում են ամենազանազան հարցերին, ինչպիսիք են, օրինակ՝ ժողովրդավարությունը, երիտասարդ սերնդի քաղաքացիական-հայրենասիրական դաստիարակությունը, զինծառայողների կարգապահությունն ու նվիրվածությունը հայրենիքին, հասարակության համերաշխությունը և համախմբվածությունը ազգային-պետական կարևոր խնդիրների շուրջ և, վերջին հաշվով, պետության, հասարակության և բանակի կայունությունն ու ամրությունը: Բանակի ազդեցությունը հասարակության զարգացման ուղղությունների վրա մեծ է հատկապես նորանկախ պետություններում: Պետության՝ իր զինծառայողների հավաքագրման ձևերը, օրինակ, լուրջ ազդեցություններ են թողնում ինչպես զինված ուժերի, այնպես էլ հասարակության վրա: Հարկադիր հավաքագրման ենթարկված զինծառայողները, որպես կանոն, չեն ունենում այն բարոյական նվիրվածությունը, որը բնորոշ է կամավորականներին: Հարկադիր հավաքագրման ճանապարհով ստեղծված զինուժը խիստ կարգապահություն պահանջող համակարգ է, որի համախմբվածությունը հիմնված է պատժի ենթարկելու սպառնալիքի վրա: Այդպիսի զինված ուժերն ունենում են դասալքության և անկարգապահության լուրջ խնդիրներ, որոնք կարող է զսպել միայն ուժեղ կազմակերպվածությունը: Հայկական բանակի շինարարության գործում պետք է հիշել հայ զինվորի հոգեբանության հանճարեղ գիտակ Գարեգին Նժդեհի գիտողությունը.

«Հայը կովում է աննահանջ և սխրագործում ավելի իբրև կամավոր, քան պարտադիր ծառայության զինվոր: Նրա սրտովը չէ՝ գործել

հրամանով, իսկ մեռնել հրամանով՝ բնավ: Պարտադիր ծառայություն մեջ իսկ նա իրեն զգում է կամավոր:

Հոգեբանական այդ իրողությունը հետևանք է այն բանի, որ երկար, շատ երկար ժամանակ՝ իր պատմական ճակատագրի բերումով, հայն իր հայրենիքի պաշտպանության գործին մասնակցել է ոչ թե իբրև իր նախարարի ստրուկը, ճորտը, այլ իբրև հայ մարդ, որ պարտական է կռվելու Հայաստանի համար:

Հայի այդ հոգեգիծը՝ դրական և օրհնաբեր, պիտի պահպանվի գուրգուրանքով, քանզի կամավորության գաղափարն ավելի վեհ է, քան պարտադիր ծառայությունը»<sup>36</sup>:

Հայկական բանակի բարձրաստիճան սպա, պատմական գիտությունների թեկնածու Մ. Մելքոնյանը նկատում է, որ «նազմական սպառնալիքի ծավալները պահանջում են երկրի պաշտպանության գործում ընդգրկել ողջ բնակչությանը»<sup>37</sup>: Սակայն Հայաստանի բնակչությունն անհաղորդ է պետության պաշտպանական ծրագրերին և, փաստորեն, դուրս է մնացել ծրագրված կերպով երկրի պաշտպանությանն իր գործուն մասնակցությունը բերելուց, թեև միայն այդ դեպքում հնարավոր կլինի հաջող պաշտպանություն կազմակերպել թուրքիայի բազմապատիկ գերակշիռ ուժերի դեմ: Այս պայմաններում ժողովուրդն ընկալում է կամ, ավելի ճիշտ, ենթագիտակցաբար զգում է թուրքական վտանգը: Բայց վտանգը հուզականորեն ընկալելը մի բան է, ռազմավարական շափանիշներով գիտակցելը՝ բոլորովին այլ բան: Ժողովուրդն ընդամենը զգում է վտանգը: Այդ անորոշ զգացողությունը ծնում է շփոթվածություն և անպաշտպանվածության զգացում: Խնդիրն այն է, որ մշակվի

<sup>36</sup> Գարեգին Նժդեհ, Բանտային գրառումներ (խորհրդածություններ), (Երևան, «Մ. Վարանդեան հրատ.», 1993), էջ 72-73:

<sup>37</sup> Մ. Մելքոնյան. «Հայաստանի ռազմական անվտանգության ապահովման հիմնախնդիրները. 2». – Հայ զինվոր, 20-27 փետրվար 1999, դ 7 (262):

Թուրքական վտանգի դեմն առնելու իրատեսական ու Հայաստանի ամբողջ ժողովրդի կողմից ընդունված ռազմական քաղաքականություն<sup>38</sup>:

### Ժողովրդավարություն և ազգային անվտանգություն

Անհրաժեշտ է անել մի վերջին պարզաբանում ևս՝ ժողովրդավարության և ազգային անվտանգության փոխհարաբերության մասին: Արտասահմանցի որոշ դիտորդներ պնդում են, թե Հայաստանում իբր անհնար է ժողովրդավարական պետություն կառուցել, քանի դեռ Ղարաբաղյան հակամարտությունը վերջնականապես չի կարգավորվել: Պատճառաբանում են նրանով, թե մերօրյա կիսապատերազմական պայմաններում բանակն ու անվտանգության մարմինները համեմատաբար անհամաչափ մեծ կշիռ են ունենալու պետության մեջ և լինելու են քաղաքացիական կառույցների և իշխանությունների վերահսկողությունից դուրս:

Իրականում, Հայաստանի աշխարհառազմավարական դիրքը միշտ էլ պահանջելու է ունենալ հզոր բանակ և անվտանգության արդյունավետ համակարգ, սակայն այդ կառույցների քաղաքացիական վերահսկողությունը կախված է ոչ թե արտաքին շրջադրությունից, այլ, առավելապես, երկրի ներքին զարգացումներից: Կան պատմական նախադեպեր, երբ մի կողմից՝ ժողովրդավարությունը, մյուս կողմից՝ ազգային անվտանգության խստագույն պահանջները ներդաշնակորեն համագոյակցել են. օրինակ՝ Մեծ Բրիտանիան՝ երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին կամ, լուրջ վերապահումներով հանդերձ, Իսրայելը՝ վերջին հիսուն տարվա ընթացքում (թեև իսրայելական ժողովրդավարությունը թերի է՝ արաբ բնակչության հանդեպ իրականացվող խտրական քաղաքականության պատճառով):

<sup>38</sup> Թերևս անցյալի փորձը ևս նշանակություն ունի: Իր պատմության ողջ ընթացքում Հայաստանը չի եղել և, իր աշխարհառազմավարական դիրքի բերումով, չէր կարող լինել «կաստաների» բաժանված երկիր: Պատահական չէ, որ Հայաստանում ստրկատիրությունը երբեք չի արմատավորվել իբրև հասարակական-տնտեսական կյանքի երևույթ և աշխատանքի եղանակ:

## Հայաստանի պաշտպանական ռազմավարությունները

### Ադրբեջան-Հայաստան պատերազմ

Ադրբեջանի հետ պատերազմում Հայաստանի ռազմավարությունը պետք է լինի հարձակողական: Սեփական տարածքում ավերածությունների մակարդակը նվազեցնելու և թշնամու զորամիավորումներին ջախջախիչ պարտություն մատնելու միջոց պետք է լինի պատերազմի տեղափոխումը թշնամու տարածք: Հայոց բանակի խնդիրը լինելու է ո՛չ թե Բաքվի գրավումը, այլ մարտադաշտում տարած վճռորոշ հաղթանակները, որոնք կարող են ժամանակի ընթացքում համոզել Ադրբեջանին, որ Արցախի և Զանգեզուրի գրավումն անհնար է և անհեռանկար: Այդպիսի հաղթանակները, ամենայն հավանականությամբ, կուղեկցվեն տարածքային առաջխաղացումներով Գետաշեն-Դաշքեսան-Գետաբեկ, Գանձակ և Հորադիզ ուղղություններով կամ, ծայրահեղ ծանր իրավիճակում, Նախիջևանի ուղղությամբ: Ադրբեջանի հետ պատերազմում պաշտպանությունը պետք է լինի ընդամենը մի կարճատև անցումային փուլ՝ վճռական հարձակմանն անցնելուց առաջ (լինի դա հակազորո՞, թե կանխարգելիչ հարձակում)<sup>39</sup>:

<sup>39</sup> Մոտավորապես նույն տեսակետը, իր չափազանց արժեքավոր հուշագրության մեջ, արտահայտում է Արցախյան պատերազմի վետերան-հրամանատար, խորհրդային բանակի կադրային սպա Գ. Ս. Բաղդասարյանը. «Եթե մեր զինված ուժերի հրամանատարությունը բավականաչափ տվյալներ կունենա հակառակորդի հարձակման նախապատրաստման և պատերազմի վերսկսման վերաբերյալ, ապա պետք է վճռական կանխիչ հարված հասցվի հակառակորդին՝ մինչև նրա հարձակման անցնելը: Եթե հակառակորդին հաջողվի անսպասելի հարված հասցնել՝ մեր զինված ուժերը չպետք է խրվեն երկարատև պաշտպանական մարտերի մեջ, դա վտանգավոր է լինելու մեզ համար, այլ պետք է ետ մղել հարձակումը և անհապաղ անցնել հակահարձակման: Երկու դեպքում էլ մեր զինված ուժերը պետք է հետապնդեն Քուռ գետի աջ ափ դուրս գալու մարտական խնդիրը: Վերականգնելով պատմական Հայաստանի հյուսիսային սահմանը՝ անհրաժեշտ է լինելու մնալ կանգնած այդ սահմանի վրա և ամրապնդել այն: Կարծում եմ, որ պատերազմի և խաղաղության հարցը նման

Իր անվտանգությունը լուրջ սպառնալիք առաջանալուն պես՝ հայկական կողմը պետք է պատրաստ լինի խափանելու ադրբեջանական նավթի արտահանումը: Հայկական զինված ուժերի այդ կարողությունը, հարվածելով Ադրբեջանի տնտեսական հզորությունը, միաժամանակ կստիպի, որ նավթային խոշորագույն ընկերությունները գործածեն Ադրբեջանի վրա իրենց ողջ ազդեցությունը՝ պատերազմի սանձարձակում թույլ չտալու համար<sup>40</sup>:

### Թուրքիա-Հայաստան պատերազմ

Թուրքական կամ թուրք-ադրբեջանական համատեղ ներխուժման դեպքում Հայաստանը պետք է ունենա սկզբունքորեն այլ խորը պաշտպանություն ուղղված ռազմավարություն, որն ուղեկցվելու է սահմանափակ նպատակներ ունեցող հակազորհներով: Հայաստանի ամբողջ տարածքը պետք է վերածվի համապարփակ պաշտպանության գոտու՝ համաձայն նախապես մանրագնին մշակած և պատրաստած ծրագրերի: Ծրագրավորումն ու սառնասիրտ նախապատրաստումը ներառելու են պաշտպանության խոր, էջելոնացված մի քանի գծի

---

ձևով ավելի հստակ լուծում կստանա» (Գ. Ս. Բաղդասարյան, Գիմակայություն (հուշագրություններ): Երևան. «Մխիթար Գոշ», 1998, էջ 176):

<sup>40</sup> Ադրբեջանի նավթային արտահանումը խափանելու նպատակով՝ հայկական հարվածի թիրախ են դառնալու ինչպես նավթամուղները, այնպես էլ նավթաղառները: Վերջիններիս վրա արդյունավետ հարված կարելի է հասցնել 300-400 կմ - շառավիղ ունեցող հրթիռներով, որոնք ինքնաթիռներից անհամեմատ, 30-40 անգամ, էժան են (ՍԿՆ-2 հրթիռների հասանելիության շառավիղը շուրջ 300 կիլոմետր է): Սակայն նավթամուղները փակելու գործում հրթիռները արդյունավետ չեն լինի. նախ՝ դրանք կարող են վրիպել (բարձր ճշգրտություն ունեցող հրթիռները շատ ավելի թանկ են), և հետո՝ մեկ հարվածից հասցված վնասը կարելի կլինի արագ նորոգել: Ուրեմն՝ կմնա երեք լուծում. ա) գրավել-կտրել նավթամուղի գիծը, բ) մոտենալ այդ գծին առնվազին 30 կմ՝ այն մշտական հրետակոծման տակ պահելու համար, կամ էլ՝ հաճախակի ուժեղացնել այն օդուժի միջոցով:

կառուցում: Եթե թշնամին կարողանա ճեղքել ու թափանցել բոլոր գծերը, պետք է պատրաստ լինել անցնելու նաև դիմադրություն ունեցող արակապես նոր փուլին՝ պարտիզանական պատերազմին: Դրա համար պետք է ունենալ պաշտպանության հզոր ենթակառուցվածք՝ ներառյալ արագ զանգվածային զորահավաք անցկացնելու կարողություն, սննդի, զենքի և զինամթերքի հույժ գաղտնի պահեստներ և այլն: Այս տեսակ նախապատրաստությունները ոչ միայն մեծապես կամրապնդեն Հայաստանի պաշտպանունակությունը և կնպաստեն սոցիալական համախմբմանը Հայաստանի ներսում, այլև ցույց կտան արտաքին աշխարհին, նախ և առաջ՝ Թուրքիային և Ադրբեջանին, Հայաստանի դեմ ագրեսիայի վճարելիք շատ թանկ գինը:

Թուրքիայի հետ պատերազմում հայկական զինված ուժերի հիմնական նպատակներն են լինելու, մի կողմից, թշնամու զորքերին հնարավորին չափ ծանր կորուստների պատճառումը, մյուս կողմից՝ սեփական ազգաբնակչությանը մեծաթիվ կորուստներից ապահովագրելը:

Հայոց բանակի գլխավոր սկզբունքը՝ «Որակն ընդդեմ քանակի»

Հաղթահարելու համար թշնամու ունեցած քանակային գերակշռությունը մարդուժի և սպառազինությունների մեջ՝ հայկական բանակը պետք է որդեգրի «Որակն ընդդեմ քանակի» սկզբունքը: Հայաստանի տնտեսական պայմաններն առաջժամ թույլ չեն տալու կիրառել այս սկզբունքը զինտեխնիկայի և հատուկ սարքերի բնագավառում. այստեղ մենք պետք է ձգտենք գոնե հավասարակշռություն պահպանել Ադրբեջանի հետ<sup>41</sup>: Սակայն «որակն ընդդեմ քանակի» սկզբունքը պետք է պարտադրաբար կիրառվի ոչ պակաս կարևոր այլ բնագավառներում, ու

<sup>41</sup> Հայաստանում ռազմական շինարարության տնտեսական ապահովման խնդիրների մասին տես Մ. Մելքոնյան. «Հայաստանի ռազմական անվտանգության ապահովման հիմնախնդիրները. 3» – Հայ զինվոր, 27 փետրվար-6 մարտ 1999, դ 8 (263):

րոնցից են բանակի բարոյականը, մարտիկների մոտիվացիան և նվիրվածությունը, մարտավարական պատրաստվածության աստիճանը, սպայակազմի զարգացածությունը, ճակատամարտում հնարամիտ և անսպասելի որոշումներ ընդունելու և դրանք իրականացնելու կարողությունը<sup>42</sup>:

---

42 Հակառակորդի թվային գերակշռությունը մշտապես բախված Իսրայելի բանակը դրան հաջողությամբ հակադրել է «փոքր զորամիավորումներին և յուրաքանչյուր մարտիկին տրվող կարևորությունը: Նրանց անհատականությունը, եռանդը, մասնակցությունն ու քաղաքական գիտակցությունը անգնահատելի էին: Այսպիսի դրվածքը [որոշումներ ընդունելու] լայն շառավիղ է տալիս կրտսեր հրամանատարներին և խրախուսում անձնական նախաձեռնությունը» (տե՛ս **Samuel Rolbant**, *The Israeli Soldier: Profile of an Army*, p. 34): Մ. Մելքոնյանը նկատում է, որ «ամերիկյան փորձագետների համոզմամբ՝ 100 արհեստավարժ զինվորը փոխարինում է 250 նորակոչիկի, իսկ թուրք զինվորական մասնագետների պնդմամբ՝ արհեստավարժ զինվորներով համալրված վաշտը կարող է հաջողությամբ լուծել նորակոչիկներով համալրված գումարտակի մարտական խնդիրները» (Մ. Մելքոնյան. «Հայաստանի ռազմական անվտանգության ապահովման հիմնախնդիրները. 2».- Հայ զինվոր, 20-27 փետրվարի 1999, դ 7 (262)):

**F**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԱԶԱՏԱԳՐՎԱԾ ՏԱՐԱԾՔԸ՝  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔ**



## **8.**

### **ԱՉԱՏԱԳՐՎԱԾ ՏԱՐԱԾՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ (ՀՀ ԵՎ ԼՂՀ) ՈԱՉՄԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵԼՍՏՈՒԲ\***

#### **ՊԿՎԻԹ ՍԻՄՈՆՅԱՆ**

*Հայկական հասարակության մեջ շարունակում են ակտիվորեն քննարկվել ղարաբաղյան հակամարտության կարգավորման այն սկզբունքները, որոնք, ըստ պաշտոնական հայտարարությունների և ԶՎՄ հաղորդագրությունների, ներկայացվել են երկու երկրների նախագահներին՝ քննարկման, ապա ստորագրման համար: Այդ սկզբունքները ենթադրում են հայկական գործերի դուրսբերում ազատագրված տարածքից և նրանց հանձնում Ադրբեյջանին՝ բացառությամբ Լաչինի միջանցքի:*

*Ինչպես հայտնի է, ռազմական անվտանգությունը բնորոշվում է որպես պետության այնպիսի վիճակ, որը բացառում է սպառնալիքով կամ զինված բռնության գործնական կիրառմամբ նրա կենսական կարևոր շահերին վնաս հասցնելը: Այս վերլուծությունը հիմնված է փորձագետների շրջանակներում ընդունված այն աքսիոմայի վրա, համաձայն որի ազգային անվտանգության ապահովման հարցերում միշտ պետք է ելակետային համարել իրադարձությունների զարգացման վատթարագույն սցենարը:*

*Սույն հոդվածում մանրամասնորեն քննվում է այն նշանակությունը, որ ունի ազատագրված տարածքը Հայաստանի (Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության) ազգային*

---

\* Հոդվածի նախնական տարբերակները լույս են տեսել ռուսերենով, տե՛ս [www.regnum.ru/news/679147.html](http://www.regnum.ru/news/679147.html) 18:32, 25.07.2006. *հմմտ. Голос Армении, 17.08.2006.*

անվտանգություն կարևորագույն տարրի՝ նրա ռազմական բաղադրիչի ապահովման համար: Ներկայիս Հայաստանի մասին խոսելիս պետք է նկատի ունենալ ռազմական և տնտեսական առումներով լիարժեքորեն ինտեգրված ՀՀ-ն և ԼՂՀ-ն:

1991-1994 թթ. ռազմական հակամարտության արդյունքում որակապես բարելավվեցին հայկական զույգ պետությունների ռազմավարական դրություն հետևյալ տարրերը.

### 1. Ճակատի փոխտեղադրությունը (կոնֆիզուրացիան)

Ներկա ճակատային գծի փոխտեղադրությունը հայկական կողմի համար բավականին բարենպաստ է. արցախյան ճակատի հարավային թևը պաշտպանվում է իրանական սահմանով, հյուսիսային թևը՝ դժվարամատչելի Մուվի լեռնաշղթայով: Արևելյան ուղղությամբ՝ Մուվի լեռնաշղթայից մինչև Արաքս գետը, հայկական կողմն ունի բազմաշերտ՝ պաշտպանական մի քանի գոտիներից բաղկացած և ինժեներական առումով լավ ամրացված սահմանագիծ:

Վեց շրջանները հակառակորդին վերադարձնելու և միայն Լաչինի միջանցքը պահելու դեպքում հայկական զույգ պետությունների և Ադրբեջանի (ներառյալ Նախիջևանը) միջև ընհանուր ռազմաճակատի գիծը կմեծանա ավելի քան 450 կմ-ով և կկազմի 1100 կմ: Ռազմաճակատի գծի երկարությունը Արցախի և Ադրբեջանի միջև կմեծանա ավելի քան 150 կմ-ով և կկազմի 360 կմ:

Հարևան թշնամի պետությունների հետ Հայաստանի սահմանների ընդհանուր երկարության մասին ամբողջական պատկերացում կազմելու համար օգտակար է հիշեցնել նաև հայկական զորքերով թույլ պաշտպանված, Հայաստանի և Թուրքիայի միջև գոյություն ունեցող 268 կիլոմետրանոց սահմանի գոյություն փաստը:

Մեծապես ընդլայնվող ճակատի հուսալի պաշտպանության համար հայկական կողմից կպահանջվի ինչպես մարդկային, այնպես էլ ֆինանսական ռեսուրսների զգալի մոբիլիզացում:

**Առաջին.** հայկական կողմը ստիպված է լինելու մեծացնել Հայկական բանակի (Հայաստանի Հանրապետության Զինված Ուժերի և Արցախի Պաշտպանության բանակի) թվաքանակը, հետևաբար և երկարացնելու պարտադիր զինծառայության տևողությունը, ինչպես նաև պայմանագրային հիմունքներով ավելի մեծ թվով քաղաքացիներ ներգրավելու զինծառայության մեջ:

**Երկրորդ.** հայկական զորքերի նահանջից հետո հայկական կողմը պետք է կատարի զգալի ծախսեր նոր պաշտպանական սահմանագծերի ստեղծման համար: Նշված միջոցառումների իրականացումն անխուսափելիորեն կհանգեցնի ռազմական բյուջեի մեծացմանն ու, համապատասխանաբար, առանց այն էլ անբավարար պետական սոցիալական ծրագրերի կրճատմանը՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով:

## 2. Պաշտպանության խորությունը

Ազատագրված տարածքը թույլ տվեց ստեղծել պաշտպանական նվազագույն անհրաժեշտ խորություն և լուծել բազմաթիվ կարևոր ռազմավարական խնդիրներ.

**Առաջին.** պաշտպանության ներկայիս խորությունը թույլ է տալիս ստեղծել բազմաշերտ (էշելոնացված) պաշտպանություն, այսինքն՝ պաշտպանական մի քանի սահմանագիծ ունենալու հնարավորություն: Առաջին պաշտպանական գծի ձեղքման դեպքում հայկական զորքերը կկարողանան դիմադրություն կազմակերպել հաջորդ սահմանագծերում, կանխել հակառակորդի ներթափանցումը Արցախի ներքին շրջաններ և պահել ճակատը մինչև Հայաստանից զորքերի համալրում ստանալը:

**Երկրորդ.** Արցախի խիտ բնակեցված կենտրոնական շրջանները, ներառյալ մայրաքաղաք Ստեփանակերտը, ինչպես նաև Հայաստանի Գորիսի, Կապանի և Մեղրու շրջանների բնակավայրերը հայտնվել են ադրբեջանական հրետանու և ՄՄ-21 «Գրադ» համազարկային կրակի համակարգերի ուժեղացման հասանելիության շառավղից դուրս վիճակում:

**Երրորդ.** Զանգեզուրի, Զեբրայիլի ու Ֆիզուլիի շրջանները ազատագրելով և ճակատի գիծը ավելի քան 100 կմ դեպի արևելք տեղափոխելով՝

հայկական կողմը շեղոքացրել է ընդամենը 40 կմ լայնություն ունեցող և պաշտպանության կազմակերպման տեսանկյունից խոցելի Մեղրու շրջանին սպառնացող վտանգը:

Վեց շրջանները հակառակորդին վերադարձնելու և ճակատային գիծը ԼՂԻՄ-ի նախկին վարչական սահմաններ տեղափոխելու դեպքում, եթե նոր պատերազմ սանձազերծվի (որի հավանականությունը բացառել չի կարելի), պաշտպանության անհրաժեշտ խորություն բացակայությունը վերին աստիճանի կբարդացնի հայկական կողմի դրությունը:

Այդ դեպքում ճակատի գիծը կանցնի Մարտակերտ, Ասկերան և Հաղրութ շրջկենտրոններից 5 կմ, իսկ Ստեփանակերտից ընդամենը 18 կմ հեռավորության վրա: Բացի դրանից, Քարվաճառի (նախկին Քելբաշարի) շրջանն Ադրբեջանին հանձնելու դեպքում Մարտակերտի շրջանի դրությունը հնարավոր ռազմական եռակողմ ներխուժման դեպքում կդառնա խոցելի:

Նոր պաշտպանական սահմանագիծը, նույնիսկ հնարավոր առավելագույն ինժեներական ամրացումից հետո, չի կարող Արցախի ռազմական անվտանգության ապահովման համար հուսալի երաշխիք լինել:

Ինչպես հայտնի է ռազմական պատմությունից, հարձակվող կողմը կարող է ճեղքել ցանկացած, նույնիսկ ամենապատրաստված պաշտպանական գիծը: Այսպես՝ 1940 թ. Կարմիր բանակը ճեղքեց Ֆինլանդիայի կառուցած Մաններհեյմի գիծը, 1945 թ. անգլո-ամերիկյան դաշնակից ուժերը ճեղքեցին Գերմանիայի կառուցած Ջիգֆրիդի գիծը, իսկ 1973-ին եգիպտական զորքերը՝ Իսրայելի կառուցած Բար-Լևի գիծը): Վճռորոշ նշանակություն է ունենում պաշտպանության խորությունը. այն թույլ է տալիս պաշտպանվող կողմին կազմակերպել նոր դիմադրության գծեր և, հակառակորդին ուժասպառ անելով, կանգնեցնել հարձակումը: Այսպես՝ 1973 թ. արաբա-իսրայելական (Դատաստանի օրվա) պատերազմում, երբ եգիպտական զորքերն ընդամենը 6 ժամում ճեղքեցին Սինայի թերակղզում կառուցված, այսպես կոչված, Բար-Լևի գիծը (գծի երկարությունը 157.5 կմ, խորությունը 15 կմ), հենց պաշտպանության խորության առկայությունն էր, որ թույլ տվեց Իսրայելին կանգնեցնել եգիպտոսի զորքերի առաջխաղացումը՝ թույլ չտալով նրանց ներթափանցու-

մը երկրի կենտրոնական շրջաններ, անցկացնել զորահավաք և բեկում մտցնել պատերազմի ընթացքի մեջ:

Բացի այդ, սահմանը տեղափոխելու դեպքում, Արցախի և Սյունիքի մարզի բնակավայրերի մեծամասնությունը՝ առաջին հերթին Ստեփանակերտ, Կապան և Գորիս քաղաքները, անպաշտպան կլինեն հակառակորդի հրետանու հրետակոծման վտանգի առջև: Եթե նոր պատերազմ սկսվի՝ քաղաքների, շրջկենտրոնների և գյուղերի հանկարծակի կենտրոնացված հրետակոծումն ու գնդակոծումը խաղաղ բնակչության շրջանում զգալի զոհերի պատճառ կդառնա, Արցախի և Սյունիքի բնակավայրերն ու ենթակառուցվածքը զգալիորեն կավերվեն, ինչը կարող է հանգեցնել խաղաղ բնակչության զանգվածային արտագաղթի:

### 3. Ռազմական հաղորդակցուղիները (կոմունիկացիաները)

Ժամանակակից պատերազմներում մեծ նշանակություն է տրվում կայուն գործող ռազմական հաղորդակցուղիներին, որոնք պատրաստված և սարքավորված են զորքերի տեղափոխման, սպառազինության, ռազմական տեխնիկայի, զինամթերքի, վառելիքի և այլ նյութական միջոցների առաքման, ինչպես նաև բոլոր տեսակի տարհանումների (էվակուացիաների) իրականացման համար: Ռազմական հաղորդակցուղիների առկայությունը և նրանց անխափան աշխատանքը հայկական կողմի համար ունեն բացառիկ նշանակություն՝ հաշվի առնելով պատերազմի առաջին օրերին ճակատում հակառակորդի կողմից զգալի գերակշռություն ստեղծելու վտանգը:

Մանրամասնորեն դիտարկենք արցախյան ճակատում երկու կողմերի ռազմական հաղորդակցուղիների վիճակը.

#### Ադրբեջան

Ադրբեջանի խիտ բնակեցված շրջանները արցախյան ճակատի հետ կապված են երկու երկաթգծով՝ Բաքու-Եվլախ և Բաքու-Հորադիզ: Բացի այդ, գոյություն ունեն մի շարք մայրուղիներ, ինչպիսիք են Բաքու-

Շեմախա-Եվլախ, Բաքու-Կյուրդամիր-Եվլախ, Բաքու-Բիրմայ-Բայլական (Ժդանովսկ), ինչպես նաև հարմարավետ, ճակատին զուգահեռ ընթացող, այսպես կոչված, ճակատամերձ (ռոկադային) Եվլախ-Բարդա-Ազ-ջաբեդի-Բայլական ճանապարհը: Նման տափաստանային տեղանքով անցնող հաղորդակցուղիների առկայությունը հակառակորդին հնարավորություն է տալիս, զորահավաքն իրականացնելուց հետո, արագ, արցախյան ճակատ տեղափոխել զորքերի զգալի քանակակազմ (կոնտինգենտ), մինչ Հայաստանից զորքերի մոտենալը և բազմապատկել ուժերի և միջոցների գերակշռությունը:

### Արցախ

Ճակատի ներկա փոխտեղադրության պայմաններում չորս ավտո-ճանապարհ Հայաստանը կապում է Արցախի և ճակատային գծի հետ. Վարդենիս-Մարտակերտ, Գորիս-Ստեփանակերտ-Ասկերան-Աղդամ, Կապան-Զանգեզուր-Ջեբրայիլ, Մեղրի-Միջնավան-Հորադիզ: Ռազմական գործողությունների դեպքում այս չորս ճանապարհների առկայությունը հայկական կողմին թույլ կտա մի քանի օրում Հայաստանից արցախյան ճակատ տեղափոխել զորքերի զգալի քանակակազմ:

Ճակատամերձ ճանապարհները վճռորոշ են ճակատի կայունությունն ապահովելու համար: Ճակատում ճեղքման վտանգ առաջանալու դեպքում ճակատամերձ ճանապարհների առկայությունը թույլ է տալիս արագ ճակատի մի մասից մյուսը տեղափոխել համազորային ռեզերվներ: Այժմ Արցախի պաշտպանության բանակի հսկողության տակ է երկու ճակատամերձ ճանապարհ. Մարտակերտ-Աղդամ-Ֆիզուլի-Ջեբրայիլ և կառուցման ընթացքում գտնվող Հյուսիս-Հարավ մայրուղին, որը պետք է միմյանց կապի Մարտակերտը, Ստեփանակերտը, Կարմիր Շուկան և Հաղրուվը:

Վեց ազատագրված շրջանները հանձնելու դեպքում հայկական զորքերի հսկողության տակ կմնա մի ճակատամերձ ճանապարհ՝ Մարտակերտ-Հաղրուվ, նաև Հայաստանի հիմնական մասը Սյունիքի և Արցախի հետ կապող միակ՝ Երևան-Գորիս-Ստեփանակերտ մայրուղին, որն անցնում է բարդ ռելիեֆով՝ հատելով բազմաթիվ լեռնանցքներ:

Պատերազմի վերսկսման դեպքում, հակառակորդի երկկողմանի հարձակումներից Լաշինի միջանցքի պաշտպանությունն ինքնին լուրջ խնդրի է լինելու: Բայց, նույնիսկ այն պահելու դեպքում, հակառակորդը, օգտագործելով հրետանու և ավիացիայի իր ունեցած առավելությունը<sup>1</sup>, կարող է Լաշինի միջանցքը դարձնել դժվարանցանելի, ինչն էլ Հայաստանին թույլ չի տա արագորեն Արցախ տեղափոխել բավականաչափ ռազմական քանակակազմ, իրականացնել նյութական կայուն մատակարարումներ և բուժօգնություն, որոնք անհրաժեշտ են զորքերի մարտունակությունը պահպանելու համար:

Բայց Արցախի ճակատագիրը հատկապես կախված է լինելու Հայաստանից արցախյան ճակատ զորքերի արագ տեղափոխումից, քանի որ ճակատը պահելու համար Արցախի Պաշտպանության բանակի ուժերը կարող են բավարար չլինել:

Այսպիսով, ակնհայտ է, որ հակամարտող կողմերի ռազմական ներուժերի հավասարակշռության պահպանման հարցում ազատագրված տարածքը կարևորագույն դեր է կատարում: Հայկական կողմից ազատագրված տարածքի հանձնումը կհանգեցնի ռազմական հավասարակշռության խախտման՝ օգուտ Ադրբեջանի, իսկ հայկական պետությունների ռազմական դրությունը մեծապես կվատթարանա, ինչը չեն կարողանա փոխհատուցել ո՛չ խաղաղ համաձայնագրերը, ո՛չ էլ միջազգային խաղաղապահ քանակակազմի ներկայությունը տարածաշրջանում: Դա առանձնահատուկ վտանգ է ներկայացվցնում, քանի որ Ադրբեջանի ղեկավարությունը ընտրել է իր երկրի ռազմական ներուժի կտրուկ ուժեղացման ուղին, որի իրականացման համար 2006 թ. ռազմական

<sup>1</sup> ՀՀ ԶՈՒ Գլխավոր շտաբի պետ, գեներալ-գնդապետ Միքայել Հարությունյանի տեղեկատվության համաձայն, Ադրբեջանի զինանոցում կա շուրջ 700 միավոր հրետանի (<http://www.regnum.ru/news/714852.html>), իսկ ՀՀ-ն ու Արցախը, համաձայն ադրբեջանական մի աղբյուրի, ունեն 547 միավոր հրետանի (<http://www.day.az/news/politics/46824.html>): Բացի այդ, Ադրբեջանն ունի 47, իսկ Հայաստանն ընդամենը 16 ռազմական ինֆնաթիոն (International Institute for Strategic Studies, The Military Balance, 2005/2006 (London: Oxford University Press, 2005), p. 108-111.

բյուջեն ավելացվել է երկու անգամ՝ 300-ից մինչև 600 միլիոն ԱՄՆ դոլար: Միաժամանակ պետք է նաև հաշվի առնել, որ Հայաստանը մոտակա տարիներին չի ունենա նույն ծավալներով ռազմական ներուժի մեծացման հնարավորություն, ինչպես Ադրբեջանը, հետևյալ հիմնական պատճառներով.

1. Հայաստանի Պետական բյուջեի չափը 3.5 անգամ փոքր է Ադրբեջանի բյուջեից (1 միլիարդ ԱՄՆ դոլար 3.5 դիմաց՝ 2006 թ. դրությամբ), և այս հարաբերակցությունը մոտակա տարիներին, ամենայն հավանականությամբ, աճելու է Ադրբեջանի նավթի արտահանման ծավալի մեծացմանը զուգընթաց:

2. Հայաստանն այլևս չի կարող հուսալ, որ Ռուսաստանից ռազմական տեխնիկայի զանգվածային անհատույց մատակարարում կստանա, ինչը տեղի ունեցավ 1990 թվականի կեսերին, և նպաստեց վերջին տասնամյակում հայկական կողմի և Ադրբեջանի միջև ռազմական հավասարակշռության պահպանմանը: Ռազմական ոլորտում Հայաստանի հիմնական ռազմավարական գործընկերը՝ Ռուսաստանը, Հայաստանի նկատմամբ վերջին տարիներին սկսեց վարել ավելի պրագմատիկ քաղաքականություն՝ առանց քաղաքական և տնտեսական արտոնություններ տրամադրելու:

Հետևաբար, միայն ազատագրված տարածքի պահպանումը, ռազմական բարեփոխումը և պետական կառավարման համակարգի ընդհանուր որակական բարելավումը հայկական կողմին թույլ կտան փոխհատուցել հակառակորդի աճող ռազմական ներուժը և ետ պահել նրան ռազմական գործողությունները վերսկսելու գայթակղությունից:

Ադրբեջանը, ռազմական հավասարակշռության փոփոխությունն ու Արցախի ամբողջ պաշտպանական համակարգում ստեղծված խոցելիությունն իր օգտին օգտագործելով, քաղաքական հարմար պահի, կարող է որոշում ընդունել Արցախն արագընթաց հարձակողական մեկ ռազմարշավի միջոցով գրավելու մասին: Ճակատը ճեղքելու համար հակառակորդը հարվածի գլխավոր ուղղություններով արագ կստեղծի ուժերի և միջոցների բազմակի առավելություն, ինչը դժվար չի լինի իրականացնել, եթե նկատի առնենք Արցախի պաշտպանության բանակի ն-

կատմամբ Ադրբեջանի զինված ուժերի ունեցած անձնակազմի և ռազմական տեխնիկայի քանակական առավելությունը, ադրբեջանական զորքերի 70 տոկոսի տեղաբաշխումը ճակատային գոտում, նաև դեպի արցախյան ճակատ զորահավաքի ենթարկված զորքերը Հայաստանից ավելի արագ տեղափոխելու հնարավորությունը: Ռազմարշավի ելքը հիմնականում կորոշվի պատերազմի առաջին օրերին ու կախված կլինի Արցախի պաշտպանության բանակի՝ ճակատը պահելու կարողությունից, որը չափազանց բարդ խնդիր է լինելու: Իսկ Հայաստանի՝ Արցախին օգնելու հնարավորությունը, կաշինի միջանցքի խոցելիություն պատճառով, սահմանափակված է լինելու: Բայց եթե ճակատը ճեղքվի և հայկական զորքերը չկարողանան կասեցնել հակառակորդին Ստեփանակերտի մատուցներում, ապա ռազմական պարտություն հետևանքը հայկական կողմի համար կլինի ոչ միայն Արցախի, այլև, հնարավոր է, Սյունիքի կորուստը: Արցախի գրավման դեպքում Ադրբեջանը, Թուրքիայի խրախուսանքով, հավանաբար, կփորձի իրականացնել պանթուրանական երազանքը՝ գրավել Մեղրու շրջանը, ինչն էլ թույլ կտա ապահովել ցամաքային կապ Թուրքիայի հետ և Հայաստանը կտրել Պարսկաստանից: Այդ նպատակն իրականացնելու համար թշնամին կարող է հարված հասցնել երկու կողմից՝ Զանգեզանից և Նախիջևանից: Արցախը կորցնելուց հետո Մեղրու շրջանի պաշտպանությունը հայկական կողմի համար չափազանց բարդ է լինելու, հաշվի առնելով շրջանի՝ պաշտպանության անհրաժեշտ խորություն բացակայությունը և Հայաստանի հետ կապող ավտոճանապարհների խոցելիությունը:

Իրադարձությունների նման սցենարի զարգացման հնարավորության մասին կարելի է դատել հորվաթիայում Սերբական Կրայինայի ոչնչացման հարաբերականորեն ոչ շատ հեռու անցյալի օրինակի հիման վրա: 1995 թ. հորվաթիայի ռազմական ուժերը, խախտելով հրադադարի մասին պայմանավորվածությունը, անցկացրին զորահավաք՝ հանկարծակի սկսելով հարձակումը, ճեղքեցին ճակատը և մի քանի օրվա ընթացքում՝ գրավեցին Սերբական Կրայինան: Ռազմական ագրեսիայի արդյունքում՝ Սերբական Կրայինան դադարեց գոյություն ունենալ և մոտ կես միլիոն սերբեր

աստիպված եղան լքել իրենց հայրենիքը և փախստական դառնալ: Այս ողբերգությունը տեղի ունեցավ Եվրոպայի կենտրոնում՝ Սերբական Կրայինայում և Խորվաթիայում տեղակայված ՄԱԿ-ի բազմահազարանոց խաղաղապահ քանակակազմի ներկայությունից: Ընդ որում, հարձակվող կողմի նկատմամբ որևէ պատժամիջոց չի կիրառվել:

### Եզրակացություններ

1. Հայաստանի և Արցախի՝ Ադրբեջանի նկատմամբ ռազմական հավասարակշռությունն ապահովող հիմնական գործոններից մեկն Արցախյան ճակատի ներկայիս բարենպաստ փոխտեղադրությունն է, որը փոխհատուցում է հակառակորդի առավելությունը զորքերի թվաքանակի ու մարտական տեխնիկայի հարցում, ինչպես նաև նրա՝ ռազմական ներուժն ավելացնելու ավելի մեծ հնարավորությունը:

2. Արցախի և Հայաստանի Հանրապետության դեմ ռազմական լայնածավալ ագրեսիա ձեռնարկելուց Ադրբեջանին հետ է պահում կողմերի միջև պահպանվող ռազմական հավասարակշռությունը, այլ ոչ թե 1994 թվականի հրադադարի պայմանավորվածությունը:

3. Ազատագրված տարածքի որևէ մասը հանձնելու դեպքում ռազմական հավասարակշռությունը կխախտվի հօգուտ Ադրբեջանի՝ նվազեցնելով Արցախի և Հայաստանի ռազմական անվտանգության մակարդակը: Սա էլ իր հերթին հակառակորդին կարող է մղել, հարմար պահ որսալով, ղարաբաղյան խնդիրը ռազմական ճանապարհով լուծելու փորձ կատարել: Այդ իսկ պատճառով ազատագրված տարածքի հանձնելը հակառակորդին, հայկական պետականության անվտանգության ապահովման տեսանկյունից, բացարձակապես անթույլատրելի է:

4. Հաշվի առնելով ադրբեջանա-թուրքական ագրեսիվ և ցեղասպանահակ դաշինքը, որն ունի ռազմական ճնշող առավելություն և հայկական պետականության ոչնչացման անթաքույց մտադրություն, Հայաստանի ռազմական անվտանգության հիմնական երաշխիքն են Հայկական բանակը և նրա վերահսկված ներկա տարածքը (42.000կմ<sup>2</sup>) են :

## **9.**

### **БЕРЕГИТЕ СТАТУС-КВО КАК ИСТИНУ**

#### **Зорий Балаян**

Многим нашим современникам кажется, что только сегодня в лексиконе политиков и политологов, занимающихся проблемой армяно-азербайджанского конфликта самым популярным термином стал “компромисс”. Развернутое толкование этого слова звучит довольно четко и понятно: “Соглашение на основе взаимных уступок”. Мне хотелось бы напомнить, что термин этот не сейчас стал популярным и ходовым. У меня такое впечатление, что каждое новое поколение сопредседателей (речь не только о президентах России, США и Франции по Карабахскому урегулированию, но и о великом множестве международных чиновников, вовлеченных в этот процесс), начинают свою деятельность с чистого, белого листа. А посему есть настоятельная необходимость действительно вспомнить историю этого вопроса. Честно говоря, разговоры о компромиссе в нашем регионе шли давно.

Жаркое лето девяносто второго. Шла страшная война, навязанная вооруженным до зубов Азербайджаном Нагорному Карабаху, а по большому счету – Армении, где в то лето после сотен тысяч армянских беженцев из Сумгаита, Шуши, Гандзака (Кировабад), районов Гардманка, Баку, Нахичевана прибавились еще шестьдесят тысяч человек из Шаумянского и Мардакертского районов. В те дни горели придорожные села Дрмбон, Члдран, Кичан. Ракеты системы “Град” и снаряды дальнебоек доставали села Ванк и Арчадзор. Прицельно били по шедевру мировой храмовой архитектуры монастырю Гандзасар. Словом, на наших глазах менялась живая карта Арцаха на севере по заранее заготовленным чертежам.

Невольно вспомнилось, что еще задолго до жаркого лета девяносто второго где-то на Западе, конкретнее, в США намеревались менять чуть ли не саму геополитику всего региона.

И вдруг – как гром среди ясного неба. По белому свету распространяется карта, опубликованная в американской печати. Карта, которая, по сути, отражала то, что происходило в то время в Карабахе и вокруг него. Карта как производная, как иллюстрация так называемого плана деятеля фонда Карнеги Пола Гобла, который в одно мгновение оказался на первых полосах мировых газет. Еще бы, создавалось впечатление, что он нашел реальный способ покончить наконец с затянувшимся карабахским кризисом. И добился этого фломастером по карте региона, словно ножом по пирогу. Разумеется, Полу Гоблу не до того было, кто там жил веками на этой земле, какие там были и есть памятники истории и культуры. Для него куда важнее были нефте– и газотранзитные интересы. Вот взял да и отрезал Мегринский район Армении (с огромным куском от остальной части Зангезура) и передал его Азербайджану, то бишь Турции. Зная волчий аппетит турок, Гобл решил заодно передать им армянский Шаумянский район, часть Мардакертского и Мартунинского районов Нагорно-Карабахской республики. Все это вместе Гобл положил на одну чашу весов компромисса, а на другую – Лачинский коридор.

Дабы оправдать Гобла, заказчики его “плана”, а также “специалисты” по карабахскому вопросу прибегли к неоспоримому авторитету Андрея Дмитриевича Сахарова, который еще в ноябре 1988 года предлагал реализовать идею компромисса, точнее, обмена отдельными территориями: армянские населенные пункты, где живут азербайджанцы, передать Азербайджанской ССР, а азербайджанские населенные пункты с компактным проживанием армян – Армянской ССР.

Идея не новая. Еще большевики на заре советской власти выдвигали ее. Кстати, такой подход к решению территориальных споров всегда устраивал теоретиков и практиков пантюркизма, которые из истории османской практики в Византии хорошо знают, что со временем демографическая картина изменится в пользу турок и тогда вопрос решится сам собой. Бесстрастные исследователи конфликта между косовскими мусульманами и православными

убедились, что победителем оказывается тот, кто быстрее делает детей. Говорят же: хозяин земли тот, кто сегодня обрабатывает ее. Возможно, эту сентенцию впервые произнес честный человек, но он вовсе не был мудрецом. Ибо не может быть мудрецом тот, кто не способен предвидеть беду. Это значит, надо знать не только то, что в обязательном порядке изменятся демографические показатели в пользу турко-азеров, но и то, что всегда непременно появятся новоявленные большевики, затем – новоявленные марионетки гоблы и зловещим фломастером решат на твоей земле судьбу живых и мертвых. Разве не ясно, что выполняя подобные планы, не перевезешь же с собой созданные твоими предками храмы, церкви, кладбища, могильники, крепостные стены циклопической кладки. Вспоминать же всеу имя академика Сахарова в связи с планом Гобла и с нынешними разговорами о компромиссе – это не только не уместно, это – сушая спекуляция. Андрей Дмитриевич в декабре 1988 года приехал в Армению. Мы вместе вылетели в Степанакерт. Он с супругой Еленой Боннер посетил Шуши. И после этого Сахаров понял и твердо осознал не только всю тщетность, но и всю опасность реализации самой идеи обмена территориями. В ней, как он сам убежденно признался, заложена мина замедленного действия.

Пол Гобл и нынешние продолжатели его идеи преследуют откровенно утилитарные (для Запада) цели: нефти и газопровод из Средней Азии в Европу провести через Турцию, минуя Армению, и, конечно – Россию и Иран. А тут стоит на их пути такой сорокашестикилометровый барьер, как Мегринский район, названный официальной Турцией “проклятым клином”, который с одной стороны отрезает “островной” Нахичеван от “материкового” Азербайджана, с другой – является мостом, соединяющим Армению с Ираном. Вот и добрым дядям захотелось, чтобы мы отдали туркам Мегри и получили взамен Лачинский коридор. Дело дошло до того, что готовы продолжать вести торг, проявляя при этом неслыханную щедрость: “Возьмите, что угодно, только дайте нам Мегри”.

Логика жизни и стратегической мысли вынудили армян не только, кровь из носу, сорвать план Гобла, но и освободить часть исторической родины, которая Сталиным была передана, по сути, Турции, с подачи которой большевики создали тюркскую респуб-

лику Азербайджан в рамках ленинской программы “экспорт революции на мусульманский (турецкий) восток”. Однако этого было мало. В состав новоиспеченной социалистической туркоазерской республики были включены отрезанные от исторической Армении огромные территории. Напомним и то, что Сталин, который самолично настоял на передаче Нахичевана и Карабаха Азербайджану, назвал их ядовито-лукаво не по национальному принципу – не Армянская автономная республика и Армянская автономная область, а по географическому – Нахичеванская автономная республика и Нагорно-Карабахская автономная область. Когда же в двадцатых и тридцатых годах в СССР проводили сплошные районирования союзных республик и областей, то Карабах обрамляли семью административными районами, из которых в спешном порядке выдворяли, выживали аборигенное армянское население, заодно, стирая следы, разрушая все армянские исторические памятники. Именно поэтому мы говорим об ОСВОБОЖДЕНИИ этих районов, в которых были уничтожены все огневые точки. Следует заметить, что только после освобождения этих территорий Азербайджан вынужден был сесть за стол переговоров в Бишкеке, где в мае 1994 года было подписано соглашение о перемирии.

Тотчас же все, кто решение армяно-азербайджанского конфликта ставят в зависимость от переброски нефти и газа из Средней Азии в Европу, поменяли географические приоритеты. В самом деле, зачем в создавшейся ситуации поднимать вопрос Мегри, если все, что проходит восточнее него (районы Зангелан, Джабраил, Физули) уже находятся под контролем армян. Вот и пришлось вопрос поставить куда шире. В срочном порядке подключается Совет Безопасности ООН, который принимает резолюцию, осуждающую Карабах. И делается это, презрев чудовищную резню армян в Сумгаите и Баку, презрев постановление Российского парламента о захвате азербайджанцами Шаумянского и половины Мардакертского районов. В западной и бакинской печати, занимаясь самоуспокоением, вещали, мол, Мегри никуда не денется, мол вопросом этим в Баку занимались давно.

И это верно. Еще в начале восьмидесятых годов прошлого века Г. Алиев ловко использовал безграничные возможности, которые давали ему новые должности члена Политбюро ЦК КПСС и

первого заместителя председателя Совета министров СССР, курировавшего, кроме всего прочего, вопросы транспорта и связи. И он принялся, по подсказке Турции, в срочном порядке проводить стратегическую дорогу, которая должна была связать “материковый” Азербайджан с “островным” Нахичеваном. Делалось это, конечно, под лозунгами дружбы народов и принципами “ленинской национальной политики”. Напомним, что к тому времени в Нахичеване уже не осталось истинных хозяев этой земли – армян. Поначалу дорогу через Мегри Алиев строил активно. Мы вели упорную борьбу против этой “стратегической провокации”. Термин этот принадлежит тогдашнему заместителю предсовмина Армении Александру Киракосяну, который подпольно возглавлял нашу борьбу. И нам удалось-таки притормозить бешенные алиевские скорости начатых уже работ. Нам “помогла” в этом перестройка с ее гласностью. Помогло и то, что о бесчисленных преступлениях Алиева тогда писали в газетах открыто. И его проект провалился. Однако, сразу после распада СССР на Западе уже с другого крыльца вновь решили вернуться к вопросу туркизации “проклятого клина”. При этом в самой Турции часто вспоминают, как в семидесятые годы, когда на посту премьера чуть ли не ежегодно сменяли друг друга Бюлент Эджевит и Сулейман Демирель, оба они, всякий раз улучив момент, ставили вопрос о Мегри, который страшно мешает непрерывной связи турок с Востоком, со Средней Азией, словом, с “родиной предков”. Ведь еще в конце двадцатых годов турки предусмотрительно за большие деньги и немалые земли купили у Ирана около десяти километров правобережья Аракса, чтобы иметь границу с Нахичеваном. И не случайно они, обсуждая план Гобла, часто говорили о том, что настало время пророчества Ататюрка.

Ничего с этим планом не вышло. Не помогло и то, что его хотели спешно реализовать, как говорится, под шумок, используя хаос, раскол, перманентную революционную ситуацию в постсоветской России. Профессиональные советологи хорошо знали о роли, цене и значении Мегринских ворот не только для Армении, но и для России и Ирана.

Так что всякие разговоры сегодня о компромиссах, о возвращении освобожденных территорий, о паритетах, о взаимовыгод-

ных уступках – все это от лукавого. Наивно полагать, что миротворческие силы и впрямь будут “творить мир” в регионе. Мы видели, как и какой мир подобные силы совсем недавно сотворили в Сербии-Косово. И мы знаем, что произойдет у нас. Сразу после возвращения освобожденных районов азеры и турки сначала попытаются решить вопрос Мегри (читай–вопрос транзита нефти и газа) через какой-нибудь “взаимовыгодный” торг, а затем пустят в ход хорошо знакомую нам и четко отработанную ими провокацию, которая сводится к следующей схеме: в каком-нибудь приграничном с Арменией селе подожгут заброшенный ветхий дом. Снимут пожар телекамерой. Переведут кадр с горящего дома на лежащий на земле фантом трупа человека, затем подробно покажут толпу женщин, которые кричат и рвут волосы на голове, посылая проклятья в сторону Армении. В девяностом и девяносто первом годах такие картины мы не раз видели на экранах советского телевидения. Сразу после такой передачи, на сей раз, уже мужчины дадут интервью, рассказывая и показывая рукой, как стреляют из армянских населенных пунктов, скажем, Корнидзора, Гориса, Красносельска (каждый раз новые географические названия), завершая тираду традиционным: “У нашего народа переполнилась чаша терпения”. И уже мы точно знаем, что через день полетят ракеты и снаряды в Корнидзор, Горис, Красносельск и другие населенные пункты. В самом Карабахе подобные провокации проводили куда изощреннее. Турки использовали дислоцированные в Арцахе внутренние войска МВД СССР, которые, кстати, тогда назывались миротворческими. С их помощью за немалую мзду азербайджанские омовцы терроризировали аборигенное армянское население, прикрываясь фактором проверки паспортного режима. Уже тогда мы четко определили для себя, что можем спасти ситуацию, спасти женщин, детей и стариков, спасти Родину только после вывода из Карабаха этих самых горе-миротворцев. Так именно оно и произошло.

Интересно знать, хоть раз задавались ли вопросом президенты России, США и Франции, взявшие на себя обязательство справедливо решить судьбу Карабаха, что может произойти с мирным населением Арцах и приграничных районов Армении после того, как под их давлением добьются непонятого им самим компро-

мисса и введут в регион эти самые миротворческие силы? Я предложил бы уважаемым президентам взглянуть внимательнее хотя бы раз на карту, где обозначены бывшие административные районы – Кельбаджар, Лачин, Кубатлу, Зангелан, Джебраил, Физули и Агдам, которые сейчас вместе представляют собой зону действенной безопасности для обоих народов.

Давайте, взяв трезвую голову в руки, прежде всего подумаем о том, что вообще представляет собой Лачинский коридор и с чем его едят? И почему считают, что именно в коридоре этом, и именно сейчас заложена суть “панацейного компромисса”. Мол, территория бывшей Нагорно-Карабахской области будет соединена с территорией бывшей Армянской ССР именно через этот коридор. Правда, пока не известна точная ширина просвета этого самого коридора. Собственно, куда вернее было бы знать о другом показателе. Скажем, о том, какова прицельная дальность полета, скажем, ракеты системы “Град”. Из прошлой войны мы хорошо знаем, что не меньше двадцати километров. “Не меньше” – потому, что уже есть модернизированная система, позволяющая выпускать ракету на тридцать километров. Мы уже жили при ситуации, когда Нагорно-Карабахскую Республику и Республику Армения связывал только Лачинский коридор. И знаем, что там творилось. Целых восемь месяцев (до освобождения Кельбаджара на севере и Кубатлу на юге) мы пробирались через этот самый коридор, неся огромные потери. День и ночь стреляли по коридору и с юга, и с севера. Азербайджанцы с утра до вечера тогда вещали по радио и телевидению, что вот-вот они прицельно разрушат два моста, переброшенные через реку Ахавни. И тогда, мол, Карабах окажется в капкане. Неужели не ясно, что в то время мы, кроме всего прочего просто были обречены на освобождение территорий, прилегающих к так называемому коридору как с севера, так и с юга. То есть, были обречены на освобождение как Кельбаджара, так и Кубатлу. То же самое происходило и с остальными районами.

Тогда весь мир очень даже хорошо понимал суть и смысл этой поистине стратегической и жизненной логики. Не было альтернативы ликвидации огневых точек в Кельбаджаре, Лачине, Кубатлу, Зангелане, Джебраиле и Агдаме. Любой другой подход – это геноцид не только населения Нагорно-Карабахской

области, но и всего Зангезура. Дальше речь уже пойдет о последствиях цепной реакции.

Выросло поколение, которое чуть ли не начисто забыло, что жестокая война шла не только в Арцахе. В нее были вовлечены Варденисский, Горисский, Кафанский, Мегринский, Ноемберянский, Шамшадиндкий, Иджеванский, Сисианский, Ехегнадзорский и Араратский районы республики Армения. Сегодня достаточно будет уступить (глагол-то какой!), скажем, любой освобожденный район, как, рано или поздно, вновь заработают знакомые нам огневые точки. Ибо рано или поздно кукольные миротворческие силы покинут регион. Нам говорят, что эти самые разноцветные каски или береты не покинут регион, пока не воцарится реальный мир. Я не думаю, что речь здесь идет о самообмане, о наивности, о незнании истории Турции и незнании сути политики пантюркизма. Конечно, это не самообман. Это – самый настоящий обман. Это – стратегическая уловка. Это – явный тактический капкан, в который, по мнению многочисленных режиссеров, должны попасть Россия, Иран и Армения. Что же касается самих миротворческих сил, то они, как показала жизнь, никогда не ведали, что творят. Мы в этом убедились в Арцахе на протяжении трех лет. И если все-таки введут так называемые миротворческие силы в регион, то это значит вновь возвращаемся к зловещему плану Гобла. И тогда вновь появится надежда у Турции (именно Турции) на то, что бесконечные провокации против армян приведут к такой трагической ситуации, в результате чего, мол, вынудят Армению пойти на печально известный Брестский мир. Не случайно уже сейчас можно читать и слышать, что армяне сами “преподнесут Мегри на блюдечке с голубой каемочкой”. И что тогда, мол, и наступит, наконец, долгожданный мир. Несомненно, что речь пойдет о мире, который, пожалуй, будет страшнее любой войны.

Так что нынешний статус-кво – это безальтернативная гарантия реальной безопасности и надежного мира, который уже сейчас предотвращает цепную реакцию не только в нашем регионе. Думать о сегодняшних сиюминутных интересах и о том, кто нынче друг, а кто враг – это занятие, лишенное мудрости, которое призвано освобождать трезвый ум от опьянения тщеславием и выгодой. Тут надо вспомнить о другом предупреждении мудреца:

“Пройдет время, и друг станет врагом, а враг – другом. Ибо собственная выгода сильнее всего”. Вспомним и то, как крепко и по-братски дружили в семидесятых годах прошлого века Иран и США, как поэты слагали оды о “солнечной дружбе” шахиншаха Ирана Реза Пехлеви и президента США Джимми Картера.

Бывшие “солнечные друзья” стали заклятыми врагами (имеется в виду не только отношения между США и Ираном). Пройдет время и, глядишь, все вернется на круги своя. И тогда изменится не только большая политика, но и истина, которая всегда бывает конкретной, подобно тому, как конкретным является статус-кво в регионе. Речь ведь идет о поистине миротворческом и спасительном статус-кво, о действенном правовом положении, которое нужно сегодня беречь всем миром, дабы потом не кусать локти всем миром.



**Գ**

**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ**



# 11.

## ՀԱՅԱՏԱՌ ՀԱՅԵՐԵՆԸ՝ ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ

### ՈՒՐԵՆ ՀԱՎՈՐՅԱՆ (ԹԱՐՈՒՄՅԱՆ)

Ներկայումս հայ մշակույթի զարգացման համար կարևորագույն խնդիր է Համացանցում հայատառ հաղորդակցման ծավալումը: Նախապես, ցանկություն կար սկսել հոգվածը «Բոլորոս մտահոգված ենք ցանցում հայատառ հայերեն հաղորդակցման խնդիրներով» արտահայտությամբ, սակայն դա կնշանակեր, մի կողմից, խոսել բոլորի անունից, և մյուս կողմից՝ ցանկալին, որպես իրականություն ներկայացնել: Եվ իրոք, եթե բոլորս ուզեինք, ո՞վ պիտի խանգարեր մեզ հայերեն գրել: Այնպես որ հայատառ հաղորդակցման սահմանափակ տարածման հիմնական և միակ պատճառը՝ ցանկության բացակայությունն է: Ինչպես ասում են՝ «Թե ուզում ես երջանիկ լինել, եղիր»: Սրանով կարելի էր հոգվածը ավարտված համարել: Իրոք, եթե չկա հայերեն հաղորդակցվելու պահանջարկ (իսկ դա նշանակում է, որ չկա հայ լինելու ցանկություն), ապա ի՞նչ իմաստ ունի խոսել հայատառ հաղորդակցվելու մասին:

Սակայն ներկայումս Ուստայնում (Web) հայերեն նյութերի քանակն աստիճանաբար աճում է: Դա հուսադրող է, և իմաստավորում է հոգվածի շարունակությունը: Ներկայումս Համացանցում կա մոտ 1 միլիոն հայերեն էջ (միայն UNICODE-ով. ArmSCII-8-ով էջերը չհաշված)<sup>1</sup>, այ-

---

<sup>1</sup> UNICODE-ը գրվածքների թվաչին տեսքով ներկայացման ժամանակակից ձևն է, որը հնարավորություն է տալիս մեկ տառատեսակի մեջ պահել բազմաթիվ գրաչին համակարգեր. այսինքն, բազմալեզու գրվածքներ իրագործելիս օգտվել միայն մեկ տառատեսակից: Հայոց գրանշաններին դրանում հատկացված է հատուկ բա-

սինքն այնքան, որքան մոտավորապես 10–11 տարի առաջ կար ամբողջ Համացանցում: Ի դեպ, պետք է նշել, որ սրանցից միայն 15 տոկոսն է մեր ազգային պետությանը հատկացված .am տիրույթում<sup>2</sup>: Սա յուրատեսակ սփյուռք է՝ Համացանցում. նույնիսկ մարմնապես բնակվելով Հայաստանում մեզնից շատերը գոնե վերիրային աշխարհում ձգտում են դուրս՝ .org, .net, .com և այլն: Սովորաբար դա բացատրում են .am հասցեների ավելի բարձր գնով (գրանցման գինը՝ 59 ևրո) և գրանցման քաջըշուկներով, սակայն սա պետք է դիտել սոսկ որպես արդարացում: Նախ, ազգային տիրույթներում հասցեների գներն առհասարակ գերազանցում են ճյուղային տիրույթների գներին, օրինակ՝ .com, .net տիրույթների (9 ևրո), սակայն, կան և ավելի թանկ տիրույթներ: Օրինակ, Ռուսաստանի .ru տիրույթում հասցեն արժե 89 ևրո, Դոմինիկայի .dm տիրույթում՝ 187 ևրո, Մոլդովայի .md տիրույթում՝ 199 ևրո<sup>3</sup>, այսինքն 3,5 անգամ գերազանցում է .am տիրույթի գինը. և սա դեռ չհաշված ամենամյա մուծումները: Մյուս կողմից մեր .am տիրույթում գրանցվում են հազա-

---

ժին: ArmSCII-8-ը հայատառ գրվածքների իրագործման հին ձևն է, որում հայոց գրանշանները չունենին հատկացված տեղ, ուստի և խառնվում են նույն սկզբունքով ներկայացված ալաբեզու գրվածքների հետ:

<sup>2</sup> Բնականաբար այս հարցում նման գնահատումները կարող են միայն մոտավոր լինել: Տվյալ դեպքում գնահատման հիմք են ընդունվել որոնումն «է» օժանդակ բայով (որը հայերենում ունի չափազանց մեծ հաճախություն և առկա է ցանկացած փոքրիշատե ծավալուն գրվածքում)՝ պատահում է մոտ 800 000 էջերում և «հայերեն» բառով, որը որպես լեզվի ցուցիչ նույնպես տարածված է կայքերում՝ պատահում է ավելի քան 2 500 000 անգամ: Պետք է սակայն առաջին դեպքում հաշվի առնել, որ որոշ քանակությամբ էջերում այդ օժանդակ բայն այնուամենայնիվ կարող է և չլինել, իսկ երկրորդ դեպքում «հայերեն» բառը կարող է գտնվել այլալեզու էջերում (օրինակ՝ նույն կայքի այլալեզու վարկածներում՝ որպես հայերեն վարկածի հղում): Տվյալները վերցված են ըստ Google-ի: Yahoo-ով որոնման արդյունքները մոտ 30 տոկոսով պակաս են: Բաց իրական թվերը կարող են և գերազանցել բերված տվյալները, քանի որ գործածվող հաշվեկարգերը հաճախ ցուցակավորում են միայն որոշակի պայմաններին բավարարող էջերը:

<sup>3</sup> Ըստ <http://www.europeregistry.com/domains/domains-search.htm>:

րավոր հասցեներ, որոնց տերերը **am** տառերը դիտում են, որպես **amplitude modulation** բառերի հապավում, կամ **america** բառի սկիզբ և նրանք, ովքեր դա անում են, հաստատ չեն գտնում, որ գինը բարձր է. պարզապես պետք է և վերջ՝ գրանցվում են: Մինչդեռ մենք, հայերս, սակարկում ենք և քննարկում. մնալ մեր ազգային գոտում, թէ՞ ոչ: Իսկ գրանցված է .am տիրույթում գրեթե կես միլիոն՝ հասցե՝ 450 000 <sup>4</sup>, այսինքն շուրջ 3 անգամ ավելի, քան հայերեն էջ կա .am տիրույթում: Վերջապես նույն այդ տիրույթում հասցե ունի տողերիս հեղինակը, որն ընդամենը անհատ է, մինչդեռ կան խոշոր կազմակերպություններ, որոնք հայտարարում են, թե գինը բարձր է:

Ինչևէ, եթե շնորհիվ տարբեր թվային շտեմարանների, որոնցից, թերևս ամենամեծը Հայ մատենագրության թվային գրադարանն է (digilib.am) և մի շարք օրաթերթերի կայքերի, հայալեզու նյութի թվայնացման և թվային տեսքով պահման գործը որոշ չափով տեղից շարժվում է, ապա բացառությամբ մի քանի հարթակների, ինչպիսիք են akumb.am-ը, zhamanc.am-ը, forum.am-ը հայալեզու (հայատառ) կենդանի շփումն այսօր Համացանցում գրեթե բացակայում է: Կավագույն դեպքում (եթե դա առհասարակ կարելի է «լավ» համարել) նամակները և ցանցային ուղերձները գրվում են լատինատառ հայերենով (այդ մասին տողերիս հեղինակն ահագանգել էր դեռևս 10 տարի առաջ Ազգային ժողովում կազմակերպված լսումների ընթացքում, բայց ինչպես տեսնում ենք, մինչ այսօր ոչինչ չի փոխվել): Հակառակ դրան օրինակ Ռուցանցում (РУСЕТ) կան հարյուրավոր ռուսալեզու հարթակներ, այն էլ մասնագիտացված. ծրագրավորողների, նկարիչների, իրավաբանների, բժիշկների և այլն:

Տխուր է վիճակը նաև Համացանցի ներկայիս արագ ընդլայնվող այնպիսի ճյուղում, ինչպիսին է առգիծ (online) wiki հանրագիտարանների ստեղծումը, ու նախ և առաջ Wikipedia-ն: Մրանք նույնպես լավ ցուցանիշ են տվյալ լեզվի վիճակը պատկերացնելու համար, քանի որ ստեղծվում են այդ լեզվի կրողների համացանցային համայնքի հավաքական ջանքերով:

<sup>4</sup> Համ <http://www.europeregistry.com/domains/domains-am.htm>

Անգլերեն Wikipedia-ան արդեն իսկ դարձել է աշխարհի ամենամեծ հանրագիտարանը, որի հոդվածների թիվը գերազանցում է հոշակավոր «Բրիթանիկայի» հոդվածների թիվը մի քանի անգամ: Թեև հոդվածների ստեղծման բնույթից ելնելով Wikipedia-ն շատերը ոչ հուսալի աղբյուր են համարում, այնուամենայնիվ դա բավական ընդգրկուն և գրավիչ աղբյուր է և այսօր արդեն Wikipedia-յի շրջանակներում ստեղծված են 250 լեզվական տարբերակներ: Եվ ահա լեզուների այդ ցուցակում հայերենը 2007 թվականի փետրվարի 24-ի դրությամբ 99-րդ տեղում է: Համեմատության համար ստորև բերված են Wikipedia-յում ներկայացված որոշ լեզուների դիրքերը: Բերված է նաև այդ լեզուների կրողների թիվը՝ նույն այդ Wikipedia-յի տվյալներով:

Լեզուն	Տեղն ըստ հոդվածների	Հոդվածների քանակը	Տեղն ըստ կրողների	Կրողների թիվը
անգլերեն	1	1 665 575	3	322 մլն
գերմաներեն	2	547 142	10	95 մլն
լեհերեն	4	352 740	26	44 մլն
ռուսերեն	11	138 012	8	170 մլն
չինարեն	12	113 139	1	885 մլն
Եսպերանտո	15	67 100	140-ից ցածր	~1 մլն
թուրքերեն	25	46 742	22	59 մլն
Եստոներեն	32	31 119	140-ից ցածր	1 մլն
բասկերեն	42	16 743	140-ից ցածր	1 մլն
իդո	45	14 524	140-ից ցածր	~0.5 մլն
վրացերեն	47	13 918	111	4 մլն
ուզբեկերեն	80	5 411	41	20 մլն
չովաշերեն	82	5 246	140-ից ցածր	2 մլն
ադրբեջաներեն	83	4 776	28	31 մլն
հայերեն	99	2 717	85	6 մլն
սանսկրիտ	110	2 025	140-ից ցածր	0. 05 մլն
օսերեն	115	1 655	140-ից ցածր	0.7 մլն

Աղյուսակից երևում է, որ թեև մեծաքանակ լեզուներն ընդհանուր առմամբ ավելի լավ են ներկայացված, այնուամենայնիվ, լեզվի կրողների

Թվի և Wikipedia-յում դրանց տեղի միջ և հստակ կապ չկա: Նույն այդ անգլերենն ըստ կրողների թվի միայն երրորդն է, իսկ համար մեկ լեզուն՝ չինարենը, միայն 12-րդն է, և զիջում է ոչ միայն 8-րդ տեղում գտնվող ռուսերենին, այլև 26-րդ տեղում գտնվող լեհերենին: Իսկ հայերենը, ոչ միայն չի հասնում իր կրողների թվի տեղին՝ 85, այլև հետ է մնում ավելի փոքրաքանակ այնպիսի լեզուներից ինչպիսիք են էստոներենը և վրացերենը: Վերջինս առհասարակ, լեզուների ցուցակում լինելով սոսկ 111-րդը Wikipedia-յում ներկայացված է 47-րդ տեղում: Հայերենից բարձր են հայտնվել նույնիսկ պետական կարգովիճակ չունեցող բասկերենը, չովաշերենը, ինչպես նաև՝ արհեստական լեզուներ էսպերանտոն և իդոն: Հայերենին հաջողվել է գերազանցել (այն էլ չնչին չափով) մեռած լեզու սանսկրիտին և օսերենին, ինչպես նաև բերված աղյուսակից դուրս մնացած դրոզդերենին, աբխազերենին: Որո՞նք են այս իրադրությունն պատճառները:

Պատճառներից ամենահիմնականն, իհարկե, համակարգչային դարաշրջանի սկզբում (մեզ համար՝ դա մոտավորապես 80-ականների վերջն էր) հայերեն համակարգերի բացակայությունն էր: Անկասկած դրա պատասխանատվությունն ամբողջովին Հայաստանի ակադեմիական հաստատություններին է և երկրի կառավարությանը, որն այդ հաստատություններին համապատասխան պատվեր չտվեց: Այդ իրենց հանցավոր անտարբերության պատճառով էր, որ Խորհրդային Միության շրջանակներում հաշվողական համակարգերի գծով ամենաառաջադեմ պետությունում՝ Հայաստանում, որտեղ ստեղծվում էին ամբողջ Միության և Արևելյան Եվրոպայի երկրներում գործածվող համակարգիչներ, չստեղծվեց ազգային լեզվով աշխատող համակարգ: Անշուշտ, դրա հիմնական պատճառն այն էր, որ այդ հաստատությունների աշխատակիցների մեծ մասը թեև հայեր էին, սակայն իրենց մայրենին ոչ թե հայերենն էր, այլ ռուսերենը, և նրանց մտքով էլ չէր անցնում, որ մեր «գավառական» լեզվով իմաստ ունի ինչ-որ համակարգ ստեղծել: Կասեն, որ այդ տարիներին Միությունն արդեն քայքայվել էր և աղետալի վիճակը հնարավորություն չտվեց այդ հարցով զբաղվելու: Ի՞նչ պատասխանես: Կարելի է հիշել, թե ի՞նչ պայմաններում է ստեղծվել հայոց

առաջին տպագիր գիրքը, թե ինչ պայմաններում է հիմնադրվել Երևանի պետական համալսարանը. երբ պետություն էլ, որպես այդպիսին, չկար: Մինևույն ժամանակ կարելի է նկատել նաև, որ արդեն այդ ժամանակ հայկական համակարգեր ստեղծելու աշխատանքներ այնուամենայնիվ ընթացել են: Իհարկե առանց պետական պատվերի, այլ անհատ նախաձեռնողների ջանքերով, մինչդեռ պետական և ակադեմիական հաստատությունների ներգրումն այդ գործում եղել է միայն ամեն գնով նրանց աշխատանքներին խոչընդոտելը: Բայց դե ինչ եղել է՝ եղել է...

Իսկ ի՞նչն է խանգարում հայերին այսօր հայերեն գրել: Հայերեն հաղորդակցմանը (այսինքն, տվյալ դեպքում՝ մեքենագրմանը, մուտքագրմանը) խոչընդոտում են երեք հիմնական խնդիրներ, իրենց ենթախնդիրներով:

### 1. Հայերենն աջակցող համակարգերի բացակայությունը:

Ներկայումս այս խնդիրը աստիճանաբար լուծվում է: Այսպես, ամենատարածված Windows գործավար համակարգը սկսած Windows 2000-ից աջակցում է աշխատանքը հայերեն UNICOD-ով: Բնականաբար, նոր համակարգերի անցնելը կապված է որոշակի ծախսերի հետ, բայց սկզբունքորեն խնդիրն արդեն լուծելի է: Իհարկե, 2000-ից առաջ էլ հայերեն հնարավոր էր գրել (ArmSCII-8 այլագրմամբ). միայն ցանկություն լիներ. ի վերջո, թերթեր էին տպվում, կայքեր ստեղծվում: Առնվազն, գոնե նամակ գրելիս կարելի էր (և հիմա էլ կարելի է) գործածել այնպիսի ծրագրեր, որոնք ներառում են իրենց մեջ գործածվող տառատեսակները (Word, Acrobat): Թեև, ի՞նչ խոսք, Ց-բիթանոց համակարգերը լուրջ գլխացավանք են ստեղծում օգտվողի համար. մե՛կ ստեղծնաշարի սարքավարը չկա կամ բախման մեջ է համակարգի հետ, մե՛կ համապատասխան տառատեսակը չկա, մե՛կ բազմալեզու փաստաթղթում պատահմամբ փոխվել է գրվածքի ոճը, և բոլոր լեզուները խառնվել են և փոխարենը հայտնվել են ինչ-որ անկապ նշաններ, և այլն:

Բայց եթե գործավար համակարգերի դեպքում խնդիրը թեև դանդաղ, բայց լուծվում է, ապա կիրառական ծրագրերի մեծ մասը, նույնիսկ եթե դրանք աջակցում են աշխատանքը UNICOD-ով, չեն աշխատում

կամ թերի են գործում UNICODE-ի հայերեն տառաշարով: Ինչ վերաբերում է Համացանցին, ապա տազնապալի է, որ չկան հայկական որոնիչ սարքեր, ինչպիսին են, օրինակ Yandex, Aport, Rambler համակարգերն են՝ ոռւսերենի համար: Մենք ստիպված ենք բավարարվել ամերիկյան որոնիչ սարքերի Google-ի, Yandex-ի, Altavista-ի ծառայություններով, որոնք թեև աշխատում են հայերեն, բայց հաշվի չեն առնում հայոց լեզվի առանձնահատկությունները, կամ հայ որոնողի առջև եղած խնդիրները: Պետք է հիշատակել լայնորեն գործածվող ICQ ուղերձման համակարգի հայերեն թարգմանված չլինելու փաստը: Նաև՝ բջջային հեռախոսները, որոնց հայացումն առհասարակ լուծված չի, իսկ հեռախոսներ ներկրողները գնորդներ շահելու նպատակով հպարտությամբ գովազդում են դրանց ռուսացված լինելու հանգամանքը:

2. Հիմնական գործավար համակարգերում Windows-ում, MacOS-ում, Linux-ում հայերեն գրանշաններով որակյալ տառատեսակների բացակայությունը:

Ներկայումս աշխատանքներ են ընթանում Windows XP համակարգի հայացման ուղղությամբ: Բնականաբար «մասնագետների» մեծ մասը (ցավալի է, բայց ստիպված եմ այդ բառը չակերտների մեջ առնել) բաց չեն թողնում այդ մասին իրենց հեզնանքն արտահայտելու առիթը (այսինքն՝ ՑՕ-ականներից այս կողմ մեր «մասնագետների» աշխարհայացքում ոչինչ չի փոխվել): Բայց մի բանում իրենք ճիշտ են. Համացանցում (և առհասարակ) հայոց լեզվի ապագայի համար այնքան կարևոր չէ Windows-ի օգտվողական միջերեսի (interface) հայացումը, որքան այն, որ արդեն իսկ արտադրողի կողմից յուրաքանչյուր վաճառվող համակարգ (աշխարհի ցանկացած երկրում) օժտված լինի հայերեն տառատեսակներով և հայերենն աջակցող այլ ծրագրերով: Այլ կերպ, որպեսզի Arial, Times New Roman, Courier New, Tahoma, Verdana, իսկ այսօր արդեն Vista-ի հետ տարածվող նաև Segoe UI և մի շարք այլ տառատեսակներում լինեն հայերեն տառաշարեր: Առայժմ այդ ուղղությամբ բոլոր ջանքերն ապարդյուն են անցել. նշված տառատեսակների հեղինակային իրավունքները կրող՝ Microsoft-ը և Monotype-ը նույնիսկ լսել չեն ու-

գում այդ մասին: Եվ դա այն դեպքում, երբ վերջերս ամենաբարձր մակարդակով համագործակցության մասին պայմանագիր ստորագրվեց Microsoft-ի և Հայաստանի կառավարության միջև: Հեղինակի հաստատ համոզմամբ, խնդրի լուծումն անհնար կլինի առանց Հայաստանի պետության ամենաբարձրաստիճան անձանց՝ Նախագահի և Վարչապետի անձնական միջամտության: Ներկայումս Windows-ի հետ մատակարարվում են մի երկու տառատեսակներ (Sylfaen, Arial Unicode MS)՝ հայերեն տառաշարերով, սակայն դրանք երկրորդական բնույթի են, շատերը դրանց գոյության մասին չգիտեն, ուստի և չեն գործածում: Ու դրանից բացի այդ տառատեսակները որակապես թերի են (օրինակ՝ չունեն թավ և շեղ ոճեր): չեն համապատասխանում ո՛չ կրթական, ո՛չ հայկական տառարվեստի պահանջներին և շատ դեպքերում անընթեռնելի են (հատկապես՝ Arial Unicode MS-ը):

3. Հայերեն մակագրություններով ստեղնաշարերի բացակայությունը:

Ով որ գոնե մեկ անգամ փորձել է համակարգչային ստեղնաշարով հայերեն մուտքագրել, գիտի, թե դա որքա՞ն տհաճ գործ է, եթե ստեղների վրա չեն նշված տառերը: Կա՛մ պետք է հերթով սեղմել ստեղները՝ գտնելու համար անհրաժեշտ տառը (պարզ է, որ այս դեպքում երկար գրվածք չես մուտքագրի), կա՛մ պետք է մի որևէ օժանդակ ծրագրում (օրինակ՝ KDWIn-ում) սլաքով հավաքել անհրաժեշտ բառերը, կա՛մ պարզապես՝ հիշել տառերի տեղերը:

Փորձելով լուծել խնդիրը, ոմանք ստեղնաշարերի ստեղներին կպնում են թղթերի վրա տպված հայերեն տառեր: Ավելորդ է ասել, որ նման ստեղնաշարերի գեղագիտական վիճակը սոսկալի է. կպցված տառերի կեսը պոկված, մյուսները՝ կպչուն ժապավեններով ամրացված և այլն: Մինչդեռ հայերեն մակագրություններով ստեղնաշարեր պատվիրելը (կամ նույնիսկ արտադրելը) պարզագույն խնդիր է: Հեղինակն անձամբ աշխատել է այդպիսի մի ստեղնաշարով 10 տարի առաջ (Black Cherry անունով ինչ-որ ընկերության արտադրության): Սակայն դա եզակի դեպք էր. պահանջարկ չկա: Ռուսական տառերով ստեղնաշարի պահանջ կա,

իսկ հայերենով՝ ոչ: էլ ո՛ւր մնաց «Լեզվի մասին» օրենքը, որը պահանջում է, որպեսզի նման ստեղծաշարեր լինեն Հայաստանում: «Օրենքն» այդ «ընդունված» է արդեն շուրջ տասը տարի առաջ, իսկ հայատառ ստեղծաշարեր մինչ օրս էլ դեռ չկան:

Դա է՛լ ավելի տարօրինակ է, քանի որ այդ գործի նախաձեռնողը կարող էր լավ շահույթ ունենալ: Ըստ որոշ գնահատումների, ներկայումս Հայաստանում համակարգիչների թիվը տարեկան աճում է մոտ 100 հազարով <sup>5</sup>: Ստեղծաշարերի մանրածախ միջին գինը կազմում է մոտ \$15, իսկ մեծածախը՝ մոտ \$5: Տարբերությունը՝ \$10 է: Այս գումարի մոտ կեսը կարող է դիտվել որպես մաքուր շահույթ (հաշվարկը բնականաբար՝ չափազանց մոտավոր է): Այսպիսով Հայաստանում ստեղծաշարերի շուկան տարեկան առաժիտ է մոտ 500 000 դոլար շահույթ: Շատ չի, բայց քիչ էլ չի: Նա, ով կկազմակերպեր հայատառ ստեղծաշարերի ներմուծումը Հայաստան, կարող էր ստանալ այդ գումարի զգալի մասը: Եթե, իհարկե, վերջապես Լեզվի տեսչությունն իր առօրյա զբաղմունքից բացի սկսեր զբաղվել նաև իր անմիջական գործով, այն է՝ հայոց լեզվի պաշտպանությունը:

Բայց, քանի դեռ Լեզվի տեսչությունը դրանով չի զբաղվում խնդիրը կարող էր լուծվել արհեստավարժ մուտքագրման մշակույթի, այն է՝ փակաչ մուտքագրման եղանակի (մուտքագրում՝ առանց ստեղծաշարին նայելու, տասը մատով մուտքագրում, *touch-typing*) տարածման ճանապարհով: Օրինակ՝ դպրոցներում դասավանդման միջոցով: Բնականաբար, դրա համար էլ գործի պիտի անցնի Կրթության նախարարությունը): Այդ դեպքում մակագրությունների լինել-չլինելը նշանակություն չէր ունենա: Անհրաժեշտ է նաև համապատասխան ծրագրային ինքնուսույցների ստեղծում: Այս հարցերով հետաքրքրվողներին առաջարկում եմ այցելել ռուսական [www.urikor.net](http://www.urikor.net) կայքը (այս մասին տե՛ս հեղինակի երկու «Ստեղծաշարի պատմությունից» և «Մեքենագրման արհեստի մասին» կարճ հոդվածներում, որոնք ընդգրկված են «Զրույցներ համակարգչի

<sup>5</sup> Ըստ [http://chinalist.ru/facts/viewyears.php?p\\_country=10&p\\_param=1034](http://chinalist.ru/facts/viewyears.php?p_country=10&p_param=1034)

մասին» գրքի հավելվածների շարքում. դրված է [fonts.tarumian.am](http://fonts.tarumian.am) հասցեով):

Հայատառ ստեղնաշարերի արտադրման և մուտքագրման գործի հետ կապված է մեկ այլ խնդիր ևս. իսկ ի՞նչ դասավորություններ պիտի հայերեն տառերը հայտնվեն ստեղնաշարի վրա: Պարզվում է, որ այս հարցում էլ միօրինակություն չկա: Եթե մի կողմ թողնենք առանձին անհատական տարբերակները, ապա կա ստեղների երկու տարածված դասավորություն. ավանդական գրամեքենայի ձևով (typewriter), որը հաստատված է, որպես Հայաստանի ազգային հիմնօրինակ, և այսպես կոչված, հնչյունային (phonetic): Գրամեքենայի դասավորության դեպքում տառերը դասավորված են ըստ հայոց լեզվի հնչյունների հաճախությունների (ինչպես ռուսական գրամեքենայի դեպքում՝ ըստ ռուսերենի հաճախությունների), այնպես, որ ամենահաճախ պատահող տառերը լինեն ամենաուժեղ մատների մոտակայքում: Շնորհիվ այս դասավորության, ինչպես նաև՝ փակաչ մտուտքագրման, երբ համապատասխան պարապմունքների շնորհիվ մատները գտնում են հապապատասխան ստեղներն ինքնաբար, առանց որոնելու, մուտքագրման արագությունը կտրուկ աճում է և արդեն ոչ մի նշանակություն չի ունենում ստեղնաշարերի վրա հայերեն մակագրությունների առկայությունը:

Հնչյունային դասավորության դեպքում հայերեն տառերը համապատասխանեցված են լատինական տառերին: Դա արվել է, որպեսզի հայերեն մակագրությունների բացակայության պայմաններում հնարավոր լինի գտնել համապատասխան տառի ստեղնը: Արդյունքում, հայերենի ամենահաճախ պատահող «Ա» տառը հայտնվում է ստեղնաշարի եզրին, ամենա թույլ և դանդաղաշրժ մատի՝ ձախ ճկույթի տակ, իսկ ամենահազվադեպ պատահող «Ֆ»-ն՝ ուժեղ ձախ ցուցամատի մոտակայքում, ինչը բացառում է այս դասավորությունը փակաչ մուտքագրման համար օգտագործելը: Բայց ամենաանհեթեթս այդ դասավորության դեպքում այն է, որ քանի որ լատինական տառերը 26-ն են, իսկ հայկական այբուբենում կա 38 տառ, արդյունքում 12 հայերեն տառեր հայտնվում են պատահական ստեղների վրա և դրանց տեղագրությունը

միևնույնն է անհնար է լինում հիշել: Եթե դրան ավելացնենք, որ նույնիսկ այդ «հնչունային» դասավորությունն էլ տարբեր աշխատատեղերում տարբեր է, ապա պարզ է դառնում, որ նման դասավորությունը չի կարող լուրջ համարվել:

Սակայն մուտքագրողների զգալի մասը շարունակում է օգտվել «հնչունային» ստեղծաշարից: Ինչո՞ւ: Եթե պատճառը լիներ միայն սովորելու վրա ջանք թափելու ցանկության բացակայությունը (այլ կերպ ասած՝ ծուլությունը), ապա դա դեռ լավագույն տարբերակը կլիներ: Ցավոք, պատահում են հնչունային դասավորության «սկզբունքային» կողմնակիցներ: Սրանց թվում է, թե, քանի որ իրենք գործի բերումով միաժամանակ երեք լեզվով են մուտքագրում, ուստի և եթե յուրացնեն մեկ դասավորություն, ապա հեշտությամբ կմեքենագրեն բոլոր երեք լեզուներով: Այս կարծիքի միամտությունը նույնիսկ այն չէ, որ, ինչպես նկատեցինք, հայկական տառերը կիսով չափ ավել են, քան լատինականները, և տառերի զգալի մասի դասավորությունը միևնույնն է տարբեր է (հատկապես եթե դրան ավելացնում ենք նաև ռուսական տառերը), այլ այն, որ մարդու խոսքը (բանավոր և գրավոր) բաղկացած է ոչ թե հնչուններից ու տառերից, այլ վանկերից, այսինքն՝ որոշակի տառակապակցություններից, և համապատասխան տառերի իմացությունը դեռ չի նշանակում դրանց հավասար արագությունը գործածում բոլոր լեզուներում: Դա հավասարագոր է պնդման, թե որևէ լեզվի հնչունների իմացությունը բավարար է այդ լեզվով ազատ խոսելու համար: Ի դեպ, պետք է նկատել, որ եթե այդ «եռալեզու» անձանց համար առաջին տեղում լինեն հայերենը, նրանք առնվազն շահագրգռված կլինեին գործնականում ստուգել գրամեքենայի դասավորության առավելությունները, իսկ համոզվելուց հետո արդեն հազիվ թե վիճեին, սակայն քանի որ հայերենն իրենց երեք լեզուների շարքում սոսկ երրորդ է (եթե ոչ չորրորդը), իրենք նախըտրում են շարունակել վերացական վեճը՝ որպես ինքնարդարացում:

Հնչունային դասավորությունն ունի ևս մի վտանգավոր, թաքնված թերություն: Դա այն է, որ, թեև մուտքագրման արդյունքում ստանում ե-

ենք հայատառ գրվածք, սակայն մուտքագրման պահին նայում ենք լատինական տառերին և նշաններին: Այսինքն ենթագիտակցորեն ընտելանում լատինատառ հայերենին: Ճիշտ է, երբ ստեղծներին սոսնձում են հայերեն տառերը այդ վտանգը վերանում է, բայց այդ դեպքում վերանում է նաև հնչյունային ստեղծնաշարի իմաստը. եթե միևնույնն է նայելու ենք հայատառ ստեղծներին, ապա ի՞նչն է խանգարում, որ դրանք ավելի կատարյալ, գրամեքենայի դասավորությունն ունենան:

Այսպես թե այնպես, մեր ազգակիցների մեծ մասը չի պատրաստվում հրաժարվելու ստեղծնաշարին նայելով տպելուց, և հայերեն մակագրություններով ստեղծնաշարերի բացակայությունը լուրջ խոչընդոտ է մնում Համացանցում հայատառ հաղորդակցվելու ճանապարհին: Վերջերս, փորձելով նպաստել խնդրի լուծմանը, [forum.zhamanc.am](http://forum.zhamanc.am) կայքը ներդրել է մի համակարգ, որի շնորհիվ դուք ստեղծնաշարի վրա սեղմում եք լատինական տառերը, իսկ համակարգչի վահանի վրա, առանց որևէ լրացուցիչ սարքավարի, հայտնվում են հայերեն տառեր: Առաջին հայացքից սա շատ լավ հնարք է, քանի որ հնարավորություն է տալիս ցանցում հայատառ հայերենով հաղորդակցվել: Հատկապես դա հարմար է արտերկրի մեր հայրենակիցների դեպքում, որոնք, երբեմն իրավունք էլ չեն ունենում իրենց աշխատատեղերում հայերեն աջակցում տեղադրելու: Սակայն կրկին սա նշանակում է թերի ու լատինաշունչ «հնչունային» դասավորության աջակցում:

### Եզրակացություններ

Քաղաքակրթության զարգացման ներկայիս փուլում, երբ մարդու առօրյան ավելի ու ավելի է կապվում համակարգչային և Համացանցային միջավայրերին, հայ երիտասարդների նորանոր սերունդներ ընտելանում են առանց հայոց տառերի և նույնիսկ առանց հայոց լեզվի հաղորդակցվելուն, նախընտրելով այլ լեզուներ: Սա վտանգում է հայ ազգի ապագան: Թեև հայատառ նյութերի քանակը Համացանցում աճում է, սակայն այդ գործընթացը չափազանց դանդաղ է, քանի որ բախվում է մի շարք շտուկված խնդիրների: Դրանց մի մասի լուծումը կախ-

ված է միջազգային համակարգչային ընկերությունների հետ պետական մակարդակով համագործակցելուց: Նախ և առաջ, դա վերաբերում է թողարկվող ծրագրային համակարգերը հայկական գրանշաններ պարունակող որակյալ տառատեսակներով համալրելուն: Խնդիրների մյուս մասը ներազգային բնույթի է: Վերջինների հիմքում ընկած է ազգային հոգեբանական ցավալի մի բարդույթ. արհամարհական վերբերումները մայրենի լեզվի նկատմամբ: Կարևոր է նաև պետական մարմինների, մասնավորապես՝ Լեզվի տեսչության և նրա անմիջական վերադասի՝ Կրթության և գիտության նախարարության թերացումը: Թվարկված խնդիրները հնարավոր է լուծել միայն, եթե Կառավարությունն իր հսկողության տակ վերցնի թվային միջավայրերում, ներառյալ՝ Համացանցում հայոց լեզվի խնդիրների լուծումը: Մոտ ապագայում ձեռնարկվելիք առաջնահերթ քայլերը պետք է լինեն.

- Հայաստանի պետության անունից համագործակցության հաստատումը միջազգային ծրագրային ընկերությունների հետ,
- Հայաստանյան բոլոր հիմնարկների ապահովումը հայատառ ստեղնաշարերով,
- կրթօջախներում արհեստավարժ հայատառ մեքենագրման դասընթացների կազմակերպումը և ուսումնական ծրագրերում ներառումը,
- Համացանցում հայոց լեզվի գործածմանը նպաստող պետական քարոզչության ծավալումը,
- Եվ ամենակարևորը՝ հայոց լեզվին վերաբերող բոլոր օրենքների անվերապահ կատարումը:



Դ

**ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ**



## 13.

ԲԱՆԱԿ ԵՎ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ԻԴԵԱԼԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՅՈՒՄՆԵՐԸ ԵՎ  
ԻՐԱԿԱՆ ԿԱՊԻ ՈՐՈՇ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ

### ՇՈՒՇԱՆ ԽՍԱԹԱՄԱՅՅԱՆ

Բանակի անհրաժեշտության փաստը Հայաստանի համար ապացույցների կարիք չունի (առնվազն տեսանելի ապագայում): Քանի դեռ գոյություն ունեն պետական շահեր, որոնք օբյեկտիվ կերպով կարող են հակասել այլ պետությունների շահերին, գոյություն ունեն նաև օբյեկտիվ սպառնալիքներ, ինչպես և պետական շահերի պաշտպանության կենսական անհրաժեշտություն: Հենց պետությունն է իրականացնում ազգային անվտանգության ապահովման հիմնական գործառույթները՝ «Պետության նպատակը գլխավորապես անվտանգության ապահովումն է» (Հոբս, «Լեիաթան»):

Միևնույն ժամանակ, հենց պետության ինստիտուտին են վերագրում թե՛ հիմնական սպառնալիքների աղբյուր լինելը<sup>1</sup>, և թե՛ անհատի, հասարակության և ազգի անվտանգության (համալիր անվանումը՝ «ազգային անվտանգություն») խնդիրների համակարգային լուծման հնարավորությունները: Պատճառն այն է, որ հենց պետությունն է ի զորու ստեղծել, և ամենակարևորը՝ համախմբել դրա համար անհրաժեշտ միջոցները: Ընդ որում, ազգային-պետական քաղաքականության վերջնական նպատակը կախված է տվյալ պետության «մեկնարկային» պայմաններից:

---

<sup>1</sup> Բացառությամբ «ոչ պետական» ահաբեկչության (Շն):

Ազգային-պետական անվտանգության ապահովման գործընթացը սովորաբար ծավալվում է ազգային վերնախավային խմբերի միջև մրցակցության պայմաններում: Այդ պայքարի նպատակներից մեկն է՝ միջազգային հարաբերությունների համակարգում սեփական պետության համար «մեկնարկային» լավագույն պայմանների ստեղծումը: Նման մրցակցությունը, որպես կանոն, հանգեցնում է արտաքին սպառնալիքների (ռազմական, թե այլ բնույթի) առաջացմանը: Ընդ որում, սպառնալիքների ամբողջական վերլուծությունը պետք է հաշվի առնի այնպիսի գործոններ, ինչպիսիք են այլ պետությունների թշնամական քաղաքականությունը, նրանց իրական ռազմական հնարավորությունները և իրական սպառնալիքները, որոնք սովորաբար գտնվում են շահերի և այլ գործոնների «հատման կետում»: Եվ հենց դրանով է պայմանավորված ազգային շահերի պաշտպանության ժամանակակից պետական ինստիտուտների՝ բանակի, ոստիկանության և անվտանգության ծառայությունների անհրաժեշտությունը:

Ձինված ուժերը պետության հզորության կարևոր բաղադրիչ են, պետական ինքնիշխանության խորհրդանիշ, ազգի արտաքին անվտանգության ապահովման և երկրի, ինչպես նաև այդ երկրի դաշնակիցների, տարածքային ամբողջականության պահպանման միջոց: Ձինված ուժերի նշանակությունը պետության ներքաղաքական դաշտում տարբեր երկրներում տարբեր է, ինչը պայմանավորված է նաև արտաքին քաղաքական պայմաններով և միտումներով:

Քաղաքացիական առումով, Հայաստանի ռազմական քաղաքականությունը պայմանավորվում է միջազգային իրավունքի նորմերի, ՄԱԿ-ի և ԵԱՀԿ-ի սկզբունքների նկատմամբ ստանձնած պարտավորություններով և ունի բացառապես պաշտպանական բնույթ: Այդ քաղաքականությունում համակցվում են հավատարմությունը խաղաղության սկզբունքներին և ազգային շահերն ու երկրի անվտանգությունը պաշտպանելու վճռականությունը: Ընդ որում, նախապատվությունը տրվում է պատերազմների և ռազմական հակամարտությունների կանխարգելման քաղաքական, դիվանագիտական, տնտեսական, իրավական և այլ՝ ոչ ռազմա-

կան միջոցներին, ինչպես նաև համաշխարհային հանրության խաղաղության սպառնալիքների, դրա խախտման կամ ազդեցության ակտերի կանխարգելմանն ուղղված համատեղ գործողություններին: Այդ խնդրի լուծման համար Հայաստանը պետք է տիրապետի ոչ միայն և ոչ այնքան զինված պայքարի ժամանակակից միջոցների, այլև, որ ամենակարևորն է, ունենա ժամանակակից բանակ՝ բառիս ամենալայն իմաստով:

Դժվար չէ նկատել, որ հետխորհրդային տարածքի նորանկախ որոշ պետություններ շարունակում են «հին տիպի նոր բանակ» կառուցել: Սա մասամբ պայմանավորված է այդ երկրներին հատուկ արտաքին քաղաքական գերակայություններով և պարտավորություններով, մասամբ էլ՝ պետական մտածողության իներցիայով: Վերջինս հանգեցնում է նրան, որ միայն ռազմական մարտահրավերներն են արժանանում լուրջ ուշադրության, իսկ հասարակական փոխակերպումների տրամաբանությունից բխող մարտահրավերները և պահանջները՝ անտեսվում: Թվում է, թե նախորդ հարյուրամյակների ընթացքում պետական մտածողության ունակությունները կորցրած լինելով, Հայաստանը պետք է մասամբ թոթափած լիներ նաև դրա իներցիան: Սակայն կառավարման արդեն հնացած միջոցներին կառչածությունը և մտածողության իներցիան մեզանում նկատելի են ցանկացած ոլորտում:

Ինչն է պայմանավորում մեր երկրում ռազմաշինության տրամաբանությունը: Վերլուծությունը ցույց է տալիս, որ ռազմական շինարարության ոլորտում զարգացման և բարեփոխումների ուղիները, բացի բանակի այս կամ այն տիպի կառուցվածքում շահագրգռված քաղաքական վերնախավերի շահերից, պայմանավորվում են նաև ներքին և արտաքին քաղաքական իրողություններով:

Պետք է նշել, որ Հայաստանի կոմպլեքսնատար արտաքին քաղաքականության արդյունքները ռազմական ոլորտում բավական արտասովոր են. այսօր մեր զինված ուժերը զուգահեռաբար մի քանի, հաճախ միմյանց բացառող օրինակների են հետևում: Եթե ավելացնենք, որ որոշումների կայացման ոլորտում մեզ մոտ հաճախ գերակշռում են ոչ ինստիտուցիոնալ գործոններն ու շարժառիթները, ապա իրավիճակն անհույս է թվում:

եվ որ ամենակարևորն է, այս ամբողջ համալիրը ստեղծվում է առանց հաշվի առնելու մեր կյանքի բոլոր ոլորտների և մտածողության վրա ներազդող հասարակական խորքային փոխակերպումները:

### Քաղաքական համակարգը և բանակը

Բանակը հասարակական, սոցիալական օրգանիզմ է, որը օժտված է հասարակական ներազդեցության ողջ սպեկտրով և որն իր վրա է կրում հնարավոր բոլոր, մասնավորապես՝ քաղաքական ներազդեցությունները: Լինելով պետության ամենաշարժուն, կազմակերպված, կարգապահ և ամենակարևորը՝ զինված ինստիտուտը, բանակը միշտ գտնվում է քաղաքական գործընթացների կենտրոնում: Յանկացած երկրի զինված ուժերի տեղը և դերը հասարակությունում կախված է ոչ միայն արտաքին պայմաններից, այլև՝ տվյալ երկրի քաղաքական ռեժիմի տեսակից (դիկտատուրա, ավտորիտարիզմ, դեմոկրատիա): Սա հատկապես վերաբերում է ներքին անվտանգության ոլորտին: Ժամանակին Զ. Բոեզինսկին և Ս. Հանթինգտոնը ապացուցեցին, որ ուժեղ և զարգացած պետականությունը կարող է բնորոշ լինել թե՛ ժողովրդավարություններին, և թե՛ դիկտատուրաներին<sup>2</sup>, ինչը հաստատում են նաև ամենաթարմ քաղաքագիտական ուսումնասիրությունները: Նույնը կարելի է ասել նաև զինված ուժերի մասին, սակայն ժողովրդավարության և դիկտատուրայի պայմաններում բանակի դերը փոքր-ինչ տարբեր է:

Մեր երկրի անկախացման առաջին տարիների քաղաքական պայմանները, մասնավորապես Ադրբեջանի հետ պատերազմը, քաղաքական գործընթացում ուժային կառույցների դերի կարևորման օբյեկտիվ պատճառ դարձան: Հայաստանում ԶՈՒ քաղաքական կյանքում ունեցած մեծ դերը պայմանավորված է ոչ միայն Ադրբեջանի կողմից ռազմական գործողությունների վերսկսման անընդհատ առկա վտանգով, կամ Թուրքիայի ոչ բարեկամական դիրքորոշմամբ, այլև՝ ներքաղաքական ասպարեզում գոյություն ունեցող մի շարք յուրահատկություններով:

<sup>2</sup> Brzezinski Z., Huntington S. "Political Power: USA/USSR", N.Y., 1963.

Քաղաքական համակարգի փոխակերպումներում զինված ուժերի դերը մեծ է եղել մասնավորապես 1990-1999թթ., երբ քաղաքական համակարգը ծայրահեղ անկայուն էր: Այսօր նորից բարենպաստ պայմաններ են ստեղծվել ներքին քաղաքականությունում բանակի դերի աճի համար: Երկրի քաղաքական համակարգի փոխակերպումը ոչ միայն չի ավարտվել, այլև թևակոխել է անորոշությունը հզի մի նոր փուլ: Այն կարող է հանգեցնել թե՛ ժողովրդավարական ինստիտուտների, և թե՛ իշխանավարման ավտորիտար մեթոդների արմատացմանը: Երկրում մինչև հիմա քաղաքական գործիչների միջև անհամաձայնություն է տիրում պետության առջև ծառայած կարևորագույն խնդիրների շուրջը. օրակարգում ոչ թե «ինչպե՞ս գործել», այլ «ի՞նչ անել» հարցն է: 2007-2008 թթ. ՀՀ-ում կայանալիք ընտրությունները կարող են իշխանության բերել այնպիսի ուժեր, որոնք յուրովի են պատկերացնում մեր երկրի հասարակական-քաղաքական զարգացման ուղին և Հայաստանի դերը միջազգային համակարգում:

Հայաստանի ժողովրդավարական զարգացման գործընթացը վերջին տարիներին զգալիորեն դանդաղել է, ինչը հասկանալու համար պարտադիր չէ կարգալ մեր երկրում տիրող իրավիճակը բավական մոռալ գույներով ներկայացնող Human Rights Watch, Freedom House կամ Amnesty International կազմակերպությունների գեկույցները: Վերջին տարիներին մի շարք հայաստանյան քաղաքական կուսակցություններ, գործիչներ և ԶԼՄ-ներ բնութագրում են մեր երկրում գործող քաղաքական ռեժիմը որպես ոստիկանական և ռեպրեսիվ: Միջազգային կառույցների Հայաստանին վերաբերող գնահատականները և հաշվետվությունները քաղաքականապես ավելի կոռեկտ են, բայց, փաստորոն, համահունչ են վերը նշված գնահատականներին: Սակայն այդպիսիները հանգեցնում են քաղաքական ոչ ճիշտ եզրակացությունների (բացահայտ ռեպրեսիվ ռեժիմները ժամանակակից աշխարհում շատ ավելի պակաս կայուն են, քան ժողովրդավարության նմանակեղծումները):

Հայաստանում ծավալվող քաղաքական գործընթացների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանց ձևավորման վրա ազդել և շարունա-

կում են ազդել թե՛ այն կոնկրետ պատմական ֆոնը, որը ձևավորել է հայ հասարակության հասարակական-քաղաքական պատկերացումները, և թե՛ հետխորհրդային տարածքում առկա իրականությունը և աշխարհաքաղաքական միտումները: Հայաստանում հասարակական ինստիտուտների զարգացման ուղու ընտրությունը մեծապես կախված է այնպիսի գործոններից, ինչպիսիք են Լեոնային Ղարաբաղի խնդրի կարգավորված լինելը, 1915-1922թթ. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը, երկրի աշխարհագրական դիրքը, փոխհարաբերությունները հիմնական քաղաքական պայմանադիր կողմերի հետ (ինչպիսիք են ՌԴ-ն, ԱՄՆ-ն, ԵՄ-ն, Թուրքիան), երկրի տնտեսական իրավիճակը և այլն:

Ազգային զինված ուժերի ձևավորման գործում որոշիչ դեր խաղաց այն փաստը, որ Հայաստանի ապախորհրդայնացումը ընթանում էր քաղաքացիական և ազգային գիտակցության բուռն վերելքի պայմաններում: 1991-ից սկսած Հայաստանում քաղաքական համակարգի ձևափոխման գործընթացը սկզբնական շրջանում ծավալվում էր, այսպես կոչված, «ժխտման» միջոցով, երբ հին (կոմունիստական) հասարակության մոդելին հակադրվում էր նորը: «Մշակութային ազգայնականության» գաղափարախոսությունը դարձավ ժողովրդավարացման ցեմենտը. այն դրոշը, որի ներքո համախմբվեց համարյա ողջ հասարակությունը (այլ ոչ թե միայն արմատական ազգայնականները): Արտաքին վտանգի առկայությունը ևս ունեցավ իր դերը:

Իրադարձությունների հետագա զարգացման համատեքստում 1988-1994 թթ. հայաստանյան հասարակությունում ծաղկում ապրեց հասարակության համախմբմանը միտված երկու հիմնական գաղափարախոսություն: Մեկը պետության անկախ զարգացումը տեսնում էր հասարակության ազատական-ժողովրդավարական մոդելով վերափոխման մեջ (ընդ որում, այս գաղափարախոսությունը հիմնականում սատարում էր տեխնիկական կրթությամբ և հումանիտար ոլորտի մասնագետների շարքերից դուրս եկած իշխանական նոր վերնախավը, որը, սակայն պետական և քաղաքական գործունեության փորձ չունեի): Մյուսը հիմնվում էր ազգային անկախ պետության սահմաններում հայ ժո-

ղովրդի համախմբման և նույնիսկ «փրկման» (հաճախ՝ տնաբույս) գաղափարախոսությունը վրա: Այդուհանդերձ, անկախությունն առաջին իսկ տարիներին պարզ դարձավ, որ հայ հասարակության կյանքի անհատական, ընտանեկան և կոլեկտիվ ձևերում իշխում են ինչ որ վերացականորեն պետական և կոնկրետ կլանային-խմբային շահերը:

Այս տարիներին բնակչության կենսամակարդակի կտրուկ անկումը, զանգվածային աշխատազրկությունը և արտագաղթը, առաջին մասնավոր ձեռնարկությունների և բանկերի առաջացումը որոշիչ եղան հասարակական-քաղաքական կյանքի և մարդկանց տրամադրությունների ձևավորման գործում: «Իրավունքները» և «ազատությունները» մարդկանց համար արժեզրկեցին ոչ որպես այդպիսիներ, այլ՝ կյանքի հնարավորություններն օգտագործելու համար պայմաններ: ԽՍՀՄ փլուզմանը հաջորդած տարիների ընթացքում վերնախավերի հիմնական նպատակը անկախ պետականության հիմք հանդիսացող պետական ինստիտուտների ստեղծումն էր, որոնցից մեկն էլ դարձավ բանակը:

Շուտով, սակայն, հաստունացավ այն պահը, երբ ավելի ու ավելի էր զգացվում քաղաքացիական հասարակության և հասարակական ուժեղ ինստիտուտների ստեղծման անհրաժեշտությունը: Եվ մինչ պետության ֆորմալ ատրիբուտների, այդ թվում անկախ Հայաստանի 1995 թ. Սահմանադրության ընդունումը հասարակական առանձնակի տարածայնությունների տեղիք չտվեցին, հասարակական զարգացման ուղիների ընտրությունն ավելի ու ավելի էր սուր քննարկման առարկա դառնում:

Ժամանակը ապացուցում է, որ Հայաստանում իշխանավարման որդեգրված համակարգը կարևոր գործոն դարձավ ոչ միայն հասարակական ինստիտուտների որոշակի ուղղությամբ զարգացման, այլև՝ նոր հասարակական-մշակութային հարաբերությունների և սովորությունների ամրապնդման համար: Անկասկած, քաղաքական համակարգի ինստիտուցիոնալ ընտրությունը (սա նախ և առաջ վերաբերում է իշխանավարման նախագահական կամ խորհրդարանական ձևի ընտրությանը) և պետական ինստիտուտների ձևավորման գործընթացը ուղղակի կերպով փոխկապակցված են: 20-րդ դարի 90-ական թթ. սկզբին այս հարցի

լուրջ քննարկմանը սկիզբ դրեց հայտնի սոցիոլոգ Հ. Լինցը<sup>3</sup>, որը նպատակ ուներ գիտականորեն ապացուցելու, այս, կարծես թե անհերքելի ճշմարտությունը: Նախագահական և խորհրդարանական համակարգ ունեցող երկրների հետանցումային զարգացման փորձի Հ. Լինցի կողմից կատարած համեմատությունը (վերլուծության են ենթարկվում նաև վիճակագրական տվյալները) ցույց տվեց, որ նախագահական համակարգը ավելի հաճախ է հանգեցնում քաղաքական անկայունության, իշխանության օրենսդիր և գործադիր մարմինների միջև դիմակայության, օրինականության սկզբունքների անտեսման, կառավարման ոլորտի մեջ թույլ տրվող սխալների ազդեցության մեծացմանը՝ երկրում ճգնաժամի խորացման վրա, և այլ բարդություններ<sup>4</sup>: Ժողովրդավարությունների հետագա համեմատական քննությունը (Ա. Վալենսուելա, Ա. Լեյփհարթ, Ա. Ստեպան, Ս. Սկաչ և այլն) ապացուցեց, որ ընտրական համակարգի տեսակը խորապես կապված է և՛ իշխանավարման ձևի, և՛ գործադիր մարմնի տիպի հետ: Օրինակ՝ լատինաամերիկյան այն երկրները, ուր հետպատերազմյան տարիներին<sup>5</sup> տիրում էր կիսանախագահական համակարգ, ղեկավարման անարդյունավետության պատճառով հայտնվեցին քաղաքական փակուղու մեջ: Բացի այդ, երևան բերելով, այսպես կոչված, «մեծամասնության էֆեկտը», այս համակարգը հանգեցնում է գործադրի գերիշխանությանը օրենսդրի վրա՝ արդյունքում հանգեցնելով իշխանության երեք ճյուղերի փաստացի սերտաճման: Նաև չի ապահովվում քաղաքական փոքրամասնությունների շահերի պաշտպանություն. իշխանամետ քաղաքական կուսակցությունները դառնում են ողջ ազգի շահերը ներկայացնելու հավակնություններ ունեցող «կորպորացիաներ»: Նման պայմաններում հասարակության կող-

<sup>3</sup> Linz H., Stepan A. *Problems of Democratic Transition and Consolidation*. 1996. Baltimore.

<sup>4</sup> Խոսքը կառավարման միանշանակ ավտորիտար ռեժիմներ ունեցող երկրների մասին չէ, այլ նրանց, որոնք կատարում են անցում դեպի ժողովրդավարություն (ՇԽ):

<sup>5</sup> Նկատի ունենք Երկրորդ համաշխարհայինը:

մից ինստիտուցիոնալ մոդելի ընտրությունը կախված է ինստիտուցիոնալ բարեփոխումների ընթացքում քաղաքական ուժերի հարաբերակցությունից<sup>6</sup>: Թերևս, Հայաստանի անկախ պետականության կայացման պատմությունը դրա վառ ապացույցն է:

Այդպիսով, ժողովրդավարության «ուղղահայաց», պետականացված ինստիտուտների գործունեությունը դառնում է իշխանության ճյուղերի իրական բաժանման ձևավորման յուրատեսակ խոչընդոտ, ուղղակի կերպով ազդելով սոցիալական և քաղաքական «ճիշտ» ինստիտուտների կայացմանը. այնտեղ, ուր չկա քաղաքական առողջ, նորմալ մրցակցություն, պետական և հասարակական ինստիտուտների կայացման գործում, օրինաչափ դժվարություններից բացի, առաջ են գալիս սուբյեկտիվ խոչընդոտներ: Նման պայմաններում, իշխանության և կապիտալի ձևավորման և գործունեության գործընթացների էությունը շանդրադարձող ու ժողովրդավարացման ակներև տարրեր չպարունակող բարեփոխումներն ի վիճակի չեն իրական արդյունքների բերել:

Քաղաքական գործընթացների այսպիսի բանաձևը հղի է համալարգային բազմամյա ճգնաժամով: Իշխանության կոռումպացվածությունը մեծանում է. ի հայտ է գալիս և ամրանում «կորպորատիվ իշխանավարման» յուրահատուկ «հայկական» ձև<sup>7</sup>: Նման պայմաններում իշխանությունները «դառնում են հասարակությունից զատ գոյություն ունեցող, այդ հասարակությունը կառավարող և այն ներկայացնող ազնվական դաս»<sup>8</sup>: Համապատասխանաբար, մտավորականների ազդեցությունը և նրանց ներգրավվածությունը քաղաքականությունում հակված է զրոյականացման, իսկ «փողոցն» էլ կամ լրիվ օտարվում է քաղա-

<sup>6</sup> А. Шеворский, *Демократия и рынок: политические и экономические реформы в Восточной Европе и Латинской Америке*, Москва, 1999.

<sup>7</sup> Նշենք, որ «կորպորատիվ ժողովրդավարության» դասական ձևերը բնորոշ են նաև, այսպես կոչված, զարգացած ժողովրդավարություններին, մասնավորապես ԱՄՆ-ին (Շե):

<sup>8</sup> Рассел Хардин, «Переход к корпоративной демократии?» *Прогнозис*, май 2006

քականությունից, կամ էլ մարգինալացվում: Արդյունքում, ֆաղաֆական ինստիտուտների հանդեպ անվտանգությունը դառնում է սովորական երևույթ, բերելով ոչ միայն ընտրական գործընթացի տարբեր փուլերում ընտրողների կրավորականության, այլև՝ քաղաքացիական ակտիվության ընդհանուր անկման, ինչն էլ անկանխատեսելի զարգացումների աղբյուր է դառնում: Մրանք ուժային կառույցների ֆաղաֆականության վրա ազդեցության և փոխներթափանցման տեսանկյունից հատկապես վտանգավոր են այն կարգի երկրների համար, ինչպիսին ֆաղաֆական զարգացման ներկա փուլում կարող է դասվել Հայաստանը:

Նշենք, որ ֆորմալ տեսակետից ինքնիշխան պետությունները (այսօր ՄԱԿ-ի անդամ երկրները թվով 192-ն են), այնուամենայնիվ, բավական տարբեր են միմյանցից. տարբեր է անգամ նրանց իրական ինքնիշխանության աստիճանը: Որոշ պետություններ (որոնց թիվն այնքան էլ շատ չէ) ամբողջությամբ անկախ և ինքնուրույն են իրենց ներքին ու արտաքին քաղաքականությունում, մնացածներն իրենց ինքնիշխան լիազորությունների կատարման հարցում ավելի շուտ կախված են այլ պետություններից և միջազգային հանրությունից, քան սեփական քաղաքական, տնտեսական կամ այլ ռեսուրսներից և ի վիճակի չեն քիչ թե շատ ինքնուրույն կերպով արձագանքել ներքին և արտաքին մարտահրավերներին: Ըստ էության, պետությունների հաջողակության, կառավարելիության, կարողության և արդյունավետության աստիճանը տարբեր է. պայմանականորեն, մի կողմում «հաջողակ ինքնիշխան պետություններն» են, իսկ մյուսում՝ «չկայացած, ոչ ինքնիշխան պետությունները» (failed states՝ ձախողված պետությունները)<sup>9</sup>:

ԱՄՆ Պաշտպանության ազգային ինստիտուտին կից Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի փորձագետներն առանձնացնում են համաշխարհային քաղաքական ասպարեզում գոր-

<sup>9</sup> Мельвиль А. Ю., Ильин М. В., Мелешкина Е. Ю., Миронюк М. Г., Полуниин Ю.А., Тимофеев И.Н., “Опыт классификации стран”, *Полис*, номер 5, М., 2006 г.

ծող պետությունների չորս տեսակ<sup>10</sup> շուկայական ժողովրդավարական համակարգերով զարգացած պետություններ, անցումային երկրներ (ինչպիսիք են, օրինակ՝ Ռուսաստանը, Չինաստանը և Հնդկաստանը, որոնք վառ արտահայտված ազգային քաղաքականություն են վարում և ձգտում են միջազգային հարցերում առաջատար դեր խաղալ), այսպես կոչված «հերձվածող պետություններ» (այսօրվա դրությամբ, այդ փորձագետների կարծիքով՝ Իրան և Հյուսիսային Կորեա)<sup>11</sup> և անկայունության հիմնական օջախ համարվող «մտահոգիչ» կամ «չկայացած» պետություններ (ինչպիսիք, օրինակ՝ Ռուանդան, Սոմալի և Բոսնիան են): Ինստիտուտի փորձագետների կարծիքով, հենց այդ վերջին կարգին պատկանող պետություններում են ի հայտ գալիս միջազգային այնպիսի սպառնալիքներ, ինչպիսիք են արհաբեկչությունը, կազմակերպված հանցավորությունը, թմրանյութերի զանգվածային տարածումը և փախստականների հոսքի մեծացումը<sup>12</sup>:

<sup>10</sup> *Strategic Assessment 1999. Priorities for a Turbulent World*. Institute for National Strategic Studies. National Defense University. Washington D.C., 1999. P. XIV, 5-8.

<sup>11</sup> 90-ական թվականների վերջում ԱՄՆ «հերձվածող» պետությունների շարքին դասում էր Հյուսիսային Կորեան, Պակիստանը, Իրաքը, Իրանը, Աֆղանստանը և Լիբիան: 2001 թվականի սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ում տեղի ունեցած արհաբեկչական գործողություններից հետո ԱՄՆ-Պակիստան հակաարհաբեկչական դաշինքի ստեղծման արդյունքում վերջինս այս ցանկից դուրս հանվեց: 2001-ին՝ Աֆղանստան, իսկ 2003-ին՝ Իրաք ԱՄՆ ներխուժումից հետո այս երկու երկրները ևս դուրս եկան «հերձվածող» պետությունների ցանկից: Լիբիան ցանկից դուրս եկավ դիվանագիտական ճանապարհով գրանցված հաջողությունների արդյունքում:

<sup>12</sup> «Չկայացած» պետություն հասկացության հետ սերտորեն կապված են այնպիսի երևույթներ, ինչպիսիք են ավելցուկային միգրացիան, թերսնուցման խնդրի առկայությունը (կամ սննդի օրաբաժնի պակասը) բնակչության ավելի քան 10 %-ի մոտ, ընթացիկ վճարային հաշվեկշռի մշտական բացասական սաղոդոն, էներգակիրների ներմուծումից երկրի կախվածությունը, ռազմական ագրեսիայի սպառնալիքի առկայությունը, իշխանափոխման ոչ սահմանադրական փորձերի կամ պետական հեղաշրջումների առկայությունը և այլ գործոններ (ՇԽ):

Ավելացնենք, որ հենց «չկայացած» պետություններն են, որ իրենց աշխարհաքաղաքական հարևանների համար նախապայմաններ են ստեղծում սեփական ներքին քաղաքականությունում ակտիվորեն ներգրավվելու, իրենց դեմ տարաբնույթ պատժամիջոցներ կիրառելու, ինչպես նաև քաղաքական զարգացումների ակտիվ շրջանակներից և տնտեսական նախագծերից դուրս մղվելու համար:

Արևմտյան քաղաքագիտությունում, Հայաստանը, չնայած գոյություն ունեցող քաղաքական ռեժիմի կիսաավտորիտար (կամ «մասամբ ժողովրդավարական») համակարգերին վերագրմանը, դեռևս չի դասվում *failed states*-ի (ձախողված պետությունների) շարքին: Սակայն միջազգային և եվրոպական կառույցներում Հայաստանի վերաբերյալ կարծիքի ձևավորման հիմք են ծառայում միջազգային վարկանիշային տարաբնույթ կազմակերպությունների գնահատականները<sup>13</sup>: Վերջիններս ելնում են նրանից, որ կիսաավտորիտար ռեժիմները չի կարելի դիտարկել որպես ոչ-կատարյալ, բայց կատարելագործմանը ձգտող ժողովրդավարություններ: Ընդհակառակը, ըստ այդ գնահատականների, դրանք լճացած ռեժիմներ են, որոնք ժողովրդավարության դիմակի ներքո ինքնավերարտադրվում են (իմիտացիոն ժողովրդավարությունը նման ռեժիմներին օգնում է խուսափել քաղաքական ազատ մրցակցության հետ կապված ռիսկերից)<sup>14</sup>: Անգամ ռուսաստանյան այնպիսի լուրջ երկրագիտական ուսումնասիրության մեջ, ինչպիսին ՌԻ ԱՔՆ կից Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի (համալսարանի) «Արդի քաղաքական ատլաս» նոր նախագիծն է, Հայաստանը դասվում է «ժողովրդավարական վեկտորով», բայցևայնպես, այսպես կոչված, «ոչ ինքնուրույն պետությունների կլաստերին»<sup>15</sup>, ընդ-

<sup>13</sup> Այս գործում նրանց «բնական դաշնակիցներն» են Հայաստանի հանդեպ ոչ բարեկամական պետությունները և ռեժիմները (Շև):

<sup>14</sup> Քաղաքագետ Մարինե Օթուեյի գնահատականն է:

<sup>15</sup> А.Ю. Мельвиль, М.В. Ильин, Е.Ю. Мелешкина, М.Г. Миронюк, Ю.А. Полуинин, И.Н. Тимофеев, «Опыт классификации стран», журнал «Полис», номер 5, М., 2006 г.

գրկելով այն «Թույլ պետականությունը և փաստացի առանց ազդեցություն ոչ ինքնուրույն ժողովրդավարական «կլոնների» խմբում»:<sup>16</sup>

Համաշխարհային քաղաքական դիսկուրսում անբավարար գնահատականների գերակայությունը խիստ անցանկալի է Հայաստանի համար, եթե հաշվի առնենք, որ մեկուսացումից դուրս գալը, համաշխարհային գործընթացներին ինտեգրումը և միջպետական կապերի ամրապնդումը երկրի արտաքին քաղաքականության գերխնդիր են հուշակված (հատկապես, որ մի շարք պատճառներով «քաղաքակիրթ» երկրների կարծիքը ժողովրդավարության ոչ ավելի բարձր մակարդակի վրա գտնվող, սակայն բնական ավելի հարուստ ռեսուրսներ ունեցող երկրների մասին հաճախ ավելի բարձր է, քան Հայաստանի մասին)<sup>17</sup>:

Սա ևս մեկ անգամ ապացուցում է՝ կոչվել «չկայացած պետություն» Հայաստանի համար նշանակում է մտնել փակուղի (ինչը ԶԼՄ-ների շնորհիվ կենցաղային մակարդակում «քաղաքական զարգացումներ» են կոչվում), հետևաբար քաղաքական ու սոցիալական լճացումից դուրս գալը Հայաստանի համար կենսական անհրաժեշտություն է<sup>18</sup>: Ժամանակն է վերջ տալ ազգային գաղափարի շարշրկված որոնումներին: Մե՛նք ունենք ազգային գաղափար՝ իրապես հայրենասիրական, հիմնված յուրաքանչյուր քաղաքացու ազատության, ապահովության և պաշտպանվածության սկզբունքների վրա, ուղղված ինքնաբավ, տնտեսապես և

<sup>16</sup> А.Ю. Мельвиль, “Политический атлас современности: замысел и общие теоретико-методологические контуры проекта”, журнал “Полис”, номер 5, М., 2006 г.

<sup>17</sup> ԱՄՆ նախագահ Զորջ Բուշի նամակում, որ 06. 06. 2006 Բաքվում «Կասպից ծովի նավթը և գազը» 13-րդ ցուցահանդեսի բացմանն ընթերցեց ԱՄՆ պետքարտուղարի եվրոպայի և Ասիայի հարցերով տեղակալ Մեթ Բրայզան ասվում է, որ «Ազդեցունքը տարածաշրջանում առաջատար ուժ է և անվտանգության երաշխիք» (ՇԽ):

<sup>18</sup> Նման կարծիքի են նաև հայաստանցի որոշ այլ հեղինակներ (տե՛ս *Армен Айвазян*, “О современном кризисе армянства и фиктивности армянского государства”, *Голос Армении*, 19 сентября 2002 г. կամ Արմեն Այվազյան «Հիմնատարրեր՝ Հայաստանի ազգային անվտանգության հայեցակարգի», մասն առաջին, «Լուսակն», Երևան, 2004, էջ 9, 39-45):

սոցիալապես բարձր զարգացվածություն, ինքն իրեն պաշտպանելու և մտածված արտաքին քաղաքականության շնորհիվ արտաքին սպառնալիքները նվազեցնելու ունակ, միջազգային բավականաչափ բարձր վարկանիշով պետություն կառուցմանը:

### Բանակը որպես հասարակության մաս

Բանակը հասարակության հետ կապված լինելով բազում կապերով, դրա միայն մի մասն է կազմում: Արդյունքում, հասարակությունում ի հայտ եկող կոնֆլիկտային դիմակայությունների հանգեցրած այս կամ այն որոշումների քաղաքական բոլոր հետևանքներն անդրադառնում են բանակի վրա: Հանրության մեջ կարծիք է ձևավորվել, որ շատ դեպքերում բանակն ապահովում է իշխանությունների քաղաքական նպատակների իրագործումը և հանդես է գալիս ձևավորված ռեժիմի կայունության երաշխիք: Իրոք, ոչ ժողովրդավարական պետություններում, բանակը, որպես կանոն, իշխող ռեժիմի կարևորագույն նեցուկն է: Չնայած օրենսդրորեն բանակին ոստիկանական գործառույթ չի վերագրվում, այնուամենայնիվ, որոշումների կայացման համակարգի թափանցիկության բացակայության դեպքում, փաստացի ոչինչ և ոչ ոք չի խոչընդոտում բանակն այդ նպատակով օգտագործելուն: Մինչդեռ կասկածից դուրս է, որ միայն բացառիկ դեպքերում և սահմանափակ ծավալով են զինված ուժերը կարող ներհասարակական կարգուկանոնի պահպանման միջոց լինել, ընդ որում, բոլոր այս դեպքերը պետք է ոչ միայն նախատեսված լինեն երկրի սահմանադրությամբ, այլև պետք է նմանատիպ որոշումների կայացման համար անթերի (թե՛ թափանցիկության և թե՛ լեգիտիվության առումով) մեխանիզմներ ունենան:

Այնպիսի երկրներում, ինչպիսին մերն է, զինված ուժերի գործունեության մեկ այլ՝ ոչ պակաս կարևոր գործոն է բանակի քաղաքական չեզոքությունը: Եթե երկրում, թեկուզ ձևականորեն, գոյություն ունի բազմակուսակցական համակարգ, բանակի ղեկավարությունը և կառավարումը գտնվում է մեկ, սովորաբար իշխող կուսակցության ձեռքում: Այդ գրություն արդյունքը լինում է այն, որ անգամ երկրում պաշտոնական

գաղափարախոսությունների բացակայության դեպքում այդպիսի պետությունները զինված ուժերում գաղափարախոսությունը առկա է և ունի կուսակցական բնույթ (թեպետև այն կարող է իրականում տարբերվել այդ կուսակցության հռչակած ծրագրային հիմնարար դրույթներից): Այդ գաղափարախոսությունն բուն էությունը սովորաբար խիստ հակասում է երկրի արտաքին քաղաքական հայտարարությունների և նկրտումների տրամաբանությունը: Արտաքին քաղաքականության հետ առնչվող տևական խնդիրների առկայության պայմաններում իշխանություններն առավել հաճախ են դիմում ժողովրդին՝ կոչ անելով «համախմբվել» այդ գաղափարախոսությունն նպատակների և խնդիրների շուրջը: Սակայն այդ գաղափարախոսության պաշտոնապես ձևավորված շինելը դրա հետ կապված նպատակներն ու խնդիրները ավելի աղոտ է դարձնում, իսկ իշխանությունների կոչերն ավելի անկանխատեսելի:

Ինչ վերաբերում է ժողովրդավարության ցանկալի մակարդակի և երկրի ինքիշխանության ապահովման պահանջվող մակարդակի հարաբերակցությանը, ապա առաջին հայացքից, իսկապես, գոյություն ունեն որոշ հակասություններ: Համաշխարհային փորձի վերլուծությունը փաստում է, որ ժողովրդավարության կոնսոլիդացիայի օբյեկտիվ պայմաններից մեկը կարող է համարվել ոչ թե ուժեղ, այլ՝ համեմատաբար թույլ ռազմա-արդյունաբերական համալիրը. փոքրաթիվ քանակը, ազգային բանակի «դեկորատիվ» բնույթը բացառում են ներքին քաղաքականությունում բանակի կիրառման հնարավորությունները, այսպիսով գործնականում բացառելով նաև զինված ուժերի միջոցով ավտորիտար ռեժիմի հաստատման հնարավորությունները (նման իրավիճակ է էստոնիայում և Լիտվայում): Այնուամենայնիվ, ոչ բոլոր երկրներն են կարող իրենց նման մոտեցում թույլ տալ. հաշվի առնելով արտաքին սպառնալիքների առկայությունը, Հայաստանը չի կարող թուլացնել իր բանակի մարտունակությունը, սակայն ապագայում կարող են ստեղծվել պայմաններ, երբ բանակը կլինի եթե ոչ զուտ «նոմինալ» քաղաքական միավոր, բայց իր թափանցիկությունը, իր տեղը և դերը պետական ինստի-

տոււնների շարքում չի պահանջի հասարակութունից և ոչ մի հավելյալ «ներողամտութուն»<sup>19</sup>:

Հայտնի հանգամանքների բերումով, Հայաստանում սեփական բանակի ձևավորումը սկիզբ առավ այն ժամանակ, երբ երկիրը դեռ ԽՍՀՄ կազմում էր (ինչն այն ժամանակ խորհրդային օրենսդրությամբ հակասահմանադրական գործողություն էր համարվում): Հավանական է, որ հայկական բանակի ծննդի «հակասահմանադրականությունը» մինչև հիմա էլ դեռ ներազդում է հասարակութունում բանակի ընկալման վրա: Իսկ մեր ԶԼՄ-ներում, հայկական բանակում տիրող իրականության լայնածավալ քննադատությանը զուգընթաց, գոյություն ունի նաև մեկ այլ միտում՝ երբ ազգային բանակի «հատուկ» դերը ճանաչելով, գրեթե աստվածացվում են ոչ միայն հեռավոր անցյալի գորավարները, այլև նրանք, ում (հաճախ ոչ միանշանակ) գործունեությունն ու հայտարարությունները դեռ վառ են հասարակության մեջ, որը ներկայումս բավականին սթափ հայացքով է նայում այս ամենին և միտված չէ և ոչ մեկին աստվածացնելու:

<sup>19</sup> Ինչպե՞ս լուծել այս հակասությունը: Եթե խոսենք արդի քաղաքականության մեջ ընդունված և ռազմավարական տեսակետից առավել արդյունավետ ուղիների մասին, ապա գլխավոր և ամենակատուալ ուղղությունը պետք է դառնա արտաքին ռիսկերի նվազեցմանն ուղղված արտաքին քաղաքականությունը, բոլոր հնարավոր դիվանագիտական ու զուտ քաղաքական լծակների օգտագործմամբ: Հայաստանի շուրջ ստեղծված «անելանելի» իրավիճակը պետք է հետզհետե հաղթահարվի, և որքան շուտ, այնքան լավ Հայաստանի քաղաքական, տնտեսական ու սոցիալական զարգացման համար: Նշենք, որ այդ գործընթացի սկիզբը պետք չէ հետաձգել այն պատճառաբանությամբ, թե մեր տարածաշրջանային հարևանների քաղաքական նպատակները բոլորովին այլ են և իբր Հայաստանից այդքան էլ շատ բան կախված չէ: Համոզված ենք, որ ամեն պետություն ունի արտաքին քաղաքականության յուրահատուկ ռեսուրսներ, որոնք պարտավոր է օգտագործել առավել արդյունավետ կերպով:

### Ի՞նչ անել (արժե՞ արդյոք հեծանիվ հայտնագործել)

Համաձայնենք, որ միայն «իրապես քաղաքացիական հասարակությունն է տիրապետում ժողովրդավարական կառավարության և ռազմական աստիճանակարգի միջև տարբերությունների (եթե ոչ՝ կոնֆլիկտների) հարթման ռեալ միջոցների, որոնց նպատակն է ռազմական արդյունավետ, բայց, միևնույն ժամանակ, ժողովրդավարության հիմնական ինստիտուտների համար սպառնալիք չհանդիսացող կազմակերպվածքի կառուցումը»<sup>20</sup>:

Ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության խնդիրն անգամ նորանկախ տարբեր պետություններում տարբեր կերպ է ընկալվում և մեկնաբանվում. համապատասխանաբար, տարբեր է նաև այդ երկրներում ռազմա-քաղաքացիական հարաբերությունների մեջ բարեփոխումների խնդրի առաջնայնությունը: Մասնավորապես Բալթյան երկրներում ռազմա-քաղաքացիական հարաբերությունների ժողովրդավարացումը միանշանակ դիտարկվում է որպես նրանց «արևմտականացում», «խորհրդային» մոդելից մաքսիմալ հեռացում և ՆԱՏՕ-ի երկրներում ռազմա-քաղաքացիական հարաբերությունների կազմակերպվածքի մոդելին նմանեցում: Բալթյան երկրներում, ի տարբերություն, օրինակ՝ Ուկրաինայի կամ Ռուսաստանի, չեն կառուցում յուրահատուկ «բալթիկ» մոդել: Փոխարենը՝ Արևմտյան Եվրոպայի, ԱՄՆ, Սկանդինավյան երկրների փորձը ուսումնասիրելով, այդ երկրները արևմտյան զարգացած երկրների որոշակի «միջինացված» մոդելն ադապտացնում են սեփական պայմաններին: Կենտրոնական Ասիայի և Հարավային Կովկասի նորանկախ մի շարք պետություններ ռազմա-քաղաքացիական հարաբերությունների վերակառուցումն իրականացնում են սկզբունքորեն այլ սոցիալ-քաղաքական պայմաններում և քաղաքական այլ մշակույթի համատեքստում: Այդ պայմանները չեն ենթադրում Եվրոպայի զարգացած ժողովրդավարությունների քաղաքական մշա-

<sup>20</sup> Манфред Диль, полковник Генштаба в отставке ВВС ФРГ, “Россия и НАТО сверяют военные реформы”, *Независимое военное обозрение*, 04.07.2003 г.

կույթից վերցված սկզբունքների մեխանիկական փոխադրում կամ ռազմական ոլորտի վրա ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության ներմուծում: Հետխորհրդային տարածքի մի շարք երկրներ (հատկապես Թուրքմենստանը, որոշ չափով՝ Ուզբեկստանը և Բելառուսը) ռազմա-քաղաքացիական հարաբերությունների ոլորտում վերարտադրում են խորհրդային համակարգի տարրերը կամ մնացուկները: Խոսքը ռազմական ոլորտին, ղեկավարման ավտորիտար մեթոդներին վերաբերող ողջ տեղեկատվության գաղափարախոսական խիստ վերահսկողության, ուժային նախարարությունները հասարակական կամ որևէ այլ տեսակի (բացի նախագահականից) քննադատությունից զերծ պահելու, խորհրդարանների արհեստական թուլացման և նրանց իրավասությունների փաստացի սահմանափակման մասին է<sup>21</sup>:

Մինչդեռ ժողովրդավարական զարգացած երկրներում վաղուց արդեն մշակվել և գործնականում կիրառվում են հասարակության մեջ զինվորականների տեղի և դերի սահմանազատման հիմնական սկզբունքները, չնայած դրանց կիրառումը երկրներից յուրաքանչյուրում ունի որոշակի առանձնահատկություններ.

- ԶՈՒ գործադիր իշխանության ընդամենը մի մասն են կազմում,
- ԶՈՒ նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են խորհրդարանը, ֆաղափական ղեկավարությունը, դատական համակարգը և ֆաղափացիական ողջ հասարակությունը,
- ԶՈՒ ենթարկվում են ժողովրդավարական ճանապարհով ձևավորված լեզիտիմ ֆաղափական ղեկավարությանը, պաշտպանու-

<sup>21</sup> *Перестройка военно-гражданских отношений в новых независимых государствах* / Центр политических и международных исследований, Женевский центр по демократическому контролю над вооруженными силами. Под ред. А. Никитина. - М.: ЦПМИ, DCAF. - 2003 г. (գիրքը Քաղաքական և միջազգային հետազոտությունների կենտրոնի /Ռուսաստան/ և Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության ժնկյան կենտրոնի /Շվեյցարիա/ հետազոտական միջազգային նախագծի արդյունքն է):

թյան ֆաղաֆացիական նախարարին և այդ ղեկավարության ֆաղաֆական հրահանգներին,

- ԶՈՒ աներկբայորեն նսնաշում են օրենքի գերակայությունը, գործում են սահմանադրությամբ իրենց վերագրված խնդիրների շրջանակներում (երկրի պաշտպանություն և դրա արտաֆին, բացառիկ դեպքերում՝ նաև ներֆին անվտանգության ապահովում),
- ԶՈՒ ֆաղաֆականապես չեզոք են,
- ԶՈՒ ֆինանսավորվում են բացառապես պետական բյուջեով:

*Վերը նշված հիմնարար սկզբունքների ձևավորումը թերևս հնարավոր է գառնում, երբ.*

- սահմանադրորեն սահմանվում են սոցիալական արժեքները (արժանապատվություն և մարդու իրավունքներ), երաշխավորվում է օրենքի գերակայությունը, իշխանության թևերի սահմանադրական բաժանումը (օրենսդիր, գործադիր և դատական նյութերի), ԶՈՒ դերի և խնդիրների սահմանագատումը,
- գործող խորհրդարանն ապահովում է ազատ ընտրություններ, բազմակուսակցականություն, ստեղծում և կազմակերպում է ԶՈՒ խնդիրներով զբաղվող անհրաժեշտ ենթակառուցյուններ (բյուջետային կոմիտե, պաշտպանության հարցերի կոմիտե, «խորհրդարանական օմբուդսմենի»,
- ֆաղաֆացիական ղեկավարումը հիմնվում է նախագահ-վարչապետ-պաշտպանության նախարար ֆաղաֆական հստակ աստիճանակարգման վրա (ընդ որում, Գլխավոր շտաբի ղեկավարը ենթարկվում է պաշտպանության նախարարին),
- առկա է առանց իր իրավասությունից որևէ այլ մասնագիտացված դատարանի դատական անկախ համակարգ (ընդ որում, ռազմական տրիբունալների գործունեության ոլորտը պետք է հասցվի նվազագույնի, և պետք է ունենա հստակ ձևակերպված լիազորություններ),

- ռազմական կազմակերպումն ունի հստակ կառուցվածք (առանց գործունեության որևէ աղոտ ոլորտի, վերահսկողության և պատասխանատվության),
- զինվորականներին տրվում է մասնագիտական պատշաճ կրթություն:

Նման պայմաններում միայն հնարավոր է գործնականում իրականացնել ՁՈՒ աշնպիրսի վերահսկում, որ կխոչընդոտի քաղաքացիական հասարակության խնդիրներին բանակի միջամտությունը, միևնույն ժամանակ, ապահովելով դրանց ռազմական բարձր արդյունավետությունը: Սա նշանակում է, որ ՁՈՒ վերաբերող խնդիրները չի կարելի լուծել քաղաքական օրակարգում դրված խնդիրներից և հասարակությունում գոյություն ունեցող քաղաքացիական պատկերացումներից և սոցիալ-մշակութային իրողություններից զատ: Բանակն, ըստ էության, ոչ այլ ինչ է, եթե ոչ բռնության միջոց. հետևաբար, հասարակությունը պետք է որոնի պետական քաղաքականության այդ գործիքից բխող վտանգը հնարավորինս նվազեցնելու և ռազմա-քաղաքացիական հարաբերությունների ներդաշնակեցման ուղիներ: Զինված ուժերի օգտագործումը պետության սեփական ժողովրդի հետ «հարաբերություններ պարզելու» համար բացարձակ անթույլատրելի է. զինված ուժերի նշանակությունն ի սկզբանե այլ է:

### Հայկական բանակը՝ գործունակ մեխանիզմ

Մեզանում հաճախ և հաճույքով նշվում է, որ փորձագետները դեռևս ՍՍՀՄ կազմում գտնվելու տարիներին չհայտարարված պատերազմի ընթացքում բանակաշինությունը սկսած Հայաստանի զինված ուժերը տարածաշրջանում առավել մարտունակն են համարում: Հայաստանում ռազմական շինարարության արդյունավետությունը կանխորոշված էր ոչ միայն իրավիճակով, այլև այն հանգամանքով, որ Խորհրդային բանակում կադրային զինվորականների շարքերում հայերը (սլավոններից և թաթարներից հետո) միշտ զգալի մաս են կազմել, ինչի շնորհիվ ազգային բանակը կառուցելիս Հայաստանը կադրային առավել քիչ խնդիր-

ների է հանդիպել, քան, ասենք, Ադրբեջանը, Տաջիկստանը կամ Թուրքմենստանը, որոնց ներկայացուցիչների թիվը *ԽՍՀՄ* զինված ուժերի ավագ սպայական կազմում ավելի քան համեստ էր<sup>22</sup>: Փաստ է, որ «Հայաստանի զինված ուժերը մեր ժողովրդի անվտանգության և մեր երկրի զարգացման երաշխիքն են: Բացի այդ, Հայաստանի *ԶՈՒ* շնորհիվ պահպանվում է ուժերի տարածաշրջանային հավասարակշռությունը: Հայկական բանակը մեր պետության ամենահզոր կառույցներից մեկն է, որ առանցքային դեր է խաղացել անկախ պետականության կայացման գործում»<sup>23</sup>: Փաստ է նաև այն, որ պետության անվտանգությունն ապահովվում է ոչ միայն երկրի զինված ուժերի և ուժային այլ կառույցների և ենթաբաժինների միջոցով, այլև՝ պետական և հասարակական բոլոր ինստիտուտների գործունեությամբ, և որ դրանց թուլությունը լուրջ սպառնալիք է հանդիսանում երկրի ազգային անվտանգության և կայունության պահպանման համար: Ռազմական ոլորտում բացասական միտումների սրմանը նպաստում է ռազմական կազմակերպման և ՀՀ պաշտպանական համալիրի բարեփոխումների ձգձգված գործընթացը, ազգային պաշտպանության ոչ բավարար ֆինանսավորումը և նորմատիվային-իրավական բազայի անկատարությունը: Արդյունքում, այս զուտ ներքին խնդիրները փաստորոն հանգեցնում են Հայաստանի ռազմական անվտանգության թուլացմանը:

Հասկանալի է, որ մեր բանակի բարեփոխման վեկտորը ուղղակիորեն կապված է մեր (և մեր տարածաշրջանում հիմնական դերակատարների) արտաքին քաղաքականության հիմնական գերակայություններից: Սակայն *ԶՈՒ* կառուցումը և զարգացումը սովորաբար կոնկրետ խն-

<sup>22</sup> [GazetaSNG.ru](http://GazetaSNG.ru) [14.03.2002] Военное строительство в странах СНГ на грани провала, Владимир Георгиев, "Евразия Сегодня" №5.

<sup>23</sup> Թորբերտ Փոչարյան, «Հայաստանի զինված ուժերը տարածաշրջանում ուժերի հավասարակշռության պահպանման երաշխիքն են» (նախագահի շնորհավորական ուղերձը Հայոց բանակի կայացման 14-րդ տարեդարձի կապակցությամբ), 28 հունվար, 2006 թ.:

դիրներին լուծման և, այսպես կոչված, «առաջանցիկ զարգացման» հարթությունում շարունակվում են անգամ այն ժամանակ, երբ ուղղակի փորձագետները ԶՈՒ բարեփոխումներն ավարտված են համարում:

Խնդիրներից մեկն էլ այն է, որ ի վիճակի լինենք համաշխարհային գործընթացներում բազմակողմ և ընդլայնվող ինտեգրացիայի շնորհիվ, նվազագույն ծախսերով, հասնել առավելագույն արդյունքների և կարողանալ հաղթահարել աշխարհի առջև ի հայտ եկած նոր մարտահրավերները: Սակայն կա ևս մեկ խնդիր՝ նվազեցնել բանակի որպես ներքաղաքական ակտիվ (և հաճախ անկանխատեսելի) գործոնի նշանակությունը: Անրաժեշտ է գիտակցել այն հիմնական հարցերը, որոնք պետք է լինեն քաղաքական (խորհրդարանական) վերահսկողության տակ: Դրանցից կարող են համարվել.

- պաշտպանական ծրագրումը և ֆինանսավորումը, ծրագրերի իրագործումը և բյուջեի կատարումը,
- ուղղակի-ֆաղափացիական հարաբերությունները (զինվորականների և ԶՈՒ ինտեգրումը հասարակության մեջ),
- իրավական շրջանակները, զինվորականների սոցիալական ապահովությունը և անվտանգությունը,
- ղեկավարման ոճը, զինվորական կադրերի մարզումը և ուսուցումը,
- պատրաստվածությունը մարտական գործողություններին:

Անձնական անվտանգության բավարար երաշխիքների, անձի և կրտսեր ուղղակի կազմի իրավունքների հարգման բացակայությունը, հատկապես խաղաղ պայմաններում, նվազեցնում է բանակի հասարակական վարկանիշը և հարվածի տակ դնում դրա մարտունակությունը: Սոցիալական պաշտպանվածության ցածր մակարդակը նպաստում է հանցավորության աճին, մասնավորապես՝ ավագ և բարձր սպայական կազմում կոռուպցիայի տարածմանը: Բանակի պահանջների նկատմամբ քաղաքական էլիտայի և հասարակության թեթևամիտ վերաբերմունքը, զինվորականների կենցաղի անբավարար պայմանները, անհարգալից վերաբերմունքը զինվորական ծառայության նկատմամբ, զինվորական ծարայության ցածր վարկանիշը շատ երկրներում հան-

գեցրել են նրան, որ բանակը ընդդիմադիր ուժերին աջակցություն ցուցաբերելով, նպաստում է գործող իշխանությունների տապալմանը, կամ էլ պարզապես «չեզոք» դիրք բռնելով, ճանապարհ է հարթում իշխանափոխություն իրագործողների համար: Այսպիսով, անհնարին է կառուցել պետություն և հասարակություն, եթե զինված ուժերում իրագործվող բարեփոխումները վերոհիշյալ խնդիրները չեն շոշափում:

### Եզրակացություն

Զինված ուժերի խնդիրներն արդիական են ոչ միայն մեր երկրի նման անցումային շրջանի երկրների, այլև բոլոր պետությունների համար: Զինված ուժերը, պայմանների փոփոխականությամբ պայմանավորված, իրենց նկատմամբ անընդհատ ուշադրություն են պահանջում: Ձկա միակ, մեկընդմիշտ գործուն լուծում ո՛չ բարեկամներով և միայն դաշնակիցներով շրջապատված «հարուստ» երկրների, ո՛չ միջազգային ահաբեկչությանը համաշխարհային պատերազմ հայտարարած լուրջ տնտեսական և ֆինանսական խնդիրների հանդիպած գերտերությունների, և ո՛չ էլ նախկին կայսրությունների համար: Հասարակության անուշադրությունը բանակի հանդեպ, դրա գործունեության շուրջը ոչ թափանցիկ միջնորոտը միշտ հղի են մեծ խնդիրներով:

Բանակի աճող դերը Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքում, ինչպես և այդ դերի յուրահատկությունը ներքաղաքական պայքարում, չեն կարող անհանգստության տեղիք չտալ: Սակայն զինված ուժերի հանդեպ քաղաքացիական, հասարակական վերահսկողության անհրաժեշտության մասին քննարկումները հիմնականում մակերեսային և պոպուլիստական բնույթ են կրում: Ավելին, հասարակությունում չկա զինված ուժերի բարեփոխումների և դրանց վրա կիրառվող վերահսկողության ժողովրդավարական սկզբունքների ընդհանուր ընկալում: Մինչդեռ բանակի կյանքի որոշ ոլորտներում նման վերահսկողությունն անհրաժեշտ է և դրա իրականացման հնարավորությունը ուղղակիորեն կապված է ներքաղաքական նախադրյալների առկայության կամ բացակայության հետ:

Իհարկե, կա սոցիալական խնդիրների մի ողջ համալիր, որոնց չենք անդրադառնա. մասնավորապես պայմանագրային սկզբունքով բանակի ձևավորումը: Այնուամենայնիվ, այս պահին արդեն ավելորդ չէր լինի հետազոտել հասարակության կարծիքն այս հարցի վերաբերյալ, հաշվարկել նման տարբերակի թե՛ տնտեսական, և թե՛ հնարավոր այլ կողմերը, մոգելավորել իրավիճակը և դիտարկել դրա բոլոր դրական և բացասական կողմերը<sup>24</sup>:

Բանակը հասարակության մի մասն է կազմում, հետևաբար, ռազմա-քաղաքացիական հարաբերություններում պարբերաբար տեղի ունեցող բարդացումներում առավել հաճախ մեղավորը հենց հասարակությունն է: Դրանցից խուսափելու համար հասարակությունը պետք է նախ և առաջ գիտակցի իր դերն ու պատասխանատվությունը սեփական պաշտպանության գործում:

Կարծում ենք, հայաստանյան հասարակությունում բանակի զարգացման խնդիրները խորը և բազմակողմանի վերլուծության կարիք ունեն: Ցավոք, օբյեկտիվ և այլ կարգի պայմաններից ելնելով, ոլորտում նման աշխատանքների անցկացումը այս պահին չի խրախուսվում: Արդյունքում, գործնականում ռազմա-քաղաքացիական ոլորտին վերաբերող լուրջ ուսումնասիրություններ շատ չեն, իսկ գոյություն ունեցողներն էլ համակարգված և շարունակական բնույթ չեն կրում: Մեզ մատչելի գրականության հիմնական զանգվածը վերլուծում է Հայաստանի

<sup>24</sup> Հայաստանում այս խնդիրն արդեն քննարկվում է. 2006 թվականի նոյեմբերի 16-ին երևանում տեղի ունեցավ «Մարդու իրավունքները և զինվորական ծառայությունը. պայմանագրային ծառայության հեռանկարները Հայաստանում» թեմայով կրթ. սեղան: Քննարկումը կազմակերպվել էր ԵԱՀԿ երևանյան գրասենյակի և «Հակաստվեր» հասարակական կազմակերպության կողմից: Մասնակցում էին ՊՆ, Գլխավոր դատախազության, Վերաքննիչ դատարանի և հասարակական մի քանի կազմակերպությունների ներկայացուցիչներ: ՀՀ ՊՆ կազմերի վարչության համալրման բաժնի պետ, փոխգնդապետ Հարություն Մուխսի-Հովեյանը մասնակիցներին ծանոթացրեց պայմանագրային հիմունքներով համալրման հայաստանյան բանակում գործող կանոնների հետ:

զինված ուժերի խնդիրները զարգացած ժողովրդավարության երկրներում ընդունված չափանիշների ԶՈՒ հանդեպ վերահսկողության և դրանց զարգացման նեղ կիրառական տեսանկյունից, դիտարկելով այն զուտ որպես երկրի անվտանգության ռազմական բաղադրիչ, ինչը, մեր կարծիքով, բավական չէ: Հասունացել է հասարակությունում ազգային բանակի ֆենոմենը այլ, ավելի արդիական ու բազմակողմանի տեսանկյունից դիտարկելու անհրաժեշտությունը՝ ամենատարբեր մասնագետների՝ սոցիոլոգների, հոգեբանների և հասարակության հետ կապերի մասնագետների ներգրավմամբ:



**Ե**

**ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ.  
ԴԱՍԱԿԱՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ  
ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ**



## 14.

ԵՐԿ ՈԱՉՄԱՐԿԵՍՏԻ ՄԱՍԻՆ\*

### ՍՈՒՆ ՃԵՂԻ



### Թարգմանչի Նախաբանը

Ռազմական գիտությունն առաջացել է դեռևս հնագույն ժամանակներում: Արդեն Բաբելոնում, Պարսկաստանում և Հնդկաստանում փորձեր էին արվում կանոնակարգել թագավորների և զինվորների իրավունքներն ու պարտականությունները:

Ռազմական տեսություն անհրաժեշտությունը կանխորոշեց ռազմական տեսաբանների երևան գալը, որոնք փորձում էին ընդհանրացնել ռազմական փորձը: Երկար ժամանակ այս ասպարեզում առաջնությունը պատկանում էր հույն ռազմական տեսաբաններին: Իրականում, սակայն, այս ասպարեզում առաջնությունը պատկանում է Հին Չինաստանին: Չին ռազմական տեսաբանների կողմից կազմվեց «Յոթնագիրքը», որն ընդգրկում էր յոթ ընտիր ռազմական երկ: Այդ երկերից առավել արժեքավորներն են «Սուն Յըզին» և «Ու Յըզին»՝ այդպես են կոչվել հեղինակների՝ Սուն Յըզիի և Ու Յըզիի անուններով:

---

\* Սա Սուն Յըզիի երկի այս թարգմանության երկրորդ, լրամշակված հրատարակությունն է: Առաջինը 100 օրինակով լույս է տեսել 2006 թ., եր.: ՀՀ ԳԱԱ Պատմ. ինստ. – 68 էջ:

րով: Նրանց ազդեցութեան ներքո ստեղծվեց Հին Չինաստանի հետագա ուղղամտեսական գրականութիւնը:

Հին Չինաստանի ուղղամտական տեսաբաններից առանձնանում է Սուն Յըզի (մ.թ.ա. 6-5-րդ դարեր): Նրա գաղափարները զգալի ազդեցութիւն են թողել Ասիայում: Զորավարի երկը մի քանի անգամ թարգմանվել է եվրոպական լեզուներով, իսկ 19-րդ և 20-րդ դարերում Չինաստանում և Ճապոնիայում բարձրագույն սպայական կազմի ուսուցման ծրագրում ներառվում է նաև այս երկը: Սուն Յըզիի աշխատութեան արժեքավորութեան մասին է վկայում նաև այն փաստը, որ 1943 թվականին Խորհրդային Միութեան համար վճռորոշ տարում, Կ. Վորոշիլովի անվան բարձրագույն զինվորական ակադեմիայի ուղղամտական արվեստի ամբիոնի կողմից հրատարակվեց Սուն Յըզիի երկի ռուսերեն թարգմանութիւնը:

Նախկին ԽՍՀՄ-ում Սուն Յըզիի երկը մի քանի անգամ թարգմանվել է չինարենից և տանգուտերենից:

Սուն Յըզիի երկը բաղկացած է 13 գլխից, որից յուրաքանչյուրը (բացի 12-րդից) ունի ծանոթագրութիւնների բաժինը: Այն իրենից ներկայացնում է տասը, իսկ մեկ այլ տեքստի՝ տասնմեկ ուղղամտական մեկնաբանների պարզաբանումները: Դա հնարավորութիւն է տալիս առավել խորութեամբ ըմբռնել զորավարի այս կամ այն միտքը:

Սույն երկի թարգմանութիւնը կատարելիս՝ մեզ համար հիմք է հանդիսացել՝ *Сунь-Цзы, Трактат о военном искусстве* (Перевод с древнекитайского и примечания подполковника Сидоренко Е. И. Вступительная статья и редакция текста профессора, генерал-майора Разина Е. А.). Воен. изд. Министерства Обороны СССР, Москва, 1955 աշխատութիւնը: Ծանոթագրութիւնների բաժնում մեր կողմից ավելացվել է 10-րդ բաժինը, ինչպես նաև լրացվել են մյուս բաժինները՝ ուղղամտական մեկնաբանների լրացուցիչ բացատրութիւններով, որոնց համար օգտագործվել է հետևյալ հրատարակութիւնը՝ *Сунь Цзы в тангутском переводе*. Факсимиле ксилографа. Издание текста, перевод, введение, комментарий, грамматический очерк, словарь и приложения К. Б. Кепинг. Москва, Изд. “Наука”, Главная редакция восточной литературы, 1979.

Սուն Յըզիի կյանքի ու գործունեության վերաբերյալ շատ քիչ տեղեկություններ են պահպանվել: Հայտնի է, որ նա եղել է ՈՒ իշխանության, որի տիրակալն էր Հե-լյուն (մ.թ.ա. 514-495 թթ.), գորավարը: Սուն Յըզին հաջողությամբ ղեկավարել է 30 հազարանոց բանակ և տարել բազմաթիվ փալյուն հաղթանակներ:

Ռուբեն Սահակյան

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան .....	343
Գլուխ I Հիմնական հաշվարկները (Յըզի) .....	347
Գլուխ II Պատերազմի վարումը (Յըզոշժան) .....	349
Գլուխ III Ռազմավարական հարձակում (Մոուգուն).....	351
Գլուխ IV Ձև (Սին).....	354
Գլուխ V Հզորություն (Շի) .....	355
Գլուխ VI Լեզու-լեզունություն և դատարկություն (Սյույ, Շի) .....	357
Գլուխ VII Պայքարը պատերազմում (Յյունշժեն) .....	360
Գլուխ VIII Ինը փոփոխություն (Յզյուբյան).....	363
Գլուխ IX Զորքն արշավի ժամանակ (Սինցզյուն).....	364
Գլուխ X Տեղանքի ձևերը (Դիսին) .....	368
Գլուխ XI Ինը տեղանք (Յզյուզի) .....	371
Գլուխ XII Հարձակում կրակով (Խոգուն).....	377
Գլուխ XIII Հետախույզների օգտագործումը (Յունցըզյան).....	378
Ծանոթագրություններ.....	381
1-ին գլխի ծանոթագրություններ.....	381
2-րդ գլխի ծանոթագրություններ.....	388
3-րդ գլխի ծանոթագրություններ.....	390
4-րդ գլխի ծանոթագրություններ.....	392
5-րդ գլխի ծանոթագրություններ.....	393
6-րդ գլխի ծանոթագրություններ.....	395
7-րդ գլխի ծանոթագրություններ.....	398
8-րդ գլխի ծանոթագրություններ.....	400
9-րդ գլխի ծանոթագրություններ.....	401
10-րդ գլխի ծանոթագրություններ.....	402
11-րդ գլխի ծանոթագրություններ.....	404
13-րդ գլխի ծանոթագրություններ.....	408

## ԳԼՈՒԽ ԱՈՒԱԶԻՆ

### Հիմնական հաշվարկները (Յրգի)\*

Սուն Յրգին ասաց. պատերազմը պետության համար մեծ գործ է, կյանքի ու մահվան հարց է, գոյության կամ կործանման ուղի: Այս հիմնական դրույթն անհրաժեշտ է հաստատուն իմանալ<sup>1</sup>: Ուստի պատերազմը վճռվում է հինգ գործոններով, նրան համեմատում են (յոթ) հաշվարկների հետ և որոշում են (հետևյալ) դրույթներով. առաջինը՝ Դատ (ուղի), երկրորդը՝ Տյան (երկինք), երրորդը՝ Դի (երկիր), չորրորդը՝ Յրգյան (գորավար), հինգերորդը՝ Ֆա (օրենք):

Ուղին՝ երբ ժողովրդի մտքերն ու տիրակալի մտքերը միանման են: Այդ իսկ պատճառով ժողովուրդը պատրաստ է տիրակալի հետ մեռնել կամ ապրել, երբ ժողովուրդը չի վախենում հնարավոր վտանգից և վախ չգիտի<sup>2</sup>:

Երկինքը՝ լույսն ու խավարն է, ցուրտը և շոգը, ժամանակի հաջորդականությունն<sup>3</sup> է:

Երկիրը՝ հեռավորությունն ու մոտիկությունն է, անանցանելիությունն է ու անցանելիությունը, լայնն ու նեղը, մահն ու կյանքը<sup>4</sup>:

Զորավարը՝ քաջությունն է, մարդասիրությունն է, արդարությունն է, խստությունն է<sup>5</sup>:

Օրենքը՝ զինվորական կարգ ու կանոնն ու կարգապահությունն է, զորքի ղեկավարումն ու մատակարարումը<sup>6</sup>:

Այս հինգ կանոնները հայտնի են յուրաքանչյուր զորավարի, սակայն հաղթում է նա, ով յուրացրել է դրանք, ով չի յուրացրել, (նա) չի հաղթում:

Ուստի պատերազմը համեմատում են (յոթ) հաշվարկների (հետ) և որոշում (հետևյալ) դրույթներով. տիրակալներից նա, ով ճիշտ կորոշի

---

\* Մանոթագրությունները տրվում են ըստ գլուխների, երկի վերջում:

Ուղին, Երկնքի ու Երկրի վիճակը, ով կատարում է կանոններն ու հրամանները<sup>7</sup>, ով ավելի ուժեղ զորք ունի<sup>8</sup>, ում մոտ հրամանատարներն ու ռազմիկները<sup>9</sup> (չի և ցըզա) ավելի լավ են նախապատրաստված<sup>10</sup>, ով արդարացիորեն պարգևատրում և պատժում է<sup>11</sup>:

Այդ ամենով ես կիմանամ, թե ով հաղթանակ կտոնի և ով պարտություն կկրի<sup>12</sup>:

Այն զորավարը, որը կկիրառի իմ հաշվարկները, հաստատուն կերպով յուրացնելով դրանք, անպայման կհաղթի, թող նա հրամայի զորքերին, (այն) զորահրամանատարը, որ չի հենվում իմ հաշվարկների վրա, չյուրացնելով դրանք, անպայման պարտություն կկրի, այդպիսի զորավարին պեսք է հեռացնել: Եթե զորավարը յուրացրել է հաշվարկները, հաշվի առնելով շահը, դրանք կկազմեն հզորություն, որը կարող է օգտագործվել և այս հաշվարկների սահմաններից դուրս<sup>13</sup>:

Հզորությունը լինում է այն դեպքում, երբ հաշվի են առնում օգուտը և կիրառում են մարտավարությունը:

Պատերազմը խաբեության ուղին է: Ուստի, եթե դու որևէ բան կարող ես անել, ցույց տուր, որ չես կարող: Եթե օգտվում ես որևէ բանից, ցույց տուր, որ չես օգտվում, եթե հեռու ես գտնվում, ցույց տուր, որ մոտիկ ես, հակառակորդին հրապուրիր շահով, հակառակորդի մոտ խառնաչփոթ առաջացրու և հաղթիր նրան: Եթե հակառակորդի մոտ ամեն ինչ առատ է, պատրաստ եղիր, եթե հակառակորդն ուժեղ է քեզանից, խուսափիր նրանից, եթե նա ենթակա է զայրույթի, նրան հավասարակշռությունից հանիր, խոնարհ տեսք ընդունելով, նրա մեջ ինքնավստահություն առաջացրու, թարմ ուժերը ուժասպառ արա, եթե հակառակորդի շրջանում համաձայնություն կա, անկարգություն մտցրու, հարձակվիր հակառակորդի վրա, երբ նա պատրաստված չէ, հայտնվիր այնտեղ, որտեղ նա քեղ չի սպասում<sup>14</sup>: Սակայն չի կարելի վաղորդք մատնանշել որևէ եղանակ<sup>15</sup>:

Ընդհանրապես, ով որ ճակատամարտից առաջ նախնական հաշվարկով հաղթանակում է, հաղթանակի ավելի մեծ հնարավորություններ ունի, ով մինչև ճակատամարտը նախնական հաշվար-

կողմ չի հաղթում, նա քիչ հնարավորություն ունի հաղթելու, առավել ևս չի հաղթում նա,ով որ շունի նախնական հաշվարկներ: Այս հաշվի առնելով, ինձ համար հասկանալի են հաղթանակն ու պարտությունը:

## ՔԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

### Պատերազմի վարումը

#### (Յրզոյժան)

Սուն Յրզին ասաց. ընդհանրապես պատերազմ վարելու կանոնները հետևյալն են՝ եթե ունես 1000 չիչե (թեթև մարտականք) և 1000 գեչե (զուժակային ծանր կառքեր), 100000 դայցզա (զրահապատ գինվորներ)<sup>1</sup>, եթե պարենը զորքի համար պետք է ուղարկել 1000 լիից\* ավելի, պետք է հաշվի առնել ներքին և արտաքին ծախսերը, հյուրերին ընդունելու ծախսերը, լաքի ու սոսնձի<sup>†</sup> համար նյութեր, ծախսերը մարտականքերի ու սպառազինության համար, ապա՝ այդ ամենի համար օրական կպահանջվի 1000 ցզին (ոսկի), միայն այդ պայմաններում կարելի է ոտքի հանել հարյուր հազարանոց զորք:

Եթե պատերազմը վարում են, և հաղթանակը երկար ժամանակով հետաձգվում է, ապա գենքը բթանում է, և ծայրը կոտրվում է, եթե ամրոցի պաշարումը երկարաձգվում է, ուժերը սպառվում են, եթե զորքը գտնվում է երկարատև ռազմարշավի, ապա պետության միջոցները չեն բավականացնում:

Եթե գենքը բթանում է, (նրա) ծայրը կոտրվում է, ուժերը հյուժվում են, միջոցները սպառվում են, ապա իշխանները (չժոխոտու) դրուժյունից օգտվելով, քո դեմ դուրս կգան<sup>2</sup>: Դրանից հետո նույնիսկ իմաստուն խորհրդականները ոչինչ չեն կարող անել:

\* Կի՝ երկարության միավոր, հավասար է 576 մետրի:

† Լաքն օգտագործվում էր մարտականքերը, աղեղները, նիզակների փայտյա մասերը մշակելու և ողորկելու համար: Սոսինձն օգտագործվում էր որպես գենքը խոնավությունից պաշտպանելու միջոց:

Ուստի պատերազմում նրա արագ հաղթանակի մասին լսում են նույնիսկ նրա անհմուտ վարման դեպքում և չեն տեսնում հաջողությունը երկարատևության մեջ, նույնիսկ երբ այն վարպետորեն են վարում:

Երբևիցե դեպք չի եղել, որ պատերազմը երկարատև բնույթ կրի և դա շահավետ լինի պետության համար: Այդ իսկ պատճառով, նա, ով չի հասկանում ողջ վնասը, որ հասցնում է պատերազմը, նա չի կարող խորությամբ ըմբռնել պատերազմի օգուտը:

Ով կարողանում է պատերազմը վարել, (նա) երկու անգամ զորահավաք չի կատարում, երեք անգամ պարեն չի փոխադրում<sup>3</sup>, սպառազինությունը վերցնում է պետությունից, իսկ պարենը՝ հակառակորդից, ուստի պարենը նրան կբավականացնի:

Պատերազմի ժամանակ պետական գանձարանն աղքատանում է, որովհետև զորքի համար պարենը բերվում է հեռվից: Երբ պարենը բերվում է հեռվից, ժողովուրդն աղքատանում է:

Ձորքի մոտակայքում բնակվող բնակչությունը զորքի համար անհրաժեշտ ամեն ինչ վաճառում է թանկերբ ամեն ինչ վաճառվում է թանկ, ժողովրդի ունեցվածքը հատնում է, երբ ունեցվածքը սպառվում է, պարհակները դժվար է կատարել:

Երբ երկրի ուժերը հյուժվում են, ժողովրդի միջոցները սպառվում են, այդ ժամանակ բնակչության տները դատարկվում են, ժողովրդի գույքը նվազում է յոթ տասներորդով<sup>4</sup>: Տիրակալի գույքը՝ շարդված սայլեր, հոգնատանջ ձիեր, զրահներ, սաղավարտներ, նետեր, աղեղներ, նիզակներ, մեծ ու փոքր վահաններ<sup>5</sup>, եզներ, մեծ սայլեր՝ այդ ամենը նվազում է վեց տասներդականով:

Ուստի խելացի զորավարն անպայման սնվում է հակառակորդի հաշվին: Հակառակորդից վերցրած մեկ շժուռն ուտելիքը համապատասխանում է սեփական քսան շժուռին, հակառակորդից գրաված մեկ դանը\* համապատասխանում է սեփական քսան դանին:

\* Դանը հավասար է 59,63 կիլոգրամի:

Ուստի հակառակորդին սպանում է կատաղությունը, հակառակորդի հարստությունը գրավում է ազահությունը՝:

Այդ իսկ պատճառով, եթե կովի ընթացքում մարտակառքերը գրավեն տասը և ավելի մարտակառք, որպես պարզև, բաժանիր դրանք նրան, ով առաջինն է դրանք գրավել: Հակառակորդից գրաված մարտակառքերի դրոշակները փոխարինիր քոնով և օգտագործիր այդ մարտակառքերը քոնի հետ: Գերված ռազմիկների հետ լավ վարվիր և հոգ տար նրանց մասին: Դա նշանակում է՝ հաղթել հակառակորդին և ավելացնել քո ուժերը:

Այդ իսկ պատճառով պատերազմը գնահատում է հաղթանակը և չի հարգում երկարատևությունը:

Ուստի պատերազմի էությունը հասկացող զորավարը ղեկավարում է ժողովրդի ճակատագիրը և հանդիսանում է պետություն անվտանգության տիրակալը:

## ՔՆՈՒՄ ԵՐՐՈՐ

### Ռազմավարական հարձակում

(Մոուզուն)

Սուն Յըզին ասաց. սովորաբար պատերազմի վարման կանոնները հետևյալն են՝ կարևոր է պահպանել հակառակորդի պետությունն անվնաս, քան ջախջախել նրան, կարևոր է պահպանել հակառակորդի ցզյուն անվնաս, քան ջախջախել նրան, կարևոր է պահպանել հակառակորդի լյուն անվնաս, քան ջախջախել նրան, ավելի կարևոր է պահպանել հակառակորդի ուն անվնաս, քան ջախջախել նրան<sup>1</sup>:

Ուստի հարյուր անգամ մարտ մղել և հարյուր անգամ հաղթանակ տանել դեռ չի նշանակում լավագույնից լավագույնը: Լավագույնից լավագույնն այն է, որպեսզի հնազանդեցնել հակառակորդի բանակն առանց մարտի: Այդ պատճառով պատերազմի բարձրագույն արվեստը՝ հակառակորդի ծրագրերը խախտելն է, որից հետո քայքայել նրա դա-

շինքները, հաջորդ վայրում ջախջախել նրա զորքերը և, վատթարագույնը՝ ամրոցի պաշարումը:

Ամրոցի պաշարման կանոնների համաձայն, պաշարումը կատարվում է այն դեպքում, երբ դա անխուսափելի է: Մեծ վահանների<sup>2</sup>, պաշարողական կառքերի<sup>3</sup>, զանազան ռազմական հանդերձանքի նախապատրաստման համար պահանջվում է երեք ամիս, և դա էլ չես հասցնի: Զորավարը, սակայն, չկարողանալով հաղթահարել իր անհամբերությունը, մրջյունների հոսքի նման նետում է իր ռազմիկներին գրոհի, ռուտի և կորցնում է իր ռազմիկների մեկ երրորդը, և, այնուամենայնիվ, ամրոցը մնում է անառիկ: Այդպիսին է պաշարման բացասական ազդեցությունը:

Ուստի, ով վարպետորեն է վարում պատերազմը, նա հնազանդեցնում է օտար զորքերն առանց ճակատամարտի, գրավում է ամրոցներն առանց պաշարման, ջախջախում է օտար պետություններն առանց երկարատև կամպանիաների: Ամեն ինչ անվնաս պահպանելով, նա պայքարում է երկնաբարձունքի տիրապետության համար: Այդ պատճառով առանց պատերազմ մղելու կարելի է շահ ունենալ: Դա է ռազմավարական հարձակման կանոնը:

Ուստի գոյություն ունեն պատերազմը վարելու կանոններ՝ եթե քո ուժերը տասն անգամ գերազանցում են հակառակորդին, ապա պետք է շրջապատել նրան, եթե քո ուժերը հինգ անգամ են գերազանցում, պետք է գրոհել հակառակորդի վրա, եթե քո ուժերը երկու անգամ են ավելի հակառակորդի ուժերից՝ պետք է քո զորքը բաժանես երկու մասերի, հավասար ուժեր ունենալու դեպքում կարելի է մարտը վարել, եթե քո ուժերը քիչ են կարելի է պաշտպանվել, եթե քո ուժերը զիջում են հակառակորդին բոլոր պարագաներում, կարողացիր խուսափել մարտից<sup>4</sup>: Ուստի ոչ մեծ ուժերը կարող են համառ պայքար մղել, սակայն նրանք բոլորն էլ կարող են դառնալ հակառակորդի առավել խոշոր ուժերի գերինները:

Սովորաբար զորավարը պետություն հենարանն է: Եթե այդ հենարանը կատարյալ հատկություններ ունի, (ապա) պետությունն անպայ-

ման ուժեղ կլինի, եթե այդ հենարանը թերուժյուններ ունի, ապա պետուժյունն անպայման թույլ կլինի:

Ուստի զորքը տառապում է իր տիրակալից երեք դեպքում՝

1. Երբ նա, չգիտենալով, որ զորքը չի կարող հարձակվել, հրամայում է հարձակվել, երբ նա, չգիտենալով, որ զորքը չպետք է նահանջի, նրան հրամայում է նահանջել: Այդ նշանակում է, որ նա կաշկանդում է զորքը:

2. Երբ նա, չիմանալով զորքերում գործի էությունը, զորքերի ղեկավարման համար տարածում է այն նույն սկզբունքները, որոնք կիրառվում են պետության ղեկավարման դեպքում: Նման պարագայում հրամանատարները զորքերում շփոթմունքի մեջ են ընկնում:

3. Երբ նա, չգիտենալով զորքերի մարտավարությունը, զորավարին նշանակում է այն նույն սկզբունքով, ինչպես պետությունում: Այդ ժամանակ հրամանատարները զորքերում շփոթմունքի մեջ են ընկնում:

Հետևաբար գոյություն ունեն պատերազմն ապահովող հինգ պայմաններ՝

- հաղթում է նա, ով գիտի, թե երբ կարելի է կռվել, իսկ երբ՝ չի կարելի.
- հաղթում է նա, ով կարողանում է ղեկավարել մեծ և փոքր ուժերը.
- հաղթում է նա, ում մոտ վերևից ներքև գոյություն ունեն միասնական ցանկություններ<sup>5</sup>.

- հաղթում է նա, ով ցուցաբերում է զգուշություն և սպասում է հակառակորդի անզգուշությանը.

- հաղթում է նա, ում մոտ զորավարը տաղանդավոր է և նրան թագավորը չի ղեկավարում<sup>6</sup>:

Այս հինգ պայմաններն են դեպի հաղթանակը տանող ուղիները:

Այդ պատճառով ասում են՝ եթե գիտես նրան և ճանաչում ես քեզ, թեկուզ հարյուր ճակատամարտ վարիր՝ վտանգ չի լինի, եթե գիտես նրան և չես ճանաչում քեզ, մի անգամ կհաղթես և մի անգամ պարտություն կկրես, եթե չգիտես ոչ նրան, ոչ էլ քեզ, (ապա) յուրաքանչյուր ճակատամարտում պարտություն կկրես:

## ՔԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

## ՁԼ

## (ՍԻՆ)

Սուն Յըզին ասաց. նա, ով հնում վարպետորեն էր պատե-  
րազմը վարում, սկզբում իրեն դնում էր անպարտելի դրուժյան մեջ և  
հարմար առիթ էր ակնկալում հակառակորդին հաղթելու համար:

Անպարտելիությունը կախված է մեզանից, սակայն հաղթանակի  
հնարավորությունը գտնվում է հակառակորդի մեջ: Հետևաբար, ով լավ  
է կռվում, կարող է իրեն անպարտելի դարձնել, սակայն չի կարող ստի-  
պել հակառակորդին, որպեսզի նա թույլ տա իրեն հաղթել:

Հետևաբար ասվում է՝ կարելի է իմանալ, թե ինչպես է հնարավոր  
հաղթել, սակայն գործնականում դրան հասնել չես կարող:

Անպարտելիությունը պաշտպանությունն է, հաղթանակի հնարավո-  
րությունը հարձակումն է: Պաշտպանություն՝ նշանակում է ինչ որ թերու-  
թյան առկայություն, հարձակում՝ նշանակում է, որ ամեն ինչ առատ է<sup>1</sup>:

Նա, ով լավ է պաշտպանվում, թաքնվում է իններորդ հողի տակ,  
նա, ով լավ է հարձակվում, գործում է իններորդ երկնքից: Ուստի մենք  
կարող ենք պահպանել մեզ և լիակատար հաղթանակ տանել:

Ով հաղթանակը տեսնում է որպես սովորական մարդ, լավագույ-  
նից լավագույնը չէ<sup>2</sup>: Նրա մասին, ով հաղթանակ կտանի ճակատամար-  
տում, Երկնատակը կասեն. «լավ է կենսագործվել», սակայն դա նույն-  
պես չի լինի լավագույնից լավագույնը:

Ուստի աշնանային փետուրիկ բարձրացնելը մեծ ուժի նշան չէ,  
տեսնել արևն ու լուսինը՝ դեռ չի նշանակում ունենալ սուր տեսողու-  
թյուն, ամպրոպի որոտը լսելը զգայուն լսողության (նշան) չէ:

Հնում ասում էին այն մասին, թե լավ կռվում էր և հաղթում նա, ում  
(մարտում) դյուրին էր հաղթել: Հետևաբար, ով լավ կռվելով հաղթել էր,  
նա չի ունեցել ոչ հուշակավոր անուն, ոչ էլ հերոսական սխրագործու-  
թյուններ: Այդ իսկ պատճառով, նրա ճակատամարտերն ու հաղթանակ-  
ներն արդյունք էին այն բանի, որ նա սխալներ չի կատարել: Ով որ սխալ-

ներ թույլ չի տալիս՝ նրա կողմից ձեռնարկած ամեն ինչը հաղթանակի է բերում: Նա հաղթում է արդեն պարտվածին:

Ուստի նա, ով լավ է կռվում այնպիսի դիրք է գրավում, որի դեպքում պարտությունն անհնար է և պահճը բաց չի թողնի հակառակորդին պարտության մատնելու համար: Ահա թե ինչու, զորքը, որ պետք է հաղթի, կռիվ է փնտրում միայն այն բանից հետո, երբ հաղթանակն (արդեն) ապահովված է, պարտության դատապարտված զորքը սկզբում կռվում է, և միայն հետո է հաղթանակ փնտրում:

Ով պատերազմը վարպետորեն է վարում, նա իրականացնում է Ուղին և պահպանում է Օրենքը<sup>3</sup>: Հետևաբար, նա կարող է ղեկավարել հաղթանակն ու պարտությունը:

Պատերազմի օրենքների համաձայն, գոյություն ունեն՝ առաջին՝ երկարություն (դու), երկրորդ՝ ծավալ (լյան), երրորդ՝ թիվ (շու), չորրորդ՝ քաշ (չեն), հինգերորդ՝ հաղթանակ (շեն)<sup>4</sup>: Տեղանքը ծնում է երկարություն, երկարությունը՝ ծավալ, ծավալը՝ թիվ, թիվը՝ քաշ, քաշը՝ հաղթանակ:

Ուստի հաղթող զորքը նման է «ի»-ի\* քաշին «չժուի» քաշի համեմատությամբ, իսկ պարտության դատապարտված զորքը նման է «չժուի» քաշին՝ «ի»-ի համեմատ:

Ճակատամարտում հաղթում է նա, ով նման է 1000 ժեն<sup>†</sup> բարձրությունից դեպի անդունդը գահավիժող կուտակված ջրին: Այդ է ձևը<sup>5</sup>:

## ՉԼՈՒՄ ԶԻՆԳԵՐՈՐԴ

### Հզորություն

(ՇԻ)

Սուն ջրզին ասաց. սովորաբար խոշոր ուժերի ղեկավարումը հիմնված է այն նույն սկզբունքի վրա, ինչ փոքր ուժերի ղեկավարումը: Էությունը միայն ստորաբաժանումների և քանակի մեջ է<sup>1</sup>:

\* «ի»-ն կշռի միավոր է, հավասար է 24 լյանի (10 կգ) արծաթի, «չժուն»՝ կշռի միավոր է, հավասար է 1/48 լյանի (100 ցորենահատիկի քաշը):

† «ժեն», երկարության միավոր է, հավասար է 2,56 մետր:

Մեծ ուժերով մարտը վարելու սկզբունքը նույնն է, երբ մարտը վարում են փոքր ուժերով: Էությունը միայն ձևի և անվան մեջ է: Այն, ինչը զորքը դարձնում է անպարտելի, հակառակորդի հետ մշտապես հանդիպելիս, կանոնավոր մարտը և հմուտ զորաշարժն է<sup>2</sup>:

Զորքի հարվածը պետք է լինի այնպիսին, ինչպես նետված ջրաղացքարը հարվածում է ձվին: Դա լեփ-լեցունությունն ու դատարկությունն է<sup>3</sup>:

Ընդհանրապես հակառակորդի հետ մարտը սկսում են կանոնավոր մարտով, իսկ հաղթում են զորաշարժով: Ուստի նա, ով լավ է օգտագործում զորաշարժը՝ անսահման է, ինչպես երկինքն ու երկիրը, անսպառ է, ինչպես գետերի հոսանքն ու հեղեղը<sup>4</sup>: Ավարտվում և սկսվում է արևի և լուսնի նման՝ մահանում և կրկին ծնվում է, ինչպես տարվա շրջադասանակները: Զայներանգներն առնվազն հինգն են, սակայն այդ ձայներանգների զուգակցումը ստեղծում է մեղեդիներ, որոնք կարելի է անընդհատ լսել, գույներն առնվազն հինգն են, սակայն այդ գույների զուգակցումը ստեղծում է բազմաթիվ գուներանգներ, որոնք տեսնելն իսկ անհնար է, համերն առնվազն հինգն են, սակայն այդ հինգ համերն ստեղծում են բազմաթիվ համային հատկություններ, որոնք բոլորը հնարավոր չէ զգալ: Մարտական հզորությունը կախված է կանոնավոր մարտից և զորաշարժից, սակայն կանոնավոր մարտի և զորաշարժի զուգակցումը կարելի է ստեղծել անվերջ: Զորաշարժը և կանոնավոր մարտը ծնունդ են տալիս մեկը մյուսին, շրջապատույտի նման, որը վերջ չունի: Ո՞վ կարող է սպառել դրանք մինչև վերջ:

Այն, որ ջրի բուռն հեղեղը իր հոսանքով տանում է նաև քարեր, նշանակում է հզորություն: Այն, որ գիշատիչ թռչունը սրընթաց խոցում է իր զոհին՝ նախանշված հարված է: Ուստի, լավ կովողի հզորությունը սրընթաց է, իսկ ծրագրավորումը՝ կարճ: Հզորությունը նման է ձգված աղեղալարին, իսկ ծրագրավորված հարվածը նման է արձակված նետի:

Ամեն ինչ խառնվել և խճճվել է, անկանոն մարտ է ընթանում, սակայն անկարգության մեջ չեն կարող ընկնել, խառնաշփոթության և քառսի մեջ չեն կարող ընկնել, շնայած ձևը խախտված է, միևնույնն է, պարտություն չեն կարող կրել<sup>5</sup>:

Անկարգուիթյունը ծնվում է կարգ ու կանոնից, վախկոտուիթյունը ծնվում է քաջուիթյունից, թուլուիթյունը ծնվում է ուժից<sup>6</sup>: Կարգ ու կանոնը և անկարգուիթյունը ստեղծվում են թվով, քաջուիթյունն ու վախկոտուիթյունը ստեղծվում են հզորուիթյամբ, ուժն ու թուլուիթյունը առաջանում են ձևով<sup>7</sup>:

Այդ է պատճառը, որ նա, ով հմտորեն շարժում է հակառակորդին ձևի ցուցադրմամբ, հակառակորդն անպայման հետևում է դրան, երբ հակառակորդին մի ինչ-որ բան են տալիս, նա անպատճառ վերցնում է, շահով նրան ստիպում են շարժվել, իսկ դիմավորում են դարանով:

Ահա թե ինչու լավ կովոդները փնտրում են հզորուիթյուն և ամեն ինչ մարդկանցից չեն պահանջում: Ուստի կարողանալով ընտրել մարդկանց, նրանց նշանակում է հզորուիթյանը համապատասխան<sup>8</sup>:

Երբ մարդկանց նշանակում են իրենց հզորուիթյանը համապատասխան, նրանք մարտի են գնում գլորվող ծառերի ու քարերի նման: Հարթ տեղանքում քարերի ու ծառերի հատկուիթյունն է՝ ընկած լինել առանց շարժվելու, երբ տեղը թեք է, ապա նրանք գլորվում են: Ուստի մարտում վարպետորեն օգտագործված մարդկանց հզորուիթյունը նման է կլոր քարի, որը բաց է թողնված 1000 ժեն<sup>9</sup> բարձրուիթյուն ունեցող լեռից: Դա է հզորուիթյունը:

## ՊԼՈՒՄ ՎԵՑԵՐՈՐԴ

### Լեփ-լեցունություն և դատարկություն<sup>1</sup>

(Սյույ, Շի)

Սուն Յրզին ասաց, սովորաբար նա, ով մարտադաշտ առաջինն է գալիս և սպասում հակառակորդին, նա մարտին նախապատրաստված է, ով ուշացավ մարտադաշտ գալ և ընթացքից մարտի մեջ մտավ, նա արդեն հոգնած է: Ուստի նա, ով որ լավ է մարտնչում, ղեկավարում է հակառակորդին և թույլ չի տալիս հակառակորդին ղեկավարել իրեն:

Ով կարողանում է հակառակորդին ստիպել (իր կամքով) գալ, նա նրան շահով է գայթակղեցնում, ով կարողանում է հակառակորդին թույլ չտալ գալ, նա նրան (թշնամուն) կասեցնում է վնասով: Ուստի հակառա-

կորդի թարմ ուժերը կարելի է հոգնեցնել, կուշտին կարելի է ստիպել քաղց զգալ, պինդ կառչածին էլ կարելի է տեղաշարժել:

Առաջ շարժվել այնտեղ, որտեղ նա (հակառակորդը) անպայման կնախաձեռնի ուղղվել, առաջանալ այնտեղ, ուր նա բացարձակապես ինձ չի սպասում: Ով 1000 լին անցնում է առանց հոգնելու, նա անցնում է այն վայրերով, որտեղ մարդիկ չկան<sup>2</sup>:

Հարձակվել և անպայման գրավել՝ նշանակում է հարձակվել շպաշտպանվողի վրա, պաշտպանվել և անպայման պահել՝ նշանակում է այնպես պաշտպանվել, որ նա (հակառակորդը) չկարողանա հարձակվել:

Ուստի, ով կարողանում է հարձակվել, հակառակորդը չգիտի, թե որտեղ պաշտպանվի, ով լավ է պաշտպանվում, հակառակորդը չգիտի, թե որտեղ հարձակվի: Օ՛ր, նրբագույն արվեստ: Նույնիսկ բառերով այն շեւ արտահայտի: Ուստի կարելի է դառնալ հակառակորդի ճակատագրի կառավարողը:

Առաջ շարժվել անարգել, նշանակում է հարվածը հասցնել հակառակորդին դատարկության մեջ: Նահանջել առանց հանդիպելու՝ նշանակում է արագությունն այնպիսին է, որ ի վիճակի չեն հասնել:

Ուստի, երբ ցանկանում եմ մարտի բռնվել, չնայած հակառակորդը թաքնվում է բարձր պարիսպների հետևում, շրջապատված խորը խրամներով, այնուամենայնիվ նա կկռվի ինձ հետ, որովհետև հարձակման ժամանակ նա անպայման պետք է պաշտպանվի: Երբ ես չեմ ուզում մարտի բռնվել, հենց որ ես տեղ գրավեմ և սկսեմ պաշտպանվել, հակառակորդը չի կարող ինձ հետ կռվել, որովհետև ես նրան շեղում եմ այդ վայրից:

Հետևաբար, հակառակորդին ցույց տալով ձևը, ինքս այն չեմ ունենա, ես կպահպանեմ իմ ամբողջականությունը, իսկ հակառակորդը մասերի կբաժանվի: Իմ ամբողջականությունը կկազմի միավոր, հակառակորդը բաժանվելով մասերի, կկազմի տասը միավոր: Այդ ժամանակ ես, օգտագործելով բոլոր տասն էլ, կհարձակվեմ հակառակորդի միավորի վրա, մենք շատ կլինենք, իսկ հակառակորդը՝ քիչ: Ով կարողանում է զանգվածով հարվածել (թվով) քչերին, որոնք կռվում են ինձ հետ, նրան դյուրին է հաղթել<sup>3</sup>:

Արա այնպես, որ հակառակորդը չիմանա, թե որ վայրում նա պետք է կուլի: Երբ վայրերը, որտեղ հակառակորդը պետք է պատրաստ լինի, շատ են, ապա նրանք, ովքեր կովելու են ինձ հետ, քիչ են:

Ուստի, նախապատրաստվելով առջևում, նրա մոտ քիչ ուժեր կլինեն ետևում, նախապատրաստվելով աջում, նրա մոտ քիչ ուժեր կլինեն ձախում: Եթե չես կարող պատրաստ չլինել (եթե ցանկանում ես պատրաստ լինել), ապա պետք է բավականաչափ ուժեր ունենաս: Սակայն ուժեր ունի նա, ով պատրաստ է ամենուր, շատ ուժեր ունի նա, ով հարկադրում է ուրիշին պատրաստ լինել ամենուր:

Հետևաբար, երբ գիտես ճակատամարտի վայրը և ճակատամարտի օրը, ապա գտնվելով 1000 լիից հեռու, դու կկարողանաս կովել: Երբ չգիտես ճակատամարտի վայրը, չգիտես նաև ճակատամարտի օրը, ապա ձախ թևով չես կարող օգնել աջին, աջ թևով չես կարող օգնել ձախին, առջևում գտնվողները չեն կարող օգնել ետևիններին, առավել ևս - դա վերաբերում է նրանց, ովքեր գտնվում են մի քանի տասնյակ լի հեռավորության վրա և նրանց, ովքեր գտնվում են ավելի մոտ՝ մի քանի լի հեռավորության վրա:

Չնայած ես ասում եմ, որ յուժեհներն ավելի շատ զորք ունեն, սակայն հայտնի չէ՝ նրանք կհաղթե՞ն, թե՞ պարտություն կկրեն: Ուստի ասված է. «Հաղթանակը կարելի է ստեղծել»: Թող հակառակորդի մոտ շատ զորք լինի, սակայն կարելի է նրան թույլ շտալ մարտի մեջ մտնել<sup>4</sup>:

Հետևաբար, գնահատելով հակառակորդին, անհրաժեշտ է իմանալ նրա պլանն իր բոլոր արժանիքներով և թերություններով<sup>5</sup>: Այնպես արա, որպեսզի իմանաս նրա հանգիստը դեկավարող սկզբունքները, ցույց տուր նրան որևէ ձև և կիմանաս նրա կյանքի ու մահվան տեղը, բախվելով հակառակորդի հետ, կիմանաս, թե որտեղ նա ունի առատություն և որտեղ՝ պակաս<sup>6</sup>:

Ուստի սեփական զորքին տրվող ձևի ծայրահեղ սահմանը՝ այնպես անել, որպեսզի ձև չլինի: Երբ ձև չկա, ապա նույնիսկ իմաստունը չի կարող որևէ բանից գլուխ հանել:

Օգտվելով այդ ձևից, հաղթանակը դրվում է զանգվածների վրա, սակայն զանգվածն այդ մասին չի կարող իմանալ: Բոլոր մարդիկ գիտեն այն ձևը, որից օգտվելով ես հաղթել եմ, սակայն չգիտեն այն ձևը, որից օգտվելով ես կազմակերպել եմ հաղթանակը: Ուստի մարտում տարած հաղթանակը հնարավոր չէ կրկնել միևնույն տեսքով, այն համապատասխանում է ձևերի անվերջ տեսակներին:

Ջորջի ձևը նման է ջրին, ջուրը բարձունքի վրա չի մնում և ձգտում է դատարկությանը: Ջուրը հաստատում է իր հոսքը՝ կախված տեղանքից, գորքը հաստատում է հաղթանակը՝ կախված հակառակորդից:<sup>7</sup>

Ուստի գորքը չունի մշտական հզորություն, ջուրը չունի մշտական ձև: Ով կարողանում է հակառակորդից կախված օգտվել փոփոխություններից և փոխակերպումներից ու նրանց հիման վրա հասնում է հաղթանակի, նա կոչվում է Աստվածություն<sup>8</sup>:

Հետևաբար, բնության հինգ ուժերի մեջ չկան մշտապես հաղթողներ: Տարվա շորս եղանակների մեջ չկա մշտապես սահմանվածը: Արևն ունի կարճատևություն և երկարատևություն, լուսինն ունի կյանք և մահ<sup>9</sup>:

## ԳԼՈՒԽ ՅՈՒԹԵՐՈՐԴ

### Պայթարը պատերազմում (Ցյունչժեն)

Սուն Յըզին ասաց. սովորաբար պատերազմի կանոնները հետևյալն են՝ զորավարը թագավորից ստանալով կարգադրություն, հավաքում է զորքը, կենտրոնացնում է ուժերը և ռազմարշավի ելնելով՝ հակառակորդի հետ շփման մեջ է մտնում: Չկան այնպիսի դժվարություններ, ինչպիսին՝ պայքարն է պատերազմում<sup>1</sup>:

Պայքարի դժվարությունն այն է, որպեսզի շրջանցիկ ճանապարհը վերածի ուղիղի, աղետը վերածի օգուտի: Ուստի, նախընտրելով շրջանցիկ ճանապարհ, հրապուրիր հակառակորդին օգուտով: Հակառակորդից ավելի ուշ գուրս գալով, հասիր նրանից շուտ: Ով գիտի այս, նա օգտագործում է ուղիղ և շրջանցիկ ճանապարհները:

Հետևաբար, պայքարը պատերազմում հանգեցնում է օգուտի, պայքարը պատերազմում ստեղծում է նաև դժվարություններ: Եթե պայքարել միայն օգուտի համար, ողջ զորքը ոտքի հանելով, ապա որոշված նպատակին չես հասնի: Եթե պայքարել շահի համար՝ շարժունակ բանակ ուղարկելով, ապա հարկադրված կգոհես գումակը: Ուստի, երբ պայքարում են շահի համար 100 լիից հեռու, հանելով սպառազինությունը, առանց հանգստի օր ու գիշեր սլանալով, կրկնապատկելով երթուղիները և միավորելով անցումները<sup>2</sup>, ապա գերի են ընկնում բոլոր երեք բանակների հրամանատարները<sup>3</sup>: Դիմացկուններն առաջ են անցնում, թուլերը քարշ են գալիս ետևում, և ողջ զորքից նպատակին է հասնում մեկ տասներորդը: Երբ պայքարում են շահի համար հիսուն լիից հեռու, ապա կկորցնեն առաջավոր բանակի հրամանատարին, և ողջ զորքից (միայն) կեսն է հասնում նպատակին: Երբ պայքարում են շահի համար երեսուն լիից հեռու, ապա նպատակին հասնում է երկու երրորդը:

Ուստի, երբ շունի գումակ, նա (բանակը) կործանվում է, եթե չկա պարեն և (անասնա)կեր, այն (բանակը) կործանվում է, եթե չկա պաշարը այն (բանակը) կործանվում է:

Հետևաբար, ով չգիտի իշխանների դիտավորությունները, նա չի կարող նրանց հետ դաշինք կնքել: Ով չգիտի տեղանքի՝ լեռների ու անտառների, գառիթափերի և ուղղաբերձ դարափների, ճահճուտների ու ճահիճների բնույթը, նա չի կարող ղեկավարել զորքը: Ով չի օգտագործում տեղական ուղեկցորդներին, նա չի կարող օգտվել տեղանքի առավելություններից:

Ուստի, ով վարում է պատերազմը, շարժվում է խաբելու ուղիով, շարժվում է հանուն օգուտի, փոխում է դրությունը՝ բաժանելով և կենտրոնացնելով:

Հետևաբար նա (զորավարը) սրընթաց է քամու նման, հանգիստ է անտառի նման և խժուում է կրակի նման, (իսկ) նրա շարժումները նման են ամպրոպի հարվածին:

Գյուղերը թալանելու համար՝ զորքը մասերի բաժանիր, տարածքը գրավելիս՝ տիրի շահավետ կետերին:

Նախքան առաջ շարժվելդ, ամեն ինչ ծանր ու թեթև արա: Ով վաղ-օրոք գիտի ուղիղ և շրջանցիկ ճանապարհների սկզբունքները՝ նա հաղթում է: Դրանք են պատերազմում պայքարի օրենքները:

«Զորքերի ղեկավարումը» գրքում ասված է. « Ձայնով արտասանած բառն այնքան էլ հեռու չեն լսում, ուստի մտքրեցին կոչնազանգը (գոնգը) և թմբուկները, երբ նայում և այնքան էլ հեռու չեն տեսնում, այդ պատճառով մտքրեցին դրոշակներն ու դրոշները»<sup>4</sup>: Չէ՞ որ ով օգտագործում է կոչնազանգերն ու թմբուկները, դրոշներն ու դրոշակները՝ նա միավորում է իր ռազմիկների աչքերն ու ականջները: Եթե բոլոր ռազմիկները նպատակադրվում են մեկ ուղղության վրա, ապա քաջը միայնակության մեջ առաջ չի շարժվում, վախկոտներին միայնակ թույլ չեն տալիս ետ գնալ<sup>5</sup>: Դա է մարդկանց զանգվածների ղեկավարման օրենքը:

Հետևաբար, գիշերային մարտի ժամանակ շատ կրակ և թմբուկներ, (իսկ) ցերեկային մարտում շատ դրոշակներ են օգտագործում: Այդ նույն միջոցով մոլորության մեջ են գցում հակառակորդի աչքերն ու ականջները:

Այդ պատճառով ողջ զորքից կարելի է խլել ոգին, զորքերի հրամանատարից՝ խլել սիրտը: Ուստի առավոտյան հոգով քաջ են, ցերեկը հոգով ծուլանում են, (իսկ) գիշերը մտածում են ճամբար վերադառնալու մասին: Հետևաբար, ով որ պատերազմը վարպետորեն է վարում, խուսափում է հակառակորդից, երբ նա հոգով քաջ է և հարվածը հասցնում է այն ժամանակ, երբ նա ծուլացել կամ էլ մտածում է ճամբար վերադառնալու մասին: Դա է ոգու ղեկավարումը:

Գտնվելով կարգ ու կանոնի վիճակում, սպասում են հակառակորդի շրջանում անկարգությունների, գտնվելով հանգստության վիճակում, սպասում են հուզումների հակառակորդի շրջանում: Դա է ղեկավարումը սրտով:

Մոտիկ գտնվելով, սպասում են հեռու գտնվողներին, հանգստանալով, սպասում են հոգնածներին, լինելով կուշտ, սպասում են սովածներին: Դա է ուժի կառավարումը:

Ձեռնպահ մնա հակառակորդի վրա հարձակումից, երբ նրա դրոշակները կարգին են, մի հարձակվիր հակառակորդի ճամբարի վրա, երբ նա պահպանում է մարտակարգը: Դա է փոփոխությունների ղեկավարումը:

Հետևաբար, պատերազմի վարման կանոնն այսպիսին է՝ մի հարձակվիր բարձունքի վրա գտնվող հակառակորդի վրա, մի հակազդիր բարձունքից իջնող հակառակորդին, մի հետապնդիր շինծու փախչողին, մի հարձակվիր քաջ զինվորների վրա, մի գայթակղվիր ռազմական խայծով, մի կանգնեցրու տուն վերադարձող հակառակորդին, անպայման մի կողմը բաց թող\*, ճնշում մի գործադրիր հակառակորդի վրա, երբ նա անելանելի վիճակում է գտնվում<sup>6</sup>: Դա է պատերազմի վարման կանոնը:

## ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

### Ինը փոփոխություններ

#### (Յգուլբյան)

Սուն Յըզին ասաց. սովորաբար պատերազմի վարման կանոնները հետևյալն են՝ զորավարը տիրակալից հրաման ստանալով, հավաքում է զորքը և կենտրոնացնում է ուժերը:

Դժվարանցանելի տեղանքում ճամբար մի խփիր, մեծ ճանապարհների հատման վայրում դաշինքներ կնքիր, անապատային տեղանքում մի հապաղիր, շրջապատման վայրում մտածիր, մահվան տեղանքում կովիր:

Կան ճանապարհներ, որոնցով չեն գնում, կան զորքեր, որոնց վրա չեն հարձակվում, կան ամրոցներ, որոնք չեն գրոհում, կան տեղանքներ, որոնց համար չեն կռվում, լինում են տիրակալի հրամաններ, որոնք չեն կատարվում:

Հետևաբար, զորավարը, որը հասկանում է «ինը փոփոխությունների» էությունը, զորավարը, որը չի հասկանում «ինը փոփոխությունների» էությունը, նույնիսկ գիտենալով տեղանքի ձևը, չի կարող օգտագործել նրա օգուտը<sup>1</sup>: Զորքերի ղեկավարման ժամանակ, եթե չգիտես «ինը փոփոխությունների» ար-

\* Դեռևս հնում Սուն Յըզին նկատել է այն, ինչը արևմտասելրոպական ռազմական տեսաբաններն անվանել են «ոսկյա կամուրջ»:

վեստը, չես կարող տիրապետել մարդկանց ղեկավարման արվեստին, նույնիսկ եթե գիտես «հինգ օգուտը»<sup>2</sup>:

Ուստի խելացի զորավարի գործողությունների կշռադատվածությունն այն է, որ նա պարտադիր կերպով միավորի օգուտն ու վնասը: Երբ օգուտի հետ միավորում են վնասը, ապա գործը կարելի է իրականացնել, երբ վնասի հետ միավորվում են օգուտը՝ ապա աղետը կարելի է վերացնել<sup>3</sup>: Հետևաբար իշխաններին հնազանդեցնում են վնասով, իշխաններին հարկադրում են ծառայել գործով, իշխաններին հարկադրում են ինչ-որ տեղ շարժվել շահից դրդված:

Ուստի պատերազմի վարման կանոնները պահանջում են հույսը չդնել այն բանի վրա, թե հակառակորդը չի գա, այլ հիմնվել նրան դիմավորելու մեր պատրաստվածություն վրա, չհուսալ, թե նա չի հարձակվի, այլ հիմնվել այն բանի վրա, որ մենք անհնարին կդարձնենք նրա հարձակումը:

Հետևաբար, զորավարի մոտ կան հինգ վտանգավոր սխալներ՝ երբ նա ձգտում է անպայման մահանալ՝ նա կարող է սպանվել, երբ նա ձգտում է անպայման կենդանի մնալ՝ նա կարող է գերի ընկնել, երբ նա շուտ է զայրանում՝ նրան կարող են արհամարհել, երբ նա պատվի նկատմամբ զգայուն է՝ նրան կարող են խայտառակել, երբ նա սիրում է մարդկանց՝ նրա համար կարող են անհանգստություններ ստեղծել<sup>4</sup>: Այս բոլոր վտանգները զորավարի թերություններն են, (և) աղետ են պատերազմի ժամանակ: Ջախջախում են զորքին, սպանում են զորավարին անպայման այս հինգ վտանգներով: Չի կարելի այդ չիմանալ:

## ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

### Չորքն արշավի ժամանակ (Սիևգյուն)

Սուն Յրզին ասաց. սովորաբար զորքի տեղակայումը և հակառակորդին հետևելը իրականացվում է հետևյալ կերպ. լեռներով անցնելիս՝ շարժվիր հովիտներով, տեղավորվիր բարձունքի արևային

կողմի վրա, բարձրում գտնվող հակառակորդի վրա մի հարձակվիր: Ահա ամեն ինչ լեռներում գորքի տեղակայման մասին:

Ջրային արգելքն անցնելիս, անպայման գետից հեռու գտնվիր: Երբ ներխուժած հակառակորդն անցնում է գետը, նրան ջրի վրա մի դիմավորիր: Ընդհանրապես շահավետ է նրա մի մասին թույլ տալ գետն անցնել և հետո հարվածել: Ով որ ցանկանում է հակառակորդի հետ մարտի բռնվել, չպետք է նրան գետի մոտ հանդիպի: Տեղավորվիր գետի արևային կողմում: Հակառակորդի հետ հանդիպելու համար մի շարժվիր հոսանքի ուղղությամբ: Ահա ամեն ինչ գորքը ջրային տարածքի վրա տեղակայելու մասին:

Ճահճով անցնելիս, շտապիր արագ հեռանալ, մի հապաղիր: Եթե քեզ առաջիկայում սպասվում է մարտը վարել ճահճի շրջանում, անպայման տեղավորվիր այնտեղ, որտեղ կա ջուր և խոտ, իսկ թիկունքում էլ անտառ լինի: Ահա այն ամենը, ինչ վերաբերում է ճահճում գորքի տեղակայմանը:

Հարթավայրային տեղանքում տեղավորվիր (այնպիսի) հարմար տեղում, որտեղ աչից ու ձախից կան բարձունքներ, վտանգը սպասիր առջևից, իսկ թիկունքն ապահովված է: Ահա այն ամենը, ինչ վերաբերում է հարթավայրում գորքերի տեղակայմանը:

Չորքերի տեղակայման այս շորս շահավետ եղանակներն ապահովեցին հուանդիի հաղթանակը շորս կայսրերի նկատմամբ<sup>1</sup>:

Ընդհանրապես գորավարը պետք է սիրի բարձր վայրերը և ատի ցածրերը, գնահատի արևային լույսը և մերժի ստվերը, հոգ տանի (մարդկանց) կյանքի մասին և հաշվի առնի տեղանքի իրողությունը, այդ դեպքում գորքերում հիվանդություններ չեն լինի: Դա կոչվում է պարտադիր հաղթանակ:

Բլրապատ և բարձունքաշատ տեղանքում տեղավորվիր նրանց արևային կողմում, դրանք ունեցիր աչից և թիկունքում, դա շահավետ է գորքի համար: Այդպիսին է տեղանքի օգնությունը:

Եթե գետի վերին հոսանքերում անձրևներ են եկել, և ջուրը փրփրում է, ապա նա, ով ցանկանում է (գետն) անցնել, թող սպասի, մինչև

գետը հանդարտվի: Ընդհանրապես, այն տեղանքում, ուր կան ուղղաձիգ ժայռեր, բնական ջրհորներ, քարանձավներ, բնական ծուղակներ, ճահճուտներ, բնական ձեղքեր, անպայման փութացեք նրանցից հեռանալ և մի մոտեցեք նրանց: Ինքդ հեռացիր դրանցից, իսկ հակառակորդին հրապուրելով, տար այնտեղ: Այնպես արա, որ նման տեղանքը գտնվի հակառակորդի թիկունքում:

Եթե զորքի տեղակայման վայրում կան ձորակներ, խոտածածկ ճահճուտներ, անտառներ, թփեր, մացառուտներ՝ անպայման հետազոտիր դրանք: Այդպիսի վայրերում դարաններ են լինում, և գտնվում են հակառակորդի դետքերը:

Երբ հակառակորդը մոտիկ է գտնվում, նա իրեն լուռ է պահում, դա նշանակում է, որ նա ցանկանում է, որպեսզի դու առաջանաս: Երբ հակառակորդը հարմար է տեղավորված, նշանակում է՝ նա շահ ունի:

Երբ ծառերը սկսում են շարժվել, նշանակում է՝ նա (հակառակորդը) մոտենում է, երբ խոտից պատրաստված մեծ քանակությամբ արգելափակիչներ են պատրաստված, նշանակում է՝ նա ցանկանում է քեզ մոտորություն մեջ գցել, որտեղ թռչունները դեպի վեր են թռչում՝ (նշանակում է, որ) այնտեղ դարան է արված, եթե գազանները վախեցած փախչում են՝ այնտեղ ինչ-որ մեկը թաքնվել է: Երբ փոշին վեր է բարձրանում, նշանակում է՝ մարտակառքերն են շարժվում, երբ փոշին բարձրանում է ցածր և լայն, նշանակում է՝ ամբոխն է գալիս (մեծ թվով հետիոտն մարտիկներ), երբ փոշին տարբեր ուղղություններով է բարձրանում, նշանակում է՝ վառելիք են հավաքում, եթե փոշին քիչ է և այս ու այն կողմ է շարժվում, նշանակում է՝ հակառակորդը ճամբար է կազմակերպում:

Երբ հակառակորդի ճառերը խոնարհ են, իսկ նախապատրաստություններն ուժեղացված, նշանակում է՝ նա պատրաստվում է հարձակման, երբ նրա ճառերը հանդուգն են և նա փորձեր է անում առաջ շարժվել, նշանակում է՝ նա պատրաստվում է նահանջել: Երբ նրա թեթև մարտակառքերն առաջ են գալիս, իսկ զորքը տեղավորվում է նրանց թևերում, նշանակում է՝ հակառակորդը մարտակարգ է կազմում: Եթե հակառակորդն ընկճված չէ և խաղաղություն է խնդրում, նշանակում է՝ նա

գաղտնի դիտավորություն ունի: Երբ նրա մոտ արագ այս ու այն կողմ են վազում, և ռազմիկները մարտակարգեր են գրավում, նշանակում է՝ պահճը հասել է: Երբ նրա մոտ ոմանք հարձակվում, իսկ ուրիշները նահանջում են՝ նշանակում է, որ նա փորձում է հրապուրել (հարձակման): Երբ նրա ռազմիկները զենքին հենված կանգնած են՝ նշանակում է, որ նրանք սոված են: Երբ նրա (հակառակորդի) ջրկիրները մոտենալով ջրին, սկզբում իրենք են խմում՝ նշանակում է նրանք տառապում են ծարավից: Երբ նա տեսնում է շահճը և չի հարձակվում, նշանակում է՝ նա ուժասպառ է եղել:

Որտեղ թռչունները հավաքվում են երամներով՝ այնտեղ ոչ ոք չկա<sup>2</sup>: Երբ գիշերը հակառակորդի մոտ միմյանց ձայն են տալիս՝ նշանակում է, որ այնտեղ վախենում են: Երբ զորքը կազմալուծված է՝ նշանակում է, որ զորավարը հեղինակություն չունի: Երբ գրոշակներն ու դրոշները տեղից տեղ են փոխադրվում, նշանակում է՝ տեղի են ունենում անկարգություններ: Երբ նրա (հակառակորդի) հրամանատարները զայրանում են՝ նշանակում է՝ զինվորները հոգնել են: Երբ հակառակորդի զորքում ձիերին կերակրում են կորեկաձավարով, իսկ իրենք միս են ուտում, սափորները չեն կախում և չեն վերադառնում իրենց ճամբարը, նշանակում է, որ նրանք հուսահատության են հասել, ինչպես ավազակները<sup>3</sup>:

Երբ զորավարը ռազմիկների հետ զրուցում է երկար, քնքուշ, հարգանքով, նշանակում է՝ նա կորցրել է զանգվածների վստահությունը: Երբ նա (զորավարը) հաճախ է պարզևատրում, նշանակում է՝ զորքը գտնվում է դժվարություն մեջ, երբ հաճախ է պատժում, նշանակում է՝ ընկել է կարգապահությունը: Երբ նա սկզբում դաժան է, իսկ հետո վախենում է զանգվածներից, նշանակում է՝ ռազմական արվեստի գեր անհասկացություն:

Երբ հակառակորդի կողմից գալիս են դեսպանները հաճոյախոսություններով և սիրալիրություններով, նշանակում է՝ նա զինադադար է խնդրում: Երբ հակառակորդի զորքը զրգոված առաջ է գալիս, սակայն երկար ժամանակ չի ցանկանում մարտի մեջ մտնել և ետ չի քաշվում՝ այդ դեպքում պահանջվում է ուշադիր հետևել նրան:

Պարտադիր չէ գորքն սվելացնել մինչև քանակական գերազանցությունը, չի պահանջվում առաջ գնալ միայն ռազմական հզորությունը: Բավական է ունենալ անհրաժեշտ քանակությունը գորք և կենտրոնացնելու ճանապարհով ու դրություն ճիշտ գնահատմամբ կարելի է վերցնել (հաղթել) հակառակորդին: Ով չի մտածում և հակառակորդին թեթևամտորեն է վերաբերվում, նա անպայման նրա (հակառակորդի) գերին է դառնում<sup>4</sup>:

Եթե ռազմիկներին, մինչև նրանց քո հետ կապվելը, սկսես պատժել, նրանք քեզ չեն ենթարկվի, և այդ դեպքում նրանց դժվար կլինի օգտագործել: Եթե ռազմիկները լավ են տրամադրված քո նկատմամբ, սակայն պատիժներ չեն կիրառվում, այդ դեպքում նրանց բացարձակապես չի կարելի օգտագործել<sup>5</sup>:

Ուստի, հրամայելով ռազմիկներին՝ օգտվիր քաղաքացիական սկզբունքից՝ պահանջելով նրանցից լիակատար հնազանդություն, անպայման օգտվիր զինվորական սկզբունքներից, երբ հրամաններն ընդհանրապես կատարվում են, այն ժամանակ, երբ դու ժողովրդին մի ինչ-որ բան ես հրամայում՝ ժողովուրդը հնազանդվում է, երբ հրամանները ընդհանրապես չեն կատարվում, ապա, երբ դու որևէ բան ես հրամայում՝ ժողովուրդը չի ենթարկվում: Երբ հրամաններն ընդունվում են վստահությունով և պարզ գիտակցմամբ, ապա դու և զանգվածները փոխադարձաբար հասկանում եք միմյանց<sup>6</sup>:

## ԳՆՈՒՄ ՏԱՍԵՐՈՐԴ

### Տեղանքի ձևերը

#### (Դիսին)

Սուն Յրզին ասաց. տեղանքն իր ձևով լինում է՝ մատչելի, թեք, կտրտված, դաշտավայրային, լեռնային, հեռավոր:

Երբ ես կարող եմ անցնել և նա (հակառակորդը) կարող է գալ, այդպիսի տեղանքը կոչվում է մատչելի: Մատչելի տեղանքում առաջին հերթին զբաղեցրու արևային կողմի բարձունքները և ապահովիր մա-

տակարարման ուղիների պահպանումը, այդ դեպքում օգուտ (առավել-լուծյուն) կունենաս:

Երբ դյուրին է գնալ և դժվար է վերադառնալ, այդպիսի տեղանքը կոչվում է թեք: Թեք տեղանքում, եթե հակառակորդը պատրաստ չէ մարտի, եթե առաջանաս՝ կհաղթես նրան, եթե հակառակորդը պատրաստ է մարտի, առաջանալով՝ չես հաղթի նրան, վերադառնալ դժվար է, օգուտ չես ունենա:

Երբ և քո, և հակառակորդի համար հարձակվելը շահավետ չէ, այդպիսի տեղանքը կոչվում է կտրտված: Կտրտված տեղանքում մի հարձակվիր նույնիսկ այն ժամանակ, երբ հակառակորդը տալիս է այդ հնարավորությունը, ետ քաշիր գորքերդ և հեռացիր, հարկադրի հակառակորդին անցնել այնտեղ կիսով չափ (ուժերի մի մասով), հարվածելով նրան՝ օգուտ կունենաս:

Դաշտավայրային տեղանքում, եթե առաջինն այն գրավես, տեղավորի (գորքը) ամենուրեք և սպասիր հակառակորդի մոտենալուն: Եթե հակառակորդը, կանխելով, կգրավի այն, մի հետևիր նրան: Հետևիր նրան (այն դեպքում), երբ նա այն ամբողջությամբ չի գրավի:

Լեռնային տեղանքում, եթե առաջինը այն գրավես, անպայման տեղավորվիր արևային կողմի բարձունքի վրա և սպասիր հակառակորդի մոտենալուն: Եթե հակառակորդը, կանխելով քեզ, կգրավի այն, ետ քաշիր գորքերդ և հեռացիր: Մի հետևիր նրան:

Հեռավոր տեղանքում, ուժերի հավասարության դեպքում դժվար է մարտը սկսել: Եթե սկսես մարտը, (ապա) չես շահի:

Այս բոլոր վեց կանոնները ուսմունքն են տեղանքի մասին: Զորավարի հիմնական պարտականությունն է դրանք լավ իմանալ:

Ուստի, երբեմն գորքը հապճեպորեն նահանջում է, երբեմն այն ուժասպառ է լինում, երբեմն ընկնում է հակառակորդի ձեռքը, երբեմն նա կազմալուծվում է, երբեմն անկարգություններ են ծագում: Այդ վեց աղետները միակը չեն: Դրանք առաջանում են զորավարի սխալների հետևանքով: Եթե հավասար պայմաններում մեկը հարձակվում է տասի վրա, արդյունքում ստացվում է հապճեպ նահանջ<sup>1</sup>: Եթե ռազմիկներն ու-

ժեղ են, իսկ հրամանատարները թույլ՝ նշանակում է զորքն անհնազանդ է: Երբ հրամանատարներն են ուժեղ, իսկ ռազմիկները թույլ՝ նշանակում է՝ զորքը կզերվի հակառակորդի կողմից: Երբ բարձրաստիճան հրամանատարներն իրենց դժգոհությունն են արտահայտում, չեն ենթարկվում իրենց պետին, իսկ հակառակորդի հետ բախման ժամանակ իրենց պետի նկատմամբ ունեցած թշնամանքի պատճառով հակառակորդի դեմ ինքնագլուխ մարտ են սկսում, նշանակում է՝ զորավարը չգիտի նրանց ընդունակությունները, այդպիսի պայմաններում զորքը կկործանվի: Եթե զորավարն ի վիճակի չէ գնահատել հակառակորդին, երբ նա իր փոքրաթիվ ուժերով հարձակվում է հակառակորդի մեծաքանակ ուժերի վրա, երբ զորքում չկան հարվածային ջոկատներ, նշանակում է՝ զորքը դատապարտված է փախուստի: Այս վեց կանոնները պարտություն մասին ուսմունքն են: Զորավարի հիմնական պարտականությունն է՝ դրանք հաստատորեն իմանալ:

Ձէ՞ որ տեղանքի ձևն օգնում է զորքերին: Ուստի գլխավոր զորահրամանատարի խնդիրն է՝ կարողանալ գնահատել հակառակորդին, կազմակերպել հաղթանակը, հաշվի առնել անանցանելիությունը, կիրճերը, հեռու և մոտ լինելը: Ով մարտը վարում է գիտենալով այս, նա անպայման հաղթում է, ով որ վարում է մարտը չգիտենալով այս, նա անպայման պարտություն է կրում<sup>2</sup>:

Ուստի, եթե համոզված ես, որ պատերազմի վարման մասին ուսմունքի համաձայն անպայման կհաղթես, ապա կովիր, նույնիսկ այն դեպքում, եթե տիրակալն ասում է՝ «Մի կովիր»: Եթե պատերազմի մասին ուսմունքի համաձայն չես հաղթելու, մի կովիր, եթե նույնիսկ տիրակալն ասում է. «Անպատճառ կովիր»<sup>3</sup>:

Հետևաբար, երբ զորավարը մարտի է ելնում, փառք չփնտրելով, իսկ նահանջում է չվախենալով խայտառակությունից, այս պարագայում նա մտածում է ժողովրդի մասին՝ այդպիսի զորավարը գանձ է պետություն համար:

Երբ ռազմիկներին կգիտես (կընդունես) այնպես, ինչպես քո երեխաներին, այդ դեպքում նրանց հետ կարող ես գնալ նույնիսկ ամենա-

խոր կիրճերը: Երբ ռազմիկներին կդիտես (կվերաբերվես) այնպես, ինչպես քո սիրելի որդիներին, այդ դեպքում նրանց հետ կարող ես գնալ թեկուզ մահվան: Երբ նրանց հետ առատաձեռն լինես՝ ապա չես կարող նրանց հրամայել, երբ անկարգություններ առաջանան, ապա դու չես կարող կարգ ու կանոն հաստատել՝ նման դեպքում նրանք նման են քմահաճ որդիների՝ նրանցից օգտվելն անհնարին կլինի<sup>4</sup>:

Երբ գիտակցում ես, որ քո ռազմիկների հետ կարելի է հարձակվել հակառակորդի վրա, սակայն չգիտես, որ հակառակորդի վրա չի կարելի հարձակվել՝ հաղթանակը կիսով չափ կլինի: Երբ գիտես, որ հակառակորդի վրա կարելի է հարձակվել, սակայն չգիտես, որ քո ռազմիկների հետ չի կարելի հարձակվել՝ հաղթանակը կիսով չափ կլինի: Երբ գիտես, որ հակառակորդի վրա հարձակվել կարելի է, որ քո ռազմիկների հետ կարող ես հարձակվել, սակայն չգիտես, որ տեղանքի ձևից ելնելով չի կարելի նրա վրա հարձակվել՝ հաղթանակը կիսով չափ կլինի:

Ուստի, ով գիտի պատերազմը, առաջանալով՝ չի սխալվի, սկսելով՝ փորձանքի մեջ չի ընկնի:

Հետևաբար ասվում է՝ եթե գիտես նրան (հակառակորդին) և գիտես քեզ՝ հաղթանակն ապահովված է, եթե դու նաև գիտես Երկինքն ու Երկիրը՝ հաղթանակն անպայման կարող է լինել ամբողջական:

## ՓՆՈՒՄ ՏԱՄՆԵԿԵՐՈՐԴ

### Ինը տեղանք

#### (Յըզյուդի)

Սուն Յըզին ասաց. պատերազմի վարման կանոնների համաձայն, գոյություն ունեն՝ սփռված տեղանքներ, թեթև (կամ սահմանային) տեղանքներ, վիճարկելի տեղանքներ, լուրջ տեղանքներ, դժվարանցանելի տեղանքներ, շրջապատման տեղանքներ, մահացու տեղանքներ:

Երբ իշխանները մարտնչում են իրենց տարածքի սահմաններում՝ դա սփռված տեղանքն է. երբ թափանցում են օտար տարածքը, սակայն

այնքան էլ չեն խորանում՝ թեթև (սահմանային) տարածքն է. երբ ես կզավթեմ և այն ինձ համար շահավետ է, նա (հակառակորդը) կզավթի՝ նրան նույնպես շահավետ է՝ վիճարկելի տեղանքն է: Երեք հարևան իշխանությունների միջև գտնվող տարածքը ով կգրավի առաջինը՝ նա կտիրի ողջ երկնաբարձունքին՝ մեծ ճանապարհներով հատող տեղանքն է. երբ օտար տարածքի մեջ խորանում են և թիկունքում թողնում են մեծ ամրացված շատ քաղաքներ՝ լուրջ տեղանքն է. երբ անցնում են լեռներով և անտառներով, անդունդների և զառիթափերի վրայով, ճահճուտներով և ճահիճներով և ընդհանրապես դժվարանցանելի ճանապարհներով՝ դժվարանցանելի տեղանքն է, (իսկ) երբ ճանապարհի մուտքը նեղ է, իսկ ճանապարհը, որով գնում են, ոլորապտույտ, երբ նա (հակառակորդը) փոքրաթիվ ուժերով կարող է հարձակվել իմ մեծաքանակ ուժերի վրա՝ շրջապատման տեղանքն է. երբ արագ մարտի մեջ չեն մտնում, կործանվում են՝ մահվան տեղանքն է՝:

Ուստի սփռված տեղանքում մի կռվիր, թեթև տեղանքում մի հապաղիր, վիճարկելի տեղանքում մի հարձակվիր, բաց տեղանքում կապը մի կտրիր, մեծ ճանապարհների հատման տարածքում միավորվիր դաշնակիցների հետ, լուրջ տեղանքում թալանիր, դժվարանցանելի տեղանքն անցիր, շրջապատման տեղանքում խորհիր, մահվան տեղանքում կռվիր:

Հնում ասում էին՝ լավ է կռվել նա, ով կարող է հակառակորդին այնպիսի կացություն մեջ դնել, որ նրա առաջավոր և թիկունքային մասերն իրար հետ փոխադարձ կապ չունենան, մեծ և փոքր ուժերը չհենվեն միմյանց վրա, ազնվազարմներն ու ստորինները չօգնեն միմյանց, բարձրագույններն ու ստորադասները կապված չլինեն միմյանց հետ, նրա (հակառակորդի) մոտ ռազմիկները բաժանված են եղել, խոչընդոտել են նրանց միավորումը, իսկ եթե զորքը միավորվել է, ապա, այնուամենայնիվ, միասնական չեն եղել: Շարժվել է, երբ ձեռնտու է եղել, երբ ձեռնտու չի եղել՝ մնացել է տեղում:

Համարձակվում եմ հարցնել, իսկ եթե հակառակորդը գա մեծ ուժերով, լրիվ մարտակարգով, ինչպե՞ս նրան դիմավորել: Ասեմ՝ նախ գրավիր այն, ինչը նրա համար թանկ է, երբ կգրավես՝ նա կհնազանդվի քեզ:

Պատերազմում ամենագլխավորը արագությունն է: Գրավիր այն, ինչին նա (հակառակորդը) չի հասցրել մոտենալ: Շարժվիր այն ճանապարհներով, որի մասին չի էլ ենթադրել: Հարձակվիր այնտեղ, որտեղ նա չի գգուշանում:

Ընդհանրապես, հակառակորդի սահմանները ներխուժած օտարականի մտադրությունն այն է, որպեսզի իր ուշադրությունը կենտրոնացնի գլխավորի վրա, և այդ դեպքում տերը չի հաղթի:

Թալանիր բերրի արտերը, որպեսզի զորքի համար առատ պարեն ունենաս: Ուշագիր հետևիր քո ռազմիկների բարեկեցությանը, մի հոգնեցրու նրանց, ոգին ամրացրու և նրանց ուժերը կուտակիր: Զորքը շարժիր հաշվարկով և ծրագրի համաձայն, այնպես արա, որպեսզի հակառակորդը չկարողանա (կռահել) քո դիտավորությունները: Ռազմիկներիդ այնպիսի տեղում կանգնեցրու, որտեղ ելք չկա, այդ դեպքում նրանք կնախընտրեն մահը փախուստից, (իսկ) եթե նրանք պատրաստ են մեռնելու, ինչպես չհասնել հաղթանակի: Հրամանատարներն ու մյուսները նման դրություն ժամանակ լարում են իրենց բոլոր ուժերը: Երբ զորքը գտնվում է կործանման եզրին, (այն ժամանակ) նա ամուր կանգնում է (դիմակայում է): Երբ նա գտնվում է խորքում (հակառակորդի երկրի), նրան ոչինչ չի պահում: Երբ ելք չկա, նա (զորքը) անզիջում կռվում է:

Ուստի, քո զորքերն առանց հրամանի էլ զգուշ կլինեն, առանց պահանջելու՝ կատարող, առանց համոզելու՝ համերաշխ, առանց հրամանի՝ հավատարիմ:

Արգելեք հավատալ նախանշաններին, վերացրեք կասկածները, մինչև մահ մի երկյուղեք աղետներից:

Եթե ձեր ռազմիկների մոտ ավելորդ փող չկա, դա չի նշանակում, որ նրանք հարստություն չեն սիրում: Եթե նրանց կյանքը երկարատև չի, չի նշանակում, որ նրանք չեն սիրում երկարակեցությունը:

Այն օրը, երբ հրատարակվում է մարտական հրամանը, նստած հրամանատարների և ռազմիկների արցունքները հոսում են նրանց կրծքին, նրանց մոտ, ովքեր պառկած են, արցունքները հոսում են այտերով, բայց

բավական է, որ նրանք հայտնվեն անելանելի դրուժյան մեջ՝ նրանք կլինեն արի, ինչպես Չժուն և Գուլը<sup>2</sup>:

Հետևաբար, ով լավ է վարում պատերազմը, նման է Շուայթանին: Շուայթանը՝ Չանշան լեռների օձն է: Երբ նրա գլխին են հարվածում, նա գրոհում է պոչով, երբ հարվածում են նրա պոչին՝ նա հարձակվում է գըլխով, երբ հարվածում են նրա մեջտեղին, նա գրոհում է գլխով և պոչով<sup>3</sup>:

Համարձակվում եմ հարցնել, կարո՞ղ է արդյոք զորքը նմանվել Շուայթանին: Կասեմ՝ այո: Չէ՞ որ ուժենը և յուժենը թշնամի են միմյանց, սակայն երբ հայտվեն մի նավակի մեջ և սկսեն անցնել գետը և փոթորիկը վրա հասնի՝ նրանք կսկսեն միմյանց օգնել այնպես, ինչպես ձախ ձեռքն օգնում է աջին<sup>4</sup>:

Ուստի, երբ կկապես ձիերին և անիվները (մարտակառքերի) հողի մեջ կթաղես, այնուամենայնիվ, դրա վրա հուշս մի դիր<sup>5</sup>: Երբ բոլորը մի մարդու նման քաջ են՝ ապա միայն այդ ժամանակ հնարավոր կլինի իրականացնել զորքերի իսկական ղեկավարումը:

Ինչպես ուժեղները, այնպես էլ թուլները, կարող են օգտվել տեղանքի օրենքներից: Հետևաբար, ով վարպետորեն է վարում պատերազմը, նա իր զորքի ձեռքից բռնած, ինչպես մի մարդու, դուրս է բերում, թվում է, թե անելանելի դրուժյունից:

Չորքի հրամանատարը պարտավոր է լինել հանգիստ և դրանով ստեղծել անթափանցելիություն, լինել արդարացի և դրանով պահպանել կարգը, կարողանալ հրամանատարների և ռազմիկների աչքերն ու սկանչները մոլորություն մեջ գցել՝ նրանց պահելով անգիտություն մեջ, փոխել իր մտադրություններն ու պլանները, թույլ չտալ, որ որևէ մեկը դրանց մասին որևէ բան իմանա, փոխել իր գտնվելու վայրը, իր համար շրջանցիկ ճանապարհներ ընտրել, և թույլ չտալ, որպեսզի ուրիշներն այս մասին կռահեն:

Ղեկավարելով (զորքը) ճգնաժամային վիճակում, (նրան) զորքին դիր այնպիսի դրուժյան մեջ, ասես թե բարձունք ես բարձրացել և մի կողմ նետել աստիճանները: Երբ զորքը գլխավորելով կխորանաս իշխանների տարածքը՝ ցույց տուր քո վճռականությունը, վառիր նավերը, ջարդիր

կաթսաները<sup>6</sup>, ռազմիկներին դեկավարիո ինչպես ոչխարների հոտը, նրանց քշելով մեկ այստեղ, մեկ այնտեղ, նրանց պահելով անգիտության մեջ: Հավաքելով գորքը մեկ ամբողջության մեջ, նետիր նրանց ամենավտանգավոր տեղերը: Դա է գորքի հրամանատարի պարտականությունը:

Տեղանքի ինը տեսակների փոփոխությունները, խտացման և ձգման շահը<sup>7</sup>, մարդկային զգացմունքների օրենքները՝ այդ ամենը պետք է լավ իմանալ:

Օտարերկրացու գործողությունների ուղին ընդհանրապես, եթե հակառակորդի տարածքը շատ ես խորացել՝ կենտրոնացիր գլխավորի վրա, եթե այնքան էլ չես խորացել՝ ցրվածություն է առաջանում:

Երբ հեռանում են իրենց երկրից և գորքով անցնում են սահմանը՝ կտրվելու տեղանքն է, երբ չորս կողմը ճանապարհները բաց են՝ մեծ ճանապարհների խաչմերուկների տեղանքն է, երբ այնքան էլ չեն խորանում՝ թեթև (սահմանային) տեղանքն է, երբ թիկունքում թողնում են ամրացված կետեր, իսկ առջևում նեղ անցումներ՝ շրջապատման տեղանքն է, երբ գնալու տեղ չկա՝ մահվան տեղանքն է:

Հետևաբար, սիոված տեղանքում ես բոլորին կբերեմ միասնական նպատակադրվածության, թեթև տեղանքում ես կստիպեմ բոլոր գործասերին միմյանց հետ սերտորեն կապ պահպանել, վիճարկելի տեղանք ես կգնամ հակառակորդներիցս հետո, բաց տեղանքում ես ուշադիր կլինեմ պաշտպանության նկատմամբ, մեծ ճանապարհների հատման տեղանքում ես կամրապնդեմ կապը դաշնակիցների հետ, լուրջ տեղանքում ես կշարժվեմ ճանապարհով, շրջապատման տեղանքում ես կփակեմ անցումները, մահվան տեղանքում ես ռազմիկներին կներշնչեմ, որ նրանք չեն ապրի:

Ուստի ռազմիկների զգացմունքները հետևյալն են. երբ նրանք շրջապատված են՝ նրանք պաշտպանվում են, երբ ելք չկա՝ նրանք մարտնչում են, երբ դրությունը չափից դուրս վտանգավոր է՝ նրանք հնազանդվում են:

Հետևաբար, ով չգիտի իշխանների մտադրությունները, նա չպետք է նրանց հետ դաշինք կնքի, ով չգիտի տեղանքի ուրվապատկերները՝ լեռների ու անտառների, անդունդների ու կիրճերի, ճահճուտների և ճա-

հիճների՝ նա չի կարող ղեկավարել զորքը, ով չի օգտագործում տեղացի ուղեկցորդներին, նա չի կարող օգտվել տեղանքի առավելություններից:

Ով չգիտի ինը կանոնները, (նրա մոտ) զորքը չի լինի բավանի (հեգեմոնի) զորքը<sup>8</sup>: Եթե հեգեմոնի զորքը պատերազմի գնա մեծ պետություն վրա, ապա չի կարող հավաքել բավականաչափ ուժ, եթե նրա ողջ հզորությունը ուղղված լինի հակառակորդի դեմ, ապա չի կարող դաշինքներ կնքել:

Այդ պատճառով հեգեմոնը չի պայքարում դաշինքների համար Երկնաբարձունքում, չի աջակցում Երկնաբարձունքում ուրիշների իշխանությունների վերելքին, նա հավատում է իր սեփական հզորությանը և ազդում է հակառակորդի վրա իր հզորությամբ: Ուստի նա կարող է գրավել նրանց քաղաքները, ավերել նրանց պետությունները, բաժանում է պարգևներ, չի կառչում սովորական կանոններից, հրապարակում է հրամաններ՝ հիստեկելով սովորական ղեկավարման կանոններին: Հարձակվում է իր զորքերով, ասես՝ ղեկավարում է մի մարդու, հարձակվելով խոսում է գործերի մասին, չմտնելով մանրամասնությունների մեջ, հարձակվելով՝ խոսում է օգուտի, այլ ոչ թե վնասի մասին:

Այն բանից հետո, երբ զորքին կնետեն մահվան վայրը, նա կապրի, քանի որ, երբ զանգվածները (գինվորները) ընկնում են աղետի մեջ, այդ դեպքում նրանք կարող են վճռել մարտի ելքը:

Ուստի պատերազմի վարումն այն է, որպեսզի տրվելով հակառակորդի նկատառումներին, մանրագնին ուսումնասիրել դրանք, որից հետո անհրաժեշտ է հակառակորդի ուշադրությունը կենտրոնացնել մի ինչ-որ բանի վրա և սպանել զորավարին, եթե անգամ նա գտնվում է 1000 լիից հեռու: Դա նշանակում է՝ գործը հմտորեն ավարտել:

Հետևաբար, զորքերի ղեկավարումն ընդունելու օրը փակիր սահմանային անցարանները, արգելիլ պատվիրակների շփումները արտասահմանի հետ: Թող տիրակալը ղեկավարի արքունի խորհրդին և պատերազմական գործերի համար պատասխան պահանջի իր զորավարից:

Եթե (նկատես, որ) հակառակորդը բացվում և փակվում է, անպայման սրընթաց ներխուժիլ նրա մոտ<sup>9</sup>: Առաջին հերթին գրավիր այն, ինչն

արժեքավոր է նրա համար և հանգիստ սպասիր նրան: Գնա հաստատված կանոնների ուղիով և հետևիր հակառակորդին: Նման միջոցներով կվճռես պատերազմը:

Ուստի սկզբում եղիր ամոթխած, ինչպես կույսը, և հակառակորդը կբացի դռները, հետո եղիր արագ, ինչպես նապաստակը, և հակառակորդը չի հասցնի դիմադրություն ցույց տալ:

### ՔԼՈՒԽ ՏԱՄԵՐԿՈՒԵՐՈՐԴ

#### Հարձակում կրակով (խոզուն)

Սուն Յըզին ասաց. սովորաբար կրակով հարձակվելու հինգ եղանակ կա. առաջին՝ երբ վառում են մարդկանց, երկրորդ՝ երբ հրդեհում են պալատները, երրորդ՝ երբ վառում են գումակը, չորրորդ՝ երբ հրդեհում են պահեստները, հինգերորդ՝ երբ վառում են ջոկատները:

Կրակով գործելու համար անհրաժեշտ է առաջնորդվել քո խնդրով, և անպայման պետք է առկա լինեն հրդեհման անհրաժեշտ միջոցները: Կրակի օգտագործման հարմար պահին կրակ տալու համար ընտրում են հարմար օր: Ժամանակը հարմար է, երբ եղանակը չոր է, (իսկ) օրը հարմար է, երբ հայտնվում են Յըզի (մաղ), Բի (պատ), Ի (թև), Չժեն (արգելք) համաստեղությունները: Այս չորս համաստեղությունների օրերին եղանակը, սովորաբար, քամոտ է:

Կրակով հարձակվելիս սովորաբար ընտրում են կրակով հարձակվելու հինգ եղանակներից մեկը և հետևում նրան: Երբ կրակը բռնկվում է ներսում, անհրաժեշտ է նրան աջակցել դրսից: Երբ կրակը բռնկվում է, սակայն հակառակորդի ռազմիկները հանգիստ են, համբերատար սպասիր և մի հարձակվիր: Երբ կրակի ուժը հասնում է գագաթնակետին՝ հետևիր նրան, եթե կարելի է հետևել՝ մնա տեղում: Երբ կարելի է հրդեհել դրսից, մի սպասիր նրան դրա ներսում, ընտրիր ժամանակը և հրդեհիր: Երբ

հրդեհումն իրականացվում է քամու ուղղությունամբ, մի հարձակվիլի քամուն ներհակ: Երբ ցերեկը քամին երկար է փչում՝ երեկոյան այն թուլանում է:

Ընդհանրապես, պատերազմում պարտադիր է գիտենալ կրակով հարձակվելու հինգ տեսակները և մշտապես պաշտպանվել նրանցից: Հետևաբար, հարձակմանը կրակին ցույց տված օգնությունը հասկանալի է, հարձակմանը ջրի օգնությունը առավել ուժեղ է: Զրով կարելի է խափանել, սակայն նրանով գրավել չի կարելի:

Երբ ճակատամարտով ցանկանում ես հաղթել, հարձակումով ցանկանում ես գրավել, նման դեպքում, շօտագործելով այդ միջոցները (հարձակում կրակով և ջրով), կստացվի աղետ, (որը) կոչվում է «տևական ծախսեր»: Ուստի ասում են. խելացի տիրակալը հոգում է այդ միջոցների մասին, իսկ լավ զորավարը օգտագործում է դրանք:

Եթե շահ չունես, մի առաջացիր, եթե չես կարող ձեռք բերել, (ապա) զորքը գործողության մեջ մի մտցրու, եթե վտանգ չկա՝ մի պատերազմիր: Տիրակալը չպետք է զորքը բարձրացնի զայրույթի պատճառով, զորավարը մարտի մեջ չպետք է մտնի ռիսի պատճառով: Շարժվում են, երբ դա շահավետ է, երբ դա շահավետ չէ՝ մնում են տեղում: Զայրույթը կարող է փոխվել ուրախության, չարությունը կարող է փոխվել խնդության, սակայն կործանված պետությունը չի կարելի կրկին վերածնել, մահացածներին չի կարելի վերակենդանացնել:

Ուստի խելամիտ տիրակալը զգույշ է պատերազմի նկատմամբ, իսկ լավ զորավարը կանխում է այն: Դա է պետությունը պահպանելու, իսկ զորքն անվնաս պահելու ուղին:

### ՓՈԽ ՏԱՍԵՐԵՔԵՐՈՐԴ

### Հետախույզների օգտագործումը

#### (Յուսցրգյան)

Սուն Յրզին ասաց. ընդհանրապես, երբ ոտքի են հանում հարյուր հազարանոց զորք և այդ զորքը արշավում է 1000 լիից ավելի, ժողովրդի ծախսերը, տիրակալի ծախսերն օրական կազմում են 1000

ցըզին (ոսկի): Ինչպես երկրի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս հուզումներ են առաջանում: 700000 ընտանիքներ բեռնափոխադրման պարհակների հետևանքով ուժասպառ են լինում և չեն կարողանում զբաղվել իրենց աշխատանքով:

Միմյանցից պաշտպանվում են մի քանի տարի, իսկ հաղթանակը վճռվում է մեկ օրվա ճակատամարտով, և դրա համար խնայել տիտղոսներ, մի քանի հարյուր ցըզի (ոսկի) պարգևներ և միլենույն ժամանակ չիմանալ հակառակորդի դրուժյունը, (ապա) դա անմարդկայնություն բարձրագույն սահմանն է<sup>1</sup>:

Ով նման կերպ է գործում, մարդկանց հարմար զորավար չէ, իր տիրակալի համար օգնական չէ, հաղթանակի տիրակալը չէ:

Ուստի խելամիտ տիրակալը և իմաստուն զորավարը շարժվում և հաղթում էին, սխրանքներ էին գործում՝ գերազանցելով սովորական մահկանացուներին միայն այն պատճառով, որ նրանք կանխավ ամեն ինչ գիտեին:

Գիտելիքները չի կարելի վաղօրոք ստանալ դեերից և աստվածներից, չի կարելի ստանալ գործերում ընդօրինակելուց, չի կարելի ստանալ շահույթների և հաշվարկների ուղիով: Հակառակորդի դրուժյան մասին գիտելիքներն անպայման ստանում են մարդկանցից<sup>2</sup>:

Հետևաբար օգտագործում են հինգ տեսակի հետախույզների՝ կան տեղական հետախույզներ, կան ներքին հետախույզներ, կան վերադարձող հետախույզներ, կան մահվան հետախույզներ, կան կյանքի հետախույզներ:

Երբ հինգ կատեգորիաների հետախույզներն աշխատում են, (ապա) ոչ ոք չգիտի նրանց ուղիները: Այդ կոչվում է աստվածային գաղտնիք: Նրանք պետություն համար թանկարժեք զարդեր են:

Տեղական հետախույզներին հավաքագրում են հակառակորդի տեղացի բնակիչներից և օգտագործում են նրանց, ներքին հետախույզներին հավաքագրում են աստիճանավորներից և օգտագործում են նրանց, մահվան հետախույզները նրանք են, երբ կատարելով որևէ խաբեություն, ես այդ մասին տեղեկացնում եմ իմ հետախույզներին, իսկ նրանք

այդ մասին հայտնում են հակառակորդին, կյանքի հետախույզները նրանք են, ովքեր վերադառնում են հակառակորդի մասին տեղեկություններով:

Ուստի գործերում չկան այնպիսի սերտ հարաբերություններ, ինչպես հետախույզների հետ, չկան ավելի առատաձեռն պարգևներ, ինչպես հետախույզների համար, հետախույզների գործերից չկան առավել գաղտնի գործեր:

Բազմակողմանի գիտելիքների շտիրապետելով, չես կարող օգտագործել հետախույզներին, շտիրապետելով հումանիզմին և արդարացիությունը, չես կարող հետախույզներ ուղարկել, շտիրապետելով նրբանկատություն և դիտողականության՝ հետախույզներից չես կարող ստանալ օգտակար տեղեկություններ: Օ՛, նրբություն: Նրբություն: Չկա ոչինչ, որում կարելի չլինի օգտագործել հետախույզներին<sup>3</sup>:

Եթե որևէ հետախույզական տեղեկություն դեռևս չի ուղարկվել, իսկ նրա մասին արդեն հայտնի է դարձել, ապա հետախույզը և նա, ում այդ տեղեկությունը հայտնի է դարձել՝ սպանվում են:

Ընդհանրապես, երբ ցանկանում ես հարվածել հակառակորդի գործին, սպանել նրա մարդկանցից որևէ մեկին, անպայման նախապես իմացիր զորավարի պահակախմբի (մարդկանց) անունները, նրա (զորավարի) մերձավոր օգնականներին, մշտական այցելուներին, բարապաններին: Հրամայիր քո հետախույզներին՝ անպայման պարզեն այդ ամենը<sup>4</sup>:

Նկատելով քեզ մոտ հակառակորդի հետախույզի հայտնվելը, շահով գրավիր նրան քո կողմը, տար քեզ մոտ և տեղավորիր քո տանը: Այդ դեպքում կարելի է ձեռք բերել վերադարձող հետախույզի և օգտագործել նրան: Նրանից դու շատ բան կիմանաս: Ուստի կարելի է ձեռք բերել տեղական և ներքին հետախույզների և ուղարկել նրանց (հակառակորդի մոտ): Հետևաբար, մի ինչ-որ բան հնարելով (կեղծ տեղեկություն) դու կարող ես ստիպել քո մահվան հետախույզներին հազորդել այդ մասին հակառակորդին: Նրանից դու շատ բան կիմանաս:

Ուստի կյանքի հետախույզներին կարելի է ստիպել գործել քո մտադրությունների համաձայն:

Այս բոլոր հինգ կատեգորիաների հետախույզների գործերը տնօրինում է տիրակալը: Հակառակորդի մասին ամեն ինչ իմանում են վերադարձող հետախույզների միջոցով: Ուստի վերադարձող հետախույզների նկատմամբ պետք է հատկապես առատաձեռն լինել:

Հնում Ին թագավորությունն իր բարձրացմամբ պարտական է կուՅահին, որը ծառայում է իր Ինի գլխավորության ներքո: Ուստի միայն լուսավորյալ տիրակալները և իմաստուն զորավարները կարող են իրենց համար հետախույզներ դարձնել (միայն) լայնածավալ գիտելիքներ ունեցող մարդկանց և դրանով մեծ գործեր կատարել<sup>5</sup>:

Հետախույզներն անհրաժեշտ են հատկապես պատերազմի ժամանակ: Նրանք այն հենարանն են, որի օգնությամբ շարժվում է գործը<sup>6</sup>:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### I գլխի ծանոթագրությունները

1. Երկի սկզբում Սուն Յըզին պատերազմը դիտարկում է նրա արդյունքներով և պետության համար կարևոր նշանակությամբ: «Պատերազմը՝ պետության համար մեծ գործ է»: Այն վտանգավոր քայլ է, քանզի պատերազմի միջոցով որոշվում է «կյանքի և մահվան» հարցը: Այդպիսի կանխազգացումն ունի կոնկրետ իմաստ: Արևելյան Չժոուի թագավորության դարաշրջանում (մ.թ.ա. 770-249թթ.) իշխանությունների միջև անընդհատ երկպառակտչական պատերազմներ էին մղվում: Շատ հաճախ պատերազմն ավարտվում էր կռվող իշխանություններից մեկի կործանումով: Այսպես օրինակ՝ Ու իշխանությունում, որտեղ Սուն Յըզին մ.թ.ա. VI դարի վերջին զորավար էր, մ.թ.ա. 529թ. գրավեց Չժոու-լայ իշխանական կալվածքը և էլի մի քանի իշխանությունների տարածքներ: Ուստի դա էր պատճառը, որ Սուն Յըզին նախագգուշացնում էր, որ «այդ հիմնական դրույթն անհրաժեշտ է հաստատապես իմանալ»:

2. Դատ (ուղի): Հին Չինաստանում Ուղին հասկանում էին ոչ միայն կոնկրետ իմաստով՝ ուղի, ճանապարհ, այլև, ի նկատի ունենալով դրա վերացական նշանակությունը՝ կյանքի ուղի, հասարակական կյանքի առանձին կողմերի ընդհանուր ուղղություն: Սուն Յըզին «ուղի» հասկացության մեջ ներդնում է նեղ մասնագիտական նշանակություն: Նա գտնում է, որ պատերազմել կարելի է միայն այն ժամանակ, երբ հասարակական կյանքում առկա է ներքին համաձայնություն, միասնություն տիրակալի և ժողովրդի միջև: Այնպիսի միասնություն, որ ժողովրդի մոտ որևէ կասկած չլինի իր տիրակալի գործողությունների ճշմարտացիության մեջ, որպեսզի ժողովրդի կողմից լինի ամբողջական, անառարկելի հնազանդություն իր տիրակալին: Այսպիսով, Սուն Յըզին ընդունում է, որ ժողովուրդը կենդանի ուժ է, որը պատերազմի պայմաններում գլխավոր գործոնն է:

3. Տյան (երկինք): Սուն Յըզին համառոտ պարզաբանում է նրա նշանակությունը՝ դա տարվա տարբեր եղանակներն են, կլիմայական պայմանները, եղանակը, ցուրտը, շոգը, օրերի հերթափոխումը և այլն: Չինաստանի կլիմայական պայմաններուն գերակշռում են մուսոնները, որոնք ամռանը փչում են հարավ-արևելքից (այսինքն՝ ծովից ցամաք), և մեծ քանակությամբ խոնավություն են բերում, ուստի գարնանից տեղում են անձրևներ: Ամռանը շոգ և անձրևային է: Տարվա լավագույն եղանակը՝ աշունն է: «Սիմա Ֆայի» («Սիմի օրենքները») ռազմական երկում ասված է. «Ձմռանն ու ամռանը» (դաժան սառնամանիքներին և ուժեղ շոգերին) գորքը ոտքի չեն հանում, որովհետև խնայում են իրենց ժողովրդին»:

4. Դի (երկիր): Նշանակում է աշխարհագրական պայմաններ: Սուն Յըզին ժամանակ երկիրը կուսական տեսք ունեք: Գետերը, որոնց ոչինչ չէր պահում, հեղեղում էին ցածրավայրերը, անանցանելի ճահիճները տարածքի նշանակալից մասն էին կազմում (հատկապես ներկա Յըզյանսու գավառում և Անհուեյ գավառի արևելյան մասը: Այս վայրերում է գործել Սուն Յըզին՝ Ու իշխանության գործի հետ), խիտ անտառներն աճում էին ամենուր, խոտը ծածկում էր անտառներից ազատ տա-

րածույթյունները: Հարուստ էր նաև երկրի կենդանական աշխարհը: Աստիճանաբար մարդն իր աշխատանքով, դարերի ընթացքում փոխեց երկրի տեսքը:

Սուն Յըզին պատահական չէ, որ հիշատակում է «մահվան տեղանքի» մասին: Տեղանքի որոշ տեսակներ (նրանք մանրամասնորեն թվարկված են 10-րդ և 11-րդ գլուխներում) կարող են վճռորոշ լինել այնտեղ պատերազմող կողմերի համար:

Իսկ մյուսները՝ «կյանքի տարածքները», խելամտորեն օգտագործելու դեպքում, հասնում են շոշափելի արդյունքների: Հետևաբար, պատերազմին նախապատրաստվողը պետք է գիտենա ռազմաթատերաբեմի աշխարհագրական պայմանները:

Սուն Յըզիի երկի մեկնաբան Դու Մունը հետևյալ պարզաբանումն է տալիս. «Յուրաքանչյուր զորահրամանատար անպայման, վաղօրոք, պետք է մանրակրկիտ ծանոթանա տեղանքի քարտեզին: Նա անպայման պետք է կատարելապես իմանա (բոլոր) վտանգավոր վայրերը, մարտակարգերի անցման վայրերը, այն գետերը, որոնցով կարող են անցնել մարտակառքերը, լեռների անվանումները, հովիտները, այն վայրերը, որտեղ փարթամորեն խոտ է աճում, ճանապարհների երկարույթյունը, քաղաքային պատերի չափերը, քանդված քաղաքները, այգիների և բանջարանոցների համար նախատեսված վայրերը: Այս ամենը (զորավարը) պետք է պարտադիր իմանա, ինչպես նաև ռելիեֆը, սահմանների սկիզբն ու վերջը: Զորավարն այդ ամենը պահում է իր հիշողության մեջ և միայն այդ դեպքում նա չի կորցնի տեղանքի առավելությունը»:

5. Յըզյան (զորավար): Սուն Յըզին զորավարի սուբյեկտիվ հատկանիշներին մեծ նշանակություն է տալիս, գտնելով, որ նրանք են որոշում պատերազմի ընթացքն ու ավարտը: Սուն Յըզին թվարկում է հինգ հատկանիշներ, որոնցով պետք է օժտված լինի զորավարը: Ինչ Յան-սին հետևյալ կերպ է բացատրում այդ հատկությունները. «Եթե զորավարն անխելք է, նա չի կարող գնահատել հակառակորդին և համապատասխան մարտավարություն մշակել, եթե նա արդարացի չէ, չի կարող հրամայել ուրիշներին և իր ետևից տանել իր ենթականերին, եթե նա մարդասեր չէ,

(ապա) չի կարող իր (կողմը) գրավել զանգվածներին և իրեն կապել ռազմիկներին, եթե նա քաջություն չունի, ի վիճակի չի լինի կատարել որևէ գործողություն և մարտի մեջ մտնել, եթե նա խիստ չէ, չի կարող իրեն ենթարկել ուժեղին և ղեկավարել զանգվածներին: Ով որ ամբողջությամբ տիրապետում է այդ հինգ հատկանիշներին, նա զորավարի մարմնավորումն է»:

Սուն Յըզիի երկի մեկնաբան Հուանշի գունը («Երեք մարտավարություն» երկի հեղինակ, մ.թ.ա. 3-րդ դար) հետևյալ կերպ է գնահատում զորավարին. «Նա, ով քաջ է, սիրում է իրականացնել իր կամքը, նա ով հիմար է, չի մտածում իր մահվան մասին: ... Մարդիկ դատում են զորավարի մասին, դիտելով նրա քաջությունը: Քաջությունը զորավարի միայն մի կողմն է: Չէ՞ որ քաջն անպայման մարտի մեջ կմտնի՝ չգիտենալով շահը, (այդպիսի մարդը) չի կարող զորավար լինել»:

Սուն Յըզիի երկի բոլոր մեկնաբաններն առանձնահատուկ ուշադրություն են դարձնում զորավարի բարոյահոգեբանական կերպարին՝ շեշտը դնելով նրա հավասարակշռված լինելու վրա: Եթե զորավարը չունի վերը նշված հատկանիշները, ապա հակառակորդը կարող է ճարպկորեն օգտագործել դրանք ի օգուտ իրեն: Դու Մունը պարզաբանում է. «Եթե թշնամին այդպիսին է (բռնկվող բնավորություն ունի), կարելի է նրան խիստ վիրավորել, այնպես անել, որ նա թեթևամտորեն առաջ շարժվի»:

Զորավարի մեկ այլ հատկությունը՝ հումանիզմը ևս կարելի է օգտագործել օգուտ քաղելու համար: Կի Յյուանն այդ առիթով նկատել է. «Հարձակվիր այն բանի վրա, ինչը նա (զորավարը) սիրում է: (Այդ դեպքում) նա գեներ կշռջի (և) անպայման կշտապի պաշտպանել այն, ինչն ինքը սիրում է: Այդպիսի մարդուն կարելի է հաշվենկատորեն ուժասպառ անել»:

Իսկ մեկ այլ մեկնաբան՝ Յաո-գունը, կոնկրետ պարզաբանում է կատարում. «Հայտնվիր այնտեղ, ուր նա (զորավարը) անպայման կսլանա: Եթե նա այդպիսին է (սիրում է ժողովրդին), անպայման կգնա նրան օգնության արագացված ռազմերթով: Եթե նա սկսի փրկել, ապա կհոգնի»:

6. Ֆա (օրենք): Խոսքը գնում է օրենքի ոչ թե մի ինչ-որ վերացական հասկացություն մասին: Սուն Յըզին այստեղ տալիս է կոնկրետ բացատ-

րուծյուն. օրենքը՝ զինվորական կարգ ու կանոնն ու կարգապահու-  
թյունն է, զորքերի ղեկավարումն ու զորքերի մատակարարումը: Այսպի-  
սով, պատերազմը պահանջում է, որպեսզի զորքերում լինի պատշաճ շա-  
րային կարգ ու կանոն ու կարգապահուծյուն, որպեսզի հրամանատա-  
րուծյան դրվածքը ճիշտ լինի, և որպեսզի զորքերը ժամանակին մատա-  
կարարվեն անհրաժեշտ ամեն ինչով:

7. «Կանոնների և հրամանների կատարումը» նշանակում է են-  
թարկվել կարգապահուծյան պահպանմանը: Վեյ Լյաո-Յըզիի ռազմար-  
վեստին նվիրված երկից (Վեյ Լյաո-Յըզի, մ.թ.ա. 4-րդ դար) տեղեկանում  
ենք, որ շինական զորքերում, կարգապահուծյունը պահպանելու համար,  
գոյուծյուն ունեն խմբակային երաշխիք: Յուրաքանչյուր ստորաբաժա-  
նումում , մարտիկներից մեկի կատարած հանցանքի համար պատաս-  
խանատու էին բոլորը՝ ընդհուպ մինչև մահապատիժ: Դու Մունը հե-  
տևյալ օրինակն է վկայակոչում, որը ցայտուն կերպով գալիս է հաստա-  
տելու վերը նշվածը: Ու Յինը (նշանավոր զորավար, ռազմական տեսա-  
բան և քաղաքական գործիչ, մահացել է մ.թ.ա. 381 թ.) կովում էր ցիների  
(իշխանուծյուն մ.թ.ա. 403-221թթ) դեմ: Մարտը դեռ չէր սկսվել, երբ Ու  
Յինի զինվորներից մեկը, չկարողանալով զսպել իր քաջուծյունը, առաջ  
նետվեց և սպանելով թշնամիներից երկուսին, նրանց գլուխներով ետ  
վերադարձավ: Զորավարը հրամայեց նրան մահապատժի ենթարկել:  
Սպաները մոտենալով Ու Յինին, սկսեցին համոզել նրան. «Դա տաղան-  
դավոր ռազմիկ է, չի կարելի նրան մահապատժի ենթարկել»: Ու Յինն ա-  
սաց. «Հավատում եմ, որ տաղանդավոր զինվոր է, սակայն նա գործել է  
առանց հրամանի»: Այդ ժամանակ նրան գլխատեցին:

8. Թվային գերազանցուծյունն ինքնին խոսում է իր մասին: Սուն  
Յըզիի հայտարարուծյան համաձայն , դա այն ցուցանիշներից է, որը  
վճռում է հաղթանակն ու պարտուծյունը:

9. Երկում հանդիպում են տերմիններ, որոնք նշանակում և իմաս-  
տավորում են զինվորների տարբեր կատեգորիաներ. ցզու՝ ռազմիկներ,  
զինվորներ, շի՝ կրտսեր հրամանատարներ (սերժանտներ), լի, դալի՝ ա-  
վագ հրամանատարներ, ցըզյան՝ առաջապահ զորքերի հրամանատար,

բինցրգյա՝ զինվորական մասնագետներ, բին՝ զորքերի շարային կազմը, չժու՛ն՝ զորքերի ոչ շարային կազմը, դայցցյա՝ զրահակիր զինվորներ, ցգյան՝ հետախույզ, լրտես:

10. «Հրամանատարների և զինվորների պատրաստականության» մասին արտահայտիչ կերպով խոսում է Ու Յրզին. «Մարդիկ սովորաբար մահը գտնում են այն պատճառով, որովհետև հմուտ չեն, պարտություն են կրում, որովհետև չեն կարողանում հաջողությամբ գործել: Այդ իսկ պատճառով, զորքերի ղեկավարման մեջ ամենազխտավորը պատրաստվածությունն է»: Բացատրելով պատրաստականության բովանդակությունը, Ու Յրզին ասում է. «Սովորեցրու շարժվել շրջանով և քառանկյունով (քառե), նստել և վեր կենալ, հավաքվել և ցրվել»: Այդպիսին էին հին չինական բանակում շարային պատրաստվածության տարրերը: Մեն Յրզին իր գրքում նշում է, որ աղեղից կրակելու համար գոյություն ունեին ժողովրդական դպրոցներ, որոնք կոչվում էին «սյուչ»: Բարձրագույն դպրոցներում, որտեղ սովորում էին ազնվատոհմիկների և հասարակ մարդկանց երեխաները, սովորեցնում էին՝ հանդիսակարգ, աղեղից կրակել, ձիեր ղեկավարել, և գրագրություն: Աղեղից կրակելու ծրագիրը բաղկացած էր հինգ բաժիններից՝ բայշեն (հասարակ նետաձգություն), ցանլյան (խմբային նետաձգություն), յանչժու, սյանչի և ցզիննի (նետաձգություն մարտակառքով):

11. Պարզևատրումների և պատիժների համակարգին Հին Չինաստանում ռազմական տեսաբանները էական նշանակություն էին տալիս: Նրանք գտնում էին, որ արդարացի համակարգը զորավարի լավագույն միջոցն է զորքի վստահությունը ձեռք բերելու և նրա մարտունակությունը բարձրացնելու համար:

12. Այսպիսով, պատերազմի այդ յոթ հաշվարկներում նշվում են ռազմավարության հիմնական գծերը՝ ժողովրդի բարոյական վիճակը, զորավարի տաղանդը, ժամանակը, տարածությունը, բանակի կազմակերպումը, զորքերի թվաքանակը, կարգապահությունը, նախապատրաստվածությունը և պատիժների համակարգը:

13. Սունն Յրզիին առաջարկում է օգտվել յոթ հաշվարկներից՝ հաշվի առնելով շահը: Երկում նա բազմիցս խոսում է ռազմավարության և մարտավարության առավելության (շահի) նշանակության մասին, որը հաջող պատերազմի անհրաժեշտ պայմանն է: Մեկնաբան Դու Մունն հաստատում է այդ սկզբունքը, ասելով. «Ողջ զինվորական գործի առաջնային հիմքը՝ օգուտի և վնասի հաշվառումն է»: Այդ պատճառով, Սունն Յրզիին հայտարարում է, որ օգտագործելով իր հաշվարկներն օգուտին համապատասխան, կստեղծեն պայմաններ, որոնք դուրս կգան այդ հաշվարկների սահմաններից, այսինքն՝ հնարավորություն կտան մարտական բազմազան իրադրություն մեջ գտնել ճիշտ որոշում:

14. Մարտական հնարքների բաժինը Սունն Յրզիին սկսում է հետևյալ պնդմամբ. «Պատերազմը՝ խաբեության ուղին է»: Հաշվի առնելով թվարկված մարտավարական 13 հնարքները, պատերազմում խաբեությունը հասկանալ ռազմական խորամանկություն՝ հակառակորդին հաղթելու մեթոդ: Այդ 13 մարտական հնարքները կարելի է խմբավորել ըստ տեսակների՝ մարտական քողարկում (թվացող թուլության քողարկում, տարածության քողարկումը կեղծ պաշտպանության), նախագգուշական միջոցառումներ (հակառակորդի գերազանց ուժերին ուժասպառ անելը, հակառակորդի գերակշիռ ուժերից խուսանալը), հակառակորդի թերություններից և սխալներից օգտվելը (հակառակորդի անպատրաստվածության օգտագործումը, նրա զգոնության թուլացումը, անզգուշությունները), հակառակորդի գործի վրա ազդելը (նրա շարքերը քայքայել, պառակտում առաջացնել նրա շարքերում), հակառակորդի հոգեկանի վրա ազդելը (դրդել չմտածված, վտանգավոր ձեռնարկումների, բթացնել նրա զգոնությունը): Այս բաժնում Սունն Յրզիին թվարկում է ընդհանուր մարտավարական հնարքներ: Մարտավարության կոնկրետ տեսակները նրա կողմից մշակվել են III, V, VII, IX, X, XI գլուխներում:

15. Սունն Յրզիին գտնում է, որ թվարկված մարտավարական հնարքներով զորավարը կարող է հասնել հաղթանակի: Սակայն որ հնարքը, ինչ պայմաններում և երբ կիրառել, վաղօրոք ասել հնարավոր չէ, քանի որ պատերազմում իրադրությունը բազմազան և փոփոխական է: Բազ-

մատեսակ իրադրությունում պատրաստի օրինակ նախատեսել հնարավոր է: Ամեն ինչ կախված է զորավարից, նրա հմտությունից և փորձառությունից, որպեսզի, ելնելով համապատասխան իրադրությունից, կարողանա կիրառել մարտավարական այս կամ այն հնարքը:

Սուն Յըզի երկի բազմաթիվ մեկնաբաններ մանրամասն բացատրում են, թե ինչպես են հասկացել Սուն Յըզիի դրույթները ռազմական խորամանկության մասին: Ստորև բերենք դրանցից մի քանիսը՝ Յաո Գուն. «Պատերազմում չկա մշտական ձև՝ պատերազմի արվեստը կայանում է խաբեության մեջ: Մեյ Յո-չեն. «Առանց խաբելու չի կարելի օգտագործել մարտավարական զորաշարժ, առանց մարտավարական զորաշարժի անհնար է հաղթել հակառակորդին»:

Վան Չժե. «Խաբեությունը մի միջոց է հակառակորդի նկատմամբ հաղթանակ տանելու համար»:

Չժան Յույ. «Պատերազմի հիմքում ենթադրում են հումանիզմն ու արդարությունը, սակայն, որպեսզի հաղթանակ տանես, անպատճառ անհրաժեշտ է խաբեությունը»:

## II գլխի ծանոթագրությունները

1. Խոսելով զորքերի քանակության և նրանց լրակազմության մասին, Սուն Յըզին սահմանափակվում է միայն կարճ տվյալներով, ենթադրելով, որ ընթերցողներին հայտնի են զորքի կազմակերպման և կազմի մանրամասները:

Հետևակի գլխավոր մարտական ուժը դայցզաներն էին՝ սառը զենքից զրահով պաշտպանված նետաձիգ զինվորները: Զրահը պատրաստված էր կաշվից, որի վրա ամրացված էին բամբուկի կամ էլ բրոնզի գլխիկներ կամ թեփուկներ:

2. Չժոխոու՝ ինքնուրույն իշխանությունների տարբեր աստիճան ունեցող իշխաններ, որոնք մտնում են Չժոու հարստության մեջ: Նրանք անընդհատ երկպառակտչական պատերազմներ էին վարում իրենց տիրապետությունը հաստատելու և իրենց տարածքներն ընդլայնելու համար: Հզոր իշխանություններն իրենց էին հպատակեցնում թուլերին:

3. Օրենքի համաձայն, գյուղացիները պարտավոր էին պատերազմի ժամանակ երկու անգամ տրամադրել պարեն և կեր. առաջին անգամ, երբ զորքերը գնում էին արշավի, երկրորդ անգամ, երբ վերադառնում էին:

4. Երկարատև պատերազմը հղի է մահացու հետևանքներով՝ ուսմական, ֆինանսական, տնտեսական և քաղաքական տեսակետից: Տևական պատերազմի դեպքում «զենքը բթանում է, և սուր ծայրը ջարդվում է»: Ուղղակի իմաստով այդ արտահայտությունը խոսում է մարտական սպառազինությունից սպառվելու, հատնելու մասին: Այս արտահայտությունը կարելի է հասկանալ նաև փոխաբերական իմաստով, որը նշանակում է, որ երկարատև պատերազմի ընթացքում թուլանում է զորքի մարտական ոգին: Յգի լին այդ առիթով ասում է. «Եթե զենքի սուր ծայրը ջարդվել է, զինվորները վերքերի մեջ են, ձիերը՝ հոգնած, նշանակում է, որ ուժերը քայքայվել են»: Իսկ Չժան Յույը տալիս է հետևյալ մեկնաբանությունը. «Երբ պատերազմը երկար են վարում և դրանից հետո հաղթում են՝ զինվորները հոգնում են և նրանց մոտ ոգին ընկնում է»:

Երկարատև պատերազմը, ֆինանսական տեսակետից, քայքայիչ ազդեցություն է ունենում պետական գանձարանի համար, քանի որ ստիպված են օրական 1000 ցզին (ոսկի) ծախսել:

Տևական պատերազմի ընթացքում երկրի տնտեսությունն անկում է ապրում: Տնտեսական ողջ ծանրությունն ընկնում է գյուղի վրա: Ժողովուրդը պատերազմի պատճառով կորցնում է ունեցվածքի 70 տոկոսը: Պատճառները հետևյալն են. առաջին՝ «զորքի համար պարենը հեռվից են բերում և դրա հետևանքով ժողովուրդն աղքատանում է», քանի որ կտրված է լինում իր զբաղմունքից՝ հողագործությունից, երկրորդ՝ պատերազմի ժամանակ ուժեղանում է սպեկուլյացիան, քանի որ «զորքի մոտ ապրող բնակչությունն ամեն ինչ վաճառում է թանկ, երբ ամեն ինչ թանկ է վաճառվում, ժողովրդի ունեցվածքը սպառվում է»: XIII գլխում Սուն Յըզին, խոսելով պատերազմի հետևանքների մասին, եզրակացնում է, որ «700000 ընտանիքներ բեռնափոխադրման պարհակների հետևանքով ուժասպառ են լինում, և չեն կարողանում զբաղվել իրենց աշ-

խատանքով»։ Գյուղատնտեսությունը սկսում է անկում ապրել, որն սպառնում է իշխանին սննկացնել։

5. Որոշ պատմաբաններ տալիս են հին չինական գործերի սպառազինություն նկարագրությունը։ Չժոու՝ կոնաձև սաղավարտ, պատրաստվում էր ուռենու ճյուղերից և բամբուկից։ Դունբի, լու՝ մեծ և փոքր վահաններ, որոնք պատրաստվում էին հնդկական եղեգնից և ուռենու ճյուղերից, որոնք գալարաձև գործվում էին կենտրոնի շուրջը և աչքի էին ընկնում բավարար ամրությունով։ Նու՝ աղեղ, պատրաստվում էր թեղիից և բամբուկից։ Մետաքսյա աղեղալարերը ձգելու համար անհրաժեշտ էր 30-40 կիլոգրամի հավասարազոր ուժ։ Շի՝ նետ, պատրաստվում էր 0,915 մետր երկարություն ունեցող կեշու ճյուղերից։ Ցզի՝ նիզակ, ուներ բրոնզե ծայրակալ, որի երկարությունը 0,3 մետր էր, իսկ կոթի երկարությունը՝ 3 մետր։

6. Սուն Յըզին ռազմիկների մարտական հատկություններից՝ կատաղության կողքին նշում է նաև ազահությունը՝ զավթելու և թալանելու ձգտումը։ Այս հանգամանքը բնութագրական է այն ժամանակվա պատերազմների համար։

### III գլխի ծանոթագրությունները

1. Չժոու հարստության տիրապետության տարիներին չինական գործը կազմված էր հետևյալ ստորաբաժանումներից. ու՝ հինգ մարդ, լյան՝ 25 հոգի, ցըզու՝ 100 հոգի, լյույ՝ 500 հոգի, շի՝ 2500 հոգի, ցզյուն՝ 12500 հոգի։ Մեկնաբան Յաո գունի տվյալների համաձայն, ցզու ստորաբաժանումը կազմված է եղել 100-500, իսկ ու ստորաբաժանումը՝ 5-100 մարդուց։

Գուն տիտղոս և դագու կոչվող իշխաններն իրավունք ունեին կազմավորել սանցզյուն (երեք բանակ, 37500 թվակազմով), խոու և բո տիտղոսակիր իշխանները, որոնք կոչվում էին չժունգո, ձևավորում էին էրցզյուն (երկու բանակ, 25000 թվակազմով), սյոգու կոչվող ցզի և նան իշխաններն իրավունք ունեին կազմել իցզյուն (մեկ բանակ, 12500 մարդ)։ Չինաստանի կայսրի բանակը՝ լյուցզունը, բաղկացած էր վեց բանակներից։

րից՝ 75000 մարդ: Մի շարք մեկնաբանություններում նշվում է, որ գուն և խոու տիտղոսակիր իշխաններն իրենց բանակում ունեցել են 1000 թեթև մարտակառք: Հաշվի առնելով, որ յուրաքանչյուր մարտակառքին հասնում էր շարային և ոչ շարային կազմ, թվով 100 հոգի, հետևում է, որ վերը նշված գուն և խոու իշխաններն ունեցել են 100 000-ի հասնող բանակ:

2. Մեկնաբան Լի Յյուանը լու տերմինը բացատրում է որպես վահան, որով զինվորները պաշտպանում էին իրենց գլուխները քաղաքային պարիսպները գրոհելիս: Այն պատրաստվում էր ձեռքի տակ գտնվող նյութերից: Մեկնաբան Յաո գունը լուն բացատրում է որպես մեծ վահան:

3. Պաշարողական մարտակառքը (ֆենվեն), մի շարք մեկնաբանների նկարագրության համաձայն, իրենից ներկայացրել է քառանիվ փայտե կառք: Այն պատվել է շմշակված (հում) կաշվով: Դրանք օգտագործել են քաղաքների պաշարման ժամանակ, քաղաքային պատը շրջապատող խանդակը հողով լցնելու համար:

4. Սուն Յըզին գտնում է, որ ուժերի քանակական գերազանցությունը վճռորոշ նշանակություն ունի: Եթե տասնապատիկ առավելություն ունենա՝ ապա պետք է շրջապատես հակառակորդին, և նա պետք է անձնատուր լինի: Ուժերի հնգակի գերազանցության դեպքում պետք է կիրառվի ուղղակի հարձակման մարտավարություն, նպատակ ունենալով ճնշել հակառակորդին թվային գերազանցությամբ և հարկադրել նրան անձնատուր լինել: Կրկնակի առավելության դեպքում չի կարելի ուղղակի հարված հասցնել: Առաջարկվում է դիմել զորաշարժի (մանյովր)՝ զորքը բաժանել երկու մասի, որոնցից յուրաքանչյուրը պետք է հավասար լինի հակառակորդի ուժերին: Մի մասով գրոհում են հակառակորդի թիկունքին կամ թևին: Այդ հնարքն ուղղված է նրան, որպեսզի հակառակորդին հարկադրեն հանձնվել առանց մարտի: Պատերազմի այդ երեք կանոնները նշանակում են հաղթել հակառակորդին՝ «ողջ զորքը պահպանելով» ամբողջականության մեջ:

Կռիվն անխուսափելի է, եթե երկու կողմերի ուժերը հավասար են: Սուն Յըզին ասում է. «Ուժերի հավասարության դեպքում կարելի է մար-

տը վարել»: Այդ դեպքում հաղթանակը կախված կլինի զորավարի հմտությունից, նրա զորքի քաջությունից և տոկոսնությունից:

Հակառակորդի թվային գերազանցության դեպքում, Սուն Յըզին, ելնելով ընդհանուր տեսությունից, գտնում է, որ լավագույն հաղթանակը՝ հաղթանակն է առանց ճակատամարտի: Նա առաջարկում է նահանջել կամ խուսափել մարտից, հավանաբար, որպեսզի ժամանակ շահի և հաղթանակն ապահովող պայմաններ ստեղծի: Հիմք ընդունելով իր տեսությունը, Սուն Յըզին խորհուրդ է տալիս. «Երբեք մի շրջապատիր հակառակորդին շորս կողմից»: Դու Սունն այդ միտքը մեկնաբանում է հետևյալ կերպ. «Թշնամուն ցույց տուր կյանքի ճանապարհը: Այնպես արա, որ նրա մոտ ոչ մի դեպքում մահվան մասին միտք չլինի: Եվ, օգտվելով դրանից, հարձակվիր նրա վրա»: Մեկ այլ մեկնաբան՝ Լի Յյունը, ասում է. «Հայտնի է, որ շրջապատելով թշնամուն, անպայման մի կողմը պետք է թողնել բաց, ցույց տալով, որ շրջապատումն ամուր չէ: Եթե նրան շորս կողմից շրջապատես, (ապա) թշնամին անպայման կնախաձեռնի պաշտպանություն, այնպես որ, նրան այնտեղից դուրս չես քաշի»:

5. Եթե առաջին գլխում Սուն Յըզին առաջադրում էր տիրակալի և ժողովրդի բարոյական միասնություն, ավելի ստույգ՝ ժողովրդի անվերապահ ենթարկվելը տիրակալին, ապա այստեղ նա շեշտը դնում է զորքի բարոյական վիճակի և նրա անվերապահ հնազանդությունը զորավարին:

6. Սուն Յըզին պահանջում է զորավարին տալ լրիվ ինքնուրույնություն: Բացառվում է ամեն տեսակի միջամտություն տիրակալի կողմից զորքերի ղեկավարմանը:

#### IV գլխի ծանոթագրությունները

1. Սուն Յըզինի պատկերացմամբ, պաշտպանությունն արդյունք է որոշ թուլության, սակայն դա չի նշանակում միայն սեփական թուլություն, դա նշանակում է, որ հակառակորդի մոտ թույլ տեղ չկա, ուստի չի կարելի պաշտպանությունից անցնել հարձակման: Եվ հակառակը՝ հարձակումն ուժի առկայության արդյունք է: Սակայն դա ոչ

միայն սեփական ուժը չէ, այլ հակառակորդն ունի որոշակի թուլություն, որը հնարավորություն է տալիս անցնել հարձակման:

2. Տաղանդավոր զորավարը հաղթանակը տեսնում է նրա սաղմում: Կրանով է նա տարբերվում սովորական մահկանացուներից, որոնք հաղթանակը տեսնում են միայն այն ժամանակ, երբ այն իրականացվել է:

3. «Իրականացնել ուղին» հասկացությունը մեկնաբան Մեյ Յու-չեն բացատրում է որպես հարձակման և պաշտպանության էության ճիշտ հասկացություն: «Պահպանել օրենքը» նշանակում է ճիշտ հասկանալ պատերազմի հինգ օրենքները՝ երկարությունը, ծավալը, թիվը, քաշը, հաղթանակը:

4. Պատերազմի վարման հինգ օրենքները մեկնաբանները բացատրում են հետևյալ կերպ՝ «երկարությունը» հակառակորդի և քո միջև ընկած տարածությունն է, «ծավալը»՝ տեղանքի չափն ու ուրվագիծն է, «թիվը»՝ զորքի թվաքանակը, «քաշը»՝ հակառակորդի և քո ուժերի փոխհարաբերությունը, «հաղթանակը»՝ մարտնչող ուժերի գրություն հաշվառումը:

5. «Ձև»՝ նշանակում է զորքերի համակողմանի պատրաստականությունը, նրանց սպառազինությունը, մարտակարգերի, ղեկավարման մեթոդները, ուժերի հարաբերակցությունը և պատերազմողների թույլ կողմերը:

## V գլխի ծանոթագրությունները

1. Չինական բանակի կազմակերպչական ձև տես III գլխի թիվ 1 ծանոթագրությունում:

2. «Կանոնավոր մարտը»՝ մարտակարգի դասավորումն է: Ճակատամարտը սկսելուց հետո զորավարի վարպետությունն արտահայտվում էր պետքական ուղղությունմբ, զորաշարժի օգնությունմբ, վճռական հարված հասցնելու մեջ: Մեկնաբան Ցզյա Լինը ցույց է տալիս, որ կանոնավոր մարտը և զորաշարժը պահանջում են մարտի ընթացքում զորամասերի փոխհամագործակցություն:

3. «Լեփ-լեցունությունը»՝ նշանակում է պատրաստականություն և կանոնավոր մարտ կիրառելու հնարավորություն: «Կատարկություն»՝ նշանակում է զորքի թուլություն, անպատրաստվածություն: Ուստի Սուն

Յրգին գտնում է, որ հակառակորդին հասցված հարվածը պետք է լինի հարված իր ողջ «լեփ-լեցունությունը», որը հարվածում է «դատարկությանը», ինչպես ջրաղացքարն է հարվածում փխրուն ձկին:

4. Յգյան և խե տերմինները կարելի է թարգմանել նաև իրենց կոնկրետ անուններով՝ Յանցզի և Խուանխե, բայց քանի որ Սուն Յրգին այդ բաժնում խոսում է ընդհանուր (ոչ կոնկրետ) բնական երևույթների՝ «երկինք և երկիր», «արև և լուսին», «տարվա չորս եղանակները», ապա այդ տերմինները (ցզյան և խե) թարգմանվել են որպես գետեր և հոսանքներ, որոնք նույնպես ընդհանուր բնական երևույթներ են:

5. Ի նկատի ունի, որ մարտակարգի ժամանակավոր կազմալուծման ետևում թաքնված է ներքին կարգապահությունը, խախտված շարքերի վերականգնման միտումը: Կավ նախապատրաստված (վարժեցված) և կարգապահ զորքերը, չնայած «ձևի», այսինքն՝ մարտակարգի խախտմանը, չեն կորցնում իրենց ներքին ամրությունը և հետևաբար «չեն կարող պարտություն կրել»:

6. Այդ ասույթները վերցվել են Ի-Յրգին գրքի («Փոփոխությունների գիրք») «Սի ցի չժուան» մեկնաբանությունից, ուր աշխարհակարգի համակարգը արտահայտվում էր սահման հասկացություն մեջ: Յուրաքանչյուր երևույթ վերափոխվում է մեկ այլ երևույթի այն դեպքում, երբ առաջին երևույթը հասել է իր սահմանին: Հասնելով իր սահմանին, այն տրոհվում է երկու հակադրությունների, որոնցից յուրաքանչյուրը զարգանալով մինչև իր սահմանը, կրկին տրոհվում է երկու հակադրությունների:

Այս տեսության համաձայն, «կարգ ու կանոնը» կարող է հասցվել իր սահմանին: Բավական է, որ առաջանում է այդ կարգի գերազանցատում և արհամարհանք նրա նկատմամբ: Արհամարհանքի ի հայտ գալով, կարգ ու կանոնը սովորաբար փլուզվում է և վեր է ածվում անկարգության: Համանման երևույթներ տեղի կունենան ուժի և թուլության, քաջության և վախկոտության հետ:

7. «Թիվը»՝ ստորաբաժանումները, մարտակարգերն են, որոնց մեջ կարող է լինել կարգ ու կանոն և անկարգություն: «Հզորությունը»՝ զորքի ներքին ուժն է: Հզորության մեջ են սաղմնավորված վախկոտու-

թյունն ու քաջությունը, որոնք ի հայտ են գալիս որոշակի իրադրու-  
թյունից կախված: «Ձևը»՝ գորքի վիճակն է, նրա մարտունակությունը:  
Մարտունակության աստիճանը որոշում է գորքի ուժն ու թուլությունը:

Մեկնաբանների հայտարարության համաձայն, վերը հիշատակած  
ցուցումների գործնական կողմն ուղղված է նրան, որպեսզի սեփական  
անկարգությունը ցուցադրելով հակառակորդին, կարողանա խաբել  
նրան: Խաբեությունը ոգևորված հակառակորդն անցնելով հարձակման,  
հանդիպելով մարտակարգին, շփոթության մեջ է ընկնում և ջախջախ-  
վում: Խաբելով հակառակորդին վախկոտության և թուլության ցու-  
ցադրմամբ, նրա մոտ թեթև հաղթանակի պատրանք են առաջացնում,  
սակայն հանդիպելով քաջությանն ու ուժին, հակառակորդն ինքն է հնա-  
րավորություն ստեղծում իրեն հաղթելու համար:

8. Այլ կերպ Սուն Յըզին պնդում էր, որ հաղթանակը չի վճուվում մի-  
այն ռազմիկների և հրամանատարների ընդունակություններով: Հաղ-  
թանակը որոշում է գորքի ընդհանուր «հզորությունը»: Զորքը, սակայն,  
բաղկացած է զանազան ընդունակություններ և որակներ ունեցող ան-  
հատներից: Այդ է պատճառը, որ մեկնաբան Չժան Յույը գտնում է, որ գո-  
րավարը պետք է օգտագործի յուրաքանչյուր զինվորի «հզորությունը».  
մեկի խելքը, մյուսի հնարամտությունը, երրորդի քաջությունը, չորրորդի  
ազահությունը և այդպես շարունակ: Զորավարից է կախված առանձին  
ռազմիկների «հզորությունից» արարել գորքի հզորությունը, որի վերջ-  
նական նպատակը հաղթելն է:

9. Այդ պատկերավոր արտահայտությամբ Սուն Յըզին ցույց է տալիս,  
որ մկանային ուժով չի կարելի գերանը կամ քարը տեղաշարժել , սակայն  
բարենպաստ պայմաններում (զառիվայր տեղանք) դա դյուրին է կատա-  
րել՝ օգտագործելով գորքի ներուժը, այնպես, ինչպես օգտագործվեց քարի  
սեփական ծանրության ուժը՝ լեռից այն ներքև գլորելու համար:

## VI գլխի ծանոթագրությունները

1. «Լեփ-լեցունությունը», «լիակատարությունը» հաս-  
կացվում է որպես լրիվ, ամբողջական մարտական պատրաստականու-  
թյուն, ակտիվ մարտական գործողություններ վարելու գորքի ունակու-

թյուն, նրա ամբողջական անխոցելիություն հակառակորդից: «Դատարկությունը»՝ նշանակում է զորքի ոչ բավարար պատրաստականություն, մարտական գործողություն վարելու թույլ ունակություն: Իր երկրի զանազան մասերում Սուն Յըզին յուրաքանչյուր ուժեղ կետը կամ էլ դրուժյունն անվանում է «լիակատարություն», իսկ ցանկացած թույլ, խոցելի կետը կամ դրուժյունը՝ «դատարկություն»:

2. Սուն Յըզին առաջարկում է հակառակորդի համար կարևոր վայրի, դիրքի վրա կատարել կեղծ հարձակում: Այդ դեպքում նա իր ողջ ուշադրությունը կկենտրոնացնի դրա վրա և ճանապարհ կբացի իսկական հարձակման օբյեկտի վրա: Հակառակորդն իր ողջ ուշադրությունը և ուժերը կենտրոնացնելով կեղծ ուղղության վրա, բնական է, որ կթուլացնի իր ուշադրությունն այլ ուղղություններում, որտեղ կարելի է «անցնել 1000 լի և չհոգնել»:

3. Սուն Յըզին պարտադիր չի համարում ունենալ քանակային գերազանցություն հակառակորդի նկատմամբ: Բավական է պահպանել իր զորքի ամբողջականությունը, իսկ հակառակորդին մասերի բաժանել, որպեսզի հետո ջախջախել նրանց առանձին-առանձին: Դրան կարելի հասնել հակառակորդին կեղծ «ձև» ցույց տալով տարբեր տեղերում, ապակողմնորոշել նրան, որն անխուսափելիորեն կբերի նրան, որ հակառակորդը կմասնատի իր ուժերը: Նման ուղիով կարելի է հասնել ցանկալի ուղղությամբ քանակական գերազանցության:

4. Սուն Յըզին իր երկը գրել է իշխան Խե լուի (Ու իշխանության իշխանի) համար, որի մոտ նա ծառայում էր որպես զորապետ: «Յուժենների» մասին կոնկրետ հիշատակումը հիմք է տալիս եզրակացնելու, որ երկը գրվել է Ու և Յուե իշխանությունների միջև տեղի ունեցած պայքարի ընթացքում: Այդ իշխանությունների միջև մարտական գործողությունները տեղի են ունեցել մ.թ.ա. V դարի վերջին և մ.թ.ա. IV դարի սկզբին (տե՛ս թիվ 1 ծանոթագրությունը):

5. «Հակառակորդին գնահատել» հասկացությունը կարելի է հասկանալ որպես վաղօրոք, մինչև մարտական գործողությունների սկսվելը, կանխատեսել, թե ինչպիսին կլինի հակառակորդի ռազմավարու-

թյունն ու մարտավարությունը: Ուստի Սուն Յրզին 13-րդ գլխում տալիս է հետևյալ կոնկրետ ցուցումը՝ հավանական հակառակորդի նկատմամբ գործակալային հետախուզություն վարելու մասին:

6. Հակառակորդի կոնկրետ մարտավարությունը՝ «նրա շարժումն ու հանգիստը» կարելի է հասկանալ «կեղծ» ձևով, այսինքն՝ հետախուզություն մարտով: Հակառակորդի արձագանքը կեղծ «ձևին» ցույց կտա նրա «կյանքի ու մահվան տեղը», «առատությունն ու պակասը», այսինքն՝ թույլ և ուժեղ կողմերը, խոցելի և անխոցելի տեղերը կամ մասերը:

7. Այդ ձևակերպումներում Սուն Յրզին դիմում է առարկայի զարգացումը մինչև իր սահմանը փիլիսոփայական հասկացությանը: «Ձևը» զարգանալով հասնում է իր սահմանին և վեր է ածվում իր ժխտմանը՝ ձևի բացակայությանը: Այդ պայմաններում զորքի կազմակերպվածությունը, մարտունակությունը, ճկունությունը, զորաշարժությունը օրգանական հատկություններն են: Հետևաբար ձևի բացակայությունը կազմակերպվածության սահմանն է (վերջնագիծը), այնպիսի կազմակերպվածություն, որ «նույնիսկ հմուտ լրտեսը չկարողանա որևէ բան պարզել», իսկ «իմաստունը չկարողանա որևէ բանից գլուխ հանել»:

8. Այսպիսով, բանակի հզորությունը չի կարող անփոփոխ լինել: Այն կախված է քեզանից և հակառակորդից: Մշտապես փոփոխվող իրադրությունից կարողանալ գլուխ հանել, հաղթանակի հասնելու համար զորքերը ղեկավարելու արվեստը՝ այնքան բարդ և խորն է, որ Սուն Յրզին այդ բոլոր որակներին տիրապետող զորավարին անվանում է «աստվածություն»:

9. Հին Չինաստանում բնության հինգ ուժերը նշանակում էին ջուր, կրակ, փայտ, մետաղ և հող: Տարերային դիալեկտիկայի համաձայն, այդ տարրերը մեկից մյուսն են անցնում՝ փայտը վեր է ածվում կրակի, կրակը՝ հողի, հողը՝ մետաղի, մետաղը՝ ջրի, ջուրը՝ փայտի: Այդ անցումն ընկալվում է որպես մի տարրի կողմից մյուս տարրի «ծնունդ» և «հաղթահարում»: Այդ զարգացումն ու անցումը կրում են աստիճանական և անընդհատ փոփոխությունների բնույթ, ուստի նրանց մեջ «չկա մշտապես հաղթող»:

Այդպիսի նշանակություն ունեն նաև տարվա շորս եղանակները, որոնց մեջ չկա «մշտապես հաստատվածը»: Այդպիսին են բնության փոփոխություններն ու փոխակերպումները, այդպիսի օրենքներ են ընկած նաև պատերազմի էություն մեջ, նրանում չեն կարող լինել «մշտապես հաստատված կանոններ»:

## VII գլխի ծանոթագրությունները

1. Առաջադրելով ուղիղ և շրջանցիկ ուղիների հարաբերակցության հարցը, որը հնարավորություն է տալիս հասնել հաղթանակի, Սուն Յրզին ցույց է տալիս, որ երբեմն շրջանցիկ ուղիները կարող են ավելի շուտ նպատակին բերել, քան ուղիղ ճանապարհը:

2. Դու Սուն հայտնում է, որ հին չինական գործերի սովորական անցումը կազմել է 30 լի: Չժան Յուչը ավելի սպառիչ տեղեկություններ է հայտնում գործի օրագնացի մասին. «Զորքն օրական անցնում է 30 լի և կանգնում է այն ժամանակ, երբ անցնում է 50 լի, իսկ դրանից ավելին կլինի կրկնակի երթուղի: Օր ու գիշեր գնալ չհանգստանալով՝ «անընդհատ երթուղին է»:

3. Սուն Յրզին խոսքերի իմաստը հետևյալն է՝ երբ հակառակորդի դեմ պայքարում են 100 լիից ավելի, թեթևագեն ջոկատները պոկվում են առաջ, մարդիկ ընկնում են, ձիերը հոգնում են, մարդիկ ցանկանում են ջուր խմել և ջուր չեն գտնում: Եթե հանկարծ հանդիպում են հակառակորդին, ապա դա նշանակում է, որ ուժասպառ եղածները պետք է դիմակայեն թարմերին, սովածները՝ կուշտերին, բանակի գլուխն ու պոչը (առաջապահ և վերջապահ ուժերը) կորցնում են միմյանց հետ կապը: Այդ է պատճառը, որ երեք բանակների հրամանատարները գերվում են հակառակորդի կողմից:

4. Սուն Յրզին հիշատակում է «Զորքերի ղեկավարումը» անհայտ ռազմական գործի մասին: Մեյ Յո-չենը այդ գործն անվանում է «Հնագույն ռազմական կանոն», Վան Յրզին՝ «Հնագույն գիրք պատերազմի մասին»: Այս ամենից հետևում է, որ Սուն Յրզինից դեռ շատ առաջ գոյություն ունեին մեծաքանակ գործերը ղեկավարելու կանոններ, որոնք վերաբերում են կոչնագանգերի (գոնգերի), թմբուկների, դրոշակների և

նշանների օգնությամբ զինված ուժերը ղեկավարելուն: Զորավար Սիմա-Յան Յզուլչի (մ.թ.ա. VI դար) «Սիմա Ֆայի» («Սիմի օրենքները») երկում՝ այդ մասին ասված է. «Թմբկահարությամբ ազդանշան է տրվում մարտակարգերին, հեծելազորին, հետևակին, զենքին, գլուխներին, ոտքերին»: Դրոշակներով նշվում էին մարտական կառուցվածքի մասերը՝ առաջապահ և վերջապահ ուժերը և թևերը: «Յուրաքանչյուր հրամանատար ունի իր հատուկ նշանը», - ասում է Վեյ կյաո-Յըզին: Այսպիսով, զորաշարքերի ղեկավարումը և զորքերի գործողությունների ղեկավարումն իրականացվում էին ձայնային ազդանշանների՝ թմբկահարությամբ, կոշնազանգերի, ինչպես նաև տեսողական ազդանշանների՝ դրոշակների և դրոշների օգնությամբ:

5. Այստեղ Սուն Յըզին պահանջում է զորքերի ղեկավարման լիարժակ միասնականություն: Չժան Յուլը դա հետևյալ կերպ է պարզաբանում. «Երբ ռազմիկները շատ են, ստիպված ես ընդարձակ տարածք զբաղեցնել, (որի) պատճառով զորքի գլուխն ու պոչը (առաջապահ և վերջապահ ուժերը) միմյանցից հեռու են գտնվում, և ռազմիկները միմյանց չեն տեսնում և չեն լսում: Ուստի նրանց լսողությունը մի ինչ-որ բան են հասցնում հարվածելով թմբուկներին, բարձրացնելով դրոշակները, նրանց մի ինչ-որ բան են ցույց տալիս: Երբ բոլորի աչքերն ու ականջները ուղղված են մի ինչ-որ բանի վրա, թեկուզ այստեղ միլիոն մարդ լինի, նրանք կգործեն ինչպես մեկը»:

6. Սուն Յըզիի երկի մեկնաբան Լի Յյուանը դա հետևյալ կերպ է բացատրում. «Հայտնի է, որ թշնամուն շրջապատելիս, կողմերից մեկն անպայման պետք է ազատ թողնել, ցույց տալով (որ շրջապատումը) ամուր չէ: Եթե նրան շորս կողմից շրջապատես, (ապա) թշնամին անպայման կպաշտպանվի, (այնպես որ) նրան դուրս չես հանի»: Դու Մուն նույն միտքը հետևյալ կերպ է մեկնաբանում. «(Հակառակորդին) ցույց տուր կյանքի ճանապարհը, որպեսզի (նրա մոտ) ոչ մի դեպքում մահվան միտք չառաջանա: Եվ օգտվելով դրանից, հարձակվիր նրա վրա»:

### VIII գլխի ծանոթագրությունները

1. «Ինը»՝ «իցզինյան» թվերի շարժման վերջին սահմանն է: Ինը զարգացման բարձրագույն թիվն է, որից հետո գալիս են նոր թվեր, որպեսզի կրկին աճման ուղիով հասնեն սահմանագծին, այսինքն՝ ինին և նորից վերադառնան սկզբին, սակայն արդեն նոր բովանդակությամբ: Դրանք երևույթների հավերժ փոփոխություններն են, մշտական անցում մի վիճակից մյուսին: Այսպիսով, Սուն Յըզիի հասկացությամբ «ինը փոփոխությունները» անվերջ փոփոխություններ են: Գիտենալով անհամար փոփոխությունների էությունը՝ «կիմանաս, թե ինչպես պատերազմ վարես»: Հետևաբար տեղանքի «ձևում», նրա փոփոխություններում պետք է կարողանալ հաշվի առնել այն ամենը, ինչն անմիջականորեն շփվում է տեղանքի հետ: Ահա այստեղ է գտնվում օգուտը, որը կարող է և օգտագործվել զորավարի կողմից:

2. Հինգ թվականը («հինգ օգուտ») մեծ տեղ է գրավում չինացիների պատկերացումներում, ինչը երևում է Սուն Յըզիի երկից: Նրանց պատկերացմամբ, բնությունը կազմված է հինգ տարրերից, որոնց սպեկտորը բաղկացած է հինգ գույներից, հիմնական համը հինգն է, երաժշտական գամման ունի հինգ ձայնաստիճան (տոն): Զորավարի հատկությունները բաղկացած են հինգ սկզբունքներից (իմաստություն, արդարացիություն, մարդասիրություն, քաջություն, խստություն): Ուստի «հինգ օգուտը» գործածվում է բազմաթիվ օգուտների իմաստով, այնպես, ինչպես «ինը փոփոխությունները»՝ ընդհանրապես բազմաթիվ փոփոխություններ են, որոնք զորավարը պարտավոր է հաշվի առնել և օգտագործել մարդկանց ղեկավարելիս:

3. Սուն Յըզին առաջարկում է «օգուտը» միացնել «վնասի» հետ: Դրանք երկու հակադիր հասկացություններ են: Սակայն միաժամանակ օգուտի մեջ ամփոփված է անշահեկանությունը, և վնասի մեջ կան օգուտի տարրեր: Գործնականում, եթե տեսնում ես օգուտը, այն կարելի է օգտագործել, երբ հաշվի կառնես և կարող ես վերացնել ողջ վնասը, որը պոտենցիալ կերպով ամփոփված է այդ օգուտի մեջ: Կարող ես վերաց-

նեղ վնասը, եթե հաշվի առնես և կարողանաս օգտագործել այն շահը, որը պոտենցիալ կերպով ամփոփված է վնասի մեջ:

4. Քաջությունը, խելամիտ զգուշությունը, մարտական կատաղությունը, պատվի զգացումը և բարությունը պետք է հանդիսանան զորավարի գլխավոր հատկութիւնները: Սակայն Սուն Յըզին ցույց է տալիս, որ այդ յուրաքանչյուր որակի ետևում թաքնված է մեծ վտանգ. քաջության մեջ՝ մահվան հնարավորութիւն, զգուշության մեջ՝ գերվելու վտանգ, կատաղության մեջ՝ ինքնատիրապետման կորուստ, պատվի զգացման մեջ՝ ավելորդ անհանգստութիւն: Սուն Յըզին մեծ նշանակութիւն է տալիս այդ վտանգներին, քանի որ զորավարի այդ հինգ թերութիւնները կարող են բերել հենց իր՝ զորավարի և նրա բանակի կործանմանը:

## IX գլխի ծանոթագրութիւնները

1. Այստեղ Սուն Յըզին ի նկատի ուներ առանձին ցեղերի հնազանդեցումը և ցեղային մի առաջնորդի գերիշխանութիւն հաստատումը ուրիշի նկատմամբ:

Չինական պատմութիւնը խուան-դիին (Դեզին կայսր) համարում է չինացիների առաջին միավորողը: Նրան են վերագրվում մի շարք հայտնագործութիւններ հողագործութիւն, զարգացման մեջ, կշռի և երկարութիւն համակարգում, մետաքսագործութիւն, աղեղի պատրաստման և այլ բնագավառներում:

2. Դու Մունը մեկնաբանում է այս միտքը. «Հակառակորդը լքում է ճամբարը (այնպես), որ ցույց է տալիս, թե ինքը շարունակում է մնալ այնտեղ»: Դու Մունը բերում է զորավարներից մեկի օրինակը, որը խաբվելով, չի նկատել, թե ինչպես հակառակորդը կեղծ ճամբար պատրաստելով, նրա տարբեր մասերում խռուկներ վառելով՝ աննկատ հեռացել էր: Զորավարը միայն երկրորդ օրն է նկատում այդ:

3. Մեկնաբանները դա բացատրում են հետևյալով՝ քանի որ կորեկավարձն առօրյա ուտելիք էր, իսկ միսը թանկ սննդանիւթ էր, ուստի, եթե հակառակորդը կորեկավարձով առատորեն կերակրում էր ձիերին, իսկ միսն ուտում էր առանց փսոսալու, ապա դա նշան է այն բանի, որ

հակառակորդը հավասարակշռությունից դուրս է եկել և մտածում է միայն հուսահատ կռիվ տալու մասին:

4. Դու Մունը պարզաբանում է. «Թշնամու կողմից կգերվի նա, ով խորը պլաններ չունի, (ով) հենվում է միայն սեփական քաջություն վրա, արհամարհանքով է վերաբերվում հակառակորդին, թեթևամիտ է, չի հետևում (հակառակորդին):

5. Դու Մունը հետևյալն է ասում.« (եթե) բարությունը չի զուգակցվում հավատով, (ապա) չի կարելի պատիժների և մահապատիժների միջոցով մարդկանց համախմբել»:

6. Դու Մունը մեկնաբանում է. «Դա նշանակում է (որ նա, ով) դառնում է զորավար, (և) ժամանում է այն ժամանակ (ստանձնում է զորքի հրամանատարությունը), երբ ռազմական գործողություններ չեն ընթանում, (ապա նրա) հրամանները պետք է լինեն բարի, վստահություններ չնշող (և, ի վերջո) սարսափեցնող: Սկզբնապես (հրամանները) մարդկանց համար պարզ (և հստակ) պետք է լինեն: Դրանից հետո, երբ կհակադրվես (կմարտնչես) թշնամուն (և) օրենքներ կսահմանես՝ ողջ ժողովրդին (զորքին) հավատով կենթարկես քեզ»:

## Մ զլխի ծանոթագրությունները

1. Դու Մունն այդ միտքը հետևյալ կերպ է մեկնաբանում. «Որպեսզի մեկ (հոգով) հարձակվես տասի վրա, սկզբնապես անհրաժեշտ է, որպեսզի դու տասն անգամ գերազանցես թշնամուն պլանների մշակմամբ (ծրագրավորմամբ, պլանավորմամբ), զինվորների քաջությունամբ..., տեղանքի առավելությունամբ, զինվորների կուշտ և սոված լինելու աստիճանով, (և) միայն դրանից հետո կարելի է ոգևորվել մեկին՝ տասի դեմ հարձակվելու համար: Եթե (հակառակորդների) հզորությունները և ուժերը հավասար են, սակայն (դու) չես կարող գնահատել քո ուժերը (և) քո մեկով հարձակվես թշնամու տասնյակի վրա, ապա (դու) հարկադրված կլինես փախչել»:

2. Դու Մունն պարզաբանում է. «Չեն իստոն ասում է. «Տեղանքի գերազանցությունը եղանակից էլ կարևոր է»: Գնահատել հակառակորդին,

որոշել վտանգավորն ու դժվարը, հեռուն և մոտիկը՝ դա զորավարի բարձրագույն ուղին է»:

3. «Երեք մարտավարություն» երկի հեղինակ Խուանչի Գունը (մ.թ.ա. II դար) հետևյալ կերպ է կարևորում տիրակալ և զորավար հարաբերությունները: Զորքի դուրս գալը (և) բանակի շարժումը՝ (այդ) ամենը միայն զորավարի հրամանով է կատարվում: Եթե հարձակումը դեկավարվում է միայն ներսից (արքունիքի կողմից), դժվար է հաջողություն հասնել: Ուստի իմաստուն թագավորը և լուսավորյալ իշխանը ծնկի են իջնում և առաջ մղելով (զորավարի կառքի) անիվը, ասում են. «Զորավարը վճռում է (բոլոր) գործերն (իմ) պալատի շեմից դուրս»: Այս օրինակով հստակորեն սահմանազատվում են տիրակալի և զորավարի պարտականություններն ու իրավունքները: Տիրակալը պետք է վստահի իր զորապետին և անտեղի չխառնվի նրա գործերին: Պատմությունը վկայակոչում է բազմաթիվ դեպքեր ու փաստեր, երբ նման միջամտությունը ինչ ցավալի և նույնիսկ աղետալի վերջաբան է ունեցել պետության և ժողովրդի համար:

4. Ռազմական գործի գիտակ Լի Յըզին (571-649 թթ.) պատիժների վերաբերյալ իր մեկնաբանությունն է կատարում. «Հնում հմուտ համարվող զորավարները տասը մարդուց (հանցանքի դեպքում) անպայման սպանում էին երեքին: (Նրանց) հետևող (զորավարները) տասից մեկին էին սպանում: (Նրանք ուլքեր) տասից երեքն էին սպանում, ահաբեկում էին թշնամական պետությունը, (նրանք, ուլքեր) տասից մեկին էին սպանում, հասնում էին ողջ բանակում հրամանների կատարմանը: Դրանից հետևում է՝ նա, ով սարսափեցնում էր ինձ՝ չէր վախեցնում թշնամուն, ով ահաբեկում էր թշնամուն՝ չէր վախեցնում ինձ: Բարությունը, թեկուզև ամենաքիչը, առանց պարգևատրման մի թողնիր, շարությունը՝ թեկուզև ամենաչնչին՝ անպատիժ մի թողնիր»: Եվ Սուն Յըզին, և մյուս մեկնաբանները ընդգծում էին՝ զորավարն իր ողջ գործունեության ընթացքում պետք է առաջնորդվի միայն ու միայն օրենքով նախատեսված կանոններով:

## XI գլխի ծանոթագրությունները

1. Սուն Յըզին տեղանքի յուրօրինակ սահմանում է տալիս: Նա բաժանում է տեղանքը երեք տեսակի (կատեգորիաների): Առաջին տեսակի կամ խմբի մեջ է մտնում սեփական տարածքը: Իրենց ընտանիքներից ոչ հեռու գտնվող ռազմիկներն ու հրամանատարները կարող են փախչել, ուստի Սուն Յըզին այդպիսի տեղանքն անվանում է «ցրող տեղանք»:

Երկրորդ խմբին է պատկանում սահմանային շերտը: «Երբ ռազմիկներն ու հրամանատարները հակառակորդի տարածք դեռ նոր են մտնում, մտածում են տուն վերագառնալու մասին: Դա նշանակում է, որ նրանք վերագարձը թեթև գործ են համարում»: Այդպես է մեկնաբանում Զժան Յուլը «թեթև կամ սահմանային տեղանքը»:

Երրորդ խմբին են պատկանում տեղանքի մյուս տեսակները: «Երբ գործը խորանում է հակառակորդի տարածքը, այլևս չկա տուն վերագառնալու տրամադրություն: (Յառ գուն կամ Յառ Յառ՝ քաղաքական գործիչ և գորավար (220-280 թթ.), Վեյ իշխանության տիրակալ, Սուն Յըզիի երկի առաջին մեկնաբանը):

Սուն Յըզին իր երկում մեծ տեղ է հատկացնում աշխարհագրական պայմաններին, գտնելով, որ դրանք անշափ կարևոր են. «Ժամանակը, ժամը, պահը, մի շարք աննշան պարագաներ հաճախ ապահովում են հաղթանակը: Կարողանալ որսալ ժամանակը, պահը, օգտվել իրադրությունից՝ մարտը սկսելու, վարելու և ավարտելու համար, նշանակում է մարտը ժամանակին սկսել: Երբ արևը շողշողում է հակառակորդի աչքերին, երբ ուժեղ քամին փչում է նրա երեսին, եթե նրա բանակի տարբեր ջոկատների միավորումը չի կայացել, եթե սպասված օգնական ուժերը չեն ժամանել, երբ հակառակորդը հանգստի կարիք ունի, երբ նա մատակարարումն ապահովող միջոցներ չի ձեռնարկել, երբ նա տառապում է ծարավից ու սովից, երբ նրա արի ավագ գեներալներից որևէ մեկը բացակայում է կամ էլ հիվանդացել է՝ առանց տարակուսելու գրոհեք»:

2. Զժուան-չժուն և Յառ Գույը ցիկե էին («վրիժառուններ»): Զժուան-չժուն բնակվում էր Ու խանությունում (Չանցյուչի ժամանակաշրջանում, մ.թ.ա. 722-481 թթ.): Երբ Ու-ի արքայազն Գուանը ցանկանում էր ֆիզիկապես ոչնչացնել իշխան Լյաոին, նա այդ հանձնարարեց Զժուան-չժունին: Վերջինս ընթրիքի ժամանակ իրագործեց արքայազնի մտադրությունը: Յառ Գույը բնակվում էր Լու իշխանությունում և ծառայում էր Չժան-գանին (մ.թ.ա. 693-662 թթ.): Նա ձախողակ զորավար էր և երեք անգամ պարտություն էր կրել Յին իշխանության դեմ մղած պատերազմում: Դրա հետևանքով Լու իշխանության հողերի մի մասն անցել էր հակառակորդին: Իշխան Լուն որոշեց հաշտվել հակառակորդի հետ: Երբ տեղի է ունենում երկու իշխանների հանդիպումը, Յառ Գույը, որը գտնվում էր իր իշխանի շքախմբում, անսպասելիորեն դուրս է քաշում իր դաշույնը և այն մոտեցնելով իշխան Յիի կողորդին՝ պահանջում է վերադարձնել գրավված տարածքները:

3. Զանշան լեռը Չինաստանի բարձրագույն գագաթներից է: Զժան Յույը գտնում է, որ զորավարն պետք է իր զորքերի մարտական կառուցվածքն այնպես կազմակերպի և կառուցի, որ նրա մասերն ավտոմատ կերպով աջակցեն միմյանց և մասերից մեկի հարձակման դեպքում մյուս մասն անպայման պետք է հարված հասցնի հակառակորդին: Դա գործողությունների կոորդինացումն է՝ անհապաղ և եռանդուն աջակցություն այն մասերին, որոնք դրա կարիքն ունեն: Վերը նշվածն առաջին հերթին ապահովվում է զորքերին ներքին, բարձր գաղափարական համերաշխությամբ:

«Զանշանյան օձ» արտահայտությունը, շնորհիվ Սուն Յըզիի, չինական լեզվի գործածության մեջ մտավ որպես սրընթաց և ճկուն հասցված հակահարված՝ ի պատասխան հակառակորդի հարվածին:

4. Այստեղ Սուն Յըզին բերում է կոնկրետ օրինակ այն ժամանակվա քաղաքական իրադրությունից, երբ Ու և Յուե իշխանությունները թշնամի էին միմյանց: Սակայն, երբ նրանք մի նավակով, փոթորիկի ժամանակ գետն անցնեն, ապա մեկը մյուսին կօգնի, ինչպես ձախ ձեռքն օգնում է աշին: Այս արտահայտության իմաստը, մեր կարծիքով, հետևյալն է՝ նոր, ահեղ և ավելի հզոր թշնամու դեմ պայքարելու ժամանակ հնարա-

վոր է երկու նախկին հակառակորդների դաշնակցությունն ու միասնական գործողությունները:

«Ուժեհնն ու Յուժեհնը մի նավակում» պատկերավոր արտահայտությունը թեև վոր խոսք դարձավ Չինաստանում: Այն ցուցադրում է հարկադրական, սակայն ամուր համերաշխություն: Հարկ է նկատել, որ Սուն Յըզին այս օրինակը փոխ է առել «Ի Յըզին» («Փոփոխությունների գիրք») հնագույն փիլիսոփայական գրքից, որտեղ այդ օրինակը հետևյալ տեսքն ունի. «Եթե զենքը վայր դնես լքյալ վայրում, ապա նույնիսկ ազգականները չեն կարող միմյանց պաշտպանել: Եթե ընդհանուր նավակով գետն անցնում են հուր և Յուե ցեղերի մարդիկ, ապա ինչո՞ւ նրանք պետք է վշտանան այն մասին, որ իրենց մոտ տարբեր տրամադրություններ են: Ուստի գիտենալով իրենց դրությունը, նրանք չեն վշտանում իրենց տարբերություններից և ոչ անմիջականությունից: Եթե նրանք հասկանում են իրենց նպատակադրվածությունը, ապա (միմյանց) չեն պարտադրում (իրենց) ուժերն ու ռազմատենչությունը:

5. Երբ դեռևս գրավված դիրքերում չամրացած զորքին սպառնում էր թշնամու հարձակումը, մարտակառքերը դասավորվում էին քառանկյունի ձևով, իսկ նրանց անիվները թեթևակիորեն խրվում էին հողի մեջ: Չիբերը կապվում էին միասին և տեղաբաշխվում էին մարտակառքերի կողքին: Այսպիսով, շտապ կարգով կազմակերպվում էր օղակաձև պաշտպանություն: Սուն Յըզին գտնում է, որ պաշտպանության այդ միջոցն այնքան էլ հուսալի չէ: Հուսալի միջոցը՝ քաջությունն ու համերաշխությունն է:

6. Միաժամանակ «բարձունք բարձրանալով մի կողմ նետել աստիճանը», «վառել նավերը» արտահայտության հետ մեկտեղ կար երրորդ թեևավոր արտահայտությունը՝ «ջարդել կաթսաները»: Այդ բոլորը նշանակում են՝ իրենց նահանջի ճանապարհից զրկել:

Գու Մունը հետևյալ մեկնաբանությունն է կատարում. «Դա նշանակում է, (որ, եթե) ռազմիկները գտնվում են մահվան տեղանքում, զորավարի և զինվորների ցանկությունները միասնական են: Չսպասելով կարգ ու կանոնի (կոչին կամ հրամանին), (նրանք) իրենք են աշաղուրջ

(և) վախի մեջ են գտնվում, չսպասելով հորդորների (և) հրամանների, իրենք են մերձենում զորավարների (հետ) (և) հավատարիմ են (նրանց):

«Եթե արգելվեն կանխագուշակումները և ոչնչացվեն կասկածները, (ապա) մինչև մահ (ուզմիկները) ոչնչի մասին չեն մտածի»:

Դու Մունը նաև հետևյալ խորհուրդ-մեկնաբանությունն է անում. «Տեղավորիր նրանց (զինվորներին այնտեղ, որտեղից) ելք չկա: Նշանակում է, որ (նրանք ոչ) առաջ, (ոչ) ետ՝ ոչ մի տեղ չեն կարող հեռանալ: Ռազմիկները կկռվեն, լարելով իրենց բոլոր ուժերը, (նրանք) կմեռնեն, (սակայն) փախուստի չեն դիմի»:

Դու Մունը տալիս է վերը նշված մեկնաբանության մեկ այլ տարբերակ. «Բոլոր նրանք, ովքեր հայտնվում են անելանելի դրուժյան մեջ, մահվան տեղանքն ընկնելիս՝ երկյուղից մահով փրկվում են մահից: Եթե դրուժյունը բացարձակապես անելանելի է, ապա բոլորը, հավաքելով իրենց վերջին ուժերը, ձեռնամարտի են դիմում»:

Դու Մուն խորհուրդ է տալիս. «Ռազմական (արվեստի) օրենքների (համաձայն), շրջապատելով զորքը, անպայման անցում թող, որպեսզի (զորքի) մոտ ցանկություն չլինի մահանալ: Այժմ պատկերացնենք, որ գտնվում եմ շրջապատման տեղանքում: Թշնամին բացում է կյանքի ճանապարհը, որպեսզի գայթակղի իմ զինվորներին: Իսկ ես, հակառակը, փակում եմ այն, որպեսզի իմ ռազմիկները ցանկանային անպայման մեռնել (կռվել)»:

7. «Խտացում և ձգում» նմանապես «իցզինյան» սահմանի արտահայտությունն են: Այն բանից հետո, երբ խտացումը հասնում է իր վերջնագծին կամ սահմանին, առաջանում է ձգում: Վերջինս, հասնելով իր սահմանին, առաջանում է խտացում: «Ի-Յըզինում» այդ օրինաչափությունը ցուցադրվում է որդի օրինակով: «Որդը սեղմվում է, որպեսզի ձգվի»: Չին մյուս մտածողներն այդ մյուս օրինակը բացատրում են օձի օրինակով, որը ցատկից առաջ կծկվում է: Մուն Յըզին առաջարկում է զորավարին խտացման և ձգման մեջ փնտրել սեփական օգուտը:

8. «Բավան»՝ հեզեմոն, իշխանների միությունն առաջնորդ: Իշխանների միությունը երևան եկավ այն դարաշրջանում, որը չինական պատ-

մագրություն մեջ կոչվում է Ուբայի դարաշրջան (հինգ առաջնորդների, մ.թ.ա. VII-VI դարեր): Իշխան առաջնորդների երևան գալը հետևանք էր Չժոույան հարստության թուլացման, որի արդյունքում Չժոույան հարստության կազմի մեջ մտնող իշխանությունների նկատմամբ հսկողությունը գրեթե ամբողջությամբ վերացավ:

Իշխանությունների տիրակալները մշտապես երկպառակտչական կռիվներ էին մղում միմյանց դեմ, զուգահեռ դաշինքներ կնքում: Ուժեղ իշխանությունները գրավում էին ավելի փոքր և մանր տիրույթներ: Ուբա ժամանակաշրջանի վերջում մնացին միայն 14 ինքնուրույն իշխանություններ: Դրանցից ամենախոշորներն էին՝ Յի, Սուն, Յըզին, Չու, Յուե, Յին (մ.թ.ա. VIII դարում իշխանությունների թիվը հասնում էր 120-ի):

9. «Բացման և փակման տակ արտահայտությունը հակառակորդի այն գործողություններն ու տեղաշարժերը, որոնց պետք է հետևել, որպեսզի հենց որ հայտնաբերվի հակառակորդի որևէ թույլ կողմ, անմիջապես օգտվել դրանից, որպեսզի թշնամուն պարտության մատնեն:

### XIII գլխի ծանոթագրությունները

1. Մեյ Յո- չենն իր մեկնաբանություններում հայտարարում է. «Երբ միմյանց դեմ մի քանի տարի կանգնած 700 000 ծուխ կատարում են պարհակներ, (դրանից հետո) խնայել տիտղոսներ և պարգևներ, և մի ինչ-որ 100 ցզյանի մանրուք, չուղարկել հետախույզներ իրադրությունը պարզելու և դրանով հաղթանակի չհասնել՝ անմարդկայնության գագաթնակետն է»: Եվ ապա. «Թագավորներն անտեղի չեն շարժվել, (և) եթե նրանք շարժվել են, ապա անպայման հաղթել են: Եթե նրանք հերոսություններ են կատարել, ապա անպայման դրանով տարբերվել են մյուս բոլորից: Ինչո՞ւ: Որովհետև նրանք վաղօրոք տեղյակ են եղել հակառակորդի դրության մասին»: Այստեղ խոսքը գնում է հետախույզների ակտիվ գործունեությամբ հակառակորդի վերաբերյալ տեղեկություններ հավաքելու մասին: Ընդհանրապես, Հին Չինաստանում մեծ ուշադրություն էին դարձնում հետախուզական աշխատանքին, քանի որ վերջինիս օգնությամբ գորավարը ստանում էր իրեն անհրա-

ժեշտ տվյալները, որոնք վերաբերում են թշնամական բանակի սպա-  
ռազինությունը, թվականներին, զինվորների և հրամանատարների բա-  
րոյահոգեբանական և մարտական հատկանիշներին, զորահրամանա-  
տարների միջև եղած փոխհարաբերություններին և այլն: Այդ է պատ-  
ճառը, որ Սու Յրզնի երկի մեկնաբաններն ակտիվ կերպով պարզաբա-  
նում են զորավարի այս կամ այն միտքը: Դու Մուն ասում է. «Գիտցիր  
թշնամու գրությունը: Կանխատեսումը (վաղօրոք որևէ բանի մասին  
տեղեկանալ) չի կարելի ստանալ աստվածներից և դեերից, չի կարելի  
ստանալ համագրելով (այլ) իրադարձությունների հետ»: Իսկ Յոտ Գու-  
նը հետևյալ մեկնաբանությունն է կատարում. «Կանխատեսումը չի կա-  
րելի փնտրել աղոթքներում, չի կարելի փնտրել դեպքերի նմանություն-  
ներում»: Լի Յյունի մեկնաբանությունը. «Միայն լրտեսները կարող են  
իմանալ հակառակորդի գրությունը»:

2. Մանրամասն բացատրություն է տալիս Մեյ Յո-չենը. «Աստվածնե-  
րի և դեերի մասին կարելի է իմանալ գուշակությունների օգնությամբ, ի-  
րերի մասին՝ նրանց ձևի և բովանդակության մասին, կարելի է իմանալ  
դատողություններ անելով նմանության մասին, Տյան և Դի (երկինք և եր-  
կիր) օրենքները կարելի է իմանալ հաշվարկների միջոցով, սակայն, երբ  
գործը վերաբերում է հակառակորդին, (սպա) անհրաժեշտ է օգտվել հե-  
տախույզներից և միայն դրանից հետո կարելի է իմանալ որևէ բան»:

3. Սուն Յրզնի թվարկում է հետախույզների հինգ կատեգորիաներ,  
որոնք լայնորեն օգտագործվել են այդ ժամանակ: Տեղական հետա-  
խույզները հավաքագրվում են թշնամի պետության բնակչությունից, ո-  
րոնք համակված են ազահություններ, եսասիրությամբ և փառասիրու-  
թյամբ: Դու Մուն ասում է. «Թշնամական պետությունում լավ վերաբեր-  
վիր մարդկանց հետ, (նրանց) օգտագործիր իբրև (քո) լրտեսներ»:

«Ներքին հետախույզներին» հավաքագրում են հակառակորդի  
բարձրաստիճան աստիճանավորներից և ղեկավարման ապարատում  
աշխատող զանազան ծառայողներից: Դու Մուն նրանց մասին հետևյալ  
տեղեկություններն է հաղորդում. «Թշնամական աստիճանավորների  
(թվում) կան խելացի (մարդիկ), որոնք կորցրել են իրենց պաշտոնը, կան

այնպիսիները, որոնք սխալմամբ ցածր պաշտոններ են զբաղեցնում, կան այնպիսիները, որոնք կատարել են հանցագործություններ և պատժվել են, կան այնպիսիները, որոնք ձգտում են օգտվել (իրենց պետություն) պարտությունից (և) կործանումից, որպեսզի ի հայտ բերեն իրենց ընդունակությունները, որոնք էություն կայուն չեն, փոփոխվող (և) երկերեսանի են: Եթե աստիճանավորներն այդպիսին են, ապա նրանց հետ կարելի է հարաբերություններ հաստատել, հարցնել նրանց կեցություն մասին, նվիրել ոսկի (և) մետաքս, և այդ ձևով նրանց կապել քեզ (հետ): Հենվելով նրանց վրա, կարելի է տեղեկանալ նրանց երկրում տիրող իրադրության մասին, ուսումնասիրել նրանց պլանները, որոնք վերաբերում են մեր գործերին: Ապա կարելի է (թշնամական տերություն) տիրակալին բաժանել իր նախարարից, որպեսզի (նրանց միջև) համաձայնություն չլինի»:

«Վերադարձող հետախույզներ»: Սույն կատեգորիային պատկանում են մերկացված և վերահավաքագրված թշնամական հետախույզները, որոնց կաշառքով կամ հարկադրանքով ստիպում են «վերադառնալ» իր երկիրը և աշխատել իր պետության դեմ: Դու Մուն պարզաբանում է այդպիսի հետախույզների հավաքագրման տեխնիկան: «Երբ ինձ մոտ հայտնվում են հակառակորդի լրտեսները, (որպեսզի) ինձ հետևեն, ինձ անհրաժեշտ է վաղորոք գիտենալ այդ: Կամ առատ կաշառքով գայթակղեցնում եմ նրանց և վեր եմ ածում (լրտեսների, որոնց) մենք օգտագործում ենք, կամ էլ ձևացնելով, որ (ոչինչ) չեմ հասկանում, (նրանց նկատմամբ) կեղծ զգացմունքներ եմ ցուցաբերում (և) ազատ արձակում նրանց: Այդ դեպքում թշնամական լրտեսները վեր են ածվում մեր կողմից օգտագործվող (լրտեսների)»:

Այս պարզաբանմամբ, Դու Մուն նշում է պարտադիր հետախույզական աշխատանքի մասին, որն օգնում է բացահայտել հակառակորդի հետախույզներին և հնարավորություններ գեպքում վերահավաքագրել նրանց:

«Վերադարձող հետախույզների» կատեգորիային Սուն Յըզին մեծ նշանակություն է տալիս, քանի որ նրանց միջոցով բացվում են ամենա-

հուսալի ուղիները հակառակորդի ճամբարում հետախուզական ցանց կազմակերպելու համար: «Նրանցից դու շատ բան կիմանաս», - ասում էր Սուն Յրզին: Իսկ Դու Մուն նշում է. «Հետախուզյունների բոլոր շորս տեսակները՝ և՛ տեղական, և՛ ներքին, և՛ մահվան, և՛ կյանքի հետախուզյունները՝ նրանք բոլորն էլ տեղեկանում են հակառակորդի մասին վերադարձող հետախուզյունների միջոցով»:

«Մահվան հետախուզյուններ»: Այս կատեգորիայի հետախուզյուններին սովորաբար ուղարկում էին հակառակորդի բանակատեղ կեղծ տեղեկություններով, նրան մոլորություն մեջ գցելու նպատակով: Երբ մահվան հետախուզյուն կարողանում էր հաջողությամբ կատարել առաջադրանքը, նա թշնամու կողմից մահապատժի էր ենթարկվում: Նրանք հակառակորդի մոտ էին ուղարկվում խաղաղության մասին բանակցություններ վարելու անվան տակ: Երբ թշնամին, հավատարմով դեսպանի հավաստիացումներին, թուլացնում էր իր զգոնությունը, նրան, անսպասելիորեն հարված էր հասցվում: Երբ բացահայտվում էր դեսպանի իրական դիտավորությունը, նա մահապատժի էր ենթարկվում: Այսպես օրինակ՝ մահվան հետախուզյուններից մեկին, թշնամական տերության տիրակալի հրամանով, կենդանի-կենդանի եփել էին:

«Կյանքի հետախուզյուններ»: Այս հետախուզյունները հակառակորդի մոտ ուղարկվում էին այնպիսի տեղեկությունների ետևից, որոնք ստանալու կամ հայթայթելու դեպքում պետք էր անպայման ետ վերադառնալ կենդանի: Մի շարք մեկնաբաններ գտնում էին, որ այս կարգի հետախուզյունները պետք է տիրապետեին այնպիսի հատկանիշների, ինչպիսիք են՝ իմաստությունը, տաղանդը, զանազան միջոցներով գործելու հմտությունը: Դու Մունի կարծիքով. «Կյանքի հետախուզյունների համար անպայման ընտրում են (այնպիսի մարդկանց, որոնք) արտաքննապես հիմար են (երևում), (իսկ) ներքուստ խելացի են, արտաքննապես՝ թույլ, իսկ ոգով՝ ամուր: (Նրանք) դիմացկուն, առողջ, ամուր (և) քաջ են, սովոր են գտնվել ծանր պայմաններում, կարող են դիմակայել սովին, ցրտին, խայտառակությանը և ամոթին»:

Հետախուզական աշխատանքը ղեկավարողի նկատմամբ Մուև Յրզին մեծ պահանջներ է առաջադրում: Նրա կարծիքով այդ մարդը պարտավոր է «տիրապետել համակողմանի գիտելիքներին»: Դու Մուև պարզաբանում է. «Որովհետև, առաջին հերթին, պետք է գնահատել հետախուզի բնավորությունը, նրա անկեղծությունը, ճշմարտասիրությունը, համակողմանի գիտելիքները, և միայն դրանից հետո կարելի է նրանից օգտվել: Երկրորդը՝ պահանջվում է հետախուզիչների նկատմամբ լինել մարդասեր, գլխասիրտ և արդարացի: Երրորդը՝ պահանջվում է «նրբանկատություն և խորաթափանցություն»: Դու Մուև նշում է նաև. «Երբեմն հետախուզը ստանում է թանկարժեք զարդեր և փող, սակայն հակառակորդի մասին տեղեկություններ չի հայթայթում: Այդ դեպքում նա աշխատում է ազատվել առաջադրանքից կեղծիքի (օգնություն): Ահա այդ դեպքում է, որ պետք է լինել զգույշ և խորաթափանց, պահանջվում է կարողանալ նրա հաղորդումներում տարբերել ճշմարտությունը կեղծիքից»: Նման խստագույն պահանջատուները բացատրվում է նրանով, որ կյանքի հետախուզիչները հայթայթում են ռազմավարական նշանակություն ունեցող տեղեկություններ, որոնք կարող են վճռել հակամարտող կողմերից որևէ մեկի ճակատագիրը: Այդ է պատճառը, որ Մուև Յրզինի երկի բոլոր մեկնաբանները գտնում են, որ հետախուզիչների աշխատանքում նրբագույն հեռատեսությամբ և խորաթափանցությամբ օժտված մարդը կարող է «ամեն ինչ վաղօրոք իմանալ և ամեն ինչ կանխատեսել»:

4. Հակառակորդի դեմ պայքարի մարտավարությունը որոշելու համար, Մուև Յրզին առաջարկում է հետախուզիչներին հանձնարարել տեղեկություններ հավաքել թշնամու բանակի, բարձրագույն հրամանատարական կազմի, նրանց շրջապատի, պահակախմբի և այլոց մասին: Դու Մուև պարզաբանում է, թե ինչի համար է այդ ամենը պահանջվում. «Երբ ցանկանում ես հարձակվել, (մինչև այդ) անպատճառ պետք է գիտենալ, թե ով է հակառակորդի մոտ ծառայության մեջ գտնվում, նրանցից ով է խելացի, ով՝ հմուտ, և ով՝ ոչ, ծանր ու թեթև անելով նրանց ընդունակությունները, համապատասխան կերպով գործել նրանց դեմ»:

5. Ին հարստությունը կազմավորվել է մ.թ.ա. 1766թ.: Չինաստանի հնագույն պատմության համաձայն, Սյա հարստության վերջին տիրակալ Յրզե-վանն իր վայրագության և անբարոյականության համար գահընկեց արվեց Շան իշխանության տիրակալ Չժենտանի կողմից:

Ավանդության համաձայն, Ի Չժին ծառայում էր Յրզե-վանին: Ապա որպես ուսուցիչ և ղեկավար, անցել է ծառայության Չեն-տանի մոտ: Հասկանալի է, որ գիտենալով ամեն ինչ, ինչ կատարվում է մայրաքաղաքում, նա նպաստեց նրան, որ իր նոր տիրակալը հասավ հաջողության Սյա հարստության վերջին ներկայացուցիչ Յրզե-վանին տապալելու համար:

Նույնը տեղի ունեցավ նաև Ին հարստության անկման հետ և նպաստեց նրա փոխարեն մ.թ.ա. 1122թ. Չժոու հարստության հաստատմանը: Ին հարստության վերջին տիրակալ Չժոու-վանն իր վայրագությունների համար գահընկեց արվեց չժոույան տիրակալ Ու-վանի կողմից:

Այդպես է գնահատում Սուն Յրզին խոշոր հետախույզների դերը, որոնց օգնությամբ շահում են ճակատամարտերը և գրավում պետական իշխանությունը:

6. Յզյան Լին ասում է, որ զորքն առանց հետախույզության նման է առանց աչքի ու ականջի մարդու: Դու Մուն գրում է. «Ձիմանալով հակառակորդի դիրքը, զորքը ոչինչ չի կարող անել, իսկ հակառակորդի մասին կարելի է իմանալ ոչ այլ կերպ, քան հետախույզների միջոցով»: Այս ամենը գալիս է կրկին ու կրկին հաստատելու այն պարզ իրողությունը, որ հետախույզության լավ կազմակերպման դեպքում այն հնարավորություն է տալիս բավականաչափ և ժամանակին տեղեկություններ ստանալ հակառակորդի զորաբանակի մասին, որը հնարավորություն է ընձեռում գործել վստահորեն և վճռականորեն:



## 15.

### ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՈԱԶՄԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ<sup>1</sup>

#### **ՀՐԱԳՅԱ ԱՐՉՈՒՄԱՅԱՆ**

Հոգվածուժում հիմնավորվում է ռազմական մշակույթի շարժական մեծ կարևորությունը, դիտարկվում են արևմտյան ռազմական մշակույթի հիմնական խնդիրները: Դրան հատուկ անհամապատասխանությունները դառնում են ռազմավարական մտքի և պատերազմի ընկալման լուրջ խնդիրների աղբյուր, որոնց հաղթահարումը պահանջում է նոր մշակութային պարադիգմի և պատերազմի նոր մոտեցման մշակում: Հոգվածուժ տրվում է պատերազմի տրամաբանության և քերականության հասկացությունների ժամանակակից մեկնաբանման, պատերազմի շարունակականության և էվոլյուցիայի մասին ընդհանուր պատկերացում: Ցույց է տրվում, որ 21-րդ դարում պատերազմի բարդության մեծացումը և ոչգծայնությունը հրատապ են դարձնում հարմարվողականության՝ որպես պատերազմի սկզբունքի, ներառումը ժամանակակից ռազմական տեսություններում և բարդ հակամարտությունների տեսության մշակումը: Ընդհանուր գծերով քննարկվում է հայկական ռազմական մշակույթի և ռազմավարության վերականգնման խնդիրը:

---

<sup>1</sup> Այս հոգվածն առաջին անգամ լույս է տեսել հայերենով «21-րդ ԴԱԲ» ամսագրում, №4, 2006, էջ 3-52, իսկ ավելի վաղ՝ ռուսերենով «21-րդ ԴԱԲ», №2, 2006 [http://noravank.am/uploads/652/03\\_hrachya\\_arzumanyan.pdf](http://noravank.am/uploads/652/03_hrachya_arzumanyan.pdf): Վերահրատարակվում է որոշակի խմբագրումներով:

Հայ հասարակության մեջ ռազմական մշակույթի և ռազմավարության թեման ընկալվում է որպես բավական արատրակտ, ընթացիկ սոցիալական և քաղաքական կյանքի իրողություններից կտրված, նեղ մասնագետների համար թեմա: Յավոք, այսօր հայ քաղաքական և ինտելեկտուալ ընտրանիում չի ձևավորվել այն փաստի հստակ ընկալումն ու արժևորումը, որ 21-րդ դարում ոչ միայն աշխարհաքաղաքական, այլև քաղաքակրթական և մշակութային ասպեկտներն են դարձել իրական քաղաքականության անքակտելի մասը: Նոր ժամանակի մարտահրավերները հասարակություններին թույլ չեն տալիս հեռու մնալ մեր աչքերի առջև ծավալվող քաղաքական «գլոբալացման» գործընթացից, որն արդեն վստահաբար և միանշանակորեն ներառում է ոչ միայն տեղեկատվական, այլև քաղաքակրթական ու մշակութային հարթությունը:

Այս թեմայի շուրջ վերջին ժամանակներս ստեղծված աշխատանքներն, այնուամենայնիվ, չկարողացան հաղթահարել քաղաքական հարթությունը հատուկ ընդհանուր ինտերցիոնությունը, և հայ քաղաքական միտքն այսօր մնում է սրընթաց կերպով ձերացող հայեցակարգերի ու մոտեցումների շրջանակներում [Խե՛ս, օրինակ՝ 1, c. 3-15]: Սակայն այսօր արդեն անհրաժեշտ է այն բանի ըմբռնումը, որ անհնար է լուծել 21-րդ դարում Հայաստանի<sup>2</sup> հաջող զարգացման, իրապես հայկական քաղաքականության ծրագրման խնդիրները՝ առանց ձևավորելու Հայոց աշխարհի և հայ քաղաքակրթության հենքային արժեքները: Ինչպե՞ս է Հայաստանը նայում աշխարհին, տարածաշրջանին, ո՞րն է նրա տեղը ծավալվող գլոբալ գործընթացներում: Այս հարցերը պետք է խորապես իմաստավորվեն հայ ստեղծագործ և մտավոր ընտրանու կողմից:

Յավոք, այս նուրբ գործընթացները արագացման ենթակա չեն և հարկադրանք չեն հանդուրժում: Հայությունը պետք է հասունանա՝ նորո-

<sup>2</sup> Այստեղ և այսուհետ, Հայաստան ասելով, նկատի են առնվում երկու հայկական պետությունները՝ Հայաստանի Հանրապետությունը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, որոնք մեկ միասնական ամբողջություն են մշակութային և ռազմատրատեգիական հարթություններում:

վի արժևորելու համար իր տեղը որակապես փոխվող 21-րդ դարում: Ամբողջական և ներդաշնակ մոտեցման բացակայության պայմաններում և հայկական պետությունների քաղաքակրթական և աշխարհաքաղաքական համատեքստերի բարդությունը հաշվի առնելով՝ խիստ կարևոր է ներկայացնել Հայաստանի ռազմական ոլորտի գոնե ուրվագծերը:

Օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով Հայաստանն այսօր ի վիճակի չէ մշակել հայկական պետությունների ռազմաքաղաքական հարթության տեսական և հայեցակարգային ամբողջ անհրաժեշտ հենքը և հարկադրված է ներմուծել այլ մշակութային ու սոցիալական միջավայրում զարգացող գաղափարները, ռազմավարություններն ու հայեցակարգերը: Գիտակցելով այս քայլի անհրաժեշտությունն ու հարկադրվածությունը, հայ ընտրանին պարտավոր է պատասխանատվությամբ վերաբերվել դրան՝ խուսափելով էկլեկտիկությունից և խստորեն հետևելով ինչպես Հայոց աշխարհի հիմնարար, հենքային արժեքներին, այնպես էլ հայկական պետությունների իրական սոցիալ-քաղաքական իրադրությունը նոր գաղափարների համապատասխանության սկզբունքին:

Փոխառելու այս գործընթացը չի կարելի միանշանակորեն բացասական որակել, քանի որ գաղափարների և ռազմավարությունների աշխարհը բավական բազմազան է և ունի վերսալ, և խիստ կարևոր է ընտրության որքան հնարավոր է լայն ընդգրկում ունենալ: Դա բարձրացնում է հայ իրականության համար իրեն ավելի մոտ և համարժեք գաղափարներն ու հայեցակարգերն ընտրելու և հարմարեցնելու հնարավորությունները: Նման ընտրության ժամանակ խիստ կարևոր է դառնում Հայաստանի և Հայկական բարձրավանդակի տեղի արժևորումը համաշխարհային քաղաքակրթական, մշակութային և գաղափարախոսական հարթությունում:

Հայաստանն, անկասկած, ընդհանուր եվրոպական հոգևոր ավանդույթի կրողն է: Հենց այդ պատճառով էլ հոդվածում դիտարկվում են եվրոպական աշխարհին բնորոշ գաղափարներն ու տեսությունները, որի ռազմական մշակույթն առավել հաջողվածն է վերջին դարերի ընթացքում: Եվրոպական աշխարհին պատկանելությունը Հայաստանին

Թույլ է տալիս համեմատաբար «անցավ» յուրացնել ժամանակակից արևմտյան գաղափարներն ու ռազմավարական հայեցակարգերը՝ դրանով իսկ վերականգնելով հայկական պետականության բացակայության պատճառով դարեր ընդհատված հայ ռազմական մշակույթին ու ավանդույթները: Անկասկած, հայկական իրականությանը գաղափարների նման «փոխանցման» հաջողությունը ենթադրում է Հայաստանի ողջ ինտելեկտուալ ընտրանու ինտենսիվ աշխատանքը:

## 1. Արևմտյան ռազմական մշակույթը

Ռազմական գաղափարների և ռազմական մշակույթի բեկումնայնությունը.- Արևմտյան ռազմական մշակույթի և ռազմավարության որոշ ասպեկտների դիտարկումը պահանջում է արժևորել այն փաստը, որ այս ոլորտում գրեթե անհնար է որևէ նոր բան ասել: Մշակույթը և ռազմավարությունը հենվում են մտածողության ժամանակի մեջ կայուն մոդելների վրա, որոնց փոփոխությունը տեղի է ունենում բավական հազվադեպ և կապված է մարդկության պատմության դարափուլերի փոփոխության հետ: Սա նշանակում է, որ ժամանակակից արևմտյան ռազմական մշակույթի և ռազմավարական մտքի հիմքում ընկած փիլիսոփայական համակարգերը, տեսություններն ու հայեցակարգերը մշակվել են վերջին երկու հազարամյակների ընթացքում և իրենց մեջ կուտակել են բազում սերունդների փորձը:

Դիտարկվող թեմայի նկատմամբ նման վերաբերմունքը հարկ է համարել օբյեկտիվ և շատ բանով արդարացված, քանի որ պատերազմը և ռազմավարությունը, փոխելով արտահայտման ձևերն ու միջոցները, բնույթով մնում են անփոփոխ: Պատերազմի և ռազմավարության նոր տեսաբանները, փորձելով հասկանալ և մեկնաբանել իրենց կողմից դիտարկվող երևույթները, դիմում են ռազմական մտքի հազարամյա ժառանգությանը՝ ջանալով այնտեղ գտնել այն նոր մարտահրավերների պատասխանները, որոնց բախվում է հասարակությունն իր զարգացման ընթացքում [2, p. 3]: Շրջապատող ռազմական իրականությունը հասկանալու փորձերը, հակառակորդին ուսումնասիրելու անհրաժեշտությանը

գուգրնթաց, պահանջում են ճանաչել ինքն իրեն, սեփական հասարակությունը, ինչը հաղթանակի կարևորագույն բաղադրիչն է: Այս ճշմարտությունն արդեն յուրացվել էր Հին Չինաստանում և ձևակերպվել է չինացի խոշոր մտածող Սուն Յզիի (Sun Tzu) կողմից [3, p. 84]:

Չնայած հասարակությունում առկա մշտական մտավոր պաշարին, այնուամենայնիվ, գոյություն ունի այս կամ այն գաղափարի (որն առավել պահանջվածն է հանդիսանում հասարակական զարգացման կոնկրետ փուլում) մի ինչ-որ «մոդա»: Ակնհայտ է, որ ինտելեկտուալ մոդան, ինչպես և ցանկացած մեկ ուրիշը, փոփոխական է իր էությունը, և վաղ թե ուշ գալիս է ժամանակ, երբ հերթական «մեծ գաղափարը» տեղը զիջում է նորին» [2, p. 3]: Հասարակության կայուն զարգացումը և անվտանգությունը շատ բանով կախված են նրա ընտրանու՝ նոր գաղափարների հետ արդյունավետ աշխատելու, նոր ձևերի ու մեկնությունների հետևում հին գաղափարներն ու մոտեցումները տեսնելու կարողությունից՝ դրանով իսկ դյուրացնելով նոր մարտահրավերներին համարժեք պատասխան ձևավորելու խնդիրը: Ընդ որում՝ կարևոր է հասկանալ, որ նոր գաղափարները հաճախ նույնիսկ իրենց հեղինակների համար անսպասելի զարգացում են ստանում, և ինչպես գրում է Ջոն Գրեյը (John Gray), «գաղափարների պատմությունը ենթարկվում է հեզանքի օրենքին: Գաղափարներն ունենում են հետևանքներ, որոնք երբեք չեն լինում կամ հազվադեպ են լինում այն, ինչ սպասում կամ ցանկանում էին նրանց հեղինակները: Շատ հաճախ դրանք հակասում են ակնկալիքներին» [4, p. 27]: Այն ըմբռնումը, թե հատկապես որ գաղափարներն են «մոդայիկ» այսօր և որոնք, ամենայն հավանականությամբ, առավել հրատապ կլինեն վաղը, հասարակության ներքին ինտելեկտուալ «խոհանոցի» կարևորագույն բաղադրիչն է:

Ընտրանու թերհասունությունն ու տհասությունը հանգեցնում են նրան, որ հասարակությունը հանկարծակիի է գալիս՝ ընդհարվելով նոր, ուժ ու կշիռ հավաքող գաղափարներին, ինչը հանգեցնում է նրա անհամարժեքությունը և լավագույն դեպքում՝ ժամանակավոր կաթվածի: Հայությունը վերջին դարերի ընթացքում ճակատագրականորեն ուշանում

էր այն նոր միտումներն ու գաղափարներն ընկալելու գործում, որոնք այնուհետև դառնում էին վերահաս նոր ժամանակների շարժիչ ուժերը: Ինչպես նկատել է Հայկ Ասատրյանը, «Վաղուց է, ինչ հայը, որպէս մտածող, դարձել է հետևակ և հետևում է արդէն մշտուած, սպառուած ճշմարտութիւնների, Հայ մտածումի համար՝ գարունը բացում է այն ժամանակ, երբ Եվրոպայում արդէն ուշ ամառ է և պտուղը՝ քաղուած» [5, էջ 157]: Զափազանցութուն չի լինի, եթե ասենք, որ հայ հոգևոր, մտավոր և քաղաքական ընտրանու հենց նման ուշացման մեջ է թաքնված 20-րդ դարի սկզբի աղետի պատճառներից մեկը: Գաղափարների և հիմնարար հասկացութիւնների աշխարհը պետք է գտնվի հասարակութեան և նրա ընտրանու ակնդետ վերահսկողութեան ներքո, քանի որ անհաղորդ կամ անհասկանալի գաղափարներն ու միտումները հասարակութիւնը խոցելի են դարձնում իրենց հանդեպ [2, քր. 7-8]:

Ռազմական գաղափարները չափազանց կարևոր դեր են խաղում, քանի որ դրանց թերըմբռնումը կամ ոչ ճիշտ մեկնութիւնը կարող են աղետալի հետևանքներ ունենալ հասարակութեան համար: Ինչպես նշում է Փոլ Հիրշը (Paul Hirst), «պատերազմը մղվում է (ուղղորդվում է) այն գաղափարներով, թե ինչպես օգտագործել զենքն ու ռազմական համակարգերը գրեթե այն չափով, ինչ չափով և տեխնիկական ու կազմակերպչական փոփոխութիւնները: Գաղափարներն, այսպիսով, ունեն բեկումնային նշանակութիւն»: Մեծ նշանակութիւն և դեր է ստանում նաև այն մշակութիւնը, որը «շարունակում է ձևավորել ռազմական գիտելիքների զարգացումը և տարածումը (դիֆուզիան)՝ իրականացնելով բնական հարմարեցումները, որոնք դժվար կլինի կանխատեսել» [6, ք. 9]: Այսինքն՝ ռազմական մշակութիւն և գաղափարների բեկումնայնութիւնը բացատրվում է նաև գաղափարների աշխարհի և նոր ռազմական գիտելիքների ու տեխնոլոգիաների տարածման գործընթացների վերահսկողութեան սկզբունքային բարդութեամբ:

Հասարակութեան մեջ նոր գաղափարի ներդրումն անցնում է մի շարք փուլեր: Առաջին շրջանում այն ձևակերպվում է գաղափարը ծնողների և յուրացվում է, այսպես կոչված, վաղ հետևողների կողմից: Հա-

ջորդ փուլում այն տարածվում է ազդեցիկ առաջնորդների խմբի շրջանում, ովքեր ընդունակ են ազդել, որպեսզի գաղափարը ներդրվի հասարակության հենքում, ինքը նպաստում է հարմարեցման գործընթացի սկզբնավորմանը: Այդ ընթացքում առաջացող դրական հակադարձ կապը հանգեցնում է ամբողջ հասարակության մեջ (բացառությամբ նրա առավել պահպանողական հատվածի) գաղափարի պայթյունին և տարածմանը: Գաղափարը դառնում է հասարակության մտավոր հարստության բնական և անքակտելի մասը [7, pp. 233-234]:

Յավոք, 20-րդ դ. վերջին և 21-րդ դ. սկզբին ռազմական գաղափարների վերաբերյալ հայկական տեսլականը բախվում է մի շարք օբյեկտիվ դժվարությունների: Հիմնականում դա կապված է երկար դարեր պետականություն չունենալու հետ, ինչը չէր կարող չհանգեցնել աստիճանական անկման, իսկ հետագայում նաև՝ ընդհանրապես հայ ռազմական ավանդույթի գրեթե լրիվ վերացման: Մի շարք նահանգներում պետականության «բեկորների» պահպանումն օգնեց որոշ չափով պահպանել նաև որոշ ավանդույթների և գաղափարների «մնացուկներ», ինչն, այնուամենայնիվ, միանգամայն անբավարար էր գիտակցված ժառանգորդության մասին խոսելու համար: Երկիրը, որը մեր թվականությունից առաջ դարեր շարունակ և մեր թվականության սկզբին ունեցել է առաջատար ռազմական տերության համբավ, վերահսկել է Հայկական բարձրավանդակը, անկասկած, տիրապետել է նաև համապատասխան ռազմական մշակույթի, ունեցել է ռազմական ընտրանի և ավանդույթներ [8]:

Հայոց պետականության վերականգնումը 20-րդ դարում և տարած հաղթանակները նոր ռազմական փորձի արժևորման և հայ ռազմական մտքի ընդհատված ավանդույթների վերականգնման անհրաժեշտ նախադրյալներ ստեղծեցին: Այս ջանքերն, անշուշտ, պահանջում են ռազմական գաղափարների համաշխարհային գանձարանի, ինչպես նաև հայոց պատմության ու մշակույթի խոր իմացություն:

Արևմտյան ռազմական մշակույթի տեխնոլոգիականությունը և անհամապատասխանությունները.- Ռազմական մշակույթի կարևորագույն գործառույթը անսպասելիության էֆեկտի բացառումն է, երբ հասարա-

կուլթյունը հանկարծակիի է գալիս՝ բախվելով նոր իրականություն հետ [2, p. 28]: Ակնհայտ է, որ ինչպես հասարակության ներսում, այնպես էլ նրանից դուրս իրադարձությունների անսպասելի և անկանխատեսելի զարգացում առաջացնող գործոնների թիվը հսկայական է: Այնուամենայնիվ, ռազմական մշակույթի կարևոր բաղադրիչներից է հասարակության զարգացման հնարավոր սցենարների վերլուծությունը՝ դրանցից առավել վտանգավորների ի հայտ բերմամբ:

Արևմտյան ռազմական մշակույթի գծերից մեկը նրա տեխնոլոգիականությունն է, ինչը թույլ է տալիս նրա մասին խոսել որպես մեքենայակողմնորոշվածի [9]: Տեղեկատվական դարաշրջանի մեկնարկմամբ այս միտումներն ավելի խորացան: Տեխնոլոգիաները ներթափանցում են արևմտյան հասարակության գրեթե բոլոր շերտերը, որն առայժմ ի վիճակի չէ ձևավորել տեղի ունեցող փոփոխությունների համարժեք պատասխանը [10, pp. 14-26]: Արևմտյան մշակույթի՝ տեխնոլոգիաների տեղն ու դերը բացարձակացնելու հակումը նկատվել է դեռևս վաղուց և, այդ թվում, հետազոտվում էր այլ մշակույթների շրջանակներում: Ներկայումս այս միտումները ռազմական մշակույթում որպես նոր, որակապես այլ իրողություն ձևակերպելու փորձերի թունդ քննադատությամբ հանդես են գալիս չինացի հետազոտողները: Նրանք, մասնավորապես, պնդում են, որ «բարձր տեխնոլոգիաներն ընդհանուր առմամբ, ներառյալ նաև տեղեկատվական տեխնոլոգիաները, չեն կարող դառնալ ապագա պատերազմի հոմանիշը: Վերջիններս, հանդիսանալով ժամանակակից դարաշրջանի բարձր տեխնոլոգիաների տեսակներից մեկը, գրավել են, առաջին հայացքից, կարևոր դիրքեր սպառազինությունների ժամանակակից համակարգերում: Մակայն դա բոլորովին էլ բավարար չէ, որպեսզի այդ երևույթն ստանա պատերազմ անվանումը» [11, p. 2]:

Արևմտյան և, մասնավորապես, ամերիկյան ռազմական մշակույթի մեկ այլ կարևոր գիծն է հասարակության ռազմական և քաղաքական ուղորտների հստակ սահմանազատումը: Ամերիկյան մշակույթին խորապես խորթ է քաղաքականության և ռազմական ուղորտի միջև սահմանի որևէ ջնջում. խաղաղ կյանքը «քաղաքացիականների» հոգան է, իսկ պա-

տերազմ վարելը՝ զինվորական պրոֆեսիոնալների խնդիրն ու պարտականությունը [12, ch. 1]: Ակնհայտ է, որ նման խիստ սահմանազատումն ունի իր դրական կողմերը, սակայն պատերազմը և քաղաքականությունը սերտորեն փոխկապված են, անընդմեջ փոխգործակցում են և փոխադարձաբար ազդում են միմյանց վրա, ինչն այդ սահմանազատումը բավական արհեստական է դարձնում [13]:

Ստացվում է, որ ԱՄՆ ռազմական վերնախավը, հատկապես գործող բանակում, դաստիարակվել է Հելմուտ ֆոն Մոլտկեի (Helmut Graf von Moltke)՝ 1857-88թթ. գերմանական գլխավոր շտաբի պետի ոգով, որի համաձայն՝ պատերազմը պետք է մղվի ռազմական գիտություն ու արվեստի և ոչ թե քաղաքականության պահանջների շրջանակներում [14, p. 17]: Մոլտկեն, քաղաքականությունը հավասարեցնելով ազգային (գրանդ) ռազմավարությանը, պնդում է, որ թեև քաղաքականությունն է որոշում պատերազմի նպատակները և կարող է նույնիսկ փոխել դրանք ռազմական կամպանիայի ընթացքում, այնուամենայնիվ, այն իրավունք չունի խառնվել պատերազմի վարմանը [15, pp. 287-293, անգլ. թարգմ. տե՛ս 16]: Դրանով հանդերձ, տեղի է ունենում զինվորական պրոֆեսիոնալի դերի մի տեսակ բացարձակացում, որը «հերթական անգամ դառնում է զինվորական մասնագիտության վարպետ» [17, pp. XIII-XIV]: Իսկ ռազմական կամպանիայի անցկացումն ավելի շուտ թելադրվում է պատերազմի օրինաչափություններով, քան որևէ այլ բանով:

Հեզնանքը կայանում է նրանում, որ ժամանակին հենց Մոլտկեն է հանդես եկել հոգուտ զինվորականների նկատմամբ քաղաքացիականների վերահսկողության, ինչը պետք է պաշտպաներ հասարակությանը այն բանից, որպեսզի զինվորականները գերիշխող ազդեցություն ձեռք չբերեին քաղաքական որոշումներ կայացնելիս և պատերազմ վարելիս: Հասկանալով հասարակության ռազմականացման ամբողջ վտանգավորությունը, ինչն իր տրամաբանությանն էր ենթարկելու հասարակական բոլոր գործընթացները, Մոլտկեն խոսում է ռազմական մեքենայի հակակշռի ստեղծման անհրաժեշտության մասին [14, p. 17]: Նշենք, որ ի տարբերություն գործող բանակի, ԱՄՆ ռազմական տեսաբանները և

վերլուծաբանները կողմնորոշվում են դեպի քաղաքական շրջանակների «կարծիքը», որն իր հերթին թելադրվում է քաղաքական իրադարձությունների տրամաբանությունը և ոչ թե ռազմական գիտություն պահանջներով [2, p. 1]:

Ռազմական ոլորտի վրա քաղաքացիական վերահսկողության պահպանման և ռազմական ուժի ու քաղաքականության հստակ սահմանազատման ավանդույթը արևմտյան հասարակության երկվության վառ դրսևորումն է: Վերլուծելով ամերիկյան հասարակությունը՝ բավական դժվար է հասկանալ, թե ով է այնտեղ «ձևավորում» պատերազմի դեմքը՝ քաղաքական առաջնորդները, թե՞ զինվորական պրոֆեսիոնալները, որոնք տիրապետում են ռազմական արվեստին և մասնակցում են մարտական գործողություններին [2, pp. 12-13]: Մի շարք պատմաբանների և քաղաքագետների կարծիքով՝ այդ երկվության արդյունքը դառնում է ռազմական մեքենայի անարդյունավետությունը, ինչը համարվում է անխուսափելի վճարն այն բանի, որ պահպանվում է քաղաքացիական վերահսկողությունը բանակի վրա: Ընդ որում՝ վերահսկողության անհրաժեշտությունը տրվում է բացարձակ կարգավիճակ, որը թույլ է տալիս խուսափել էռոզիայից ժամանակի ընթացքում [18, pp. 9-60]:

Այսպիսով, պատերազմի վարման տրամաբանությունը հայտնվում է քաղաքական գործիչների, նշանակում է՝ քաղաքացիական անձանց վերահսկողության տակ, ովքեր իրավունք են ստանում միջամտել մարտական գործողությունների ընթացքին, պատերազմի կազմակերպման և վարման մեխանիզմին, ինչը կարող է հանգեցնել անարդյունավետ ռազմական որոշումների կայացմանը և, համապատասխանաբար, բացասական հետևանքների [19, pp. 429-458]: Այնուամենայնիվ, «քաղաքացիականներին» սխալվելու, բանակը չիմանալու և ճիշտ չհասկանալու (ինչը ռազմական գործում նրանց պրոֆեսիոնալ չլինելու բնական հետևանքն է) իրավունք է վերապահվում [20, p. 154]:

Քաղաքական գործիչների արտահայտած «կասկածամտությունը» զինվորականների հանդեպ, նրանց հաճախակի և շարդարացված միջամտությունը ռազմական որոշումների մշակման և կայացման գործըն-

Թացում հարցականի տակ են դնում զինվորական մասնագիտության անհրաժեշտությունը: Գործունեությունից ցանկացած ոլորտում պրոֆեսիոնալիզմի չափանիշներն են գիտելիքները և փորձը: Հասարակությունը, վստահություն տաժեղով կոնկրետ պրոֆեսիոնալների գիտելիքների և փորձի հանդեպ, այն տարածում է ամբողջ մասնագիտության վրա: Եթե քաղաքական առաջնորդները խառնվում են ռազմական կամպանիայի անցկացմանը, նշանակում է՝ զինվորականների նկատմամբ, որպես պրոֆեսիոնալների, անհրաժեշտ վստահությունը բացակայում է կամ բավական խոր չէ: Այսինքն, քաղաքական գործիչների կարծիքով, գիտելիքների ծավալը, որին հենվում է զինվորական պրոֆեսիոնալ գործունեությունը, բավական չէ պատերազմին վերաբերող որոշումներ ընդունելու համար և, նշանակում է, զինվորական մասնագիտությանը չի կարելի տալ համապատասխան լիազորություններ: Դատողությունների շղթայի տրամաբանական ավարտը հանգեցնում է մի եզրահանգման, որ զինվորական պրոֆեսիոնալիզմի և զինվորական պրոֆեսիոնալների մասին խոսելը դառնում է անկոռեկտ և, հետևաբար, զինվորական գործունեությունը կարող է իրականացվել սիրողական մակարդակով և դիլետանտների կողմից [21, pp. 3-18]:

Ռազմական ոլորտի և քաղաքականության արհեստական ու միտումնավոր սահմանազատման մեկ այլ բացասական արդյունքն է այն, որ պատերազմը դադարում է ընկալվել որպես խոլիստիկ՝ մի ինչ-որ ամբողջության և հասարակական կյանքի անքակտելի մաս, իսկ ռազմական միտքը խուսափում է դիտարկել ռազմական հաղթանակը ռազմավարական և քաղաքական հաջողության փոխակերպվելու խնդիրները: Սա հանգեցնում է անհամապատասխանության առաջացման, որի հաղթահարումը վերածվում է առանձին և ոչ միայն ակադեմիական հիմնախնդրի [14, pp. VI-VII]:

Անհամապատասխանությունները տարածվում են արևմտյան ռազմավարական մտածողության բնագավառի վրա, երբ քաղաքական գործիչներն իրենց ուշադրությունը կենտրոնացնում են պատերազմին նախորդող գործընթացների և դրա արդյունքների ձևակերպման վրա, այն

դեպքում, երբ զինվորականները կենտրոնանում են ռազմական կամպանիաների և մարտական գործողությունների անցկացման վրա [14, ք. 7]: Արդյունքը լինում է այն, որ քաղաքական և զինվորական առաջնորդները տարբեր կերպ են պատկերացնում պատերազմը, ինչն անդրադառնում է ընդունվող որոշումների վրա ռազմավարական պլանավորման, բյուջեի ձևավորման և այլ ոլորտներում: Վառ օրինակ կարող է ծառայել Գերմանիան, որը 30 տարիների ընթացքում պարտություն է կրել երկու համաշխարհային պատերազմներում, ինչն արդեն դժվար է պատահականություն որակել [2, ք. 15]: Եվ սա, չնայած այն հին ասույթի, թե՛ «Քանի դեռ չես կռվել գերմանացիների հետ, չես իմանա պատերազմն իրականում ինչ է» [10, ք. 19]:

Հիմնախնդրի ճիշտ պատկերացումն առաջին քայլն է նրա հաղթահարման ճանապարհին, և արևմտյան աշխարհի ինտելեկտուալ ընտրանին կարծում է, որ այդպիսին պետք է դառնա արևմտյան հասարակությունում ռազմական հաղթանակը ռազմավարական և քաղաքական հաջողության փոխակերպելու համակարգային դժվարությունների առկայության մասին խոստովանությունը: Հաջորդ փուլում այս ըմբռնումը պետք է ձևավորվի որպես ամբողջ ռազմական ոլորտի փոխակերպման համապատասխան քաղաքականություն [2, ք. 17]:

Արևմտյան ռազմական մշակույթի խնդիրներով զբաղվել է նաև Վիկտոր Դևիս Հանսոնը (Victor Davis Hanson), որը նույնպես եկել է այն եզրակացության, որ դրանում տիրապետում է «հակառակորդին ոչնչացնող ցանկացած ճակատամարտի» գաղափարը, երբ պատերազմը դիտվում է որպես գործիք, որը թույլ է տալիս «անել այն, ինչ ի վիճակի չէ անել քաղաքականությունը»<sup>3</sup> [22, քք. 20-22]: Արևմտյան ռազմավարական միտքը մեծ մասամբ ելնում է նրանից, որ հենց քաղաքականությունն է հրահրում պատերազմը, որը, սակայն, ավելի շուտ դառնում է քաղաքականության խեղաթյուրված այլընտրանքը, քան նրա տրամաբանական շարունակությունը [24, քք. 23-40]: Սա Հանսոնին հարկադրում է համա-

<sup>3</sup> Այստեղ նա զարգացնում է ավելի վաղ գրած աշխատանքի գաղափարները [23]:

ձայնել գերմանական այն կարգախոսին, ըստ որի՝ պատերազմն «ավելին է, քան թվում է»<sup>4</sup>:

Այն փաստը, որ դեռևս երկար ժամանակ Հայաստանը կգտնվի խիստ բարդ արտաքին քաղաքական իրադրությունում, հանգեցնում է նրան, որ հասարակության քաղաքական և ռազմական ոլորտների փոխհարաբերությունների կարգավորման հարցը չի դիտարկվում որպես առաջնահերթ խնդիր: Այնուամենայնիվ, պետք է հասկանալ, որ որքան շուտ հասարակությունում սկսվեն բանավեճերն այս առիթով, այնքան մեծ կլինի հնարավորությունն այն բանի, որ հայերիս կհաջողվի գտնել տվյալ խնդրի համարժեք «հայկական տեսլականը»:

Ակնհայտ է, որ նման կարևոր հարցերում ուրիշի փորձի անխոհեմ օգտագործումն անթույլատրելի է: Սա հրատապ է նրանով, որ արևմտյան գինվորական ընտրանին ներկայումս փորձում է լուծել ռազմավարական մտքում առկա անհամապատասխանությունների հարցը, որոնց անխուսափելիորեն բախվելու է նաև հայոց պետականությունը, եթե ընտրի ուրիշների որոշումների ու սխեմաների անխոհեմ փոխառնման ուղին:

Մյուս կողմից, Հայոց աշխարհը ժամանակին հաջողությամբ կարողանում էր լուծել այն խնդիրները, որոնք եվրոպական հոգևոր հարթությունում հանգեցնում էին անհապատասխանությունների, և պահել իր ամբողջականությունն ու ներդաշնակությունը<sup>5</sup>: Նշանակում է, Հայաստանն ունի բոլոր անհրաժեշտ նախադրյալները և՛ հայ գաղափարական ու մտավոր հարթության ամբողջականության պահպանման, և՛ քաղա-

<sup>4</sup> Կարգախոսը հնչում է այսպես. «Mehrsein als scheinen» և թարգմանվում է՝ «Ջանալ լինել ավելին, քան կաս իրականում»: Գերմանական գրականության մեջ այն հայտնվել է 18-րդ դ. վերջին և կապվել է Պրուսիայի հետ: Ավելի ուշ այն տարածվեց գերմանական գլխավոր շտաբում՝ շնորհիվ Մոլտկեի: Կարգախոսը հայերիս համար նույնպես տեղին է:

<sup>5</sup> Հայոց աշխարհի ամբողջականության և ներդաշնակության հասնելու հայկական ուղու մասին տե՛ս [26]: Զարչանի առավել կարևոր մի քանի գաղափարների մասին, որոնք վերաբերում են Հայոց աշխարհի՝ որպես ուրույն իրողության գաղափարին, տե՛ս [27, cc. 16-21]:

քականությունն ու պատերազմի ոլորտի միջև անհամապատասխանությունն առայժմ պոտենցիալ խնդրի հաջող հաղթահարման համար:

Պատերազմի ամերիկյան մոտեցումը (American way of war) հազվա՛վեպ է դուրս գալիս ռազմական հաղթանակի հասնելու և ռազմական կամպանիայի հաջողության խնդրի շրջանակներից և հարկադրում է համաձայնել Ռասել Ուիգլիի (Russell Weigley) այն տեսակետի հետ, թե դա ավելի շուտ ճակատամարտի և ոչ թե պատերազմի մոտեցում է, և մենք բախվում ենք թերհասունության և տերմինի ու նրա իրական բովանդակությունն միջև որոշակի անհամապատասխանություն [14, p. 1]: Վերջին տարիների իրադարձությունները ցույց են տալիս, որ ԱՄՆ-ը մնում է արևմտյան ռազմական մշակույթի ընդհանուր համատեքստում, իսկ ամերիկյան ռազմական մեքենան շարունակում է վարել ճակատամարտեր ու ռազմական կամպանիաներ, բայց ոչ պատերազմ: Եվ սա՛ չնայած այն բանին, որ ԱՄՆ-ը ունի ռազմական հաղթանակը քաղաքական հաջողության փոխակերպելու, իսկ այնուհետև նաև ցանկալի հետպատերազմյան կարգ հաստատելու անընդունակության բավական անաչառ պատմական փորձ: ԱՄՆ-ը, ինչպես և նախկինում, հանկարծակիի է գալիս, երբ բախվում է ռազմական կամպանիայի ավարտից հետո պատերազմ վարելու անհրաժեշտությանը: Առաջին հայացքից թվում է, թե անսպասելիության էֆեկտը կարող է բավական հեշտությամբ հաղթահարվել համապատասխան ռազմավարական կրթության, ճիշտ կադրային քաղաքականության և այլնի միջոցով: Սակայն խնդիրը շատ ավելի բարդ է, ու նրա «արմատները» գտնվում են ռազմական մշակույթում և պատերազմի ու քաղաքականության միջև խիստ հստակ սահմանազատում անցկացնելու մեջ [2, pp. 16-17]:

Պատերազմի տեսլականը արևմտյան ռազմական մշակույթում.- Թեև ընդունված է տարբերակում մտցնել տարբեր եվրոպական պետությունների և ԱՄՆ պատերազմի նկատմամբ մոտեցումներում, այնուամենայնիվ, դրանք բոլորը գտնվում են արևմտյան ռազմական մշակույթի ընդհանուր համատեքստում: Արևմտյան յուրաքանչյուր երկրի զինվորական վերնախավը, մշակելով սեփական ռազմական դոկտրինները, ռազմավա-

րուծյունն ու մարտավարությունը, այնուամենայնիվ, միանման է արձագանքում աշխարհաքաղաքական, սոցիալ-քաղաքական մարտահրավերներին: Պատերազմի հիմնական նպատակն արևմտյան հասարակությունների համար, ինչպես և նախկինում, մնում է հակառակորդի զինված ուժերի ջախջախումը, և եթե այս նպատակն այսօր բացահայտորեն չի բարձրաձայնվում, այն, այնուամենայնիվ, այս կամ այն կերպ առկա է մտածողության, կրթության մեջ և այլուր [25]: Արևմտյան ռազմական մշակույթը հակառակորդի զինված ուժերի ջախջախման փաստը, նրա մայրաքաղաքի գրավումը համարում է պատերազմն ավարտելու և հետպատերազմյան բանակցությունների գործընթացն սկսելու հատկանիշ: Այսինքն, մարտական գործողությունները և պատերազմը, ի հեճուկա Կլաուզեփցի տեսակետի, ավելի շուտ դիտարկվում են որպես հաջորդող բանակցային գործընթացի այլընտրանք և ոչ թե դրանց օրգանական մաս [14, p. 1]:

Պատերազմի նկատմամբ ամերիկյան մոտեցման շուրջ լուրջ բանավեճերն սկսվեցին 20-րդ դ. 70-ական թթ. սկզբին, Ռասել Ուիգլիի «Պատերազմի ամերիկյան տեսլականը» (The American Way of War) մենագրությունից հրապարակումից հետո [28]: Ուսումնասիրելով, թե ինչպես են մղվել պատերազմներն ամերիկյան պատմության ընթացքում, Ուիգլին եկել է այն եզրակացության, որ ԱՄՆ-ը կողմնակից է հակառակորդին ուժասպառ անելու կամ ոչնչացնելու միջոցով ջախջախիչ պարտություն հասցնելու ռազմավարությանը [28, p. 475]: Ամերիկյան պատմության Ուիգլիի կատարած հետազոտության շրջանակներում ստացված արդյունքները, ընդհանուր առմամբ, կիրառելի են արևմտյան ամբողջ ռազմական մշակույթի նկատմամբ, և պատերազմի Մյուլտիի ձևակերպած գերմանական մոտեցումը շատ բանով համընկնում է ամերիկյանին [15, անգլ. թարգմանությունը տե՛ս 16]:

2002թ. հրապարակված «Կատաղի պատերազմներ հանուն խաղաղության» (Savage Wars of Peace) մենագրությունում Մաքս Բուտը (Max Boot), հետազոտելով ԱՄՆ, այսպես կոչված, փոքր պատերազմներ մղելու պատմությունը, գալիս է այն եզրակացության, որ ԱՄՆ-ը պատերազմի վերաբերյալ մի քանի մոտեցումներ է որդեգրել [29]: Բուտը ցույց է

տալիս, որ փոքր պատերազմները, որոնք նա անվանում է «իմպերիալիստական», անմիջականորեն չներգործելով երկրի կենսական շահերի վրա, այնուամենայնիվ, մեծ ավանդ ունեն ԱՄՆ՝ որպես համաշխարհային ուժի կայացման գործում: Ամփոփիչ վերլուծությունում, դիտարկելով և համակցելով պատերազմի երկու մոտեցումները, Բուտն ավելի շուտ հաստատում է Ուիգլիի տեսակետը և ոչ թե մերժում այն [29, p. XVI]:

Ակնհայտ է, որ դեռ վաղ է խոսել պատերազմի հայկական տեսլականի մասին, սակայն 1988-1994թթ. Արցախյան պատերազմի արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանը մնում է պատերազմի արևմտյան մոտեցումների և մշակույթի շրջանակներում, ինչը չէր կարող չհանգեցնել այս ճանապարհի համար բնորոշ օբյեկտիվ հետպատերազմյան խաղաղության խնդիրների:

Արևմտյան մշակույթի ապառազմականացումը- ներկայումս առկա են հայտանիշներն այն բանի, որ «հին» եվրոպական պետությունների մշակույթն ավելի ու ավելի «ապառազմականացված» է դառնում [30]: Այս երևույթը զուգակցվում է եվրոպական մտքի՝ բանակից հասարակության ազատվելու հետ կապված ուտոպիական նախագծերից մեկի իրականացման փորձերի հետ, երբ «սոցիալական առաջընթացը», սոցիալական բոլոր հակասությունների լուծումը և այլն բանակը դարձնում են ոչ պիտանի: Հասարակությունը հաղթահարում է «ներքին վայրիությունը» և այլևս բռնության գործիք ու աղբյուր հանդիսացող սոցիալական ինստիտուտների կարիք չի ունենում [31]: Այս ավանդույթի վառ օրինակն է Կանտի «Իեպի հավերժ խաղաղություն» տրակտատը, որտեղ նկարագրվում է լուսավորչալ հանրապետությունների դաշնությունը, որում «մշտական բանակները (miles perpetuus) ժամանակի ընթացքում պետք է իսպառ վերանան», քանի որ պատերազմի համար ստեղծված լինելով՝ նրանք հրահրում են այն [32, cc. 257-347]:

«Ծեր եվրոպայի» մշակույթի ապառազմականացումը հետևանք է նաև ստեղծված աշխարհաքաղաքական համատեքստի, երբ եվրոպացիներն անհրաժեշտություն չեն զգում լրջորեն վերաբերվելու սեփական պաշտպանությանը: Վերջին 50 տարիների ընթացքում արևմտաեվրո-

պահան հասարակությունը նախընտրում է գտնվել ԱՄՆ ռազմավարական հովանու տակ և անտեսում է տեղի ունեցող փոփոխությունների մասին ազդանշանները [2, pp. 211-222]: Վերաբերմունքը պատերազմի՝ որպես անընդունելի սոցիալական երևույթի և գործիքի նկատմամբ, պետք է համարվի ժամանակավոր և ոչ հաստատուն, ու «պատերազմի վրա դրված տաբուն կցնդի ինչպես վաղորդյան մառախուղ, եթե, կամ ավելի շուտ՝ երբ սկսեն վերադառնալ ռազմավարական անհուսալիություն վատ ժամանակները» [10, p. 24]:

XX դ. 90-ական թթ. ընթացքում ԱՄՆ-ում ի հայտ եկան առասպելներ բռնություն նկատմամբ ամերիկացիների նողկանքի, աշխարհի հետհերոսական պատերազմների փուլի մասին, երբ անձի գործոնը, մարդկային կամքը պատերազմում սկսում են խաղալ ստորագաս, երկրորդական դեր [33, pp. 109-222]: Որոշ գիտնականներ տեսակետ են հայտնել, թե ռազմական ոլորտում և ընդհանրապես հասարակությունում տեղի ունեցող խոր փոփոխությունների գլոբալ տիրույթում գործող նոր ձևավորվող մշակութային տաբուների ֆոնին պատերազմը դադարում է լինել քաղաքականության պրակտիկ գործիք և դառնում է բարոյապես անընդունելի [34, pp. 275-297]: Պատերազմի ապալեգիտիմացման վրա ազդող կարևոր գործոններից մեկը գլոբալ մասս-մեդիան է: Մարտական գործողություններում ուղիղ «օն-լայն» միացումները թույլ են տալիս պատերազմի դաժան, իրական պատկերը հասցնել տառացիորեն յուրաքանչյուրի տուն: Սակայն նողկանքը պատերազմի և ռազմական բռնության նկատմամբ դառնում է ոչ այնքան բարոյական դատապարտման, որքան վրդովմունքի արդյունք այն փաստից, որ այն դառնում է մեդիաբիզնես և մի տեսակ սպորտ, ինչը հանգեցնում է զինվորականի ավանդական կերպարի և զինվորական մասնագիտության «լոզոմանը» [35]:

Առևմտյան ռազմական մշակույթի «փոխակերպման» խնդիրներ-ժամանակակից աշխարհը, սրընթացորեն փոփոխվելով, դառնում է ավելի բարդ և անկանխատեսելի, ինչը հանգեցնում է հասարակության անվտանգության ոլորտի անհամապատասխանությանը առաջացող նոր սպառնալիքներին [7, p. 2]: Աշխարհը դառնում է էլ ավելի ոչգծային,

այն դեպքում, երբ ընդհանրապես հասարակությունում, նրա ուժային կառույցներում շարունակում են իշխել գծային մշակույթը, մտածողությունը և կրթությունը [36, Ե. 123-153]: Այնուամենայնիվ, Արևմուտքի զինվորական վերնախավում հասունանում է այն ըմբռնումը, որ նոր դարաշրջանի մարտահրավերների համարժեք արձագանքը, ներառյալ նաև ռազմական ոլորտի փոխակերպումը, պետք է տեղի ունենա ոչգծայնության պարագիզմի տերմինաբանության և հասկացությունների ապարատի հիման վրա [37, Ե. 48-49]:

Մյուս կողմից, ռազմական մշակույթում փոփոխությունների անհրաժեշտության մասին ռազմական և անվտանգության ոլորտների փոխակերպման հետ կապված հանձնարարականներն իրականացնելիս, հարկ է խուսափել ծայրահեղություններից: Պետք է հասկանալ, որ մշակույթն իր բնույթով ավելի իներցիոն է, քան քաղաքականությունը և բացառում է իր վրա ուղղակի ազդեցությունները: Մշակույթի վրա անմիջական ազդեցության նախագծերը բոլոր ժամանակներում վերաբերել են ուստոպիային, և ընդունելով մշակույթի, նոր ժամանակներին անհամապատասխանությունը, անհրաժեշտ է հասկանալ, որ այն պատմականորեն տեսանելի ժամանակում կմնա այդպիսին: «Մշակույթը փոխակերպելու» կոչերը պետք է ընդունել որպես ոչ համարժեք, և այն ամենը, ինչ մնում է, հաստատագրել ու հաշվի առնել մշակույթի անհամապատասխանությունը նոր դարաշրջանի պահանջներին [38]:

Մշակույթը և մշակութային հենքը, արտացոլելով սոցիալական վարքագծի խորքային մոդելները, նախնական են հանդիսանում քաղաքականության և պատերազմի նկատմամբ: Սա նշանակում է, որ արևմտյան հասարակության և նրա զինված ուժերի՝ տեղի ունեցող փոփոխություններին հարմարվելու կարողությունը, ամեն պարագայում, սահմանափակվում է նրա մշակույթի անկայունությամբ և համարժեքությամբ: Մյուս կողմից՝ արևմտյան մշակույթը չափազանց պլաստիկ է և, պահպանելով մի շարք հիմնարար պարամետրեր, թույլ է տալիս փոխառություն անել և ազդեցություններ կրել այլ մշակույթներից [2, Ե. 22]:

Թեև բոլոր ժամանակների և ժողովուրդների ռազմական մտածողները միակարծիք են այն հարցում, որ պատերազմի բնույթը ունիվերսալ է և անփոփոխ, այնուամենայնիվ, կոնկրետ պատերազմը տվյալ հասարակութունում ընդունված համատեքստից, մեծաթիվ գործոններից ու սոցիալական նորմերից կախված մշակութային երևույթ է: Պատերազմն ունի մի քանի համատեքստեր, որոնցից կարևորներն են տեխնոլոգիականը, քաղաքականը, սոցիալականը և մշակութայինը: Ընդ որում՝ լուրջ հետազոտողներն ու ստրատեգները միշտ ընդգծել են մշակույթի, այդ թվում ռազմավարական մշակույթի կարևոր դերը [39, ch. 5]:

Մի շարք հետազոտություններում նշվում է, որ վերջին ժամանակներս ԱՄՆ ռազմավարության ձևավորման մեջ և պատերազմի վերաբերյալ մոտեցումներում որոշիչ դեր է խաղում ավելի շուտ աշխարհաքաղաքական և ոչ թե մշակութային համատեքստը: Դա կապվում է համաշխարհային քաղաքական համակարգում տեղի ունեցող ոչգծային տեխտոնական տեղաշարժերի և վերջին տասնամյակների աշխարհաքաղաքական հեղափոխության հետ, հետևաբար՝ կրում է ժամանակավոր բնույթ [40]: Այնուամենայնիվ, արդեն ակնհայտ է, որ մի շարք տեսաբանների այն պնդումները, թե տեղեկատվական դարաշրջանում աշխարհագրությունը և, համապատասխանաբար, աշխարհաքաղաքականությունը դադարում են լինել համաշխարհային քաղաքականության վճռորոշ գործոններ, չեն համապատասխանում իրականությանը: Տարածքը, ինչպես և նախկինում, շարունակում է առաջատար դեր խաղալ պատմության մեջ, իսկ «տեղեկատվական տեխնոլոգիաները կարտոֆիլ չեն աճեցնում» ասույթը, առաջվա նման, արդարացի է՝ կատարելով գլոբալ տեղեկատվական հասարակության մեղալի դարձերեսի դեր [10, p. 23]:

Հայ ռազմական մշակույթի ավանդույթների ընդհատումը, անշուշտ, բացասական փաստ լինելով, մյուս կողմից՝ ստեղծել է «մաքուր էջից» դրանց վերածնման եզակի հնարավորություն: Հայկական պետականությունը հազվագյուտ հնարավորություն ունի ռազմական ոլորտը կերտելիս հաշվի չառնել ռազմական մշակույթի և ավանդույթների իներցիոնության գործոնը: Ակնհայտ է, որ կարող է առկա լինել «ռեյա-

տիվիզմի» վտանգ, երբ հասարակությունը, ապակողմնորոշվելով, կտրվում է դարաշրջանի սոցիալական, պատմական և այլ համատեքստերից: Հայաստանի պարագայում այդ կերտումի կայունության և հաջողության գրավական են դառնում հայկական մշակույթը, նրա ամբողջականությունն ու անքակտելիությունը՝ Հայոց աշխարհի ողջ պատմության ընթացքում<sup>6</sup>:

Արևմտյան աշխարհի նոր մշակութային պարադիգմը.- Սառը պատերազմում ԱՄՆ անվերապահ հաղթանակի, ինչպես նաև դրա մշակութային հիմքի ըմբռնման հետևանքը դարձավ արևմտյան կիսագնդի նոր համաշխարհային պարադիգմը (The Western Hemisphere New World Paradigm), որը կերտվեց «ամերիկյան բացառիկության» երևույթի հիման վրա: ԱՄՆ բացառիկությունը, մասնավորապես, հիմնավորվում էր նրա բարոյական գերազանցությամբ, նոր ինքնության և ազգի ստեղծման խնդիրը հաջող լուծելու կարողությամբ, ինչպես նաև ամերիկյան հասարակությունում ներգաղթյալների ինտեգրմամբ [43, p. 7]: «ԱՄՆ հաստատուն հավատն իր բացառիկության հանդեպ հիմնվում է նրա արդարացիության և այլ ազգերի նկատմամբ բարոյական գերազանցության վրա» [44, p. 8]:

Մշակույթին հենվող ԱՄՆ ճնշող ռազմական հզորությունը և որպես դրա հետևանք առաջացող անխուսափելի էյֆորիան հանգեցրին անվերապահ մշակութային գերազանցության մասին եզրահանգման: Աշխարհում այլևս «արժանի հակառակորդ» չէր մնացել, և ամերիկյան մշակույթը հռչակվում էր ամենահզորը մարդկության պատմության մեջ: Վաղ թե ուշ այն կկործանի բոլոր հակառակորդ ավանդական մշակույթները, որոնք ի վիճակի չեն լինի դիմանալ մրցակցությանը: Մշակութային գրոհին ուղղակիորեն դիմադրելու փորձերը պետք է միայն ողջունվեն, քանի որ, դատապարտված լինելով ձախողման, դրանք ցրում

<sup>6</sup> Հայոց մշակույթի՝ իր պատմության ողջ ընթացքում, տարածության ամբողջականության մասին տես [41]: Մենագրությունը մինչ այդ [42-ում] արտացոլված գաղափարների զարգացումն է:

են հասարակությունների ուշադրությունն ու էներգիան՝ թույլ չտալով նրանց կենտրոնանալ ամերիկյան մարտահրավերին համարժեք արձագանքի ձևավորման վրա: Այս տեսակետից դիմադրության ֆունդամենտալիստական, ավտորիտար բոլոր մեթոդները պետք է ընդունվեն որպես ամերիկյան մշակութային, նշանակում է՝ նաև ռազմական գերազանցության խորացմանը նպաստող մեթոդներ [45, pp. 4-14]: Ակնհայտ է, որ ԱՄՆ ուղղակի ու բացահայտ մշակութային այս ազդեհիան համարժեք հակահարվածի հանդիպեց ավանդական հասարակությունների կողմից, ինչի արդյունքը դարձավ ամերիկյան մշակույթի ձգողականություն կտրուկ անկումը և հակամերիկանիզմի աճը. «Հակամերիկանիզմը ներկայումս նման է համաշխարհային կրոնի» [43, p. 1; 46]:

Պետք է արժանին մատուցել ամերիկյան ընտրանուն, որը բավական արագ կողմնորոշվեց, որ թշնամության աղբյուր են այլ հասարակություններում գլոբալ շափերով ամերիկյան մշակույթի ուղղակի փոխադաստման փորձերը: Ներկայումս ԱՄՆ-ը փորձում է վերակողմնորոշվել դեպի անուղղակի ռազմավարությունների օգտագործումը: Այդ փորձերը, սակայն, հակասություն մեջ են մտնում ամերիկյան մշակույթի խորքային մոդելների և «բնագրիների» հետ [47, p. 185]: ԱՄՆ-ը փորձում է մշակել և ներդնել մշակութային էքսպանսիայի նոր մեթոդներ՝ գնդապետ Լոուրենսի ոգուն և մաքսիմին համապատասխան. «Մի արա և մի ջանա անել շատ բան սեփական ձեռքերով: Ավելի լավ է արաբներն այդ անեն տանելի շափով, քան դու՝ փայլուն կերպով: Դա նրանց պատերազմն է, և դու օգնում ես նրանց հաղթանակ տանել և ոչ թե հաղթել նրանց փոխարեն» [48]: Կառուցողական ազգային ռազմավարության առանցքային տարր է հայտարարվում տեսնել «աշխարհն այնպես, ինչպես որ նա կա, և ոչ թե այնպես, ինչպես այն պետք է լինի կամ այնպես, ինչպես մենք ենք ուզում տեսնել» [49, p. 2]: Սա նշանակում է, որ զարգացման հերթական փուլում արևմտյան ռազմական և ռազմավարական միտքը կրկին հանգել է մշակույթի և մշակութային համատեքստի արժեքմանը, որոնք ինչ-որ աբստրակտ կամ չեզոք բաներ չեն պատերազմի հիմնախնդիրները դիտարկելիս [50, p. 588]:

Այս առումով հայ մշակույթի անվերապահ կշիռը, արևմտյան հոգևոր Ավանդույթին նրա պատկանելութունը բարենպաստ նախադրյալներ են ստեղծում Հայաստանի ռազմական ոլորտի կայացման և զարգացման համար: Մշակույթի դերի ու տեղի փոփոխվող գնահատականների ֆոնին հայույթյան՝ հազարամյակների ընթացքում ստեղծած մշակութային հենքը դառնում է նրա կայացածության գրավականը: Հայոց պետականության հենքը հանդիսացող ռազմական ավանդույթների և մշակույթի վերածնման հայտ ներկայացնելով՝ Հայաստանն, անկասկած, կատանա վստահության անհրաժեշտ վարկը Արևմուտքի հոգևոր և մտավոր ընտրանու կողմից: Խնդիրը հայ ընտրանու՝ իրեն նետված մարտահրավերին համարժեք պատասխան ձևավորելու կարողության մեջ է:

## 2. Պատերազմի տեսլականը, տրամաբանությունը և քերականությունը արևմտյան ռազմական մշակույթում

Պատերազմի տեսլականը.- «Պատերազմի տեսլական» (way of war) հասկացությունը արևմտյան ռազմական մշակույթում ներառում է պատերազմի կազմակերպման և անցկացման ընդհանուր միտումները, ինչպես նաև այս կամ այն հասարակությանը հատուկ ռազմական մտքի հիմնական դրույթները: Պատերազմի տեսլականը որոշում է այն զինվորական և քաղաքական առաջնորդների՝ պատերազմի մասին հիմնարար գաղափարները, որոնք, վերջին հաշվով, որոշում են ռազմավարական պլանավորումը, ռազմական ծախսերը, զինված ուժերի զարգացման հայեցակարգերն ու դոկտրինաները [51, p. 1]:

Ակնհայտ է, որ այս կամ այն պետության պատերազմի տեսլականը ավելի լայն պարագիծով՝ տվյալ դեպքում պատերազմի արևմտյան տեսլականի և արևմտյան ռազմական մշակույթի բաղադրատարրն է: Հանսոնն իր «Կոտորած և մշակույթ» (Carnage and Culture) մենագրությունում խոսում է այն մասին, որ արևմտյան մշակույթի մի շարք հենքային արժեքներ, ինչպիսիք են ռացիոնալիզմի ավանդույթները, ինդիվիդուալիզմը, քաղաքացիական պարտքը, հանգեցնում են Արևմուտքի անվերապահ գերազանցությանը ռազմական «կազմակերպության, կարգապա-

հույժան, բարոյականություն, ինտուիցիայի, ճկունություն և հրամանատարություն իրականացնելու» մեջ: Նա չի պնդում, թե արևմտյան ռազմական մշակույթն առավելություն ունի ուրիշների նկատմամբ, բայց հաստատում է, որ վերջին 5 դարերի ընթացքում տարբեր մշակույթների բանականների բախման ժամանակ հաղթանակը պատկանել է Արևմուտքին [22, pp. 20-22]: Մի շարք հետազոտողներ, օրինակ՝ Անտուլիո Էչևարիան (Antulio Echevarria), դիտարկելով պատերազմի ամերիկյան տեսլականի խնդիրները, գալիս է եզրահանգման, որ այս տերմինը ԱՄՆ զինվորական վերնախավում ստանում է խիստ նեղ մեկնաբանություն, և ներկայումս ավելի շուտ հարկ է խոսել «ճակատամարտի ամերիկյան տեսլականի», այլ ոչ թե «պատերազմի տեսլականի» մասին [14, p. 1]:

Լուծելով պատերազմի նոր տեսլականի ձևավորման խնդիրը՝ ամերիկյան ռազմական միտքը բախվում է երկու մեծ և փոխկապված խնդիրների: Առաջին՝ այն պարտավոր է հստակ որոշել պատերազմի՝ այսօրվա դրությամբ անորոշ տրամաբանություն և քերականություն հասկացությունների կիրառման ոլորտը, գործառույթն ու դերը, որոնք կներկայացվեն ստորև: Դա պետք է նվազեցնի ռազմավարական մտածողության երկճյուղությունը, որը, ինչպես գրում է սահմանափակ պատերազմի առաջատար տեսաբաններից մեկը՝ Ռոբերտ Օսգուդը (Robert Osgood), հետևանք է ռազմական ուժի և քաղաքականության միջև ստեղծվող հեռավորության [52]: Պատերազմի ավանդական ամերիկյան տեսլականի բնորոշ գծերից են քաղաքական ուժի սխալական թերագնահատումը, «երկարատև» հակապատերազմական ավանդույթը և ռազմական ուժի ու արտաքին քաղաքականության համակցման անբավարար փորձը [52, pp. 28-42]: Պատմությունը ցույց է տալիս, որ թեև պատերազմի ժամանակ զինվորականներն ու քաղաքական գործիչներն աշխատում են միասին, անձնային մակարդակում նրանց միջև առաջանում են որոշակի «տարածություն» և մրցակցություն, ինչն աննշան է դառնում միայն տոտալ պատերազմի ժամանակ:

Երկրորդ մեծ խնդիրը, որը պետք է լուծվի պատերազմի նոր տեսլականի շրջանակներում, կապված է զինվորական ու քաղաքական ա-

ուաջնորդների՝ պատերազմը որպես ամբողջական երևույթ տեսնելու և, համապատասխանաբար, ռազմական հաղթանակը ռազմավարական և քաղաքական հաջողության փոխակերպելու չիմացություն հետ: Ռազմական և քաղաքական մոտեցումներում առկա անհամապատասխանությունների խնդիրը նկատվել է բավական վաղուց (դեռ XX դ. 70-ական թթ. սկզբին), սակայն այժմ էլ չի կարելի խոսել այն մասին, որ այն լուծվել է, և որ պատերազմի նկատմամբ ամբողջական մոտեցումը դարձել է բոլորի կողմից ընդունելի և սովորական [53]: Ավելին, արդեն առկա է ըմբռնումն այն բանի, որ այդ անհամապատասխանություններն են դարձել այն խոչընդոտները, որոնք խանգարել են ԱՄՆ-ին Աֆղանստանում և Իրաքում տարած հաղթանակները ռազմավարական, իսկ այնուհետև նաև քաղաքական հաջողության փոխակերպելուն [54, pp. 85-94]: Այս խնդրի լուծումը անխուսափելիորեն կպահանջի հասարակության զինվորական և քաղաքացիական հատվածների մի քանի հիմնական հարաբերությունների վերանայում [55, pp. 47-54]: Կպահանջվի նաև ճշտել այն, թե ի՞նչ ռեսուրսների ներգրավմամբ է լուծվում այն խնդիրը, որը Էնտոնի Կորդսմենն (Anthony Cordesman) անվանել է «ազգի զինակերտում» [56, p. 5]:

Այսօր ԱՄՆ զինվորական ինտելեկտուալների և պաշտպանության նախարարության քարտուղարության (Office of the Secretary of Defense - OSD) միջև առկա է որոշակի տարբերություն պատերազմի նոր տեսլականի վերաբերյալ մոտեցումներում: Առաջինները նոր տեսլականը դիտարկում են ժամանակակից հակամարտության տերմիններով և շրջանակներում, մինչդեռ Քարտուղարությունը ելնում է ապագա ռազմական այն հնարավորություններից, որոնք այդ տեսլականը հիպոթետիկ կերպով պետք է ապահովի [56, pp. 9-10]: Այնուամենայնիվ, երկու մոտեցումներն էլ տառապում են համակարգային մտածողության և ռազմական հաղթանակը ռազմավարական ու քաղաքական հաջողության փոխակերպելու խնդրի ըմբռնման բացակայության տկարություն: Ինչպես և նախկինում, պատերազմի ամերիկյան տեսլականը շեշտը դնում է ավելի շուտ ճակատամարտում հակառակորդին արագ ջախջախելու և ոչ թե ա-

վելի լայն ռազմավարական ու քաղաքական նպատակների հասնելու համար ռազմական ուժի կիրառման ուղիների որոնման վրա [14, p. 16]:

Ինչպես նկատում է պահեստի գեներալ Էնտոնի Ջիննի (Anthony Zinni), ԱՄՆ զինվորականներն ավելի արդյունավետ են դառնում «սպանելու և կործանելու մեջ», ինչն ապահովում է հաղթանակը ճակատամարտում, բայց ոչ պատերազմում [57]: Հարի Սամերսը (Harry Summers) բերում է ամերիկյան ռազմական մտածողության համար դիտարկվող խնդրի հրատապությունը ցույց տվող օրինակ: Հյուսիսային Վիետնամի մի գնդապետի հետ բանավեճի ժամանակ նա ապացուցում էր, որ ԱՄՆ զինված ուժերը ոչ մի ճակատամարտ տանուլ չեն տվել, ինչին վերջինս պատասխանել է. «Հնարավոր է՝ այդպես է, բայց միևնույն ժամանակ դա նշանակություն չունի» [17, p. 1]: Մամերսն ուզում է ասել, որ ամերիկյան զինվորականները կատարել են իրենց առջև դրված բոլոր առաջադրանքները, և պարտությունը վիետնամական պատերազմում քաղաքական ղեկավարության պարտության արդյունք է ու վառ օրինակն այն բանի, թե ինչպես ճիշտ քերականության դեպքում պատերազմի սխալ տրամաբանությունն անխուսափելիորեն հանգեցնում է պարտության:

Պատերազմի տրամաբանությունը և փեռականությունը.- Արևմտյան ռազմական միտքը պատերազմի քերականություն և տրամաբանություն տերմիններն օգտագործում է XIX դ. սկսած: Դրանք շատ են օգտագործել Կլաուզևիցը և Մոլտկեն, հաճախ հանդիպում են Ֆրանսիայի և Անգլիայի այն ժամանակվա ռազմական գրականության մեջ և կրկին արդիական դարձան արդեն XX դ. վերջին [58]: Մոլտկեն, ընդունելով պատերազմի տրամաբանության անվերապահ կարևորությունը, այնուամենայնիվ, պնդում էր, որ մարտական գործողությունների սկսվելու հետ հենց պատերազմի քերականությունն է ձեռք բերում գլխավորող դեր և պետք է որոշի պատերազմի ընթացքը: Պատերազմի ամերիկյան և ավելի լայն՝ արևմտյան տեսլականին, որոշ բացառություններով, անհամեմատ ավելի մոտ է Մոլտկեի «քերականական» մոտեցումը, քան Կլաուզևիցի տեսակետը քաղաքականության և պատերազմի մասին՝ որպես միասնական տրամաբանական շարունակականություն [14, p. 2]:

Ռոբերտ Օսգուդը պնդում է, որ նույնիսկ գլոբալ միջուկային դիմակայության պայմաններում ռազմական ուժի գործադրումը մնում է քաղաքականության և քաղաքականության շարունակությունը՝ ապահովելով շոշափելի հաջողություն «միայն քաղաքական, բայց ոչ հակառակորդի ոչնչացման տերմիններով» [52, p. 22]: Սակայն նույն Օսգուդը հաստատում է, որ ռազմական ուժի նկատմամբ նման մոտեցումը բնորոշ չէ պատերազմի ամերիկյան տեսլականին, որին հատուկ է քաղաքականության և ռազմական ուժի ոլորտների սահմանազատումը:

Հարկադրանքի դիվանագիտության հայեցակարգի առաջատար տեսաբան Թոմաս Շելլինգը (Thomas C. Schelling) նույնպես խոսում է այն մասին, որ զինված ուժերի կիրառման նպատակները պետք է լինեն ավելի սահմանափակ և կայանան հակառակորդի զսպման, նրան վախեցնելու և պարտադրելու մեջ: Դեպքերի մեծ մասում ուժի նման գործադրումը, ինչը թույլ է տալիս հասնել միջանկյալ նպատակների, ավելի արդյունավետ է ստացվում, քան լիակատար ջախջախումը և վերջնական ռազմական հաղթանակը [59, pp. 474-475]: Օսգուդը և Շելլինգը, լինելով ոչ միայն ռազմական հաղթանակի, այլև ռազմավարական հաջողության հասնելու խնդրի առաջադրման և լուծման կողմնակիցներ, փորձում էին փոխել պատերազմի գոյություն ունեցող տեսլականը ամերիկյան զինվորական վերնախավում՝ պատերազմի քերականությունից կիզակետն ու շեշտադրումը տեղափոխելով նրա տրամաբանության վրա:

Ծովակալ Ուայլին (Joseph C. Wylie) պնդում է, որ պատերազմը, նոր քաղաքական դինամիկա հրահրելով, արմատապես փոխում է նախապատերազմյան քաղաքականությունը, որը դադարում է համապատասխանել նոր իրողություններին, դառնում է «ոչ պիտանի»: Իր «Ռազմական ստրատեգիա» (Military Strategy) գրքում նա առանձնացնում է «քաղաքականություն» և «քաղաքական կյանք» («policy» and «politics») տերմինները: Ուայլին պնդում է, որ Կլաուզևիցը պատերազմի նկատմամբ քաղաքականության առաջնայնության և պատերազմի՝ որպես «քաղաքականության շարունակության» վերաբերյալ իր նշանավոր բանաձևում նկատի ունի քաղաքական կյանքը, իշխանության համար ա-

ներդմեջ պայքարի գործընթացը և ոչ թե քաղաքականությունը: Եվ եթե պատերազմը տանուլ է տրվում, նշանակում է՝ իրականացվող քաղաքականությունն անընդունակ էր, և նրա տեղը պետք է զբաղեցնի մեկ այլ քաղաքականություն: Փոփոխված պայմաններին անհամարժեք հին քաղաքականությունը կիրառելու հետագա փորձերը ևս կարող են հանգեցնել ճակատագրական հետևանքների [60, pp. 67-69]: Դրանով իսկ պատերազմի կենտրոնական հարցը դառնում է ոչ թե քերականությանը ճիշտ հետևելն ու դրա համարժեք օգտագործումը, այլ այն, թե որքան լավ էր մշակված և ապահովված նրա տրամաբանությունը:

Փառելի գոկտրինը, որն ի հայտ եկավ 1991-1992թթ. և հանդիսանում է Ուայնբերգերի (Gasper Weinberger)<sup>7</sup> գոկտրինի շարունակությունը, փորձում է սահմանափակել և հստակ որոշել, թե երբ և ինչ պայմաններում քաղաքական առաջնորդները կարող են ռազմական ուժ գործադրել [61, pp. 1-11; 62, p. B-2]: Մի շարք հետազոտողներ կարծում են, որ դրանով իսկ պատերազմի քերականությունն սկսում է թելադրել իր սեփական տրամաբանությունը: Սա հակասություն մեջ է մտնում դեռևս Կլաուզևիցի ձևակերպած և դասական դարձած արևմտյան մտտեցման հետ, երբ ռազմական ոլորտի և քաղաքականության փոխհարաբերություններում վճռորոշ դերը պատկանում է վերջինին: Սակայն գոկտրինի կողմնակիցները պնդում են, որ առաջարկվող մտտեցումը թույլ է տա-

<sup>7</sup> Գոկտրինը մշակվել է պաշտպանության նախարար Կասպեր Ուայնբերգերի կողմից 1984թ. և բաղկացած է վեց կետից. 1. ԱՄՆ զինված ուժերի (ՁՈՒ) հակամարտության մեջ մտնելը հնարավոր է միայն ԱՄՆ կենսական շահերի պաշտպանության համար: 2. ԱՄՆ-ը հակամարտության մեջ պետք է մտնի հաղթելու հստակ մտադրությամբ: 3. ԱՄՆ ՁՈՒ հակամարտության մեջ մտնելը ամերիկյան աշխարհամասի սահմաններից դուրս պահանջում է ռազմական և քաղաքական նպատակների ու խնդիրների հստակեցում: 4. Հակամարտության մեջ մտնելը մշտապես պետք է վերագնահատվի և ճշտվի հակամարտության անընդհատ փոփոխվող պայմանների հիմքի վրա: 5. ԱՄՆ ՁՈՒ գործողությունները պետք է ունենան երկրի հասարակական կարծիքի պաշտպանությունը: 6. ԱՄՆ ՁՈՒ հակամարտության մեջ մտնելը պետք է տեղի ունենա միայն ծայրահեղ դեպքում:

լիս մշակել կատարյալ քերականություն՝ դրանով իսկ բացառելով պատերազմի տրամաբանություն ըմբռնման աղավաղումներն ու կոռուզիան: Քերականության խնդիրն է ապահովել տրամաբանության ըմբռնման և մեկնաբանման համարժեքությունն ու անփոփոխականությունը: Այլ բան է, թե որքանով է քերականությունը հենց այս իմաստով ընկալվում պատերազմի տրամաբանությունը որոշող քաղաքական գործիչների կողմից [14, p. 6]:

«Foreign Affairs»-ում 2003թ. հրապարակված աշխատությունում Մաքս Բուտը զարգացնում է «Կատաղի պատերազմներ հանուն խաղաղության» (Savage Wars of Peace) մենագրության գաղափարները՝ պատերազմի ամերիկյան նոր տեսլականի առաջատար ներկայացուցչի դիրքերից [63, pp. 41-58]: Բուտը պնդում է, որ նոր տեսլականը թույլ կտա ԱՄՆ-ին անհամեմատ ավելի արդյունավետ մղել «կատաղի պատերազմներ հանուն խաղաղության», որոնք կընդլայնեն «ազատության կայսրությունը», ինչն ասելով նա նկատի ունի «ժողովրդավարական կապիտալիստական ազգերի ընտանիքը»: Որպես նման քաղաքականության բարոյական հիմնավորում հանդես է գալիս ԱՄՆ վիթխարի ռազմական և տնտեսական հզորությունը [64, p. 5]:

Բուտի պատերազմի ամերիկյան տեսլականն արմատապես տարբերվում է Փաուելի տեսակետից: Խաղաղության համար իր կատաղի պատերազմներում ԱՄՆ-ը պատերազմի մեջ է ներքաշվում՝ առանց հստակորեն հասկանալու իր կենսական շահերն ու քաղաքական նպատակները, ինչը հանգեցնում է երկար ժամանակով այլ երկրներում ռազմական ներկայություն անհրաժեշտությունը [29, pp. 318-319]: Բուտի մոտեցումը կարող է օրինակ ծառայել մեկ այլ ծայրահեղության, երբ պատերազմի տրամաբանության կողմից նրա քերականության անտեսումը վերածվում է անարդյունավետ պատերազմի կամ պարզապես ձախողման:

Ընդհանուր առմամբ, ԱՄՆ զինված ուժերում ծառայող զինվորականները միանգամայն սկեպտիկորեն են վերաբերվում այն հայեցակարգերին, որոնցում զլխավորող դերը հատկացվում է պատերազմի

տրամաբանությունը և վրդովմունքով են ընդունում դրանք ռազմական իրականությունում կիրառելու քաղաքական գործիչների փորձերը [17, pp. XIII-XIV]: ԱՄՆ զինված ուժերին և ամերիկյան զինվորական վերնախավին, հազվադեպ բացառությամբ, առավել մոտ են Ուիգլիի մոտեցումները, որոնց համաձայն՝ պատերազմի հիմնական նպատակը հակառակորդի զինված ուժերի ոչնչացումն է, ոչ թե այս կամ այն քաղաքական նպատակի հասնելը [28]:

Ուիգլիի տեսակետները քննադատում է Բրայն Լինը (Brian M. Linn), որի կարծիքով՝ Ուիգլին շարաշահում է «ոչնչացում» տերմինը և չի դիտարկում սարսափեցնելու և «իմպրովիզացիայի ու գործնական փորձի օգտագործման հակումը» ամերիկյան ավանդույթը: Լինը կարծում է, որ պատերազմի ամերիկյան տեսլականը, եթե գոյություն ունի էլ, ապա ներկայացնում է օպերատիվ արվեստի, ազգային ռազմավարության և ռազմական տեսության ուտիլիտար խառնուրդը [65, pp. 501-530]: Ուիգլին պատասխան հողվածում այս կամ այն չափով համաձայնում է Լինի փաստարկների հետ [66, pp. 531-533]:

Ներկայումս ԱՄՆ ԶՈՒ վերափոխումների վարչության (Office of Force Transformation - OFT) և պաշտպանության նախարարի քարտուղարության կողմից մշակվող պատերազմի ամերիկյան տեսլականի մոդելներն ունեն այն նույն թերությունները, ինչ Բուտի և Ուիգլիի հայեցակարգերը: Բոլոր դեպքերում պատերազմը դիտարկվում է որպես քաղաքականության ոլորտից առանձնացված գործողություն, իսկ հաղթանակի նվաճումը շփոթվում է ռազմական կամպանիան շահելու հետ [14, p. 8]:

Այնուամենայնիվ, ԱՄՆ զինվորական վերնախավում արդեն կա այն ըմբռնումը, որ խնդրի, նրա աղբյուրների ճիշտ իդենտիֆիկացիան կարևոր փուլ է նրա լուծման ճանապարհին, և պատերազմի տրամաբանության ու քերականության հստակեցումը, պատերազմը՝ որպես ամբողջական երևույթ ընկալելու սովորության մշակումը անհրաժեշտ քայլ են պատերազմի իրապես նոր տեսլականի ձևավորման ճանապարհին, որը գոյություն կունենա ոչ միայն թղթի վրա, այլև իրականում [14, p. 8]:

### 3. Պատերազմի ռազմավարության և շարունակականության եվոլյուցիան

Քաղաքականությունից հիմնական հարցի համառոտ ձևակերպման փորձերը, այսպես թե այնպես, հանգում են իշխանությունից հարցին: Քանի որ պատերազմը քաղաքականությունից անքակտելի մասն է ու նրա շարունակությունը, ապա ռազմական ամբողջ գործունեությունից հիմնական խնդիրը նույնպես իշխանությունից հարցն է: Որպես հետևանք, եթե կազմակերպված բռնության այս կամ այն տեսակը քաղաքականապես պատճառաբանված չէ և իշխանությունից հարց չի դնում, ապա այն պատերազմ անվանել չի կարելի [2, քր. 19-20]:

Եվ այսպես, պատերազմը քաղաքականությունից գործիքն է, այն անխուսափելիորեն պետք է կրի վերջինի բնույթը, այն պետք է չափվի քաղաքական չափանիշով: Ուստի պատերազմ վարելն իր գլխավոր գծերով ինքը՝ քաղաքականությունն է, գրիչը փոխած թրով, բայց չղաղարելով մտածել իր սեփական օրենքներով [67, ք. 438]:


Հասարակությունում և ընդհանրապես աշխարհում կատարված որակական փոփոխությունները չեն դիպել պատերազմի անփոփոխ մնացած բնույթին, և Թուկիդիդեսի (Thucydides) ու Դոնալդ Կագանի (Donald Kagan) հետևից կարելի է կրկնել, որ հավերժ ու արդարացի է մնում նաև պատերազմ՝ հրահրող դրդապատճառների երրորդությունը՝ «վախ, հպարտություն և շահ» [68, ք. 43]: XX դ. 90-ական թթ. ներպետական պատերազմների գերակշռությունը ինչ-որ եզակի բան չէ մարդկության պատմության մեջ, և այսօրվա դրությունը ոչ մի հայտանիշ չկա, թե այս միտումը ապագայում գլխավորող կմնա: Չնայած այնպիսի հեղինակավոր ռազմական հետազոտողներ, ինչպիսիք են Սթիվեն Մեցը (Steven Metz) և Ռայմոնդ Միլենը (Raymond Millen), պնդում են, որ «գալիք տասնամյակների ռազմական հակամարտությունների մեծամասնությունը կկրի ներքին բնույթ» և «մեծ պետությունների միջև վճռորոշ պատերազմները հայտնվում են պատմության աղբամանում», երբ արդեն չեն մնացել խնդիրներ, որոնք պետք է լուծվեին ուղղակիորեն զինված հա-

կամարտուլթյան միջոցով, այդ պնդումները հազիվ թե կարելի է անվանել իրականուլթյանը համապատասխանող [69, pp. 7, 13]: Ավելին, ներքին հակամարտուլթյունների թվի աճը չի նշանակում, թե միջպետական պատերազմները դառնում են պատմուլթյուն [10, p. 22]:

ԱՄՆ վերջին պատերազմները հերթական անգամ ցույց տվեցին, որ ամերիկյան ռազմական մեքենայի հաղթանակները նախկինի պես մնում են չձեռքերազատված քաղաքական հարթուլթյունում: Եվ դա՝ չնայած այն բանին, որ ԱՄՆ-ում ռազմական մեքենայի գործադրումը, ինչպես և նախկինում, քաղաքական գործիչների արտոնուլթյուն է և որոշվում է քաղաքացիական անձանց կողմից [70]: Սակայն, ինչպես արդեն նշվել է, պատերազմի վերջնական նպատակը մնում է ոչ թե ռազմական հաղթանակը, այլ ռազմավարական և քաղաքական հաջողուլթյունը: Ավելին, ինչպես գրում է Կիդլը Հարթը (Basil H. Liddell Hart), պատերազմի նպատակը «ավելի լավ աշխարհն է», և այն պայմանավորվում է դրան հաջորդող խաղաղուլթյամբ [71, p. 192]: Ռազմական հաղթանակը միշտ կարևոր է, բայց քաղաքական հաջողուլթյան երաշխավոր չէ, և պատերազմ մղելով՝ միշտ պետք է նկատի ունենալ հետպատերազմյան կարգավորման բնուլթյունը: Պատմուլթյունը հարուստ է շահած ճակատամարտերի և տանուլ տված պատերազմի ու խաղաղուլթյան օրինակներով: Կավ օրինակ են Հաննիբալը, որը շահել է երկրորդ Պունիական պատերազմի բոլոր ճակատամարտերը, բացի Կարթագենի մոտ կրած ցավալի պարտուլթյունից, և Ստալինը, որը երկրորդ համաշխարհային պատերազմի վերջին 18 ամիսներին լուծում էր հետպատերազմյան կարգավորման և ոչ թե գերմանական ռազմական մեքենայի առավելագույն արդյունավետ ջախջախման խնդիրը [72, pp. 80-86; 2, p. 29]:

Ռազմավարությունը և պատերազմի շարունակականությունը.- Պատերազմի վարման մեջ չափազանց կարևոր է թվում քաղաքական գործիչների և հրամանատարների, հրամանատարների և շտաբականների, հրամանատարների և ռազմական տեսաբանների՝ Կլաուզեիցի պատերազմի ուղղահայաց շարունակականուլթյունը ձևավորող փոխհարաբերուլթյունների հաշվառումը [72, p. 85] (Նկ. 1): Կլաուզեիցը նախազգու-

շացնում էր, որ նապոլեոնյան պատերազմներից և ռազմավարության բարդացումից հետո «չեն կարող լինել ոչ մեծ ռազմավարական խնդիրների զուտ ռազմական գնահատականի մասին հարցը, ոչ դրանց լուծման զուտ ռազմական սխեմաները» [73, p. 9]: Եվ եթե մարտավարական մակարդակի համար «միջոց են ծառայում վարժված զինված ուժերը, որոնք պետք է վարեն մարտը: Նպատակը հաղթանակն է», ապա ռազմավարությունը «առանձին մարտերի հանգուցումն է պատերազմի ընդհանուր նպատակին» [74, p. 122]: Այս նպատակը «...վերջին ատյանում կազմում են այն հանգամանքները, որոնք պետք է ուղղակի հանգեցնեն խաղաղության կնքման» [74, pp. 150-151]:



Նկ.1. Պատերազմի ուղղահայաց շարունակականությունը

Այսպիսով, ռազմավարական մակարդակում ռազմական հաղթանակներն անիմաստ են, քանի դեռ չեն հետապնդում քաղաքական նպատակներ, որոնք, ըստ Կլաուզևիցի, որոշում է քաղաքական ոլորտը: «Այն բանի համար, որպեսզի ամբողջ պատերազմը կամ գոնե նրա մի մեծ հատվածը, որ կոչվում է արշավանք, հասցվի փայլուն ավարտի,

անհրաժեշտ է խորամուխ լինել բարձրագույն պետական հարաբերակցությունների մեջ»,- գրում է նա: Այս մակարդակում «ռազմավարությունը և քաղաքականությունը միաձուլվում են, և գորավարը միաժամանակ դառնում է և պետական մարդ» [74, p. 100]: «Քաղաքականություն և ռազմավարություն միջև տարբերությունը,- գրում է Ուինսթոն Չերչիլը, յուրացնելով այս դասերն Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում,- նվազում է բանավեճերի մակարդակի բարձրացմանը զուգընթաց: Բարձրագույն մակարդակում (գազաթափողովում) իսկական քաղաքականությունն ու ռազմավարությունը միևնույն բանն են հանդիսանում» [75, p. 6]:

Ռազմավարության և պատերազմի շարունակականության էվոլյուցիան.- Պատերազմի ուղղահայաց շարունակականության արտաքնապես խաբուսիկ և պարզ նկարագրությունը, ինչպես նաև քաղաքականության (կառավարություն), ռազմական ոլորտի ու ժողովրդի «զարմանալի եռամիասնություն» ներմուծմամբ Կլաուզեիցը հեղաշրջում կատարեց ռազմավարությունում, որը նման էր Կոպենհիկոսի կատարած հեղաշրջմանն աստղագիտության մեջ [13]: Պատերազմը կապվում էր քաղաքական ոլորտի հետ և դառնում քաղաքական հարաբերությունների շարունակությունը [76, p. 115]:

Կլաուզեիցի ժամանակներում ռազմավարական որոշումները հենվում էին Realpolitic-ի, պետական շահերի վրա և գրեթե հաշվի չէին առնում հասարակության կյանքի ներքաղաքական կողմերը: Ռազմավարական միտքն անհրաժեշտ չէր համարում հաշվառել սոցիալական ասպեկտները, մշակել և իրականացնել պետական ներքին քաղաքականություն: Բանակը՝ որպես պետության ձևակազմիչ ինստիտուտ, փորձում էին մեկուսացնել ազատական և սոցիալական գաղափարների էությունից: «Բանակն այժմ մեր հայրենիքն է,- գրում էր գեներալ ֆոն Ռուն (Albrecht Theodor Emil von Roon) կնոջը 1848թ. հեղափոխության ժամանակ:- Միայն այնտեղ չեն ներդրվել անմաքուր և կործանիչ տարրերը, որոնք անկարգության մեջ են գցում այն ամենը, ինչի մեջ թափանցում են» [77, p. 107]:

Ներկայումս նման մեկուսացումը միամտություն է թվում, սակայն ոչ Կլաուզևիցը, ոչ նրա ժամանակակիցները չէին կարող ենթադրել, թե հասարակությունում ինչ խոր և անշրջելի փոփոխությունների կհանգեցնեին արդյունաբերական և սոցիալական հեղափոխությունները, որոնք փոխեցին եռամիասնության բաղադրիչների փոխհարաբերությունները: Արդեն XIX դ. վերջին հեղափոխական վերափոխումները տարածվեցին ամբողջ եվրոպայում՝ կառավարություններից պահանջելով հասարակության ներսում հասնել կոնսենսուսի պետության և հասարակության զարգացման ռազմավարական նախագծերն իրականացնելիս [78, p. 82]:

Հեղափոխությունների մեկ այլ հետևանքը դարձավ բարդ և մասնագիտացված բանակի ի հայտ գալը, որի կառավարումը պահանջում էր առանձին կառավարող մարմնի՝ շտաբի ստեղծում: Այս միտման զարգացման գագաթնակետն, անկասկած, գերմանական գլխավոր շտաբն է, որի կառուցվածքն ու գործառույթները փորձել է կրկնօրինակել եվրոպական պետությունների մեծ մասը [76, p. 73]: Բացատրելով Գերմանիայի բանակաշինության հաջողությունները՝ գեներալ Վեյվելը (Archibald Percival Wavell) խոսում է մշակութային և պատմական նախադրյալների մասին, պնդելով, որ «պետական գործչի և ռազմիկի միջև փոխադարձ փոխարինելիությունն անընդհատ կատարելագործվել է... 11-րդ դարում: Գերմանացիները դարձել են ռազմական գործի պրոֆեսիոնալներ, իսկ ժամանակակից հայտնագործությունները, ավելացնելով նրանց տեխնիկական հնարավորությունները, մասնագիտացնում էին այդ գիծը» [79, pp. 33-34]:

XX դարում հարաճուն արագությունը ի հայտ էին գալիս սպառազինության և տեխնիկայի ավելի բարդ տեսակներ, որոնց սպասարկման համար պահանջվում էր համապատասխան ապահովում: Նոր տեխնոլոգիաները շնչում էին խաղաղ քաղաքացիական բնակչության և մարտական գործողություններ վարող զինված ուժերի միջև նախկինում առկա հստակ սահմանը, իսկ ռազմական գիտելիքների աճող և բարդացող ծավալը խնդրահարույց էր դարձնում քաղաքական առաջնորդների և հասարակության վերահսկողությունը զինվորական պրոֆեսիոնալների և

ռազմական ոլորտի նկատմամբ [78, p. 79]: Այժմ հաղթանակի հասնելու համար պետությունը պետք է ի վիճակի լիներ կենտրոնացնել ազգային գրեթե բոլոր ռեսուրսները՝ գյուղատնտեսությունից ու արդյունաբերությունից մինչև զիտական ներուժ 7 քարոզչություն: Արդյունքը դառնում է կառավարության դերի ու նշանակության աճը պատերազմի կազմակերպման գործում: Հետաքրքիր է, որ Կլաուզևիցը, զիտարկելով ռազմական հանճարի ինդիքը, ժամանակին անտեսել էր Կարմոնյին (Lazare Nicolas Marguerete Carnot)՝ Նապոլեոնի «հաղթանակների կազմակերպչին»: Նոր դարը ցույց տվեց, որ «ռազմակազմակերպչական հանճարը», ստանձնելով ռազմական ոլորտի և քաղաքացիական կառավարության միջև փոխգործակցության կազմակերպումը, դառնում է հաղթանակի վճռորոշ գործոններից մեկը [78, p. 60]:

Նոր մարտահրավերներին դիմակայելու և համընդհանուր պատերազմներ վարել կարողանալու համար կառավարությունները հարկադրված էին փոխակերպել իրենց երկրների հասարակական կյանքը՝ մշակելով ավելի ու ավելի ծավալուն և բարդ հայեցակարգեր: Ինչպես նկատել է Ուիլյամ Ջեյմսը (William James), «հենց ինտենսիվ կոշտ (սուր) և պերմանենտ աճող մրցակցային պատրաստությունը պատերազմին դառնում է ռեալ պատերազմ, երբ ճակատամարտերը սկսում են խաղալ «խաղաղ ժամանակ» ձեռք բերած վարպետության ինքնատիպ հրապարակային ստուգման դեր» [80, pp. 273-274]:

Ըստ այդմ, ռազմավարության ոլորտը «տարածվում» է գրեթե ամբողջ հասարակության վրա՝ անհրաժեշտ դարձնելով ոչ միայն ռազմական, այլև ազգային ռազմավարության ձևակերպումն ու իրականացումը: Գնահատելով Առաջին համաշխարհային պատերազմի արդյունքում տեղի ունեցած արմատական փոփոխությունները քաղաքականության և ռազմավարության ոլորտում՝ ծովակալ Էֆլըր (Henry E. Eccles) ազգային ռազմավարությունը սահմանել է որպես «ազգային հզորության բոլոր տարրերի համապարփակ ուղղորդում ազգային նպատակներին հասնելու համար» [81, p. 70]:

#### 4. Բարդության, ոչգծայնության և հարմարվողականության հասկացությունները և պատերազմի ժամանակակից տեսությունները

Պատերազմը վերին աստիճանի ամբողջական երևույթ է և հատուկ իրականություն, որի կարևոր հատկանիշներից են բարդությունը և ոչ գծայնությունը [13]: Տեղեկատվական դարաշրջանի պատերազմների ակնհայտ բարդությունն անհրաժեշտ է դարձրել այս կատեգորիաների ներառումը մարտական գործողությունները, ռազմական կառույցների գործունեությունը, դոկտրինները, հայեցակարգերն ու ռազմական մշակույթը բնութագրելիս [81, ք. 2]: Որոշ ռազմական փաստաթղթերում բարդությունը և ոչգծայնությունը արդեն պարտադիր կատեգորիաներ են, ինչը մի շարք օբյեկտիվ գործոնների հետևանք է: Դա առաջին հերթին կապված է պատերազմի բնույթի բարդացման, նոր տեխնոլոգիաների ներդրման և, որպես հետևանք, այն ընտրությունների և պարամետրերի թվաքանակի ավելացման հետ, որոնք պետք է հաշվի առնի զինվորականը: Բացի այդ, գիտության զարգացումը թույլ տվեց ստեղծել անհրաժեշտ տեսական հիմքը և մշակել հասկացությունների այն ապարատը, որը հնարավոր էր դարձնում դիտարկել պատերազմը և զինված հակամարտությունը խոլիստիկ (ամբողջական) առումով:

Ժամանակակից պատերազմների բնույթի փոփոխությունը չի անդրադարձել նրա էություն վրա, և այն, ինչպես և նախկինում, կենդանի, մտածող և արձագանքող անձանց՝ զինվորականների հակամարտությունն է: Որակապես աճել է գիտելիքների և տեղեկատվության ծավալը, որոնց պետք է տիրապետի ժամանակակից զինվորականը, իսկ մարտի սրընթացությունը խիստ կարևոր է դարձրել մարտական իրավիճակի արագ գնահատման ընդունակությունը և կատարվող փոփոխություններին համարժեք արձագանքը: Դա անխուսափելիորեն հանգեցնում է հարմարվելու (ադապտացիայի) գործընթացների դերի ու նշանակության բարձրացմանը և նույնիսկ ոչ մասնագետների համար ակնհայտ է դարձնում հին ճշմարտության իրավացիությունն այն մասին, որ պատերազմն ավելի շուտ արվեստ է, քան որևէ այլ բան [37, քք. 197-198]:

Պատերազմը մարդկային գործունեություն է, որը չի համապատասխանում դետերմինիստական կանոններին: Իսկապես, տեխնոլոգիայի արագ զարգացումը և ազգային շահերի սպառնալիքների բազմազանությունը արագացնում և ուժեղացնում են ռազմական գործողությունների անցկացման ավանդական խոչընդոտները՝ անհամաձայնությունան, պատահականության և անորոշության էֆեկտները: Այդ խոչընդոտների կուտակման (կումուլյատիվ) էֆեկտը հաճախ նկարագրվում է որպես «պատերազմի մշուշ» և հրամանատարների վրա պարտավորություն (բեռ) է դնում մնալ զգոն, ճկուն և ի վիճակի լինել հարմարվել ռեալ ժամանակի ռեժիմում՝ օգտվելու համար նպաստավոր հնարավորություններից, և նվազեցնել խոցելիությունը: Հենց սա էլ պատերազմի արվեստն է [83, pp. 213-215]:

Ներկայումս բավական սուր է պատերազմի նոր խոլիստիկ տեսություն և «միավորված» քերականության մշակման հարցը՝ ինչպես ռազմական մեքենայի ներսում փոխգործակցության, այնպես էլ ազգային հզորության այլ բաղադրիչների փոխհարաբերության հաշվառմամբ: Ակնհայտ է, որ նոր տեսությունը կազդի ռազմական գործունեության բոլոր բաղադրիչների վրա, ներառյալ մշակույթը, կադրերի պատրաստումն ու կրթությունը, դոկտրինները և հայեցակարգերը: Սակայն, ինչպես զգուշացնում է Քոլին Գրեյը (Colin Gray), «ձևի փոփոխությունը մշտապես շփոթվում է էության փոփոխության հետ: Հնարավոր հեղափոխությունները պատերազմի բնույթի մեջ սխալմամբ շփոթում են պատերազմի էությունում կամ նույնիսկ պատերազմից բխող (այսինքն՝ պատերազմի հետևանք հանդիսացող՝ ծան.՝ Հ.Ա.) հեղափոխության հետ» [39, p. 364]: Այսինքն՝ տեղի ունեցող և ապագա փոփոխությունները ռազմական ոլորտում առնչվում են պատերազմի քերականության, այլ ոչ թե տրամաբանության հետ:

Ավանդական և բարդ պատերազմներ.- Ավանդական պատերազմը խոշորածավալ հակամարտություն է, որին յուրաքանչյուր կողմից մասնակցում են մեծ զորամիավորումներ (խոշորածավալ ուժեր): Վերջին հաշվով, մարտական բախման մեջ հաղթում է այն կողմը, որի զինված

ուժերն ունեն մեծ մասշտաբ, այսինքն՝ ավելի բազմամարդ են ու լավ ապահովված զենքով ու տեխնիկայով: Ընդ որում՝ հասկանալի է, որ հաղթանակը դառնում է պարզ տեղանքում զինված ուժերի բացահայտ բախման արդյունք: Ակնհայտ է, որ նման պատերազմները պատմության մաս չեն, և «Փոթորիկ անապատում»-ը կազմակերպվել և անցկացվել էր ըստ ավանդական պատերազմի սցենարի:

Բարդ պատերազմների կազմակերպումը և անցկացումն ունեն այլ առանձնահատկություն: Առավել լավ ուսումնասիրված բարդ պատերազմների օրինակ են ԱՄՆ պատերազմը Վիետնամում և ԽՍՀՄ պատերազմն Աֆղանստանում: Գոյություն ունեն բազմաթիվ գործոններ, որոնք պայմանավորում են պարտությունը երկու պատերազմներում էլ, բայց կարևորներից մեկը պետք է համարել դրանց բարդությունը: Երկու պատերազմներում էլ անհնար էր հստակ սահման անցկացնել սեփական զորքերի և հակառակորդի զինված կազմավորումների միջև, վստահորեն իդենտիֆիկացնել յուրայիններին և օտարներին: Հակառակորդի զինված ուժերը ցրված և բաժանված էին միմյանց հետ գրեթե կապ չունեցող բազմաթիվ ստորաբաժանումների, ինչն անհնար էր դարձնում դրանց ճիշտ տեղորոշումը [82, p. 19]: Երկու դեպքերում էլ մեծ մասշտաբի ավանդական զինված ուժերը, որ ստեղծվում էին պարզ տեղանքում խոշորածավալ մարտական գործողությունների մասնակցելու համար, բարդ տեղանքում բախվում էին մի հակառակորդի, որն ունենալով փոքրածավալ զինված ուժեր, այնուամենայնիվ, տիրապետում էր մեծ բարդության:

Գլխավոր դասերից մեկը, որ քաղել է ռազմական միտքն այս պատերազմներից, այն է, որ բարդ պատերազմները չի կարելի շահել ավանդական պատերազմների ռազմավարությունների հիման վրա: Բարդ տեղանքում և ցրված հակառակորդի դեմ ռազմական գործողության ժամանակ հաղթանակի հասնելու համար պետք է բարդ լինեն նաև սեփական զինված ուժերի կազմակերպումը, նրանց մարտական պատրաստվածությունն ու ապահովվածությունը: Զինված ուժերը պետք է ի վիճակի լինեն հարձակվել և պաշտպանվել նաև որպես ցրված, թույլ համա-

կարգված զորամասեր և ստորաբաժանումներ: Ընդ որում՝ զորքերի թույլ կապն ու համակարգումն առկա են ոչ միայն օպերատիվ, այլև մարտավարական մակարդակներում: Բոլոր մակարդակների զորաբաժանումները պետք է ի վիճակի լինեն մարտական գործողություններ կազմակերպել և անցկացնել թույլ կոորդինացման պայմաններում, իսկ հաջողության առանցքային բաղադրիչ է դառնում փոքր ստորաբաժանումների՝ ինքնուրույն գործելու ունակությունը: Զինված ուժերի նման դասավորությունը թույլ է տալիս հասնել ոչ միայն հարկ եղած մասշտաբի, այլև անհրաժեշտ բարդության: Բարդ հակամարտությունում հաղթանակը նվաճվում է այն դեպքում, երբ սեփական զինված ուժերի բարդությունը և մասշտաբը գերազանցում են հակառակորդի զորքերի նույն հատկանիշները:

Բարդ պատերազմներ վարելու ընդունակ զինված ուժերը բնութագրվում են իրենց առանձին զորամիավորումների ու զորամասերի ինքնավարության բարձր աստիճանով. դրանք ի վիճակի են վարել անկախ մարտական գործողություններ համեմատաբար թույլ կոորդինացման պայմաններում: Նման ուժերի դասական օրինակ են հատուկ նշանակության ուժերը (special force operations), որոնց բնորոշ են համազորային միավորումների մարտավարական արագաշարժությունը և անկանոն ուժերի դեմ գործողություններ իրականացնելու կարողությունը: Հատուկ նշանակության զորքերի նկատմամբ վստահության աճն այսօր բարդ հակամարտություններ կազմակերպելու և անցկացնելու գործում բարդ և հարմարեցվող ուժերի անհրաժեշտության ըմբռնման դրսևորումն է [82, p. 24]:

Բարդ հակամարտությունում զինված ուժերի արդյունավետությունը կախված է հակառակորդի միջավայրի կամ զորքերի առանձնահատուկ մարտահրավերներին հարմարվելու ունակությունից: Վիետնամի տեղանքի պայմանները տարբերվում են Աֆղանստանից, սակայն հատուկ նշանակության զորքերը, նրանց կազմակերպումն ու կառավարումը պետք է պատրաստ լինեն վարելու մարտական գործողություններ երկու դեպքերում էլ: Կլիմայի, տեղանքի կամ հակառակորդի

և քաղաքացիական բնակչության հոգեբանա-սոցիո-մշակութային համատեքստին հատուկ պահանջներին հարմարվելու ունակությունը պետք է ապահովվի ի հաշիվ զորակազմի համապատասխան պատրաստվածություն, զորքերի կառավարման և հանդերձավորման կազմակերպման [82, ք. 20]:

Ժամանակակից զինվորականները պետք է պատրաստ լինեն մարտական գործողություններ վարել հակառակորդի ինչպես կանոնավոր, այնպես էլ անկանոն ուժերի դեմ: Ավելին, ապագայում կանոնավոր հակառակորդը կարող է հետևել պատերազմի կազմակերպման և անցկացման անկանոն, անհամաչափ մարտավարություն և ռազմավարություն [2, ք. 29]: Սա նշանակում է, որ պրոֆեսիոնալ զինվորականները պետք է հրաժարվեն այն տեսակետից, ըստ որի՝ փոքր ինտենսիվություն, ապստամբական և պարտիզանական պատերազմները «անօրինական», «ոչ ճիշտ» պատերազմի տեսակներ են, որոնք պետք է շրջանցել: Ընդհանուր նշանակություն մեծ զորամիավորումները, որոնք հակառակորդի հետ բախվում են պարզ տեղանքում՝ բախման հստակ գծով ու թիրախներով, որոնց ոչնչացումը թույլ կտա հակառակորդին առավել մեծ վնաս հասցնել, հակամարտում են հատուկ նշանակություն վատ կորդիինացվող զորքերի հետ այնպիսի գործողություններում, որոնք անցկացվում են լեռնոտ տեղանքում կամ քաղաքի մատուցներում: Այնուամենայնիվ, երկու դեպքերում էլ խոսքը վերաբերում է պատերազմին, նշանակում է՝ պատերազմի համապատասխան քերականությունը և տրամաբանությունը [82, ք. 1]:

Այսպիսով, զորամիավորումների մասշտաբը և կրակային հզորությունը չի կարելի դիտարկել որպես բարդ տեղանքում բարդ հակամարտությունում զինված ուժերի արդյունավետ գործելու գնահատականի միակ չափանիշներ, և զորքերի՝ մարտունակությունը կորցնելը դառնում է ավելի շուտ դրանց բարդություն, այլ ոչ թե կրակային հզորության նվազման հետևանք: Բարդության դերն ու նշանակությունն առավել ակնհայտ են փոքր մասշտաբի բարդ ուժերի և մեծ մասշտաբի համազորային միավորումների բախման դեպքում՝ բարդ տեղանքում, օրինակ՝ լեռնային տե-

դանքում կամ քաղաքի մատույցներում, երբ սպառազինության ծանր համակարգերը թույլ չեն տալիս ապահովել ճնշող գերազանցություն:

Բարդությունը, առանց որի հաշվառման անհնար է տալ զորամասերի և զորամիավորումների մարտական հնարավորությունների համարժեք գնահատականը, անմիջականորեն կապված է զորքերի՝ անկախ և համակարգված գործողություններ իրականացնելու ունակության հետ, ինչն իր հերթին կախված է հրամաններ տալու և կառավարման կազմակերպումից, հաղորդակցությունների համակարգից, տեղեկատվությունը մշակելու ունակությունից, ինչպես նաև սոցիո-մշակութային համատեքստից: Բարդության նվազումը կարող է դառնալ կոմունիկացիաների ոչնչացման, հոգեբանական համատեքստի փոփոխության, կառավարելիությունը կորցնելու և այլնի արդյունք: Բարդության խորացումը պահանջում է զինված ուժերի կառուցվածքի, հրամաններ տալու և կառավարման կազմակերպման վերանայում, ինչպես նաև փոփոխություններ նախապատրաստման համակարգում և ռազմական մշակույթում [82, p. 2]:

Հարմարվողականությունը պատերազմի տեսությունում.- Բարդության, ոչգծայնության և հարմարվողականության հասկացությունների ներմուծումը, թույլ տալով «գլուխ հանել» նոր դարաշրջանի մարտահրավերներից, անհրաժեշտ է դարձնում ռազմական տեսության դարավոր պաշարի վերանայումը և ռազմական կրթության, մարտական պատրաստվածության համակարգում, զինված ուժերի կառուցվածքում փոփոխություններ մտցնելը [37, p. 49]: Պետության ռազմական կազմակերպումը որոշակի բարդություն ունի, որը, ի թիվս այլոց, նաև պատմական զարգացման արդյունք է: Դա թույլ է տալիս պետությանը համապատասխանել միջազգային իրադրության պահանջներին, պահպանել հավասարակշռությունը կամ գերազանցել պոտենցիալ հակառակորդի զինված ուժերը [82, p. 11]:

Հարմարվողականությունը մշտապես եղել է ռազմական մշակույթի անքակտելի մասը, և այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ «նախաձեռնությունը» և «հնարագիտությունը» և «Ոչ մի պլան չի մնում

հակառակորդի հետ առաջին բախումից հետո» ասույթը արտացոլում են հարմարվելու տարբեր ասպեկտները ռազմական ոլորտում [84, p. 216]: XXI դարում հարմարվողականության նկատմամբ աճած հետաքրքրությունը ռազմական տեսությունների զարգացման ներկա փուլում այդ հասկացության նոր մեկնաբանություններում տեղի ունեցող որակական փոփոխությունների հայտանիշն է:

Հավանաբար, հարմարվողականության առաջին ռազմական տեսաբաններից է չինացի փիլիսոփա Սուն Ցզին, որը խոսում էր ընթացիկ իրադրությունը ինչպես բանակների, այնպես էլ զորահրամանատարների հարմարվելու անհրաժեշտության մասին: «Ինչպես ջուրը շունի մշտական ձև, այնպես էլ պատերազմում չկան մշտական ձևեր: Ճիշտ այնպես, ինչպես ջուրն է իր ընթացքը հարմարեցնում հողին, այդպես էլ բանակը կառավարում է իր հաղթանակը հակառակորդի հետ ստեղծված իրավիճակին համապատասխան» [3, p. 96]:

Անընդմեջ փոխգործողություններն ու փոխազդեցությունները պատերազմի շարունակականության մեջ հանգեցնում են փոփոխությունների ինչպես ռազմական ոլորտում, այնպես էլ քաղաքականության մեջ. «Այն (քաղաքական նպատակը) ստիպված է հաշվի առնել միջավայրի էությունը, որն օգտագործում է, և, համապատասխանաբար՝ ինքն էլ հաճախ արմատապես փոփոխվել...» [74, p. 15]: Պատերազմի քաղաքական նպատակների փոփոխության հետ մեկտեղ անխուսափելիորեն փոխվում է նաև ռազմավարությունը և, հետևաբար, ռազմավարական գնահատումների ու վերագնահատումների ունակությունը դառնում է հաղթանակի անհրաժեշտ տարր:

Պատերազմի բնույթի փոփոխությունները կարող են դառնալ հակառակորդի կողմից իր ռազմավարության և փոփոխված պայմաններին նրա հարմարման վերանայման արդյունք: Պատերազմի անընդհատ փոփոխվող համատեքստին ժամանակին հարմարվել չկարողանալը կարող է ճակատագրական հետևանքներ ունենալ «ուշացող» կողմի համար: «Առաջին համաշխարհային պատերազմի զինվորական առաջնորդների (հայտնի բացառություններով) մեծագույն սխալը փոփոխություններին

արագ հարմարվելուց նրանց հրաժարումն էր» [85, p. 5]: Եվ, ինչպես նկատել է Ջուլիո Դուեմ (Giulio Douhet), «Հաղթանակը ժպտում է նրանց, ովքեր կռահում են պատերազմի բնույթի փոփոխությունները, և ոչ թե նրանց, ովքեր սպասում և հարմարվում են դրանց այն բանից հետո, երբ դրանք տեղի են ունենում» [86, p. 21]:

Կիզըլ Հարթը, խոսելով հարմարվելու պլանների մասին, գրում է. «Յանկացած պլան, որպեսզի պրակտիկ լինի, պետք է ուշադրություն աննի հակառակորդի՝ այն խափանելու ունակությունը. նման հնարավորություն հաղթահարման լավագույն միջոցը այնպիսի պլանի մշակումն է, որը կարող է հեշտությամբ տարափոխվել՝ համապատասխանելու համար ձևավորվող իրադրությունը. նման հարմարվողականության լավագույն միջոցը, որ նախաձեռնություն է ենթադրում, գործառնությունն է այն գծի համաձայն, որն առաջարկում է այլընտրանքային նպատակներ (խնդիրներ)» [87, p. 338]:

Հարմարվողականությունը հիմնովին տարբերվում է ճկունությունից [88]: Ճկունությունն իր էությունը ունի պատկանական հատկություն է, ինչն իր արտացոլումն է գտել ինչպես իր սահմանման, այնպես էլ իմաստաբանության մեջ: Կինել ճկուն, ճկվել, նշանակում է՝ փոփոխվել արտաքին ուժերի ազդեցության տակ: Որպես այդպիսին ռազմական հակամարտության մեջ հանդես է գալիս հակառակորդը: Հենց նա է հրահրում և ուղղորդում տեղի ունեցող փոփոխությունները, և ճկունությունը ենթադրում է միայն ունակություն և պաշտպանական ու ոչ թե ակտիվ գործողություններ, ինչպիսիք են՝ հարձակումը, ճեղքումը:

Հարմարվողականությունն ակտիվ, հարձակողական հատկություն է, այն իր տեղն է գտել ԱՄՆ մի շարք կանոնադրություններում: Օրինակ՝ հարմարվողականության սահմանումը ԱՄՆ ՌԾՈՒ Մարտական կանոնադրությունում (Fleet Marine Field Manual 1-0, Leading Marines) այսպիսին է. «Հարմարվողականությունը անհամաձայնության և նրա բաղադրիչների հաղթահարման մեր բանալին է: Թեև այն ճկունության հոմանիշն է, բայց ներառում է նորարարության ոգի: ՌԾՈՒ-ն մշտապես ձգտում է հարմարեցնել նոր մարտավարությունը, կազմակերպումն ու ընթացա-

կարգերը միջավայրի իրադրություններին: Նույնականացվում են թերությունները գոյություն ունեցող կարգերում, մերժվում են հնացած կառույցները և տեղի է ունենում մոդիֆիկացիա ֆունկցիոնալությանն ու օգտակարությանն աջակցելու համար: Հարմարվելու ունակությունը թույլ է տալիս ՌԾՆ-ին հարմարավետ զգալ այն միջավայրում, որում գերիշխում է անհամաձայնությունը: Փորձ, սթափ միտք և դատողության քննադատական կիրառում. այս ամենը օգնում է ռազմածովային ղեկավարությանը՝ տոկուն լինելը» [89, p. 66]:

ԱՄՆ ցամաքային ուժերի Մարտական կանոնադրությունում (The Army, Field Manual 1) տրվում է հարմարվող առաջնորդի սահմանումը. «Օպերատիվ իրադրության անորոշ էությունը ցամաքային ուժերի ղեկավարությունից պահանջում է ինքնավերլուծության և հարմարվողականության ունակություն: Ինքնավերլուծության ընդունակ ղեկավարները հասկանում են օպերատիվ իրադրությունը, կարող են գնահատել իրենց հնարավորությունները, որոշել իրենց ուժեղ և թույլ կողմերը և ակտիվորեն սովորում են, որպեսզի հաղթահարեն իրենց թուլությունները: Հարմարվելու ընդունակ ղեկավարները պետք է առաջին հերթին ունենան ինքնավերլուծության ընդունակություն, այնուհետև լրացուցիչ ունակություն՝ կոահելու օպերատիվ միջավայրի փոփոխությունները, նույնականացնելու այդ փոփոխությունները և սովորելու, թե ինչպես կարող են հարմարվել դրանց նոր միջավայրում հաջողության հասնելու համար» [90, pp. 12-13]:

Այսպիսով, հարմարվելը ռազմական ոլորտում նշանակում է պետության ռազմական կառույցի բաղադրիչները փոխելու կարողություն՝ օպերատիվ, ռազմավարական կամ քաղաքական իրադրության փոփոխության հետ մեկտեղ: Ադապտիվ կազմակերպությունները՝ ա) օպերատիվ միջավայրում փոփոխությունների հետ մեկտեղ փոխում են տեղեկատվության մշակման և տարածման միջոցները և ընդգրկում են նոր մասնակիցներ ծրագրման, որոշման մշակման և նրա իրականացման գործընթացում, բ) ստեղծում են նոր կողմիցիաներ, այլ կազմակերպությունների հետ փոխգործակցության միջոցներ, գ) հարթում են կազմա-

կերպական կառույցները, դ) մշակում և հարմարեցնում են ձեռք բերված փորձի վրա հիմնվող աշխատանքի նոր մեթոդներ [7, p. 153]:

Հարմարվելու ունակությունը ԱՄՆ-ում դիտարկվում է որպես կարևոր պահանջ միավորված զինված ուժերին. «ԱՄՆ միավորված ուժերը պետք է ի վիճակի լինեն իրենց մարտական հնարավորությունները հարմարեցնել ճգնաժամային իրավիճակների կարգավորմանը՝ առանց իրենց օպերատիվ արդյունավետությունը կորցնելու» [91, pp. 5-6]: Հարմարվողականության միացյալ սահմանումը պատերազմի սկզբունքների համար ներկայացված է «ԱՄՆ ցամաքային ուժերի միավորված պատերազմ, համատեղ հրատարակություն 1» (Joint Publication 1, Joint Warfare of the Armed Forces of the United States) ձևաչափում:

Հարմարվողականություն.

ա) հարմարվողականության նպատակն է մարտական գործողությունների (որոնք ազդեցիվորեն գտնում են, սաստկացնում և/կամ օգտագործում են հնարավորությունները որպես արձագանք լրիվ պայմաններին՝ մարտադաշտի բոլոր մակարդակներում) անհրաժեշտ փոփոխությունների կամ մոդիֆիկացիայի ակտիվ աջակցությունը:

բ) հարմարվողականությունը պահանջում է, որ բոլոր մակարդակների զինվորական կազմերը հասկանան ռազմավարական, օպերատիվ և մարտավարական առաջադրանքների շուրջ հրամանատարի (հրամաններ արձակողի) մտադրությունները: Հարմարվողականությունն ընդունում է պատերազմի էությունը, որը բնութագրվում է քառսով, փոփոխականությամբ, բռնությամբ, պատահականությամբ, անհամաձայնությամբ և մշուշով՝ այդ նպատակներին հասնելու ժամանակ: Այն խրախուսում է պլանավորված գործողությունների փոփոխությունը և մոդիֆիկացիան ընթացիկ մարտական իրավիճակի համատեքստում՝ առաքելության գործուն և արդյունավետ իրականացման ու հրամանատարի (հրամաններ արձակողի) մտադրություններին աջակցելու համար: Սակիրառելի է պատերազմի մյուս բոլոր սկզբունքների համար, բացի մարտական առաջադրանքից: Հարմարվողականությունը ներկայացնում է անձի և խմբի հնարամտությունը, հնարագիտությունը, նորարարու-

թյունն ու երևակայությունը: Այն ինչպես մտավոր, այնպես էլ ֆիզիկական երևույթ է: Մենթալ ունակությունը ռազմավարական, օպերատիվ կամ մարտավարական իրադրությունում (միջավայրում) ռզգծային մոդելներ գտնելու, նույնականացնելու և օգտագործելու ունակությունն է: Այն կախված է ըստ այդ մոդելների գործելու կամ նորերն անհամեմատ ավելի արագ, քան հակառակորդը, ստեղծելու (պարտադրելու) ֆիզիկական ունակությունից և դա անել միայն այն ուժերի ու հնարավորությունների օգնությամբ, որոնք կան տրամադրություն տակ: Հարմարվողականությունը մշակույթ է, բանականության վիճակ և ամբրիկյան միավորված զինված ուժերի բնութագիրը [92, pp. B1-B2]:

Մի շարք գործոնների զուգամետությունը (որոնցից հիմնականներն են՝ ապագա ռազմավարական միջավայրի անորոշությունը, գործողությունների տեմպի մեծացումը, ռազմավարական, օպերատիվ և մարտավարական իրադարձությունների միջև սահմանի վերացումը, առաքելությունների աճող բազմազանությունը, էլ ավելի արագացող տեխնոլոգիական փոփոխությունները, հարմարվող հակառակորդների ի հայտ գալը) հանգեցնում է ապագայի և, բնականաբար, զինված ուժերի նկատմամբ պահանջների «լրդմանը»: Նոր դարաշրջանը, անհրաժեշտ դարձնելով ռազմական ոլորտի փոխակերպումը, հարմարվողականությունն օգտագործում է որպես մեխանիզմ, որի միջոցով ռազմական ոլորտը համապատասխանեցվում է նոր իրողություններին, երբ «հիմնական պահանջը հարմարվելն է փոփոխվող ժամանակներին և տարբեր հակառակորդներին» [93]: Իներցիայով շարժվող և փոփոխություններին դիմակայող ռազմական կառույցի համատեքստում հենց հարմարվողականությունն է, որպես ռազմական մշակույթի մաս, կամուրջ դառնում ժամանակակից և ապագա զինված ուժերի միջև [84, pp. 201-202]:

Ապագային պատրաստվելը մեզնից պահանջում է մտածել բազմակերպ և զարգացնել ուժերի ու միջոցների այնպիսի տեսակներ, որոնք կարող են արագ հարմարվել նոր մարտահրավերներին և անսպասելի իրադրությունը: Հարմարվելու ունակությունը կրիտիկական կլինի այն

աշխարհում, որում անսպասելիությունը և անորոշությունը որոշիչ բնութագրերն են անվտանգության մեր նոր միջավայրի [94]:

Հարմարվողականությունը հրամայական է, որը թույլ է տալիս հաղթահարել ապագայի անորոշությունը, գլուխ հանել ռազմական ուժի ընդլայնված օգտագործումից, բազմազան և ադապտիվ սպառնալիքներից ու պատերազմներից: Չնայած ռազմական տեսության մեջ հարմարվողականության հասկացության բավական լավ մշակված լինելուն, անհրաժեշտություն կա վերանայել հարմարվողականության՝ որպես պատերազմի սկզբունքի, կայուն մոտեցումներն ու դիտարկումները [84, p. 217]:

«Դեպի եզրաշերտն ուղղված իշխանություն».- Հասարակական կյանքի բոլոր ոլորտներում տեղեկատվական տեխնոլոգիաների լայն ներդրումը և հետարդյունաբերական հասարակության նոր իրողությունները պահանջեցին վերանայել այնպիսի հիմնարար հասկացություններ, ինչպիսիք են իշխանության իրականացումը, կառավարման գործընթացը, կազմակերպական կառույցների կարգավորման մեթոդները և այլն: «Դեպի եզրաշերտն ուղղված իշխանություն» (power to the edge) հայեցակարգը, որն ուսումնասիրում է, թե ինչպես են աշխատում և փոխգործակցում անհատներն ու կազմակերպությունները հետարդյունաբերական հասարակությունում, կարելի է դիտարկել որպես նոր դարաշրջանի մարտահրավերների արձագանք:

Այս հոդվածի շրջանակներում «դեպի եզրաշերտն ուղղված իշխանություն» հայեցակարգի առնչությամբ կներկայացնենք միայն դրա հիմնական, ռազմական ոլորտի համար առավել կարևոր բաղադրատարրերը: Հայեցակարգը լրագորություններով և իշխանությամբ օժտում է անձանց, ովքեր աշխատում են կազմակերպության եզրաշերտում, որտեղ տեղի է ունենում փոխգործակցությունը գործառնական միջավայրում: Իշխանության և լրագորությունների տեղափոխումը եզրաշերտ պահանջում է հենց կազմակերպությունների բնույթի խոր վերափոխում և հանգեցնում է նոր տեսակի՝ եզրային կազմակերպությունների (edge organizations) առաջացմանը: Եզրային կազմակերպության բարձրագույն օղակի մենեջերները, տեղափոխվելով կազմակերպության եզրաշերտ,

ավելորդ են դարձնում միջին օդակի մենեջերների մի մեծ թվաքանակ, և հիերարխիան կառավարման գործընթացներում սկսում է խաղալ ստորադաս դեր [7, p. 5]:

Ներկայումս մշակվող ցանցակենտրոն պատերազմների (3ԿՊ) (network-centric war) տեսությունը ներառում է «դեպի եզրաշերտն ուղղված իշխանություն» հայեցակարգը՝ որպես հրամանատարական և կառավարման համակարգի կարևոր բաղադրատարր [95]: Առանց «դեպի եզրաշերտն ուղղված իշխանություն» սկզբունքների ներդրման, անհնար է հասնել ինքնասինքրոնացման էֆեկտի, որը 3ԿՊ կարևորագույն հատկանիշն է: Ինքնասինքրոնացումն իր հերթին թույլ է տալիս հասնել զինված ուժերի շեշտակիության (agility), ապահովել նրանց կենսունակությունը և առաքելության արդյունավետ կատարումը՝ իրականության վերածելով ցանցակենտրոն գործողությունները: Ամերիկյան մի շարք առաջատար ռազմական տեսաբանների կարծիքով՝ «դեպի եզրաշերտն ուղղված իշխանություն» հայեցակարգի հարմարեցումը և դրա օգտագործումն իբրև ԱՄՆ ռազմական կազմակերպության կազմակերպական և օպերատիվ սկզբունք՝ բացարձակ անհրաժեշտ քայլ է, որը թույլ կտա պահպանել ԱՄՆ ռազմական գերազանցությունը XXI դարում [7, p. 6]:

Այսպիսով, 3ԿՊ նոր ռազմական տեսությունը շրջանակներում մշակվող «դեպի եզրաշերտն ուղղված իշխանություն» հայեցակարգը (որի սկզբունքների մասին նոր սկսում են խոսել) ըմբռնումն է այն բանի, թե ինչպես և ինչ ուղիներով կկատարվի պետության ռազմական կառուցյի հարմարեցումը տեղեկատվական դարաշրջանի մարտահրավերներին [96]: «Դեպի եզրաշերտն ուղղված իշխանություն» հայեցակարգը մտածողության նոր տեսակ է և նոր կազմակերպական տեխնոլոգիաներ, որոնք որոշում են, թե հրամանատարական և կառավարման նոր համակարգերն ինչպես պետք է դասավորվեն ռազմական կազմակերպության ընդհանուր կառուցում: Քանի որ հենց մշակույթն է որոշում հասարակության և կազմակերպության, ինչպես նաև դրանք կարգավորող իշխանական սուբյեկտի արժեքներն ու վարքագիծը, «դեպի եզրաշերտն ուղղված իշխանություն»-ը պահանջում է հիմնարար փոփոխություններ

ինչպես մշակույթի, այնպես էլ մտածողության ոճի մեջ, ինչն անխուսափելիորեն հանգեցնում է անձի, ռազմական կառույցի և հասարակության միջև հարաբերությունների վերանայմանը տեղեկատվական դարաշրջանում [7, p. 181]:

## 5. Պատերազմի սկզբունքները

Մինչ պատերազմի սկզբունքների համառոտ ներկայացումը՝ հարկ է որոշել, թե ինչ է նկատի առնվում պատերազմի սկզբունքներ ասելով: Սկզբունքները հաղթանակի հասնելու համար զինված ուժերն օգտագործելու վերաբերյալ պատրաստի դեղատոմսեր և մեթոդական հրահանգներ չեն: Դրանք չի կարելի օգտագործել իրողությունից կտրված: Այդ սկզբունքները պահանջում են դրանք օգտագործող անձի պատմական հեռանկարի առկայություն [97, pp. 23-27]: Կինելով պատերազմի տեսություն բուն էությունը՝ պատերազմի սկզբունքներն, այնուամենայնիվ, շատ ավելին են, քան պարզապես տեսություն, և կատարում են կամրջի դեր տեսություն և նրա կիրառման միջև: Դրանք «ղեկավարում են պատերազմի վարումը ռազմավարական, օպերատիվ և մարտավարական մակարդակներում» [92, p. B-1]: Ժամանակի քննությունը բունելով՝ դրանք ներկայանում են որպես «ղեկավարող սկզբունքներ», որոնք պետք է օգտագործեն հրամանատարները՝ որոշում մշակելու և զորքերն ուղղակիորեն գործի դնելու դեպքում» [98, p. 12]:

Այսպիսով, սկզբունքները ռազմական ստրատեգիական մշակույթի կարևոր բաղադրիչն են և շատ բանով որոշում են այն, թե ինչպես է երկիրը նայում աշխարհին, իր թշնամիներին և հենց ինքն իրեն՝ ըստ այդմ դառնալով ռազմական ոլորտում ընդունվող որոշումների մեծամասնություն հենքը [84, pp. 190-195]: Ռազմական վերնախավի միջոցով պատերազմի սկզբունքներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդում են հարցերի լայն շրջանակի վրա, որոնք ուղղակիորեն չեն առնչվում մարտական գործողություններին՝ ներառյալ զինված ուժերի, ռազմարդունաբերական համալիրի զարգացումը, զինամթերքի գնումը, զինվորական ուսուցման համակարգը և այլն:

Սուն Յզիի պատերազմի սկզբունքները. «Տրակտատ ռազմարվեստի մասին» հայտնի աշխատությունում Սուն Յզին պնդում է, որ «Պատերազմը պետություն համար մեծ գործ է, դա կյանքի և մահու հիմքն է, գոյություն և կործանման ուղին: Դա պետք է հասկանալ: Դրա համար նրա հիմքում դնում են հինգ երևույթ (այն շափում են յոթ հաշվարկով և դրանով են որոշում վիճակը)»: Սուն Յզիի հինգ երևույթները և յոթ հաշվարկներն այն սկզբունքներն են, որոնք թույլ են տալիս պատերազմում հասնել հաղթանակի: Սուն Յզին խորհուրդ է տալիս պահել միայն այն գեներալներին, ովքեր հետևում են իր ռազմավարությանը, և հավատում էր, որ ի վիճակի է կանխատեսել հաղթողին և պարտվողին՝ ելնելով նրանից, թե ով է հետևում իր պատգամներին [3, pp. 67-88]:

Մաֆիավելիի պատերազմի սկզբունքները. «Պատերազմի արվեստը» (Arte della Guerra) աշխատությունում, որ հրապարակվել է 1521թ., Նիկոլո Մաքիավելին գրում է այն մասին, որ գոյություն ունեն ժամանակի մեջ անփոփոխ որոշակի հիմնարար սկզբունքներ, որոնք կարելի է հայտնաբերել պատերազմի մասին բոլոր տրակտատներում: Նա մտցնում է մի շարք կանոններ, որոնք պետք է օգնեն հրամանատարին պատերազմ մղելիս [99, pp. 6-7]: Պատերազմի այսօր ընդունելի շատ սկզբունքներ, ներառյալ նաև հարմարվողականությունը, տեղ են գտել նրա աշխատանքում. «Զկա ավելի կարևոր բան պատերազմի ժամանակ, քան իմանալ, թե ինչպես լավագույն ձևով օգտագործել նպաստավոր հնարավորությունը, երբ այն պատահում է» [100, pp. 270-272]:

Ժոմինիի պատերազմի սկզբունքները. Պատմաբանները ժամանակակից պատերազմի սկզբունքները կապում են Անտուան Հենրի Ժոմինիի (Antoine-Henri Jomini) անվան հետ: XIX դարի շվեյցարացի տեսաբանը պնդում էր, որ սկզբունքները պետք է լինեն հստակ և ոչ երկիմաստ, իսկ դրանց թվաքանակը՝ սահմանափակ, քանի որ դրանք հրահանգի դեր են կատարում հրամանատարների համար՝ պատերազմի կազմակերպման և վարման ժամանակ [99, pp. 18-19]: 1807թ. Ժոմինին հրապարակեց մի աշխատանք, որում 10 պարագրաֆով տրվում է ցուցակը «ընդհանուր ճշմարտությունների, որոնց կիրառումն իր ավանդն է բե-

րում պատերազմում հաջողության մեջ»: Ջոն Ալգերսը (John Algers) պնդում է, որ ժոմինիի ցուցակը ժամանակակից պատերազմի սկզբունքներին նախատիպն է [99, pp. 21-23]:

Կլաուզևիցի պատերազմի սկզբունքները. Որոշ հետազոտողներ ժամանակակից պատերազմի սկզբունքները կապում են Կլաուզևիցի անվան հետ [99, p. 28]: Միևնույն ժամանակ, ոմանք պնդում են, որ «նա մանավանդ ժխտում էր այն հասկացությունը, թե հնարավոր է որոշակի կանոնների և սկզբունքների որոշակի միատեղման գոյությունը, որոնք ամենուր և ամեն տեղ թելադրում են վարքի միայն մեկ ձևի ընտրություն» [97, p. 446]: Այնուամենայնիվ, Կլաուզևիցը պատրաստեց հուշագիր պրուսական թագաժառանգի համար, որը կրում էր «Պատերազմի վարման ամենակարևոր սկզբունքները» (The Most Important Principles for the Conduct of War) անվանումը, որն սկսվում է հետևյալ բնորոշմամբ. «Այս սկզբունքները, լինելով երկարատև խորհրդածությունների և պատերազմի պատմության մշտական հետազոտությունների արդյունք, այնուամենայնիվ, գրվել են հապճեպ, ուստի և քննադատության չեն դիմանա ձևի առումով: Բացի այդ, բազմաթիվ թեմաներից շոշափվել են միայն ամենակարևորները, քանի որ անհրաժեշտ էր որոշակի համառոտություն: Այս սկզբունքները, հետևաբար, ամբողջական պատգամները չեն, որ ներկայացվում են Ձերդ Արքայական Մեծությանը, այլ Ձեր դատողությունների համար որպես մղում և հրահանգ են ծառայում» [101, p. 11]:

Հուշագիրը պարունակում էր ընդհանուր, հարձակողական և պաշտպանողական սկզբունքների ցուցակը, և չնայած հենց Կլաուզևիցի արած վերապահումներին՝ դրանում, ինչպես նաև Կլաուզևիցի հիմնական՝ «Պատերազմի մասին» աշխատությունում դժվար չէ հայտնաբերել ժամանակակից պատերազմի բոլոր սկզբունքները: Սրանում հեշտ է համոզվել՝ համեմատելով Կլաուզևիցի «սկզբունքներ» տերմինի սահմանումը ԱՄՆ զինված ուժերի տված սահմանման հետ<sup>8</sup>. «Սկզբունքը նաև օրենք է գործողության

<sup>8</sup> Որպես օրինակ. «Ռազմաօդային ուժերի հիմնական դոկտրինում (Air Force Basic Doctrine) հաստատվում է, որ սկզբունքները «գնահատման ենթակա հրահանգներ

համար, բայց ոչ նրա ֆորմալ, անվերապահ նշանակությունը, այն ներկայացնում է միայն օրենքի ոգին ու գիտակցումը. այն դեպքերում, երբ իրական աշխարհի բազմազանությունը չի կարող խցկվել օրենքի կոշտ ձևի մեջ, սկզբունքների կիրառումը թույլ է տալիս ապահովել դատողությունների մեծ ազատություն: Այն դեպքերը, որոնց պարագայում սկզբունքները չեն կարող կիրառվել, պետք է կարգավորվեն դատողություններով. սկզբունքն, այսպիսով, ըստ էության դառնում է գործողության համար պատասխանատու անձի հենարանը, ուղեցույց աստղը» [74, pp. 166-167]:

Ցանցակենտրոն պատերազմների հիմնական և ղեկավարող սկզբունքները.- Ցանցակենտրոն պատերազմների ներկայումս ձևավորվող տեսությունը սահմանել է հենքային և ղեկավարող սկզբունքները, որոնք պետք է լրացնեն ժամանակով ստուգված պատերազմի սկզբունքներին՝ զանգված, նպատակ, հարձակում, անվտանգություն, ուժերի խնայում, խուսանավում, հրամանատարության միասնականություն, հանկարծակիություն, պարզություն [102, p. 8]:

Նոր սկզբունքները, ստեղծելով ՅԿՊ աշխատանքային հիպոթեզը, չեն մրցակցում դասական սկզբունքների հետ, այլ լրացնում են դրանք՝ օգնելով հասկանալ, թե ինչպես պետք է մեծանա «ցանցային ուժերի» (networked forces) մարտական հզորությունը:

*ՅԿՊ տեսության մեջ հենքային են համարվում հետևյալ 4 սկզբունքները.*

- կայուն ցանցային ուժերը բարելավում են տեղեկատվության փոխանակումը (A robustly networked force improves information sharing),

- տեղեկատվական փոխանակումը բարելավում է տեղեկատվության որակը և իրավիճակային տեղեկացվածությունը (Information sharing enhances the quality of information and shared situational awareness),

---

են, որոնց օգնությամբ կարելի է գնահատել գործողությունների պոտենցիալ ուղղությունները: Սկզբունքները... ծառայում են որպես հենք զինված ուժերի գործադրման մասին որոշում կայացնելու համար: Դրանք հանդիսանում են հրահանգներ պլանավորման, ուսուցման, գնահատականի և գործողությունների համար և չպետք է ընդունվեն որպես բացարձակ» [98, p. 12]:

- Իրավիճակային տեղեկացվածության փոխանակումը հնարավոր է դարձնում փոխգործակցությունը (առաջադրանքի համատեղ կատարումը) և ինքնասինքրոնացումը, ինչպես նաև բարձրացնում է մարտական կայունությունն ու հրամաններ տալու արագությունը (shared situational awareness enables collaboration and self-synchronization, and enhances sustainability and speed of command),

- սա, իր հերթին, դրամատիկորեն բարձրացնում է առաքելության արդյունավետությունը<sup>9</sup> [102, p. 7]:

*ՅԿՊ ղեկավարող սկզբունքներն են.*

- Մարտնչիր առաջինը տեղեկատվական գերազանցություն ստանալու համար (Fight First for Information Superiority):

- Իրագեկություն փոխանակում (Shared Awareness):

- Հրամաններ տալու և որոշումներ ընդունելու արագությունը (Speed of Command and Decision Making):

- Ինքնասինքրոնացում (Self-Synchronization):

- Զորքերի ապակենտրոնացում (Dispersed Forces):

- ապազանգվայնացում (Demassification):

- Խոր սենսորային ընդգրկում (Deep sensor Reach):

- Փոխի սկզբնական պայմանները փոփոխությունների բարձր հաճախականության դեպքում (Alter Initial Conditions at Higher Rates of Change):

- Սեղմիր պատերազմի գործողությունները և մակարդակները (Compressed Operations and Levels of War) [102, pp. 8-10]:

Այն հայտ է, որ ՅԿՊ տեսության զարգացմանը զուգընթաց՝ ղեկավարող սկզբունքները կճշգրտվեն և, հնարավոր է, կլրացվեն նորերով՝ ստեղծելով էլ ավելի ամբողջական պատկերն այն բանի, թե ինչպես պետք է կառուցվեն, ուսուցանվեն, մարզվեն և գործեն ցանցային ուժերը:

<sup>9</sup> Առաջին անգամ այս սկզբունքները հնչեցին ԱՄՆ Կոնգրեսին ներկայացված զեկուցում [103]:

Նախատեսում ենք հաջորդիվ ներկայացնել ՑԿՊ տեսություն ծավալուն հայեցակարգը: Այս հոդվածի շրջանակներում կսահմանափակվենք սկզբունքներից յուրաքանչյուրի սեղմ բնութագրմամբ:

**Մարտնչի առաջինը տեղեկատվական գերազանցություն ստանալու համար.**- Հրահրել մարտական գործողություններ, գրոհել տեղեկատվական գերազանցության հասնելու համար: Տեղեկատվական գերազանցության հասնել ժամանակի, ճշգրտության և կարևորության առումով լավագույն տեղեկատվության մշակման միջոցով:

**Իրագեկություն փոխանակում.**- Կանոնավորապես վերափոխել տեղեկատվությունը և գիտելիքները ընդհանուր ըմբռնողության և իրավիճակային իրազեկվածության պահանջվող մակարդակին համապատասխան՝ միավորված կամ համատեղ գործողությունների մասնակիցների ամբողջական ընդգրկման միջոցով:

**Հրամաններ տալու և որոշումներ ընդունելու արագություն.**- Ընդունել տեղեկատվական գերազանցությունը և փոխարկել այն մրցակցային գերազանցության՝ գործընթացները և ընթացակարգերը բացելու միջոցով, որոնք հակառակ պարագայում անհնար են (ընդունելի ռիսկի սահմաններում):

**Ինֆնասիմֆրոնացում.**- Մեծացնել ստորին մակարդակի ուժերի՝ գրեթե ինքնավար կերպով գործելու, ինքնուրույն վերախմբավորվելու և խնդիրներ առաջադրելու կարողությունը՝ օգտագործելով իրազեկության փոխանակումը և հրամանատարի (հրամաններ արձակողի) մտադրությունների իմացությունը:

**Ապակենտրոնացված ուժեր.**- Մարտական ուժը մարտի գծային դաշտից տեղափոխել առանց բախման գործողությունների գիծ:

**Դեմասսիֆիկացիա.**- Աշխարհագրական առումով անընդհատ կենտրոնացած ուժերի վրա հենվող մոտեցումից անցնել էֆեկտի (նպատակի) հասնելու վրա հենվող ուժերի:

**Խոր սենտրալին ընդգրկում.**- Ընդլայնել տարածվող, տեղաբաշխվող և ցանցային սենտրոնների ինչպես դիստանցիոն, այնպես էլ ուղղակի կիրառումը, որոնք կհայտնաբերեին անհրաժեշտ տեղեկատվությունը,

որը հետաքրքրություն է ներկայացնում օպերատիվ կարևորությունն ղի-սապագոնում վճռորոշ էֆեկտի հասնելու համար:

Սեդմիր պատերազմի գործողությունները և մակադակները.- Արագ և վճռական էֆեկտի հասնելու համար բացառել ծառայությունների միջև և գործընթացների ներսում առկա ընթացակարգային սահմաններն այնպես, որ միավորված գործողությունները կարելի լինի անցկացնել հնարավորինս ցածր կազմակերպական մակարդակում:

Փոխի սկզբնական պայմանները փոփոխությունների բարձր հաճախականության դեպքում.- Փոխել նախնական պայմանները փոփոխությունների լայն ծավալի դեպքում: Օգտագործել բարձր աստիճանի իրազեկություն փոխանակման սկզբունքները, դինամիկ ինքնասինքրոնացումը, ապակենտրոնացված և ցրված ուժերը, խոր սենսորային հնարավորությունը, սեղմ գործողություններն ու պատերազմի մակարդակները, հրամաններ արձակելու մեծ արագությունը, ինչը միավորված ուժերին թույլ կտա արագ հարմարվել փոխելով հակառակորդի օպերատիվ համատեքստը և հասնելով գերազանցության: Պատերազմը մեծ չափով կախված է իր ընթացքի համատեքստից և դինամիկայից, այստեղից էլ բխում է նրա նախնական պայմանները որքան հնարավոր է կոշտ վերահսկելու հրամայականը: Պատմությունը ցույց է տալիս, որ բեկումնային իրադարձությունների կապակցվածությունը ժամանակի մեջ խոր ազդեցություն է թողնում՝ ինչպես հոգեբանորեն, այնպես էլ հակառակորդի հնարավոր պատասխանի կանխարգելման միջոցով:

### Աղբյուրներ և գրականություն

1. Тер-Арутюнян Г., Цивилизационный фактор в контексте проблем информационной безопасности, «21-й век», № 1, Ер., 2006.
2. Gray C., Transformation and Strategy Surprise. Strategic Studies Institute (SSI), U.S. Army War College, Carlisle Barracks, April 2005.  
1 September 2006.<http://www.strategicstudiesinstitute.army.mil/pdffiles/PUB602.pdf>.

3. Sun Tzu, *The Art of War*, London, Oxford University Press, 1963 (translated by S B Griffith with a foreword by B. H. Liddell Hart; accepted in the Chinese Translations Series of UNESCO).
4. Gray J., *Al Qaeda and What It Means to be Modern*, London, 2003.
5. Ասատրյան Հ., Հատընտիր, Եր., 2004:
6. Hirst P., *War and Power in the 21st Century: The State, Military Conflict and the International System*, Cambridge: Polity Press, 2001.
7. Alberts D., Richard E., *Power to the Edge: Command and Control in the Information Age*. Washington, DC: DoD Command and Control Research Program (CCRP) Publication Series, 2003. 1 September 2006. [http://www.dodccrp.org/publications/pdf/Alberts\\_Power.pdf](http://www.dodccrp.org/publications/pdf/Alberts_Power.pdf).
8. Այվազյան Ա., Հայ զինվորականության պատվո վարձականնը (4-5-րդ դարեր), Եր., 2000.
9. Parker G., *Military Revolution: Military Innovation and the Rise of the West, 1500-1800*, New York: Cambridge University Press, 1996.
10. Gray Colin S., «How Has War Changed Since the End of the ColdWar?» Parameters, U.S. Army War College, Spring 2005. 1 September 2006. <http://www.carlisle.army.mil/USAWC/Parameters/05spring/gray.pdf>
11. Qiao Liang, Wang Xiangsui, *Unrestricted Warfare: Assumptions on War and Tactics in the Age of Globalization*, FBIS trans., Beijing: PLA Literature Arts Publishing House, 1999.
12. Huntington Samuel P., *The Soldier and the State: The Theory and Politics of Civil-Military Relations*, New York: Vintage Books, 1964.
13. Арзумян Р., Нелинейная природа войны, «21-й век», № 1, Ер., 2005, с. 109-149.
14. Echevarria II, Antulio J., *Toward an American Way of War*. Strategic Studies Institute (SSI), U.S. Army War College, Carlisle Barracks, March 2004. 1 September 2006. <http://www.strategicstudiesinstitute.army.mil/pdffiles/PUB374.pdf>.

15. Moltke Helmuth von, «Über Strategie, 1871», in Großer Generalstab, ed., Moltkes Militärisches Werke, 14 Vols., Berlin: E. S. Mittler, 1892-1912.
16. Hughes Daniel, Moltke on the Art of War: Selected Writings, Novato, CA: Presidio, 1993.
17. Summers Harry G. Jr., On Strategy: A Critical Analysis of the Vietnam War. Novato, CA: Presidio, 1995.
18. Kohn Richard H., «The Erosion of Civilian Control of the Military in the United States Today», Naval War College Review, Vol. 45, № 3, Summer 2002.
19. Cohen Eliot A., Supreme Command: Soldiers, Statesmen, and Leadership in Wartime, New York: Free Press, 2002.
20. Feaver Peter D., «The Civil-Military Problematique: Huntington, Janowitz, and the Question of Civilian Control», Armed Forces & Society, Vol. 23, 1996.
21. Snider Don M., Gayle L. Watkins, «Introduction», in Matthews Lloyd J. ed., The Future of the Army Profession, New York: McGraw Hill, 2002.
22. Hanson V. D., Carnage and Culture: Landmark Battles in the Rise of Western Power, New York: Doubleday, 2001.
23. Hanson V. D., The Western Way of War: The Infantry Battle in Classical Greece, New York: Knopf, 1989.
24. Echevarria II, Antulio J., «On the Brink of the Abyss: The Warrior Identity before the Great War,» War & Society, Vol 13, № 2, October 1995.
25. Posen B., The Sources of Military Doctrine: France, Germany, and Britain between the World Wars, Ithaca, NY: Cornell University Press, 1984.
26. Զարյան Շ., Դեպի Արարատ, 2001:
27. Арзуманян Р., Странник. Костан Зарян и Армянская Духовная Традиция, «Анив», армянский журнал № 4 (7), Минск/Москва, 2006.
28. Weigley Russell F., The American Way of War: A History of U.S. Military Strategy and Policy, Bloomington, IN: Indiana University Press, 1973.
29. Boot M., Savage Wars of Peace: Small Wars and the Rise of American Power, New York: Basic Books, 2002.
30. Kagan R., Paradise and Power: America and Europe in the New World Order, London: Atlantic Books, 2003.

31. Крылов К., К философии армии, Отечественные Записки, № 8, 2002, 1 Сентября 2006. <http://traditio.ru/krylov/army.htm>.
32. Кант И., Сочинения в шести томах. М., 1966., т. 6.
33. Luttwak Edward N., «Towards Post-Heroic Warfare», Foreign Affairs, vol. 74, № 3, May/June 1995.
34. Kurth James C., «Clausewitz and the Two Contemporary Military Revolutions: RMA and RAM», in Strategic Logic and Political Rationality: Essays in Honour of Michael I. Handel, ed. Bradford A. Lee and Karl F. Walling, London: Frank Cass, 2003.
35. McInnes Colin., Spectator-Sport War: The West and Contemporary Conflict, Boulder, Colo.: Lynne Rienner Publishers, 2002.
36. Арзумян Р., Метафора нелинейности в социальных системах, «21-й век», № 2 (4), Ер., 2004.
37. Whitehead Stuart A., «Balancing Tyche: Nonlinearity and Joint Operations», in Williamson, Murray (ed). National Security Challenges for the 21st Century. Strategic Studies Institute (SSI), U.S. Army War College, Carlisle Barracks, October 2003. 1 September 2006.  
<http://www.strategicstudiesinstitute.army.mil /pdffiles/PUB4.pdf>
38. U.S. Army, 2004 Army Transformation Roadmap, Washington, DC: Office of the Deputy Chief of Staff, U.S. Army Operations, Army Transformation Office, July 2004.
39. Graye Colin S., Modern Strategy, Oxford: Oxford University Press, 1999.
40. Friedman Norman, The Fifty-Year War: Conflict and Strategy in the Cold War, Annapolis: Naval Institute Press, 2000.
41. Գևորգյան Համիլետ Ա. Տեր., Փիլոսոփայություն, պատմություն, մշակույթ. ՀՀ ԳԱԱ. Փիլոսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ, Երևան, 2005:
42. Геворкян Гамлет А., Национальная культура с точки зрения философии истории, АН Армении, Институт философии и права, Ер., 1992.
43. Stewart Andrew W., Friction in U.S. Foreign Policy: Cultural Difficulties with the world. Strategic Studies Institute (SSI), U.S. Army War College, Carlisle

- Barracks, June 2006. 1 September 2006.  
<http://www.strategicstudiesinstitute.army.mil/pdf/PUB706.pdf>.
44. Browning Susan A., *Understanding Non-Western Cultures: A Strategic Intelligence Perspective*, Strategy Research Project, Carlisle Barracks, PA: U.S. Army War College, 1997.
  45. Peters Ralph, «Constant Conflict», *Parameters*, U.S. Army War College Quarterly, Summer 1997. 1 September 2006.  
<http://www.carlisle.army.mil/USAWC/parameters/97summer/peters.htm>.
  46. Levy Bernard Henri, «American Vertigo, Traveling America in the Footsteps of Tocqueville», interview on live national television by Fox News, March 6, 2006/1745hrs EST.
  47. Kurth James, «The American Way of Victory», *The National Interest*, Summer 2000. 1 September 2006. <[http://www.ciaonet.org/olj/ni/ni\\_00kuj01.html](http://www.ciaonet.org/olj/ni/ni_00kuj01.html)>.
  48. Lawrence T. E., «The 27 Articles of T.E. Lawrence», *The Arab Bulletin*, 20 August, 1917. 1 September 2006, <[http://www.d-n-i.net/fcs/lawrence\\_27\\_articles.htm](http://www.d-n-i.net/fcs/lawrence_27_articles.htm)>.
  49. Wunderle William, «Through the Lens of Cultural Awareness; Planning Requirements in Wielding the Instruments of National Power», in a Microsoft Power Point presentation with scripted commentary, April 21, 2005, slide 15.
  50. Gray Colin S., «Strategy in the Nuclear Age: The United States, 1945-1991», in *The Making of Strategy: Rulers, States and War*, Williamson Murray, Macgregor Knox, and Alvin Bernstein, eds., New York: Cambridge University Press, 1994.
  51. Hoffman F.G., *Decisive Force: The New American Way of War*, Westport: Praeger, 1996.
  52. Osgood Robert E., *Limited War: The Challenge to American Strategy*, Chicago: University of Chicago Press, 1957.
  53. Iklé Fred Charles, *Every War Must End*, New York: Columbia University Press, 1971.
  54. Schadlow Nadia, «War and the Art of Governance», *Parameters*, Vol. 33, № 3, Autumn 2003, 1 September 2006.  
<http://www.carlisle.army.mil/usawc/parameters/03autumn/schadlow.pdf>.

55. Snider Don M., «America's Postmodern Military», *World Policy Journal*, Vol. 17, № 1, Spring 2000.
56. Cordesman Anthony, «What is Next in Iraq? Military Developments, Military Requirements and Armed Nation Building», Washington, DC: Center for Strategic and International Studies (CSIS), August 2003.  
1 September 2006. [http://www.csis.org/media/csis/pubs/iraq\\_whatsnext.pdf](http://www.csis.org/media/csis/pubs/iraq_whatsnext.pdf).
57. Zinni Anthony, «How Do We Overhaul the Nation's Defense to Win the Next War?» Special transcript of a presentation delivered at the U.S. Naval Institute, September 4, 2003. 1 September 2006. <http://www.mca-usniforum.org/forum03zinni.htm>.
58. Echevarria II, Antulio J., *After Clausewitz: German Military Thinkers before the Great War*, Lawrence, KS: University Press of Kansas, 2000.
59. Schelling Thomas C., *Arms and Influence*, New Haven: Yale University Press, 1966.
60. Wylie Joseph C., *Military Strategy: A General Theory of Power Control*, Annapolis, MD: U.S. Naval Institute Press, 1989.
61. Weinberger Casper, Speech delivered at the National Press Club, on November 28, 1984, reprinted in *Defense*, January 1985.
62. Powell's Doctrine, in *Powell's Words*, *The Washington Post*, October 7, 2001, transcript of an interview with Tim Russert.
63. Boot Max, «The New American Way of War», *Foreign Affairs*, Vol. 82, № 4, July/August 2003.
64. Boot Max, «Everything You Think You Know About the American Way of War Is Wrong», *Foreign Policy Research Institute*, September 12, 2002.  
1 September 2006. <http://www.fpri.org/enotes/americanwar.20020912.boot.americanwayofwar.html>
65. Linn Brian M., «The American Way of War Revisited», *The Journal of Military History*, Vol. 66, № 2, April 2002.
66. Weigley Russell F., «Response to Brian McAllister Linn», *Journal of Military History*, Vol. 66, № 2, April 2002.
67. Clausewitz Carl von, *On War*, Michael Howard and Peter Paret, trans., Princeton: Princeton University Press, 1976.

68. Strassler Robert B., ed., *The Landmark Thucydides: A Comprehensive Guide to «The Peloponnesian War»*, trans. Richard Crawley, New York: Free Press, 1996.
69. Metz Steven, Raymond Millen., *Future War/Future Battlespace: The Strategic Role of American Landpower*, Carlisle, Pa.: US Army War College, Strategic Studies Institute, March 2003.
70. Coram Robert, *Boyd: The Fighter Pilot Who Changed the Art of War*, Boston: Little, Brown, 2002.
71. Liddell Hart, Basil H., *The Strategy of Indirect Approach*, London: Faber and Faber, 1941.
72. Gray Colin S., «Why Strategy is Difficult», *JFQ*, Summer, 1999.
73. Clausewitz Carl von, *Two Letters on Strategy*, Peter Paret and Daniel Moran, eds. and trans., Carlisle, PA: U.S. Army War College, 1984.
74. Clausewitz Carl von, *On War*, Michael Howard and Peter Paret, trans., Princeton: Princeton University Press, 1976.
75. Churchill Winston S., *The World Crisis 1915*, New York: Charles Scribner's Sons, 1929.
76. Jablonsky David, «Why Is Strategy Difficult» in Bartholomees, J. Boone Jr., (ed.) *U.S. Army War College Guide to National Security Policy and Strategy Revisited*, Strategic Studies Institute (SSI), U.S. Army War College, Carlisle Barracks, June 2006. 1 September 2006. <http://www.strategicstudiesinstitute.army.mil/pdf/PUB708.pdf>.
77. Craig Gordon A., *The Politics of the Prussian Army 1640-1945*, New York: Oxford University Press, 1956.
78. Handel Michael L., *War, Strategy and Intelligence*, London: Frank Cass, 1989.
79. Wavell Archibald, *Generals and Generalship*, London: Macmillan, 1941.
80. James William, «The Moral Equivalent of War». Lecture 11 in *Memories and Studies*, New York: Longman Green and Co., 1911.
81. Eccles Henry E., *Military Power in a Free Society*, Newport, RI: Naval War College Press, 1979.
82. Bar-Yam Yanner, *Complexity of Military Conflict: Multiscale Complex Systems Analysis of Littoral Warfare, Multiscale Representation Phase II, Task 2:*

Multiscale Analysis of Littoral Warfare. Report to Chief of Naval Operations Strategic Studies Group, April 21, 2003. 1 September 2006.

[http://necsi.org/projects/yaneer/SSG\\_NECSI\\_3\\_Litt.pdf](http://necsi.org/projects/yaneer/SSG_NECSI_3_Litt.pdf).

83. Scott-Kakures Dion, *History of Philosophy*, New York, 1993.
84. Dickerson Brian, «Adaptability: A New Principle of War», in Williamson, Murray (ed). *National Security Challenges for the 21st Century*. Strategic Studies Institute (SSI), U.S. Army War College, Carlisle Barracks, October 2003. 1 September 2006. <http://www.strategicstudiesinstitute.army.mil/pdf/files/PUB4.pdf>
85. Leonard Robert R., *The Principles of War for the Information Age*, Novato, CA, 1998.
86. Tsouras Peter G., *Warrior's Words: A Quotation Book: From Sesostris III to Schwarzkopf, 1871 B.C. to A.D. 1991*, London: Cassell Arms and Armour, 1992.
87. Liddell Hart Basil H., *Strategy*, 2nd edition, 1954, reprint, New York: Frederick A. Praeger, 1967.
88. Frost Robert S., «The Growing Imperative to Adopt 'Flexibility' as an American Principle of War», Strategic Research Project, Carlisle Barracks, PA, 1999.
89. U.S. Department of the Navy, «Leading Marines», Fleet Marine Field Manual 1-0, Washington, DC, 1995.
90. U.S. Department of the Army, «The Army», Field Manual 1, Washington, DC, 2001.
91. U.S. Joint Staff, Directorate for Operational Plans and Joint Force Development, «Evolving Joint Perspective: US Joint Warfare and Crisis Resolution in the 21st Century», White Paper, Washington, DC: United States Department of Defense, 2003.
92. U.S. Joint Chiefs of Staff, «Joint Warfare of the Armed Forces of the United States: Joint Publication 1», Washington, DC: United States Department of Defense, 2000. 1 September 2006. [https://www.dtic.mil/doctrine/jel/new\\_pubs/jp1.pdf](https://www.dtic.mil/doctrine/jel/new_pubs/jp1.pdf).
93. Myers Richard B., «We Can Not Rest On Our Success», interview by Gerry J. Gilmore, Defense Link, September 13, 2002. 1 September 2006. [http://www.defenselink.mil/news/Sep2002/n09132002\\_200209135.html](http://www.defenselink.mil/news/Sep2002/n09132002_200209135.html)
94. Rumsfeld Donald H., «21st Century Transformation of U.S. Armed Forces», speech, National Defense University, Ft McNair, Washington, DC, January 31,

2002. 1 September <http://www.defenselink.mil/speeches/2002/s20020131-secdef.html>.
95. Alberts David S., John Garstka, Richard E. Hayes, David T. Signori., Understanding Information Age Warfare. Washington, DC: DoD Command and Control Research Program (CCRP) Publication Series, 2001. 1 September 2006. [http://www.dodccrp.org/publications/pdf/Alberts\\_UIAW.pdf](http://www.dodccrp.org/publications/pdf/Alberts_UIAW.pdf).
  96. Robertson Bruce, Valentin Sribar, The Adaptive Enterprise: IT Infrastructure Strategies to Manage Change and Enable Growth, Santa Clara, CA: Intel Press, 2001.
  97. Brodie Bernard, Strategy in the Missile Age, Princeton, NJ, 1959.
  98. U.S. Department of the Air Force, «Air Force Basic Doctrine», Air Force Doctrine Document (AFDD)1, Washington, DC, 1997. 1 September 2006. <http://www.globalsecurity.org/military/library/policy/usaf/afdd/afdd1.pdf>.
  99. Algers I. John, The Quest for Victory: The History of the Principles of War, Westport, Conn.: Greenwood Press, 1982.
  100. Machiavelli Niccolo, The Art of War, Ellis Farnsworth, trans., Cambridge, MA, 2001.
  101. Clausewitz Carl von, Principles of War, Hans W. Gatzke, trans., Harrisburg, PA, 1942.
  102. Cebrowski A.K., «The Implementation of Network-Centric Warfare», Washington DC: Office of the. Secretary of Defense, 2005. 1 September 2006. [http://www.of.t.osd.mil/library/library\\_files/document\\_387\\_NCW\\_Book\\_LowRes.pdf](http://www.of.t.osd.mil/library/library_files/document_387_NCW_Book_LowRes.pdf).
  103. Department of Defense, Network-Centric Warfare Report to Congress. Washington, DC, 2001. 1 September 2006. [http://www.dod.mil/nii/NCW/ncw\\_sense.doc](http://www.dod.mil/nii/NCW/ncw_sense.doc).



**2**

**ՌԱԶՄԱԿԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**



## 16.

ԿԱՐՍԻ ԱՆԿԱՆ ԲՈՒՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ (1920 Թ.)

### ՊԵՎՈՐԳ ՅԱՂԵՅՍ

Կարսի անկումը 1920 թ. հոկտեմբերի 30-ին՝ մնում է հայոց նորագույն պատմության ամենից խայտառակ ու ամոթալի էջերից մեկը<sup>1</sup>: Ուրիշ ի՞նչ որակում կարելի է տալ այն փաստին, որ հօգուտ հայերի՝ բանակի թվակազմի և ռազմամթերքի բազմապատիկ գերազանցության պայմաններում, մի քանի ժամվա ընթացքում<sup>2</sup>, «առանց կռվի»<sup>3</sup> թշնամուն է անցել ամբողջունների բազմաշարք համակարգ ու-

---

<sup>1</sup> Լիբանանահայ արձակագիր և Բեյրութի «Նայիրի» շաբաթաթերթի հիմնադիր-խմբագիր Անդրանիկ Ծառուկյանը Կարսի անկումը համարում է «Դեր Զորեն ետք հայ ժողովուրդին կրած մեծագույն աղետը՝ որուն շուրջ պատմության խոսքը հստակ չէ դեռ, և շատերու մտքին մեջ կմնա առեղծվածային շփոթություն»։ տե՛ս նրա խմբագրական ներածական խոսքը Արտաշես Բաբայանի «Կարսի անկումը» հուշագրության վերահրատարակման առթիվ, «Նայիրի» շաբաթաթերթ, Բեյրութ, ժե տարվա (1968,- Գ. 3.) 45-50 միացյալ համարների փոխարեն լույս տեսած բացառիկ համար, էջ 8:

<sup>2</sup> Ըստ Հայաստանի վրա արշաված թուրքական բանակի հրամանատար Քյազիմ Կարաբեքիրի՝ Կարսն ինքը գրավել է 3.5 ժամվա ընթացքում («Քյազիմ Կարաբեքիրի հուշերը Հայաստանի Հանրապետության վրա թուրքական հարձակումներուն մասին», թարգմ. Ա. Շորվոզյան, «Զարթոնք» օրաթերթ, Բեյրութ, 1966 թ., 10 օգոստոսի, էջ 2):

<sup>3</sup> Կարսի Ա. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ծխատեր քահանա տ. Կորյուն Քոթանջյան. տե՛ս նրա 17 դեկտեմբեր 1922-ի զեկուցագիրը Ամենայն Հայոց Գևորգ Ե կաթողիկոսին, «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, թիվ 1 (107), 2006, էջ 100:

նեցող մի բերդաքաղաք՝ իր ավելի քան 700 թնդանոթներով և անհաշվելի այլ ռազմամթերքով<sup>4</sup>, գերի են ընկել տասնյակ հազարավոր հայ քաղաքացիներ, հազարավոր զինվորներ, ավելի քան 120 սպա, որոնց շարքին՝ երեք գեներալ (Արարատյան, Փիրումյան, Ղազարյան) և մեկ նախարար (Բաբալյան): Մինչև Կարսի մարզի ամբողջական հայաթափումը, 1921 թ., թուրքերը քաղաքում կոտորել են 8 հազար, իսկ մարզում՝ 12 հազար հայ՝ հիմնականում տղամարդիկ<sup>5</sup>: Գերի ընկած ռուսին քաղաքացի Վասիլ Իոնեսկուն վկայում է, որ Կարսում Նուրի բեյից իմացել է, «որ քաղաքում սպանված են 8 հազար հայեր (կանայք, երեխաներ և տղամարդիկ), բայց իմ դիտարկումներով սպանվածների թիվը 10-12 հազարից քիչ լինել չէր կարող, քանի որ մի ամիս անց քաղաքի շրջակայքում դեռևս կարելի էր տեսնել բազմաթիվ դիակներ»<sup>6</sup>: Ըստ Կարո Սասունու՝

---

<sup>4</sup> Իր հուշերում Կարաբեքիրը հայտնում է. «Կարսի մեջ ահագին քանակությամբ զինամթերք գրավեցինք: Լավ գործածելի վիճակի մեջ 377, նորոգության կարոտ 339 թնդանոթ և միլիոններով ռումբ ու փամփուշտ»: «Գյումրիի մեջ ալ մեծ քանակությամբ զինամթերք և զենքեր ձեռք անցուցինք», - ավելացնում է նա: Այս քանակների մի մասը իրեն պահելով հանդերձ, Կարաբեքիր արևմտյան ռազմաճակատ՝ Մուստաֆա Քեմալին ուղարկել է 117 թնդանոթ, 12 հազար հրացան, 244 գնդացի, 14 հազար սվին և սուր, 170 հազար հրետանու ռումբ, 32 միլիոն փամփուշտ, 110 հազար պայթուցիկ «և սնդուկներով, դեզերով, շոգեկառքերով (վագոն վագոն) զինամթերք և մեծագումար դրամ»: Այս բոլորը նկատի ունենալով, Ֆեզի փաշան Թուրքիայի ազգային մեծ ժողովում իր հրճվանքը հայտնելով Կարսի առումի առթիվ, հոխորտում էր. «Հայերեն առնված զենքերով անկախության պատերազմը տասը տարի ալ կրնանք շարունակել» («Քյազըմ Կարաբեքիրի հուշերը Հայաստանի Հանրապետության վրա թրքական հարձակումներուն մասին», «Զարթօնք», 1966 թ., 10 և 11 օգոստոսի, էջ 2):

<sup>5</sup> Աշոտ Մելքոնյան, «Կարս» և «Կարսի մարզ» հոդվածներ, «Հայկական հարց» հանրագիտարան, Երևան, 1996, էջ 179, 181:

<sup>6</sup> Հայաստանի ազգային արխիվ, ֆոնդ 114, ցուցակ 2, գործ 43, թերթ 34 - արտատպվել է հետևյալ հրատարակման մեջ. (աշխատասիրեց) Ավետիս Փափազյան, «Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր», «Զարթօնք», 2005 թ., 14 սեպտեմբերի, էջ 2:

2000 հայ զինվոր և սպա գերի է ընկել Կարսում: Նրանցից ընդամենը 600-ն է վերադարձել Հայաստան՝ ուժ ամսվա գերությունից և տաժանակիր աշխատանքից հետո: Ըստ նույնի՝ թուրքական գերություն մեջ ոչնչացվել է նաև Կարսից և Ալեքսանդրապոլից տարված մոտ 8000 հայ երիտասարդ<sup>7</sup>: Մեկ այլ լավատեղյակ անձ՝ հայկական երկաթուղու բարձրաստիճան պաշտոնյա Եղիշե Պահլավունին հայտնում է, որ գերի ընկած «հինգ-վեց հազար զինվորներից կենդանի վերադարձան միայն 464-ը: Սպաներից մահացան երեքը: 105-ից մնացին 102 հոգի»<sup>8</sup>: Տ. Կորյուն քահանա Քոթանջյանը գերի սպաների թիվը գնահատում է «120-ի շափ», իսկ գերիների ընդհանուր թիվը՝ «3700 հոգի, ըստ ոմանց՝ 7000», որոնցից տասնմեկ ամիս հետո «վերադարձան ոչ ավել, քան 800-900 հոգի»<sup>9</sup>, «միայն 900 հոգի, մեծ մասամբ զինվորականներ»<sup>10</sup>: Մինչդեռ «պատերազմի սկսված օրեն մինչև Կարսի անկումը, այդ ճակատի հայկական բանակի ընդհանուր կորուստը եղած էր մոտ 500 սպանված և 1000 վիրավոր»<sup>11</sup>:

Եվ այսօրանից հետո, ընդամենը երեք սպա է ինքնասպանությունը<sup>12</sup> փորձել քավել համազգային այս մեծ ԱՄՈԹԸ, որին հետևեց Հայաստանի առաջին Հանրապետության լիակատար պարտությունը, Հայրենիքի տարածքի զգալի մասի և թեկուզ կիսատ-պուատ անկախություն ունեցող պետականության կորուստը, հարվածներ, որոնցից հայությունը չի սթափվել մինչև օրս:

<sup>7</sup> Կարո Սասունի, «Հայ-թուրքական պատերազմը», «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, [այսուհետ՝ ՀԹՊ], 1926, թ. 7, էջ 76:

<sup>8</sup> Եղիշե Պահլավունի, «Հուշամատյան», Երևան, 2006, էջ 161:

<sup>9</sup> Տես նրա 17 դեկտեմբեր 1922-ի զեկուցագիրը Ամենայն Հայոց Գևորգ Ե կաթողիկոսին, «Բանբեր Հայաստանի արխիվների», թիվ 1 (107), 2006, էջ 101:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 107:

<sup>11</sup> ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թ. 7, էջ 77:

<sup>12</sup> Նրանք են՝ առաջին գնդի հրամանատար գնդապետ Մազմանյանը, Սեպուհի բրիգադայի շտաբի պետ հազարապետ Զիլինգարյանը և հրետանու մարտկոցի հրամանատար գլխապետ Բագրատունին: Այս մասին տես Արտաշես Բաբայան, «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 63; ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թ. 7, էջ 76:

Հակառակ Կարսի և, ընդհանրապես, առաջին Հանրապետության անկման մասին մեծածավալ գրականության առկայության, մեր կարծիքով, հայ պատմագիտական ու քաղաքական միտքն այս իրադարձություններին առ այսօր ճշգրիտ գնահատականներ չի տվել: Ուշադրությունն առավելաբար սևեռվել է անկումների քաղաքական, մասնավորաբար արտաքին-դիվանագիտական պատճառների վրա, հետին պլան մղելով ներքին՝ գաղափարական, ռազմական, ռազմահոգեբանական, վարչաիրավական և բարոյահոգեբանական պատճառները, որոնք էլ իրականում վճռորոշն էին: Պարտության մի քանի պատճառ նշելով, այն էլ՝ հարցական ձևով, հուշագրողներից Գարեգին արք. Հովսեփյանցը գրում է, որ Կարսի անկման հարցը «մի բարդ խնդիր է, կարոտ անաչառ և մանրագնին ուսումնասիրության»<sup>13</sup>: Իր կարգին, երջանկահիշատակ եկեղեցականի հուշագրության երկրորդ վերահրատարակիչ Անդրանիկ Մառուկյանը հայտնում է, որ Կարսի անկումը բոլշևիկյան քարոզչությանը պայմանավորելը «կրնա մասամբ ճիշտ ըլլալ», բայց «անբավարար» է և «անհամոզիչ»: Նա տրամաբանական հարց է տալիս. «Սարդարապատի մեջ կովոդ հայ զորքը ինչպե՞ս կրնար մեկ օրեն մյուսը դասալիք բազմության մը վերածվիլ, մանավանդ երբ զործ ուներ միևնույն թշնամիին՝ թուրքին հետ, որուն արյունոտ ծրագիրը հայության հանդեպ գաղտնիք չէր ոչ մեկ հայու: Տարիներու ընթացքին մեր կատարած բոլոր ընթերցումները գոհացուցիչ պատասխան չեն տված այս հարցումին»<sup>14</sup>:

Սույն ուսումնասիրությանը փորձում ենք պատասխանել հայության գոյատևման համար կենսական այս հարցումին:

<sup>13</sup> Գարեգին արք. Հովսեփյանց, «Կյանքիս ամենադժբախտ օրը և երջանկությանս ռոպեն», «Որուն չապավինելու արդյունքը», Երևան, 2002, էջ 41-42:

<sup>14</sup> Անդրանիկ Մառուկյան, խմբագրական ներածական խոսք Արտաշես Բաբալյանի «Կարսի անկումը» հուշագրության վերահրատարակման առթիվ, «Նայիրի», ժն տարվա (1968,- Գ. Յ.) 45-50 միացյալ համարների փոխարեն լույս տեսած բացառիկ համար, էջ 8: Ընդգծումը Ա. Մառուկյանինն է:

Կարսի անկման ու հայության խայտառակ պարտության մասին հիշատակել են բազմիցս, սակայն, ինչպես Նժդեհն է նշում, չի ասվել բուն պատճառը, ճշմարտությունը, որն է. այդ օրերին համատարած՝ «հայ ժողովրդի՝ իր ամբողջության մեջ անմարտունակ, անարի, անմշակ հոգին»<sup>15</sup>: Եվ դա լիովին հասկանալի է. ասել ճշմարտությունը՝ նշանակում է ընդունել սեփական սխալը և ապաշխարել դրա համար, իսկ ապաշխարել նշանակում է՝ սխալը գիտակցելուց հետո զղջալ և ամաչել, ներողություն խնդրել ու սխալը չկրկնելու կամք դրսևորել:

Կարսի անկման մասին գրել ենք 2002 թ. Երևանում լույս տեսած՝ մեր կազմած ու խմբագրած «Ոգուն շապավիհներու արդյունքը (Կարսի անկումը 1920 թ. հոկտեմբերի 30-ին – Գարեգին արք. Հովսեփյանցի հուշագրությունը և փաստաթղթեր)» նյութերի ժողովածուում: Դրա լույս տեսնելուց հետո ՀՀ-ում և արտասահմանում հրապարակվել են այս թեմային վերաբերող մի շարք նոր նյութեր և ուսումնասիրություններ: Դրանց մեջ կառանձնացնենք պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արարատ Հակոբյանի՝ ծավալով և տպաքանակով փոքր (28 էջ, 100 տպաքանակով), բայց նշանակությամբ մեծ՝ «1920 թ. թուրք-հայկական պատերազմի պատմության փորձն ու դասերը» ուսումնասիրությունը (Երևան, 2004): Հեղինակն իր առաջ խնդիր է դրել «ուշագրություն դարձնել այդ պարտության հատկապես բարոյահոգեբանական գործոնին, որից մեծապես կախված է նաև ռազմական հաղթանակը»<sup>16</sup>: Նա Կարսի անկման հիմնական պատճառ է նշում ամբողջությամբ վերցրած հայ հասարակության բարոյահոգեբանական անկումային վիճակն ու պարտվողական հոգեբանությունը՝ պայմանավորված հասարակական տարբեր արատներով, որոնք համակել էին պետական վարչական

<sup>15</sup> Գարեգին Նժդեհ, «Որդիների պայքարը հայրերի դեմ», Սալոնիկ, 1927: Վերահրատարակվել է Գ. Նժդեհի «Հատընտիր»-ում, Երևան, 2001. մեջբերումը կատարվել է վերջինից, էջ 86:

<sup>16</sup> Արարատ Հակոբյան, «1920 թ. թուրք-հայկական պատերազմի պատմության փորձն ու դասերը», Երևան, 2004, էջ 4:

մեքենան՝ վերևից մինչև ներքև, այդ թվում՝ ներքին գործերի և ռազմական (զորաց) նախարար, պետության փաստական ղեկատարող Ռուբեն Տեր-Մինասյանին<sup>17</sup>, բանակը՝ գեներալներից մինչև շարքային զինվորը, հասարակությունը՝ մտավորական կոչեցյալից մինչև արհեստավորն ու գյուղացին<sup>18</sup>:

Մեր համոզմամբ, Կարսի անկման լավագույն և ճշմարտացի վերլուծական գնահատականը տվել է մեծ ռազմագետ, քաղաքագետ և ազգային գաղափարախոս Գարեգին Նժդեհը՝ «Որդիների պայքարը հայրերի դեմ» աշխատության մեջ: Նա «մեծ կեղծիք» է հայտարարում Կարսի անկման բուն պատճառը այլ պատճառներով (այլևայլ երկրորդական հանգամանքներով) փոխարինելու հանցագործ վարքագիծը: «Ճարիներ են անցել Կարսի անկման օրեն, տարիներ, և ... այդ բերդի շուրջը տեղի ունեցած ողբերգության մասին հրապարակում կա ամեն ինչ, միայն ոչ ճշմարտություն»<sup>19</sup>: Նժդեհը նշում է, որ այս մասին շատ են խոսում, մտավորականից սկսած մինչև սափրիչը, «բայց ոչ ճշմարտությունը

<sup>17</sup> Հայ Գնդունի (բուն անունով՝ Համբարձում Թովչյան), «Կարսի անկումին պատճառները» [այսուհետ՝ ԿԱՊ], «Մարտկոց» թերթ, Փարիզ, 1932 թ., 10 նոյեմբերի, էջ 2: Նույն տեղում Հայ Գնդունին մեծատառերով մեջբերում է 1920-ականների երկրորդ կեսին Ռուբենի արտաբերած մեկ խոսքը. «Անպատիվ կյանքը նախընտրելի է, քան պատվավոր մահը»: Ինչպես ասում են՝ մեկնաբանություններն ավելորդ են...

<sup>18</sup> Կարսի 1919 թ. ապրիլի 12–1920 թ. հոկտեմբերի 30 ժամանակաշրջանի նահանգապետ Ստեփան Դորդանյանը կարծես նաև այսօրվա համար է գրել հետևյալ տողերը. «Գաղափարը, սրբությունը և իդեալները կարծես իջել էին իրանց հմայիչ բարձրությունից, ուր մարդիկ ծաղրում էին իրանց ամենանվիրական հավատալիքները և ուր չկար (ճիշտը՝ «չկային»,- Գ. Յ.) այլևս ամոթ, պատկառանք և ազգային այն մեծ կորույր և տրամադրությունը, որ կրթել է սերունդներ և պատմություն ստեղծել...» (ՀԱՍ, ֆ. 477, ց. 1, գ. 18, թ. 79): Նա ավելացնում է. «Այդ մթնոլորտում չէր (ճիշտը՝ «չէին»,- Գ. Յ.) կարող զարգանալ ու ամրանալ կառավարչական հմայքը ու համարումը, այդ պրեստիժը օրեցօր ընկնում, թուլանում էր և իր հետևից տանում իրավակարգը, որի փլուզումը ե[լ] ա կներև էր ե[լ] անխուսափելի» (նույնը, գ. 2, թ. 21):

<sup>19</sup> Գ. Նժդեհ, «Հատընտիր», Երևան, 2001, էջ 84-85:

երևան հանելու մտահոգությունը: ... Եվ ամեն մեկը, որ տգիտություն և վատություն ունեցավ իրենից դուրս փնտրելու աղետի պատճառները՝ կրկնեց հիմարություններ միայն»<sup>20</sup>: Նա գրում է. «Ընդունել ճշմարտությունը հանրապետական բանակի անհաշողությունը մասին, պարզել Կարսի անկման իսկական պատճառները – կնշանակի պատասխանատվության բաժին ընդունել»: Նժդեհը հայտարարում է. «Կարսի ամոթը Հ. Հանրապետական կառավարությանը չէ միայն, այլ՝ ողջ հայ ժողովրդի: Չափվում են, բախվում են բանակները, բայց հաղթում կամ պարտվում են ազգերը, ցեղերը»<sup>21</sup>: Կարսի պատերի տակ պարտվողը հայ զինվորն ու զորավարը չէին միայն, այլ՝ բովանդակ հայությունը, հայ ժողովրդի՝ իր ամբողջության մեջ անմարտունակ, անարի, անմշակ հոգին:

Ահա՛ ճշմարտությունը, հայ՛ երիտասարդ...»<sup>22</sup>:

Նժդեհի դատողությանը համահունչ է Կարսի 1919 թ. ապրիլի 12–1920 թ. հոկտեմբերի 30 ժամանակաշրջանի նահանգապետ Ստեփան Ղորղանյանի տեսակետը, թե քաղաքի անկման ու պետականության կործանման համար պատմությունը մեղադրյալների նստարանին տեղ վերապահած կլինի հայ հասարակության համար<sup>23</sup>:

Նույնը հաստատում է նաև Մեծ Բրիտանիայի Անդրկովկասում բարձր կոմիսար, գնդապետ Ստոկսը իր կառավարությանը 1920 թ. դեկտեմբերի 24-ին ուղարկած ծածկագիրը գեկուցագրում. «(Հայ՝ Գ. Յ.) ժողովրդի մոտ կռվելու կամքի բացակայությունը բացատրվում է նրանով, որ հենց սկզբից համոզված էին, թե պաշարը իրենց ուժերից վեր է»<sup>24</sup>:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 85:

<sup>21</sup> Նույնը հաստատում է նաև Հայ Գնդունին. «Բանակները իրարու դեմ պատերազմելու ատեն՝ հոգեկան ձիբբե՛րն են որ կչափվին երկու կողմերուն կամ թշնամիներուն միջև, ամեն բանն ալելի» (ԿԱՊ, «Մարտկոց», 1932 թ., 10 նոյեմբերի, էջ 2):

<sup>22</sup> Գ. Նժդեհ, «Հատընտիր», էջ 86:

<sup>23</sup> ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 14, թ. 69:

<sup>24</sup> Armenia – Political and Ethnic Boundaries 1878-1948, compiled by Anita Burdett, “Archive” Editions, London, 1998, pp. 659-660. Փաստաթղթի հայերեն թարգմանությունը տես՝ «Ոգուն չապավինելու արդյունքը», Երևան, 2002, էջ 59-60:

Տարօրինակ է, որ հուշագրողների մեծ մասը Կարսի անկումը համարում է «չսպասված կորուստ», «անսպասելի», «անակնկալ» (Հայ Գնդունի)<sup>25</sup>; «անակնկալ», «անակնկալ նույնիսկ զինվորական բարձր իշխանություն համար» (Գարեգին արք. Հովսեփյանց)<sup>26</sup> և այլն, մինչդեռ, ըստ մեզ, այդ խայտառակ անկումը միանգամայն բնական, տրամաբանական ու օրինաչափ էր, և իսկական անակնկալն այն կլիներ, եթե Կարսը թշնամու ձեռքը չանցներ:

Քննարկելով Կարսի անկման և դրան հաջորդած՝ ՀՀ կործանման պատճառները, կենտրոնանալու ենք առավելաբար գաղափարական, զուտ ռազմական, ռազմահոգեբանական ու բարոյահոգեբանական բնույթի պատճառների վրա, թեև երբեմն անդրադառնալու ենք այլ բնույթի պատճառների ևս, որովհետև բոլոր գործոններն օրգանապես միահյուսված են միմյանց: Պատճառների բնույթի մեր դասակարգումը պայմանական է. օրինակ՝ որոշ զուտ ռազմական սխալներ իրենց խորքում ունեն գաղափարական, ռազմահոգեբանական և/կամ բարոյահոգեբանական նախապատճառ(ներ) և ընդհակառակը:

#### Ա. Կարսի անկման և ՀՀ բանակի քայքայման գաղափարական պատճառները

Մեր համոզմամբ, ամենաորոշիչն ու առաջնայինն են գաղափարական և ոգեկան ոլորտներով պայմանավորված պատճառները: Դրանց բացակայությունից կամ թուլությունից են ածանցվում մյուս բոլոր պատճառները:

Ա. 1. Բանակի հրամկազմի ապագային-հակագային նկարագիրը և նրա մոտ հայկական պետականության գաղափարի թուլությունը, հաճախ էլ՝ հիմնովին բացակայությունը

ՀՀ բանակի բարձրաստիճան սպայական կազմում (գեներալներ, գնդապետներ և փոխգնդապետներ) զգալի տոկոս էին կազմում ցարա-

<sup>25</sup> ԿԱՊ, «Մարտկոց», 1932 թ., 29 հոկտեմբերի, էջ 1:

<sup>26</sup> «Ոգուն շապավիհներու արդյունքը», էջ 41:

կան բանակի ոչ հայազգի սպաները (մեծ մասամբ՝ ազգությամբ ռուս)՝ Զինգելիչ, Երուսաղիմսկի, Օւլուվսկի, Նեստերովսկի, Մեդվեդև, Կորոլկով, Շենուր, Գրոոս, Բաբաջանով և այլն:

Հայազգի բարձրաստիճան հրամանատարների ջախջախիչ մեծամասնությունը նույնպես օտար էր իր իսկ հայրենիքում: Նրանք «ոչ միայն անձանոթ էին հայ լեզվին ու իրականությունը, այլև՝ հայ գորքին»<sup>27</sup>, շունեին հոգեբանական նույնացում իրենց ազգի ու նրա պատմամշակութային ժառանգության (ներառյալ հազարամյակների ավանդույթներ ունեցող հայկական ռազմարվեստի) հետ, հետևաբար և չէին կարող ունենալ ազգային արժանապատվության զգացում, ինչպես և ազգի առաջ պատասխանատվության գիտակցություն<sup>28</sup>: Չունենալով հայրենի հողի հետ հոգեբանական խոր նույնացում, նրանց համար այդ հողի պահպանումը կամ կորուստը չէր կարող որպես անձնական պատվի հարց կամ ողբերգություն ընկալվել: Նրանց մոտ հայ ազգի հետ իրենց անձի առնչություններն սահմանափակվում էին իրենց ազգային ծագման մասին հիշողությամբ և ոչ ավելին: Նրանց մոտ չէր նկատվում նույնիսկ «էթնիկական երկատվածություն» երևույթ<sup>29</sup>: Նրանցից գեներալ Նազարբեգյանն ընդամենը մի քանի բառ գիտեր թիֆլիսի հայոց բարբառից, իսկ գեներալ Փիրովյանը՝ Արցախի բարբառից: Մյուս հայազգիների մեծագույն մասը մեկ բառ իսկ հայերեն չգիտեր և ճիգ էլ չէր անում սովորելու: Ռուսական դպրոցներում սովորած սպաները հայ էին «անունով միայն, մեծ մասը ցարական ռեժիմի մարդիկ էին, անտեղյակ՝ մեր կյանքին, անգիտակ՝ մեր լեզվին: Շատերը լավ հայեր էին, բայց ոչ հայրենասերներ»<sup>30</sup>: Մի մասը ... պարզ վարձկան էր, օտար՝ մեր ձգտումներին, մեր ժողովրդի

<sup>27</sup> Վահե Արծրունի (բուն անունով՝ Մելիսեթ Մուրադյան), «Հայ-տաճկական պատերազմը – Հայ սպայությունը – Շատախ», Երևան, 2002, էջ 62:

<sup>28</sup> Տես Ալբերտ Նալչաջյան, «էթնիկական հոգեբանություն», Երևան, 2001, էջ 61-62:

<sup>29</sup> Այսինքն՝ «նույն անձի մեջ երկու էթնիկական ես-կոնցեպցիաների գոյակցությունը» (նույնը, էջ 460):

<sup>30</sup> Հիմնովին համաձայն չենք այսպիսի գնահատականի հետ. ոչ հայրենասեր, ազգային լեզուն արհամարհող հայազգի արարածը չի կարող հայ կոչվել:

կարիքներին: ... Կառավարությունը չկարողացավ վերակազմել մեր գորքը ազգային հիմունքներով»<sup>31</sup>: Բարձրաստիճան «հրամանատարներից շատերը երազում էին ռուսական զորքի մուտքը Հայաստան և դենիկինյան օրերին բարձրաձայն մեր բանակը համարում էին մի գորամաս ռուսական կամավորական բանակի»<sup>32</sup>: Նրանք «անկախ Հայաստանը համարում էին ժամանակավոր մի երևույթ, որ պիտի չքանար ռուսական ազդեցության տակ»<sup>33</sup>: Անհնար է առանց արգահատանքի կարգալ Կարսի նահանգապետ Ստեփան Դորդանյանի արձանագրած հետևյալ տողերը. «Արհամարհալից և հեզորեն, այդ գեներալները և գեղապետները ծաղրում էին «հայկական սուվերենիտետը», դրվատում էին ռուս պետական անցուղարձը, հայ մինիստրներին «խմբապետներ» անվանում և կառավարության պահանջը բանակի ազգայնացման մասին զավեշտ[.] զառանցանք համարելով, այդ առիթով ռուսերեն էին սրախոսում... Բաժակաճառերը վերջանում էին ռուսերեն «ուռայով», ուր բոլորի հայացքը դառնում էր դեպի հյուսիս»<sup>34</sup>:

<sup>31</sup> Արտաշես Բաբայան. «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 67-68: Բարձրաստիճան սպայության ապագգային դիմագծի, վարձկանի հոգեբանության և նրա ու շարքային զինվորության միջև խորը անդունդի մասին տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 1, թթ. 84, 159; մաս 2, թթ. 197, 235-236, 252, 255, 284; նույնը, գ. 18, թ. 66; գ. 16, թ. 47:

<sup>32</sup> Արտաշես Բաբայան. «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 67: Նույնը հաստատում է նաև Բյուրո-կառավարությունում ներքին գործերի և ռազմական նախարար, երկրի փաստական ղեկատար Ռուբեն Տեր-Մինայանը (Ռուբեն, «Հայ հեղափոխականի մը հիշատակները» հ. է, Լոս Անջելոս, 1952, էջ 214. մեջբերված է՝ Արարատ Հակոբյան, «1920 թ. թուրք-հայկական պատերազմի պատմության փորձն ու դասերը», էջ 28): Այս խայտառակ խոստովանությունից հետո կարելի՞ է արդյոք Հայաստանի առաջին հանրապետությունը անկախ պետություն համարել...

<sup>33</sup> Արտաշես Բաբայան. «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 68: Տե՛ս նաև Անանուն, «Ազատ, անկախ և միացյալ Հայաստանի վերջին օրերը», էջ 40: ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թ. 403; գ. 18, թ. 60:

<sup>34</sup> ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թ. 400:

Բարձրաստիճան հրամանատարությունը մի աշխարհ էր, իսկ զինվորությունը՝ ամբողջովին մեկ այլ աշխարհ, «հայկական քաղաքական միտքը և զինվորական դասը անջատ էություններ էին...»<sup>35</sup>: Հայրենասիրական ջիղ, լրջություն, բանիմացություն և ռազմական պատվախնդրություն ինչ-որ չափով ունեցել են միայն գեներալ Սիլիկյանը (թեև նա էլ հայերեն չգիտեր<sup>36</sup>) և Հայոց բանակի առաջին գնդի երբեմնի հրամանատար գնդապետ Հարությունյանը: Այդուհանդերձ, Սիլիկյանը «ճակատագրական այս պատերազմում... իրեն լավ կողմերով չգրսևորեց»<sup>37</sup>:

Ձինհրամանատարների ապագային-հակագային և հակապետական նկարագիրը գրսևորվել է նույնիսկ թուրքական գերություն մեջ: Ըստ Արտ. Բաբայանի վկայության, «Կարսում գերություն մեջ գտնվող ռուսահայ սպաների մեծ մասն ուրախ էր, որ Հայաստանում խորհրդային իշխանություն էր հաստատվել» և «միայն երեք-չորս հոգով էինք հոգով-սրտով տանջվում մեր երկրի կորուստով: Մյուսները դեն նետեցին ռուսագիրները և սկսեցին օգտագործել «ընկեր» բառը»<sup>38</sup>:

Բոլոր հուշագրողները շեշտում են այն միտքը, որ ՀՀ-ն թեև ունեցավ զինվորություն և զինվորական հրամանատարություն, բայց չկր-

<sup>35</sup> ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թ. 11, էջ 110: Օտար և օտարացած հայագրի բարձրաստիճան հրամանատարների մեջ պետությունը իր նվիրվածությամբ առանձնացել է ... ռուս նեստերովսկին. նա «տարօրինակորեն կապված էր Հայաստանին», որն ընդունել էր «որպես իր նոր ու հարազատ հայրենիքը»: Ասողներ էլ կային, որ քաջ համարվող շորրորդ գնդի «իսկական փառքն ինք՝ փոխգնդապետ նեստերովսկին էր» (Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 60):

<sup>36</sup> ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թթ. 362, 393: Արժե նշել, որ Սիլիկյանն ազգությունամբ (հայացած) ուղի էր:

<sup>37</sup> Աբարաա Հակոբյան, «1920 թ. թուրք-հայկական պատերազմի պատմության փորձն ու դասերը», էջ 19:

<sup>38</sup> Կարիճ Սարգսյան, «Հայ-վրացական հարաբերությունները 1918-1921 թթ.», Երևան, 2002, էջ 176:

ցավ ստեղծել ազգային բանակ<sup>39</sup>: Ուստի, «նա, բնականաբար պետք է պարտվեր»<sup>40</sup>:

## Ա. 2. Բանակում տիրող լեզվական վիճակը և օտարամոլության երևույթները

Ազգային լեզուն և ազգային ինքնագիտակցությունն անխզելիորեն փոխկապակցված երևույթներ են<sup>41</sup>: Իսկ ինչպիսի՞ն էր վիճակը ՀՀ բանակում: Հրամանատարները հայ զինվորների հետ խոսում էին... Թարգմանչի միջոցով: Ուշագրավ է այն փաստը, որ Կարսի անկումից մի քանի օր առաջ ժամանելով բերդաքաղաք, գերագույն հրամանատար Նազարբեգյանը ցանկացել է դիմել զորքին՝ հայերենով, բայց հազիվ կարողացել է արտասանել «Կեցցե՛ Հայաստան», այն էլ՝ «մեր ականջին օտար և խորթ առողջանությունը»<sup>42</sup>:

Մեր համոզումով, հայոց լեզվի նկատմամբ անարգ մոտեցումը էական դեր է կատարել Կարսի անկման և առհասարակ հայկական առաջին հանրապետության ծանր և անփառունակ պարտության ու վերացման հարցում:

Այդուհանդերձ, ՀՀ ղեկավարությունը համապատասխան լուրջ միջոցների չգիմեց՝ այս իրողությունը հիմնովին փոխելու ուղղությամբ: Ա-

<sup>39</sup> Այս մասին տես, օրինակ, ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թ. 11, էջ 108: Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 57:

<sup>40</sup> ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 9, թթ. 1-2: Ոգով, հոգեբանությունը և քաղաքական իդեալներով ազգային բանակի չգոյությունը հաստատելով հանդերձ, պատմաբան Ա. Հակոբյանը ավելի մեղմ է արտահայտվում, հայտնելով, թե «նման բանակից հազիվ թե հնարավոր էր շոշափելի հաջողություններ ակնկալել» (Արարատ Հակոբյան, «1920 թ. Թուրք-հայկական պատերազմի պատմության փորձն ու դասերը», էջ 28):

<sup>41</sup> Ալլեերտ Նալչաջյան, «Էթնիկական հոգեբանություն», էջ 61-62:

<sup>42</sup> ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թթ. 371-373: Հետաքրքրական է, որ ՀՀ բանակի անհաջողությունների շարանի օրերում, Նազարբեգյանը «թողել էր ոռու պաշտոնազգեստը և պճնվել էր հայկական զինվորական տարագով: ... Այդ օրերում նա հագնում էր իր փառավոր անցյալի պատվալից գլխավոր շքանշանները» (ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 9, թ. 3):

վելին, նրա ձեռք առած մի քանի միջոցառումները ոչ միայն չգործադրվեցին, այլև, դրանով իսկ, է՛լ ավելի վարկաբեկեցին պետականության գաղափարը: Այդ միջոցառումներից էր ՀՀ կառավարության՝ 1920 թ. մայիսի 30-ին հաստատած «Պետական լեզուն չիմացող պաշտոնյաների լիկվիդացիայի մասին» օրենքը, որը այդպես էլ մնաց թղթի վրա<sup>43</sup>:

Օտարազգի և հայանուն, բայց ազգուրաց գեներալներին ու գնդապետներին հովանավորում էր զորաց նախարար Ռուբեն Տեր-Մինասյանը<sup>44</sup>:

Ինչպես վերևում նշեցինք, բարձրաստիճան գինվորականներն աչքի չէին ընկնում նաև անկախ պետականության նկատմամբ նվազագույն հարգանքով, իրենց ավելի վատ դրսևորելով, քան վարձկանները: Բավարարվենք մի քանի՝ առավել արտառոց օրինակներով<sup>45</sup>.

Գնդապետ Նիկոլայ Դորդանյանը «մեկ բառ հայերեն չէր գիտեր», իսկ Սմբատը և զինվորները, որոնց անմիջական հրամանատարն էր նա մինչև փոխարինվելը Սեպուհով, «բացի հայերենե ուրիշ որևէ լեզու չէին գիտեր»<sup>46</sup>:

ՀՀ առաջին ռազմական նախարար (1918 թ. հունիս – 1919 թ. մարտ) և բանակի գլխավոր շտաբի պետ գեներալ Հովհաննես Հախվերդյանը «սրտով փարած չէր Հայաստանի դատին»<sup>47</sup>, «նա չէր հավատում հայկական իշխանությանը, հայոց հանրապետությունը նա պարապ ժա-

<sup>43</sup> Այս օրենքը հայտարարելով «ժամանակավրեպ», պատմաբան Վանիկ Բաբաջանյանը դա համարում է «ավելի շատ արդյունք Բյուրո-կառավարության ոչ ռուսական հակումների»: տե՛ս Վանիկ Բաբաջանյան, «Միջկուսակցական հարաբերությունները Հայաստանի Հանրապետությունում բոլշևիկյան հակապետական ելույթների և դրանց հետևանքների հաղթահարման շրջանում (1920 թ. մայիս-օգոստոս)», Երևան, 2006, էջ 15: Մեր համոզմամբ, երկու տարի առաջ անկախություն հռչակած որևէ պետություն մեջ նման օրենքի ընդունումը ոչ միայն չի կարող «ժամանակավրեպ» լինել, այլ՝ պատմական անհրաժեշտություն է:

<sup>44</sup> ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թ. 341:

<sup>45</sup> Այդ օրինակները այնքան շատ են, որ կարելի է դրանցով ... հատորներ կազմել:

<sup>46</sup> ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թ. 4, էջ 83:

<sup>47</sup> Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 382:

մանակի զբաղմունք էր համարում»<sup>48</sup>: Մի առիթով, Կովկասյան ռազմաճակատի հրամանատարներից Չեռնոզուբովը նրա մասին ասել էր, թե «այս հիանալի մարդու ամենամեծ առաքինությունն իր հայ շլինելն է»<sup>49</sup>:

Նույն «առավելությունն» ուներ ՀՀ բանակի գլխավոր հրամանատարը՝ գեներալ Թովմաս Նազարբեգյանը: Հայկական կորպուսում, այնուհետև ՀՀ բանակում նրա կողքին ծառայած, ցարական բանակի սպա, ծագումով էլզասլոթարինգիացի գնդապետ Ալեքսանդր Շնեուրը, նրա մասին ասում է. «Ծագումով նա հայ էր, սակայն իրեն ռուս էր համարում և հայերեն չէր խոսում»<sup>50</sup>: Ահա թե ինչպիսի ազգային ու պետական մտածողության տեր է եղել անկախ Հայաստանի Հանրապետության առաջին զինվորական դեմքը՝ «սպարապետը», ում վստահվել էր հայոց հայրենիքի պաշտպանության հույժ պատասխանատու գործը...

Չափազանց բնութագրական է հետևյալ դեպքը. 1919 թ. ամառը ՀՀ խորհրդարանի շենքի մի սենյակից լսվում է ռուսերեն մի երգ: Խորհրդարանի փոխնախագահը և ուրիշներ շտապում են այնտեղ ստուգելու, թե ի՞նչ է կատարվում: Պարզվում է, որ ՀՀ բանակի բարձրաստիճան սպաները երգում էին ցարական Ռուսաստանի «Բոժե, ցարյա խրանի» հիմներգը՝ ՀՀ ղեկավարությունից առաջ իմացած լինելով, որ իրենց կուռքը՝ այդ օրը Երևան հասնող գնդապետ Զինգելիչը նշանակվել է Դենիկինի դիվանագիտական ներկայացուցիչ ՀՀ-ում... «Ի զուր Տիգրանյանը<sup>51</sup> սաստեց և խորհրդարանի անունով սպառնաց հայ սպաներուն: Ընդհակառակն, քանի ան ավելի լուրջ բնույթ տվավ իր սպառնալիքին, սպաներն ավելի ոգևորված երգեցին ցարական պաշտոնական երգը» և «ի-

<sup>48</sup> ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թ. 406:

<sup>49</sup> Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 382: Գեներալ Հախվերդյանի ապագգայնության մասին հավելյալ տե՛ս ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 12, թ. 80:

<sup>50</sup> Անդրե Ամուրյան, «Գնդապետ Ալեքսանդր Շնեուրի հուշերը», Ֆրեզնո, 1967, էջ 39: Մեր կարծիքով, է՛լ ավելի դատապարտելի է, որ չէր էլ ուզում սովորել նույնիսկ ավելի քան 2 տարի ծառայելով մի պետության բանակում, որի պետական միակ լեզուն հայերենն էր:

<sup>51</sup> Սիրական Տիգրանյան՝ այդ օրերին ՀՀ խորհրդարանի փոխնախագահ:

րենց տուները ցրվեցան անարգել»<sup>52</sup>: Իհարկե, այդ «ազգուրաց հայ սպաներ»-ից<sup>53</sup> ոչ ոք պատասխանատվության չկանչվեց:

Ստրկամտությունն ու ստորաքարշությունը հասել էր այնպիսի ահռելի չափերի, որ «անգամ մեր հասարակական մեծարժեք դեմքերեն մեկը»<sup>54</sup> ուրիշներու ներկայության կրկնել էր. «Երանի թե Ռուսաստանը 1914-ի սահմանների վրա լիներ, թող ես էլ նրա բանտումը լինեի»<sup>55</sup>:

Ազգային-պետական մտածողությունը թույլ էր նաև քաղաքացիական ծառայողների մեծ մասի մոտ: Արտառոց է այն փաստը, որ պետության առաջին դեմքը՝ վարչապետ Ալեքսանդր Խատիսյանը, 1919 թ. աշնանը ՀՀ հյուսիս-արևելյան շրջաններ իր կատարած այցի ընթացքում Արդահանում այցելում է մոտակա վրացական գորամասը<sup>56</sup> և այնտեղ ելույթ ունենում ... վրացերենով՝ խոսելով հայ-վրացական բարեկամության մասին և «կեցցե» գոռալով ի պատիվ վրաց հանրապետության<sup>57</sup>:

### Ա. 3. Հուլյան օտարների վրա դետելը

Մինչ Թուրքիան իր հուլյան հիմնականում դրել էր իր սեփական ուժերի վրա, ՀՀ ղեկավարությունը, դաշնակիցներին վստահելով, թերագնահատում էր իր սեփական ռազմուժի կատարելիք գործը և հուլյան դրել էր դիվանագիտության վրա<sup>58</sup>: Հայության, մասնավորաբար ՀՀ քա-

<sup>52</sup> Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 370-371: Յարական հիմներգը ՀՀ բանակի բարձրաստիճան հրամանատարների ամենասիրած երգերից լինելը և նրանց մոտ «շատ բարձր տրամադրություն» ստեղծելը հաստատում է նաև Ստ. Արզանյանը (ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թթ. 399, 401-402):

<sup>53</sup> Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 371:

<sup>54</sup> Հուլյան գրողը չի տալիս նրա անունը:

<sup>55</sup> Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 102:

<sup>56</sup> Ալեքսանդր Խատիսյան, «Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը», «Հայրենիք», 1925, թիվ 6, էջ 52:

<sup>57</sup> ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 2, թ. 207: Հիշեցնենք, որ այդ խոսքերն ասվում էին, երբ մեկ տարի էլ չէր անցել հայ-վրացական պատերազմից:

<sup>58</sup> ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թ. 4, էջ 62:

դաքսական ու զինվորական ղեկավարություն մեծ մասն իր փրկությունն իրենից դուրս էր տեսնում<sup>59</sup>: Նրանց մի մասը սպասում էր դաշնակիցների քաղաքական ու ռազմական օգնությունը, իսկ մյուս մասն էլ արդեն էն գլխից երազում էր ռուսական իշխանություն վերադարձը:

Թուրքական հարձակումն սկսվելուց 20 օր հետո իսկ, ՀՀ կառավարությունն իր հույսը դնում էր ոչ թե սեփական ուժերի, այլ՝ դաշնակիցների վրա: Խաղաղության խորհրդաժողովին ՀՀ պատվիրակության նախագահ Ավետիս Ահարոնյանը ՀՀ անունից 1920 թ. հոկտեմբերի 6-ին հուշագիր է ներկայացնում դաշնակից ուժերի գերագույն հրամանատար մարշալ Ֆերդինանդ Ֆոշին, ուր ասվում է, թե «ՀՀ կառավարությունը գտնում է, որ թուրք-բոլշևիկյան պլանը ոչնչացնելու ամենից ազդու միջոցը դաշնակիցների կողմից Տրապիզոնի գրավումն է»<sup>60</sup>: ՀՀ կառավարությունը, որպես օժանդակ միջոց, ցանկություն էր հայտնում հունական զորքի առաջխաղացումն արևմտյան ռազմաճակատում<sup>61</sup>: Ֆոշի անունից ՀՀ դիմումին պատասխանում է դաշնակից միացյալ զորքերի շտաբի պետ, գեներալ Մաքսիմ Վեյզանը՝ իր պատասխանը հղելով

<sup>59</sup> Հայ ժողովրդին հույսը միայն սեփական ուժերի վրա դնելու հորդոր-մարտակոչ է Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցի կոնդակը: Հայոց հայրապետը հայտարարում էր, թե «մենք պետք է պաշտպանենք մեր մայրենիքը [այսպես է բնագրում՝ Գ. Յ.], օտարը մեզ չօգնեց և չի՛ օգնելու»։ Գևորգ Ե-ի կոչը տես «Էջմիածին» շաբաթաթերթ, Վաղարշապատ, թիվ 12, 1920 թ., 4 հոկտեմբերի, էջ 177-179:

<sup>60</sup> Armenia – Political and Ethnic Boundaries 1878-1948, p. 767.

<sup>61</sup> Նույն տեղում: Հմմտ. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 400 (փաստաթղթի լրիվ շարադրանքը՝ տես «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ. (Քաղաքական պատմություն) - փաստաթղթերի և նյութերի ժողովածու», փաստաթուղթ թ. 242, էջ 290): Մինչ Ավետիս Ահարոնյանը կներկայացներ հիշյալ դիմումը, ՀՅԴ «Յառաջ» օրաթերթ-պաշտոնաթերթի նախորդ օրվա՝ հոկտեմբերի 5-ի համարում լույս էր տեսել Փարիզից նոր վերադարձած Ալ. Խատիսյանի հարցազրույցը, որտեղ նա հստակորեն ասում է. «Զինվոր անոնք (դաշնակիցները՝ Գ. Յ.) մեզի չի տրամադրեցին, և բացեիբաց հայտնեցին, թե Հայաստան պետք է իր հույսը դնե իր բանակին վրա» («Յառաջ», Երևան, 1920 թ., 5 հոկտեմբերի, էջ 1. հաստագրումը մերն է՝ Գ. Յ.):

խորհրդաժողովի նախագահին: Նա հայտնում է, որ հայկական ցանկությունը «որքանով էլ սկզբունքով արդարանալի է», սակայն նրա բավարարումը «պահանջում է այնպիսի ուժեր, որոնք Անտանտի արդի հնարավորություններից վեր են»<sup>62</sup>: Այսքանից հետո էլ ՀՀ ղեկավարությունը համառորեն շարունակում էր նույն հանկերգը երգել: ՀՀ արտաքին գործերի նախարարությունը Վրաստանում ՀՀ լիազոր ներկայացուցչին հոկտեմբերի 29-ին հղած հեռագրով հրահանգում էր նրան. «Խնդրեցե՛ք դաշնակիցներից շտապ և ռեալ օգնություն՝ դեսանտ Տրապիզոնի»<sup>63</sup> շրջանում, ռազմամթերքի մատակարարում և այլն»<sup>64</sup>: Հայ դիվանագետը, ստանալով Կարսի անկման մասին հեռագիրը, տեսնվում է Անդրկովկասում Մեծ Բրիտանիայի բարձր կոմիսար Ստոկսի հետ և նորից բարձրացնում դաշնակիցների օժանդակության հարցը: Բրիտանացի գինվորականը անկեղծորեն խոստովանում է, որ «ըստ երևույթին, Անտանտը կա՛մ չի կարող, կա՛մ չի ցանկանում օգնել»<sup>65</sup>: Ստոկսը նախապես

<sup>62</sup> Armenia – Political and Ethnic Boundaries 1878-1948, p. 769.

<sup>63</sup> Բնագրում՝ «Տրաբանի», որը սխալի կամ շփոթի հետևանք է:

<sup>64</sup> Փաստաթուղթը՝ ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 19, թթ. 34-36: Արտատպվում է «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ. (Քաղաքական պատմություն) - փաստաթղթերի և նյութերի ժողովածուից», փաստաթուղթ թ. 276, էջ 322: Մինչև դաշնակիցներին դիմելը և նախքան հայ-թուրքական պատերազմի բռնկումը, ՀՀ կառավարությունը Տրապիզոնում դեսանտ իջեցնելու հարցով շոշափել է նաև Հարավային Ռուսաստանում կամավորական բանակի հրամանատար Վրանգելի տրամադրությունը (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 400, փաստաթղթի լրիվ շարադրանքը՝ տե՛ս «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ. (Քաղաքական պատմություն) - փաստաթղթերի և նյութերի ժողովածու», փաստաթուղթ թ. 242, էջ 290): Ի դեպ, 1920 թ. հունիսին ՀՀ բանակի Օլթի մուտքը վերջնական նպատակ ուներ ավ դուրս գալ Տրապիզոնի շրջանում և Սև ծովի վրա հայոց ի նպաստ ելքի դրույթը ամրագրել տալ Օսմանյան կայսրության հետ շուտով ստորագրվելիք խաղաղության դաշնագրում:

<sup>65</sup> Փաստաթուղթը՝ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 72: Հրապարակվել է «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսում, 1971, փաստաթուղթ թ. 7, էջ 37: Ռուսերեն բնա-

էլ՝ Կարսի ուղղութիւնամբ թուրքական հարձակման օրերին Երևան և Կարս իր այցելութեան ժամանակ, հստակորեն ասել էր, թե «ոչ մի օգնութեան հուշա չպիտի դնենք դաշնակիցների վրա»<sup>66</sup>: Այդուհանդերձ, Եվրոպայի վրա հուշան այնքան մեծ էր, «որ Կարսում պարտուկը կամ հաղթելը չէր համարվում ճակատագրական Հայկական հարցի համար»<sup>67</sup>:

Մինչդեռ իրողութիւնն այն էր, որ պատմական այդ ժամանակաշրջանում «հայութեան մեծ մասի աչքերը հառած էին դեպի հյուսիս. փրկութիւնը Ռուսաստանից էր սպասվում»<sup>68</sup>:

### Բ. Կարսի անկման ռազմական պատճառները

Կարո Սասունին կատարում է հետևյալ հիանալի համեմատութիւնը. «Բանակը կնմանի լարված մեքենայի մը, որու կանոնավոր շարժման ի տես մարդ կհիանա և ակնապիշ կդիտես: Բայց երբ մեկ պտուտակը այդ հսկա մեքենային ձախողի ու դուրս գա, մեքենան կանգ կառնէ, կամ անոր մասերը իրար սեղմելով՝ կջրհալսվին»<sup>69</sup>: Համարյա նույնը գրում է նաև Ստ. Դորդանյանը. «Կառավարութիւնը պետական կորստ (ընդգծումը հեղինակինն է՝ Գ. Յ.) չուներ, ... ուր բարդ մեքենայի բոլոր մասնիկները մեկը մյուսին լրացնելով, և մեկը առանց մյուսի ոչինչ, կարող են միայն ստեղծել կառավարչա-

գիրը տես՝ «Հայաստանի Հանրապետութիւնը 1918-1920թթ. (Քաղաքական պատմութիւն) - փաստաթղթերի և նյութերի ժողովածու», փաստաթուղթ թ. 281, էջ 327:

<sup>66</sup> Արտաշես Բաբայան. «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 67:

<sup>67</sup> Հայկ Ասատրյան, «Վերանորոգչական խորհրդածութիւններ», «Ռազմիկ» կիսաշաբաթաթերթ, Սոֆիա, թիվ 113-120, 1938-1939: Արտատպվել է հետևյալ գրքուկում՝ Հայկ Ասատրյան, «Վերանորոգչական շարժում (խորհրդածութիւններ)», «Ազգայնական ակումբի» հրատարակութիւն, Երևան, 2002, էջ 13: Զուգահեռ տանելով այսօրվա ՀՀ-ի հետ, նկատենք, որ ՀՀ բարձրաստիճան պաշտոնատարները հաճախ հայտարարում են, որ Հայոց արևելից կողմանց ազատագրված տարածքների հանձնումն Ադրբեջանին՝ չի կարող ճակատագրական լինել բուն ՀՀ-ի համար...

<sup>68</sup> Սիմոն Վրացյան, «Հայաստանի Հանրապետութիւն», Երևան, 1993, էջ 521:

<sup>69</sup> ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թ. 6, էջ 85:

կան ապարատի ներդաշնակ ընթացքը»<sup>70</sup>: Պետական վարչամեքենայի բնականոն և արդյունավետ աշխատանքի համար կարևոր են ոչ միայն բանակի ռազմական, այլև նրա ու հասարակության բարոյահոգեբանական հատկանիշների բարձր մակարդակների առկայությունը:

Իսկ ինչպիսի՞ն էին այդ որակները Հայաստանի առաջին հանրապետությունում ընդհանրապես և բանակում մասնավորապես: Դրանք քննարկելու ենք հաջորդ էջերում:

## Բ. 1. Չուտ ռազմական պատճառներ և սխալներ

### Բ. 1. 1. Ռազմական անպատրաստությունը

Պատերազմին անպատրաստ լինելու փաստը հաստատում են շատ հուշագրողներ, որոնց շարքում՝ Սիմոն Վրացյանն<sup>71</sup> ու Կարո Սասունին<sup>72</sup>: ՀՀ ղեկավարությունը կարծում էր, որ բանակը գեներ-գլխամթերքով, սննդով, հանդերձանքով, վառելանյութով և փողով ապահովելը մարտունակ բանակ ունենալ է նշանակում, հիմնովին անտեսելով բարոյահոգեբանական գործոնը, որը Հայկական բանակում բավականին ցածր մակարդակում էր: 1918 թ. մայիսին հերոսական դիմադրությամբ թուրքերին Ախուրյանի ձախ ափը թափած հայկական բանակն ու ընդհանուր վերցրած՝ ՀՀ հայ հասարակությունն ապրում էին պարտվողական հոգեբանությամբ: Պետական բյուջեի ծախսային մասի շուրջ 85

<sup>70</sup> ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 18, թ. 10:

<sup>71</sup> Ըստ Ս. Վրացյանի՝ Հայաստանը «բոլորովին պատրաստ չէր այդ պատերազմին» (Սիմոն Վրացյան, «Հայաստանի Հանրապետություն», Երևան, 1993, էջ 504. հաստատվում է մերն է,- Գ. 3.):

<sup>72</sup> Ըստ Կ. Սասունու՝ «Հայաստանի կառավարությունը ... անպատրաստ էր թուրքերու կողմե բացված պատերազմի մը: ... Ոչ ոք մտքեն կանց[ը]ներ, թե քաղաքականապես ճգմված Տաճկաստանը Հայաստանի դեմ պատերազմական գործողություններու նախաձեռնությունը իր վրա պիտի վերցնեք» (ՀԹՊ, «Հայրենիք» 1926, թ. 5, էջ 75):

տոկոսը հատկացվում էր բանակի կարիքներին<sup>73</sup>: «Սպաներն ու զինվորական պաշտոնյաները ստանում էին լավագույն վարձատրությունը: ... Կառավարությունն աշխատում էր ըստ ամենայնի բավարարել զորքի պահանջները, և այնուհետև միայն մտածել ժողովրդի այլ կարիքների մասին»<sup>74</sup>: Բայց զինվորները մնում էին մերկ, քաղցած և անխնամ<sup>75</sup>:

Պատերազմին անպատրաստ լինելու տխուր փաստը վերաբերում էր կյանքի առհասարակ բոլոր ոլորտներին (տնտեսական, քաղաքական, դիվանագիտական և այլն), մասնավորաբար, բանակի ու հասարակության՝ պատերազմին հոգեբանական նախապատրաստությանը: ՀՀ պարբերական մամուլը հեղեղված էր թուրքերի ու նրանց արևելյան ցեղակիցների հետ բարիդրացիության և նույնիսկ բարեկամության մասին հրապարակումներով՝ բխացնելով թշնամու ճանաչման ժողովրդական գանգվածների և զինվորների ընկալումը:

#### Բ. 1. 2. Ռազմական պլանի և ֆարտեզների չգոյությունը

Հուշագրողների մեծ մասի վկայությամբ, չկար ռազմական ընդհանուր հատակագիծ-պլան, որով առաջնորդվեր հայկական բանակը հարձակողական թե պաշտպանողական մարտեր մղելիս: Բացակայում էր ներդաշնակությունը զորքի տարբեր միավորների գործողությունների միջև:

Անփութություն է դրսևորվել նաև ռազմական քարտեզների հարցում: Դրանք պետք է պարբերաբար փոփոխվեին՝ արտահայտելով վերջին պահի ռազմական իրադրությունը: Մինչդեռ ոչ միայն այդպիսի օպերատիվություն չի եղել, այլև կամ ռազմական քարտեզներ չեն եղել նույնիսկ Կարսի ամրությունների զորահրամանատար Փիրումյանի շտաբում, կամ էլ դրանցից հասկացող սպաներ: Այդպիսի երկու օրինակ բերում է Ստ. Դորդանյանը: Խմբապետներից Փիլոսը Փիրումյանի շտաբ բերում է տեղեկություններ ճակատից,

<sup>73</sup> Արտաշես Բաբայան. «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 67; ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 2, թթ. 194, 253; նույնը, գ. 18, թ. 39:

<sup>74</sup> Արտաշես Բաբայան. «Կարսի անկումը», էջ 67:

<sup>75</sup> ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 18, թ. 39:

«բայց ավելի քան կես ժամ պետք էր քարտեզ գտնելու համար»<sup>76</sup>: Ռազմական պլանի և կապի բացակայության պատճառով, գնդապետ Իշխանյանի հրամանատարած 7-րդ գունդը Կարսի անկման օրը գտնվում էր Կարսից արևելք, մի քանի կիլոմետր հեռավորության վրա և չէր իմանում ի՞նչ անել<sup>77</sup>, մինչդեռ նրան ռազմական ակտիվ գործողություններին ընդգրկելը կարող էր բեկումնային լինել:

Փիրումյանի շտաբը «փայլել է» անփութության այլ փաստերով: Ծաղրելով նրան և շտաբ բառը չակերտավորելով, նահանգապետ Ղորղանյանը գրում է, որ դա «նման էր ավելի մի անկյալանոցի և ոչ երբեք ինքնակալ հրամանատարական կայանի»<sup>78</sup>:

Այդուհանդերձ, Ղորղանյանը, հակասելով ինքն իրեն, վկայում է, թե եղել է ռազմական պլան, որը «կազմված էր շատ իմաստալից և մեծ ռազմական արժեք ուներ»: Դա նախատեսում էր, որ Դրոյի և գնդապետ Հասան-Փաշայանի զորամասերը, ռազմաճակատի համապատասխանաբար ձախ (Արաքսի հովիտ) ու աջ (Ախուրյան) կողմերից պետք է շրջապատեն թուրքական զորքը թիկունքից: «Եվ եթե հայ սպայությունը համակված լիներ իր պարտավորությունների սրբությանը, Կարաբեքիր իր ամբողջ բանակով մեր պատվավոր գերին կլիներ»<sup>79</sup>: Սակայն, այս պլանը հիմնովին ձախողվում է փոխգնդապետ Առնդախյանի ապիկարության պատճառով (տեսնել ներքևում):

Մյուս կողմից, «թյուրքաց հրամանատարը երկու բան շատ է սիրում՝ քարտեզ և հեռագրիտակ... Քարտեզի առաջ նա նստում է ժամերով, ուսումնասիրում և իր ռազմական դասավորումները անում, իսկ արշավի ժամանակ նա ձեռքից վայր չէ թողնում հեռագրիտակը...»: Հուշագրողն անմիջապես ավելացնում է՝ ծաղրական ոճով. «Ճիշտ այնպես, ինչպես որ մեր Կարսի գեներալները...»<sup>80</sup>:

<sup>76</sup> ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 12, թ. 16:

<sup>77</sup> Նույն տեղում, գ. 11, թթ. 4-7:

<sup>78</sup> Նույն տեղում, գ. 14, թթ. 21-22:

<sup>79</sup> Նույն տեղում, գ. 8, թթ. 1-2:

<sup>80</sup> Նույն տեղում, գ. 17, թ. 19:

Բ. 1. 3. Ռազմական ուժերի կենտրոնացման և խելամիտ (ուացիոնալ) օգտագործման սկզբունքի բացակայությունը կամ արհամարհումը

Հասկանալի է, որ թաթար-բոլշևիկյան հարձակումների ու ներսի մուսուլման զանգվածի խռովությունների պատճառով, բանակի մի զգալի մասը ստիպված էր գտնվել Կարսի ճակատից հեռու, մինչդեռ Կարաբեքիր ՀՀ բանակի դեմ հանել էր Արևմտյան Հայաստանի գրավյալ տարածքում գտնվող թուրքական բոլոր զորքերն՝ ընդամենը մեկ վաշտ թողնելով Կարինում: Սակայն, ՀՀ զորքերի մնացյալ հնարավորություններն էլ չգործածվեցին խելամիտ ձևով: Դրա լավագույն օրինակը Սեպուհի բրիգադայի հետ կատարվածն է: Գեներալներն ու զնդապետները, թշնամանքի հասնող ատելություն ունենալով Սեպուհի նկատմամբ, բաժան-բաժան էին թողել նրա հրամանատարած բրիգադան: Վերջինիս մեջ մտնող 7-րդ գունդը գտնվում էր Իգդիր-Սուրմալուի ճակատում, 8-րդը՝ Կարսի ճակատում (ընդ որում, վերջինիս գումարտակներն էլ տարբեր դիրքերում էին տեղակայված), բրիգադայի մեջ մտնող Սմբատի կամավորական խմբերը՝ Արդահանի շրջանում. նրանք իրարից լուր չունեին և տարբեր հրամանատարների ենթակա էին: Պատերազմի առաջին շաբաթներին Սեպուհի բրիգադան, որպես առանձին զորամիավորում, փաստորեն, գոյություն չունեւր:

Այս սկզբունքն անտեսելու մեկ այլ օրինակ էր 7-րդ գնդի հնարավորությունների չօգտագործումը, ինչպես տեսանք «Ռազմական պլանի և քարտեզների չգոյությունը» կետում:

Բ. 1. 4. Ռազմական մանևրների բացակայությունը

Հայկական բանակի հրամանատարությունից սխալներից մեկն էլ ուժերի տարանջատվածության պայմաններում հոկտեմբերի 14-ի հակահարձակումը նախաձեռնելն էր, որն ավարտվեց անհաջողությամբ, և որից հետո դասալքությունների, պարտությունների և նահանջների շղթան դարձավ արդեն անկառավարելի, և «Կարսի հանձնումը հեշտ ըմբռ-

նում դարձավ»<sup>81</sup>: Մինչդեռ, եթե Սեպուհի բրիգադայի միավորները Իգդիրից և Դիլիջանից հասած լինեին Կարսի ռազմաճակատ և դրանք օգտագործվեին Կարաբեքիրի զորքի թույլ կետերին հարվածելու համար, հայկական հակահարձակման ճակատագիրը կարող էր այլ լինել: Այդ հակահարձակումը հիմնական թիրախ ուներ ռազմաճակատի կենտրոնական հատվածը, որտեղ թուրքերի դիրքերը ամենաուժեղն էին:

Ի տարբերություն հայկական այս անհաջողությունների և բացթողումների, հմուտ զորավար Կարաբեքիրը նաև ռազմական մանևրների ու խաբեություն հիանալի վարպետ էր: Օգտվելով Կարսի հարավում Հաճի հալիլ բարձունքից մինչև Ախուրյան ձգվող մոտ 50 կիլոմետր տարածություն համարյա անպաշտպան դրությունից, ինչը ռազմական մեծ սխալ էր<sup>82</sup>, հոկտեմբերի վերջին օրերին իր ուժերի մեծ մասը մանևրով մղեց Կարսից արևելք՝ դրանով համարյա բոլոր կողմերից պաշարման տակ առնելով Կարսի հայկական զորքը և կտրելով Կարս-Ալեքսանդրապոլ խճուղին և երկաթուղագիծը: Այդ օրերին (հոկտեմբերի 27 և 28), «թշնամու գլխավոր ուժերը կորսված էին» և Կարսի հրամանատարություն այդ օրերի «զեկուցումները կարելի է որակել «փնտռու» բառով»<sup>83</sup>: Եվ միայն քաղաքի հարավակողմի բարձունքներում և Վեգինքեոյում (Կարսի արևելքում) գտնվող մի բուռ հայկական վաշտերի հերոսական դիմադրությունը փոքր-ինչ ուշացրեց թուրքական հիմնական ուժերի առաջխաղացումը, բայց արդեն շատ ուշ էր: Մինչ ակադեմիական կրթությամբ զինվորականները հարվածի սխալ տակտիկա էին ընտրել, նույնպիսի կրթություն չունեցող Սեպուհն առաջարկում էր ճիշտ այն, ինչ ընտրեց Կարաբեքիրը հոկտեմբերի վերջին օրերին: Խոսքը տանք Սեպուհի մոտ ծառայած անանուն օրագրողին, որը հոկտեմբերի 14-ին նշել է հետևյալը. «Սեպուհը դեռ սկզբից դեմ էր այդպես շուտափույթ ընդհանուր հարձակման անցնելուն, նրա կարծիքով, ճակատից եթե հարձակվելու լինենք, բնավ չենք հաջողի,

<sup>81</sup> ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թ. 6, էջ 87:

<sup>82</sup> Նույն տեղում, էջ 92:

<sup>83</sup> Նույն տեղում, թ. 7, էջ 69:

և այդպես էլ եղավ: Նա գտնում էր, որ մեր ուժեղ հարձակումները պետք է կատարվեն թևերից, մանավանդ ձախից<sup>84</sup>, որտեղ մենք անպատճառ պետք է անցնենք թշնամու թիրկունքը և այդպիսով ստիպենք նրան թուլացնել կենտրոնը և ապա հարվածել նրա կենդանի ուժերին»<sup>85</sup>: Իր հուշերում Կարաբեքիրն ասում է, որ հայերի հետ իր նախորդ բախումների ժամանակ միշտ հարձակվել է կենտրոնական հատվածից, սակայն Կարսի դեպքում նախընտրեց դա չանել, այլ՝ նախ խաբել հայոց զորքի հրամանատարներին՝ նրանց հավատացնելով նույն սցենարը որդեգրելու մեջ, և, երկրորդ, օգտվել իր ունեցած այլ առավելություններից. «Իմ այս տեղերը (Կարսի շրջանը՝ Գ. Յ.) և Կարս բերդաքաղաքին հողերը թիզ առ թիզ ճանշնալս, հայոց տկար կետերը գիտնալով, Կարսի վրա փոխանակ ճակատեն հարձակելու, արևելքեն հարձակիրս եղած է»<sup>86</sup>:

Բ. 1. 5. Տեղանքի առավելություններից օգտվելու նկատմամբ  
անփույթ մոտեցումը

Այս առնչությամբ, մարտերի մասնակից Հայ Գնդունին նշում է խրամներ փորելու, գրաված դիրքերը ամրացնելու, պաշտպանելու և դրանք անվտանգ դարձնելու նկատմամբ մտահոգության բացակայությունը: Ավելին, նա նշում է հայկական բանակում «պատասպարվելու, թշնամիեն չնկատվելու և չխուզարկվելու համար էական նշանակություն վայելող վարժությունների և բժախնդրությունների պակասն ու ամբողջական բացակայությունը»<sup>87</sup>:

<sup>84</sup> Այսինքն՝ Կարսից հարավ ընկած տարածքից:

<sup>85</sup> Անանուն, «Ազատ, անկախ և միացյալ Հայաստանի վերջին օրերը», Երևան, 1994, էջ 98-99:

<sup>86</sup> «Քյազըմ Կարաբեքիրի հուշերը Հայաստանի Հանրապետության վրա թրքական հարձակումներուն մասին», «Զարթօնք», 1966 թ., 10 օգոստոսի, էջ 2:

<sup>87</sup> ԿԱՊ, «Մարտկոց», 1932 թ., 3 նոյեմբերի, էջ 2:

Բ. 1. 6. Ռազմական հետախուզության և հակահետախուզության  
խայտառակ վիճակը

Բոլոր հուշագիրները վկայում են այս մասին՝ առհասարակ հայկական հետախուզությունն ու հակահետախուզությունը որակելով չափազանց ծանր ածականներով՝ «ողբալի», «անբավարար», «մեր ամենաթույլ կողմերեն մեկը»<sup>88</sup>, «շատ ողբալի»<sup>89</sup>, «անչափ անգույն, անչափ ողորմելի»<sup>90</sup>, հեզնական իմաստով՝ «բարձր, նուիրական հաստատություն»<sup>91</sup>, իսկ նրա Կարսի բաժանմունքը, որը ղեկավարում էր գլխապես Մեդվեդևը, «մի ծաղր էր և ոչ լուրջ հաստատություն»<sup>92</sup>: Ուղղակի ապշել կարելի է կարգալուծ հետևյալ վկայությունը. «Արդահանի և Կարսի բնիկ թուրք երեւելիներեն ոմանք ... պատերազմը չսկսած, նույնիսկ կայցեւելին սահմանագլուխը պաշտպանելու կոչված մեր գունդերու և այսպես գիտակ կպահվելին մեր բոլոր պետական-զինվորական բնույթ կրող խնդիրներուն»<sup>93</sup>:

<sup>88</sup> Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 33, 71, 284:

<sup>89</sup> ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թ. 5, էջ 75:

<sup>90</sup> ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 18, թ. 53:

<sup>91</sup> Նույն տեղում, գ. 7, մաս 2, թ. 297:

<sup>92</sup> Նույն տեղում, գ. 6, թ. 17: Տարօրինակ է, որ պատմական գիտությունների թեկնածու Վանիկ Վիրաբյանը Հայաստանի առաջին հանրապետության հետախուզությանը նվիրված իր աշխատության մեջ (Վանիկ Վիրաբյան, «Հայաստանի առաջին հանրապետության հատուկ ծառայությունները 1918-1920թթ.», Երևան, 1998) դրական երանգներով է նկարագրում այս մարմնի աշխատանքը, մինչդեռ հուշագրություններն ու փաստաթղթերը վկայում են հակառակը, անվազն՝ հետախուզական մարմինների ղեկավարության անփուլթ մոտեցման մասին: Այդուհանդերձ, Վ. Վիրաբյանը խոստովանում է, որ հայկական հատուկ ծառայություններն «ի վիճակի չեղան քիչ թե շատ շոշափելի առավելության հասնել, հենց թեկուզ թուրքական հատուկ ծառայությունների (մասնավորապես հակահետախուզության) դեմ պայքարում» (էջ 21): Շատ մեղմ է ասված... Ի՞նչ «առավելություն», տվյալ ժամանակաշրջանի համար հայկական և թուրքական հետախուզությունների միջև համեմատություն անցկացնելն իսկ ճիշտ չէ:

<sup>93</sup> ԿԱՊ, «Մարտկոց», 1932 թ., 3 նոյեմբերի, էջ 2:

Մյուս կողմից, ըստ Հայ Գնդունու՝ «Երևանը ձեռք չէր առած և չէր առներ ոչ մեկ ազգու զենք՝ թափանցելու թշնամի Թուրքիայի ծրագիրներուն և հաշիվներուն»<sup>94</sup>: Նույն աղբյուրը հայտնում է, թե հայկական ռազմական հետախուզությունն ու հակահետախուզությունը «պարզապես մոռցված, անտեսված էր հայկական բանակին իրավասու և պատասխանատու պետերեն»<sup>95</sup>: Այդ մարմինը «ոչինչ չգիտեր, նա զբաղված էր ինտրիգներով և իր հաշիվներով, բայց ոչ պետական վսեմագույն իմաստի պահպանություն»<sup>96</sup>: Մեր հրամանատարությունը ոչինչ չգիտեր, թե ինչ է կատարվում սահմանից այն կողմը, նա չգիտեր և երկրի տրամադրությունը դեպի ժամանակի վերապրումները»<sup>96</sup>: Այս մարմինը երևան ուղարկած իր գրություններով հերքում էր հետախուզական բնույթի այն տեղեկությունները, որ ձեռք էր բերում Կարսի նահանգապետը Արդահանի գավառապետ Կազիմովի և քուրդ երևելիների միջոցով:

Հայկական հետախուզության համարյա չգոյություն պատճառով, բարձրագույն հրամանատարությունն ու գլխավոր շտաբը մինչև պատերազմի վախճանը իրական պատկերացում չեն ունեցել թուրքական ուժի և պլանների մասին<sup>97</sup>: Թուրքական հետախուզությունը հայկական միջավայրում գործել է համարյա անարգել և մեծ արդյունավետությամբ: Արժանահավատ աղբյուր տ. Կորյուն քահանա Քոթանջյանը, որը Կարսից ամենավերջինը դուրս եկող հայերից է (գրավված քաղաքում մնացել է երկու տարի), վկայակոչում է թուրքական Զորդ դիվիզիայի հրամանատար, գնդապետ Հյունսի բեյի խոսքը. «Ձեր բոլոր ժողովներում խոսված ճառերը և գինվոր[ական] գաղտնի որոշումները մեզ անմիջապես

<sup>94</sup> Նույն տեղում:

<sup>95</sup> Նույն տեղում:

<sup>96</sup> ՀԱՍ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 1, թթ. 125-126:

<sup>97</sup> Արտաշես Բաբայան. «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 53-54: Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 409, ծնթ. 29: ԿԱՊ, «Մարտկոց», 1932 թ., 3 նոյեմբերի, էջ 2: Վանիկ Վիրաբյան, «Հայաստանի առաջին հանրապետության հատուկ ծառայությունները 1918-1920թթ.», Երևան, 1998, էջ 21: ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թ. 4, էջ 61:

տեղեկացնում էին մեր բարեկամ հայերն ու մոլոկանները»<sup>98</sup>: Հնարավոր է, որ թուրք զինվորականը չափազանցնում է, սակայն դա ասելու որոշակի հիմքեր կային: Հայազգի բոլշևիկ տականքը բացահայտորեն կոչ էր անում հայկական պետություն կործանման և լրտեսում էր սեփական ազգի ու պետության շահերի դեմ՝ ի նպաստ «եղբայրական», «ինտերնացիոնալիստ» թուրքերի: Կարաբեքիրի մոտ կային ուրացող հայազգի տականքներ, այդ թվում՝ նախկինում Հայ կաթողիկե և Հայ առաքելական եկեղեցիների մի վարդապետ, որը մահմեդականություն էր ընդունել և Կարաբեքիրի առանձին թարգմանն էր դարձել<sup>99</sup>, մի «հրեշ հայ դավաճան»<sup>100</sup>, որը «չարագործ ոստիկանի պաշտոն էր կատարում»<sup>101</sup>:

Կարելի է հայկական շահերին նվիրված հետախուզական մարմին ակնկալել այն դեպքում, երբ Հայկական բանակի գլխավոր շտաբի հետախուզական բաժինը (որի վրա դրվել էին նաև հակահետախուզական պարտականություններ), գլխավոր շտաբի այլ բաժինների հետ, ստեղծել է ռուսական բանակի սպա, սկզբնական շրջանում գեներալ Անտոն Գենիկինի ոչ պաշտոնական ներկայացուցիչ գնդապետ Զինգելիչը:

<sup>98</sup> «Բանբեր Հայաստանի արխիվների», թիվ 1 (107), 2006, էջ 107: Ըստ ականատես Գարեգին եպս. Հովսեփյանցի՝ քաղաք մտած ասկյարներն ու բաշիրբոզուքները ամեն տեսակ այլանդակություն գործելիս խնայում էին իրեն՝ եկեղեցականի մորուքն ընդունելով որպես մոլոկան աղանդավորի հատկանիշ և նույնիսկ ասում էին, թե «մոլականները մեր եղբայրներն են» («Բանբեր Հայաստանի արխիվների», թիվ 3, 1989, էջ 130):

<sup>99</sup> «Բանբեր Հայաստանի արխիվների», թիվ 3, 1989, էջ 104:

<sup>100</sup> Արտաշես Ալեքսանդրյան, «Կարս 1920-21», Երևան, 1986, էջ 62:

<sup>101</sup> «Ոգուն չապավինելու արդյունքը», էջ 49: Իր ուրացում-դավաճանությունն առավել շեշտելու համար «Հիդայաթ» (թուրքացված արաբերենով նշանակում է «ճիշտ կրոնի ուղին ընտրած»)՝ աշխարհական անունով՝ Թադևոս, կրոնականով՝ էմմանուէլ կոչված այս տականքը նույնիսկ խափանել է գերությունից Գարեգին եպս. Հովսեփյանցի փախուստը (նույն տեղում): Այս ազգուրաց դավաճանի ստորությունների մասին հավելյալ տես՝ Արտաշես Ալեքսանդրյան, «Կարս 1920-21», էջ 67, 91-94, 103-104:

Նա ողջ ՀՀ բանակի գլխավոր շտաբը կազմավորել էր Դենիկինի կամավորական բանակի նույն մարմինների պատճենումով (Դենիկինն էլ պատճենել էր ռուսական ցարական բանակի համապատասխան մարմինները)<sup>102</sup>: Գլխավոր շտաբի հետախուզական բաժնի բոլոր պատասխանատու պաշտոններին նշանակված էին օտարներ<sup>103</sup>: Այդ բաժինն իր տեղեկագիրները (ավելորդ է ասել, որ դրանք կազմվում էին ոչ պետական լեզվով՝ ռուսերենով) պատրաստում էր երկու օրինակից, որոնցից մեկն ուղարկվում էր մինիստր-նախագահին (վարչապետին), երկրորդը՝... Դենիկինին: Եվ միայն 1920 թ. երկրորդ կեսին, երբ հայ-թուրքական փոքրածավալ ընդհարումներն սկսվել էին ՀՀ բանակի Օլթի հարձակումով և Դենիկինի Կամավորական բանակն էլ իրարահաջորդ պարտություններ էր կրում Կարմիր բանակից՝ Հյուսիսային Կովկասում, ՀՀ կառավարությունը փորձեց դենիկինյան հավատարմություն ունեցող սպաներին մեկուսացնել «հետախուզական գործունեությունում անմիջական դերից, որը նրանք վարում էին միտումնավոր և հարմարեցնելով գլխավորապես Դենիկինի կամավորական բանակի շահերին»<sup>104</sup>:

Ի դեպ, «հայկական հետախուզությունն իր ավանդական ապիկարությունը ցույց կուտար նաև հայ-ադրբեջանական ճակատին վրա»<sup>105</sup>:

Մեկ այլ ողբերգական փաստ է այն, որ հատուկեևս դեպքերում, երբ հայկական հետախուզությանը հաջողվում էր ինչ-որ կարևոր տեղե-

<sup>102</sup> Վանիկ Վիրաբյան, նշվ. աշխ., էջ 13:

<sup>103</sup> Այս մասին տես, օրինակ, ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 2, թ. 297:

<sup>104</sup> Վանիկ Վիրաբյան, նշվ. աշխ., էջ 14: Նույն հեղինակը գրում է, որ «հատուկ ծառայությունները կազմել են Հայաստանի առաջին հանրապետության ռազմաքաղաքական համակարգի անբաժան մասը: Հենց դրանով էր նաև Հայաստանը կազմակերպված պետություն» (նույնը, «Ամփոփում» վերջաբան, էջ 35): Եթե այսպիսին էին այդ ծառայությունների աշխատանքի որակն ու արդյունավետությունը, ապա ցավով պետք է հաստատել, որ ՀՀ-ը կազմակերպված պետություն չի եղել:

<sup>105</sup> Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 330:

կուլթյուններ կորզել, քաղաքական ղեկավարությունը պատշաճ լրջությամբ չէր վերաբերվում դրանց<sup>106</sup>:

Ասվածներին կարելի է ենթադրել, որ Հայկական բանակի սեփականությունը եղող երկու ինքնաթիռների արդյունավետությունը ռազմական հետախուզության գործում՝ բավականին ցածր է եղել:

Բ. 1. 7. Ապաշնորհ զորահրամանատարների ուշացած փոխարինումները և նրանց նկատմամբ ներողամիտ վերաբերմունքը

Գնդապետ Նիկողայ Դորդանյանի ապիկար ղեկավարության պատճառով, Կարսի ռազմաճակատի աջ թևի անհաջողություններից հետո միայն, հոկտեմբերի կեսին նրան այդ տեղամասում փոխարինումը Սեպուհով, այն էլ՝ իր բրիգադայի ընդամենը մեկ մասով, բավական ուշացած միջոցառում էր: Իսկ այդ միջոցին, 15 օր (սեպտեմբերի 20-ից հոկտեմբերի 5-ը) ռազմաճակատի աջ թևը հրամանատար չի ունեցել<sup>107</sup>: Է՛լ ավելի հանցավոր էր անընդհատ անհաջողություններ արձանագրող գեներալ Հովսեփյանի փոխարինումը գեներալ Ղազարյանով, ընդամենը հոկտեմբերի 28-ին, երբ վիճակը չափազանց բարդացել էր բերդաքաղաքի շուրջ: Եվ ի՞նչ, փոխանակ նրան ռազմական դատարանի փոխանցելու, Հովսեփյանին տրվում է շատ պատասխանատու պաշտոն՝ Ալեքսանդրապոլի անկումից հետո դիմադրության նոր գիծ դարձած Արագածի ռազմաճակատի ղեկավարումը: Այստեղ ևս նա ձախողվում է, և նոյեմբերի կեսին նրան փոխարինում է մինչ այդ իրեն ենթակա գնդապետ Միրիմանյանը, որը պահպանում է շորրորդ գնդի հրամանատարու-

<sup>106</sup> Նույն տեղում, էջ 70: Այս մասին բազմաթիվ անգամ վկայում է նաև Ստեփան Դորդանյանը իր հուշերում, ՀՀ ղեկավարությունը մեղադրելով իր ձեռք ձգած հետախուզական բնույթի տեղեկություններն անտեսելու կամ դրանց հավաստիությունը կասկածելու մեջ: Նույնը հաստատում է նաև պատմաբան Վանիկ Վիրաբյանը Հայաստանի առաջին հանրապետության հատուկ ծառայություններին նվիրված իր աշխատություններում:

<sup>107</sup> ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թ. 5, էջ 82:

թյունը: Իրերահաջորդ ձախողությունների համար, գեներալ Արտյոմ Հովսեփյանը զորաց նախարար Ռուբենի հրահանգով միայն նույնների կեսերին կանչվել է Երևան՝ դատվելու<sup>108</sup>, սակայն չի պատժվել, և զորաց նոր նախարար Դրոյի ցանկությանը ազատ է արձակվել<sup>109</sup>:

Ապաշնորհ բարձրաստիճան սպաների նկատմամբ անհիմն ներողամտությունն էլ ավելի խայտառակ բնույթ ստացավ հայ-թուրքական պատերազմի օրերին: Այստեղ մեծ դեր էր խաղում հովանավորչությունը՝ պայմանավորված սպաների կուսակցականությանը (ինքնին ապօրինի մի իրողություն), խնամի-ծանոթ-բարեկամ գործոնով, և, իհարկե, կաշառքով: «Մեր առաջնորդներուն մեջ ավելի զորավոր էին հեղափոխական թափը և արենակցական կապը, քան թե պետական կենսական շահերու ըմբռնումը»<sup>110</sup>, վկայում է 1920 թ. ապրիլից Կարսում գտնված դաշնակցական գործիչ Վահե Արծրունին: Նման պայմաններում խոսել բանակում կարգապահության մասին՝ անմտություն կլիներ: Մեջբերենք մի քանի օրինակ.

Ախուրյանի մոտ քրդական ձիավոր մի խմբի հանդիպելով, փախած և գինամթերքը թշնամուն թողած<sup>111</sup> փոխզնդապետ Ղոնդախյանը թեև դատի տրվեց, «բայց մնաց անպատիժ և նշանակվեց նոր պաշտոնի»<sup>112</sup>:

Գեներալ Փիրումյանի փեսան՝ գնդապետ Միրզոևը, առանց կոխվ տալու փախչում է Ալեքսանդրապոլ, նախօրոք այնտեղ տեղափոխելով իր ունեցվածքը: Ռուբենը նրան բանտարկելու հրաման չի տալիս<sup>113</sup>:

<sup>108</sup> Նույն տեղում, թ. 9, էջ 114:

<sup>109</sup> Արտաշես Բաբայան. «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 68:

<sup>110</sup> Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 39:

<sup>111</sup> ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 6, թ. 26; նույնը, գ. 8, թթ. 3-6:

<sup>112</sup> Արտաշես Բաբայան. «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 56: Ստ. Ղորղանեանը գտնում է, որ «փոխզնդապետի տեղը 24 ժամվա ընթացքում ի կատար ածված կախաղանն էր», «բայց հայկական դատարանը, սկզբից եթե մի ֆիկցիա, կորով չունեցավ արդարադատություն կերտելու» (ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 8, թ. 8):

<sup>113</sup> ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 6, թ. 39-40: Սա այն սպան է, որի գինավորները քիչ էր մնում ապստամբերի 1919 թ. վերջին օրերին, երբ նա գողացել էր իր գնդին հատկացված սնունդը: Քննությունը հաստատել էր կողոպուտի փաստը, և, հակառակ իր անե-

Որոշ դեպքերում էլ կային շփոթանավորված և անարդարացի փոխարինումներ: Այսպես, զոր. Հովսեփյանը, իր փոխարինումից բոպեններ առաջ ստորագրում է կարգադրություն, որով ճակատի առաջին գծում գտնվող Ց-րդ գնդի առաջին գումարտակի հրամանատարությունը հարյուրապետ Հայ Գնդունուց փոխանցում է հազարապետ Աղայանին, ինչ է թե վերջինս աստիճանով ավելի բարձր զինվորական է եղել... Պաշտոնի հանձնման ձևականությունները հազիվ լրացած սկսվում է թուրքական հարձակումը այդ գումարտակի պաշտպանած տեղամասում<sup>114</sup>:

Բ. 1. 8. Զինվորական բազմատիճան ենթակայությունը և այս հարցում ուսական շաբլոնի կապկումը

Կարսի ռազմաճակատի թե՛ տեղագրությունը, և թե՛ հարաբերական փոքրությունը պարտավորեցնում էին ռազմական հրամանատարության մեկտեղում, այն էլ՝ կարող, պատկառազգու, առինքնող, անձնական դրական օրինակ ծառայող ռազմահրամանատարի ձեռքում: Մինչդեռ այս հարցում թույլ տրվեցին կոպիտ սխալներ: Առաջին, ռազմական գործողությունների կենտրոնական հատվածի հրամանատարն էր գեներալ Արտյոմ Հովսեփյանը, որի վերադասն էր Կարսի բերդապահ ու ռազմաճակատի փաստական հրամանատար, գեներալ Դանիել-բեգ Փիրումյանը<sup>115</sup>: Վերջինիս անմիջական ղեկավարն էր ռազմաճակատի անվանական հրամանատար, գեներալ Մովսես Սիլիկյանը, որը նստում էր ռազմական գոր-

---

րոջ՝ գեներալ Փիրումյանի միջամտությանը, նրան ազատել էին գնդի հրամանատարությունից: Այգուհանդերձ, Միրզոևը շատ շուտով նշանակվել է Կարսի մի գնդի հրամանատարի օգնական (ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 2, թ. 254), այսինքն «պատժվել» է ընդամենը թեթևակի պաշտոնազրկումով:

<sup>114</sup> Հայ Գնդունի, «Դրվագներ Կարսի կռիվներին», «Պայքար» ամսագիր, Բոստոն, 1931, սեպտեմբեր, էջ 80:

<sup>115</sup> Ի դեպ, ըստ լավատեղյակ անձ, ՀՀ կառավարության՝ Կարսի ռազմաճակատ ուղարկված լիազոր, խնամատարության նախարար Ա. Բաբայանի, «առաջինը իբր թե պիտի ենթարկվեր երկրորդին, բայց մենք բնավ այդ չնկատեցինք»։ (Արտաշես Բաբայան. «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 56):

ծողությունների թատերաբեմից շուրջ 70 կիլոմետր հեռու՝ Ալեքսանդրապոլում<sup>116</sup>: Սիլիկյանի վերադասան էլ գորքի ընդհանուր հրամանատար գեներալ Թովմաս Նազարբեգյանն էր, որը նստում էր Երևանում: Այսպիսով, ստեղծվել էր շորս աստիճանի հրամանատարություն, մեկ մարմին՝ շորս գլխով: Սա եթե մեկ կողմից ռուսական ռազմարվեստի բազմաստիճան հրամանատարման սկզբունքի կապիտում էր, մյուս կողմից՝ կատարվել էր ինքնահավան և միմյանց նկատմամբ նախանձով ու ատելությունամբ լցված գեներալների փառասիրությունը բավարարելու համար: Յուրաքանչյուր հրամանատար, իհարկե, ուներ նաև իր շտաբը՝ բազմաթիվ սպաներով: Նման պայմաններում անհնար էր դարձել օպերատիվ ռազմական որոշումներ ընդունելը, հրահանգներ արձակելն ու դրանք տեղ հասցնելը, ռազմական գործողությունների համակարգումը: Եթե ավելացնենք, որ հեռագրական և հեռախոսային կապը հաճախ խզվում էր, երբեմն՝ երկար ժամանակով, ապա պատկերը ամբողջական կլինի: Շատ են վկայությունները, թե ճակատի այս կամ այն գորամիավորը տեղյակ չէր, թե ինչ է կատարվում թևերում<sup>117</sup>, նույնիսկ հարևան գորամիավորներում<sup>118</sup>: Մյուս սխալն այն էր, որ այս բոլոր գորահրամանատարների միջև հարաբերությունները, մեղմ ասած, բարեկամական չէին. նրանց միջև կային տևական նախանձ, փոխադարձ դավեր: «Մինչդեռ մեր դիմաց մեկ կամք, մեկ հրամայող կար՝ Քյազըմ Կարաբեքիր փաշան»<sup>119</sup>:

### Բ. 1. 9. Զորակոչի բարձրթողի վիճակը

Զորակոչի կարևոր գործի նկատմամբ ՀՀ կառավարություն մոտեցումը, Հայ Գնդունու համաձայն, «մակերեսային և իրապես վարժապե-

<sup>116</sup> Շտաբի հաստատումը Ալեքսանդրապոլում Կարսի նահանգապետ Ստ. Ղորղանյանը «ճակատագրական» սխալ է համարում. տե՛ս ՀԱՍ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թ. 362:

<sup>117</sup> Տես, օրինակ, Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 36:

<sup>118</sup> Տես նաև ՀԱՍ, ֆ. 477, ց. 1, գ. 6, թ. 96:

<sup>119</sup> Արտաշես Բաբալյան. «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 56:

տական» էր<sup>120</sup>: Սիմոն Վրացյանի գնահատումով՝ զորակոչն ու առհասարակ թիկունքը «լավ կազմակերպված» չէին<sup>121</sup>, իսկ Կարսի նահանգապետ Ստեփան Դորղանյանի համաձայն, այդ պատասխանատու գործը «մի այնպիսի շփոթ, մի այնպիսի քաոս էր, որի նմանը երևակայել անգամ դժվար է»<sup>122</sup> և «գտնվում էր անշնորհք և ապիկար աղմինխտրացիայի ձեռքում»<sup>123</sup>: Թիկունքի պետ, գեներալ Միքայել Արեշյանը մի ապաշնորհ մարդ էր և «փոխանակ իրեն հանձնված նոր-նոր ուժերը կազմակերպելով ճակատն ուղարկելու, ավելի կքաջալերեր դասալքությունը դեպի Վրաստան»<sup>124</sup>: Բանակի Զորակոչային վարչությունը գլխավորում էր ոռու գնդապետ Մակավիլը: Նահանգներում ևս ոռուների կամ հայությունից լրիվ ուժացած սպաների էր հանձնվել այս հույժ կարևոր միջոցառման իրականացումը: Նրանք եթե նույնիսկ բանիմաց և մասնագետ լինեին այս հարցում, այնուամենայնիվ, սրտացավ չէին կարող լինել. ոռու սպաների համար՝ Հայաստանի Հանրապետությունն իրենց հայրենական պետությունը չէր, իսկ հայազգի սպաներից շատերի հոգում ՀՀ-ը որպես սեփական, հայրենական պետություն չէր ընկալվում:

Զորակոչի պլան գոյություն չուներ, իսկ եթե կար, դրանից անտեղյակ էր Կարսի նահանգապետ Ստեփան Դորղանյանը, որի վրա էր դրվել զորակոչի կատարումը նահանգում<sup>125</sup>: Նահանգի զորակոչն իրականացնելու կոչված հայանուն, հայերեն ոչ մի բառ չիմացող գնդապետին «նույնչափ էր հետաքրքրում հայկական գործը, որքան ինձ և ձեզ՝ անցյալ տարվա քամին», - հեգնում է նահանգապետն իր հուշերում<sup>126</sup>:

<sup>120</sup> ԿԱՊ, «Մարտկոց», 1932 թ., 29 հոկտեմբերի, էջ 2:

<sup>121</sup> Սիմոն Վրացյան, «Հայաստանի Հանրապետություն», Երևան, 1993, էջ 508:

<sup>122</sup> ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 1, թ. 155:

<sup>123</sup> Նույն տեղում, գ. 10, թ. 4:

<sup>124</sup> Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 292:

<sup>125</sup> ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 6, թ. 94:

<sup>126</sup> Նույն տեղում, գ. 7, մաս 2, թ. 165:

Բ. 1. 10. Նոր ստացված կանադական հրացաններին  
հայ զինվորների անվաճի լինելը

Թուրքական հարձակումից հետո հայտարարված զորակոչով «զենքի տակ առնված մարդոց գրեթե մեծ մասը անտեղյակ էր հրացանի գործածություն, զին. տարրական կրթություն ու վարժություն չէր տեսած», - վկայում է առաջին գծում մարտնչած Ց-րդ գնդի առաջին գումարտակի հրամանատար Հայ Գնդունին<sup>127</sup>: 1920 թ. աշնանը Մեծ Բրիտանիայի շահին վաճառած կանադական հրացանները «բոլորովին անպետ զենքեր էին», իսկ հայ զինվորն ու զինակոչիկը դրանց գործածությունը «չէր մարզված հարկ եղածին չափ»<sup>128</sup>, դրանց «վարժ չէր»<sup>129</sup>: Կարո Սասունու համաձայն՝ այդ հրացանները ծանր էին և կոշտ, նրանց արձակած փամփուռների զգալի տոկոսը չէր պայթում, ինչը հոգեբանական վատ ազդեցություն էր թողնում զինվորների մոտ<sup>130</sup>: Մյուս կողմից, «նույնիսկ սպաներից ոմանք դեռ չէին թափանցել նոր զենքի գործածության գաղտնիքներին, որպեսզի սովորեցնել կարողանային իրենց ենթարկյալ զինվորներին», - վկայում է մարտական գործողությունների շրջան կամավոր մեկնած Գարեգին եպս. Հովսեփյանցը<sup>131</sup>:

Բ. 1. 11. ՀՀ բանակի և պաշտպանության նախարարության  
պաշնորհ ղեկավարությունը

Այս մասին գրում են գրեթե բոլոր հուշագրողները: Զորահրամանատարների հասցեին հուշագրողների մոտ հանդիպում ենք ամենաբացասական որակումների: Նրանց մեծ մասը բարձրաստիճան հրամանատարությունը դասակարգում է երկու խմբակցություններում.

<sup>127</sup> ԿԱՊ, «Մարտկոց», 1932 թ., 29 հոկտեմբերի, էջ 2:

<sup>128</sup> Նույն տեղում, 1932 թ., 8 նոյեմբերի, էջ 1:

<sup>129</sup> Սիմոն Վրացյան, «Հայաստանի Հանրապետություն», Երևան, 1993, էջ 508:

<sup>130</sup> ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թ. 5, էջ 80:

<sup>131</sup> Գարեգին արք. Հովսեփյանց, «Կյանքիս ամենագոթախտ օրը և երջանկությունս ընդդեմ», տե՛ս «Ոգուն չապավինելու արդյունքը», էջ 31:

1. Հայ սպայություն «հայրերը». սրանք ուսուցիչներ էին կամ բացառապես ու միայն ուսուցիչներ խոսողներ:

2. «Նորընծա հայ սպաները». սրանց մեծ մասը նախապես եղել է «տիրացու, խանութպան, գործակատար», կամ, «լավագույն դեպքում, ծխական ուսումնարանի վարժապետ»: Սրանք ուսուցիչների և ուսասիրտների միջավայրում տառապում էին ստորակայության բարդույթով: Ըստ այս դասակարգումն անող Ստ. Ղորղանյանի՝ այս դասը «տքնում էր ուսուցիչներին խոսելու, բայց նա ուսուցիչներին միայն կոտրատում էր...»՝ «առաջ բերելով ուսուցիչների մեջ միայն հեգնանք և միայն ծաղր»<sup>132</sup>:

Ներկայացնենք այս հրամանատարների ապաշնորհության ընդամենը մեկ օրինակ: Նկարագրելով հոկտեմբերի 28 լույս 29-ի գիշերը ռազմաճակատի կենտրոնական հատվածի հրամանատարությունը ստանձնած գեներալ Ղազարյանին իր ներկայանալը, Ցրդ գնդի առաջին գումարտակի հրամանատար Հայ Գնդունին իր հուշերում գրում է. «Զորավարը դրությունն ըմբռնողի չէր նմաներ, անտարբերությամբ կվարվեր մեր գեկուցումին հետ, նույնիսկ կատարելապես անուշադրություն մատնելով իմ կտրուկ հայտարարությունս, որ թուրքերը հետևյալ օրն իսկ եթե ուզեին առաջ շարժիլ և հայ բանակը չկարենար լուրջ դիմադրություն մը կազմակերպել, Կարսը կիյնար նույն օրն իսկ»<sup>133</sup>:

ՀՀ բանակի հրամանատարության ճիշտ հակառակ պատկերն էր թուրքական կողմում: Կարաբեքիրի ստորադասները աչքի էին ընկնում բարձր որակներով: Օրինակ, գնդապետ Խալիլ բեգը՝ «շատ քաջ, հանդուգն» մի հրամանատար, Կարսի վրա հարձակման «հրամանը տանող Քյազըմ բեգեն խնդրած է, որ 12-րդ բանակին հետ տեղը փոխվի և ամ-

<sup>132</sup> ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թթ. 397-399:

<sup>133</sup> Հայ Գնդունի, «Դրվագներ Կարսի կռիվներեն», «Պայքար» ամսագիր, 1931, սեպտեմբեր, էջ 82: Ղազարյանը այն գնդապետն էր, որ 1919 թ. նոյեմբերին Այուսիք մեկնելու որպես նախապայման ՀՀ կառավարությունից պահանջել էր «կանխավ աստիճանի բարձրացում և կրկնակի ամսական» (Մննիկ Զարմունի, «Յեղի հրամայականը», Երևան, 2007, էջ 158), ինչը և ստացել էր...

րուծյուններուն վրա ինք հարձակի»<sup>134</sup>: Քյազըմ բեգ... մերժել է ընդառաջել խնդրանքին:

Բ. 1. 12. Հույսը Կարսի անառիկ ամրությունների վրա դնելը

Դրանց վրա իրենց հույսն էին դրել շատերը՝ բարձր զորահրամանատարներից մինչև ՀՀ քաղաքական վերնախավն ու Կարսի բնակչությունը: Եթե բացակայում է պաշարելու, դիմադրելու և հաղթելու ոգին, ամենաանառիկ ամրուծյուններն իսկ անկարող են պարտություն դառնուծյունը կանխելու: Ճիշտ է այն, որ «եթե Կարադաղի ամրուծյուններից մեր թնդանոթները միայն գործեին, ո՛չ միայն քաղաքը պաշտպանված կլիներ, այլ նոքա (թուրքերը՝ Գ. Յ.) չեին կարող բերդին իսկ մոտենալ»,- գրում է Գարեգին սրբազանը<sup>135</sup>: Սակայն, գերաշնորհ հայրը մոռանում է, որ թնդանոթները բանեցնում են մարդիկ, որոնք պետք է աներեք հավատք ունենան իրենց հաղթանակի նկատմամբ:

Հրամկազմի մի մասը չէր էլ հավատում Կարսի ամրուծյուններին: «Նազարբեգյան կարծում էր, որ թշնամու ճնշման տակ, ստիպված պիտի լինենք թողնել Կարսը և, պահպանելով կենդանի ուժը, կարգի բերել մեր գնդերը, զինել, հագցնել և ապա չափվել թշնամու հետ»<sup>136</sup>: Նույն կարծիքին է եղել նաև գլխավոր շտաբի պետ, գեներալ Հովհաննես Հախվերդյանը: Կառավարությունը մերժում է այս առաջարկը՝ հուսալքում չառաջացնելու համար: Կ. Սասունին ճիշտ է համարում նազարբեգյանի առաջարկը և ավելացնում. «Կարսի բերդին և քարերուն վրա հույսը դնելը ամենեն մեծ սխալը եղած է»: «Կարսի բերդը եղավ գլխավոր պատճառը Կարսի աղետալի անկման»<sup>137</sup>:

<sup>134</sup> «Քյազըմ Կարաբեքիրի հուշերը Հայաստանի Հանրապետության վրա թրքական հարձակումներուն մասին», «Զարթոնք», 1966 թ., 10 օգոստոսի, էջ 2:

<sup>135</sup> «Ոգուն չապավինելու արդյունքը», էջ 41:

<sup>136</sup> Արտաշես Բաբայան. «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 55:

<sup>137</sup> ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թ. 7, էջ 73-74:

Սակայն էլ ավելի վրդովեցուցիչ փաստ է այն, որ Կարսի ամբուլժյունների նկատմամբ դրսևորել է անփույթ վերաբերմունք նույն ինքը՝ բերդապահ նշանակված գեներալ Դանիել-բեգ Փիրումյանը<sup>138</sup>: Հենց սկզբից միասնություն չկար այն հարցում, թե հարկավոր է արդյոք Կարսը պահպանել որպես բերդաքաղաք, թե՞ ոչ: Ինչպես շատ հարցերում, այս հարցն էլ թողնվում է չուժված և բարձրիթողի վիճակում: «Բերդը և՛ գոյություն ուներ և՛ ոչ: Բերդապահ կար, ինչպես նաև հրետանիի պետ, բայց զորք չկար»<sup>139</sup>: Եվ միայն պատերազմը սկսվելուց հետո հապճեպ կերպով մի շարք կարգադրություններ են անում, որոնք երկար ամիսների անփուլթության պատճառով ստեղծված ողորմելի վիճակը չէին կարող հաշված օրերի ընթացքում հեղաշրջել: Հոկտեմբերի վերջին շաբաթը ի վերջո սկսում են կարգի բերել բերդի՝ «երեսի վերա ընկած բազմաթիվ թնդանոթները», հեռախոսային ու հեռագրական կապը վերականգնել և այլ անհրաժեշտ աշխատանքներ տանել, թնդանոթաձիգ սպաներ ճարել<sup>140</sup>:

#### Բ. 1. 13. Հայկական երկաթուղու խայտառակ վիճակը

Սա ևս կարելի է դասել ռազմական բնույթի սխալների շարքում: Օրագրողը հոկտեմբերի 3-ին գրել է. «Նավթ ու մագուլթ չունենալու պատճառով, մեր երկաթուղագիծը համայն Հայաստանում այս քանի շաբաթ է, որ ի սպառ կանգնել է»: Օրագրողը վրդովված ավելացնում է. «Ինձ մնար, ես Ջամալյանին<sup>141</sup> առաջին հերթին ռազմադաշտային դատարանի կհանձնեի»<sup>142</sup>:

Հայկական երկաթուղում կաշառքն ու կողոպուտը վերածվել էին «բնական» երևույթների: «Երկաթուղու ամեն մի կայան մի սատրապություն, «ինքնորոշվող» մի հաստատություն էր, ուր գնացքը պետք է

<sup>138</sup> Արտաշես Բաբայան. «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 58:

<sup>139</sup> Նույն տեղում:

<sup>140</sup> ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թթ. 364, 367:

<sup>141</sup> Հաղորդակցության նախարար Արշակ Ջամալյան:

<sup>142</sup> Անանուն, «Ազատ, անկախ և միացյալ Հայաստանի վերջին օրերը», էջ 88:

կանգնե՞ր և վճարե՞ր իր մաքսը»<sup>143</sup>: Երկաթուղու Կարսի նահանգի հատվածում կողոպտում էին հատկապես հարուստ թուրքերին: Նահանգապետը երկաթուղու միլիպետին հեռացնում է աշխատանքից, բայց որոշ ժամանակ անց իմանում, որ Երևանից նրան նորից նշանակել են նույն պաշտոնում<sup>144</sup>:

## Բ. 2. Ռազմահոգեբանական պատճառներ և սխալներ

Բ. 2. 1. Պատերազմին հոգեբանական անպատրաստվածությունը, թուրքական վտանգի արհամարհումը կամ, առնվազն, թերագնահատումը և սեփական կարողությունների գերագնահատումը

Մեր համոզումով, սա Կարսի և դրան հետևած ՀՀ անկման գլխավոր գործոններից է: Որևէ պատերազմի կամ նույնիսկ դրա վտանգի նկատմամբ հոգեբանական անպատրաստությունն անխուսափելիորեն առաջնորդում է մարտական ոգու թուլացմանը<sup>145</sup>: «Կառավարության ու պարլամենտի համար տաճկական վտանգ չկար, կամ այդ վտանգը սպառնալից չէր»,- գրում է նախարար Արտաշես Բաբալյանը<sup>146</sup>: Դա ունի իր հոգեբանական բացատրությունը. ՀՀ-ն Կարսի մարզը ձեռք էր բերել հեշտությամբ, առանց մեծ զոհողությունների՝ այն ստանալով բրիտանացիներից 1919 թ. գարնանը: Իսկ ինչ ձեռք է բերվում հեշտությամբ, ընդհանրապես, իսկական արժեքը թերագնահատվում է, նմանապես՝ թերագնահատվում են այն կորցնելու վտանգն ու նշանակությունը:

<sup>143</sup> ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 12, թ. 68:

<sup>144</sup> Նույն տեղում, գ. 7, մաս 1, թթ. 41-44:

<sup>145</sup> Տե՛ս նաև Արարատ Հակոբյան, «1920 թ. թուրք-հայկական պատերազմի պատմության փորձն ու դասերը», էջ 28:

<sup>146</sup> Արտաշես Բաբալյան. «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 54: Տես նաև Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 35:

Թուրքական վտանգի թերագնահատումն ուղեկցվում էր սեփական կարողությունների անհիմն գերագնահատումով, «որովհետև հաղթական էինք մեր անկախության առաջին օրերից իսկ», «լավ զինված և պարենավորված, Անդրկովկասում կովոդի հռչակ հանած, թվով գերազանց» բանակ ունեինք և «ուժեղ էինք Անդրկովկասյան մյուս հանրապետությունների համեմատ»<sup>147</sup>: Ըստ Կարո Սասունու՝ «Հայկական զինվորական անձնավստահությունը իր կարծեցյալ թվական առավելություն վրա էր»<sup>148</sup>: Առաջ ընկնելով նկատենք, որ այս դիտարկումները զարմանալիորեն նմանվում են Արցախյան ազատամարտից հետո ու մինչև օրս էլ հնչող գնահատականներին:

Ըստ Գարեգին եպս. Հովսեփյանցի արժանահավատ վկայության, հայոց զորքը «գրեթե ամբոխից էր բաղկացած»<sup>149</sup>: Այդ զինակոչիկների մեծ մասը եկել էր գյուղերից, որտեղ աշնանային բերքահավաքի եռուն շրջանն էր ընթանում, և գյուղացի երիտասարդը չէր կարող չմտահոգվել օր առաջ տուն դառնալով իր ընտանիքի ձմեռվա պաշարն ապահովելու, մի քիչ էլ սև օրվա համար խնայողություններ ունենալու բնական ու տրամաբանական խնդրով:

Զորակոչին ներկայանում էին աղքատների և «տանիք» չունեցողների որդիները: Հովանավոր ունեցող կամ կաշառք տվող երիտասարդների մի մասը փախչում էր արտասահման (մասնավորաբար Թիֆլիս), մյուս մասը տեղավորվում էր սպանների մոտ՝ ռազմական գործողություններից հեռու: Կարսի նահանգապետ Ստ. Ղորղանյանը եզրակացնում է, որ զորահավաքը հավասարվել էր «ամոթխալի սնանկություն»<sup>150</sup>:

<sup>147</sup> Արտաշես Բաբայան. «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 64-65: Նույնը հաստատում է նաև Վահե Արծրունին (Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 35):

<sup>148</sup> ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թ. 6, էջ 89:

<sup>149</sup> Գարեգին եպս. Հովսեփյանցի օրագիրը, «Բանբեր Հայաստանի արխիվներին», 1989, թ. 3, էջ 146:

<sup>150</sup> ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 10, թ. 4:

Ռազմահոգեբանական մեկ այլ կոպիտ սխալ էր նման որակով զորակոչիկների միախառնումը մասնագիտացված զորամիավորումներին, որի հետևանքով զգալիորեն նվազում էր վերջիններիս մարտունակությունը, նրանց ևս մղելով խուճապի:

Ք. 2. 2. Հրամանատարության բացարձակ անգլիտությունը  
գործի որակական արժեքի մասին կամ դրա միտումնավոր  
գերազնահատումը

ՀՀ բանակի հրամանատարությունը կա՛մ չէր հետաքրքրվում զորքում տիրող իրական վիճակով, կա՛մ իրականում տեղյակ չէր դրանից, կա՛մ էլ անտեսում էր զորքում տիրող բացասական որակները: Կարսի նահանգապետ Ստ. Դորդանյանը դիպուկ նկատել է տալիս, որ զորքն ու իր հրամանատարությունը «երկու խորթ և իրար հակասող ու բացառող հատվածներ էին»<sup>151</sup>: Այս մասին շափազանց ուշագրավ է ՀՀ-ում գործած Հայ ռամկավար կուսակցության ղեկավար, «Վան-Տոսպ» թերթի խմբագիր, հետագայում ՌԱԿ ղեկավարներից Արտակ Դարբինեանի վկայությունը: Նա Երևանից դուրս գալուց առաջ, 1920 թ. աշնան սկզբում հանդիպում է վարչապետ Համո Օհանջանյանին և իր դպրոցական ընկերոջը՝ Ռուբեն Տեր-Մինասյանին ու նրանցից խնդրում տեղեկություններ՝ Հայ ռամկավար կուսակցության ընդհանուր պատգամավորական ժողովին փոխանցելու համար: «Թե՛ Օհանջանյան և թե՛ Տեր-Մինասյան հավաստիացուցին ինձ, թե այդ (թուրքական հարձակման մասին շրջանառվող,- Գ. Յ.) զրույցները շափազանցված են»: Ռուբենն ավելացնում է. «Այսօր, երբ Հայաստան և քեմալական Թուրքիա իրարու դեմ պատերազմական վիճակի մեջ կգտնվին, իրապես չեմ գիտեր, թե ի՞նչ է մեր բանակին քանակական և որակական ուժը»<sup>152</sup>:

<sup>151</sup> Նույն տեղում, գ. 7, մաս 2, թ. 235:

<sup>152</sup> Արտակ Դարբինեան, «Հայ ազատագրական շարժման օրերեն» հուշագրության «Տեղեկագիր Արարբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի հարցին շուրջ» հատ-

Բ. 2. 3. ՀՀ բանակում համատարած անփութությունը,  
անկարգապահությունն ու անպատասխանատվությունը

Յուրաքանչյուր գործի, առավել ևս, բանակային գործի արդյունավետության ու հաջողության հիմքերի հիմքը կարգապահությունն է: Հրամանների անվարան, «անվճռաբեկ պարտավորություններ և ճշտություններ» կատարում, հատկապես ռազմական գործողությունների ժամանակ, գոյություն չի ունեցել ՀՀ բանակում: Ամեն մեկը «սիրում էր միայն ճառել և միայն ընդ[դ]իմախոսել»<sup>153</sup>: Դա, որպես ՀՀ բանակի մեծագույն թերություն, նշել է նույն Կարաբեքիրը. «Հայկական բանակը, բացի նորելուկ ըլլալե, ունի խախուտ հիմք: Կինելով հեղափոխական կուսակցության մը զինական ուժը, շունի զինվորական անհրաժեշտ կարգապահությունը»<sup>154</sup>:

ՀՀ բանակի զինվորների, կրտսեր և բարձր աստիճանավոր սպաների մեծ մասն իր ստացած հրամանները կատարելու կամ չկատարելու իրավունք է վերապահել ինքն իրեն: Բյուրո-կառավարությունը «ուժ տվավ բանակը մեծցնելուն, առանց համապատասխան չափով ուշադրություն դարձնելու անոր կարգապահության և օրգանական կազմակերպությանը վրա»<sup>155</sup>: Զինվորական կարգապահությունը խախտողները ոչ միայն խիստ պատժի չեն արժանացել, նրանց ոչ միայն ներվել է, այլև հաճախ... նոր պաշտոններ են ստացել կամ պարգևատրվել: Օրինակ, Մայիսյան խռովությունների ժամանակ, բոլշևիկները գնդապետ

---

վաճից. մեջբերվել է հետևյալ ժողովածուում՝ Նուպար Ակիշյան, «Մեծերեն տասը», ԽԱԿ կուսակցական գրականության մատենաշար թիվ 1, Լոս Անջելոս, 1990, էջ 68:

<sup>153</sup> ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 8, թ. 12:

<sup>154</sup> Վահե Արժունի, նշվ. աշխ., էջ 244: Թուրքական բանակը հայկականից իր կարգապահություններ էսպես տարբերվել է նույնիսկ թալանի հարցում: Նույն ականատես աղբյուրը վկայում է, որ ասկարներին թույլատրված էր փող և հագուստ թալանել, սակայն խիստ արգելված էր ռազմամթերքի և ոչխար-տավարի թալանը, որը թուրքական կառավարության սեփականություն էր համարվում (նույնը, էջ 256):

<sup>155</sup> Վահե Արժունի, նշվ. աշխ., էջ 47:

նիկողայ Դորդանյանին նշանակել էին իրենց շտաբի պետ, և նա «ենթարկված էր խռովարարներուն»<sup>156</sup>: Խռովության ճնշումից հետո նրան ոչ ոք պատասխանատվության չկանչեց, և նրան վստահվեց Կարսի ռազմաճակատի աջ թևը, ուր նա միայն անհաջողություններ արձանագրեց:

Գնդապետ Դորդանյանը միակը չէր: Ավելին. Մալխյան խռովությունների օրերին բոլշևիկներին չհարող բարձրաստիճան սպաները փոքրամասնություն էին կազմում: Օրինակ, Ալեքսանդրապոլի մեջ, սպայությունը ճանաչել էր Ռազմահեղափոխական կոմիտեի իշխանությունը<sup>157</sup>, իսկ Փիրումյանն իրեն ենթակա գեներալ Արտյոմ Հովսեփյանի և գնդապետ Վահան Տեր-Առաքելյանի հետ այդ օրերին չեզոքություն հայտարարեց և «անհոգ-անհոգ փողոցները շափչիփեցին»<sup>158</sup>: Է՛լ ավելի արտառոց է մալխյան խռովության ժամանակ հինգերորդ գնդի հրամանատար, ռուսախոս գնդապետ Շաղուբաթյանի<sup>159</sup> պահվածքը Կարսում: Նա այդ օրերին «հնարավոր համարեց պսակվելու և ուրախանալու...»: Ավելին, «երբ խռովարարները կարմիր ցնցոտի դրոշակներով անցնում

<sup>156</sup> ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թ. 4, էջ 83:

<sup>157</sup> Տարօրինակ է, որ Ս. Վրացյանը դա բացատրում է սպայության՝ «գորքի ամբողջությունը փրկելու և ներքին կոիվների պատճառ չտալու» ազնիվ մղումներով (Ս. Վրացյան, «Հայաստանի Հանրապետություն», Երևան, 1993, էջ 422), մինչդեռ այդ սպայության դիրքորոշումը պայմանավորված էր մինչև ուղև ու ծուծը ապագայ-նությունը և սեփական պետության նկատմամբ հավատքի պակասով կամ, առնվազն, արհամարհական մոտեցումով:

<sup>158</sup> Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 42: Ստեփան Դորդանյանը բերում է հուլիսի կարևոր մի վկայություն: Երբ 1920 թ. դեկտեմբերի 2 – լույս 3-ի գիշերը Ալեքսանդրապոլի համաձայնագիրը ստորագրած ՀՀ պատվիրակության երեք անդամները, նոր իշխանությունների պահանջով, դուրս էին գալիս արդեն խորհրդայնացած ՀՀ-ի սահմաններից, գիշերում են Գարաբիլիսայում, ուր նրանց մոտենում է տեղի հեղկոմի անդամ մի երիտասարդ՝ Դազանյան ազգանունով և հայտնում, որ «մալխյան Կարսի խռովությունների կազմակերպիչներից մեկը ինքն էր» և թե «գեներալը և գեներալը. Հովսեփյան անցել էին նոցա, խռովարարների կողմը» (ՀԱՍ, ֆ. 477, ց. 1, գ. 10, թթ. 44-45):

<sup>159</sup> Որոշ աղբյուրներում նրա ազգանունը նշվում է «Շահբուդաղյան» ձևով:

էին զորանոցների մոտով, այդ նոր ամուսնացած գնդապետը, արտասուքը աչքերին, որպես մի սրբուխյուն հարկավոր համարեց համբուրել իրանց այնչափ հարազատ այդ կարմիր ցնցոտին...»<sup>160</sup>: Եվ ի՞նչ, պատժվե՞ց այս ուրացող և անպատասխանատու սպան: Իհարկե ոչ: Եվ մենք հետագայում նրան տեսնում ենք Կարսի ռազմաճակատում, իր գնդի հետ «ամենամոթ կերպով» փախչողների առաջին շարքում...<sup>161</sup>

Ամենուրեք «ապստամբությունը կատարվեցավ զորքի կողմե», որի պատճառով էլ «Բյուրո-կառավարությունը վստահություն չուներ կանոնավոր զորքին վրա»<sup>162</sup>: Նույն խռովության պատճառով, «պետականության գաղափարը, որ առանց այն էլ ուժեղ չէր մեր նորաստեղծ ազգային բանակում, ավելի ևս թուլացավ»<sup>163</sup>:

Անպատասխանատվության և անկարգապահության ցայտուն օրինակ է ՀՀ բանակի հոկտեմբերի 14-ի հարձակումը, որը նախատեսված էր արևածագին, սակայն «գնդապետների և շտաբների անհոգության պատճառով»<sup>164</sup> սկսում է որոշված ժամից երկու ժամ, իսկ Հարամ Վարդանի ամրությունների ուղղությամբ գործող թևում՝ 3.5 ժամ հետո, իսկ աջ թևի մի զորամաս «իր թնդանոթներով երեք ժամ հետո հասած էր իրեն համար որոշված վայրը»<sup>165</sup>:

Անպատասխանատվության մեկ այլ ցայտուն օրինակ է խմբապետ Կնյազի արածը. ստանալով հրաման հետախուզելու ձախ թևը, նա «կես ճանապարհից վերադարձել էր հանգստացուցիչ հաղորդագրությամբ», հայտնելով թե այդ թևի վրա թշնամի չկա<sup>166</sup>:

Ահավասիկ անփութության ևս մեկ արտառոց օրինակ: Հոկտեմբերի 22-ին Սեպուհի բրիգադայի շտաբը հաստատվում է Կարսի նահանգի

<sup>160</sup> ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 18, թ. 21:

<sup>161</sup> Նույն տեղում:

<sup>162</sup> Վահե Արծրունի, *նշվ. աշխ.*, էջ 46:

<sup>163</sup> Ս. Վրացյան, «Հայաստանի Հանրապետություն», Երևան, 1993, էջ 426:

<sup>164</sup> Արտաշես Բաբայան. «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 57:

<sup>165</sup> ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թ. 5, էջ 84:

<sup>166</sup> Արտաշես Բաբայան. «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 61:

Ռադիկալիզմի մտլոկանները գյուղի մի բնակարանում, ուր ապրում էր մոլոկան մի պառավ իր թոռան հետ: «Մեր հեռագրատան ծառայողներն ընդհանուր առմամբ խոսում են ռուսերեն, գրությունների մեծ մասը նույն լեզվով է կատարվում և օ, զարմանք, մոլոկան ընտանիքը նստած այստեղ լսում է ամեն բան»<sup>167</sup>: Եվ սա այն դեպքում, երբ մոլոկանների վերաբերմունքը դեպի ՀՀ-ը խիստ թշնամական էր:

Իսկ գլուխ գործոց հիմարություն է հետևյալը. չորրորդ գնդի հրամանատար գնդապետ Դմիտրի Միրիմանյանի հանձնարարությունով, սեպտեմբերի 13-ը և 14-ի գիշերը Կարաուրգան կայարանում կայանում է հայ և թուրք սպաների միացյալ... խնջույք, որպեսզի «հնարավոր ըլլար գոնե կոնյակի ազդեցության տակ տեղեկություններ կորզել տաճկական ներքին իրադարձություններուն մասին»: Կերուխումի ընթացքում հնչում են փոխադարձ «կեցցե»-ներ և «ուռու»-ներ, «գնդապետ Միրիմանյանի ստորադասները հոգեկան ամենամեծ հաճույքով կոնյակի շիշերը կպարպեին որկրամոլ, այլ ծուղակե չբռնվող թուրք սպաներուն կենացը»: Եվ ի՞նչ: Թուրք սպաների մեկնումից քիչ անց, թուրք հետախույզները թափանցում են քեֆի կետը և կոտորում շատերին, իսկ մի քանի ժամ անց սկսվում է թուրքական «չնախատեսված», «անակնկալ» հարձակումը<sup>168</sup>, որին հետևում է հայկական նահանջը առանց լուրջ դիմադրության: Ամենից շուտ փախչում է գնդապետ Միրիմանյանը<sup>169</sup>... Ոչ ոք պատասխանատվության չի կանչվում այս այլանդակ վարքի համար:

Անպատասխանատվությունը համատարած է եղել նաև պետական ողջ վարչամեքենայում<sup>170</sup>:

<sup>167</sup> Անանուն, «Ազատ, անկախ և միացյալ Հայաստանի վերջին օրերը», էջ 101:

<sup>168</sup> Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 83:

<sup>169</sup> ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թ. 350: Տես նաև նույնը, թ. 352: Եվ ասել, թե Միրիմանյանը քաջ և խիստ հրամանատարի համբավ է ունեցել... (Գարեգին արք. Հովսեփյանց, «Կյանքիս ամենազգեախտ օրը և երջանկությանս բոլորը», տես «Ոգուն շապավիհներու արդյունքը», էջ 38):

<sup>170</sup> ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 12, թ. 77:

Հետևաբար, լիովին իրավացի է Կարսի երբեմնի նահանգապետը, երբ հաստատում է, որ «Կարսը ընկավ ոչ պարտված, նա զոհ դարձավ մեր ոճրագործ անհոգություն»<sup>171</sup>:

#### Ք. 2. 4. Դասալիքյունը

Սա ընդհանրապես բանակի մահացու հիվանդություններից է, հասարակության «ներքին թշնամին»<sup>172</sup>, որի դեմ պետք է պայքարել ամենայն խստությամբ: Դրան հակառակ, սակայն, դասալիքներն արժանանում էին իրենց հարազատների հոգածությունը, նրանց միջոցով ձևեր գտնում ծլկելու ռազմաճակատից, իսկ ճարպիկները և «ուժեղների» տղերքը ճողոպրում էին Թիֆլիս: Ստ. Ղորղանյանը իրավացի է, երբ դասալքության պատճառները դիտարկում է «կառավարչական ամբողջ սխտեմի» համատեքստում<sup>173</sup>: Այդ պատճառների մեջ առաջնայիններից է եղել կողոպտելու մոլուցքը: Ստ. Ղորղանյանն իր հուշերում գրում է, որ ամեն տեղից, նույնիսկ Օլթիի ուղղությամբ շարժած զորամիավորումների հետ կապ չունեցող ամբողջ գնդեր դասալիք էին լինում՝ Օլթի երթալով թալանին մասնակցելու համար<sup>174</sup>:

Գործող բանակում դասալքությունը համարյա անշրջելի դարձավ հոկտեմբերի 14-ի հակահարձակման անհաջողությունից հետո: Դասալքության առաջն առնելու և հավանական դասալիքներին վախեցնելու համար, Կարսի հրապարակներից մեկում կախաղան է դրվում: Սակայն,

<sup>171</sup> Նույն տեղում, գ. 7, մաս 3, թ. 421:

<sup>172</sup> Որակումը Գարեգին եպ. Հովսեփյանցինն է. տե՛ս նրա «Մեր թշնամիները» հրատարակված հոդվածը («Էջմիածին» շաբաթաթերթ, 4 հոկտեմբերի 1920, թ. 12, էջ 181-183) և նույնի «Ներքին թշնամին» հոդվածը, գրված Ալեքսանդրապոլում (ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 93, թթ. 20-21) (հոդվածները տե՛ս «Ոգուն չապավինելու արդյունքը», էջ 75-80): Վերջինիս մեջ հեղինակը գրում է, թե «մեր աչքում տաճիկն ավելի բարձր է իբրև թշնամի, քան այդպիսի ներքին թշնամին՝ դասալիքը» («Ոգուն չապավինելու արդյունքը», էջ 78):

<sup>173</sup> ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 2, թ. 167:

<sup>174</sup> Նույն տեղում, թթ. 265-266:

դա էլ չի ազդում, քանի որ գեներալ Փիրումյանը ռազմական տրիբունալի նախագահ է նշանակում իր փեսա, փոխգնդապետ Միրզոևին, որը 9-10 ամիս առաջ արատավորված էր ֆինանսական զեղծումների համար՝ յուրացրած լինելով իր գնդի զինվորներին հատկացված սննդի մի մասը: Այդպիսի դատավորի առկայությունը, «այդ դատարան չէր, իհարկե, այդ մի նախատինք էր, մի ծաղր իրավակարգի, որ ... բնորոշում էր բարքերը և մեր ժամանակը...», - դառնությունը արձանագրում է Կարսի երբեմնի նահանգապետը իր հուշերում<sup>175</sup>:

Դասալքությունն աներևակայելի չափերի հասավ մանավանդ Կարսի անկման օրից սկսյալ: Բաբելոնյան խառնակություն էր տիրում<sup>176</sup>: Հազարավոր դասալիքներին ՀՀ իշխանությունները չեն պատժում: Ի տես այս խայտառակ իրավիճակի, ափերից դուրս ելած Սեպուհը անձամբ գնդակահարում է երկու դասալիքի, որոնցից մեկը բախտի քմահաճույքով ողջ է մնում<sup>177</sup>:

Դասալքությունը համակել էր նաև քաղաքացիական իշխանություններին: Իր հուշերում Շիրակի նահանգապետ Կարո Սասունին, անըմբռնելիորեն, արդարացնում է նման վարվելակերպը<sup>178</sup>: Նա Ալեքսանդրապոլի քաղաքապետ Պարույր Լևոնյանի հետ «թյուրքերի դեռ Ա-

<sup>175</sup> ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թթ. 375-380:

<sup>176</sup> Անանուն, «Ազատ, անկախ և միացյալ Հայաստանի վերջին օրերը», էջ 109:

<sup>177</sup> Նույն տեղում, էջ 110:

<sup>178</sup> Ներքին գործերի նախարար Ռուբեն Տեր-Մինասյանը հեռագրով պահանջել էր, «որ թուրքերը քաղաքը գրավելու պարագային, իրենց պաշտոնի գլուխը պետք է մնան քաղաքագլուխը, վարչության անդամները, շրջանային ինքնավարության նախագահը և վարչության անդամները. միայն նահանգապետը արտոնված էր հեռանալ քաղաքեն»: Այս հեռագիրը քննարկվում է Ալեքսանդրապոլում՝ նոյեմբերի 1-ի երեկոյան, «և այդ տեղ գտնված կառավարության անդամներն ու գործիչները գրեթե միաձայնությամբ որոշեցին, որ վեր[ը] հիշված պատասխանատու պաշտոնյաները իրավունք ունին հեռանալու, նկատի ունենալով թրքական բարբարոսությունները» (ՀԹՊ, 1926, թիվ 8, էջ 93): Սա ևս ապացույց է այն բանի, թե ոչ միայն բանակում, այլև քաղաքացիական վարչամեքենայում կարգապահությունը գտնվել է շատ ցածր մակարդակի վրա:

խուրջան չհասած և առանց կառավարութեան թուլտրուիթյան, լքել են իրենց դիրքերը և հեռացել»<sup>179</sup>: Այդուհանդերձ, «արտակարգ դատարանը, յուր վերջին նիստում քննելով Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ Պարույր Լևոնյանի ու վարչութեան անդամների պաշտոնալքման գործը[Ն] գտել է նրանց արդար»<sup>180</sup>:

Դասալիքների «արդարացումը» համընդհանուր երևույթ էր, որն է՛լ ավելի էր անբարոյականացնում ընդհանուր հասարակական մթնոլորտը:

#### Բ. 2. 5. Չհաշվարկված և անհարկի նահանջներով զորքի բարոյալիումը

Պատերազմին անպատրաստ լինելու հետևանքներից մեկն էլ անիմաստ և ռազմական անհրաժեշտութունից շառաչացած նահանջների շարանն էր, որը կանգ առավ միայն սեպտեմբերի վերջին՝ Կարսի մատուցներում: Այս ժամանակահատվածում, թուրքական զորքի հետ հայկական զորքը չունեցավ լուրջ ընդհարումներ: Այդ նահանջներն է՛լ ավելի բարոյալքեցին զորքը:

#### Բ. 2. 6. Հայկական և թուրքական էթնոհոգեբանական և ռազմահոգեբանական առանձնահատկությունների ամտեսումը

Սա ռազմարվեստի կարևորագույն գործոններից մեկն է, որը հայկական կողմը հիմնովին անտեսել է հայ-թուրքական պատերազմում: Ցարական բանակին սովոր ռուս և ռուսախոս բարձրաստիճան հրամանատարները հայոց բանակի զինվորին վերաբերվել են իբրև ռուսների, մինչդեռ, պայմանավորված ազգային հատկանիշներով, հայ և ռուս զինվորներն ունեն որոշակի տարբերություններ: Ընդհանուր վերցրած, հայ

<sup>179</sup> «Ժողովուրդ» թերթ, օրգան Հայ ժողովրդական կուսակցության, Երևան, թիվ 182, 1920 թ., 9 նոյեմբերի, էջ 2, «Քրոնիկոն» սյունակը:

<sup>180</sup> «Ժողովուրդ», թիվ 192, 1920 թ., 24 նոյեմբերի, «Քրոնիկոն» սյունակը, ենթավերնագիր՝ «Պարույր Լևոնյանի արդարացումը»:

գինվորը հարձակման ժամանակ համարձակ է և թշնամու ուժն արհամարհող: Մեկ այլ հատկանիշ (որը նկատի է ունեցել գեներալ Սիլիկյանը, բայց դրա հետ հաշվի չեն նստել), այն է, որ հայ գինվորին, մարտական գործողությունների ժամանակ, եթե ստիպում են սպասել (մանավանդ անհարկի կամ չտրամաբանված), նա «շուտով կորովազուրկ» է լինում<sup>181</sup>:

#### Գ. Կարսի անկման բարոյահոգեբանական պատճառները

Այս բաժնում բերվող պատճառներն ու կատարվող դատողությունները ճիշտ են ոչ միայն ՀՀ բանակի, այլև ՀՀ պետական վարչամեքենայի և պետության հայազգի հասարակության համար:

Առանձնապես կանգ չենք առնելու հայկական բանակում և ընդհանուր վերցրած՝ Հայաստանի առաջին հանրապետությունում բոլշևիկյան քարոզչության ավերիչ ազդեցության վրա: Այդ մասին չափազանց շատ է գրվել:

Մեր կարծիքով, բոլշևիկյան քարոզչությունը (իր հիմնական երկու ազգակործան բաղադրիչներով՝ հայոց միակ փրկությունը Խորհրդային Ռուսաստանին կցվելու և թուրքերին ու ադրբեջանցիներին «եղբայր» ճանաչելու դրույթներով) չէր կարող հաղթել հայկական հասարակությանը, եթե նրա մարմինն ունենար մեծ դիմադրատղականություն ու վարակված չլիներ բարոյական և հոգեբանական բազմաթիվ ախտերով, որոնցից կարևորագույնները նշում ենք ստորև:

##### Գ. 1. Կռվելու և հաղթելու կամքի բացակայությունը և նույնի՝ թշնամու մոտ գերազանցությունը

Այս հույժ կարևոր գործոնը նշում են բոլոր հուշագրողներն ու փաստաթղթերի հեղինակները՝ առանց բացառության, թեև յուրաքանչյուրը դա կատարում է տարբեր ուժգնությամբ: Ոչ միայն ՀՀ բանակը, այլև հայությունն ընդհանրապես «կռվիլ չուզելու և չտոկալու հիվանդությամբ

<sup>181</sup> ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թ. 6, էջ 83:

մը վարակված» էր<sup>182</sup>, մինչդեռ «բարոյական ուժը կամ կորուվը գլխավորագույն գենքն է գորքին, կովի դաշտին վրա հաղթական ըլլալու համար»<sup>183</sup>: «Հայ գորքը վտանգին սերը չէր ճաշակած»<sup>184</sup>, «Հայ դեկավարները Սպարտայի վարդապետությունը լսեր էին, առանց, սակայն, անոր հոգեբանությունը թափանցելու»<sup>185</sup>: Հայ զինվորը չէր հաղթել մահվան վախը: Գերագույն գորահրամանատար, գեներալ Նազարբեգյանը «լավատեսներեն չէր Հայաստանի ապագայի մասին»<sup>186</sup>: Սիրիկյանի շտաբի պետ գնդապետ Վեքիլյանը խոստովանում էր, թե «հայ զինվորականությունը հավատք չուներ թուրքերը հաղթելու»<sup>187</sup>: Ինչպե՞ս ունենար, եթե տևաբար ական-թալանով վարակված լինելով, «նա ինքն էլ կորցրել էր իր հավատը գեպի իր կարողությունը»<sup>188</sup>: Իսկ Հարամ Վարդանի ամբուսթյունների պաշտպանություն հրամանատար, գնդապետ Փերվերդիև իր գորամասերին օրերով բացատրում էր, թե «ինչ ճանապարհներով պետք է հեռանալ, փախչել, երբ թշնամին գալու լինի...»: Կարսի նահանգապետն այդ մասին տեղեկացնում է Փիրոսյանին, որը քննություն կատարելով, պարզում է, թե «Փերվերդիև արբած էր, նա հայտնի արբեցող է և ես նորան մի երկու օրով պատվիրեցի բանտարկել...»<sup>189</sup>:

Կովելու կամքի բացակայությունն առումով ուշագրավ է Սեպուհի ձեռքը գերի ընկած մի թուրք վաշտապետի խոստովանությունը, թե թուրքական հրամանատարության իր հաղթանակի նկատմամբ հավատքի հիմքերից էր այն, որ «ձեր գորքը ո՛չ թե չէր կրնար դիմանալ մեզ, այլ՝

<sup>182</sup> ԿԱՊ, «Մարտկոց», 1932 թ., 29 հոկտեմբերի, էջ 2:

<sup>183</sup> Նույն տեղում, 1932 թ., 1 նոյեմբերի, էջ 2:

<sup>184</sup> Նույն տեղում, 1932 թ., 8 նոյեմբերի, էջ 1:

<sup>185</sup> Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 90:

<sup>186</sup> Նույն տեղում, էջ 380:

<sup>187</sup> Նույն տեղում, էջ 33:

<sup>188</sup> ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 2, թ. 306:

<sup>189</sup> Նույն տեղում, մաս 3, թ. 370: ՀՀ բարձրաստիճան սպաների զգալի տոկոսն աչքի էր ընկնում նաև հարբեցողությանմբ, այս սովորույթը «վաստակած» լինելով ցարական բանակում:

պիտի չկուվեր մեր դեմ»<sup>190</sup>: Այսինքն, թուրքերը հայ զինվորի մարտական կարողությունները չէին թերագնահատում, սակայն լավատեսյակ լինելով երկրում ու հատկապես բանակում տիրող բարոյահոգեբանական վիճակին, պահը հարմար էին համարում ծնկի բերելու հայությունը: Կարաբեքիրը իր հուշերում շատ է գրում այն մասին, թե իրեն չափազանց դժվար եղավ համոզել միլլի շարժման ղեկավարությունը (որը կենսամահու կոչվ էր մղում Փոքր Ասիայի ափ ելած ու դեպի Անատոլիայի խորքերն առաջացող հունական բանակի դեմ և խիստ կարիքն ուներ Կարաբեքիրի տրամադրություն տակ գտնվող զինուժին և ռազմամթերքին)՝ ՀՀ-ի դեմ պատերազմն սկսելու ճիշտ պահի հարցում: Մարտական ոգի կոչվող բարոյահոգեբանական հզոր գեները նա հիանալիորեն գործածեց: Կարսի անկման նախորդ օրը՝ իսլամական ուրբաթին, նա դիմել է կիսամերկ ու թերասնված իր զորքին<sup>191</sup> և ցույց տալով Կարսը, նրանց խոստացել է քաղաքի գրավման դեպքում նրանց թողնել քաղաքի հայ բնակիչների սնունդն ու հանդերձանքը:

Պարտվողական հոգեբանությունը վարակված էր ոչ միայն բանակը, այլև ողջ հասարակությունը: «Հոկտեմբերի առաջին օրերին» Կարս ուղևորված Գարեգին եպս. Հովսեփյանցը գիշերը հասած լինելով քաղաքի երկաթուղու կայարանը, այնտեղ ծանոթանում է «ժողովրդական կարծիքների և ճնշված տրամադրության հետ: Երկմտության և մասամբ հուսալքության ոգին փռել էր յուր թևերը ժողովրդի բացասական հոգեբանության վրա: Ոմանք չէին քաշվում ասելու, թե այս պատերազմը պիտի վերջանա մեր պարտությունով»<sup>192</sup>: Նույն հուշագրողը քիչ անդին

<sup>190</sup> Վահե Արժրունի, նշվ. աշխ., էջ 291:

<sup>191</sup> Բոլոր հուշագրողները հաստատում են Կարս մտած թուրք ասկյարների և քուրդ բաշիրեզուկների այս վիճակը: Նրանց առաջին գործն է եղել, կոտորածն սկսելուց առաջ, մերկացնել հայերին և նրանց հագուստը հագնել:

<sup>192</sup> Գարեգին առբ. Հովսեփյանց, «Կյանքիս ամենադժբախտ օրը և երջանկությանս ընկած», «Ոգուն չապավինելու արդյունքը», էջ 28: Ժողովրդի և բանակի պարտվողական հոգեբանությունը վարակված լինելու մասին տե՛ս նաև նույնը, էջ 37-39; ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թ. 5, էջ 83:

դառնություններ արձանագրում է. «Ազգերի պատմության մեջ դժվար է գտնել այնպիսի խայտառակ պարտություն, ինչպես մերն էր այդ օրերին: Միայն թաթարների արշավանքների ժամանակ պատահել են այսպիսի անհասկանալի երևույթներ, ընդդիմության կատարյալ բացակայություն լինում դեմ»<sup>193</sup>: Անկման օրը Կարսում գտնված և գերի ընկած նախարար Արտաշես Բաբայանն էլ նույնն է վկայում. «Դիմադրություն չեղավ. վիրավորներ և սպաննվածներ (հայկական,- Գ. Յ.) զորքից չկային: Տաճիկներից վիրավորված էին հինգ ասկյար միայն»<sup>194</sup>: Մինչև 30 հոկտեմբերի ուշ երեկոն, թուրքական մի գումարտակ և քուրդ ձիավորներն են գրավված պահել քաղաքը<sup>195</sup>: Ժողովրդի հոգեկան դրությունը հայտարարելով «անկայուն», Ս. Վրացյանը հայտնում է, որ նա «իրեն սպառնացող ահավոր վտանգի դիմաց անկարող եղավ բավարար կամք և վճռականություն ցույց տալ»<sup>196</sup>:

Շատ դիպուկ է Հայ Գնդունու հաստատումը. «Իրենց կոչումին բարձրությունը չգիտցող մեր մտավորականներն ու գլուխները՝ հայկական բանակին ռազմական դիրքերու վրա կրած պարտությունն առաջ, այո՛, սաղմնավորեր և պատրաստեր էին Կարսի անկումն ու գրավումը: Ուրիշ խոսքով, Կարսը, հայկ. թիկունքին մեջ հոկտ. 30-են ավելի կանուխ ինկած էր անարժան և դավաճան ղեկավարներուն ձեռքով»<sup>197</sup>:

## Գ. 2. Չինվորական բարձրագույն հրամանատարության և պաշտպանության նախարարության մեջ անմիաբանությունը, նախանձը և միմյանց նկատմամբ դավերը

Վերևում արդեն գրել ենք Սեպուհ-գորահրամանատարներ հակամարտության մասին: Սեպուհի «հետ էին հայրենասեր սպայության և զորքին

<sup>193</sup> Գաբեգին առ. Հովսեփյանց, «Կյանքիս ամենազժբախտ օրը և երջանկությանս րոպեն», «Ոգուն չապավինելու արդյունքը», էջ 41:

<sup>194</sup> Արտաշես Բաբայան. «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 62:

<sup>195</sup> Նույն տեղում:

<sup>196</sup> Սիմոն Վրացյան, «Հայաստանի Հանրապետություն», Երևան, 1993, էջ 521:

<sup>197</sup> ԿԱՊ, «Մարտկոց», 1932 թ., 10 նոյեմբերի, էջ 2. հաստագրումը մերն է,- Գ. Յ.:

սիրտն ու հոգին»<sup>198</sup>, մինչդեռ ուսադրավոր գեներալների ու գնդապետների համար նա «խորթ զավակ» էր<sup>199</sup>, «աչքի փուշ»։ Վերջիններս նրան, Դրոյին, Անդրանիկին և նման հայդուկներին արհամարհանքով «խմբապետ» էին կոչում<sup>200</sup>, որոնց գոյությունը, իրենց համոզմամբ, «անհամապատասխան [էր] արդիական պետության մը կենսական շահերուն և պահանջներուն, զայն կհամարեր տեսակ մը դիտմամբ ստեղծված հակադիր ուժ զինվորականությունը»<sup>201</sup>։ Սեպուհը, իր կարգին, վստահություն չուներ զորահրամանատարների վրա<sup>202</sup>։ Գեներալներն ու գնդապետները անընդհատ դավեր էին նյութում Սեպուհի դեմ՝ աշխատելով որքան հնարավոր է նրան հեռու պահել ռազմական գործողությունների բեմից։ Փիրումյան-Սեպուհ անհամաձայնությունը «մեկ կողմե՝ բնական զարգացումն էր»՝ Փիրումյան-նահանգապետ Ղորղանյան հակամարտությանը, «և մյուս կողմե՝ անուրանալի փաստն այն անհամերաշխությանը, որ սկիզբեն ի վեր գոյություն ուներ մեր կամավոր ռազմիկներուն և սպայությանը միջև»<sup>203</sup>։ Սեպուհի նկատմամբ այս անհար-

<sup>198</sup> Նույն տեղում, 1932 թ., 5 նոյեմբերի, էջ 2:

<sup>199</sup> ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 1, թ. 66:

<sup>200</sup> Բացի զինվորական ակադեմիական կրթություն ունենալու կամ չունենալու հանգամանքից, այս արհամարհանքն ունի նաև հոգեբանական բացատրություն: Այս հայդուկներն ազգային-ազատագրական պայքարի ֆիդայական շրջանում դարձել էին ազգային խորհրդանիշ, իսկ ապազգային հրամանատարները, հոգեբանական նույնացում չունենալով հայ ազգի հետ, միևնույն ժամանակ ժխտում էին կամ առնվազն արհամարհում որպես հայ ազգի խորհրդանիշ ընկալվող ամեն բան (լեզու, պետություն և պետական խորհրդանիշներ [հիմներգ, բանակ, ևն.], անձեր և այլն): Ազգային խորհրդանիշներն անձնական և ազգային «հոգեբանական խտացումներ են» (Աբերտ Նալչաջյան, «Էթնիկական հոգեբանություն», էջ 173), իսկ զորահրամանատարների մեծ մասի հոգեբանական խտացումը ռուսական էր:

<sup>201</sup> Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 379: Սեպուհ-բարձրաստիճան զինվորականներ հակամարտության մասին հավելյալ տե՛ս ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 1, թ. 70; մաս 3, թ. 338; ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թ. 5, էջ 82; Անանուն, «Ազատ, անկախ և միացյալ Հայաստանի վերջին օրերը», էջ 96:

<sup>202</sup> Անանուն, «Ազատ, անկախ և միացյալ Հայաստանի վերջին օրերը», էջ 94:

<sup>203</sup> Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 149:

գալից մոտեցումը բարոյագրվում էր ժողովրդին, որը Սեպուհին ազգային հերոս էր համարում:

Քալանի բաժանման հարցում և այլ խնդիրներում անհամաձայնությունները պատճառով, գեներալներ Փիրումյանի և Հովսեփյանի հարաբերությունները լավ չէին<sup>204</sup>: Վերջինս «աններելի չափով» ատում և դավեր էր լարում իր անմիջական ստորադասներից, չորրորդ գնդի հրամանատար գնդապետ Միրիմանյանի<sup>205</sup>, ինչպես նաև կոչվում էր գնդապետ Հարությունյանի հետ<sup>206</sup>. առաջին գնդի այս հրամանատարի նկատմամբ գեներալները տհաճ զգացմունքներ էին տածում և «նորան միշտ Կարսում էին պահում»<sup>207</sup>: Փիրումյանին Կարսի բերդապետ նշանակելիս զորաց նախարարի օգնական գեներալ Միլիկյանը բողոքում է և ընդհարվում իր վերադասների, նախարար գեներալ Արարատյանի և սպարապետ Նազարբեգյանի հետ: Փիրումյանն «ուխտագնացություն է կատարում Երևան, դեպի Աստղերի պալատը»<sup>208</sup>, «ընկերական շրջանները» և դրությունը դյուխիչ ձևով փոխվում է» ու նա մնում է իր նոր պաշտոն-

<sup>204</sup> Սիմոն Վրացյան, «Հայաստանի Հանրապետություն», Երևան, 1993, էջ 508:

<sup>205</sup> Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 90: Հատկանշական է գլխավոր հրամանատար Նազարբեգյանի խոստովանությունը, որ գեներալներ Հովսեփյանն ու Փիրումյանը միջնորդում էին Միրիմանյանին՝ «այդ երկշտ և անպետք սպային ... գեներալի աստիճան տալու: Երբ հանդիմանեցի դորա համար գեներալ Հովսեփյանին, վերջինս խոստովանվեց, որ իրանք ուզում էին գեթ այդ միջոցով ազատվել այդ գնդապետից...» (ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թ. 353):

<sup>206</sup> ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 6, թ. 22:

<sup>207</sup> Նույն տեղում, գ. 7, մաս 2, թ. 267:

<sup>208</sup> Ստեփան Դորդանյանն իր հուշագրության մեջ հաճախ է հիշատակում Երևանում գանվող «Աստղերի պալատը», «այդ աներևույթ ուժը», որ «անշատ կառավարությունից և պարլամենտից, սնօրինում էր երկրի բախտը» (նույն տեղում): Մեր կարծիքով, նա նկատի ունի մասոնական կազմակերպությունը: Հետագայում, վտարանդիություն մեջ, ՀՀ կառավարության անդամներից մի քանիսը կարևոր պաշտոններ են զբաղեցնում մասոնական օթյակներում (Ալ. Խատիսյանը՝ շտաբանական ծեսի 33-րդ աստիճանի Մեծ վարպետ, Ս. Վրացյանը՝ 18-րդ աստիճանի մասոն են.):

նում<sup>209</sup>: Իր հերթին, գեներալ Փիրումյան, նրա շտաբի պետ գնդապետ Տեր-Առաքելյան և շտաբի ավագ սպա փոխգնդապետ Ավշարով «շարունակ կռվում էին իրար հետ, հայհոյում իրար...»<sup>210</sup>: Փիրումյան և Կարսի ամբուլթյունների հրետանու պետ գնդապետ Բաբաջանով «իրարու տակ փորելու և իրարու տապալելու» հարցում մրցում էին<sup>211</sup>: Գեներալների և գնդապետների մեծ մասը, ավարի բաժանման (տես ստորև) հարցերում անընդհատ տարակարծություններ ունենալով, միշտ իրար էին ամբաստանում և իրար հայհոյում<sup>212</sup>: Հոկտեմբերի 28-ին գեներալ Հովսեփյանին փոխարինած գեներալ Ղազարյանի գալուստը Փիրումյանը տհաճությամբ է ընդունում<sup>213</sup>: Ղազարյանը երբ մեկնում է Հովսեփյանի կայանը, այնտեղ ռազմական քարտեզ չի գտնում՝ ապացույցը իրենց գործի նկատմամբ սպանների համատարած անփութություն և անպատասխանատվության (այս մասին գրել ենք անկման ռազմական պատճառների բաժնում): Այս փաստն արձանագրող Ստ. Ղորղանյանը հայտնում է, որ Ղազարյանն «առանց այդ ռազմական քարտեզի, ինքը նապուլեոն (էլ լիներ՝ Գ. Յ.)՝ ոչինչ էր կարող անել»<sup>214</sup>:

<sup>209</sup> ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թթ. 392-393:

<sup>210</sup> Նույն տեղում, գ. 6, թ. 22: Արժե նշել, թե Վահան Տեր-Առաքելյանը ժամանակին եղել է Կոմիտաս վարդապետի աշակերտը Մայր աթոռ ս. էջմիածնի Գևորգյան ճեմարանում և, հավանաբար, հոգևորական դառնար՝ եթե Առաջին համաշխարհային պատերազմը չբռնկվեր:

<sup>211</sup> Նույն տեղում, գ. 7, մաս 3, թ. 430:

<sup>212</sup> Նույն տեղում, գ. 6, թ. 22-24:

<sup>213</sup> Դրա պատճառը այն էր, որ բարձրաստիճան գինվորականության կողոպուտի մասին նահանգապետի բողոքագրերի իսկույթունը ստուգելու համար, զորաց նախարար, գեներալ Արարատյանը 1919-ին որպես քննիչ Կարս էր ուղարկել Ղազարյանին, որը հաստատել էր բողոքների հավաստիությունը (ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 1, թթ. 67-68), թեև «ոչ ոք այդ թվալանի հերոսներից դատի շտրվեց և բոլորը մնացին իրանց տեղերում» (նույնը, մաս 2, թ. 291):

<sup>214</sup> ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 6, թ. 32:

«Սպանների և զինվորների փոխհարաբերությունը շատ մասերում մտերմական չէր»<sup>215</sup>. Ինչպե՞ս լիներ, եթե «հրամանատար կազմը շահագործում է[ր] մեր շարքային զինվորությունն իր անձնական օգուտների համար: Այդ միջոցորտում հասարակ զինվորը չէր կարող պետական դաստիարակություն ստանալ, նա տեսնում էր մեծերի օրինակը և իրան էլ, իհարկե, չէր մոռանում... Այդ առանցքում խոսք չէր կարող լինել զինվորական կորովի, գաղափարի մասին: Պետականությունը, հայրենիքը, ազգային պատվախնդրությունը, արդեն խորթացած, երանավոր ուրվականներ էին»<sup>216</sup>: Մի խոսքով, ՀՀ բանակում տիրում էին ռուսական բանակից ժառանգված «դեղովչինայի» այլանդակ բարքերը:

### Գ. 3. Կարսի նահանգի բաղաբացիական և ռազմական իշխանությունների միջև թշնամանքի հասնող հակամարտությունը

Սա ևս նշում են բոլոր հուշագիրները<sup>217</sup>: Մի կողմից Կարսի նահանգապետ Ստեփան Ղորղանյանի և մյուս կողմից բերդապետ, գեներալ Գանիել-բեգ Փիրումյանի, կենտրոնական հատվածի հրամանատար, գեներալ Արտյոմ Հովսեփյանի ու նրանց ենթակա գնդապետների միջև հարաբերությունները ծայր աստիճան լարված էին: Փաստորեն, նահանգում տիրում էր երկիշխանություն: Այս հակամարտությունն ուներ բազմաթիվ պատճառներ, որոնցից գլխավորներն են ալան-թալանի նկատմամբ գեներալների ու նրանց ենթակաների մեծ ախորժակն ու դրան նահանգապետի խիստ հակառակությունը, և, երկրորդ, նահանգի մուսուլման (թուրք, քուրդ, կարափափախ և այլն)

<sup>215</sup> Միմոն Վրացյան, «Հայաստանի Հանրապետություն», Երևան, 1993, էջ 508:

<sup>216</sup> ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 2, թթ. 304-305:

<sup>217</sup> Տե՛ս, օրինակ Միմոն Վրացյան, «Հայաստանի Հանրապետություն», Երևան, 1993, էջ 508: Գարեգին արք. Հովսեփյանց, «Կյանքիս ամենադժբախտ օրը և երջանկությանս թույլն», «Ոգուն շապավինելու արդյունքը», էջ 34: Արտաշես Բաբալյան. «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 59: Ստ. Ղորղանյանի հուշագրությունն ամբողջությամբ (ՀԱԱ, ֆ. 477):

բնակչության նկատմամբ վարվելիք քաղաքականության տրամագծորեն հակառակ լինելը զինվորականների և նահանգապետի մոտ: Նահանգապետը վարում էր այլազգիներին, մասնավորաբար քրդերին սիրաշահելու քաղաքականություն, մինչդեռ գեներալները, կողմնակից լինելով այլազգիների նկատմամբ կոշտ քաղաքականությանը<sup>218</sup>, իրականում հետապնդում էին մուսուլմաններին ալան-թալանելով հարստանալու ապառողջ նպատակներ: Փիրումյանը պահանջում էր իրեն նշանակել գեներալ-նահանգապետ և իրեն ենթարկել քաղաքացիական վարչությունը, մի բան, որին բացարձակապես զեմ էր նահանգապետ Ղորղանյանը<sup>219</sup>: Զինվորականների գործողությունների պատճառով, նահանգում թագավորում էին կամայականություններն ու բռնությունները: ՀՀ կառավարությունը, փոխանակ ալեքսանդ-

<sup>218</sup> Ալեքսանդր Խատիսյան, «Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը», «Հայրենիք», 1925, թիվ 6, էջ 50-51: Մեր կարծիքով, Կարսի անկման և առաջին հանրապետության կործանման քաղաքական պատճառների շարքում երկրորդական դեր չի խաղացել հանրապետության իր ազգային փոքրամասնությունների նկատմամբ հստակ քաղաքականություն չունենալու փաստը: Դրանից օգտվել են ամեն տեսակի պատեհապաշտները: Օրինակ՝ Կարսի գեներալները նահանգի հույներից կազմել էին կամավորական խմբեր, որոնք «մասնագիտացել էին» թուրքական և քրդական գյուղերի թալանման գործում (տես, օրինակ, ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թթ. 456-458), մի հանգամանք, որն իր բացասական դերն ունեցավ նահանգում ազգամիջյան հարաբերությունները սրելու հարցում: Այս խնդրին ավելի մանրամասն անդրադարձել ենք մեր «Հայ-քրդական հարաբերությունները Կարսի նահանգում 1919-1920 թվականներին» ուսումնասիրության մեջ («Մերձավոր Արևելք – Պատմություն, քաղաքականություն, մշակույթ (հոդվածների ժողովածու)», ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2002, էջ 158-169):

<sup>219</sup> Ալեքսանդր Խատիսյան, «Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը», «Հայրենիք», 1925, թիվ 6, էջ 51: Նահանգում 1919 թ. մայիսին հայկական գերիշխանության հաստատումից անմիջապես հետո, շատ փոքր ժամանակահատված, նահանգում հաստատվել է զինվորական իշխանություն և գեներալ Արտյոմ Հովսեփյանը նշանակվել է գեներալ-նահանգապետ (ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 2, թ. 230): Հովսեփյան-Ղորղանյան հակամարտության պատճառներից մեկն էլ դա էր (նույն տեղում):

րյան ոճով լուծելու Կարսի նահանգում իշխանություն երկվույթյան այս գորդյան հանգույցը, բավարարվում էր լսելով երկու կողմերին և... բարձիթողի մատնելով հարցի վճռումը:

Գեներալներ-Կարսի նահանգապետ հակամարտությունն ուղեկցվում էր երկկողմանի դավերով և նահանգում անիշխանության խորացմամբ: Այս հակամարտությունը մասնակցում էր նահանգի ՀՅԴ կառույցը, որի անդամների մի մասը նահանգապետի կողմն էր, մյուսը՝ գեներալներին: Այս կուսակցականներն ու զինվորականները, դուրս գալով իրենց իրավասություններից, խառնվում էին նահանգի և առհասարակ ՀՀ-ի քաղաքացիական, վարչական, տնտեսական ու կադրային գործերին, ինչի դեմ նահանգապետն անընդհատ բողոքում էր<sup>220</sup>: Այս հակամարտությունը, իր ծանր հետևանքներով, շարունակվեց նույնիսկ պատերազմական գործողությունների ամբողջ ժամանակահատվածում<sup>221</sup> ու ճակատագրական և աղետաբեր եղավ թե՛ քաղաքի հայություն, և թե՛ առհասարակ հայ ժողովրդի ու հայկական պետականության համար<sup>222</sup>:

#### Գ. 4. Քաղաքական ու հատկապես ռազմական պատկառագրու առաջնորդ-իրամանատար(ներ)ի բացակայությունը

Հայ զինվորականություն շրջանում պատկառանք չէր առաջացնում գեներալ Նազարբեգյանի անձը: Նա, «նորաստեղծ Հայաստանի պահանջներուն բավարարություն տվող մարդը չէր»<sup>223</sup>, նա «ավելի շոյող ֆիկցիա էր, քան թե ցանկալի իրականություն - գեներալ Նազարբեգով

<sup>220</sup> ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 14, թթ. 1-2; նույնը, գ. 7, մաս 3, թ. 394-396:

<sup>221</sup> Գաբեգին աբ. Հովսեփյանց, «Կյանքիս ամենադժբախտ օրը և երջանկությանս ըրպեն», «Ոգուն չապավինելու արդյունքը», էջ 34; Արտաշես Բաբայան. «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 59:

<sup>222</sup> Ալեքսանդր Խատիսյան, «Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը», «Հայրենիք», 1925, թիվ 6, էջ 51; Արարատ Հակոբյան, «Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները 1918-1920», Երևան, 2005, էջ 274:

<sup>223</sup> Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 381:

թագավորում էր, բայց ոչ կառավարում»<sup>224</sup>: «Մեզ պակասում էր մի իշխանակից հրամանատար միայն և հայ քաջերը պատրաստ կլինեին կրակը նետվելու», և այդ զորահրամանատարի սրի հետևից «հայկական բանակն անձնուրաց կերթար»<sup>225</sup>:

Այս գործոնի առնչությամբ Հայ Գեղունին խոր վրդովմտով գրում է. «Քանի մը տասնյակ վարժապետներ և ասոնց մեջ ամենեն ավելի ճարպիկները», դավադիրները, սուտ հերոսներն ու կեղծ հեղափոխականները կկարծեին նախարար, վարչապետ, մեծամեծ ժողովներու նախագահներ եղած ըլլալ»: Նրանք շփտեին և, ավելի գատապարտելին, չէին էլ ուզում սովորել «այն բոլոր բաները, որոնք անհրաժեշտ էին, անխուսափելի էին երկիր և ժողովուրդ կառավարելու համար»<sup>226</sup>: Չկային «ոտքի կանգնած բազմութիւնն օգտագործող, կամքերը կոռոզ-կոփող վայրկյանի ղեկավարները»<sup>227</sup>, հրապարակում երևացող զորահրամանատարները «ոչ մի բարոյական հեղինակութիւն չէին ներկայացնում հայ զինվորի աչքում»<sup>228</sup>: Պատերազմում և խաղաղութիւն մեջ հաղթելու համար, հայ ժողովուրդը կարիքն ուներ,- և այսօր ևս ունի,- համազգային միասնութիւն, իսկապէ՛ս հայրենասեր, հեռատես, գաղափարապաշտ և պատկառազգու քաղաքական ու զինվորական առաջնորդների:

Ոչ միայն բանակի անձնակազմը, այլև հասարակ ժողովուրդը չէր հավատում իր զորահրամանատարների կարողութիւններին ու հարգանք չունէր նրանց նկատմամբ<sup>229</sup>:

Իսկ Հայաստանի Հանրապետութիւնն դեմ արշավող թուրքական բանակն ուներ քաղաքական ու զինվորական մեկ ղեկավար՝ 38 տարեկան, ռազմական ակադեմիական գերմանական բարձրագույն կրթու-

224 ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 16, թ. 41:

225 Նույն տեղում, գ. 6, թ. 82: Տես նաև նույնը, գ. 7, մաս 3, թ. 357:

226 ԿԱՊ, «Մարտկոց», 10 նոյեմբեր 1932, էջ 2:

227 ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թ. 6, էջ 97:

228 ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 6, թ. 252:

229 Նույն տեղում, գ. 7, մաս 3, թ. 381:

Թյուն (որը հատկանշվում է կարգապահության նկատմամբ խստագույն մոտեցումով) ստացած, Առաջին աշխարհամարտին մեծ փորձառություն ձեռք բերած, «ընդունակ և լուրջ զորավար»<sup>230</sup>, պատկառազու մեկ անձ՝ Քյազիմ Կարաբեքիր փաշան, որն իր անձի մեջ միավորում էր կարևոր որակներ՝ քաղաքագետն ու դիվանագետը, ռազմական գործիչն ու թուրքական ազգային գաղափարախոսություն՝ համաթուրքականության գաղափարակիրն ու դրա անձնական վառ օրինակը:

Առաջնորդի անձնական օրինակը խիստ վարակիչ է դառնում մասնավորաբար արտակարգ իրավիճակներում, ինչպիսին է պատերազմը: Մինչ Կարաբեքիր անձնապես էր առաջնորդում իր զորքերը և հեռադիտակը ձեռքին հետևում էր ռազմական գործողություններին, տեղում օպերատիվ կարգով որոշումներ ընդունում ու հրամաններ արձակում, հայոց բանակի հրամանատարությունը նստում էր փափուկ բարձերի վրա՝ նրեանում, Ալեքսանդրապոլում կամ Կարսի ձորում գտնվող շտաբի շենքում (որտեղից «երկնքի մի կտոր տեսնելու հնարավորություն ուներ միայն»<sup>231</sup>) և ոչ թե քաղաքին իշխող Կարազաղի ամրություններում, որտեղից հեռադիտակով կարելի էր հետևել գործողություններին<sup>232</sup>: Փիրումյանը «շատ քիչ անգամ Կարսեն դուրս եկավ իրեն հանձնված շրջանին և դիրքերուն ու ամրություններուն ծանոթանալու»<sup>233</sup>: Ճակատա-

<sup>230</sup> Նույն տեղում, գ. 17, թ. 22:

<sup>231</sup> Արտաշես Բաբայան. «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 68:

<sup>232</sup> Այս մասին տես, օրինակ, Արտաշես Բաբայան. «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 68; ԿԱՊ, «Մարտկոց», 1932 թ., 8 նոյեմբերի, էջ 2; ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թ. 368: Ուշագրավ է այն փաստը, որ արդեն գերություն մեջ, երբ Կարաբեքիրի շտաբի պետ Խալիլ բեյը հարց է տալիս Սիրիկյանի շտաբի պետ Վեքիլյանին, «Թե ո՞ր դիրքերից էիք դուք, գեներալ Փիրումովի հետ, վերջին օրերը, դիտում ռազմաբեմը», նա պատասխանել է՝ «Կարսի ամրությունների վերայ»-ից: «Մենք Կարաբեքիր փաշայի հետ այդպես էլ կարծում էինք», - հեգնել է թուրք գնդապետը (ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թ. 368):

<sup>233</sup> Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 383: Նույնը հաստատում է նաև Ստ. Ղորղանյանը: Հետևաբար, հիմնադուրկ է պատմաբան Հարություն Թուրչյանի (1900-1978)

գրական այդ օրերին նա ավտովթարի հետևանքով կոտրել էր ոտքն ու պառկում էր շտաբի շենքում:

Գ. 5. Ալան-թալանի մոլուցքը ԳՅ քաղաքական ղեկավարության և բանակի՝ Կարսի նահանգում գտնվող գորամիավորների և մաուզերիստների մոտ

Այս մասին հարչուրավոր վկայություններ կան բոլոր հուշագրողների մոտ, ինչպես նաև արխիվային փաստաթղթերում: Թալանի հարցում իր անձը վարկաբեկել էր գեներալ Դանիել-բեգ Փիրումյանը: Այս ոլորտում հատկապես «փայլում էր» գեներալ Արտյոմ Հովսեփյանը, որը պատերազմական գործողությունների օրերին ավելի շատ զբաղված էր իր թալանածներն ապահով տեղ հասցնելու հարցով, քան զորամիավորումների հրամանատարությունը<sup>234</sup>: Իր վկայությունը վերագրելով ժողովրդին, Գարեգին արք. հայտնում է, որ «նորան «թալանչի» և «անասունների վաճառական» էին անվանում, որ թուրք և քուրդ տարրերից հափշտակելով նրանց անասունները, որպես խռովարարներին պատժելու պատրվակով, վաճառում էր Վրաստանի վերա»: «Հարկավոր չէ բացատրել, թե ինչ ներգործություն պիտի ունենային շարքային զինվորների

---

կարծիքը, որ Փիրումյանը «այն զինվորականներից չէր, որոնք ապահով հեռավորությունից են ղեկավարում կռիվը: Դանիել-բեգն անմիջապես մեկնում է կրակի առաջին գիծը, սակայն ավտոմոբիլային աղետ է տեղի ունենում, որի հետևանքով կոտրվում է նրա ոտքը» (Հարություն Թուրչյան, «Սարդարապատի հերոսը (Դանիել-բեգ Փիրումյան) (1863-1922)», «Բանբեր Հայաստանի արխիվների», 1969, թիվ 1, էջ 179): Չժխտելով հանդերձ Գ. Փիրումյանի իսկապես մեծ ու հերոսական դերակատարությունը Սարդարապատի ճակատամարտում, ցավոք, հաստատում ենք, որ նա տիպիկ օրինակն է այն հերոսի, որը չդիմանալով գայթակղություններին, հեշտությունը ընտրում է անպատասխանատվության և անբարոյականության ուղին և այդ ճանապարհով ընթանում դեպի սեփական անձի կործանում: Այստեղ արժե հիշել Նժդեհի իմաստուն միտքը. «Կյանքում դժվար է հերոսանալը, բայց ավելի դժվար է հերոս մնալը, իսկ է՛լ ավելի դժվար՝ հերոս մեռնելը»:

<sup>234</sup> Այս մասին տես ՆԹՊ, «Հայրենիք», 1926, թ. 5, էջ 87:

վերա իրենց գեներալի մասին այսպիսի գրույցները, որ թուշում էին բերնե բերան», - անմիջապես ավելացնում է գերաշնորհ հայրը<sup>235</sup>: Սակայն այդ զինվորները կարիքը չունեին այդպիսի «գրույցներ» լսելու, քանի որ իրենց մի մասը ևս պարտադրաբար, ոմանք էլ՝ սիրահոժար կերպով, մասնակից է եղել այդ կողոպուտներին: Ընդ որում, զինվորները տնային իրերը կողոպտելուց հետո, սկսում էին հնձել հարուստ արտերը և թույլ չտալ, որ «ավելի սոված հայ գյուղացիությունը գեթ մասամբ օգտվեր ձրիաբար ձեռք անցած այդ հսկայական հարստությունեն»<sup>236</sup>: Հուշագրողը դիպուկ նկատել է տալիս. «Հոգեբանական այս դրույթյան մեջ՝ հայ զինվորը ո՛չ ընդունակ էր կռվելու և ո՛չ ալ իր կացությունը մասին վճիտ գաղափար մը ունենալու»<sup>237</sup>: Կողոպուտի հարցում, «ըստ աստիճանների, հրամանատարական կազմը բաժանել էր իրար մեջ «ազդեցությունների զոնաները» և ամեն մեկը գծել էր իր տնտեսական իրավասություն սահմանը», - նկատել է տալիս նահանգապետ Ղորղանյանը<sup>238</sup>:

Թալանել են նույնիսկ պետական պաշտոնյա, ՀՀ բանակի Օլթի մուսթից հետո այնտեղ գավառապետ նշանակված քուրդ էզո բեգի 800 գլուխ ոչխարի հոտը՝ նրա երկու հովիվներին սպանելով<sup>239</sup>: 1920 թ. ամառվա ընթացքում, Կարսից մինչև Օլթի տարածքի թուրքական և քրդական գյուղերում լքված ունեցվածքը պետականացնելու Կարսի նահանգապետի առաջարկությունը երևան՝ հարուցում է կողոպուտով հղիացած բարձրաստիճան հրամանատարների թշնամանքը: Մի խոսքով՝ տի-

<sup>235</sup> Գարեգին առբ. Հովսեփյանց, «Կյանքիս ամենագոթբախտ օրը և երջանկությունս ըրպեն», «Ոգուն չապավինելու արդյունքը», էջ 35: Գարեգին արք-ի այս վկայությունը հաստատում են նաև Կարո Սասունին և Վահե Արծրունին. տես՝ ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թ. 6, էջ 87-88: Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 30: Կարսի նահանգապետ Ստ. Ղորղանյանի հուշերում տասնյակներով վկայություններ կան գեներալների ու գնդապետների, մասնավորաբար Հովսեփյանի թալանների մասին:

<sup>236</sup> Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 199:

<sup>237</sup> նույն տեղում:

<sup>238</sup> ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 2, թ. 272:

<sup>239</sup> նույն տեղում, թթ. 265, 269-271:

րել է «մեր դեմ խաղ չկա» սկզբունքը՝ հիմնովին ոտնատակ տալով օրինականությունն ու առհասարակ պետականության գաղափարը:

Ալան-թալանին մեծ ակտիվություն է ցուցաբերել առաջին գնդի հրամանատար, գնդապետ Հովհաննես Մազմանյանը: Քաջ և հայրենասեր սպայի համբավի տիրացած այս զինվորականը եղել է գեներալ Արտյոմ Հովսեփյանի աջ բազուկը թալանի գործում<sup>240</sup> և հօգուտ նրան ու սեփական անձին կատարում էր սպային ոչ վայել գործեր: Այդ հարցում նրան մեծապես օգնում էին, այսպես կոչված, «կամավորները»՝ ձիավոր մաուզերիստները<sup>241</sup>:

Ամենաթողությունն ու սանձարձակությունը հասել էին ամենավառ երևակայությունից անդին: Օրինակ, «երբ Կարսի նահանգում, զինվորական զրահի տակ, սկսվեց հռչակավոր թալանը»<sup>242</sup>, գեներալ Փիրումյանի և «Աստղերի պալատի»<sup>243</sup> մի անդամի միջև տեղի է ունենում հետևյալ հեռախոսազրույցը. «Ն ջան, ասում է գեն. Փիրումով, քեզ շատ եմ կարոտել, ել՞րբ ես գալու Կարս, թալանի քո բաժինը պահել եմ...»: Դորդանյանը հայտնում է, որ եթե նույնիսկ դա կատակ էր, ապա գոնե պետք չէ արվեր «հրապարակավ, Երևանի և Կարսի հեռագրատան բազմաթիվ պաշտոնյաների ներկայությամբ», որի հետևանքով այս խոսակցությունը «մի ժամից հետո բերանից բերան էր անցնում թե՛ Կարսում և թե՛ Երևանում...»<sup>244</sup>:

Թալանում էին ոչ միայն մուսուլմանների ունեցվածքն ու պետական հարստությունը, այլև, զինվորական կարիքների պիտակի տակ, բարձրաստիճան սպաները կողոպտում էին Կարսի ամրություններում

<sup>240</sup> ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 6, թ. 34: Արտաշես Բաբալյան. «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 59, 62:

<sup>241</sup> Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 59:

<sup>242</sup> Թալանն սկսվել է անգլիացիների կողմից Կարսի նահանգում իշխանությունը հայկական պետությանը փոխանցելուց անմիջապես հետո՝ 1919 թ. մայիսի երկրորդ կեսին:

<sup>243</sup> Տես թիվ 209 ծանոթագրությունը:

<sup>244</sup> ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 10, թթ. 39-40:

ցարական կառավարության կուտակած հսկայաքանակ գույքը<sup>245</sup>: Թալանն այնպիսի տարողություն էր ստացել, որ Կարսի անկումից մի շաբաթ առաջ, երբ որոշում են կարգի բերել բերդի ամրությունները, պարզվում է, որ նրանք զուրկ են էլեկտրականությունից ու ջրից, հեռախոսային և հեռագրական սարքերից, հետևաբար նաև կապից թե՛ միմյանց, թե՛ բերդի շտաբի ու հրետանու հրամանատարի հետ<sup>246</sup>: Գողացել էին նաև ավտոմեքենաները և Թիֆլիս տանելով՝ վաճառել<sup>247</sup>:

Կողոպուտներին մասնակից զինվորականները մնում էին անպատիժ: Երբ թալանն ահուելի չափեր է ընդունում ու հետաքննությամբ հաստատվում, Նազարբեգյանը խստորեն հրամայում է վերջ տալ դրան, բայց ոք ոք չէր ենթարկվում սպարապետի հրամանին: Որևէ ազդեցություն չի գործում նույնիսկ Փիրումյանին դատի տալու Նազարբեգյանի սպառնալիքը: Ավելին, Փիրումյանը դրանից հետո ստանում է ավագ գորավարի (գեներալ-լեյտենանտ) աստիճան...<sup>248</sup>

Թալանի հարցում գեներալներին ու գնդապետներին մեծ օժանդակություն են մատուցել մաուզերիստներն ու նրանց խմբապետները, որոնք Հայրենիքի պաշտպան «կամավորականների» պիտակի տակ հայտնվել էին Կարսի մարզում ու կցվել այս կամ այն սպային. «Գրեթե ամեն մի սպա ուներ իր ... «խումբը»»<sup>249</sup>: Նրանք զբաղվել են ոչ միայն թալանով, այլև՝ բռնաբարություններով և սպանություններով: Կողոպուտի հերթական արշավից վերադառնալով Կարս, նրանք «հյուրանոցներում վատնում էին շատ մեծ գումարներ, հյուրասիրելով գեներալներին», ովքեր «այդ գեխության ընդմիջումներում թուղթ խաղալով, տանում և տարվում էին միլիոններ...»<sup>250</sup>: Այս հրոսակախմբերը մեծապես նպաստել են նաև կանոնավոր զորքի մեջ ան-

245 Նույն տեղում, գ. 7, մաս 1, թ. 50:

246 Նույն տեղում, թ. 51: Տես նաև նույնը, մաս 3, թ. 365:

247 Նույն տեղում, գ. 7, մաս 1, թ. 61: Տես նաև նույնը, մաս 3, թ. 364:

248 Նույն տեղում, մաս 2, թթ. 243-244, 251:

249 Նույն տեղում, թ. 262:

250 Նույն տեղում, թ. 283:

կարգապահութիան տարածմանը: Նրանք եղել են ճակատից փախչողների առաջին շարքում<sup>251</sup>: Խմբապետներ Փիլոսի և Մուրադխանի տղերքը չէին խորշում պատերազմի օրերին իսկ կողոպտելու Կարսի իրենց ազգակիցների բնակարանները<sup>252</sup>: Կողոպտուով զբաղվել են Սմբատի՝ հարաբերաբար չվարկաբեկված ձիավոր կամավորներն անգամ<sup>253</sup>:

Մի խոսքով, թալանի մոլուցքով վարակվել են շատ շատերը՝ գորահրամանատար, սպա, զինվոր, կամավոր, պետական պաշտոնյա, պարզ քաղաքացի, «նույնիսկ կեղրոնի համազգային պատասխանատվություն ունեցողներեն որոշ թվով անձեր»<sup>254</sup>: Նրանք «մխրճվեցան թալանի, կողոպուտի և բռնաբարությունից տիղմին մեջ և ա՛լ անկարող եղան դուրս գալ անկե, մինչև որ հայկական անկախությունն ալ իրենց հետ ցեխին հատակը տարան»<sup>255</sup>:

Թալանում էին ոչ միայն բնակչությանը, այլև՝ օտարերկրացիների և պետական հաստատությունները<sup>256</sup>, նույնիսկ՝ ... մեկը մյուսին. «Գողը գողեն կգողանար և Աստված ինք երկնքին մեջ կզարմանար»<sup>257</sup>, - հառաչում է հուշագրողը: Թալանի «հոգեբանությունը կարճ ժամանակէն ստացած էր տեսակ մը բնական երևույթ»<sup>258</sup>: Հուշագրողը «թալանի ան-

<sup>251</sup> Արտաշես Բաբայան. «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 62:

<sup>252</sup> Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 131-132:

<sup>253</sup> Նույն տեղում, էջ 154: Ռազմական գոտում մտուզերիստների անօրինականությունների մասին հավելյալ տե՛ս Անանուն, «Ազատ, անկախ և միացյալ Հայաստանի վերջին օրերը», էջ 31, 83: Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 31, 124, 156:

<sup>254</sup> Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 152, տե՛ս նաև, էջ 29, 256:

<sup>255</sup> Նույն տեղում, էջ 73:

<sup>256</sup> Օրինակ՝ Ալեքսանդրապոլից նահանջելիս հայոց բանակի զինվորները, այլոց շարքում, կողոպտել էին «Սագօ» ընկերության և Ֆինանսական նախարարության շենքերը: Սա կողոպուտ էր, քանի որ կատարվել է ոչ թե բարիքները, պետական գույքն ու փաստաթղթերը թշնամուն շթողնելու նպատակով, այլ, խառնակությունից օգտվելով, դրանք սեփականացնելու մոլուցքով:

<sup>257</sup> Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 256:

<sup>258</sup> Նույն տեղում, էջ 29:

զուսպ հակումը» համարում է «Կարսի ճակատի ձախորդությունց խոշորագույն զրգապատճառներեն մեկը»<sup>259</sup>, մի գնահատական, որի հետ լիովին համաձայն ենք, այն հավելումով, որ թալանը հիմնական դեր խաղաց զորքի և հասարակության բարոյական անկման էլ՝ ավելի խորացման մեջ: «Այլասերվել էր հասարակական մթնոլորտը և մարդիկ բթացել էին ոչ միայն դեպի պետական, հասարակական պատիվը, այլև դեպի իրանց անձնական պատվասիրությունը», «խախտվել էին տարրական հասկացողությունները, մարդկանց մեջ բթացել էր պարտաճանաչություն զգացմունքը»<sup>260</sup>, - դիպուկ նկատել է տալիս Ստ. Ղորղանյանը: Իսկ մարդկային հասարակության մեջ որևէ նյութական կործանմանը նախորդում է բարոյական կործանումը:

#### Գ. 6. Հայրենիքի ազատագրված տարածքների նկատմամբ բարբարոսական վերաբերմունքը

Հայրենիքը սրբություն է, հայության բոլոր սերունդների համայնական սեփականությունը: Հետևաբար նրա հետ պետք է վերաբերվել երկյուղածությամբ, իսկ նրա ազատագրված տարածքների հետ՝ առանձնահատուկ սիրով: Այս սկզբունքը ոչ միայն չհարգվեց Կարսի նահանգում և 1920 թ. ամառը ՀՀ բանակի Օլթիի շրջանի ազատագրած տարածքներում, այլ, ընդհակառակը, դրանց հետ վերաբերվեցին որպես թշնամու տարածքի՝ այստեղից բխող բոլոր հետևանքներով: «Կարսի նահանգը լցվեց բախտախնդիրներով միայն, պատահական մարդկանցով, որոնք շտապում էին միայն կեղեքել և փախչել»<sup>261</sup>: Այս տարածքներում գինվորականներն ու խմբապետների մատուցերիստ տղերքը վարեցին «այրած երկրի» քաղաքականություն. կողոպուտը, բռնաբարությունները, սպանությունները և ամեն տեսակ վայրենությունները չափ ու սահման չունեին և դրսևորվում էին իրենց ողջ տգեղությամբ: Բավա-

<sup>259</sup> Նույն տեղում, էջ 152: Տես նաև նույնը, էջ 29, 255-256:

<sup>260</sup> ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 1, թթ. 57-58:

<sup>261</sup> Նույն տեղում, թթ. 145-146:

րար է ասել, որ ընդամենը երկու ամսվա ընթացքում Կարսի նահանգապետն արձանագրել է զինվորականների գործած 75 ոճիր<sup>262</sup>:

Նկատի ունենալով ամբողջ վերոշարադրյալն ու հետևյալ փաստերը.

1. Գեներալ-մայոր Արտյոմ Հովսեփյանն ու գնդապետ Դմիտրի Միրիմանյանը բոլշևիկների կողմից ոչ միայն Ռյազան չաքսորվեցին 1921 թ. հունվարին, ՀՀ սպայության կազմում, այլ՝ նույն թվականի փետրվարին իրենց ծառայությունները մատուցին Կարմիր բանակի դեպի Լոռի, Թիֆլիս ու ապստամբած Երևան արշավանքների ժամանակ, որի համար էլ նրանք շքանշանների արժանացան (համաձայն ենք Ստ. Ղորղանյանի հետ, թե «ավելի ցայտուն դավաճանություն և ավելի այլանդակ հոգեբանական տեսիլ չի կարող ստեղծել ամենավառ երևակայությունը անգամ»<sup>263</sup>).

2. Երկուսն էլ դրանից հետո էլ շարունակեցին ծառայել Կարմիր բանակին (Միրիմանյանն արժանացավ գեներալական ուսադիրներին).

3. Գեներալներ Փիրումյանը և Հովսեփյանը 1920 թ. մայիսի բոլշևիկյան խռովության օրերին անցել էին խռովարարների կողմը՝ «չեզոքություն» պիտակի տակ.

4. Ստեփան Ղորղանյանի այն վկայությունը, թե Կարսի բոլոր գրավումների ժամանակ մեծ դեր է խաղացել կաշառքի դիմաց քաղաքի հանձնումը՝ պաշտպանական ձևական կոիվներից հետո (այս առումով հիշեցնենք, որ 1918 թ. ապրիլի 12-ի կեսօրին, Սեյմի ղեկավար Չիսենկելու հրահանգով, գեներալ Նազարբեգյանի հրամանատարած Հայկական կորպուսը համարյա առանց դիմադրություն քաղաքը թողել էր թուրքերին)<sup>264</sup>, – հակված ենք վարկածի կարգով ենթադրելու, որ Կարս բերդաքաղաքի 1920 թ. հոկտեմբեր 30-ի հանձնումը ևս կատարվել է ՀՀ բանակի ղեկավարության մի մասի՝ կոնկրետ՝ ռազմաճակատի կարևորագույն

<sup>262</sup> Նույն տեղում, գ. 7, մաս 2, թ. 285: Այդ ոճիրների մասին հավելյալ տե՛ս նույնը, մաս 3, թթ. 329-333:

<sup>263</sup> Նույն տեղում, գ. 18, թ. 38:

<sup>264</sup> Տես նաև ՀԱՍ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թ. 416:

հատվածների հրամանատարներ Հովսեփյանի ու Միրիմանյանի դավաճանություն հետևանքով<sup>265</sup>:

Ամփոփելով, մի անգամ ևս հաստատում ենք, որ ռազմական և մանավանդ բարոյահոգեբանական այսպիսի բազմաթիվ սխալների թեկուզ մի մասը բավարար կլիներ կործանման տանելու հայկական Կարսն ու Հայաստանի Հանրապետությունը: Նման որակներով պարտությունը անխուսափելի պիտի լիներ, իսկ հաղթությունը՝ ամեն տեսակ օրինաչափությունների կոպիտ և անտրամաբանական խախտում<sup>266</sup>:

<sup>265</sup> Կարմիր բանակի գեներալի ուսադիր ստացած Դմիտրի Միրիմանյանը, 1919 թ. մարտից մինչև 1920 թ. մայիսը՝ ՀՀ ռազմական նախարար, ՀՀ բանակի, ապա Կարմիր բանակի գեներալ Քրիստափոր Արարատյանը և բոլշևիկներին ծառայել մերժած գեներալ Մովսես Սիլիկյանը 1937-ին հայտարարվեցին «ժողովրդի թշնամի» և մի քանի այլ սպաների հետ նույն թվականի դեկտեմբերի 10-ին գնդակահարվեցին նորքի ձորում. տե՛ս Գայկ Айрапетян, Труды и трагедия генерала Силикова, Новое Время (Ереван) 25 сентября 2002г., стр. 3. Այստեղ արժե հիշեցնել, որ հայ հասարակության մեջ առ այսօր համառոտ են շրջում են լուրեր, թե Արծվաշենն ու Շահումյանի ենթաշրջանը 1990-ականների սկզբին ադրբեջանցի թշնամուն հանձնվեցին գործարքով (այդ դեպքերի ականատեսի հուշերը տե՛ս Դենպրիկ Բաղդասարյան, «Իմականություն», Երևան, 1998, էջ 144-151):

<sup>266</sup> Համանման բարոյահոգեբանական անկման պատճառով հունական բանակը խայտառակ պարտություն կրեց թուրքերից՝ 1922 թ. և Կարսը թուրքերը կրկնեցին Իզմիրում՝ 1922 թ. սեպտեմբերին: Այս գուգահեռը դիպուկ նկատել է Բեյրութի «Նայիրի» շաբաթաթերթի խմբագիր, արձակագիր Անդրանիկ Մառուկյանը: Թերթի ժե տարվա (1968,- Գ. 3.) 45-50 միացյալ համարների փոխարեն լույս տեսած բացառիկ համարում, նա վերահրատարակել է Կարսի անկման մասին Արտաշես Բաբայանի և Գարեգին արք. Հովսեփյանցի հուշագրությունները (համապատասխանաբար՝ էջ 8-14 և 15-19)՝ յուրաքանչյուրին կցելով խմբագրական ընդարձակ խոսքեր: Այնուհետև տպագրել է Մարտիրոս Սարյանի (չլիոթեղ աշխարհահոյակ գեղանկարչի հետ,- Գ. 3.) «Իզմիրի աղետը» հուշագրությունը (էջ 20-27): Հուշագրողը նշում է, որ հունական բանակը թուրքերի դիմաց ժամանակն անցկացնում էր անգործություն, խաղուպարով, երաժշտությամբ, հարբեցողությամբ և այլ զվարճություններով (նա մոռացել է կամ չի ցանկացել նշել թալանն ու բռնաբարությունները

Կարսի 1920 թ. խայտառակ պարտության ու դրան հետևած Հայաստանի առաջին հանրապետության կործանման բազմաբևեռ պատճառները ներկայացնելուց ու վերլուծելուց հետո հանգում ենք հետևյալ եզրակացություններին.

1. Կարսում ընդհանրապես հայության ու մասնավորապես Հայոց բանակի պարտությունը օրինաչափ էր և անխուսափելի<sup>267</sup>: Բանակներն ու ժողովուրդները համեմատվում են իրենց ոգեկան-գաղափարական որակներով ու դրանցից բխող բարոյահոգեբանական հատկանիշներով: Բանակի մարտունակությունը որոշվում է ո՛չ բանակի թվակազմով, ո՛չ մարտական պատրաստվածությամբ (զինտեխնիկային տիրապետելով), ո՛չ էլ մարտական տեխնիկայի արդիականությամբ ու հագեցվածության աստիճանով: Այդ բոլորը անհրաժեշտ են, բայց ո՛չ բավարար: Բանակը, նախ և առաջ, ոգի է, մարտական ոգի, որը սնվում է ազգի ոգուց: Եթե ոգին չկա կամ թույլ է՝ պարտությունները հնարավոր կամ նույնիսկ անխուսափելի են դառնում: Ոգեկան-գաղափարական, բարոյական և հոգևոր անկումն անպայմանորեն և անխուսափելիորեն առաջնորդում է ֆիզիկական (նյութական) անկման:

2. Ազգի և ազգային պետության պահպանման ու հզորացման հույսը պետք է դնել միայն և միայն ազգի սեփական կարողությունների վրա՝ դրանք մոբիլիզացնելով ու շաղախելով վեհ գաղափարներով և ղեկավարների անձնական դրական օրինակներով:

Սույն հոդվածով մենք փորձեցինք ներկայացնել ու վերլուծել Կարսի և Հայաստանի առաջին հանրապետության անկումները՝ գաղափար

րը,- Գ. Յ.), ապա գրում. «Իսկապես ողբերգական էր հույն բանակին և հույն ժողովուրդին վիճակը Իզմիրի մեջ, և կարգ մը նմանության եզրեր ուներ մեր Կարսի ու Արդահանի բանակին, Հայաստանի և հայ ժողովուրդի դառնաղետ պարտության սև ճակատագրին հետ» (էջ 27):

<sup>267</sup> Անդրանիկ Մառուկյան, խմբագրական ներածական խոսք Արտաշես Բաբալյանի «Կարսի անկումը» հուշագրության վերահրատարակման առթիվ, «Նաչիրի», ժե տարվա (1968,- Գ. Յ.) 45-50 միացյալ համարների փոխարեն լույս տեսած բացառիկ համար, էջ 8:

րական, ռազմահոգեբանական, սոցիալ-հոգեբանական և այլ «ներքին» տեսանկյուններից: Այս «ներքին» պատճառների հետագա խորացված համալիր վերլուծումը հույժ կարևոր նշանակություն ունի հայ ժողովրդի և հայկական պետականության հետագա գոյատևման համար:

Կարսի ու Հայաստանի առաջին հանրապետության անկմանն ու կործանմանը նախորդած արատավոր երևույթներից շատերն այսօր էլ առկա են հայկական պետության և հասարակության կյանքում: Հետևաբար, նոր անկումն ու կործանումը կարող են դառնալ հավանական, եթե վայրկյան առաջ չձեռքազատվենք բացասական երևույթներից ու տրամագծորեն չըրջենք իրավիճակը:

Կարսի անկման ականատես Արտաշես Բաբալյանն իր հուշագրությունն ավարտում է ասելով. «Երանի թե այս դառն սխալները դաս ծառայեին ապագայի համար»<sup>268</sup>:

---

<sup>268</sup> Արտաշես Բաբալյան. «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 68:



## 18.

### ԼԵՈՆԱՅԻՆ (ԼԵՈՆԱԱՆՏԱՈՒԱՅԻՆ) ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ XX ԴԱՐՈՒՄ և ՆՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԿՐԱ

#### ՍՈՒՐԵՆ ՄԱՐՏԻԿՅԱՆ

Լեռներում, մանավանդ, անտառապատ մարտական գործողությունների վարումը կապված է մեծաթիվ հավելյալ դժվարությունների հետ, որի պատճառով զորավարները հնագույն ժամանակներից ձգտել են պատերազմի ելքը վճռող ճակատամարտերը վարել դաշտավայրերում և միայն ծայրահեղ դեպքերում են բարձրացել լեռներ ու վտանգել իրենց զորքերը: Սույն հոդվածում կփորձենք վերլուծել և ընդհանրացնել վերջին հարյուրամյակի պատերազմների դասերը, բացահայտել դրանց ազդեցությունն Արցախյան պատերազմի<sup>1</sup> և հաջորդող զինադադարի ընթացքում հայոց բանակաշինության վրա:

---

<sup>1</sup> Ռազմարվեստում ընդունված գնահատման համակարգի համաձայն, հակամարտությունը միայն 1990 թ. ձեռք բերեց պատերազմին բնորոշ բոլոր գծերը: ԼՂԻՄ-ի լիակատար շրջափակումով, ՀեՍՀ-ի հյուսիս-արևելյան շրջանների և 1990 թ. հունվարին Արարատի շրջանի երասխավան գյուղի ուղղությամբ հարձակումների արդյունքում աստիճանաբար սկսեց ձևավորվել հակամարտության գիծը: Այդ ընթացքում փոխադարձ հակակրանքը և բախման քողարկված դրսևորումները վերաճեցին բացահայտ զինված ընդհարման: Այդ պատճառով ռազմարվեստը վերլուծելիս հատուկ ուշադրություն կդարձնենք 1990-1994 թթ-ի մարտական գործողությունների վրա:

1945թ. սեպտեմբերի 2-ին ավարտվեց պատմությունը հայտնի ամենամեծ և ամենաավերիչ՝ Երկրորդ համաշխարհային պատերազմը (ԵՀՊ), որը մինչ օրս պահպանում է ցավալի առաջնությունը մասնակիցների (երկու կողմից՝ ավելի քան 110 մլն. մարդ), մարդկային զոհերի (մոտ 60 մլն.), ավերված կամ կիսավեր բնակավայրերի քանակով և ավերիչ ուժով նախկինում հայտնի գեներալից որակապես տարբերվող միջուկային գեների կիրառումով:

ԵՀՊ-ի առաջին իսկ արդյունքներն ամփոփելով՝ քաղաքակիրթ մարդկությունն ահազանգ հնչեցրեց: Ապագա մարտահրավերներին դիմակայելու համար պետք էր մշակել զինված ընդհարման տարածմանը խոչընդոտող, այն տեղայնացնող, ինչ-որ տեղ նաև՝ ընդհարումների «ինքնակազմակերպման» համակարգ: Այդ նպատակով 1945 թ. սեպտեմբերին ստեղծվեց ՄԱԿ-ը, 1949 թ. ընդունվեցին Ժնևյան չորս կոնվենցիաները<sup>2</sup> և այլն: Այս համակարգով սահմանափակվող ու հակամարտությունն անմիջականորեն չմասնակցող պետությունների կողմից ընդհարման մասշտաբները չմեծացնելու ձգտման արդյունքում «փակ տարածքում զարգացող» զինված ընդհարումներն ընդունված է կոչել տեղային կամ լոկալ պատերազմներ (զինված ընդհարումներ): Նոր տիպի պատերազմներին օբյեկտիվորեն նպաստում էր երկու միջուկային գերտերությունների՝ ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև սկսված «սառը պատերազմը» (1946-1991 թթ.):

Ինքնըստինքյան հասկանալի է, որ նույնիսկ ամենաընդգրկուն տեղային պատերազմներն իրենց մասշտաբներով չեն կարող համեմատվել ԵՀՊ-ի հետ, բայց դրանցում կիրառվող մարտավարությունը հիմնվում էր աշխարհամարտերի փորձի վրա: Ավելին, առանձին դեպքերում զորահրամանատարներն աշխատում էին հնարավորինս ձեռնպահ մնալ նոր՝ չփորձված մարտավարական հնարքների կիրառումից<sup>3</sup>:

<sup>2</sup> Տե՛ս 1949 թ. օգոստոսի 12-ի Ժնևի կոնվենցիաները և դրանց լրացուցիչ արձանագրությունները, ԿԽՄԿ-ի հրատ., ե., 1999, էջ 19-306:

<sup>3</sup> Այս մասին տե՛ս Վ. Мессенджер, Энциклопедия войны XX века, Москва, 2000, стр. 401-464.

*Դա բացատրվում էր նրանով, որ տեղային պատերազմներում, առանց ավելորդ ձևական սահմանափակումների, օգտագործվում էին սովյալ պայմաններում կիրառելի բոլոր հնարքները: Ընդհանրացումներ կատարելու համար հսկայական նյութ կար, քանի որ, միևնույն մարտական գործողության ընթացքում ձեռք բերված փորձը բազմաթիվ հարցերում կիրառելի էր տարբեր մայրցամաքներում ու նույնիսկ տարբեր կլիմայական գոտիներում:*

*Այսպես.*

- բևեռային գոտում ձեռք բերված փորձը հիմք հանդիսացավ ինչպես բարեխառն գոտում ձմռանը, այնպես էլ մյուս բոլոր գոտիների բարձր լեռնային շրջաններում ընթացող տեղային պատերազմներում մարտական գործողությունների կազմակերպման ժամանակ.
- հասարակածային շունգլիներում վարվող մարտական գործողությունների փորձը զգալիորեն նպաստեց մյուս գոտիների անտառապատ տեղանքում գործողությունների նախապատրաստման ու վարման բազմաթիվ հարցերի նշգրտման համար: Օրինակ, թեև ակնհայտ են 5.4-5.6 մմ տրամաչափի ձեռքի ավտոմատ հրազենի առավելությունները և 7.5-8 մմ-անոց հրազենից հրաժարվելը սկսվել է դեռևս 1960-ական թթ., սակայն սկզբից եթե հայտնի էին, որ փոքր տրամաչափի փամփուշտները, նյութերին դիպչելով, հեշտությամբ փոխում են թռիչքի ուղղությունը: Այդ պատճառով մեր օրերում ևս անտառապատ լեռներում վարվող մարտական գործողությունների ժամանակ նախընտրելի է համարվում «հին» հրազենը: Այս միտումն առավել ցայտուն կերպով դրսևորվեց 1994-1996 թթ. և 1999-2001 թթ. Չեչենական պատերազմների ժամանակ:

*Այդուհանդերձ, հետագայի պատերազմները վկայեցին, որ ձեռք բերված փորձը ամենուրեք հավասարաչափ կիրառելի չէ: Այս հանգամանքով են պայմանավորված, հատկապես, լեռնային (լեռնաանտառ*

ուային) տեղանքում ընթացող զինված ընդհարումների առանձնահատկությունները:

Աշխարհամարտերի ավարտից հետո, թերևս, միայն լեռնային մարտավարությունն էր, որ լրացուցիչ ճշգրտումների և ամբողջացման կարիք ուներ: Հարցն այն է, որ որքան էլ մեծ լիներ երկրորդ աշխարհամարտի ընդգրկումը, միևնույն է, պատերազմի ելքը վճռվել էր Եվրոպայում<sup>4</sup>: Բնականաբար, Եվրոպայում ծավալված ռազմական գործողություններին էլ սևեռվել էին ռազմական տեսաբանների հայացքները<sup>5</sup>: Բացի այդ, առանց այն էլ բարձր լեռներ չունեցող Եվրոպայի ամենաբարձր լեռնային շրջաններում մեծ ընդգրկում ունեցող ռազմական գործողություններ գրեթե չէին վարվել, իսկ եզակի «բացառությունները» հիմնարար վերլուծություններ կատարելու հնարավորություն չէին տալիս:

Մարտավարության ամբողջացման համար էական խոչընդոտ էր, որ ընդհուպ մինչև ԵՂ-ը շարունակվում էր լեռներում մեծամասշտաբ առձակատումից խուսափելու ձգտումը: Առաջին համաշխարհային պատերազմի (1914-1918 թթ.) միակ մեծ լեռնային օպերացիան՝ 1917 թ. աշնանը Կապոռետտոյի մոտ գերմանա-ավստրիական զորքերի իրականացրած հարձակումն էր<sup>6</sup>: Ժամանակին օգնություն հասած անգլիական և ֆրանսիական 11 դիվիզիաները արագորեն վերականգնեցին իտալացիների պաշտպանությունը, հետևաբար, օպերացիան ցանկալի արդյունքների չհանգեցրեց ու պատերազմի ավարտման կամ մարտավարության զարգացման գործում էական դեր չխաղաց:

<sup>4</sup> Դեռևս Առաջին համաշխարհային պատերազմի ռազմարվեստն ուսումնասիրող տեսաբանները սկսեցին ռազմական գործողությունների թատերաբեմերը (ԹԳԹ) բաժանել գլխավորի և երկրորդականի: Երկրորդ համաշխարհայինից հետո այս բաժանումը դարձել է համընդհանուր ընդունված: Այս մասին տե՛ս, **А.А. Строков, История военного искусства: капиталистическое общество периода империализма, М., 1967, стр. 271-274.**

<sup>5</sup> Տե՛ս *Развитие тактики Советской Армии в годы Великой отечественной войны (1941-1945гг.)*, под общ. ред. **К. С. Колганова, М., 1958.**

<sup>6</sup> **А.А. Строков, указ. соч., стр. 568-575.**

ԵՃՊ մարտական գործողությունների արդյունքները ևս ավելի շատ հարցեր էին թողել, քան նախանշել պատասխաններ<sup>7</sup>: Մասնավորապես՝ Ալլայան և Պիրենեյան լեռներում մարտական գործողություններ գրեթե չէին վարվել, որն էապես նվազեցնում էր ընդհանրացվող փորձը:

1941 թ. գարնանն այնքան ակնհայտ էր գերմանական մեքենայացված գորամիավորումների գերազանցությունը հարավսլավական և հունական հետևակային կամ հեծյալ զորամասերի նկատմամբ, որ չնայած վերջիններիս հերոսական պաշտպանությունը՝ Բալկաններում գերմանացիների կայծակնային հարձակումը «դատապարտված» էր հաջողություն<sup>8</sup>: Բացի այդ, գերմանացիները լեռներում մարտական գործողությունների վարման փորձ ունեցող զորամասեր ունենալով հանդերձ, կարողացան իրենց կամքը թելադրել հակառակորդին և հակամարտության ելքը վճռել նախալեռնային և դաշտավայրային շրջաններում վարվող մարտական գործողությունների ժամանակ<sup>9</sup>:

Կովկասի ճակատամարտի (1942 թ. հուլիս-1943 թ. հոկտեմբեր) արդյունքում հաղթող երկրների ռազմական տեսաբանների մեծ մասի շրջանում արմատավորվեց տեսակետ, համաձայն որի, համապատասխան մարտական ապահովության պայմաններում բարձր լեռնաշղթաները հնարավոր է անանցանելի բնական ամրոցների վերածել: Կարող է առաջին հայացքից տարօրինակ թվալ, բայց այս սխալ տեսակետի առանձին գրույթներ գերիշխող էին նաև հետագայում՝ նույնիսկ 1979-1989 թթ. Աֆղանական պատերազմից հետո: Այսպես, ԽՍՀՄ Յամաքային զորքերի գլխավոր հրամանատարի կողմից համազորային և տանկային հրամանատարական բարձրագույն ուսումնարաններում ուսուցման հա-

<sup>7</sup> Այս մասին տե՛ս *История военного искусства. Учебник для военных академий Советских Вооруженных Сил*, Москва, 1984, стр. 120-414.

<sup>8</sup> Տե՛ս *Вторая мировая война 1939-1945 гг.: Военно-исторический очерк*, под общ. ред. С. П. Платонова, Москва, 1958, стр. 108-112.

<sup>9</sup> *История второй мировой войны 1939-1945*, в 12-ти томах, т. 3, М., 1974, стр. 259-273.

մար նախատեսված «Մարտավարություն (վաշտ, գումարտակ)» դասագրքում կարդում ենք. «Դժվարանցանելի տեղամասեր և մեծաթիվ բնական արգելքներ ունեցող լեռնային տեղանքը ստորաբաժանումներին թույլ է տալիս ստեղծել անհաղթահարելի և կայուն պաշտպանություն (позволяет подразделениям создавать непреодолимую и устойчивую оборону) առավել լայն ճակատով՝ ներառնելով հակառակորդի գործողությունների համար առավել մատչելի ուղղությունները»<sup>10</sup>:

Արդեններում գերմանացիների 1944 թ. դեկտեմբերի հակահարվածը ևս մեկ անգամ վկայեց, որ զորավարների մեծ մասն անհրաժեշտ ուշադրություն չէր դարձնում լեռնային ՌԳԹ-երին: Այդուհանդերձ, հակահարվածն այսօր համարվում է ավելի շատ հակառակորդի (անգլո-ամերիկյան հրամանատարության) բացթողումներից հաջողությամբ օգտվելու, քան լեռնային տեղանքում հարձակման օրինակ<sup>11</sup>:

Այս շարքում, թերևս, բացառություն է 1944 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Կարպատներն անցնելիս խորհրդային զորքերի՝ գերմանացիների կազմակերպված դիմադրության հաղթահարումը: Ի դեպ, նշենք, որ Կարպատյան լեռներում և Բալկաններում ծավալված գործողությունները լեռնային ենք համարել պայմանականորեն, քանի որ այդ տարածքներում եզակի են ծովի մակարդակից նույնիսկ 2000 մետր բարձրությունը գերազանցող գագաթները, իսկ Կարպատյան լեռների հիմնական մասի բարձրությունը 800-1200 մետր է:

Այդուհանդերձ, Կարպատներում հարձակողական մարտեր վարելու փորձն օգտագործելով էր, որ խորհրդային զորքերը մրրիկի պես անցան Մանջուրիայի լեռներով (Մեծ և Փոքր Խինգանի լեռնաշղթաներ):

<sup>10</sup> Тактика (рота, батальон), ч. II, под ред. Е. И. Крылова, М., 1991, стр. 173.

<sup>11</sup> Б.Х. Лиддел-Гарт, Стратегия непрямых действий, Москва, 1957, стр. 426. В. Н. Лобов, Военная хитрость в истории войн, Москва, 1988, стр. 150-151.

Բավական է նշել, որ հարձակման տեմպն այդ ժամանակաշրջանի համար գրեթե անհավանական էր՝ օրական 120-150 կմ<sup>12</sup>:

Երկրորդ աշխարհամարտից հետո մինչև 1990 թ. ընկած միջոցին տեղի ունեցած մոտ 300 պատերազմներից միայն երկուսում (Կորեայում (1950-1953 թթ.) և Աֆղանստանում<sup>13</sup>) ձեռք բերված փորձն էր, որ շոշափելի ազդեցություն ունեցավ Արցախյան պատերազմի ռազմարվեստի հիմնական ուղղությունները որոշելիս: Ընդ որում, խոսքը ինչպես հայկական, այնպես էլ ադրբեջանական կողմի կիրառած ռազմարվեստի մասին է<sup>14</sup>:

Ժամանակակից լեռնային պատերազմների մարտավարության համար կարևոր ուղենիշ է նաև Չեչենական վերջին պատերազմների ընթացքում կուտակված հարուստ փորձը, որը բանակաշինության արդի փուլում ուսանելի է մեզ համար:

<sup>12</sup> *История военного искусства*, под общ. ред. А. А. Строкова, Москва, 1966, стр. 509-510, 515.

<sup>13</sup> Աֆղանական պատերազմն ընդունված է բաժանել չորս փուլերի.

1979թ. դեկտեմբեր-1980 թ. փետրվար՝ զորքերի ներխուժումը և տեղաբաշխումը տեղում:

1980թ. մարտ-1985թ. ապրիլ՝ խորհրդային ուժերի ակտիվ գործողությունները

1985թ. մայիս-1986թ. դեկտեմբեր՝ խորհրդային զորքերի գործողություններն աֆղանստանցիների աջակցությամբ:

1987թ. հունվար-1989թ. փետրվար՝ զորքերի դուրսբերումը:

Այս մասին տե՛ս **П. Аллан, Д. Клей, Афганский капкан: правда о советском вторжении**, Москва, 1999, стр. 237-308.

Վերլուծությունների ժամանակ մենք հիմնական ուշադրությունը դարձրել ենք երկրորդ և երրորդ փուլերի ռազմարվեստի վրա:

<sup>14</sup> Վերջին շրջանի տեղային պատերազմների ժամանակ լեռներում (կտրտված տեղանքում) վարվող մարտական գործողությունների օրինակները բազմաթիվ են, սակայն եղած տեղեկությունները վկայում են, որ գրեթե չի օգտագործվել նույնիսկ արաբա-խորաշյակական հակամարտությունների ուսանելի փորձը: Պատճառը, թերևս, տեղեկատվության պակասն էր:

Աֆղանական և Չեչենական պատերազմների փորձն օգտագործելիս, պետք է նկատի ունենալ, որ այս պատերազմներում կողմերից մեկը (Աֆղանստանում՝ մոջահեդները, իսկ Չեչնիայում՝ անջատողականները) ակնհայտորեն զիջում էր մյուսին (խորհրդային և ՌԴ դաշնային զորքերին), որի պատճառով խուսափում էր բաց ճակատային ընդհարումներից և ամեն կերպ ձգտում հակամարտությունը վերածել պարտիզանական պատերազմի: Արցախյան պատերազմի տարիներին ազրբեջանական կողմը կենդանի ուժի, սպառազինության և մարտական տեխնիկայի քանակական կայուն գերազանցություն ուներ, սակայն այդ քանակական առավելություններն այնքան ճնշող չէին, որ հայկական կողմը հրաժարվեր դիրքային պայքարից<sup>15</sup>:

Լեռնաանտառային ՌԳԹ-ում վարվող տեղային զինված ընդհարումներից առաջինը Կորեայի պատերազմն էր: Արտակարգ մեծ թափով և ընդգրկումով վարվող այդ պատերազմի<sup>16</sup> ընթացքում գրեթե ամբողջությամբ կրկնվում էր ԵՀՊ-ում կիրառված ռազմարվեստը՝ ընդհուպ մինչև օպերատիվ խտություն հաշվարկները<sup>17</sup>: Այդ պատճառով Կորեայի պատերազմի փորձը բազմաթիվ հարցերում պիտանի չէր անհամեմատ ավելի փոքր ընդգրկում ունեցող Արցախյան պատերազմում կիրառելու

<sup>15</sup> Տե՛ս Հ. Պետրոսյանց, Տեղային պատերազմների առանձնահատկությունները և դրանց ազդեցությունը մարտավարության զարգացման վրա, եր., 2002, էջ 12-17:

<sup>16</sup> Բավական է ասել, որ ԱՄՆ-ն ռազմական գործողություններում ներգրավել էր իր օդուժի 35%-ը: Դրա շնորհիվ էր միայն պահպանվում գերիշխանությունն օդում: Ծովում, Կորեայի ափերի մոտ, կենտրոնացվել էր ամերիկյան մոտ 200 ռազմանավ: Հարավի զորքերն ունեին մոտ 1 մլն. զինվոր և ավելի քան 1000 տանկ ու 1600 ինքնաթիռ: Այսպիսի մեծաթիվ ուժերը ղեկավարվում էին կենտրոնացված ձևով, որն էլ ավելի էր մեծացնում ռազմական գործողություններ վարելու նրանց կարողությունը: Տե՛ս Մ. Ա. Борчаев, «О теории военного искусства», Военная мысль, №9, 1994, стр. 43-44.

<sup>17</sup> Պաշտպանությունում օպերատիվ խտությունը կարող էր հասնել մինչև 1 գումարտակ/կմ, 10 տանկ/կմ, 40 թնդանոթ և ականանետ/կմ, 10 հակատանկային թնդանոթ/կմ: Տե՛ս История военного искусства, Учебник..., стр. 520.

համար: Մասնավորապես, Կորեայում շեշտը դրվում էր պաշտպանությունից մինչև ճեղքման դասական տարբերակների վրա, որոնք կիրառելի էին հարթավայրային տեղանքում, իսկ լեռներում՝ միայն մեծաքանակ զորքերի առկայությունից պայմաններում<sup>18</sup>:

Միևնույն ժամանակ, մեր տարածաշրջանի հետ նմանություններն այնքան շատ էին, որ արցախյան ճակատներում կիրառելու համար ուսանելի հարցեր ևս կային: Օրինակ՝ պաշտպանության ճեղքումը մեկ հիմնական և մեկ կամ երկու ջակցող (շեղող) հարվածներ հասցնելու միջոցով: Բացի այդ, Կորեայում, չնայած զորքերի մեծ խտությունը, մարտական դասավորությունը, որպես կանոն, մեկ էջելոնով էր, որը մեր օրերի լեռնային պատերազմների համար դասական կարգ է դարձել:

Հատկանշական է, որ անկախ տեղանքի առանձնահատկություններից, մարտական գործողությունների վրա էական ազդեցություն է թողնում զորքերի մեքենայացման մակարդակը: Արդի պատերազմներում այն կայուն աճի միտում ունի: Գլխավորապես մեքենայացման բարձր մակարդակն էր պատճառը, որ պաշտպանական օպերացիաները զորաշարժային էին. մեքենայացված զորամասերն արագ ու մեծ հեռավորությամբ կտրվում էին հարձակվող զորքերից<sup>19</sup>:

Արցախում երկու կողմերն էլ հնարավորինս ձգտում էին վարել դիրքային պաշտպանություն, որը, սակայն, էական խոչընդոտ չդարձավ առանձին զորաշարժային օպերացիաների իրականացման համար: Վերջին պահը ուշագրավ է, քանի որ հակամարտության ամբողջ ընթացքում երկու կողմից էլ մարտերի ինժեներական ապահովման մակարդակը ցածր էր: Հնարավոր չէ մատնացույց անել թեկուզ մեկ տեղամաս, որտեղ բրիգադի կամ գնդի ամբողջական՝ ինժեներական առումով բավարար սարքավորված, հագեցված ու մարտավարական բոլոր պահանջներին համապատասխանող, պաշտպանություն եղած լինի: Դրա պատճառը կենդանի ուժի պակասն էր, մանավանդ՝ հայկական կողմում: Այդ նկատի

<sup>18</sup> Տե՛ս Ք. Յ. Огруд, *Ограниченная война*, Москва, 1960, стр. 231-251.

<sup>19</sup> *История военного искусства*, Учебник ..., стр. 517-528.

ունենալով՝ հրամանատարները, պաշտպանություն կառուցելիս, ստիպված էին լինում ավելի շատ օգտագործել տեղանքը, կլիմայական պայմանները, հանկարծակի և հակառակորդի համար անսպասելի գործողությունները՝ դրանցով մասամբ փոխհատուցելով առկա բացը:

Լեռներում հիմնականում տեղանքն էր պատճառը, որ գրեթե ամենուր գրահատանկային զորքերը կիրառվում էին հետևակի անմիջական աջակցության համար՝ ինժեներական առումով համեմատաբար լավ պատրաստված ու հակատանկային միջոցներով հագեցված պաշտպանությունը ճեղքելիս: Հակատանկային միջոցները (բացի ձեռքի հակատանկային նռնականետները) տեղադրվում էին ճանապարհների և բացատների երկու կողմերում ու մեջտեղով անցնող տանկերին թևային կրակի տակ գցում: Ի դեպ, ժամանակակից համազորային մարտում պաշտպանությունը կազմակերպելիս առանցքային նշանակություն է ստանում հակառակորդի բոլոր կրակային միջոցների վրա խաչաձև կամ թևային կրակի վարման նախապատրաստումը<sup>20</sup>:

Տեղանքը (հատկապես, եթե լեռներն անտառապատ են) թույլ է տալիս ճշտորեն կանխատեսել գլխավոր հարվածի հնարավոր ուղղությունները՝ տանկավտանգ տեղամասերը: Այդ տեղամասերում էլ փորվում են համատարած պաշտպանական խրամատներ: Դեռևս Կորեայում հստակորեն տարանջատվեցին հակամարտող կողմերի երկու մարտավարական համակարգեր.

«Ճանապարհների երկայնքով» կովող (մեծաթիվ անձնակազմ և մարտական տեխնիկա ունեցող կողմ),

ճանապարհների միջև՝ հակառակորդի «համեմատաբար թույլ թևերում» գործող (մարտական տեխնիկայի քանակով գիշող կողմ):

Հյուսիսային Կորեայի զինված ուժերը, աֆղան մոջահիդները, ինչպես նաև չեչենական զինված կազմավորումները հիմնականում հետևում էին երկրորդ համակարգին:

<sup>20</sup> См. тактика (рота, батальон), стр. 174.

Հիմնականում այս համակարգի շրջանակներում էր գործում նաև հայկական կողմը, հատկապես, Արցախյան պատերազմի առաջին երկու երեք տարիներին: Եվ դա բնական էր, քանի որ պատերազմի ամբողջ ընթացքում ադրբեջանցիները պահպանում էին կենդանի ուժի և մարտական տեխնիկայի քանակական գերազանցությունը: Ավելացնենք նաև, որ ադրբեջանական կողմն ուներ և կիրառում էր մարտական ինքնաթիռներ<sup>21</sup>, իսկ հայկականը՝ ոչ:

Նկատենք, որ թերի է այն տեսակետը, թե մարտական տեխնիկայի մեծ քանակի առկայությունն, ի վերջո, անվերապահորեն ռազմավարական հաղթանակի է հասցնում<sup>22</sup>: Այս դրույթն առավել ևս սխալ է կտրուված տեղանքում մարտական գործողությունների վարման ժամանակ: Ասվածի ապացույցն են ինչպես Արցախյան պատերազմը, այնպես էլ 1994-1996 թթ. Չեչենական պատերազմը: Օրինակ՝ մեծաթիվ զրահատեխնիկայով լայնամասշտաբ հարձակում սկսած ադրբեջանական կողմը 1992 թ. ամռան մարտերում թեև հասավ որոշ հաջողությունների, սակայն կորցրեց 40 տանկ և 60 ՀՄՄ «այն դեպքում, երբ ղարաբաղյան կողմը գործնականում զրահատեխնիկա չկորցրեց»<sup>23</sup>, իսկ չեչեն անջատողականների և դաշնային զորքերի մարտական տեխնիկայի քանակն անհամեմատելի էր:

Լեռներում մարտական տեխնիկայի կիրառումը պարտադիր չէ, որ միայն նեղ մարտավարական անհրաժեշտությունից բխի: Խորհրդային զորամասերի ռազմարվեստի բաղկացուցիչներից էր ռազմական գործողությունների սկզբում, զինված ընդհարման ծավալմանը զուգընթաց, հակառակորդին մարտական տեխնիկայով հոգբեանական ճնշման ենթարկելը, որը բավականաչափ նմանություններ ուներ Աֆղանստանում, Արցախում և Չեչնիայում: Դա պայմանավորված էր ոչ այնքան լեռնային

<sup>21</sup> М. Жирохов, “Карабах: хроника воздушной войны”, *Авиамастер*, №6, 2000, стр. 2-8.

<sup>22</sup> Այս մասին տե՛ս А. А. Дремков, “Нетрадиционные войны: сущность, проблемы, перспективы,” *Военная мысль*, №2, 1998, стр. 73.

<sup>23</sup> Ս. Ռ. Հաւաթթյան, *Ղարաբաղյան պատերազմ, եր., 2001, էջ 61:*

պատերազմի մարտավարության պահանջներով, որքան նույն «դպրոցին» պատկանող զինվորականության գործողություններով: Մասնավորապես, Աֆղանստանում խորհրդային ներխուժմանը հաջորդած ամիսներին զորքերին հրամայված էր մոջահիդների ակտիվության շրջաններում, բնակավայրերի միջով անցնելով, ցուցադրել բանակի ուժն ու հզորությունը<sup>24</sup>: Զորքերը կրակ չէին բացում: Իրենց վրա հարձակումների ժամանակ նրանք ծավալվում, մարտակարգ էին ընդունում և տեխնիկայի օգնությամբ գործում հակառակորդի վրա: Այս ակցիաները կարճատև էին ու խորհրդային կողմից էական կորուստների պատճառ չէին դառնում: XIX դարի վերջի անգլիական հրացաններով զինված մոջահիդներն սկզբում որոշակի բարոյալքված էին խորհրդային ռազմական մեքենայի հզորությունից, սակայն ընդամենը մի քանի ամիս հետո այդ հուսալքվածությունն սկսեց վերանալ:

Արցախյան զինված հակամարտության առաջին երկու տարիներին (1990-1991թթ.) այս հնարքներն էր կիրառում նաև խորհրդային բանակի բացահայտ աջակցությունը վայելող ադրբեջանական կողմը: Տեխնիկական գերազանցությունն ի ցույց դնելով, գետաշենցիների դիմադրելու կամքն ի սկզբանե կոտրելու նպատակով էր, որ գյուղի հայաթափման գործողության ժամանակ կենտրոնացվեց ավելի քան հարյուր միավոր զրահատեխնիկա և մարտական ուղղաթիռներ: Գետաշենցիները հակատանկային և հակաօդային պաշտպանության միջոցներ չունեին և, ակնհայտ էր, որ այդ քանակի մարտական տեխնիկայի կենտրոնացման մարտավարական անհրաժեշտությունը չկար: Այսպիսի փորձեր ձեռնարկվեցին նաև հետագայում<sup>25</sup>:

Նույնը փորձեցին կիրառել Չեչենական առաջին պատերազմի սկզբում (1994թ. դեկտեմբերին) ՌԴ զորքերը Գրոզնիի գրավման ժամանակ, սակայն ռազմականից ավելի հոգեբանական ազդեցություն գործելու այս փորձը ավարտվեց կատարյալ անհաջողությամբ: Նոր տարվա

<sup>24</sup> П. Аллан, Д. Клей, указ. соч., стр. 253-254.

<sup>25</sup> Տե՛ս, Ս. Ռ. Հաւաթթյան, նշվ. աշխ., էջ 47:

գիշերը Գրոզնիում զոհվեց դաշնային զորքերի ավելի քան 1.5 հազար զինվոր ու սպա<sup>26</sup>: Էլ ավելի ծանր էր Գրոզնիի փողոցներում մարտական տեխնիկայի կիրառման փորձը. 131-րդ մայկոպյան բրիգադին տրված 26 տանկերից 20-ը խփվեց<sup>27</sup>, իսկ բրիգադի մարտիկները կարողացան քաղաքից դուրս բերել 120 ՀՄՄ-ներից 18-ը<sup>28</sup>: Այս օրինակը հնարավորություն է տալիս վերանայել լեռնային տեղանքում մարտական տեխնիկայի կիրառման մի շարք հարցեր, հատկապես, տեխնիկայի կիրառումը բնակավայրերում, երբ բնական արգելքներին ավելանում են նաև բետոնե ամրաշինական կառույցների դեր կատարող շենքերն ու շինությունները<sup>29</sup>: Ի դեպ, Չեչենական առաջին պատերազմի ընթացքում ռուսական կողմը տանուլ տվեց մի շարք այլ հոգեբանական-տեղեկատվական օպերացիաներ<sup>30</sup> ևս ու ընդհանուր պարտություն կրեց քաղաքական, դիվանագիտական, տեղեկատվական և հոգեբանական հակամարտության ճակատներում<sup>31</sup>:

Պատերազմի սկզբնական փուլում, հակառակորդի մեծաթիվ զրահատեխնիկայի դեմ պայքարի կազմակերպման ժամանակ, մեծ նշանակություն էր ստանում համարձակ ու հակառակորդի համար անսպասելի

<sup>26</sup> Տե՛ս **А. Куликов, С. Лембик**, *Чеченский узел. Хроника вооруженного конфликта 1994-1996 гг.*, Москва, стр. 85-88.

<sup>27</sup> Տե՛ս *Войны второй половины XX века*, автор-сост. **А.Н. Гордиенко**, Минск, 1998, стр. 130.

<sup>28</sup> Տե՛ս **А. Куликов, С. Лембик**, *указ. соч.*, стр. 88.

<sup>29</sup> Մեկ և կես ամսում, 1994 թ. դեկտեմբերի վերջերից մինչև 1995 թ. փետրվար միայն Գրոզնիում դաշնային զորքերը կորցրել են ավելի քան 450 միավոր զրահատեխնիկա, որի կեսից ավելին (այդ թվում՝ 62 տանկ) անվերադարձ: Տե՛ս **А. Тарас**, *Малая война (организация и тактика боевых действий малых подразделений)*, Минск, 2000, стр. 318-319.

<sup>30</sup> Այս մասին օրինակներ տե՛ս **Г. Трошев**, *Моя война. Чеченский дневник окопного генерала*, Москва, 2002, стр. 113-117.

<sup>31</sup> Տե՛ս **А.А. Дремков**, «Нетрадиционные войны: сущность, проблемы, перспективы», *Военная мысль*, №2, 1998, стр. 73.

գործողությունների իրականացումը: Օրինակ՝ 1981 թ. ապրիլ և սեպտեմբեր ամիսներին մոշահեղների հարձակումները Ղանդահար քաղաքի վրա, չեչեն զինյալների կողմից Գրոզնիի վերը նշված պաշտպանությունը, իսկ Արցախում՝ Շահումյանի շրջանի էրբեջ, Բուզլուխ և Մանաշիդ գյուղերի ազատագրումը (1991 թ. սեպտեմբեր)<sup>32</sup>:

Պետք է նկատի ունենալ, որ լեռներում ընկնում է օդի ճնշումը և, համապատասխանաբար՝ մարդկանց գործունեության արդյունավետությունն ու տեխնիկայի հզորությունը: Ծովի մակարդակից 2000մ. բարձրության վրա հարթավայրային շրջաններից զորակոչված զինվորների մոտ շնչառության հետ կապված խնդիրներ են ծագում: 2500-3000մ-ի վրա զինծառայողներն ամսական կորցնում էին մինչև 8 կգ. քաշ: Լեռներում տեղաշարժումները ևս սահմանափակ էին, որոշ դեպքերում կազմելով 0.5-1 կմ/ժ, երբ սպառազինությունն ավելորդ բեռ էր դառնում զինվորի համար:

Առանձին դեպքերում, կարևոր էր, թե պատերազմի որ փուլում էին ծավալվում մարտական գործողությունները: Մեր կողմից քննարկվող բոլոր շորս տեղային պատերազմների սկզբում (առաջին փուլերում) պաշտպանությունը հանգում էր մարտավարական առումով կարևոր օբյեկտների պաշտպանությանը, որի համար ծագում է դրանց վրա ուշադրություն սևեռելու անհրաժեշտություն: Վերջին փուլում (փուլերում)՝ հակամարտող կողմերի աստիճանական հյուծումից հետո, նույնիսկ բարձր լեռնային շրջաններում պաշտպանության գիծը դառնում էր համատարած, իսկ առանձին դեպքերում կատարվում էին էշելոնացման փորձեր: Ի տարբերություն պաշտպանությունը չէշելոնավորելու ձգտմանը՝ լեռներում այն լայնորեն հարկավորվում<sup>33</sup> (յարուսավորվում) էր, որով ձեռք էր բերվում կրակի մեծ խտություն: Ընդ որում, այս միտու-

<sup>32</sup> «Դարաբաղի ազատագրական պատերազմ 1988-1994: Հանրագիտարան», Եր., 2004, էջ 148, 841, 695:

<sup>33</sup> *Տե՛ս Тактика (рота, батальон)*, стр. 174.

մը վառ կերպով դրսևորվեց Արցախյան պատերազմի բոլոր փուլերում ու խրախուսելի է հետագայում կիրառելու համար:

Պատերազմի առաջին ամիսներին խորհրդային զորքերի համատարած պաշտպանական բնագծերի բացակայությունն էր պատճառը, որ Աֆղանստան ներխուժելուց ընդամենը մի քանի ամիս անց (1980 թ. գարնանը) խորհրդային զորքերի իրականացրած առաջին խոշոր օպերացիաների նպատակը Պակիստանից մոջահեդների ներթափանցումը կանխելն էր: Այս կարգի հարվածներին դիմակայելու համար մոջահեդների խմբերը կազմակերպչական առումով զգալի փոփոխություններ էին կրում: Եթե պատերազմի սկզբում նրանց գործողությունների արդյունավետությունը ցածր էր, ապա շուտով այն աճեց, նախ և առաջ, նոր կազմակերպության շնորհիվ: Մոջահեդները խուսափում էին բացահայտ առճակատումից, իսկ «հարվածիւր և փախիւր» մարտավարությունը նրանց դարձնում էր անչափ վտանգավոր և անորսալի: Պարզվեց, որ մոջահեդների այս նոր մարտավարությանը հակադրվելու համար խորհրդային զորքերի լեռնային մարտավարության զինանոցը ևս անչափ ազդատիկ է:

Խորհրդային ռազմական հայեցակարգում եթե պարտիզանական մարտավարության տարրերով պայքարի վարումը հնարավոր էր համարվում, ապա ուղղակիորեն բացառվում էր պարտիզանական ջոկատների դեմ պատերազմի հավանականությունը: Այդ պատճառով երբեք լրջորեն չէր քննարկվել հակապարտիզանական մարտավարության մշակման հարցը և տեսական մոտեցումների ու իրականության միջև հակասություններ էին ծագում:

Խորհրդային բանակի ո՛չ զինվորներին, ո՛չ սպաներին և ո՛չ էլ գեներալներին երբեկից է՛ին պատրաստել տեղական բնակչության աջակցությունը վայելող պարտիզանական ջոկատների դեմ երկարատև պայքարի համար: Առաջադրված խնդիրների լուծման ժամանակ ճիշտ չկողմնորոշվելով՝ խորհրդային զորքերի միջին և բարձր հրամանատարներն ի վիճակի չէին լինում համարժեք որոշումներ ընդունել: Օրինակ՝

չնայած լեռներում գորաշարժերի հետ կապված լուրջ խնդիրներին՝ գործի էին դրվում տանկային գնդեր:

Մեքենայացված գորամասերը մեծ կրակային հզորություն ունեին, բայց չէին կարողանում էապես թուլացնել հակառակորդին: Մոշահեղներն արագորեն սովորեցին գրոհել շարասյուններով շարժվող այդ գորամասերի վրա ու պարզվեց, որ նրանք այդքան էլ թույլ հակառակորդ չեն: Սկսեց ի հայտ գալ լեռնահրաձգային դիվիզիաների բացակայությունամբ առաջացած բացը:

Այս դիվիզիաներն իրենց լավ էին դրսևորել Հայրենական մեծ պատերազմի տարիներին Կովկասի ու Կարպատների մոտ ծավալված մարտերում, սակայն վերացվել էին դեռևս 1950-ական թթ. սկզբներին: Լեռնահրաձգային դիվիզիաների վերացման հիմնական պատճառը միջուկային զենքով զինվող խորհրդային բանակի՝ որակապես նոր մարտական հնարավորություններն օգտագործելու ձգտումն էր: Բացի այդ, սառը պատերազմի «պարտադրանքով» ԽՍՀՄ-ում պատրաստվում էին հիմնականում եվրոպական ՌԳԹ-ում վարվելիք հակամարտությանը, որում բոլոր շնախատեսված դժվարությունները հնարավոր կլինե՞ր հաղթահարել զանգվածային ոչնչացման զենքերի (ՁՈՁ) կիրառումով: Ակնհայտ է, որ այս ուղղամարական համակարգի որդեգրումից հետո ԽՍՀՄ-ում գործերի լեռնային պատրաստությունամբ ոչ ոք լրջորեն չէր զբաղվելու:

Մարտավարության դասագրքերում լեռնային ՌԳԹ-ում մարտերի կազմակերպման առանձնահատկությունների մասին գրեթե ոչինչ չէր նշվում կամ տրված տեղեկատվությունն ուղղակի անբավարար էր: Այսպես, ԽՍՀՄ ՁՈԻ ինժեներական զորքերի ստորաբաժանումների հրամանատարների համար նախատեսված ուսումնական ձեռնարկում գործնականում ոչինչ չկա լեռներում ինժեներական ստորաբաժանումների գործողությունների առանձնահատկությունների մասին<sup>34</sup>, իսկ վերը նշված «Մարտավարություն (վաշտ, գումարտակ)» 464 էջանոց ձեռնար-

<sup>34</sup> Тактико-специальная и техническая подготовка подразделений инженерных войск, под ред. А.П. Горбачева, М., 1988.

կում ընդամենը չորսական էջ է տրամադրված լեռներում պաշտպանության և հարձակման կազմակերպման խնդիրներին, իսկ ձեռնարկի մյուս բաժիններում (ստորաբաժանումների տեղաբաշխումը տեղում, պահակային պահպանություն, հետախուզություն, մարտական պահպանություն, ինժեներական և քիմիական ապահովում, պաշտպանություն ԶՈԶ-ից, մարտավարական քողարկում և այլն) լեռնային մարտավարության առանձնահատկությունների մասին ոչինչ չկա:

Առկա բացը լրացնելու ուղղությամբ միջոցառումներ ձեռնարկվեցին միայն 1982 թ.<sup>35</sup>: Թուրքեստանյան օկրուգում սկսեց իրականացվել Աֆղանստան ուղարկվելու համար նախատեսված նորակոչիկների հատուկ լեռնային պատրաստություն, որի արդյունքում նորակոչիկների մարտական պատրաստության համակարգի՝ «երիտասարդ մարտիկի ծրագրի» (ԵՄԾ), տևողությունը մյուս ռազմական օկրուգների համեմատ գրեթե եռապատկվեց և տևում էր երեք ամիս: Նորակոչիկներին ուսուցանում էին լեռներում փոքր տարածությունների վրա և, հատկապես, գիշերը մարտի վարման գաղտնիքները<sup>36</sup>: Դրանից հետո էլ ռազմական տեսաբանները նշում էին, որ ուսուցման այդ ժամաքանակն առանձին դեպքերում բավարար չէր լինում և խորհրդային զինվորների մեծ մասը չէր կարողանում մոշահեղների հետ մրցել՝ մարտում ժայռերի մագլցման կամ այլ կարգի տեղաշարժերի ժամանակ: Շուտով ԵՄԾ-ն երկարացվեց ևս երեք ամսով՝ կազմելով երկամյա պարտադիր զինվորական ծառայության մեկ քառորդը:

Մինչ այդ, դեռևս 1980 թ. երկրորդ կեսից, գործի էին դրվել հատուկ նշանակության ստորաբաժանումներ, որոնք ավելի լավ էին զինված և վարժեցված: Ի դեպ, լեռներում օդադեսանտային (դեսանտագրոհային) ուժերով լեռնահրաձգային զորամասերի բացը լրացնելու ռազմավարությունն, ընդհանուր առմամբ, իրեն արդարացրեց նաև Չեչենական պա-

<sup>35</sup> П.А. Аллан, Д. Клей, указ. соч., стр. 334.

<sup>36</sup> Տե՛ս նույն տեղում:

տերազմների տարիներին և, թեև ՀՀ ԶՈՒ-ում կիրառելու հարցը վիճելի է<sup>37</sup>, սակայն լուրջ մտորումների տեղիք է տալիս:

Մեր տարածաշրջանում լեռնահրաձգային ստորաբաժանումների կիրառման խնդիրը կարևոր ու հեռանկարային է թվում, որի պատճառով հարկ ենք համարում այն քիչ ավելի հանգամանորեն վերլուծել:

Հսկայական բանակների միջև ճակատամարտերը մնացել են անցյալում: Արդեն այսօր ակնհայտ է, որ մոտ ապագայի պատերազմները միտում ունեն վերածվելու էլիտար զորամասերի (ստորաբաժանումների), տիեզերական միջոցների, համակարգիչների, կապի հանգույցների, նորագույն ու գերճշգրիտ զենքի դիմակայություն: Ակնհայտ է, որ համազորային մարտի վարման համար պատրաստվող զորամասերն առանձին դեպքերում ի վիճակի չեն լինում ամբողջ ծավալով հաղթահարելու լեռնային (լեռնաանտառային) տեղանքում ծագող դժվարությունները: Շեշտենք, որ վերջին թերությունը պայմանավորված չէ այս կամ այն բանակի մարտական պատրաստության համակարգի անկատարությունամբ: Հարցն այն է, որ ժամանակակից հակառակորդը ոչ միշտ է կազմակերպված բանակի կամ ռազմաճակատի տեսքով հանդես գալիս: Բազմապիսի մարտական առաջադրանքներ կան, որոնց իրականացումը հնարավոր է միայն հատուկ պատրաստություն անցած արհեստավարժ զինվորների խմբերի ուժերով (նույնն է տրամաբանությունը ահաբեկիչների պարագայում): Այդ խմբերը, օգտագործելով տեղանքը, գաղտնի տեղաշարժվում են, հանկարծակի հայտնվում, ջախջախիչ հարված հասցնում ամենակարևոր կետերին և նույն ձևով անսպասելի հեռանում: Անակնկալ գրոհներին դիմակայելու համար պետք է ունենալ օպերատիվ ղեկավարման հուսալի կենտրոններ և լավագույն պատրաստություն անցած ընտիր ստորաբաժանումներ:

Ռազմական գիտություն, մարտական տեխնիկայի և սպառազինությունների զարգացման հետևանքով բանակներում էլսպես մեծացել է մասնագիտական խորը գիտելիքների տիրապետող անձնակազմով համալր-

<sup>37</sup> Այս մասին տե՛ս ստորև:

ված ստորաբաժանումների դերը: Մի քանի տասնյակ մարտիկ ունեցող այդպիսի ստորաբաժանումը դժվարանցանելի լեռներում առանձին մարտական առաջադրանքներ շատ ավելի արդյունավետորեն է կարողանում կատարել, քան ամբողջ մոտոհրաձգային զորամասը:

Վաղուց արդեն հասունացել է ՀՀ զինված ուժերի (ԶՈՒ) զորամիավորումներում լեռնահրաձգային ստորաբաժանումներ ստեղծելու հարցը: Դրանց առկայությունը զորամիավորումների հրամանատարներին հնարավորություն կտա օպերատիվորեն լուծել ծագող խնդիրները:

Օղադեսանտային (դեսանտագրոհային) ստորաբաժանումների կիրառումը նպատակահարմար չէ, քանի որ միաժամանակ մի քանի տեղամասերում զորամասերի դեսանտավորում իրականացնելու համար նախատեսված մեծաթիվ ռազմական ավիացիա մեր զինված ուժերը չունեն և տեսանելի հեռանկարում չեն ունենա: Իրապես, մեծաթիվ ավիացիայի բացակայությունը ՀՀ ԶՈՒ-ին հնարավորություն չի տա անսպասելի գործողություններ իրականացնել: Հակառակորդը, մեկ կամ երկու տեղամասում իջեցված դեսանտի մասին տեղեկատվությունը ստանալով, իր ամբողջ ռեզերվները կկենտրոնացնի նրանց դեմ՝ վստահ լինելով, որ այդ պահին մեր կողմն ի վիճակի չէ ավելին անել:

Շեշտենք, որ ավիացիայի անբավարար քանակի փաստի արձանագրումը չի կարող դիտվել որպես ՀՀ ԶՈՒ թուլության վկայություն: Մեր տարածաշրջանի մյուս պետությունները ևս չունեն միաժամանակ մի քանի տեղամասում դեսանտավորում իրականացնելու հնարավորություն ունեցող ավիացիա: Թերևս, որոշ վերապահումներ կարելի է անել միայն Թուրքիայի պարագայում, որի դեսանտային ուժերը թեև բավականին մեծաթիվ են, սակայն պատրաստվածության ու տեխնիկական ապահովվածության առումով հեռու են ժամանակակից ստանդարտներից և օր-օրի էլ ավելի են հեռ մնում: Հիմնավորելու համար նշենք, որ դեռևս 1980-ական թթ. կեսերին, ընդամենը մեկ կորպուսի ուժերով համազորային օպերացիաներն իրականացնելու համար, միայն ճեղքման տեղամասում առաջարկվում էր ունենալ 280-300 թնդանոթ և ականանետ, կրակային աջակցության համար նախատեսված մոտ 90 ուղղա-

թիւ և մարտավարական ավիացիայի մինչև 50 ինքնաթիռ<sup>38</sup>: Եթե այս թվին ավելացնենք նաև հարձակման թևերում ներգրավվող մարտական տեխնիկական, դեսանտավորման համար նախատեսված ուղղաթիռները և արդյունքը բազմապատկենք հարձակմանը ներգրավվող զորամիավորումների քանակի վրա, ապա պատկերն ամբողջական կլինի:

Վերջին տարիների տեղային պատերազմների փորձը վկայում է, որ օպերատիվ խտուժյան այս պատկառելի մակարդակը ևս բավարար չի լինում ճեղքում իրականացնելու համար: Ընդ որում, հարվածին ներգրավվող մարտական տեխնիկայի քանակը կարող է աճել մի քանի անգամ: Օրինակ՝ Պարսից ծոցի 1990-1991թթ. պատերազմում ՄԱԿ-ի բազմազգ ուժերի կազմում գործող ԱՄՆ-ի 7-րդ բանակային կորպուսի միայն մեկ դիվիզիայի (1-ին մեքենայացված) հարվածային երկու խմբավորումներից յուրաքանչյուրն ուներ ավելի քան 300 տանկ և մոտ 200 ՀՄՄ<sup>39</sup>: Հատկանշական է, որ հրետանու խտուժյունը մեծ չէր, սակայն կիրառվեցին հիմնականում կասետային արկեր (գիվիզիայի հարձակման շերտում՝ մոտ 11 հազար հրետանային արկ և ավելի քան 410 հրթիռ), որով հարվածների կրակային հզորությունն էապես մեծացավ<sup>40</sup>: ՀՏ և ՀՕՊ միջոցների կատարելագործումն արդեն իսկ հանգեցրել է մի իրավիճակի, երբ լեռնային շրջաններում ևս մեծաթիվ մարտական տեխնիկայի կիրառման անհրաժեշտությունն անվիճելի է:

Ի դեպ, Արցախյան պատերազմի ընթացքում ևս իրականացվեցին մի քանի մեծամասշտաբ հարձակողական գործողություններ, որով հիմնավորվում է հետագայում դրանց իրականացման հավանականությունը: Օրինակ՝ 1992թ. հուլիսյան հարձակմանն ադրբեջանցիները ներգրավել էին ավելի քան 150 միավոր զրահատեխնիկա և մի քանի տաս-

<sup>38</sup> *История военного искусства*, под ред. П.А. Жилина, М., 1986, стр. 432-433.

<sup>39</sup> Л.С. Золотов, “Взгляды на развитие способов ведения общевойсковой операции и боя”, *Военная мысль*, №3, 1998, стр. 39.

<sup>40</sup> Նույն տեղում, էջ 40:

նյակ հազարների հասնող հետևակ<sup>41</sup>: Հետևաբար, պետք է կարծել, որ նոր պատերազմի սանձազերծման գործում «հաշոդուխյունների» հասնելու դեպքում մեր տարածաշրջանում ևս հնարավոր են, եթե ոչ ավիացիայի, ապա, գոնե զրահատեխնիկայի զգալի կուտակումներով իրականացվող հարձակումներ:

Լեռնահրաձգային ստորաբաժանումների (զորամասերի) պարագայում խնդիրն այլ է: Լեռնային հատուկ պատրաստություն անցած ստորաբաժանումների ստեղծման անհրաժեշտությունը մերժողների գլխավոր հակափաստարկը որակապես նոր կազմակերպական կառուցվածք ունեցող մարտական միավորների վրա ծախսվող գումարի հայթայթման հետ կապված հավանական դժվարություններն են: Հայտնի է, որ պետությունների մեծ մասն առայժմ ի վիճակի չէ հսկայական ներդրումներ կատարել նոր զորատեսակների ստեղծման համար անհրաժեշտ ծախսերը հոգալու, առավել ևս՝ մեծաթիվ արհեստավարժ բանակ պահելու համար: Որոշ մասնագետների կարծիքով, այսպիսի ստորաբաժանումներ չի կարողանա ստեղծել նաև Հայաստանի Հանրապետությունը:

Մեր կարծիքով, ՀՀ ԶՈՒ-ի մարտական պատրաստության ներկայիս մակարդակը թույլ է տալիս արդեն այսօր, առանց մեծ ծախսեր կատարելու, ստեղծել համապատասխան պատրաստություն ստացած զինծառայողներով համալրված, նախկինից որակապես տարբերվող, մարտական հնարավորություններ ունեցող լեռնահրաձգային գումարտակներ: Այդ ստորաբաժանումներն ի վիճակի կլինեն մարտական գործողություններ վարել դժվարին տեղանքում ձմռանը, հիմնական ուժերից կտրված լինելով և «գրսից» օգնություն չսպասելով, իսկ մարտիկների անթերի վարժվածությունն ու ստորաբաժանման հաստիքային սպառազինությունը լիովին բավարար է դժվարին առաջադրանքների կատարման համար: Կարևոր է նշել, որ գումարտակները փոքր մարտական միավորներ չեն և, անհրաժեշտության դեպքում, ի վիճակի կլինեն էական

<sup>41</sup> Ս.Ռ. Հասրաթյան, նշվ. աշխ., էջ 47:

դերակատարում ունենալ բարձր լեռնային կամ լեռնաանտառային տեղանքում վարվող ամենակարևոր օպերացիաներում:

Լեռնահրաձգային ստորաբաժանումներն ուղղակի անփոխարինելի կլինեն պատերազմի առաջին փուլում՝ հակառակորդի առաջին հարվածի անդրադարձման ժամանակ: Կարևորագույն գերիշխող բարձունքների պահպանումով նրանք կարող են ոչ միայն առանձին զորամասի կամ զորամիավորման պաշտպանական օպերացիային ակտիվութուն հաղորդել, այլև հնարավորութուն տալ փոխելու ամբողջ պատերազմի ընթացքը: Առաջին հարվածի անդրադարձման գործում ունեցած այդ կարևոր առաքելությամբ լեռնահրաձգային գումարտակների կիրառման խնդիրը նեղ մարտավարական հարթությունից տեղափոխվում է օպերատիվ արվեստի և, նույնիսկ, ռազմավարության բնագավառ:

Միևնույն ժամանակ, պետք է կատարել մեկ կարևոր վերապահում: Գլխավոր հարվածն իրենց վրա վերցնելով՝ պատերազմի սկզբում առանցքային դերակատարում ունեցած լեռնահրաձգային գումարտակները մյուս փուլերում չեն կարողանա նույն հաջողությամբ գործել<sup>42</sup>: Ասվածը հիմնավորող մի քանի պատճառներից բերենք երկուսը.

- առաջին հարվածն ամենահզորն է լինում, որի անդրադարձման ընթացքում պաշտպանվող ստորաբաժանումը ևս կարող է մեծաթիվ զոհեր տալ,
- հաջող աշտպանությունից հետո՝ հակահարձակման անցնելու փուլում, եթե մարտական գործողությունները տեղափոխվեն դաշտավայրային տեղանք, լեռնահրաձգային ուժերն ի վիճակի չեն լինի կատարելու նույն դերը և կգործեն որպես մոտոհրաձգային (հրաձգային) ստորաբաժանումներ:

Փորձի կուտակմանը զուգընթաց, նաև համապատասխան միջոցների առկայության դեպքում, լեռնահրաձգային գումարտակներից բացի,

<sup>42</sup> Այս խնդրի լուծման համար մեր զինված ուժերում կան հատուկ նշանակության և դեսանտային զորամասեր, որոնց մարտական կիրառության հարցերն առանձին ուսումնասիրության կարիք ունեն:

կարելի է ստեղծել բանակային ենթակայության մեկ-երկու գունդ կամ գումարտակները վերակազմավորել գնդերի:

Որոշ կազմակերպական հարցերի լուծումից հետո ՀՀ ԶՈՒ սպայական դարբնոցի՝ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի վրա կարելի է դնել նաև համապատասխան սպայական կադրերով լեռնահրաձգային ստորաբաժանումների համալրման խնդիրը: Ինստիտուտի ուսումնանյութատեխնիկական բազան ու դասախոսական կազմի պատրաստվածություն մակարդակը, մեր կարծիքով, միանգամայն հնարավոր են դարձնում այս կարգի առաջադրանքների կատարման հնարավորությունը: Անհրաժեշտության դեպքում, թերևս կարող է ծագել որոշ նեղ մասնագետներով համալրելու, ինստիտուտի ուսումնական կենտրոնում կամ հրաձգարանում որոշ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն, որոնք ևս լուծելի խնդիրներ են:

Աֆղանստանում խորհրդային զորքերն այլ կերպ լուծեցին լեռնահրաձգային զորամասերի խնդիրը. զորամասերն աստիճանաբար դարձան թեթև ու շարժունակ<sup>43</sup>: Նրանց հիմնական մարտական միավորը մոտոհրաձգային գումարտակն էր, որը ուժեղացվում էր օդադեսանտային ստորաբաժանումներով ու մարտական գործողություններ վարում 3-5 օրերի ընթացքում: Ավելի մեծ քանակությամբ էին կիրառվում մարտական ուղղաթիռները, որով նոր հաջողություններ արձանագրվեցին: Մի-24 ուղղաթիռները և Սու-25 գրոհային ինքնաթիռները լեռներում հետևակին տալիս էին այն աջակցությունը, որը հարթավայրերում տալիս էին տանկերը, մասամբ՝ հրետանին:

Արցախյան ճակատներում ուղղաթիռները մեծ ծավալով չեն կիրառվել, բայց դեռևս աֆղանական պատերազմի փորձով ապացուցվել էր լեռներում ուղղաթիռների անփոխարինելի լինելը: Չեչենական պատերազմների ընթացքում ռուսական ավիացիայի կիրառումը լրացուցիչ անգամ հիմնավորում է այս տեսակետի իրավացիությունը:

<sup>43</sup> *Տե՛ս* *Войны второй половины XX века*, стр. 363-365.

Ի տարբերություն օգուժի, խորհրդային գրահատեխնիկան Աֆղանստանի լեռներում կուվելու համար հարմարեցված չէր: ՀՄՄ-ների վրա տեղադրված դանդաղ կրակող 73 մմ-ոց հրանոթները 30 մմ-ոց ավտոմատ հրանոթներով փոխարինելուց հետո միայն տեխնիկան դադարեց թեթև թիրախ լինել մոշահեղների համար: Միևնույն ժամանակ նշենք, որ խորհրդային 40-րդ բանակը արագորեն մարտական փորձ էր կուտակում: Թերևս միայն ռազմական գրականությանը ծանոթանալը բավարար է պատկերացնելու համար, թե ինչ հսկայական ազդեցություն էր ունենում պատերազմը զորքերի ղեկավարման համակարգի զարգացման վրա: Բայց մարտավարության կատարելագործումը հանդիպում էր բազմաթիվ արգելքների: Մի կողմից, դժվարին տեղանքում, առանց ժամանակ կորցնելու, իրականացվում էին օպերացիաներ, որոնցում անհրաժեշտ ճկունությունը մեծ հարցականների տակ էր դնում դասագրքային «ճշմարտությունները»: Մյուս կողմից էլ բազմաթիվ էին օրինակները, երբ կանոնադրերից թույլ տրված աննշան շեղումները տասնյակ զոհերի պատճառ էին դառնում:

Աֆղանական պատերազմը վերջին երկու-երեք տասնամյակների տեղային պատերազմներից միակն էր, որի ընթացքում ձեռք բերված փորձը հասցրեց կանոնադրորեն ամրապնդվել դեռևս նախքան պատերազմի ավարտը: Նկատենք, որ մարտական կանոնադրություններում լեռնային տեղանքի վրա ուշադրություն սևեռելը չէր նշանակում, թե հիմնահարցով սկսել էին զբաղվել բոլոր մակարդակներում: Մասնավորապես, ինչպես նշեցինք վերևում, տակավին լուծված չէին կուտակված փորձը ուսումնական ձեռնարկներում, հրահանգներում կամ կատարման համար պարտադիր համարվող այլ փաստաթղթերում ներառելու խնդիրը:

Իրականության դեմ շմեղանչելու համար նշենք, որ ո՛չ հայկական և, առավել ևս, ո՛չ էլ ադրբեջանական ռազմական տեսաբանները, ընդհուպ մինչև Արցախյան պատերազմի ակտիվ հակամարտության փուլի ավարտը (1994 թ.), չկարողացան ընդհանրացնել մեծաթիվ զոհերի

գնով ձեռք բերված մարտական փորձը, և նոր մարտական կանոնադրություններ չգրվեցին<sup>44</sup>:

Բազմիցս նշվել է նաև, որ խորհրդային զորքերի ամենաթույլ տեղը սերժանտից մինչև դասակի հրամանատար օղակն էր<sup>45</sup>: Միակողմանի՝ միայն եվրոպական թատերաբեմում ռազմական գործողությունների վարելու համար նախապատրաստված որոշ սպաներ իրենց ծառայություն սկզբում չէին կարողանում ինքնուրույն որոշումներ ընդունել: Դա մի կողմից պայմանավորվում էր գոյություն ունեցող համակարգով, մյուս կողմից՝ կրթությամբ ու դաստիարակությամբ: Սակայն պետք է շեշտել, որ պետերի ու ենթակաների տարաձայնությունները հազվադեպ էին: Վտանգի պահերը համախմբում էին զինվորական կոլեկտիվները: Ստեղծվել էր ուշագրավ մի համակարգ, երբ ատելությունն ու կուտակված լիցքերը ենթակաները թափում էին հակառակորդի վրա: Ռազմական դաստիարակության և կոլեկտիվիզմի մթնոլորտի ձևավորման այս համակարգը ուսանելի է ու հետագայում հանգամանալից ուսումնասիրման կարիք ունի:

Նախքան լեռներում մարտական գործողությունների նախապատրաստումը, պետք է նկատի ունենալ նաև, որ անհրաժեշտ է լինելու հսկայական ծավալի «ոչ մարտական» աշխատանքներ իրականացնել: Զորքի մատակարարման դժվարությունները ստիպում են ստեղծել զինամթերքի մեծ պաշարներ, ինչպես նաև մեծ ուժերով պաշտպանել թիկունքն ու հաղորդակցողիները (կոմունիկացիաները): Այսպես, թեև 1984 թվականից հատուկ նշանակության զորքերի կիրառման ակտիվացումը հարձակողական բնույթի հաղորդեց Աֆղանստանում տեղակայված խորհրդային զորքերի գործողություններին, սակայն նրանց ուժերի զգալի մասը զբաղված էր ինժեներական բնույթի աշխատանքներով և կայազորային ծառայությամբ (մոտոհրաձգային 55 գումարտակներից 32-ը նախատեսված էին հրամանատարական կենտրոնների և այլ

<sup>44</sup> Տե՛ս ՀՀ ԶՈՒ Մարտական կանոնադրություն, մաս II, եր., 1999: Մաս III, եր., 1997:

<sup>45</sup> П.А. Аллан, Д. Клей, Указ. соч., стр. 380-384.

օբյեկտների պաշտպանության համար, իսկ աֆղանա-պակիստանյան սահմանն ամբողջությամբ փակելու համար պետք էր կրկնապատկել Աֆղանստանում տեղակայված զորքերի քանակը<sup>46</sup>):

Հասկանալի է, որ մեկ հոգվածում հնարավոր չէ վերլուծել լեռնային պատերազմների բոլոր առանձնահատկությունները: Այս հոգվածն առկա բացը լրացնելու մեկ փորձ է միայն: Տակավի՛ն ուսումնասիրության կարոտ են գիշերային մարտերը, դարաններն ու ծուղակները: Թեև վերջին տարիներին այս և մի շարք այլ խնդիրների ուսումնասիրության ուղղությամբ որոշակի աշխատանքներ կատարվել են<sup>47</sup>, սակայն բազմաթիվ հարցեր կան, որոնց պատասխանելով, հնարավորություն կստանանք հարստացնել մեր ՌԳԹ-ում մարտական գործողությունների վարման գիտանոցը և է՛լ ավելի ամրացնել պետական սահմանները:

Դարեր շարունակ հայոց ռազմավեստը զարգացել է հեռու և մոտիկ «հարևանների» ոտնձգություններից երկրի պաշտպանության ռազմավարությունում տեղանքի կարևոր դերի գիտակցման պայմաններում: Լեռները հուսալի պահպան են եղել ավերվող շրջանների բնակչության համար և դրանց հենվելով է միշտ պատերազմել հայոց բանակը: Գիտության և տեխնիկայի զարգացման պայմաններում այսօր հնարավորություն ունենք էլ ավելի արդյունավետորեն օգտագործել լեռների պաշտպանող հատկությունները: Դրանք ամբողջապես օգտագործելը և հաջորդ սերունդներին պետությունն է՛լ ավելի հզորացած վիճակում հանձնելը՝ այսօր ապրողներին սրբազան պարտականությունն է:

<sup>46</sup> П.А. Аллан, Д. Клей, Указ. соч., стр. 87.

<sup>47</sup> Հ. Պետրոսյանց, Կրակային դարանների կիրառումը տեղային պատերազմներում, Հայկական բանակ, №1-2, 2002, էջ 92-96:

## 19.

ՀԱՍՏՈՒՅՆ ՀՐԱՄԱՅՆՎԱՆ. ԳԱՐՏՆԻ ՕՊԵՐԱՑԻԱՆԵՐ  
ԵՎ ԾԱԾՈՒԿ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ \*

### ՌՈՈՒՅ ՄԵՐԻ ՇԵՂՈՆ

#### Խմբագրի կողմից.

Թարգմանաբար հրապարակելով սույն հոդվածը, կարևորում ենք ոչ այնքան նրանում հիշատակված (մասնագետներին հիմնականում ծանոթ) պատմական փաստերի հետաքննությունը, որքան կատարված հարցադրումների՝ անվտանգության մեթոդյա հասկացությունների և պրակտիկայի վրա խարսխվածությունն ու խիստ այժմեականությունը, մասնավորապես՝ արդի համաշխարհային ֆաղափականության մեջ Հոռմեական կայսրության փորձարկած գաղտնի գործողությունների կիրառելիության հնարավորությունների անդրբեմյան ֆննարկումը:

Զուտ պատմագիտական առումով ուսումնասիրության ամենամեծ թերությունն այն է, որ, արևմտյան հայագիտության ավանդական մոտեցումներով, Հին Հայաստանը դարձյալ ներկայացված է որպես գերհզորների ձեռքին խաղալիք մի երկիր: Իրականում, Մեծ Հայքի թագավորությունը ռազմականապես, մշակութապես ու տնտեսա-

---

\* Rose Mary Sheldon, "The Ancient Imperative: Clandestine Operations and Covert Action," *International Journal of Intelligence and Counterintelligence* [Հետախուզության և հակահետախուզության միջազգային ամսագիր], հատոր 10, №3, 1997 (էջ 299-315):

պես հզոր մի ուժ էր, որն Արևմուտքն ու Արևելքը բռնագավթած-միավորած, անհամեմատ ավելի ընդարձակ տարածքի ու մեծ ռեսուրսների տեր կայսրությունների հետ պայքարում կարողացավ հաղթահարել իր համար եզնաժամային այդ դարաշրջանը և, ի վերջո, պահպանեց տարածաշրջանում իր տեղը՝ երեք հզորների շարքում\*\*:

Ա.Ա.

*Գաղտնի օպերացիաները և ծածուկ գործողությունները պետական կառավարման ամենատարածված, թեպետև ամենահաճախ պախարակվող միջոցներից են: Բոլոր պետություններն էլ դիմում են դրանց, որևէ պետություն չի ցանկանում ընդունել այդ փաստը, իսկ եթե այդ գործողությունները հայտնի են դառնում, աշխարհը դրանք խստորեն դատապարտում է: Այդուհանդերձ, պատմական փաստերը վկայում են, որ քիչ են այն հասարակությունները (հատկապես նրանք, որոնք կայսրություն չեն եղել), ում հաջողվել է զերծ մնալ նման օգտակար և ճկուն միջոցների կիրառելուց, երբ ռազմական գործողությունների դիմելը գործնականում կամ անօգուտ եղել է, կամ էլ՝ անհնար: Այս իրողությունն առավելագույն կերպով ակնառու է հին հռոմեացիների պարագայում: Իրենց հանրային քարոզչությամբ հռոմեացիները բաց, ուղղամիտ և ազնիվ էին ներկայանում: Իրականում, սակայն, հռոմեացիները քաղաքական մեքենայությունների, բանսարկությունների, լրտեսության ու ստոր հնարքների վարպետ էին: Հինգ դար շարունակ հռոմեացիները երկաթյա բռունցքով տիրել են միջերկրածովյան աշխարհում, բայց մեծավ մասամբ հռոմեական տիրապետությունը ռազմական ուժի կիրառման ուղղակի արդյունք չի եղել:*

---

\*\* Վերջերս մեզանում հրապարակվել է նախորդ, մակեդոնական փուլում գաղտնի գործողությունների քննությանը նվիրված արժեքավոր մի աշխատություն՝ տե՛ս **Մուսադ Օհանյան**, Ալեքսանդր Մակեդոնացու արևելյան արշավանքը և Հայաստանը, Երևան, 2003:

Մերօրյա պատմաբանները դժվարություններ են ընդունում հոմեոսոֆիստների՝ հետախուզության գաղտնի մեխանիզմների և եղանակների կիրառման ծավալը<sup>1</sup>: Հին Հռոմում իրենց համարժեքներն են ունեցել հետախուզության այսօրվա մասնագետներին հայտնի այնպիսի տերմիններ, ինչպիսիք են քաղաքական ներգործության գործողություններ, հակասովյունները սերմանումը և պառակտումը, քարոզչությունը, քաղաքական հովանավորությունը, քաղաքական ապաստանի տրամադրումը, քաղաքական սպանությունները և կիսառազմականացված (*paramilitary*) գործողությունները: Նույնիսկ աղբյուրների սակավության պայմաններում, կարելի է պատկերացում կազմել Հին Հռոմի արտաքին քաղաքականության մեջ կիրառված ծածուկ գործողությունների և գաղտնի օպերացիաների պատկերի մասին:

## Խնդրի ուսումնասիրության խոչընդոտները

Աղբյուրների անբավարարությունը դժվարություններ է ստեղծում հետախուզության պատմությանը վերաբերող ցանկացած թեմա քննելիս, բայց գաղտնի գործողությունների ուսումնասիրության բարդությունը պայմանավորված է հինգ հիմնական խնդիրներով.

1. Գրավոր վկայությունների միակողմանիությամբ. երկու կողմերից բերված վկայությունները խիստ հազվադեպ են: Հռոմի պատմությունը ներկայացնում են այնպիսի պատմիչներ, ինչպիսիք են Լիվիոսը և Տակիտոսը, որոնք, սակայն, ցանկացած գաղտնի գործողություն փորձել են ներկայացնել պատկառելիության քողի ներքո: Կայսրության սահմաններից դուրս բնակվող ժողովուրդները հաճախ անգրագետ էին,

<sup>1</sup> 1989 թվականի նոյեմբերի 8-ին Վաշինգթոնում Ջորջ Վաշինգտոն համալսարանի դասական սեմինարներից (*George Washington University Classical Seminars*) մեկի ընթացքում Փրինսթոնի համալսարանի պրոֆեսոր Ջոզիա Օբերը ասաց. «Վաշինգթոնը Հին Հռոմից շատ բան կարող է սովորել պետական կառավարման հանդեպ բաց մոտեցման հարցում»: Կարծում եմ, ընդհակառակը՝ ավելի շատ բան մենք կարող էինք սովորել նրանց գաղտնի գործունեությունից:

ուստի և որևէ վավերագիր չեն թողել այն մասին, թե հռոմեացիներն իրենց դեմ ինչպիսի միջոցներ են կիրառել: Անգամ, երբ խոսքը մեծ կայսրուկությունների մասին է (օրինակ՝ պարսիկների կամ պարթևների), չունենք ոչ բանավոր ավանդույթով պահպանված տեղեկություններ և ոչ էլ վավերագրեր առ այն, թե նրանց արքունիքներում ներգործության ինչ և ինչպիսի գործողություններ են իրականացվել:

2. Ռազմական գործողությունները գաղտնի իրականացնելու անհրաժեշտության բացակայություն. Հռոմը հին աշխարհի ամենահզոր կայսրությունն էր, որն ուժ կիրառելու որևէ սահմանափակումներ չուներ: Չկար միջազգային իրավունք, չկային ցեղասպանության դեմ ուղղված իրավական փաստաթղթեր, չկային սխալները լուսաբանող լրատվամիջոցներ, հետևաբար չկար նաև սեփական արարքները թաքցնելու անհրաժեշտություն: Գրեթե միշտ գործում էր «Ուժեղը միշտ էլ իրավացի է» սկզբունքը: Այնտեղ, որտեղ կայսրը և՛ կառավարիչ էր, և՛ աստված, ի՞նչ կարիք կար որևէ բան թաքցնելու: Միայն նյութական և մարդկային ռեսուրսների պակասը կարող էր սահմանափակել կայսրին: Եվ հենց այս դեպքերում է հնարավոր դառնում բացահայտել գաղտնի գործողությունների կիրառման օրինակներ:

3. Հռոմեական կառավարությունում հետախուզական և արտաֆին գործոց մարմինների բացակայություն. Հռոմեացիների գործունեության իրականացման վարչարարական կողմը արձանագրման ենթակա չէ այն պարզ պատճառով, որ Հռոմեական կայսրության ներքին կենսագործունեության բազմաթիվ կողմերի մասին տեղեկությունները բացակայում են: Հետախուզական աշխատանքը, այդ թվում նաև ծածուկ գործողությունները հաճախ իրականացվում էին անհատների, այլ ոչ կենտրոնական իշխանությունների նախաձեռնությամբ: Հետախուզական աշխատանքը հիմնականում նպատակ ուներ ապահովելու ներքին անվտանգությունը. այդ իսկ պատճառով չէր ներգրավում օտարերկրյա կառավարությունների դեմ գործողությունները:

4. Հռոմեացիները խնամփով թափցրել են իրենց գաղտնի գործողությունները. Հռոմեացիները մշտապես դատապարտել են ռազմական խորամանկության դիմելը՝ կիվիոսի դասական ոճով ներկայացնելով իրենց որպես լատին ռամիկների հետնորդներ, ովքեր իրենց արժանապատվությանից ցածր էին համարում ցանկացած արհեստածին կամ անազնիվ քայլ<sup>2</sup>: Լրտեսական մեթոդներին և խորամանկությանն ապավինելը մշտապես վերագրվել է օտարներին և երկերեսանիորեն դատապարտվել՝ զուգորդվելով արդար ու իսկական պատերազմում ձեռնամարտի, այլ ոչ թե հնարքների, խորամանկության կամ էլ պատահական հաղթանակների գովաբանմամբ և քարոզմամբ<sup>3</sup>: «Դուք ... կապացուցեք Հռոմին և աշխարհին, ... որ հաղթել եք զենքի ուժով և ոչ անարդարացիորեն, խորամանկությամբ կամ խաբեությունբ զինադադարի խախտմամբ»<sup>4</sup>: Չնայած Պոլիբիոսը և այլ ապոլոգետներ շարունակ կրկնել են հռոմեական քարոզչության հիմքում ընկած գաղափարախոսությունը, պատմական փաստերը վկայում են գաղտնի գործողությունների, խորամանկությունների, խաբեության և կեղծիքի կիրառման մասին:

5. Չկար Հռոմին հավասարազոր համաշխարհային տերություն. Հին աշխարհում շատ հազվագեպ է եղել, երբ հավասարազոր երկու տերություն ավելի փոքր երկրին տիրելու կամ այդ երկրում քաղաքական զարգացումների վրա գաղտնի ներգործության համար մրցակցեին միմյանց հետ: Հռոմը զուր ջանքեր չէր գործադրում բանակցելու այն տերությունների հետ, որոնց հնարավոր էր ռազմական ճանապարհով ճնշել: Սովորաբար, ուժի կիրառումը կամ դրա սպառնալիքը բավա-

<sup>2</sup> Livy 9.36 Տարկինիուս Սուպերբուսի մասին, որ խաբեության և հնարամտության է դիմում, թեև այդ բոլորովին բնորոշ չէր հռոմեացիներին (*postremo minimo arte Romana*). հմմտ. *Frontinus* 1.2.2.:

<sup>3</sup> Տե՛ս F. Dvornik, *The Origins of Intelligence Services* (New Brunswick, 1974), էջ 53 կամ առավել նոր աշխատություններից՝ E.L. Wheeler, *Stratagem and the Vocabulary of Military Trickery* (Leiden, 1988), էջ 24:

<sup>4</sup> Herodian 4.14.8.

կան էին նպատակին հասնելու համար: Հիմնականում նրանց ախոյանը կամ մանրպուլացիայի, ներթափանցման և բանակցությունների շենթարկվող մշակույթ ունեցող բարբարոս ցեղերն էին, կամ էլ քաղաքակիրթ, բայց հեշտությունը պարտվող փոքր տերությունները:

Սույն հետազոտության համար առավել նպատակահարմար է գտնել Հռոմի մի այնպիսի հակառակորդ, որը բավական մեծ է, բավական հզոր, ազդեցիկ և գտնվեր այնպիսի հեռավորության վրա, որ միայն զենքի կիրառումը չլիներ նպատակահարմար, և որ ծածուկ մեթոդները միակ լուծումը լինեին:

Այդուհանդերձ, Հռոմի ռազմական գերակայության, դիվանագիտական և ռազմական քաղաքականության հետևում անգամ կարելի է տեսնել գաղտնի օպերացիաների և ծածուկ գործողությունների մասին վկայող փաստեր: Նշանակում է՝ հոռմեացիները քաջածանոթ էին այն հնարքներին, որ այսօր էլ կիրառում են հետախուզական ծառայությունները: Հռոմի՝ հանրապետությունից կայսրության անցման ժամանակահատվածում Պարթևստանի հետ հարաբերությունները կարող են լավագույն օրինակ ծառայել՝ պարզաբանելու բերված փաստերը:

### Յոթերորդին Պարթևստանի

Ժամանակի հզոր ռազմական գերտերության՝ Պարթևստանի առաջին շփումները Հռոմեական կայսրության հետ տեղի են ունեցել մ.թ.ա. I դարում: Առաջին իսկ պահից երկու տերությունների հարաբերություններում լարվածություն է առաջանում: Հաշվի առնելով, որ կողմերից և ոչ մեկն ի վիճակի չէր անվերապահ հաղթանակ տանել մյուսի նկատմամբ, յուրաքանչյուրն իր հերթին փորձում էր, պատմական հանգամանքների բերումով, երկու գերտերությունների միջև հայտնված Հայաստանը ներքաշել սեփական ազդեցության ոլորտ: Յուրաքանչյուրը փորձում էր հայոց գահին նստեցնել իր թեկնածուին: Հայաստանի խն-

դիրը տարիներ շարունակ անհանգստացրել է հոռմեական կայսրերին<sup>5</sup>: Քարքարոտ ու լեռնային, ամռան ամիսներին շոգ, իսկ ձմռանը ցուրտ՝ Հայաստանը դժվար էր գրավել, դժվար էր պահել, և անհնարին էր Հռոմին միացնել, մինչդեռ Պարթևստանը մնում էր ուժեղ և անհնազանդ: Ո՛չ Հռոմը, ո՛չ էլ Պարթևստանը չէին կարող թույլ տալ, որ հակառակորդը նվաճի Հայաստանը՝ առանց իրենց անվտանգություն և հեղինակություն անցանկալի կորուստների: Հոռմեացիների գերիշխանությունը Հայաստանում հաճախ ռազմական բնույթ ուներ, մինչդեռ ավանդույթների նմանություն և խառը ամուսնությունների արդյունքում հայերն առավել հակված էին դեպի Պարթևստանը:

Եվ հենց խնդրի ոչ ակնհայտ ռազմական լինելու շնորհիվ հնարավոր է դառնում ուսումնասիրել անդրկուլիսյան հնարքները: Այն պահերին, երբ ակնհայտ ագրեսիան ձախողման և, անկասկած, զգալի նյութական ծախսերի կարող էր հանգեցնել, օգնություն էին գալիս դիվանագիտությունն ու բանսարկությունները: Բացի այդ, պատերազմի դեպքում, անշուշտ, կտուժեին թե՛ Հռոմի և թե՛ Պարթևստանի տնտեսական շահերը: Երկուսն էլ շահագրգռված էին, որ Հնդկաստանի, Կենտրոնական Ասիայի և Զինաստանի առևտրական քարավաններն անցնեին Եփրատի դաշտավայրով: Այսպես, Ասորիքում Հռոմի և Պարթևստանի գերիշխանության ներքո Պալմիրան արագ դարձավ բարեկարգ փողոցներով, այգիներով և հասարակական շինություններով քարավանային մեծ և հարուստ քաղաք: Հոռմեացի մեծ պատմիչ Տակիտոսն անդրադարձել է Հայաստանում երկու «մեծ» տերությունների քաղաքականությանը: Կողմերը հաճախ ներգրավվում էին ազգայնական և զգացմունքային շահարկումներում, որը, ինչպես ստորև պարզ կդառնա, կարևոր դեր էր սկսել խաղալ շատ ավելի վաղ, քան ձևավորվեց արդի իմաստով ազգային քաղաքականությունը: Սեփական իշխանությունը և կերպարի ստեղծմամբ համակված հոռմեացիները և պարթևները հաճախ անտեսում էին հայե-

<sup>5</sup> Տե՛ս W. Henderson, "The Chronology of the Wars with Armenia 51-63 A.D.," *Classical Review* 15, no. 4 (1901), էջ 204-213 և 266-274:

րի ազգային բնավորության և ցանկությունների կարևորագույն հանգամանքը, չնայած խնդրի երկարաժամկետ և ոչ մի լուծում չէր կարող լինել՝ առանց այդ գործոնները հաշվի առնելու: Այդ իսկ պատճառով Հայաստանը ժամանակ առ ժամանակ իրեն անտեսված էր զգում կամ էլ հանդես գալիս փոխանցիկ գավաթի դերում:

### Առաջին շփումները

Հռոմի և Պարթևստանի առաջին դիվանագիտական հարաբերությունները տեղի են ունեցել մ.թ.ա. մոտ 58-57 թթ.՝ գահակալության մի խնդրի առնչությամբ: Պարթևստանի Հրահատ III թագավորի որդիներ Որոդեսը և Միհրդատը, հորը սպանելով, թագավորության համար եղբայրասպան պատերազմ սանձազերծեցին<sup>6</sup>: Արդյունքում, գահն անցավ ավագ եղբորը՝ Միհրդատին: Սակայն նա շատ խոցելի էր դարձել, այդ պատճառով էլ պարթև ավագանին նրան գահընկեց արեց՝ փոխարենը գահ բարձրացնելով Որոդես II-ին<sup>7</sup>: Փախուստի դիմած Միհրդատը ապաստան գտավ Ասորիքի կուսակալ Գաբինիոսի մոտ, որը որոշել էր Միհրդատին գաղտնի աջակցություն տրամադրել՝ կորսված թագավորությունը վերականգնելու գործում: Այսպիսով, հռոմեացիները, փաստորեն, ներգրավվեցին պարթևական գահակալության խնդրի մեջ: Հռոմի ֆինանսական և ռազմական աջակցությամբ Միհրդատ III-ը գրավեց Բաբելոնը և Սելևկիան, սակայն հետագայում անհաջողության մատնվեց: Որոդեսը վերադարձրեց իրեն Բաբելոնը և, սպանելով եղբորը, դարձավ Պարթևստանի միանձնյա տիրակալը:

Հռոմեացիները պարթևական գահի թեկնածուի հարցում սխալ ընտրություն էին կատարել: Բացի այդ, մ.թ.ա. 55 թ., երբ երկու եղբայրների միջև պայքարը դեռ ընթանում էր, Ասորիքում Գաբինիոսին փոխա-

<sup>6</sup> Dio Cassius 39.56.2.

<sup>7</sup> Justin 42.4.1. Dio Cassius 39.56 Որոդեսին ստիպում է առաջինը հասնել գահին: McDowell, *Coins from Seleucia*, 212; Newell, "Coinage of the Parthians" in *Survey of Persian Art*.

րինեց Մարկոս Լիկինիոս Կրասոսը: Զորավարական կասկածելի կարողություններով օժտված Կրասոսը 53 թ., առանց որևէ պատճառի, պատերազմ հայտարարեց Պարթևստանին: Որոգես թագավորն արշավեց հռոմեացիների դաշնակից Հայաստանի վրա: Այդ նույն ժամանակ պարթև զորավար Սուրենը Միջագետքում բախվեց Կրասոսի զորքերի հետ: Արդյունքում՝ հառանի ճակատամարտում հռոմեացիները խայտառակ պարտություն կրեցին: Կրասոսը սպանվեց: Այդ ճակատամարտում պարթևները ոչ միայն հռոմեական յոթ լեգեոն ջախջախեցին, այլև խլեցին հռոմեական արծավակիր դրոշները՝ ցուցադրելով դրանք պարթևական տաճարներում: Այս պարտությունն ապացուցեց, որ պարթևների դեմ ուղղված բացահայտ հարձակման մարտավարությունն անարդյունավետ է և անհաջողության է դատապարտված: Պարթևների կողմից Ասորիքի պատասխան գրավման սպառնալիքը դեռ բավականին մեծ էր, երբ մ.թ.ա. 51 թվականին Ցիցերոնը փոխկուսակալ նշանակվեց Կիլիկիայում: Պարթևների շարունակվող արշավներն ուժասպառ էին անում հռոմեական զորքը. այնուամենայնիվ, երկու կողմերից և ոչ մեկը հակված չէր ներգրավվել լայնածավալ ռազմական գործողությունների մեջ:

Զգալով ռազմական միջամտության անարդյունավետությունը՝ Ասորիքի հաջորդ փոխկուսակալ Բիբուլոսը նորից դիմեց գաղտնի միջոցների: Օգտվելով Որոգեսի նկատմամբ տեղի սատրապ Օմոդապատեսի անբարյացակամ վերաբերմունքից՝ Բիբուլոսը դրդում է նրան Որոգեսին գահընկեց անելու և փոխարենը նրա որդուն՝ Բակուրին գահ բարձրացնելու ծրագիր մշակել: Նման իրավիճակում առավել կարևորը գաղտնիության ապահովումն էր: Սակայն Որոգես արքան, արդյունավետ հետախուզական ծառայության շնորհիվ, բացահայտում է դավադրությունը և հետ կանչում Բակուրին<sup>8</sup>: Բակուրը զարմանալիորեն չի սպանվում, իսկ հետագայում նույնիսկ վերականգնում է զինվորական բարձր պաշտոնը

<sup>8</sup> Justin 42.4.5. տե՛ս R.M. Sheldon, Tinker, Tailor, Caesar Spy: *Espionage in Ancient Rome* դոկտորական թեզ (University of Michigan, 1987), էջ 202-204: N.C. Debevoise, *Political History of Parthia* (New York, 1968), էջ 82:

և դառնում պարթևական բանակի բոլոր ժամանակների լավագույն զորավարներից մեկը: Ջախողվում է հռոմեական ևս մեկ դավադրություն:

Երկու կողմերն էլ դիմում էին նման գաղտնի միջոցների: Պարթևները ևս համարում էին, որ անդրկուլիսյան գործողությունները, այդ թվում՝ հռոմեացիների միջև քաղաքացիական պատերազմ հրահրելը, արդյունավետ միջոց են: Հույս ունենալով վերագարձնել Ասորիքը՝ պարթևները, այնուամենայնիվ, Պոմպեոսի բանակին դեմ առ դեմ հանդիպելուն նախընտրում էին նպաստել Պոմպեոսի և Կեսարի միջև հակասությունների սրմանը: Սակայն Կեսարը նախընտրում էր շիտակ գործել: Նա համոզված էր. պարթևական հարցում հապաղումը լուծում չէր կարող լինել, ուստի մեծ արշավանք ծրագրեց ընդդեմ Պարթևստանի<sup>9</sup>: Մինչ Կեսարը զբաղված էր բանակի նախապատրաստմամբ, Հռոմում լուրջ միջոցներ էին ձեռնարկում ներքին իրավիճակը վերահսկելու ուղղությամբ: Նրա եղբորորդին՝ Օկտավիանոսը, իրականում լինելով ռազմական մարտավարությունն ուսումնասիրող գործակալ և առաջիկա արշավանքի համար հետախուզական տեղեկություններ հավաքող, իբր թե փրկիսոփայություն ուսանելու նպատակով, ուղարկվում է Ապոլոնիա<sup>10</sup>:

Հռոմեացիների լուրջ պատրաստություններն առավել խոսուն էին վկայում պարթևների նկատմամբ Հռոմի վերաբերմունքի մասին<sup>11</sup>: Բայց Կեսարի մահը վերջ դրեց նրա ծրագրերին՝ փրկելով պարթևներին անկասկած լուրջ պատերազմում ներքաշվելուց: Պարթևները շարունակ ջանում էին ներքին անհանգստություն սերմանել Հռոմում: Նրանք Կասիոսին Անտոնիոսին և Օկտավիանոսին հակադրվելու համար զորք տրամադրեցին: Դժբախտաբար, պարթևների այս ձեռնարկումը մ.թ.ա. 42 թվականին տեղի ունեցած Փիլիպպեի ճակատամարտում անհաջողության մատնվեց. հաղթանակ տարան Օկտավիանոսը և Անտոնիոսը:

<sup>9</sup> *Suetonius, Augustus* 6.

<sup>10</sup> *A.H.M. Jones, Augustus* (New York: W.W. Norton, 1970), էջ 10:

<sup>11</sup> *St' u Dio Cassius* 44.15: *Appian, Civil Wars* 2.110: *Plutarch, Caesar* 60: *Suetonius, Divine Julius* 79.3. *N.C. Debevoise, Political History of Parthia*, էջ 107:

## Պայթար Ասորիքի համար

Հռոմի և Պարթևստանի կողմից տարվող քարոզչական գործունեության ընդլայնումն ուղիղ համեմատական էր նրանց միջև հակասությունների խորացմանը: Անտոնիոսը, ժառանգելով Կեսարի դիվանը և պարթևական արշավանքի ծրագիրը, նպատակ դրեց կայսրությունը հոռմեական ուժով գրավել: Բայց պարթևները նախաձեռնությունն իրենց ձեռքը վերցրեցին: Մ.թ.ա. 40 թվականին, երբ Անտոնիոսը Կլեոպատրայի հետ գտնվում էր Եգիպտոսում, պարթևները, հոռմեացիների նկատմամբ առավելություն ստանալով, որոշում են դիմել հենց հոռմեացիների օգնությանը: Ուժերն ապահովելու նպատակով, Բրուտոսի և Կասիոսի առաջադրանքով, Պարթևստան մեկնած ղեսպաններից Քվինտոս Լաբիենոսը, իմանալով Փիլիպպեի ճակատամարտից հետո իրականացրած հրապարակային դատաստանների մասին, որոշում է անցնել պարթևների կողմը<sup>12</sup>: Պարթևական զորքը՝ Պարթևստանի արքա Որոդեսի որդի Բակուրի և Լաբիենոսի համատեղ հրամանատարությամբ, մ.թ.ա. 40 թ. գրավեց Ասորիքը և հարձակվեց Ապամեա քաղաքի վրա: Այնտեղ տեղակայված փոքր զորագնդերը հեշտությամբ պարտության մատնվեցին, քանզի ժամանակին ծառայել էին Բրուտոսի և Կասիոսի հետ, ուստի և բարյացակամ էին տրամադրված պարթևների հանդեպ: Սակայն թե՛ քանակական առավելության, և թե՛ տեղանքի զգալի ամրացվածության պատճառով տեղի կուսակալին և իր զորքը հաղթահարելն ավելի բարդ խնդիր էր ներկայացնում: Լաբիենոսը հոռմեական ճամբարի ուղղությամբ արձակվող նետերի վրա /բառացիորեն/ փաթաթված գրությունների միջոցով բարոյալքեց հակառակորդի բանակը: Այդ հաղորդագրությունը բարոյալքեց նաև տեղի կուսակալ Սաքսային, ով կեսգիշերով փախավ Անտիոք: Բանակի մեծ մասն էլ առանց դիմադրության անցավ Լաբիենոսի կողմը:

Համոզված լինելով, որ կողմերից ոչ մեկն ի վիճակի չէր վճռական հաղթանակ տանել՝ հոռմեացիները ղեսպաններ ուղարկեցին,

<sup>12</sup> Florus 2.19; Dio Cassius 48.24.4, Velleius Paterculus 2.78; Livy, Epitome 127; Rufus Festus 18.

խնդրելով վերադարձնել դեռ ողջ մնացած գերիներին և Կրասոսից խլված գրոշները<sup>13</sup>: Պարթևատանը մերժեց խնդրանքը: Փաստորեն, Հռոմի ասիական ողջ տիրույթն այլևս կամ պարթևների ձեռքին էր, կամ էլ՝ վտանգված:

Պարթևները սկսեցին պարտություն կրել մ.թ.ա. 39 թվականին, երբ Անտոնիոսի զորականներից մեկը՝ Պուբլիոս Վենտիդիոս Բասսը, տեղի փոքր զորագնդով, պարթև դաշնակիցների բացակայությամբ, Անտոնիոսին անակնկալ մատուցեց: Լաբիենոսը նահանջեց Ասորիք և այնտեղ հայտնվեց անելանելի վիճակում: Երբ մ.թ.ա. 38 թ. բախումը վերջապես տեղի ունեցավ, պարթևները՝ չափազանց վստահ իրենց ուժերին, պարտվեցին: Սպանվեց նաև Լաբիենոսը: Բակուրը նույնպես սպանվեց այս պատերազմի ժամանակ: Նրա զուլան ի ցույց դրվեց Ասորիքի ապստամբած քաղաքներում՝ ստիպելով նրանց հանձնվել<sup>14</sup>: Վենտիդիոսը ևս մի քանի հաղթանակ տարավ պարթևների նկատմամբ: Նա հռոմեացի այն սակավաթիվ զորավարներից էր, ում բախտ վիճակվեց նման բան անել: Վենտիդիոսն իր հաղթանակը տոնեց Հռոմում մ.թ.ա. 38 թվականի նոյեմբերին<sup>15</sup>:

Արդեն ծերացող Որոգես արքայի համար Բակուրի մահը մեծ հարված էր: Բակուրը եռանդուն և հանճարեղ զորավար էր: Նրա մահը մեծ կորուստ էր նաև Պարթևական թագավորության համար<sup>16</sup>: Ու չնայած Որոգեսն ուներ երեսուն որդի, նա թագաժառանգ ընտրեց իր ավագ որդուն՝ Հրահատին: Եվ սխալվեց:

### Անտոնիոսի առաջին արշավանքը

Հրահատ IV-ը իշխանություն եկավ մ.թ.ա. 36 թվականի վերջին և անմիջապես հրամայեց մահապատժի ենթարկել իր հորը<sup>17</sup>: Նա այնու-

<sup>13</sup> Dio Cassius 49.24; Plutarch, *Antony* 37.

<sup>14</sup> Ammianus Marcellinus 23.23.

<sup>15</sup> Fronto, *Epis.* 2.1.5; E. Pais, *Fasti Triumphales* (Rome, 1920).

<sup>16</sup> Tacitus, *Germania* 37; Horace, *Odes* 3.6.9.

<sup>17</sup> Սկզբում Հրահատը փորձեց հորը թունավորել ընձախտի միջոցով, իսկ հետո՝ խեղդամահ արեց նրան: Plutarch, *Crassus*, 33; N.C. Debevoise, *Political History*, էջ 121, n. 2:

հետև աքսորեց իր եղբորն ու մեծ թվով պարթև ազնվականների, այդ թվում նաև վերջին պատերազմին մասնակցած զորականների: Այս զորականներից մեկը՝ Մոնես անունով, մեկնեց Հռոմ և Անտոնիոսին խոստացավ, որ կառաջնորդի հռոմեական բանակը և կգրավի Պարթևստանի զգալի մասը: Այս խոստումով ոգևորվորված՝ Անտոնիոսը սկսեց պարթևների դեմ պատերազմի պատրաստվել: Սակայն Հրահատն իր գործակալների օգնությամբ Մոնեսին համոզեց վերադառնալ Պարթևստան: Անտոնիոսը չփորձեց կանգնեցնել նրան և նույնիսկ դեսպաններ ուղղարկեց՝ խնդրելու վերադարձնել գերեվարվածներին, Կրասոսից մ.թ.ա. 53 թ. խլված դրոշները<sup>18</sup>: Մինչ այս բանակցություններն ընթացքի մեջ էին Անտոնիոսը պատրաստվում էր պատերազմի և հատկապես ջանում էր ապահովել իր դաշնակիցների կողմից հետևակային զորքի համալրումը: Արդյունքը եղավ այն, որ Անտոնիոսը գլխավորեց պարթևների դեմ երբևէ ելած ամենահզոր բանակներից մեկը: Մ.թ.ա. 38 թվականի ապրիլին կամ մայիսին նա հարյուր հազարանոց բանակով դուրս եկավ պարթևների դեմ<sup>19</sup>: Անտոնիոսը ոգեշնչված էր այն մտքով, որ կարող է շարունակել Վենտիդիոսի արշավանքը և ավարտել այն մեծ ռազմական հաղթանակով, սակայն իրականում այդ արշավը նրա համար ամոթալի մի պարտություն եղավ, որտեղ նա կորցրեց 35000 զինվոր: Պաշտպանական բնույթի տասնութ ճակատամարտերում Անտոնիոսին հաջողվեց իր բանակը փրկել գլխովին ոչնչացումից, բայց սա, լավագույն դեպքում կարող էր համարվել լոկ պյուռոսյան հաղթանակ:

<sup>18</sup> Dio Cassius 49.24; Plutarch, *Antony* 37.

<sup>19</sup> Ըստ Պլուտարքոսի, *Anthony* 37, և Հուստինիանոսի 42.5.3, Անտոնիոսի բանակում կար 60000 հետևակ, 10000 հեծելազոր և 30000 դաշնակից զորք: Ջ. Կրոմայերը, *Hermes* 31 (1896) 71, ասում է, թե Անտոնիոսը Զևգմայում իր տնօրինության տակ վերցրած զորքում Միջագետքում պարթևների դեմ դուրս գալու համար բավականաչափ վստահ չէր, հետևաբար՝ որոշեց անցնել Հայաստանով: Հ. Դելբրուքն այլ կարծիքի է (տես՝ H. Delbruk, *History of the Art of War*, 1.449.;

## Երկրորդ փորձը

Անտոնիոսի երկրորդ արշավանքը տեղի ունեցավ մ.թ.ա. 34 թվականին: Այս անգամ, սակայն, նա փորձեց, նախ և առաջ, դիվանագիտական հիմքեր ստեղծել ու սկզբում ապահովել Հայաստանի աջակցությունը: Նա փորձեց իր և Կլեոպատրայի որդուն ամուսնացնել Հայաստանի թագավոր Արտավազդ II-ի դուստրերից մեկի հետ: Երբ բանակցությունները ձախողվեցին, Անտոնիոսը գերեվարեց Արտավազդին: Արտավազդը, նրա կինը, երեխաները, նրանց հետ մեկտեղ զգալի ռազմական ավար ընծա մատուցվեցին Կլեոպատրային: Ի վերջո, Հայոց արքան զարդարեց շքահանդեսը և դատապարտվեց մահվան<sup>20</sup>: Անտոնիոսն իր որդի Ալեքսանդրին նշանակեց Հայաստանի թագավոր: Հայաստանը չեզոքացնելով՝ Անտոնիոսը հույս ուներ պարթևների վրա կատարվելիք հարձակումն ավելի դյուրին դարձնել: Մ.թ.ա. 33 թվականին Անտոնիոսի զորքը հասավ մինչև Արաքս գետի ափը, որտեղ Մարաստանի Արտավազդ արքայի հետ դաշինք կնքեց ընդդեմ Օկտավիանոսի և պարթևների: Սակայն Անտոնիոսի հեռանալուց անմիջապես հետո Մարաստանի թագավորը, որին հռոմեացիներն էին նշանակել, գահընկեց արվեց, իսկ Մարաստանն անցավ Հայաստանի տիրապետություն տակ: Հայաստանն իր հերթին նորից անցավ Պարթևստանի ազդեցության ներքո:

Անտոնիոսի երկրորդ արշավանքն, այսպիսով, նույնքան անհաջող էր, որքան և առաջինը: Նրան փրկեց միայն այն հանգամանքը, որ Պարթևստանում բորբոքված ներքին պառակտումը թուլացրել էր երկրի պաշտպանունակությունը: Մ.թ.ա. 31-25 թվականներին Հրահատն ստիպված էր զանակալական կռիվներ մղել ապստամբ Տրդատի դեմ: Երկու կողմն էլ ակնկալում էին Օկտավիանոսի օգնությունը, որ չափից ավելի զբաղված էր Անտոնիոսի և Կլեոպատրայի դեմ պայքարով, որպեսզի գաղտնի կամ բացահայտ ներգրավվեր նաև Պարթևստանում տեղի ունեցող ներքաղաքա-

<sup>20</sup> Խմբ. կողմից. – Հեղինակը շրջանցում է Արտավազդ արքայի արժանապատիվ պահվածքը՝ հռոմեացիների առջև գլուխ չխոնարհելու, այդ իսկ պատճառով էլ մահվան դատապարտվելու հայտնի պատմությունը:

կան պայքարում: Այդ պայքարում հաղթանակեց Տրդատ I-ը (II) (30-25) և հուշակեց իրեն Պարթևաստանի գահակալ: Շուտով Օկտավիանոսը դարձավ միակ հռոմեացին, ում Տրդատը կարող էր դիմել:

### Օկտավիանոսը

Մ.թ.ա. 31 թվականի սեպտեմբերին Ակտիումի ծովամարտում Անտոնիոսին և Կլեոպատրային վերջնականապես ջախջախելուց հետո Օկտավիանոսը Եգիպտոսից մեկնեց Ասորիք, ուր անցկացրեց 30-29 թթ. ձմեռը: Տրդատն այդ ընթացքում դուրս էր մղվել Պարթևաստանից և ապաստան գտել հռոմեացիների մոտ՝ առևանգելով և իր հետ տանելով նաև պարթևաց արքայի որդուն: Թագավորական գահին վերականգնված Հրահատ IV-ը հռոմեացիների մոտ դեսպաններ ուղարկեց՝ ետ խնդրելու իր որդուն և դավաճան Տրդատին: Օկտավիանոսը պայման դրեց, թե կվերադարձնի Հրահատի որդուն, եթե փոխարենը Հռոմին վերադարձնեն Խառանի ճակատամարտում խլված դրոշմերը: Արքան համաձայնեց, բայց անցավ մի քանի տարի, մինչև դրոշները վերադարձվեցին: Օգոստոսի մոտ ուղարկված այս դեսպանությունները նպաստավոր էին Հռոմի և Պարթևաստանի միջև հարաբերությունների բարելավման առումով. Կրասոսից և Անտոնիոսից խլված դրոշները և դեռևս ողջ մնացած գերիները Հռոմ վերադարձվեցին մ.թ.ա. 20 թվականին՝ առանց պատերազմական գործողությունների:

### Օգոստոս. ծածուկ միջոցների կիրառման ամենաակտիվ ժամանակաշրջանը

Հռոմեացիները շմոռացան սակայն պարթևների հետ ընդհարումներում կրած պարտությունները. պատերազմն Արևելքում, հավանաբար, Օգոստոսի առաջնահերթ խնդիրներից մեկն էր: Այստեղ հաճախ հետախուզական առաքելություններ գործակալներ էին ուղարկվում:

Գրանցից մեկն էր նաև Լիկոտասը<sup>21</sup>: Սակայն Օգոստոսը այնքան էլ անխելք չէր: Գուցե և նա Ասիան գրավելու ցանկություն ուներ, սակայն անշուշտ, հասկանում էր, որ Եփրատից դեպի արևելք ընկած տարածքները գրավելու նախորդ փորձերի տապալումը պայմանավորված էր ի սկզբանե ձախողման դատապարտված քաղաքականությունը: Ուստի Օգոստոսը փոխզիջումային քաղաքականության ուղիներ էր որոնում: Իրականում Պարթևստանը Հռոմի համար սպառնալիք չէր ներկայացնում: Պարթևստանի սոցիալական կառուցվածքը, արքունիքում հաճախակի իրականացվող հեղաշրջումները, պայքարը ավագանու տարբեր խմբակցությունների միջև, սատրապների անջատողական հավակնությունները և կենտրոնական ուժեղ իշխանության բացակայությունը հնարավորություն էին ընձեռում Հռոմին ներագրելու այդ գործընթացների վրա թե՛ դիվանագիտական, թե՛ գաղտնի միջոցներով: Նման պարագայում երկու տերությունների համար էլ շահավետ կլինեք համաձայնության ձեռքբերումը, իսկ դրան հասնելու միակ ճանապարհը առևտրական կապերն էին:

Այս դիվանագիտական քաղաքականությունն արգասաբեր եղավ: Բանակցությունների արդյունքում Հրահատ IV-ը Օգոստոսին վերադարձրեց Կրասոսից և Անտոնիոսից խլված դրոշները: Գերիներն ու դրոշները հատուկ այս նպատակով Պարթևստան ժամանած Տիբերիոսին հանձնվեցին մ.թ.ա. 20 թվականի մայիսի 12-ին<sup>22</sup>: Քարոզչական նկատառումներից ելնելով՝ Օգոստոսն ընդունեց դրանք այնպես, կարծես պարթևների նկատմամբ հաղթանակ էր տարել պատերազմում: Սակայն նա նաև հայտարարեց, որ այն, ինչ հռոմեացիները նախկինում

<sup>21</sup> D. Magie, “Mission of Agrippa,” *Classical Philology* 3 (1908) 145 ff: Դ. Մագիի կարծիքով, մինչ Ագրիպան մ.թ.ա. 23 թ. գտնվում էր Միթիլենում, նրա զորավարները, հավանաբար, բանակցում էին դրոշների վերադարձի շուրջը: Հորացիոսը, *Odes* 1.12.53, միգուցե նաև՝ 1.12.15-ում այս բանում համոզված չէ:

<sup>22</sup> Suetonius, *Augustus* 21.3 և *Tiberius* 9.1; Justin 42.5.11; Livy, *Epitome* 141; Velleius Paterculus 2.91.1; Florus 2.34.63. Տե՛ս նաև Պրիմա Պորտայի Անտոնիոսի արձանը Cambridge Ancient History, Plates IV, 148 A և 150:

կորցրել էին ռազմի դաշտում, նա վերադարձրեց առանց պատերազմի<sup>23</sup>: Ինչ խոսք, նրա ժամանակակիցների համար դա իրականում մեծ և ազդեցիկ իրադարձություն էր: Մ.թ.ա. 20 թվականին բանակցությունների արդյունքում ստորագրված պայմանագիրը հռոմեական պոեզիայում և պատկերագրությունում փառաբանվեց որպես պարթևների ենթարկում «Կեսարի օրենքին և իշխանությունը»<sup>24</sup>: Այս իրադարձությանը հատկապես շատ են անդրադարձել հռոմեական դրամների վրա դրոշմվող պատկերներում<sup>25</sup>: Պոմպեոս Մեծի կողմից ազատ արձակված ստրուկ պատմաբան Տրոգոս Պոմպեոսի խոսքերով՝ համաձայնությունն պատակը աշխարհը Պարթևստանի և Հռոմի միջև բաժանելն էր: Դրոշները վերադարձվել էին ոչ թե ռազմական, այլ գաղտնի փոխանակումների, առևանգումների և շանտաժի միջոցով: Ռազմական հաղթանակի պարագայում թե՛ *signis receptis* (դրոշների վերադարձը) և թե՛ *Armenia recepta* (Հայաստանի վերստին նվաճումը) կազդարարվեին Հռոմում հաղթականարի կառուցմամբ և դրամներ հատելով, բայց ամեն ինչ գաղտնի օպերացիաների շնորհիվ էր իրականացվել:

Հրահատը համաձայնեց նաև գահընկեց անել Հայոց թագավորին և փոխարենը գահ բարձրացնել հարազատ եղբորը՝ Տիգրանին<sup>26</sup>, որը տասը տարի ապրել էր Հռոմում: Տիգրանը թագը ստացավ Տիբերիոսի ձեռքից ճիշտ այնպես, ինչպես վերջինս հռոմեական դրոշներն էր ստացել Հրահատի ձեռքից: Թեև պարթևները անմիջական մասնակցություն չունեցան հայկական գահակալության խնդրի լուծմանը, նրանց հաշտվողական վերաբերմունքը, ինչպես նաև հռոմեական խաղաղ միջամտությունն այդ գործին անուշադրության մատնվեցին Հռոմում:

<sup>23</sup> Dio Cassius 54.8.

<sup>24</sup> Horace, *Epis.* 1.12.27.

<sup>25</sup> Justin 41.1.1. տե՛ս Zanker 1988, 187-92՝ Պրիմա Պորտայի արձանի պատկերագրության և ծնկաշոք պարթևների վերաբերյալ:

<sup>26</sup> Dio 54.9.5-7; Suetonius, *Tiberius* 9.1.; Josephus, *AJ* 15.105; Fetus 19; Velleius *Paterculus* 2.99.4; 100.1; Tacitus, *Annals* 2.3.2; 4.1.

Մ.թ.ա. 19 թվականին Օգոստոսի կողմից հաստատված դրամները փառաբանում էին դրոշների վերադարձը (signis receptis) և «Հայաստանի նվաճումը» (Armenia capta)<sup>27</sup>:

Դրոշները վերադարձնելուց և երկու տերուլթյունների միջև բարեկամական հարաբերություններ հաստատելուց հետո Օգոստոսը Հրահատին ընծա ուղարկեց մի իտալացի ստրկուհու՝ Մուսա անունով: Օգոստոսը գիտեր, որ Պարթևստանում զարգացումները վերահսկելու լավագույն միջոցը պարթևական արքունիքի վրա ազդեցություն ունենալն էր: Պատմաբանները հաճախ են վեճի բռնվում այն հարցի շուրջ, թե՞ ռազմավարական նշանակություն ունեցող դիրքում հայտնված Մուսան Պարթևստան էր ուղարկվել սոսկ տեղեկություններ ստանալու՞, թե՞ Հրահատի վրա ներազդելու նպատակով: Այս մասին ստույգ տեղեկություններ չկան<sup>28</sup>: Սակայն Հրահատը Մուսայից Հրահատակ (Հրահատ կրտսեր) անունով թագաժառանգ ունենալուց հետո, Մուսային ազատում է հարձի կարգավիճակից ու թագուհի դարձնում՝ հայտնի Տեա Ուրանիա Մուսա անունով:

Թագաժառանգությունից տարիքը լրանալուն պես Մուսան համոզում է Հրահատին՝ իր ավագ որդիներին ուղարկել Հռոմ՝ այդպիսով ասպարեզ հարթելով իր որդու համար: Եվ իրոք, թագավորը Ասորիքի կուսակալ Մ. Տիտոսին հրավիրում է խորհրդակցություն և նրան հանձնում իր չորս ավագ որդիներին՝ իրենց կանանցով և չորս որդիներով: Քաղաքա-

<sup>27</sup> Դրոշների վերադարձը պատկերվեց ասիական, իսպանական, սենատորական և կայսերական դրամահատարաններում պատրաստված դրամների վրա: Այդ ժամանակաշրջանի մասին պատմող՝ դրամների վրա արված գրառումների մեծ մասը վերաբերում է պարթևներին: Օգոստոսն այդ միջադեպին անդրադառնում է Monumentum Ancyranum-ում 5.29: H. Mattingly and E.A. Sydenham, *The Roman Imperial Coinage I* (London, 1923) էջ 63, no. 46ff; էջ 70, no. 98ff., էջ 84, no. 256, էջ 86 nos. 302-304; էջ 86-87, nos. 305-310, էջ 87, nos. 311-33: Պրիմա Պորտայում Օգոստոսի հայտնի, բայց և խորհրդավոր արձանի լանջապանակի վրա պատկերված հիմնական իրադարձությունը դրոշների վերադարձն է:

<sup>28</sup> N.C. Debevoise, *Political History of Parthia* (New York, 1968), 143.

կան պատանդների առկայությունը Օգոստոսին Պարթևստանի ժառանգականությունից հարցում նոմինալ իշխանություն շնորհեց. քանի դեռ Պարթևստանի արքայի օրինական ժառանգները Խտալիայում/Հռոմում էին գտնվում, Հրահատը Արևելքում Հռոմի վարած քաղաքականության անվերապահ աջակիցը լինելու պատճառ ուներ: Մ.թ.ա. 2 թվականին Մուսան մի վերջին քայլ ձեռնարկեց՝ որդուն Պարթևստանի գահ բարձրացնելու համար թունավորեց ամուսնուն<sup>29</sup>: Քանի դեռ Հրահատ V-ը (մ.թ.ա. 2 – մ.թ. 4 թթ.), մնացած թագաժառանգների հետ միասին «վնասազերծված էին», պարթևական գահին հռոմեական դրածոն էր իշխում:

Այնուամենայնիվ, Հրահատ կրտսերի և Օգոստոսի միջև մի որոշ ժամանակ լարվածություն առաջացավ: Հայոց գահին բազմած հռոմեական դրածո Արտավազդին Հայաստանից վտարելով՝ Հրահատն աջակցություն ցույց տվեց Տիգրան IV-ին և առավելություն ձեռք բերեց Օգոստոսի նկատմամբ: Հռոմի կայսրն անմիջապես Հայաստան բանակ ուղարկեց իր թոռան՝ Գայոս Կեսարի գլխավորությամբ, շնորհելով նրան Արևելքում կուսակալի լիիրավ իշխանություն<sup>30</sup>: Իսիդոր Չարաքցին (*Isidore of Charax*) նշանակվեց Արևելքի տեղեկությունները վերահսկելու նպատակով. սա ապացույց էր այն բանի, որ կառավարությունը սթափվում էր՝ տեսնելով Արևելքում Հռոմի ռազմական հետախուզության անբավարար աշխատանքը<sup>31</sup>: Հռոմեացիների կողմից ուժի նման դրսևորումը ստիպեց Հրահատին փոխել իր մտադրությունը և խոստանալ չմիջամտել Հայաստանի ներքաղաքական գործերին: Հրահատը եփրատի ամրան հանդիպեց Գայոս Կեսարի հետ, որի ընթացքում Հռոմի և Պարթևստանի միջև համաձայնություն ձեռք բերվեց:

Պարթևստանի գահակալության խնդրով նրանք նաև ստիպված եղան մ.թ. 6 թվականին դեսպանություն ուղարկել Հռոմ՝ խնդրելով վե-

<sup>29</sup> N.C. Debevoise, *Political History of Parthia* (New York, 1968), 147.

<sup>30</sup> Մինչև մահանալը Գայոսը արշավանք էր ծրագրում՝ « Հռենոսից, Եփրատից և Դանուբից այն կողմ տարածքներն ընդլայնելու համար »: *Sen. Brev. vit. 4.5*

<sup>31</sup> Pliny, *Natural History*, 6.141.

րադարձնել Հրահատ IV-ի որդիներից մեկին: Պարթևստան ուղարկվեց Հրահատի ավագ որդին՝ Վոնոն I-ը (մ.թ. 7/8-12 թթ.)<sup>32</sup>: Բայց պարթևացիները դժգոհ էին իրենց նոր թագավորից, հատկապես նրա արևմտյան բարձրերից ու հռոմեացի ընկերներից: Նրա քամահրանքը որսի և ավանդական տոնակատարությունների նկատմամբ հակասում էր պարթևական ավանդույթներին: Նրա շափից ավելի անբռնազբոս վարքը և անտարբերությունը ձիերի հանդեպ ստիպեցին ազգայնական ուժերին նոր գահակալ պահանջել: Այսպիսով, Արտավան III-ի (մ.թ. 12 – մոտ. 38) գլխավորությամբ ոտքի ելավ մի բանակ, որը պարտություն մատնեց Վոնոնին և վտարեց նրան թագավորությունից: Նա ապաստան գտավ Ասորիքում՝ հռոմեացիների մոտ, որտեղ հռոմեացի կուսակալից թուլատվություն ստացավ հաստատվել Անտիոքում՝ պահպանելով արքային վայել արտաքին շուքը և անունը: Բայց վտանգը, որ Հռոմը կարող է օգտագործել իրեն որպես Պարթևստանի դեմ ուղղված գաղտնի միջոց, մշտապես առկա էր:

### Ծածուկ օպերացիաները Տիբերիոսի օրոք

Օգոստոսի մահից հետո Հռոմի կայսր դարձած Տիբերիոսը վերսկսեց բանակցությունները Պարթևստանի հետ: Արտավանը լուր ուղարկեց, թե ինքը կցանկանար հասնել մինչև Եփրատ՝ Հռոմի և Պարթևստանի միջև սահմանագծին, որն ավանդաբար հանդիպման վայր է եղել երկու գերտերությունների համար: Նա նաև հատուկ խնդրանք ներկայացրեց, որպեսզի Վոնոնը հեռացվի սահմանամերձ գոտուց, քանի որ վերջինս պարթևների շարքերում կարող էր անհամաձայնություններ հրահրել: Վոնոնն ուղարկվեց Կիլիկիայի Պոմպեոպոլիս (հին Սուրի/Սուլե) ծովափնյա քաղաք<sup>33</sup>: Մեկ տարի անց՝ մ.թ. 19 թվականին, Վոնոնը, կաշառելով իրեն հսկող պահակազորին, փորձեց որսի ընթացքում փախուստի դիմել: Փախուստը սակայն հաջողվեց կասեցնել. դրա համար

<sup>32</sup> Tacitus, *Annals*, 1.1-2; *Josephus Antiquities* 18.46.

<sup>33</sup> Tacitus, *Annals*, 2.58.

անհրաժեշտ եղավ ավերել նրա ճանապարհին ընկած կամուրջը: Վոնոնին ձերբակալեց հետևակի հրամանատար Վիբերիոս Ֆրոնտոն, իսկ ավելի ուշ Պոմպեուպոլիսում իրեն հսկող պահակազորի անդամներից մեկն սպանեց նրան՝ հավանաբար կոծկելու համար փախուստի փորձի իրականացման մեջ սեփական մեղսակցությունը<sup>34</sup>:

Արտավանը մարտահրավեր նետեց Հռոմին՝ Հայոց գահին նստեցնելով իր որդի Արշակին: Տիբերիոսն այս քայլին արձագանքեց նրանով, որ պառակտում հրահրեց թե՛ Հայոց, և թե՛ Պարթևաց գահերի հավակնորդների միջև: Արտավազդի օրոք Հայաստանը ենթարկվեց նաև իբերական ներխուժման: Չկարողանալով ուժեղ հակազդեցություն ցուցաբերել այդ արշավանքին, նա, ի վերջո, ստիպված եղավ փախչել Հիրկանիա (=Հյուրկանիա-Վրկան՝ խմբ.): Հետագայում նա իր համար հետդարձի ճանապարհ նվաճեց դեպի Սելևկյան պետություն, բայց հետապնդվելու ընթացքում՝ Եփրատի մոտ Լուկիոս Վիտելիոսի հետ հանդիպման ժամանակ, ստիպված եղավ ընդունել Հայաստանում Հռոմի գերակայությունը՝ փոխարենը ձեռք բերելով Պարթևաստանում իր ինքնիշխանության ճանաչումը:

Արտավան III-ը բավական երկար տիրեց Պարթևաստանում՝ իր հզորության և կարողությունների շնորհիվ երկրում վերականգնելով նախարարների հանդեպ նաև կենտրոնական իշխանության վերահսկողությունը: Չնայած դրան, պարթև ավագանին շարունակում էր դավադրություններ կազմակերպել՝ ակնհայտ ապավինելով Հռոմի աջակցությանը: Սիննակես և Աբդուս (Աբդագեզուս) անուններով երկու նշանավոր պարթև ազնվական թաքուն գնում են Հռոմ և հայտնում, որ Պարթևաստանը կսատարի Հռոմում գտնվող պարթև թագաժառանգներից ցանկացած մեկին: Տիբերիոսի ցանկությունամբ թագաժառանգ է ընտրվում Հրահատ IV-ի կրտսեր որդին՝ Հրահատը, ով մոտ կես դար ապրել էր Հռոմում և արդեն տարիքն առած մարդ էր: Հրահատը, սակայն, Պարթևաստան ժամանելուց կարճ ժամանակ անց հանկարծամահ ե-

<sup>34</sup> Tacitus, *Annals*, 2.68; Suetonius, *Tiberius* 49.2.

ղավ, որի պատճառը կամ տարիքն էր, կամ հոգնեցուցիչ ճանապարհորդությունը, կամ էլ Արտավանի կազմակերպած թունավորումը՝ քանի դեռ Հրահատը չէր հասցրել ոտնձգություններ անել գահի նկատմամբ: Արտավանը ցույց տվեց Տիբերիոսին, որ երկու դեսպանորդների գաղտնի ծրագրերը բացահայտված են: Ապա նա սպանել տվեց Աբդուսին, իսկ Սիննակեսին ներգրավեց այնպիսի հանձնարարություններում, որոնք տարբեր պատրվակներով մեկուսացնում էին նրան:

Տիբերիոսը, սակայն, չհուսահատվեց և մեկ այլ ժառանգորդ գտավ պարթևական գահի համար. այս անգամ թեկնածուն Հրահատ IV-ի թոռն էր՝ Տրդատ III-ը: Լուկիոս Վիտելիոսին Տիբերիոսը նշանակեց Ասորիքի կուսակալ, և, վերջինիս գործը թեթևացնելու համար, որոշեց մրցակից թագավոր նշանակել Հայաստանում: Մեծ կաշառքի շնորհիվ հաջողվեց Իբերիայի թագավորին համոզել իր եղբորը նշանակել Հայոց գահին: Հայոց թագավոր Արտավանն իր գորքը ուղղեց իբերացիների դեմ, սակայն ճանապարհին հռոմեացիների կողմից կաշառված տեղի ցեղերը հարձակվեցին նրա վրա: Ֆինանսական միջոցների գաղտնի կիրառման մեխանիզմը անխափան էր գործում: Մինչ Արտավանը կհասցներ լուրջ քայլ ձեռնարկել, Վիտելիոսը նախահարձակ եղավ և լուր տարածեց, թե իբր պատրաստվում է գրավել Միջագետքը: Խուսափելով երկու ճակատով պատերազմի մեջ ներքաշվելուց (Հայաստանում և Պարթևստանում)՝ Արտավանը վերադարձավ տուն՝ պաշտպանելու իր թագավորությունը: Այսպիսով, հռոմեացիները հասան իրենց նպատակին և կաշառքների ու ապատեղեկատվության միջոցով Պարթևական թագավորության ներսում գժգոհություններ առաջացրին: Գաղտնի կատարված աշխատանքն այնքան հաջող էր իրականացվել, որ Արտավանը ստիպված էր ապաստանել իր արևելյան սահմանամերձ շրջաններից մեկում՝ ընդամենը մի խումբ օտար վարձկանների ջոկատով:

Այս բոլոր դիվանագիտական հաջողությունները ձեռք բերվեցին առանց բացահայտ ռազմական գործողությունների: Թե՛ Պարթևստանը, և թե՛ Հռոմը պատերազմից խուսափելու պատճառներ ունեին: Հռոմեացիները հասկանում էին, որ իրենց ռազմական հաջողություններն Ար-

ևելքում երկարատև չեն: Պարթևստանը գահի հավակնորդների տարածայնություններով պառակտված և ասիական տեղաշարժերով վտանգված՝ հնարավորություն չունեն հարձակվելու Հռոմի վրա և նախընտրում էր դիվանագիտական պարտություն կրել, քան ներքաշվել իրական հակամարտության մեջ: Իհարկե, երբ հռոմեացիները բավականաչափ վստահ էին լինում ռազմական ճանապարհով պարթևներին պարտության մատնելու հնարավորության մեջ, ապա ռազմական ուժ էին կիրառում: Ներոնի<sup>35</sup>, Տրայանոսի և Սեպտիմիոս Սեվերոսի օրոք արշավանքները հենց նման ուղիղ ռազմական առճակատումներ էին: Սակայն, վերջին հաշվով, դրանք ակնհայտորեն անհաջող ձեռնարկումներ էին, որոնց միակ նվաճումը եղավ այն, որ զգալիորեն թուլացրին Պարթևստանը՝ նպաստելով Սասանյանների կողմից իշխանությունը գրավելուն: Եվ չնայած արևելյան ճակատը ռազմական գործողությունների թատերաբեմ մնաց մինչև 4-րդ դարը, այն միշտ էլ թանկ գնով էր տրվում նրանց: Հռոմեացիների համար գաղտնի գործողություններն ավելի նախընտրելի էին, քան թանկարժեք ռազմական բախումները: Դժբախտաբար, այս ճանապարհով ձեռք բերված հաղթանակները հռոմեացի հրամանատարներին չէին բերում այն փառքը, որին նրանք այդքան հաճախ ձգտում էին:

### Խաբեության վարպետները

Ծածուկ գործողությունների կիրառման հանդեպ Հռոմի պաշտոնական դիրքորոշումը միշտ էլ հիմնվել է այն փաստարկի վրա, թե հռոմեացիները նման մեթոդների երբևէ չեն դիմել և միշտ էլ վարպետորեն ներկայացել են որպես ուղղամիտ և ցանկացած գաղտնի գործողության դեմ հանդես եկող պետություն: Նրանք միշտ էլ օտարներին, օրինակ՝ հայերին կամ կարթագենցիներին են ներկայացրել որպես անվստահելի

<sup>35</sup> Կորբուլոսի արշավանքի ժամանակ Պարթևստանի հետ հոետորական և դիվանագիտական խուսանվումների մասին տես **K. Gilmartin**, “*Corbulo’s Campaigns in the East*,” *Historia* (1973), էջ 583-626; R. Syme, **Tacitus** էջ 496:

մարդիկ<sup>36</sup>: Այնուամենայնիվ, անգամ այս նեղ աշխարհագրական և ժամանակային սահմաններում կարելի է ակնհայտ քողարկված գործունեությունն զստական օրինակներ գտնել:

Քաղաքական ներազդեցությանն ուղղված գործողություններ. օտար պետությունների քաղաքականության վրա հոռոմեացիները միշտ էլ գաղտնի ներագրել են բարձրաստիճան պետական այրերին և նշանավոր մարդկանց՝ լինեին թե՛ Հայոց կամ Պարթևաց գահի հավակնորդներ, թե՛ այդ պետությունների արքունիքների ներկայացուցիչներ, և՛ խորհուրդ, և՛ տեղեկատվություն տրամադրելու եղանակով:

Հոռոմեացիներն օտար պետություններում կապեր էին հաստատում և զարգացնում դրանք, բացահայտում էին հնարավոր ապագա առաջնորդներին և աշակցում նրանց [ռազմական ու քաղաքական] դիրքի առաջխաղացմանը: Հոռոմում ապրելով՝ գահաժառանգներն արքայական կարգավիճակին համապատասխան, լավ վերաբերմունքի էին արժանացնում, բայց միևնույն ժամանակ հոռոմեական մտածելակերպ և Հոռոմի նկատմամբ համակրանք էին սերմանում: Այդ համակրանքը պահպանվում էր նրանց կյանքի գրեթե ողջ ընթացքում, սակայն այս մարդիկ հայրենիք վերադառնալիս հաճախ իրենց իսկ ժողովրդի կողմից չէին ընդունվում: Հոռոմեացիները նաև գործակալներ էին ուղարկում պարթևական արքունիք, ինչպես օրինակ՝ ստրկուհի Մուսան էր, ով, ի վերջո, դարձավ ոչ միայն թագուհի, այլև տասնյակ տարիներ պարթևական գահին առնչվող խնդիրները վերահսկող մի կին:

Հոռոմեացիներն ազդեցություն ունեին քաղաքական կուսակցությունների վրա, առավել հաճախ՝ ազգայնական թևի, ինչն ավելի քան երեք հարյուրամյակ շարունակ ազդում էր Հայաստանում և Պարթևստանում ուժերի ներքին հավասարակշռության և քաղաքական որոշումների կայացման վրա: Հաշվի առնելով, որ նույնիսկ աղբյուրների սակավության պայմաններում այսքան վկայություններ ենք գտնում պարթև և հայ ազնավականների վրա կաշառքի միջոցով ազդեցության վերաբերյալ, ա-

<sup>36</sup> Tacitus, *Annals*, 13.35.1.

պա կարելի է ենթադրել, որ իրականում շատ ավելի իրադարձություններ էին տեղի ունենում հետնաբեմում, որոնց մասին, սակայն, մենք որևէ բան չգիտենք: Քանի որ ո՛չ Հայաստանում, և ո՛չ էլ Պարթևստանում քաղաքական կուսակցություններ կամ ներկայացուցչական կառավարություններ չկային, հնարավոր չէր որևէ կերպ ներազդել «ընտրական» գործընթացների վրա: Բայց հոռմեացիները վերահսկում էին եղած խմբավորումները և հետամուտ էին լինում նրան, որ գահակալներ դառնային Հոռմի համար նախընտրելի թեկնածուներ: Կլավդիոսն, օրինակ, ներքին անհամաձայնություն և մրցակցություն էր հրահրել Պարթևստանում, մինչդեռ Հայաստանում հոռմեական գերիշխանություն էր վերահաստատել դասական մեթոդների կիրառմամբ՝ այնտեղ Հոռմի նկատմամբ բարյացակամ տրամադրված արքա նշանակելով: Հոռմեացիները մշտական կապ էին պահպանում այն առաջնորդների, ժառանգների կամ էլ ուժերի հետ, որոնք կարող էին օժանդակել Հոռմի շահերին: Ինչ խոսք, նման ճանապարհով ազդեցություն ձեռք բերելու նախաձեռնություն ցուցաբերել են երկու կողմն էլ: Պարթևստանի արքաները Պոմպեոսի և Կեսարի միջև քաղաքացիական հակասությունների ժամանակ տարբեր կողմ էին բռնում: Նման խզում տեղի ունեցավ նաև ավելի ուշ՝ Անտոնինոսի և Օկտավիանոսի միջև: Այս միջոցներն ավելի շուտ կարելի է անվանել քաղաքական «հովանավորություն», քան բացահայտ աջակցություն:

«Սառը» պատերազմների ժամանակաշրջաններում լայնորեն տարածված էր քառոզությունը: Չնայած հին աշխարհում չկային տեղեկատվության տարածման ներկայիս հնարավորությունները, մարդիկ այն ժամանակաշրջանում սրովյամբ զգում էին, թե հասարակությունն ինչ պետք է իմանա և երբ: Պարբերաբար առաքվող սուրհանդակները հասցնում էին հաղթանակների մասին լուրեր, որոնք այնուհետև «հրապարակվում» էին մետաղադրամներին արվող դրոշմվածքներով, հաղթականարների վրա քանդակված արձանագրությունների և հայտարարությունների միջոցով: Դրոշների վերադարձի հետ կապված Օգոստոսի «հաղթանակն» ավելի շուտ քարոզարշավ էր, քան ռազմական հաղթա-

նակ, որ տարիներ շարունակ ձգվող գաղտնի բանակցությունների, շանտաժի, առևանգումների և այլ միջոցների շնորհիվ էր նվաճվել, որոնք, սակայն, երբևէ չեներկայացվեցին հանրությունը: Հոռոմեացիները հասկանում էին, որ ուժի կիրառման մտադրության մասին լուրը կարող էր նույնքան ազդեցիկ լինել, որքան և հոռոմեական իրական բանակը: Անկասկած, նման հայտարարություններում շատ էր օգտագործվում նաև ապատեղեկատվությունը: Ինչպես Կրասոսն էր նշել, Պարթևստանի դեմ արշավն առանց հոռոմեական հասարակական կարծիքի նախապատրաստության վտանգավոր ձեռնարկ էր: Հրամանատարների մեծ մասը գիտեր, թե ինչպես շահեր հասարակության աջակցությունը օտարերկրյա նվաճումներ նախաձեռնելիս: Կլեոպատրան ինքն էլ քարոզչության գործը դարձավ, երբ Օգոստոսն իր անվան վրա ստվեր նետելու փորձ արեց և հանրային կարծիքի ալիք բարձրացրեց ընդդեմ Անտոնիոսի և «օտարազգի թագուհու»:

Կիսառազմականացված և գաղտնի օպերացիաներն ավելի քիչ էին հանդիպում հոռոմեացիների «խաղացանկում» այն պարզ պատճառով, որ նրանք կարող էին նաև ակնհայտ գործել՝ առանց պատասխան հակահարված ստանալու վտանգի ենթարկվելու: Այնուամենայնիվ, նրանք գտնում և վարժեցնում էին օտարերկրացիների, օրինակ՝ պարթևների կամ հայերի, որոնց կարելի էր սեփական բանակում օգտագործել: Ցանկացած բարձրաստիճան դասալիք զորական պարթև կարող էր վստահ լինել, որ հոռոմեացիներն իրեն կնշանակեն լրացուցիչ գնդի գլուխ, ընդ որում՝ գունդը բաղկացած կլիներ հոռոմեացիների կողմից վարժեցված իր իսկ հայրենակիցներից<sup>37</sup>:

<sup>37</sup> I, II և III Parthica-ները Սեպտիմուս Սեվերոսի կողմից կազմված երեք լեգեոններն էին: Առաջինը և երրորդը կազմվել էին Արևելքում՝ այնտեղ, ուր այն ժամանակ Միջագետքն էր: Երկրորդը հիմնվել էր Ալբանոյում՝ Հռոմից 20 մղոն դեպի հարավ: I Parthica-ն սկզբում տեղակայվել էր Նիսիբիսում, այժմյան Սիրիայի հյուսիսարևելյան սահմանին մոտ գտնվող Ալ Քամիշի քաղաքի մոտ: Ջնայած կարելի է մտածել, որ այն մասնակցել է Պարթևստանի դեմ իրարահաջորդ պատերազմներ

Հավանաբար, հոռոմեացիներն օտար երկրներում իրենց հովանավորության տակ գտնվող գահակալներին տրամադրում էին ռազմավարական խորհրդատվություն, մարտավարական ծրագրավորում և ֆիզիկական պաշտպանություն: Հաշվի առնելով Հայոց գահի համար ընթացող թեժ պայքարը, հոռոմեացիները հաճախ իրենց նոր գրածոյին հսկելու համար 2000 հոգանոց զորագունդ էին տեղակայում տվյալ երկրում: Հոռոմեացիները հասկանում էին՝ օտար զորք վարժեցնելը վտանգավոր էր նրանով, որ մի օր այն կարող էր հենց իրենց դեմ դուրս գալ:

Հոռոմեացիներն ապաստան էին տրամադրում ցանկացած քաղաքական փախստականի, գահի հավակնորդի, ոչ անմիջական/երկրորդական ազգականների և բարձր դիրք զբաղեցնող դավաճանների համար թե՛ Հայաստանից, և թե՛ Պարթևստանից: Հոռոմեացիները երբեք բաց չէին թողնում անձնակազմ պատրաստելու հնարավորությունը, որ կարող էր օգտակար լինել թե՛ քաղաքական, և թե՛ ռազմական առումով: Անհնար է ասել, թե հոռոմեացիներն ինչպես էին նախապատրաստում այդ մարդկանց: Կինում էր նաև այնպես, որ նրանց կողմից ջախջախություն ստացող հրահրիչներն ավելի շատ խնդիրներ էին հարուցում, քան նախատեսված էր, ինչպես, օրինակ, եղավ Վոնոնի դեպքում, երբ նա ևս մեկ անգամ արտաքսվեց դեպի կայսրություն ուրիշ շրջան:

Սպանություններ. Հոռոմեացիները չէին խորշում, անհրաժեշտության դեպքում, դիմելու սպանությունների՝ նոր գահակալ նշանակելու կամ էլ որևէ մեկի գահակալությունը կանխելու համար: Կեսարի որդի Կեսարիոնը և Անտոնիոսի թոռ Պտղոմեոս Մավրիտանացին անպատիժ սպանվեցին: Նույն կանոններն էին կիրառվում օտարերկրացիների հանդեպ: Երբ, առանց Հռոմի գիտություն, Հայոց գահին բարձրացվեց Պարթևամասիրը, Տրայանոսը արշավեց Հայաստանի դեմ և Պարթևմասիրի հետ հոռոմեական ճամբարում հանդիպումից հետո, երբ նա արդեն վե-

---

րին, այդ կապակցությամբ ոչ մի արձանագրություն չկա: Երկրորդ լեգեոնը մասնակցել է Կարակալայի մ.թ. 216 թվականի պարթևական արշավանքին:

րադառնում էր, հոռմեական հեծելազորի առաջնորդը հրամայեց նրան սանձել ձին և սպանեց նրան<sup>38</sup>:

Այսպիսով, իրենց կայսրությունում շունենալով առանձին հետախուզական ծառայություն, արտաքին գործոց մարմին ու ոչ էլ քաղաքագետներ, հոռմեացիները միանգամայն կարող էին արժեքավոր մի ձեռնարկ գրել գաղտնի գործողությունների կիրառման մասին:

### Հավելված

(աղբյուրը՝ Օֆսֆորդի դասական բառարան)

Հայաստանի կառավարիչները

Արտաշես I (մ.թ.ա. 190–161 թ.)

Արտավազդ I (մինչև մ.թ.ա. 138 թ.)

Տիգրան I (գահակալության թիվը՝ անհայտ)

Տիգրան II (Մեծ) (մ.թ.ա. 95–56/55 թ.)

Արտավազդ II (մ.թ.ա. 56/55–34 թ.)

Արտաշես II (մ.թ.ա. 33–20 թ.)

Տիգրան III, Տիգրան IV և Էրատո (մ.թ.ա. 20–մոտ. 6 թ.)

Արտավազդ III, Տիգրան IV և Էրատո (մ.թ.ա. 6–մ.թ. 1թ.)

Տիգրան V (մ.թ. 2–մոտ. 12 թ.)

Վոնոն (պարթև) (մ.թ. մոտ. 12–15/16թ.)

Որոդես (պարթև) (մ.թ. մոտ. 15/16 թ.)

Զենոն-Արտաշես (պոնտացի) (մ.թ. 18–մոտ. 34 թ.)

Արշակ (պարթև) (մ.թ. մոտ. 34–36 թ.)

Միհրդատ (իբերացի) (մ.թ. 36–մոտ. 51)

<sup>38</sup> **Arrian**, *Parthica* fr. 39: *Fronto, Princ. Hist.* (Loeb 11, pp. 212-214). *հմմտ. Eutropius, Breviarium* 8.3; *Aurelius Victor, Epitome*, 48.10: Դասական հեղինակները փորձել են գերծ մնալ Տրանայոսին այս սպանության մեջ մեղադրելուց, սակայն, անշուշտ, դավաճանության դեպքերի մասին վկայող բավականաչափ թվով օրինակներ երկու կողմից էլ կան:

Պարթևստանի կառավարիչները

Արտավան I (II) (մոտ. 128–124/123)

Մինրդատ II (մոտ. 123–88/87)

Գոտարզ I (91–81/80)

Որոդես I (80–76/75)

Սանատրուկ (76/75–70 կամ 69)

Հրահատ III (70 կամ 69–58/57)

Մինրդատ III (58/57–55)

Որոդես II (մոտ. 57–մոտ. 38/37)

Բակուր I (մաճ. 38)

Հրահատ IV (մոտ. 38–32)

Տրդատ I (II) (30–25)

Հրահատ V (Հրահատակ) (մ.թ.ա. 2–մ.թ. 4)

Որոդես III (4–մոտ. 6/7)

Վոնոն I (7/8–12)

Արտավան II (III) (12–մոտ. 38)

Տրդատ II (III) (մոտ. 36)

Քինամ (մոտ. 37)

Գոտարզ II (մոտ. 38–51)

Վարդան մոտ. (39–47/48)

Վոնոն II (մոտ. 51)

Վաղարշ I (51/52–79/80)

Ժամանակագրություն

մ.թ.ա. 58/57 թ. Որոդեսը և Մինրդատը սպանում են իրենց հորը՝ պարթև թագավոր Հրահատ III-ին:

Առկոս Գաբինիոսը սատարում է Մինրդատի թեկնածուիցունը:

մ.թ.ա. 57 թ. Որոդես II-ը տապալում է իր եղբորը՝ Մինրդատին և դառնում Պարթևստանի միանձնյա կառավարիչ:

մ.թ.ա. 55 թ. Կրասոսը դառնում է Ասորիքի կուսակալ:

մ.թ.ա. 53 թ. *Խառանի ճակատամարտը:*

մ.թ.ա. 52 թ. *Յիցերոնը դառնում է Ասորիքի կուսակալ:*

մ.թ.ա. 51 թ. *Բիբլոսը՝ Ասորիքի կուսակալ:*

*Դավադրություն՝ Բակուրին գահ բարձրացնելու նպատակով:*

մ.թ.ա. 44 թ. *Կեսարը նախապատրաստվում է արշավել Պարթևստանի դեմ: Կեսարի մահ:*

մ.թ.ա. 42 թ. *Փիլիպպեի ճակատամարտը: Անտոնիոսը պարտություն է մատնում Կասիոսին և Բրուտոսին:*

մ.թ.ա. 41/40 թ. *Քլիմետոս Լաբիենոսը և Թագավորի որդի Բակուրը գլխավորում են պարթևական զորքն ընդդեմ Ասորիքի և պարտություն մատնում Դեկիդիոս Սաքսային:*

մ.թ.ա. 38 թ. *Վենտիդիոսը պարտություն է մատնում և սպանում Լաբիենոսին:*

մ.թ.ա. 38 թ. *Անտոնիոսը արշավում է Պարթևստանի դեմ:*

մ.թ.ա. 38 թ. *Գահ է բարձրանում Հրահատ IV-ը:*

մ.թ.ա. 34 թ. *Անտոնիոսը Հայաստանը միացնում է Հռոմին՝ շնորհելով նրան գավառի կարգավիճակ:*

մ.թ.ա. 33 – 20 թ. *Արտաշեսի իշխանությունը Հայաստանում:*

մ.թ.ա. 32 թ. *Հրահատ IV-ի մահ:*

մ.թ.ա. 31 թ. *Ակտիումի ճակատամարտը: Օկտավիանոսը պարտություն է մատնում Անտոնիոսին և Կլեոպատրային:*

մ.թ.ա. 30 – 25 թ. *Գահ է բարձրանում Տրդատ I-ը:*

մ.թ.ա. 20 թ. *Հռոմեական արծվակիր դրոշները վերադարձվում են Տիբերիոսին:*

մ.թ.ա. 20 թ. *Օգոստոսը Հրահատին է ուղարկում Մուսային:*

մ.թ.ա. 2 – մ.թ. 4 թ. *Հրահատ IV (Հրահատակի) իշխանությունը Պարթևստանում:*

մ.թ. 7/8 – 12 թ. *Վոնոն I-ի իշխանությունը Պարթևստանում:*

մ.թ. 12 թ. *Վոնոնի սպանությունը:*

մ.թ. 12 – 38 թ. *Արտավան II-ի իշխանությունը Պարթևստանում:*

**Է**

**ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ**



## 20.

### ТОМАС ДЕ ВААЛ, “ЧЕРНЫЙ САД”: В ПОИСКАХ НЕСУЩЕСТВУЮЩЕГО БАЛАНСА

**КАРЕН ВРТАНЕСЯН**

Писать критический обзор книги британского журналиста Томаса де Ваала “Черный сад: Армения и Азербайджан между миром и войной” – дело нелегкое и неблагодарное. Агрессивная и последовательная рекламная кампания по продвижению “Черного сада” уже зарезервировала книге статус серьезного и чуть ли не самого нейтрального на сегодняшний день исследования по карабахской проблеме. А Ваал представлен читателю как “осторожный, дотошный и объективный”<sup>1</sup> исследователь.

Впрочем, надо отдать автору должное: “Черный сад” написан увлекательно и читается на одном дыхании. Вследствие чего подробный анализ приведенных в книге фактов и выводов автора может показаться скучным, а попытки обратить внимание читателя на искажения, недомолвки и передергивания могут быть встречены без особого энтузиазма. “Обезвреживание” заложенных в книгу “информационных мин” требует подробных и объемных комментариев, и одно только это ставит потенциального критика в заведомо затруднительное положение.

Кроме того, априори объявлены “слепыми фанатиками” (*blind partisans*)<sup>2</sup> те, кому книга не по душе, а любая критика со стороны армян или азербайджанцев преподносится как доказательство не-

---

<sup>1</sup> Paul Quinn-Judge, Two Peoples, One Nightmare, Time-Europe, Feb. 2, 2004 (<http://www.time.com/time/arts/article/0,8599,586303,00.html>)

<sup>2</sup> Там же.

предвзятости Ваала<sup>3</sup>. Отдавая себе отчет, что и автора данного обзора будут обвинять в мнительности, излишней педантичности и бескомпромиссности, я тем не менее уверен в том, что необходимость в критическом анализе “Черного сада” назрела давно.

**Томас де Ваал** – журналист, специализируется по проблемам России и Кавказа. Работал в Би-би-си, газетах Moscow Times и The Times of London. Будучи в России, освещал события в Чечне и является соавтором книги “Chechnya: Calamity in the Caucasus” (“Чечня: бедствие на Кавказе”). Является редактором (руководителем) Кавказского отдела IWPR.

### О русском переводе книги

Данный обзор предполагалось написать на основе российского издания книги (Томас де Ваал, “Черный сад: Армения и Азербайджан между миром и войной”, Москва: “Текст”, 2005). Однако значительные отступления от оригинала, обнаруженные в русском переводе, вынудили взять за основу английский текст – Thomas de Waal, *Black Garden: Armenia and Azerbaijan through Peace and War*; NYU Press; New Ed edition, 2004; ISBN: 0814719457. Далее ссылки на текст книги будут даваться по этому изданию, за исключением отдельно отмеченных случаев.

Подчеркну, что речь идет именно об искажениях, а не “трудностях перевода”. Например:

В течение семи лет армяне безраздельно владели почти всей территорией Нагорного Карабаха, и прилегающих к нему азербайджанских районов – что в общей сложности составляло около 14 процентов международно признанной территории Азербайджана. Сотни тысяч азербайджанцев были изгнаны с родных земель.

---

<sup>3</sup> Во время своего **выступления** на презентации русского издания “Черного сада” в ереванском офисе “Института по освещению мира и войны” (IWPR) 6 ноября 2006 г. Томас де Ваал заявил, что его критикуют и армяне, и азербайджанцы, поэтому книга непредвзята. Через несколько дней эту мысль почти дословно повторил его подчиненный Шаин Рзаев, директор азербайджанского филиала IWPR, во время встречи в ресурс-центре НПО “Институт гражданского общества” 10 ноября 2006 г. в г. Ереване.

В ответ Азербайджан наглухо закрыл границу с Арменией. В знак солидарности с братской тюркской нацией то же самое сделала и Турция. Если принять во внимание нестабильность транспортных коммуникаций, идущих через Грузию, и малопригодную для крупных перевозок границу с Ираном - можно сказать, что Армения фактически оказалась в кольце экономической блокады. (стр. 20 рус. издания)

В оригинале:

For seven years the Armenians had had full possession of almost the entire disputed province of Nagorny Karabakh, as well as vast areas of Azerbaijan all around it – in all, almost 14 percent of the internationally recognized territory of Azerbaijan. They had expelled hundreds of thousands of Azerbaijanis from these lands.

In response to this massive loss of territory, Azerbaijan, in concert with Turkey, kept its borders with Armenia sealed, crippling Armenia's economic prospects. (стр. 3)

Неясно, как в русской версии появились фразы о “солидарности братской тюркской нации” и фрагмент о Грузии и Иране. Более того, выражение “these lands” (эти земли) переведено как “родные [для азербайджанцев] земли”, что, согласитесь, далеко не одно и то же<sup>4</sup>.

Наличие такого рода ошибок (?) в русском переводе тем более странно, если учитывать, что Ваал окончил Оксфордский университет со специализацией в русском языке. Да и не надо быть профессором русской словесности, чтобы заметить невесть откуда появившиеся слова о “братской тюркской нации”. Однако в предисловии к русскому изданию Ваал не только благодарит переводчика за “замечательный перевод”, но и утверждает, что русский текст дополнительно прошел редакторскую правку двух людей, отлично владеющих русским языком – сотрудников Би-би-си Фагиля Исмаилова и Марка Григоряна (стр. 13 русской версии). Несмотря на проваль-

---

<sup>4</sup> В данном примере оригинал также содержит фактологическую ошибку: наземная блокада Армении не была начата “в ответ” на территориальные потери. Блокада началась в 1989 г., задолго до “массивных территориальных потерь” Азербайджана. См. например доклад Исследовательской службы конгресса США: CRS Issue Brief 92109: Armenia-Azerbaijan Conflict (<http://www.fas.org/man/crs/92-109.htm>). Следует отметить, что книга просто изобилует подобными нарушениями хронологического порядка событий.

ный перевод, русская версия “Черного сада” активно проталкивается: ее сокращенный вариант опубликован в разделе “Карабахская страница” на сайте Би-би-си<sup>5</sup>, книга также публикуется с продолжениями в одном из азербайджанских еженедельников<sup>6</sup>. При личном участии автора были проведены презентации “Черного сада” в Баку, Тбилиси, Ереване и Степанакерте. Еще одна презентация должна была состояться в Москве, однако Ваалу было отказано в российской визе<sup>7</sup>.

### Декларируемые цели. Выводы автора.

Томас де Ваал утверждает, что книга является попыткой реконструировать события 1988 – 1994 гг. в Нагорном Карабахе, а также раскрыть предысторию армяно-азербайджанского конфликта<sup>8</sup>. Еще одной целью книги, как утверждает автор, является развенчивание пропагандистских мифов армянской и азербайджанской сторон (стр. xiii). В книге нашлось место и для описания послевоенной ситуации и жизни задетых войной людей как в Армении и Азербайджане, так и в Нагорном Карабахе.

Акцент в книге сделан на то, что “карабахский конфликт – это проблема 20 века, советской системы и последних 20 лет”<sup>9</sup>:

Я пришел к двум заключениям, которые могут показаться и спорными. Первое состоит в том, что конфликт был неминуем, он лишь ждал своего часа. Формированием Нагорно-Карабахской автономной области было создано нестабильное политическое устройство, которое не могло не вызвать проблем, вышедших на пер-

<sup>5</sup> Черный сад. Между миром и войной ([http://news.bbc.co.uk/hi/russian/in\\_depth/newsid\\_4673000/4673979.stm](http://news.bbc.co.uk/hi/russian/in_depth/newsid_4673000/4673979.stm))

<sup>6</sup> Со слов Шаина Рзаева, директора азербайджанского филиала “Института по освещению мира и войны” (IWPR), во время встречи в ресурс-центре НПО “Институт гражданского общества” 10 ноября 2006 г. в Ереване.

<sup>7</sup> МИД России отказал во въездной визе редактору кавказского отдела британского Института по освещению войны и мира Томасу де Ваалу: <http://www.ifex.cjes.ru/alerts/?id=168>

<sup>8</sup> Выступление Томаса де Ваала на презентации русского издания “Черного сада” в армянском филиале IWPR, Ереван, 6 ноября 2006 г.

